ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՓԱՎՍՏՈՍԻ ԲՈՒԶԱՆԴԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Բնագիրը Ք. Պատկանյանի

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1987

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Թարգմանությունը և ծանոթագրությունները
Ստ. Մալխասյանցի

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1987

ԳՄԴ 63.3(2Հ)
Փ 268

Հրատարակության է պատրաստել բանաս. գիտ. դոկտոր
Գ. Գ. ԱՆԱՆՅԱՆԸ

Խմբագիր՝ բանաս. գիտ. թեկն. դոցենտ
Հ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

«Ուսանողի գրադարան» մատենաշարի
խմբագրական հանձնաժողով

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Ս. Ա. (նախագահ), ԱՂԱՅԱՆ Է. Բ.,
ԱՆԱՆՅԱՆ Գ. Գ., ԹԱՄՐԱԶՅԱՆ Հ. Ս., ՄԿՐՏՉՅԱՆ Լ. Մ.
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Բ. Հ.

Փավստոս Բուզանդ.

Փ268 Հայոց պատմություն /[Բնագիրը՝ Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանի; խմբ.՝ Հ. Մ. Ավետիսյան].—Եր.՝ Երևանի համալս. հրատ., 1987.—456 էջ.— (Ուսանողի գրադարան /Երևանի պետ. համալս.; [խմբ. հանձնաժողով՝ Համբարձումյան (Ս. Ա. (նախագահ) և ուրիշն)].


Հինգերորդ դարի հայ մատենագրության այս նշանավոր կոթողի հրատարակության համար հիմք է ընդունվել 1892 թ. Վենետիկյան հրատարակությունը և նույն գրքի Ստ. Մալխասյանցի թարգմանությունը (1947)։

Բ 470208000-06 / 704(02) 87 41—85

ԳՄԴ 63.3(2Հ)

ПАВСТОС БУЗАНД
ИСТОРИЯ АРМЕНИИ
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван — 1987

© Երևանի համալսարանի հրատարակչություն, կազմելու համար, 1987



ԽՈՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳԻՏԵԼԻ

Այս ինչ է ՚ի դպրութիւս երրորդ՝ պատմութեանցս. ժամանակագիր կանոնիւ մատենից, և առ նմին դպրութիւնիւ երեք, այս ինքն են սոքա չորք մատեանք. և չորեքին միով իրաց յիշատակարանք են, յիշեցուցիչք պատմութեանց ազգացն Հայաստան աշխարհին որդւոց Թորգոմայ: Այս ինքն կարգ անցելոց իրաց, գործք և վարք մինչև ցիւրաքանչիւր ելս յաշխարհէս բաժանայապետաց սրբոց առանց աստուածոյ, և թագաւորաց ազգացն աշխարհաց Արշակունեաց, և զօրավարաց՝ առանց անուանեաց բազ նախարարաց, և խաղաղութեան և պատերազմին և շինութեան և աւերածոյ և արդարութեան և անօրէնութեան և աստուածպաշտութեան և ամբարշտութեան. ժամանակագիր առաբեալ ՚ի թագաւորութենէն Խոսրովու որդւոյ Տրդատայ մինչև ՚ի միւս վերջին ժամանակն վատթարելոյ թագաւորացն Հայոց, և ՚ի բաժանայապետութենէն Վրթանայ որդւոց Գրիգորի առաջնոյ բաժանայապետի մինչև ցայնոսիկ ՚ի վերջինսն՝ որ կային գլխաւորք եպիսկոպոսք Հայոց, մի ըստ միոջէ կարգօք թուոք և համարօք կանոնեալ դրոշմեալ ընկարեցի իւրաքանչիւր գլխովք: եւ չորս խոստմունս չորից չորեցունց դպրութեանցս յիւրաքանչիւր իւր գլուխս պատուաստեցի մինչև ՚ի կատարած սորին, առ ՚ի զօգուտս ժառանգել՝ որ միանգամ կամին սրտի մտօք հասու լինել սմին զոր ասելոցս եմ:

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Պատմութեանց այս երրորդ դպրութիւնը պարունակում է պատմական գրվածքների գլուխներ, և նրան կից կան ուրիշ երեք դպրութիւն. այսինքն սրանք չորս մատյան են և չորսն էլ նույն անցքերի հիշատակարաններ են, որոնք հիշեցնում են Հայաստան աշխարհի Թորգոմի որդոց պատմութիւնները, այսինքն անցած անցքերի շարքը,— գործերն ու վարքերը աստծու մարդկանց՝ սուրբ բաժանայապետների, և աշխարհիս տեր Արշակունի թագավորների և անվանի մարդկանց՝ զորավարների և բաց նախարարների՝ մինչև նրանց մահը, այլ և (երկրի) խաղաղությունն ու պատերազմները, շինությունն ու ավերմունքները, արդարությունն ու անօրենությունը, աստվածապաշտությունն ու ամբարշտությունը: Պատմությունն սկսվում է Տրդատի որդի Խոսրովի թագավորությունից մինչև Հայոց թագավորների տկարանալը վերջին ժամանակներում և առաջին բաժանայապետ Գրիգորի որդի Վրթանեսի բաժանայապետությունից մինչև վերջինները, որոնք Հայոց եպիսկոպոսների գլխավորներն էին: (Այս բոլորը) մի առ մի՝ կարգով, թվով, համարով, առանձին առանձին գլուխներով ընկարագրեցի: Եվ չորս դպրությունների համար առանձին ցանկեր կազմեցի յուրաքանչյուրի սկզբում մինչև վերջը, որպեսզի օգտվել կարողանան նրանք, որոնք սրտանց փափագում են վերաբաժանել իմ ասելիքներին:

ԽՈՍՏՈՒՄՆ ԵՐՐՈՐԻ

ԿԱՆՈՆՔ ԳԱՏՄՈՒԹԵԱՆՑ ՄԱՏԵՆԻՑ ՄԻՆՉԵՒ ՅՔՍԱՆ ԵՒ ՄԻ

Ա. Յաղագս որ ինչ յետ խոռոզութեան Թադէոսի Առաքելոյ յերկրին Հայաստան աշխարհին որդւոյ Թորգոմեայ:

Բ. Յաղագս մեծի առաջնոյ հանճարապետին Գրիգորի, և նոցունց շիրմացն:

Գ. Յաղագս պազատութեան խոսրովու որդւոյ Տրդատայ, և վրթանայ մեծի հանճարի որդւոյ Գրիգորի:

Դ. Յաղագս երկուց տոհմացն՝ որք աճապարեցան, Մանուազեանքն և Որդուիքք, ի մէջ Հայաստան աշխարհին:

Ե. Յաղագս որդւոց հանճարապետին վրթանայ, որոց անուանք էին երիցուն Գրիգորիս, և երիտորդին Յուսիկ:

Զ. Յաղագս Գրիգորիսի՝ որդւոյ Վրթանայ, և ճարուն վախճանին, և տեղին՝ ուր եղեւն:

Է. Յաղագս մարտի պատերազմին ընդդէմ եկելոց յարշաւանաց պազատին Մազքթաց յաշխարհն իշխանութեան Հայոց պազատին, և կամ ո՛րպէս սատակեցաւ ճա զօրօքն իւրովք ճանդերձ:

Ը. Յաղագս մայրացն անկելոց, և պատերազմացն ընդ Պարս. և ազգանասութեան առն ճախարարացն տոհմին Բզնունեաց:

Թ. Յաղագս Բակուրայ բդեշխի, որ ապստամբեաց յարքայէն Հայոց. և թէ գիա՛րդ սատակեցաւ ի զօրացն Հայոց, և փոխանակ ճարա լինէր բդեշխ Վաղինակ Սիւնեաց:

Ժ. Յաղագս Յակոբայ եպիսկոպոսին Մրծրնայ:

ԺԱ. Յաղագս մեծի պատերազմին Պարսից և Հայոց ընդ միմեանս, և անկանելոյ ի պատերազմին մեծի զօրավարին Վաչէի, և մանուած բազատարին խոսրովու, և փոխելոյ յաշխարհէ հայրապետին Վրթանայ:

ԺԲ. Յաղագս բազատարելոյ Տիրանայ յետ ճօր իւրոյ ի վերայ Հայոց աշխարհին: Սոյնպէս և Յուսիկ յետ իւրոյ ճօրն Վրթանայ կալաւ զաթոռ հայրապետական. և կամ ո՛րպէս սպանաւ ի Տիրանայ արքայէ վասն յանդիմանելոյ զբազատարն:

ԺԳ. Յաղագս թէ գիա՛րդ յետ մանուն Յուսիկ անառաչնորդ լինէր երկիրս Հայոց. և ոչ որդիքն Յուսիկ լինէին արժանի ճօրն աթոռոյն:

ԺԴ. Յաղագս վարուց մեծին Դանիէլի՝ առ ասատծոյ, և կամ որպէս յանդիմանեաց զբազատարն Տիրան, և կամ ո՛րպես պատուհասեալ մեռաւ ի ճմահէ:

ԺԵ. Յաղագս որդւոցն Յուսիկ, եթէ ո՛րպէս ընթադրեալ առ ասա ճարին զմեծ փանճայութեան զասատծոյ զպատին:

ԳԱՏՄՈՒԹՅԱՆ ՔՍԱՆ ԵՎ ՄԻ ԳԼՈՒԽՆԵՐ

Ա. Ինչ որ Թարգմի որդոց Հայաստան աշխարհում տեղի ունեցավ Թադէոս առաքյալի քարոզությունից ետոո:

Բ. Առաջին մեծ քանանայապետ Գրիգորի (և Արիստակեսի)[2] և նրանց շիրիմների մասին:

Գ. Տրդատի որդի Խոսրովի բազավորությունը և Գրիգորի որդի Մեծն Վրթանեսի քանանայապետությունը:

Դ. Երկու տոհմերի՝ Մամիկոնյանների և Որդունիների մասին, որոնք Հայաստան աշխարհում իրենց սերունդներով բնաչինչ եղան:

Ե. Վրթանես քանանայապետի որդոց մասին, որոնցից երեցը կոչվում էր Գրիգորիս և երիտորդը Հուսիկ:

Զ. Վրթանեսի որդի Գրիգորիսի և նրա վախճանի մասին. և թե ո՛րտեղ թաղվեց:

Է. Մասունների բազավորի հինական ասպատակը Հայոց բազավորի իշխանությանն երկրի վրա. տեղի ունեցած պատերազմը և թե ի՛նչպես նա զորով մխանին կոտորվեց:

Ը. Մերինների տնկելը. Պարսիկների հետ պատերազմները և Բզնունյաց նախարարական տոհմի սերմանվելը:

Թ. Բակուր բդեշխի մասին, թե ի՛նչպես ապստամբեցավ Հայոց բազավորից և սպանվեց Հայոց զորերից. որի փոխարեն բդեշխ դարձավ Վաղինակ Սյունին:

Ժ. Մծրինի Հակոբ եպիսկոպոսի մասին:

ԺԱ. Պարսից և Հայոց միչև տեղի ունեցած մեծ պատերազմի մասին, որի մեջ ընկավ Վաչե մեծ զորավարը. Խոսրով բազավորի մահը և Վրթանես հայրապետի այս աշխարհից փոխվելը:

ԺԲ. Տիրանի բազավորելը Հայոց աշխարհի վրա իր հոր մահից հետո, նույնպես Հուսիկի հայրապետական աթոռը նստելը իր Վրթանես հորից հետո, և թե ինչպես նա սպանվեց Տիրան բազավորից՝ նրան հանդիմանելուն պատճառով:

ԺԳ. Թե ինչպես Հուսիկի մահից հետո անառաչնորդ էր մնում Հայոց աշխարհը, որովհետև Հուսիկի որդիքը արժանավոր չէին իրենց հոր աթոռին:

ԺԴ. Մեծն Դանիելի՝ աստծու մարդու վարքը. և թե ինչպես նա հանդիմանեց Տիրան բազավորին և նրանից սպանվեց:

ԺԵ. Հուսիկի որդոց մասին, թե ի՛նչպես ոսի տակ տալով արհամարհեցին աստծու մեծ հանճա գտանելու պատիվը:

ԺԶ. Փառեի մասին, որ հայրապետական աթոռը նստեց:

ԺԶ. Յաղագս Փառիճայ, որ կալաւ զաթոռ հայրապետացն:

ԺԷ. Յաղագս Շաճակայ, որ էր ի գաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի, որ յաշարհեաց զտեղի հայրապետացն յաթոռոց. և թէ ո՛րպէս յայնմ ժամանակի երկիրն Հայոց բռնեալ զտէր և զպատուիրանս նորա:

ԺԸ. Յաղագս Հայր Մարդպետի, որ վատ խրատ տալով թագաւորին՝ ապար կոտորել զազգս նախարարացն Հայոց:

ԺԹ. Յաղագս արդուցն Յուսկանն՝ Գապայն և Աբանագիճէիճ, երէ ո՛րպէս կամ գիա՛րդ սատակեցան յանօրէնութեան իւրեանց ի տեղիսն սուրբ:

Ի. Յաղագս Տիրանայ թագաւորին, երէ ո՛րպէս մատնեցաւ յիւրմէ սենեկապետէն ի Փեսակայ Սիւնոյ, երէ ո՛րպէս կորեաւ, և ի խաղաղութեան ժամանակի յանկարծակի գերեցաւ ի վարազէ իշխանէն պարսից. և կամ ո՛րպէս ամենայն երկիրն Հայոց ըստ ճմին կորեաւ և կործանեցաւ:

ԻԱ. Յաղագս թէ ո՛րպէս ժողովեցան միաբանութեամբ ամենայն նախարարքն Հայոց. և չոգեն ածին զթագաւորն Յուսոյ իւրեանց ի բիկուսս օգնականութեան յերկիրն Հայոց. և կամ ո՛րպէս եկն թագաւորն Պարսից թագում զօրօք, և կռուարեալ լինէին զօրքն Պարսից ի զօրացն Յուսոյ և ի մնացորդաց Հայոց. և նեռնն արքայն Պարսից յերկրէն Հայոց միածի եղեռնապրեալ յերկիրն Պարսից փախստական անկաւէր:

ԺԷ. Շաճակի մասին, որ Աղբիանոս եպիսկոպոսի սերոյից էր և հայրապետական աթոռը նստաւ, և թէ ի՛նչպես այդ ժամանակ Հայոց աշխարհը բռնել էր տիրոջը և նրա պատուիրանները:

ԺԸ. Հայր Մարդպետի մասին, որ թագավորին վատ խրատ տալով կոտորել էր տալիս Հայոց նախարարական տոհմերը:

ՈՐ. Հուսիկի որդոց՝ Գապի և Աբանագիճենի մասին, թէ ինչպես իրենց անօրենությամբ սատկեցան սուրբ տեղում:

Ի. Թէ ի՛նչպես Տիրան թագավորը իր սենեկապետի՝ Սյունի Փեսակի կողմից մատնվեց ու կորավ, ի՛նչպես խաղաղության ժամանակ հանկարծ գերի բռնվեց պարսիկ վարազ իշխանից և ի՛նչպես բոլոր Հայոց երկիրն էլ նրա հետ միասին կորավ ու կործանվեց:

ԻԱ. Թե ի՛նչպես Հայոց բոլոր նախարարները ժողովվեցին և միաբանությամբ գնացին, Հուսոյ թագավորին Հայաստան բերին իրենց օգնական, և ի՛նչպես Պարսից թագավոր մեծ զորով եկավ. ի՛նչպես Պարսից զորը կոտորվեց Հուսոյ զորքերից և Հայոց զորերի մնացորդներից, և Պարսից Ներսեհ թագավոր մի ձիով եղեռնվում էր Հայոց աշխարհից և փախչում էր Պարսից աշխարհը:

ԵՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻԻՆ

Ի ՍԿԻԶԲՆ

Ա

ՅԱՂԱԳՍ ՈՐ ԻՆՔ ՅԵՏ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆՆ ԹԱԴԷՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ՅԵՐԿԻՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ. ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ՄԱՏԵՆԻՑ

Ի fարոզութենէն Թադէոսի Առաքելոյ և նորուն յելից և ի մարտիrոսութենէն մինչև ի կատարումն վարդապետութեանն Գրիգորի և իւրոյ ճանգստեանն, և յառաքելապան Սանատրկոյ արքային մինչև յակամայ ինազանդելն հաւատոցն, և ի նորուն հանգստեան արքային Տրդատայ զանցեալ իրացն զառաչնոցն զվարսն լաւացն, և որ զնոցուն ճակառակ բնդդիմակաց, այն ամենայն ի ձեռն այլոցն գրեցան: Բայց և մեք ի մերում աստ եղամ փոքր ի շատէ ի կարգի պատմութեան, ոչ զանց արարեալ բոլոր վասն պատշաճ իրաց կարգին: Վասն զի է ինչ մեր պատմութիւն՝ որ առաչին է, և է ինչ՝ որ վերջին է. իսկ որ միջի ինչ եղև, այն ի ձեռն այլոց գրել գրեցաւ: Բայց զի մի՛ ի միջի մերոյ պատմութեանս բնդհատ երևեսցի հուն մի, նշանակեցաք. զոր օրինակ ադիւս մի կարգած ի մէջ որմոյն չինուածոյ, ի կատարումն բովանդակութեան: Այս ինչ. որ ինչ յետ այսորիկ կարգի, աստ պատմի աստէն առ աւին:

Բ

ՅԱՂԱԳՍ ՈՐ ԻՆՔ ՎԱՍՆ ՄԵՍՒ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ. ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՆՈՅՈՒՆ ՇԻՐՄԱՆՅՆ

Արդ ի թագաւորութեանն Տրդատայ՝ որդւոյն Խոսրովու, լուսաւորութեամբ հաճոյական սիրով և աստուածպաշտութեամբբն հաւատոյ,

ԵՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ

ՍԿԻԶԲ[3]

Ա

ԻՆՉ ՈՐ ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՔԱՐՈԶՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՆՑՈ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ: ՊԱՏՄԱԿԱՆ ՊԼՈՒԽՆԵՐ

Թադեոս առաքյալի քարոզությունից ու նրա մարտիրոսական վախճանից մինչև Գրիգորի վարդապետության վերջն ու նրա վախճանը, և առաքելասպան Սանատրուկ թագավորից մինչև Տրդատ թագավորի ակամա ինազանդելը (հրաստոնեական) կրոնին ու նրա վախճանը,— անցյալ հին անցքերի և առաքինի անձերի վարքի մասին, ինչպես և նրանց հակառակորդների ու դիմադրողների մասին՝ բոլորը ուրիշների կողմից արդեն գրված են[4]: Բայց մենք էլ մեր պատմության ընթացքում փոքր ի շատե նշանակեցինք, առանց հիշատակության չթողնելու՝ պատշաճ կարգը պահպանելու համար, որովհետև մեր պատմվածքի մեջ կա բան, որ առաջին է, և կա բան՝ որ վերջին. իսկ ինչ որ միջին եղավ՝ այն ուրիշներից արդեն գրվեց[4]: Բայց որպեսզի մեր պատմության մեջ բնդհատում չնկատվի՝ մասնավոր նշանակեցինք, ինչպես մի աղյուս, որ պատի շինվածքի մեջ դրվում է շենքը ամբողջացնելու համար: Այսպես անելուց հետո ինչ որ այնուհետև պատահել է՝ այստեղ հաջորդաբար պատմվում է:

Բ

ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԻ (ԵՎ ԱՐԻՍՏԱԿԵՍԻ) ԵՎ ՆՐԱՆՑ ՇԻՐԻՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Արդ՝ Խոսրովի որդի Տրդատի թագավորության ժամանակ (Հայոց աշխարհը) լուսավորվեց հաճոյական սիրով և աստվածպաշտության

ծաճօրութեամբ ի ձեռն Գրիգորի՝ որդւոյն Անակայ, մեծի բահանայի. և որոյ ըզդ նմին կրասեր որդին Արիստակէս հօրն էր գործակից եպիսկոպոսակից յամենայն ընթացս վարդապետութեան զամենայն աւուրս կենաց իւրոց մինչև յօրն Հրիստոսակոչ հանգստեանն իւրոյ: Իսկ սոցա պատրաստեցան տեղիք բնակութեան, և արժանի եղեալ շիրիմք հանգրստեան. և մեծին Գրիգորի ի Դարանաղեաց գաւառին, ի գիւղն՝ որ անուանեալ կոչի Թորդան. և սրբոյն Արիստակայ որդւոյ նորա՝ յետ խոստովանութեան մահուն իւրոյ, և տարան զնա ի Մոփաց գաւառէ, և եդին զնա յեկեղեցւոջ գաւառի ի Բիլն աւանի, ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ:

Գ

ՈՐ ԻՆՉ ՎԱՍՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԽՈՍՐՈՎՈՒ՝ ՈՐԴՒՈՅ ՏՐԴԱՏԱՅ ԵՒ ՎՐԹԱՆԱՅ ՄԵԾԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ՝ ՈՐԴՒՈՅ ԳՐԻԳՈՐԻ

Ապա յետ այսորիկ թագաւորեաց Խոսրով Կոտակ, բոռն Խոսրովու, որդի Տրդատայ արքայի: Յաւուրս սորա եկաց և եղև բահանայապետ յաթոռն հօրն, փոխանակ հօրն իւրոյ և եղբօրն իւրոյ, երէց որդին Գրիգորի Վրթանէս: Խաղաղութիւն և շինութիւն, մարդաշատութիւն և առողջութիւն, պտղաբերութիւն և ստացուածաշատութիւն և շահեկանութիւն, և մեծն աստուածասէր պաշտօն ի հանդյակատարն բարութիւն յամս յաւուրս սոցա աճել բազմացաւ: Լուսաւորէր և առաջնորդէր նոցա սուրբն Վրթանէս իբրև զհայր իբրև զեղբայր իւր. իրաւունք և արդարութիւն ծաղկեալ էին ի դարուն յայնմ:

Զայնու ժամանակաւ երթեալ հասանէր եպիսկոպոսապետն Վրթանէս ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօնու, ուր նշանօն եղելօք կործանեցան բագինք մեհենից յայնժամ, վաղ ևս առ մեծաւն բահանայապետաւն Գրիգորիւ: Սա երթեալ կատարէր անդ, ըստ հանապազ սովորութեանն, զտեառնն զխաչական զփրկութեանն զպատարագն զոհութեան, զհաղորդութիւն չարչարանաց յիշատակի, զկենդանարարն և զազատիչն զմարմին և զարիւն աստուածորդւոյն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետքն Հայոց, հանդերձ բագաւորօքն և մեծամեծօքն, նախարարօքն և աշխարհախումբ բազմութեամբք պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կռոցն, և ապա յանուն աստուածութեանն սրբեցան, և եղեն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք: Մանաւանդ յայն ի գլխաւոր տեղին յեկեղեցին հավատով, որին ծանօթացավ մեծ բահանայի՝ Գրիգորի միջոցով, որ Անակի որդին էր: Նրա կրտսեր որդին Արիստակեսը իր հորը գործակից և եպիսկոպոսակից էր նրա վարդապետության ամբողջ ընթացքում իր կյանքի բոլոր օրերում մինչև հրիստոսակոչ վախճանի օրը: Սրանց համար հանգստարաններ և արժանավոր շիրիմներ պատրաստվեցին— մեծն Գրիգորի համար Դարանաղյաց գավառում, Թորդան կոչված գյուղում, իսկ նրա որդուն, սուրբ Արիստակեսին, նրա խոստովանական մահից հետո, Մոփաց գավառից տարան եկեղյաց գավառը և թաղեցին Բիլ ավանում, իր հոր Գրիգորի կալվածում:

Գ

ՏՐԴԱՏԻ ՈՐԴԻ ԽՈՍՐՈՎԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴԻ ՄԵԾՆ ՎՐԹԱՆԵՍԻ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սրանից հետո թագավորեց Խոսրով Կոտակը[5], (Մեծն) Խոսրովի թոռը, որ և առաքիճի Տրդատ թագավորի որդին: Սրա ժամանակ հանճարեղ բահանայապետ եղավ և իր հոր ու եղբոր աթոռը նստեց Վրթանեսը, Գրիգորի երեց որդին: Սրանց տարիներում աճեցին ու բազմացան խաղաղություն և շենություն, մարդաշատություն և առողջություն, պտղաբերություն, առատություն և գործի աջողություն և աստվածային մեծ պաշտամունքը և աստվածահաճո բարի վարք: Սուրբ Վրթանեսը իր հոր և եղբոր նման նրանց լուսավորում էր և առաջնորդում: Այն դարում ծաղկած էին իրավունքն ու արդարությունը:

Այս ժամանակներս (մի անգամ) Վրթանես եպիսկոպոսապետը գնացել էր Հայոց մեծ և առաջին մայր եկեղեցին, որ գտնվում էր Տարոն գավառում, որտեղ դեռ վաղ ժամանակ, մեծ բահանայապետ Գրիգորի օրերում կատարված նշաններով[6] կործանվել էին մեհյանների բագիները[7]: Այնտեղ գնալով՝ նա իր մշտական սովորությամբ կատարում էր փրկչի խաչելության փրկական գոհացողական պատարագը, (Քրիստոսի) չարչարանքների հաղորդության հիշատակը, (այսինքն) աստվածորդի տեր Հիսուս Քրիստոսի կենդանարար և ազատիչ մարմինն ու արյունը: Որովհետև հենց այսպես սովոր էին Հայոց եպիսկոպոսապետները՝ թագավորի, մեծամեծների, նախարարների և ժողովրդի խումբ բազմության հետ միասին պատվել այն տեղերը, որոնք առաջ կուռքերի պատկերների տեղեր էին և հետո աստծու անունով սրբվեցին ու դարձան աղոթքի տներ և ուխտատեղիներ բոլորի համար: Մանավանդ սովորություն ունեին ժողովվել այն գլխավոր եկեղեցին և կատարել այնտեղ եղած սրբերի հիշատակը տարեց տարի սահմի[8]

ցին ժողովել ի յիշատակ սրբոցն՝ որ էին անդ, կատարել անդ ամի ամի եւթն անգամ. որ զնոյն ունէին սովորութիւն առաւել ևս ի մեծի մարգարէարան մատրանն Յովհաննու: Նոյնպէս և յառաքելարանս տեառնաշակերտացն, նոյնպէս և ի վկայարանս մարտիրոսացն ամի ամի ժողովեալ, զօր տօնին յիշատակի նոցա վարուց գործոց կենաց բաւութեան խմբեալ՝ ցրնծային: Իսկ դէպ իմն լինէր ի ժամանակին՝ յորում մեծ բաճանայապետն Վրթանէս երթեալ շրջէր առանձինն սակաւուք, կատարել զպատարագն օրինութեան: Արդ որ միանգամ զնուիրեն կռապաշտութեան ներքանուսութեան զնոյն սովորութիւն մինչև ցայնժամ ևս ունէին գաղտնի, ի մի միաբանութիւն ժողովեալ՝ հասանէին իրև հազարք երկու, խորհուրդ եդեալ ընդ միմեանս՝ սպանանել զբաճանայապետն աստուծոյ զՎրթանէս: Բայց ունէին և սակաւ մի խորհուրդ համարձակութեան ի կնոջէ թագաւորէն, զայն գործել. վասն զի յանդիմանէր զնա սուրբն վասն գաղտնի շնութեան կծծութեան բարոյից պոռնկութեան: Եւ հասեալ պատէին զմեծ բաղաքորմն եկեղեցւոյն Աշտիշատու: Մինչ դեռ նա ի ներքս մտեալ՝ զպատարագն կատարէր, արտաքուստ բազմազօրուն փակեալ պաշարել կամեցան: Որոց առ հասարակ որ ի գնդին էին բազուկք իւրաքանչիւր՝ յետս դարձեալ ի վերայ իւրաքանչիւր թիկանց, առանց իրիք կապելոյ՝ սքանչելապէս կապեալ լինէին: Այսպէս պաշարեալք ընկապճեալք գելեալք վանեալք կրծկեալք, ամենեքեան առ հասարակ յերկիր անկեալք անբարբառ կային, անխաղացք ի տեղւոջէն. որ էին տունք և ագգք աշխարհակերք աշխարհաւերք ժանդագործք հրմացն: Արդ այնպէս պաշարեալք, դիզեալ կային ամբոխն ի գաւթի եկեղեցւոյն. զօրս ելեալ իւր իսկ ինքնին Վրթանէս մատուցեալ հարցանէր զնոսա, եթէ դուք ո՞յք էք, կամ ուստի՞ գայք, կամ զո՞ խնդրէք, կամ ուստի՞ եկիք: Իսկ նոցա զարդարն սկսեալ խօսել, խոստովան լինէին՝ եթե եկաք զի աւերեսցուք զտեղիս, և զքեզ սպանցուք, հրամանաւ համարձակեալ ակնարկելով մեծին Հայոց տիկնոջն. այլ տէր աստուած զգօրութիւնն իւր յայտնեաց, և եցոյց մեզ՝ թէ ինքն միայն է աստուած. և այժմ ծանեաք և հաւատացաք՝ եթէ նա միայն է աստուած: Արդ այսպէս կամք աւասիկ կծկեալք, զի և շարժել անգամ ոչ կարեմք ի տեղւոջէս: Իսկ երանելին Վրթանէս զբանն վարդապետութեանն ի մէջ առնոյր, հաստատէր զնոսա ի հաւատսն ի մի տէր Յիսուս Քրիստոս, շատ ինչ խօսէր ընդ նոսա: Ապա աղօթս մատուցանէր, և խնդրէր յաստուծոյ. բժշկէր և արձակէր զնոսա յանհերհոյթ կապանացն և յանհնարին կծկութենէն տանջանացն: Եւ ետա իբրև փրկեցան յայնմանէ, ապա առ հասարակ անկանէին առաջի ետա, և խնդրէին ապաշխարութեան զդեղն. և նա տայր ժամ-

ամսի յոթին, Հովհաննես մեծ մարգարեի մատուռում: Նոյնպես և տիրոջ աշակերտների առաքելական (մատուռներում) և մարտիրոսների վկայարաններում ամեն տարի ժողովվում էին, նրանց վարքի, կյանքի և բոլոր գործերի հիշատակը խմբովին տոնում էին ցնծությամբ: Այսպես էլ դեպք եղավ այդ ժամանակ, որ Վրթանես մեծ բաճանայապետը սակավաթիվ մարդկանցով շրջում էր առանձին՝ օրինության պատարագը մատուցանելիս: Արդ՝ այն մարդիկ, որոնք մինչև այդ ժամանակ գաղտուկ պահում էին հեթանոսական կռապաշտական սովորությունները, մոտ երկու հազար հոգի, միասին ժողովվելով՝ խորհուրդ արին սպանել աստծու բաճանայապետ Վրթանեսին: Այս բանն անելու նրանք համաձայնեցան մասամբ նաև թագավորի կնոջից, որովհետև սուրբը նրան հանդիմանում էր գաղտնի շնության՝ պոռնկական վարքի պատճառով: Նրանք հասան և շրջապատեցին Աշտիշատի եկեղեցու մեծ պարիսպը: Մինչ նա ներսը պատարագն էր մատուցանում՝ բազմաթիվ զորքը դրսից կամեցավ նրան շրջափակել, պաշարել: (Բայց) գնդի մեջ եղած ամեն մի մարդու բազուկները ետ շրջվեցին և թիկունքների վրա սաճանչելապես կապվեցին, առանց որևէ մեկից կապվելու: Այսպես պաշարված, կաշկանդված, կապկապված, կծկված՝ բոլորն առհասարակ գետին թափվեցին, չկարողանալով ո՛չ ձայն հանել և ոչ տեղերիցը շարժվել: Սրանք աշխարհավեր, աշխարհակեր, չարագործ հուրհրի սերունդներն էին, նրանց տոհմից: Այսպես այդ ամբոխը պաշարված դիզված (մնում էր) եկեղեցու գավթում, (մինչև որ) ինքը Վրթանեսը դուրս գալով մոտենում էր նրանց ու հարցնում էր. ո՞վ եք դուք, ո՞րտեղից եք գալիս կամ ո՞ւմ եք ուզում, կամ ինչո՞ւ եք եկել: Նրանք սկսեցին նշմարիտը խոսել ու խոստովանեցին, թե՝ «ենկել էինք այս տեղերն ավերելու և ձեզ սպանելու, Հայոց մեծ տիկնոջ հրամանից համարձակություն գտնելով. բայց տեր աստված յուր զորությունը հայտնի դարձրեց և մեզ ցույց տվեց, թե միայն ինքն է աստված, և այժմ մենք ճանաչեցինք ու հավատացինք, թե միայն նա է աստված: Ահա մենք այսպես կծկված մնացել ենք, այնպես որ այս տեղից շարժվել անգամ չենք կարող»: Իսկ երանելի Վրթանեսը վարդապետության խոսքը մեջ բերելով՝ նրանց հաստատում էր տեր Հիսուս Քրիստոսի հավատի մեջ և շատ բան էր խոսում նրանց: Հետո նա աղոթք անելով խնդրում էր աստծուց, նրանց բժշկում և արձակում էր պներհոյթ կապանքներից և կծկվելու անտանելի տանջանքից: Երբ նրանք սրանից փրկվեցին՝ ապա բոլորն ընկնում էին նրա առաջ և խնդրում էին ապաշխարության դեղը. նա էլ նրանց տալիս էր ապաշխարության համար որոշ ժամանակ: Եվ երբ նրանք

ճակ սահմանեալ ապաշխարութեան: Եւ ուսեալք զհաւատոն միաբանական սուրբ երրորդութեանն, և ապա մկրտէր իբրև հազարս երկուս. բո՛ղ զկանայս իւրեանց և զմանկտի· և այսպէս ՚ի հաւատ խառնէր, և առնակէր սրբեալս և հաւատացեալս:

Դ

ՅԱՂԱԳՍ ԵՐԿՈՒՑ ՏՈՀՄԻՑՆ՝ ՈՐՔ ԱՆՁԱՒԱԿՑԱՆ ՚Ի Մ�էՋ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ, ՎԱՍՆ ՄԱՆԱՒԱԶԵՆՑՆ ԵՒ ՈՐԴՈՒՆԻՈՑ

Եւ զայն ժամանակաւ յարեաւ խռովութիւն մեծ յաշխարհին Հայոց, զի մեծ նախարարք և իշխանք երկու, գաւառակալք աշխարհատեարք անկանէին ընդ՝ միմեանս, մեծաւ ոխութեամբ յարուցին կռիւ, և տային ընդ միմեանս մարտ պատերազմի առանց իրաւանց: Եւ պղտառէին զմեծ աշխարհն Հայոց իշխանն Մանաւազեան տոհմին, և միւս ևս նահապետն Որդունոց տոհմին: Կռուեցան ընդ միմեանս մեծաւ պատերազմաւ և բազում մարդկան լինէր ծախումն կոտորածոյ: Ապա առաքեցին թագաւորն Խոսրով և մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս զպատուական զմեծ եպիսկոպոսն Աղբիանոս ՚ի մէջ նոցա, խօսել ՚ի հաշտութիւն խաղաղութեան: Երթեալ հասանէր ՚ի մէջ նոցա երանելին Աղբիանոս, զնոսա ուղղել նուաճել՝ ընդ միմեանս հաշտեցուցանել: Անարգեցին զնա, և ոչ լուան բարեխօսութեանն եկելոյն. անգոսնեցին զյղեփիսն, և մեծաւ բշնամանօք արձակեցին զեպիսկոպոսն, և առնուին առէրէին զառունն արհունի: Եւ զայրացեալք խստութեամբ հապճեպ տային ընդ միմեանս մարտ պատերազմի: Ապա մեծ ցասմամբք և բազում սրտմտութեամբ արձակեաց թագաւորն ՚ի վերայ նոցա զվաչէ որդի Արտաւազդայ, զնահապետ Մամիկոնեան տոհմին՝ յազգէ սպարապետութեան Հայոց, զմեծ զօրավար զօրաց իւրոց, սատակել կորուսանել զազգն երկոսեան: Ապա երթեալ հասանէր ՚ի վերայ նոցա զօրավարն Վաչէ. ճարկանէր վաղվր զազգսն երկոսեան, և ոչ թողոյր զերկոցունց տոհմացն զոռձ կորիւն և ոչ զմի.
և իճճն դառնայր առ արքայն Խոսրով թագաւորն Հայոց, և առ եպիսկոպոսապետն Վրթանէս: Եւ ետ զաւանն և զբուն գահոյից գետոն նահապետին Մանաւազենից եպիսկոպոսին Աղբիանոսի յեկեղեցի. զՄանաւազակերտ ամենայն սահմանօքն և գաւառակաւն նանդերձ՝ որ շուրջ զնոքօք էր, որ կայ ի՛ կողմանս գետոյն ծփրատայ: Եւ ետուն զբուն գետոն Որդունոց, որոյ անուն էր Որդոռու. ուստի եպիսկոպոս Բասենու ամենայն սահմանօքն նանդերձ, որ իճճն իսկ է յերկրին Բասենու:

սովորեցան հավատալ դեպի միասնական սուրբ երրորդությունը՝ ապա նրանց մկրտում էր մոտ երկու հազար մարդ, չհաշված նրանց կանանց ու երեխաներին: Այսպես նրանց հավատի էր բերում և արձակում էր սրբված ու հավատացած:

Դ

ԵՐԿՈՒ ՏՈՀՄԵՐԻ՝ ՄԱՆԱՎԱԶՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՐԴՈՒՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԻՐԵՆՑ ՍԵՓՈՒՆՆԵՐՈՎ ԲՆԱՋԻՆՋ ԵՂԱՆ

Այդ ժամանակներ մեծ խռովություն ծագեց Հայոց աշխարհում, որովհետև երկու մեծ նախարարներ ու իշխաններ, գավառների ու աշխարհների տերեր, իրար հետ ընկան, մեծ ոխակալությամբ կռիվ ծագեցրին և միմյանց հետ պատերազմում էին առանց իրավունքի և պղտորում էին Հայոց մեծ աշխարհը. մեկը Մանավազյան տոհմի իշխանն էր, իսկ մյուսը Որդունյաց տոհմի նահապետը: Սրանք մեծ պատերազմով կռվում էին, և շատ մարդկանց կոտորած էր լինում: Ապա Խոսրով թագավորը և Վրթանես մեծ եպիսկոպոսապետը Աղբիանոս պատվական մեծ եպիսկոպոսին ուղարկեցին նրանց մոտ, որպեսզի ճորդորելով հաշտեցնեն և խաղաղություն հաստատեն, և երանելի Աղբիանոսը գնաց նրանց մոտ, որ համոզե, իրար հետ հաշտեցնե: (Բայց նրանք) նրան անարգեցին, նրա միջնորդությանը չլսեցին, նրան ուղարկողներին արհամարհեցին. եպիսկոպոսին մեծ անարգանքով հեռացրին և արհունական տունն առան ու ավերեցին, և կատաղաբար շարունակում էին պատերազմը միմյանց դեմ: Ապա թագավորը սաստիկ զայրանալով նրանց դեմ ուղարկեց Արտավազդի որդի Վաչեին, Մամիկոնյան տոհմի նահապետին Հայոց սպարապետության տոհմից, իր զորքերի մեծ զորավարին, որ գնա, այդ երկու ցեղը ոչնչացնե: Ապա Վաչե զորավարը գնում էր նրանց վրա. երկու տոհմն էլ չարդում ոչնչացնում էր, երկու տոհմերից ոչ մի արու կենդանի չէր թողնում և իմը վերադառնում էր Հայոց Խոսրով թագավորի և Վրթանես էպիսկոպոսի մոտ: Եվ (թագավորը) Աղբիանոս եպիսկոպոսին տվեց ճօգուտ եկեղեցու Մանավազյանների ավանը և նրանց նահապետի բուն աթոռանիստ գյուղը, (այսինքն) Մանավազակերտը յուր բոլոր սահմաններով և նրա շուրջն եղած գավառակով՝ ծիրատ գետի կողմերում: Իսկ Որդունիների բուն գյուղը, որ կոչվում էր Որդոռու, յուր բոլոր սահմաններով, որ գտնվում է Բասենի երկրում, տվին Բասենի եպիսկոպոսին, որ Որդոռու գյուղից էր[10]:

ՎԱՍՆ ՈՐԴՈՅՆ ՎՐԹԱՆԱՅ, ՈՐՈՅ ԱՆՈՒԱՆՔՆ ԱՅՍ ԵՆ. ԱՌԱՋՆՈՅՆ ԳՐԻԳՈՐԻՍ, ԵՐԿՐՈՐԴԻՆ ՅՈՒՍԻԿ

Այս Վրթանէս և Արիստակէս որդիք էին մեծի հաւատացեալ Գրիգորի, և էր Արիստակէս կուսան՝ սուրբ ի մանկութենէ. զի թեպետ և կրսեր որդի էր, կանխաւ եճաս յաթոռ հայրենի եպիսկոպոսութեան: Իսկ Վրթանէս էր ամուսնացեալ և անորդի. և բազում ժամանակս խընդրէր նա յաստուծոյ, զի մի՛ զրկեսցի նա յօրհնութենէ զաւակի, այլ ի պատուական նորա կացցէ առաջի նորա ի պաշտօն տեառն: Եւ ի ծերութեան նորա յաւուր ախր ազօթից նորա. յղացաւ ամուսին նորա և ծնաւ երկուս որդիս երիւարեակս, և կոչեաց զանուն երիցուն յանուն հօր իւրոյ Գրիգորիս, և երկրորդին Յուսիկ: Որ սեաւ զառաջեաւ բազաւորին Հայոց, և ասմամբ գրոց փայք ի վերայ կալան ուսուցանել զնոսա: Ապա երէց որդին Գրիգորիս եճաս յեպիսկոպոսութիւն կողմանց Աղուանից և Վրաց, վասն հոգեկիր առաքինի արգասեացն, բարեճասակ, և զգիտութիւն ասառուծոյ յանձին կրելով: Ոչ ամուսնացաւ նա, այլ ի ննգետասաներորդ մենից եճաս յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Վրաց և Աղուանից, այս ինն սահմանացն Մազխաց: Երթեալ նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւար կարգօք, առաջնոյն Գրիգորի՝ հօրն գործոցն նմանելով:

Իսկ զՅուսիկ սնուցանէր Տիրան որդի բազաւորին Խոսրովու. և նա արքայորդին Տիրան զդուստր իւր կնութիւն Յուսիկեան որդւոյ Վրթանիսի: Եւ մինչ դեռ մանուկ էր, յեա միանգամ յառաջնում գիշերին մտանելոյ՝ յղացաւ կինն: Եւ իսկ և իսկ եառն ի տեսլեանն՝ զի երկու էին մանկունքն, և ոչ եաճոյ ի պաշտօն տեառն ասառուծոյ. և զղջացաւ զամուսնանալն: Լայր. և ապաչէր զասառուած, և ապաշխարէր մեծաւ տառապանօք: Եւ յամուսնանալն բռնադատեցաւ ի բազաւորէն իբրև զվանուն, սակայն և այն բան ասառուծոյ չեռնտացն գործէր, զի որ առ յապայն և առնելոց էին ի նմանէ հովիւքն գլխաւորք, որ յօգուտ աշխարհին և ի շահ եկեղեցեացն յաւետարանական հրամանացն սպասաւորել: Այլ սակայն նա բան այն մի գիշեր այլ ոչ եմուտ առ կինն իւր. և ծնաւ կինն երկուարիս, արուէս և եանս ի տեսլեանն յառաջագոյն. և կոչեցին զանուն առաջնոյն Պապ, զերկրորդին Աբանագինէս:

Եւ յեա միոյ գիշերոյ ի կինն մերձենալոյ այլ ոչ ևս մերձեցաւ ի նա, վասն առաքինութեան մտածութեան. իբրև ոչ երէ զամուսնութիւնն ինչ ապ-

ՎՐԹԱՆԵՍԻ ՈՐԴՈՅ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՑ ԱՆՈՒՆՆԵՐՆ ԵՆ՝ ԱՌԱՋԻՆԻՆԸ ԳՐԻԳՈՐԻՍ, ԵՐԿՐՈՐԴԻՆԸ ՀՈՒՍԻԿ

Այս Վրթանեսը և Արիստակեսը Գրիգոր մեծ հաւատացեալ հայրապետի որդիքն էին: Արիստակեսը կույս մնաց, մանկությունից ի վեր մաքուր, (ուստի և) ավելի վաղ նոր եպիսկոպոսական աթոռը նստավ, քեպետ և կրտսեր որդին էր: Իսկ Վրթանեսը ամուսնացած էր և անորդի էր: Նա երկար ժամանակ խնդրում էր աստծուց, որ չզրկվի զավակի օրհնությունից, այլ որ իր պտուղը տեսնե տիրոջ պաշտոնում: Եվ նրա ծերության ժամանակ տերը լսեց նրա աղոթքին— նրա կինը հղիացավ և ծնավ երկվորյակ, երկու տղա. մեծի անունը նա դրեց իր հոր անունով Գրիգորիս, իսկ երկրորդին Հուսիկ: Նրանք սնվեցին Հայոց թագավորի առաջ, և նոգ տարան նրանց գրագիտություն սովորեցնելու: Այնուհետև Գրիգորիսը, երեց որդին, որ վայելչակազմ, առաքինի անձն էր, հոգևոր արժանիքներով լի և աստվածային գիտության հմուտ՝ Վրաց և Աղվանից կողմերի եպիսկոպոսությունն ստացավ: Նա չամուսնացավ և արդեն տասնևհինգ տարեկան հասակում հասավ եպիսկոպոսական աստիճանի Վրաց և Աղվանից աշխարհների վրա, այսինքն Մասիսոտքերի սահմանների: Այնտեղ գնալով նա եկեղեցիները նորոգեց լուսավոր կարգերով, առաջին Գրիգորի՝ իր պապի[11] գործերին նմանելով:

Իսկ Հուսիկին սնուցանում էր Խոսրով թագավորի որդին Տիրանը. և արքայորդի Տիրանը իր դուստրը կնության տվեց Հուսիկին: Եվ մինչ դեռ մանուկ էր հասակով՝ մի անգամ առաջին գիշերը կնոջը մերձավորելիս կինը հղացավ: Նա իսկույն երազում տեսավ, թե երկու մանուկներ են (ծնվելու), որոնք արժանավոր չեն լինելու աստծու պաշտոնին, և զղջաց որ ամուսնացել է: Լալիս էր, աղաչում էր աստծուն, մեծ տառապանքով զղջանում էր: Նա, մանկահասակ լինելով՝ թագավորից բռնադատվեց ամուսնանալու: Բայց այս էլ կատարվում էր աստծու կամքով, որովհետև պատգայում նրանից պետք է առաջ գային գլխավոր հովիվներ, որոնք պետք է ավետարանական հրամաններին սպասավորեին հօգուտ աշխարհին և ի շահ եկեղեցիների: Բայց նա բացի այդ գիշերից այլև կնոջը մոտ չգնաց: Կինը ծնավ երկվորյակներ, ինչպես առաջուց տեսիլքում տեսել էր (Հուսիկը): Առաջինի անունը դրին Պապ, երկրորդինը Աբանագինես:

Եվ այն մի գիշերը կնոջը մերձենալուց հետո այլևս նրան չմերձեցավ՝ իր մանկական առաքինությամբ: Նա ոչ թե ամուսնությունը

տեղի համարէր, այլ կասկածէր նա ի տեսլեցէն՝ զոր եռես, եթե ընդէ՛ր բնաւ ի նմանէ այնպիսի զաւակ անպիտան ծնանիցի: Քանզի ոչ երկրաւոր զաւակի ցանկացեալ էր, այլ այնպիսումն՝ որ ի սպասաւորութիւն սպասու պաշտամանն ծառայութեան տեառն աստուծոյ կացցեն: Եւ զամենայն իսկ զերկրաւորս առ ոչինչ համարեալ, ոչ լաւ համարեցաւ զանցաւորս՝ այլ զվերինն. երկնակեաց կենացն ցանկացեալ հայէր: Լաւ համարէր զծառայելն միայն Քրիստոսի, անձին փառս համարէր. ոչ ինչ ածէր ընդ միտ զսեր թագաւորին կամ ի նմանէ կուսէ զպատուելն, կամ զընդհանուրին փեսայութեան թագաւորին. այլ յայնմ ամենայնէ ուրացեալ հրաժարէր, և օտարոտիս և գարշելիս և պատրանս համարէր: Եւ չետ առաջնոյն այլ ոչ ևս խաբեցաւ երբէք ուրեք իբրև զմանուկ. այլ հայրական միտս զծերական հանճարոյն ստացեալ, զիւրատն իմաստութեան անմահութեան: Լաւ համարեցաւ զնախատինսն Քրիստոսի, քան զմեծութիւն թագաւորացն. զնգունս վարուց ընտրեալ անձին իւրոյ, յերկոտասանամենից և ի վեր առաքինանայր: Որ իւոյ հարցն նմանեալ, և զեղբօրն իւրոյ Գրիգորի զօրինակ բերէր անձին իւրոյ. զքրիստոսեան լուծն առանց ամենայն յապաղութեան ձգէր մինչև ի վաղճան:

Բայց վասն զի թշնամանացեալ էր տուն թագաւորին ընդ նմա, և մինչ դեռ վասն այնորիկ զգուէին զնա աներ նորա, մեռաւ կին նորա, ազատեալ լինէր Յուսիկ ի բաներոյն[2]: Եւ մինչ նա հոգացեալ վասն իւր ծննդոց մնացելոց զաւակին, և վասն այսորիկ հոգալով կայր յաղօթս առ տէր, և երեցաւ նմա հրեշտակ տեառն ի տեսլեանն, և ասէ ցնա. Յուսիկ, որդի Գրիգորի, մի՛ երկնչիր. զի լուաւ տէր աղօթից քոց, և աճա ծնցի ի քո զաւակացդ այլ զաւակ: Զի լիցին նոքա ի լուսաւորութիւն գիտութեան, և աղբեւր հոգևոր իմաստութեան Հայաստան աշխարհիս: Եւ ի նոցանէ բղխեսցեն շնորհք պատուիրանացն աստուծոյ. և խաղաղութիւն բազում և շինութիւն և հաստատութիւն բազում եկեղեցեաց ի տեառնէ նոցա տացի, բազում յաղթութեամբ և մեծաւ զորութեամբ. և բազում մոլեալ դարձցին ի ճանապարհս ճշմարտութեան. որով և Քրիստոս բազում լեզուօք փառաւորեսցի նոքօք: Որ սիւնք եկեղեցեաց լինիցին, և մատակարարք բանին կենաց, և հիմունք հաւատոց. պաշտօնեայք Քրիստոսի և արբանեակք հոգւոյն սրբոյ. զի ուստի հիմն իցէ շինուածոյն, և կատարն անտի լինիցի: Եւ բազում տունկք պտղաբերք և շայեկաճ և օգտակարք ի հոգևոր դրախտին ի նոցա մշակութեանն աչոյն տնկեսցին և ընկալցին զօրինութիւն յաստուծոյ: Իսկ որք ոչն կամիցին տնկել նոքօք, և ի նոյն հոգևոր ցօղոյն գիտութենէ ըմպել,

աղտեղի բան էր համարում, այլ կասկածում էր իր տեսած տեսիլից, թե ինչո՛ւ իրանից այնպիսի անպիտան զավակ պիտի ծնի: Որովհետև նա ցանկանում էր ոչ թե երկրավոր զավակի, այլ այնպիսիների, որոնք տեր աստծուն սպասավորեն, նրան ծառայելու պաշտոնը կատարեն: Նա առհասարակ ամեն երկրավոր բան ոչինչ չէր համարում. նա լավ էր համարում ոչ թե անցավորը, այլ վերինը, նա ցանկանում էր երկնային կյանքին: Նա գերադասում էր միայն Քրիստոսի ծառայել, որը իր համար փառք էր համարում: Նա անտես էր անում թագավորի սերը, նրանից գտած պատիվները, կամ իբրև փեսա՝ թագավորի հետ ընտանությունը. այս բոլորը նա ուրանում էր, նրանցից հրաժարվում էր, համարելով իրան համար օտար, գարշելի և պատրանք: Այն առաջին անգամից հետո այլևս ոչ մի անգամ շխաբվեց իբրև մանուկ, այլ հայրական միտք, ծերունու հանճար ստանալով իմաստնացավ դեպի անմահություն ձգտելու: Ավելի լավ համարեց Քրիստոսի համար նախատինքներ կրելը քան թագավորների մեծությունը, ընտրեց իր համար զսպված կյանք, և տասներկու տարեկան հասակից ապրում էր առաքինի վարքով: Նա նմանեց իր հայրերին, հետևեց իր եղբոր Գրիգորիսի օրինակին և Քրիստոսի լուծը մինչև իր կյանքի վերջը կրում էր առանց որևէ հապաղմունքի:

Բայց թագավորի տունը նրա հետ թշնամացել էր, և մինչ աներները այս բանի համար նրան զզվեցնում էին՝ կինը մեռավ, և Հուսիկը աներոջ ձեռից[12] ազատվեց: Եվ մինչ նա հոգս էր քաշում իր ծնած, (մորից որբ) մնացած զավակների մասին և այսպիսի մտահոգությամբ աղոթում էր աստծուն՝ տիրոջ հրեշտակը տեսիլքում նրան երևաց ու ասաց նրան. «Հուսի՛կ, Գրիգորի որդի, մի՛ վախենար, որովհետև տերը ձո աղոթքներին լսեց, և աճա՛ ձո այդ զավակներից կծնվին ուրիշ զավակներ[13], որոնք Հայաստան աշխարհիս լուսավորիչներ և հոգևոր իմաստության աղբյուրներ կլինին: Նրանցից կբղխեն աստծու պատվիրանների շնորհքներ. լիուլի խաղաղություն և շենություն, շատ եկեղեցիներ նրանցով կհաստատվին տիրոջ շնորհիվ՝ մեծ հաղթությամբ ու զորությամբ, շատ մոլորվածներ կդառնան դեպի ճշմարտության ճանապարհը, և նրանց շնորհիվ Քրիստոս կփառաբանվի շատ լեզուներով: Նրանք կլինին եկեղեցիների սյուներ, կյանքի խոսքի մատակարարներ, հավատքի հիմք, Քրիստոսի պաշտոնյաներ և ս. հոգու սպասավորներ, որպեսզի ինչով որ շինվածքը հիմնվել է՝ նրանով էլ կատարածին հասնի: Նրանց մշակող ձեռներով շատ պտղաբեր, շահավետ և օգտավետ տունկեր կտնկվին հոգևոր պարտեզում և աստծուց կօրհնվին: Իսկ որոնք որ չեն կամենա նրանց միջոցով

խոտան գտանիցին՝ մեռանելոյ յանէծս. և վաղճան նոցա լիցի այրումն ճրոյն: Բազում անգամ վասն տեառն լինիցին նոքա ի հեո և ի նախանձ յանարժանացն. այլ կացցեն ի հաւատս անշարժ իբրև զվէմ, և յաղթեսցեն նոցա համբերութեամբ բազմաւ: Եւ յետ նոցա թագաւորեսցէ ստութիւն յապարասան յանձնասէր յարծաթասէր ի մտախաբ յանպատսպարան յանպիտան ի սուտակ և ի՛ բանսարկու մարդկանէ. և ապա եթէ ոք գտցի՝ որ և առասցէ ունել զոյխտ հաստատութեան հաւատոյ, հազիւ ճազիւ: Եւ զայս ամենայն լուեալ մանուկն Յուսիկ ի հրեշտակէն, մխիթարութեամբ մեծաւ գոհանայր գտեառնէ աստուծոյ, որ արժանի արար զնա այսպիսի յայտնութեան պատասխանւոյն. և զամենայն աւուրս կենաց իւրոց գոհանայր ևեթ յամենայն ժամ անդադար:

Զ

ՅԱՂԱԳՍ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՂՃԱՆԻՆ

Այլ վասն Գրիգորի եպիսկոպոսի, որդւոյ Վրթանայ, եղբօրն Յուսկան, որ կաթողիկոս էր կողմանցն Վրաց և Աղուանից, իբրև եկաց սա յիւրում պաշտամանն, մինչ դեռ մանուկն ևս էր, շինեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, և ձգեցաւ ի գաւառակողմանցն Աւարպատականի: Քարոզ ճշմարտութեան հաւատոցն Քրիստոսի լինէր նա, և առաջի իսկ ամենեցուն էր սմանչելի և զարմանալի. խստագոյն ու դժուարագոյն անհամարհ ծանրաբեռն վարուցն կրթութիւնք խստամբերութեանն, պահօք և արբութեամբ, տճկական հսկմամբ անձանձրոյթ աղօթիցն ջերմութեան առ տէր աստուած կանխելոյ վասն ամենայն մարդոյ: Ջաւետարանական ընթացսն և զվերակացութիւն եկեղեցւոյ սրբոյ շնորհօքն աստուծոյ առանց պակասութեան տանէր. առաւել ևս փութայր, գուն[3] եղեալ յարդարելով զամենեսեան առ ի բարեացն բաշխելութիւն, զցայգ և զցերեկ պահօք և աղօթիւ և ուժգին[4] խնդրուածովք և բարձրակալ կատարման հաւատովքն՝ մեռանելոց և հեռաւորաց զհոգևոր եռանդն ածէր. իբրև զպատերազմասէր հանճարակ միշտ զանձն ի կրթութիւն և ի պատրաստութեան ունէր ամենայն փորձութեանց և վշտաց, առ ի տալ պատասխանի ամենայն համարձակութեամբ, վասն ճշմարտութեան հաւատոցն մարտնչել որ վասն Քրիստոսի:

Եւ իբրև ուղեցաց և նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, եթող նա մինչև ի համբառն բանակիցն Արշակունւոց արքայիցն

տնկել և գիտութեան նույն հոգևոր ցողից ոռոգվել՝ նրանք կանիծվին ու դեն կշպրտվին, և նրանց վերջը կլինի (դժոխքի) կրակը: Նրանք շատ անգամ տիրոջ համար անարժանների կողմից կենթարկվին թշնամանքի ու նախանձի, բայց վեմի նման հաստատ կմնան իրենց հավատում և մեծ համբերությամբ նրանց կհաղթեն: Նրանցից հետո կթագավորեն ստությունը՝ անգուսպ, անձնասեր, արծաթասեր, խաբեբա, անվստահելի, անպիտան, ստախոս, բանսարկու մարդկանց ձեռով, այնպես որ շատ հշերը կմնան, որ կարողանան հաստատ պահել հավատի ուխտը»:

Մանուկ Հուսիկը հրեշտակից այս ամենը լսելով՝ մեծ մխիթարությամբ գոհանում էր տեր աստծուց, որ իրեն արժանացրեց պատասխանի՝ այսպիսի բան հայտնելով, և իր կյանքի օրերում միշտ և հանապազ գոհություն էր մատուցանում:

Է

ԳՐԻԳՈՐԻՍԻ ՎԱԽՃԱՆԻ ՄԱՍԻՆ

Վրթանեսի որդու, Հուսիկի եղբոր՝ Գրիգորիս եպիսկոպոսի մասին, որ Վրաց և Աղվանից կողմերի կաթողիկոս էր: Երբ սա իր պաշտոնն ընդունեց՝ դեռ մանուկ հասակում շինեց և նորոգեց այն կողմերի բոլոր եկեղեցիները, մինչև Աւարպատականի կողմերի գավառները: Նա ճարոզիչ էր լինում քրիստոնեական ճշմարիտ հավատին և ամենքին երևում էր սմանչելի ու զարմանալի՝ իր խստակյաց՝ անտանելի ճգնողական վարքով, պահեցողությամբ, մաքուր կյանքով, անքուն հսկումներով և անձանձրույթ ջերմ աղոթքներով առ տեր աստված՝ բոլոր մարդկանց համար: Նա աստծու շնորհքով անպակաս կատարում էր ավետարանական ընթացքը և սուրբ եկեղեցու վերակացությունը, ջանք էր անում, հորդորում, ճաշալերում էր ամենքին դեպի բարին, գիշեր և ցերեկ պահքով և աղոթքներով, ուժգին խնդրվածքներով[14] ու կատարյալ հավատով մերձավորներին ու հեռավորներին հոգևոր եռանդ էր ներշնչում. իբրև մի ճաշարի պատերազմող՝ միշտ իր անձը կրթում ու պատրաստ էր պահում ամեն տեսակ փորձությունների ու վշտերի, որպեսզի ամենայն համարձակությամբ կարողանա դուրս գալ կռվի՝ Քրիստոսի ճշմարիտ հավատի համար:

Եվ երբ այն կողմերի բոլոր եկեղեցիները կարգի բերեց ու նորոգեց՝ նա հասավ մինչև Մասիսների[15] Արշակունի թագավորի համ-

Մազքաց, որոյ անուն իւր Սանէսան կոչէր: Քանզի և նոցա և Հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն էր տոհմին բնութեան: Եւ երբեմն յանդիման լինէր թագաւորին Մազքաց, իշխանին բազմութեան զորացն Հոնաց. և եկաց առաջի նոցա, սկսաւ քարոզել և աւետարանել նոցա զՔրիստոս: Ասէ ցնոսա՝ թէ ծաներ՛ուք զաստուած. լուան և ընկալան զառաջինն և հնազանդեցան: Ապա սկսան հնել զօրէնսն Քրիստոսի, և ուսան ՚ի նմանէ՝ թէ ատելի է աստուծոյ աւարութիւն և յափշտակութիւն, սպանութիւն, ագահութիւն, այլազգութիւն, գայլոցկերութիւն, ցանկութիւն այլոց ստացուածոց: Ապա այսպիսի իմն իրօք իբրև լուան, զայրացան ընդ բանս նորա և ասեն. Զի ոչ յափշտակեցուք, զի ոչ աւարեցուք, զի ոչ առցուք զայլոյ, ի՞ւ կեցցուք այսչափ անչափ զօրաց բազմութիւնք: Եւ թէպէտ բիւրաւոր բանիւք բարեօք կամէր հաճել զսիրտս նոցա, ոչ ինչ կամէին ունկնդիր լինել, այլ ասէին ցմիմեանս. եկեալ այսպիսի բանիւ կամի ՚ի բաջութենէ որոյն կենաց մերոց խափանել զմեզ. իսկ եթէ սմա լուիցուք և դարձցուք յօրէնս Քրիստոնէութեան, ի՞ւ կեցցուք, զի ոչ յերիվար հեծցուք բստ բնութեան օրինաց սովորութեանց մերոց: Այլ, ասէին, այս խորհուրդ Հայոց թագաւորին է. զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեսցէ զմեր արշաւանս ասպատակութեան հինի յաշխարհէն իւրմէ. այլ եկայք զսա պակասեցուսցուք ՚ի միջոյ, և մեք ՚ի Հայս արշաւեսցուք, աւարաւ զմեր աշխարհս լցցուք:

Ապա շրջեցաւ թագաւորն, և լուաւ բանից զօրացն իւրոց. և կալան ձի մի ամեհի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագուլ ձիոյն, և արձակեցին ընդ ծովեզեր դաշտին հիւսիսական ծովուն մեծի, արտաքոյ իւրեանց բանակին ՚ի դաշտին Վատնեայ: Եւ այսպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստոսի զմանուկն Գրիգորիս: Եւ ապա բարձին զնա որք ընդ նմա երբեմն էին ՚ի գաւառէն Հաբանդայ, և բերին ՚ի գաւառն իւրեանց ՚ի կողմանս Աղուանից ՚ի սահմանս Հայոց ՚ի Հաբանդ, ՚ի գեօղն՝ որ անուանեալ կոչի Ամարագ: Եւ եդին զնա առ եկեղեցեաւն, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի՝ հաճնայապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին: Եւ ամ յամէ աշխարհաժողովուրդ ՚ի մի վայր ժողովեալ կողմանցն այնոցիկ և աշխարհացն գաւառացն այնոցիկ, զսուրբ զօր սոցին զյիշատակ հաչութեան ցնծան:

բարբ, որի անունն էր Սանեսան, որովհետև նրանք և Հայոց թագավորները նույն ծագումն ունեին, միևնույն տոհմիցն էին: Գնաց ներկայացավ Մասուրների թագավորին, Հոնաց բազմաթիվ զորերի իշխանին, կանգնեց նրանց առաջ և սկսեց նրանց քարոզել Քրիստոսի ավետարանը, որպեսզի նրանք ճշմարիտ աստծուն ճանաչեն: Սկզբում նրանք ընդունեցին ու հնազանդեցան: Հետո սկսեցին հնել Քրիստոսի օրենքները և այդտեղից իմացան, թե աստծուն ատելի են ավարառությունը, հափշտակությունը, սպանությունը, ագահությունը, ուրիշին զրկելը, ուրիշինը ուտելը, ուրիշների ստացվածքներին ցանկանալը: Երբ այս բաները իմացան՝ նրա խոսքերի վրա զայրացան ու ասացին. «Եթե մենք չհափշտակենք, եթե չքալանենք, եթե ուրիշների ունեցածը չխլենք՝ ապա ինչո՞վ պիտի ապրին այսքան բազմաթիվ զորերս»: Եվ թեպետ նա բյուրավոր բարի խոսքերով կամենում էր նրանց միտքը հանգեցնել՝ նրան ոչ ոք չլսեց: Նրանք ասում էին միմյանց. «Սա եկել է մեզ հաչությունից զրկելու, մեր ապրուստի որսը խափանելու. եթե մենք սրան լսենք ու քրիստոնեական հավատին դառնանք՝ ապա ինչո՞վ պիտի ապրինք, եթե մեր բնիկ սովորության համաձայն ձի չհեծնենք: Ոչ, ասում էին. սա Հայոց թագավորի խորհուրդովն է. նա է, որ սրան ուղարկել է մեզ մոտ, որ այս կրոնով խափանե մեր ավարառության արշավանքներն իր աշխարհից: Եկեք սրան միջնեանք անենք ու արշավենք Հայաստան, ավարով մեր աշխարհը լցնենք»:

Թագավորը լսեց իր զորի խոսքերին ու միտքը փոխեց: Ապա բռնեցին մի ամեհի ձի, մանուկ Գրիգորիսին կապեցին ու կախեցին ձիու պոչից և ձին վեր վարեցին հյուսիսային մեծ ծովի եզերքի դաշտում, վատնյա դաշտում, իրանց բանակից դուրս: Եվ այսպես սպանեցին Քրիստոսի առաքինի քարոզողին, մանուկ Գրիգորիսին: Ապա այն մարդիկ, որոնք Հաբանդ գավառից գնացել էին նրա հետ՝ վերցրին նրա մարմինը և բերին իրենց գավառը Հաբանդ, Աղվանից կողմերում Հայաստանի սահմանում, Ամարագ կոչված գյուղը: Նրան թաղեցին այն եկեղեցուն մոտ, որ շինել էր Գրիգորիսի պապը առաջին Գրիգորը, Հայաստան աշխարհի մեծ հաճնայապետը: Եվ ամեն տարի այդ կողմերի ու գավառների ժողովուրդն այդտեղ ժողովվելով նրա հաչության հիշատակի տոնը կատարում են ցնծությամբ:

ՅԱՂԱԴՍ ՄԵԾԻ ԳԱՏԵՐԱԶՄԻՆ ՀԻՆԻՆ ԿԿԵԼՈՑ ՅԱՐՇԱՒԱՆԱՑ ԱՐՔԱՅԻՆ ՄԱՍՔՈՒԱՑ ՅԱՇԵԼԱՐՀ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ. ԵՒ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ՍԱՏԱԿԵՑԱՒ ՆԱ ԵՒ ՋՕՐՔՆ ԻՒՐ

Յայնմ ժամանակի թագաւորն Մագբաց Սանէսան անհնարին ճիւքեաց զօրամտութիւն ոխութեան ընդ իւրում ազգակցին Խոսրովու արշային Հայոց, և գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և Փոխաց, Թաւասպարաց, Հեճմատակաց, Խժմախաց, Գաթաց, և Գղուարաց, Գուգարաց, Շչբաց և Ճղրաց և Բաղասեաց և Սգեբուանացն, և այլոց խառնաղանճ բազմութեամբ անթիւ անբնակ վաչկատուն զօրութեանց, որում միանգամ իհրն իշխէր զօրացն բազմաց: Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից գերկիրն Հայոց աշխարհին: Սք չգոյր թիւ բազմութեան հեծելազօր գնդացն, և ոչ համար շերտաւոր հետևակ զօրուն. զի և իմիեանք գիմեանց զինեանց զօրսն թուել ոչ կարէին: Բայց ուր լինէր հանդէս, ի նշանաւոր տեղիս գնդի գնդի, դրօշու դրօշու, վաշտուց վաշտուց, յերեսելի երեսելի տեղեաց՝ մէն մի բռնամբ առ այր հրամայէին, զի բերցեն ընկեսցեն՝ շեղջ կուտել. զի որչափ լիցի, այնու երեսցի նշանակ բազմութեանն, առ իմանալ վաղ վաղիւ անցելոց իրացն աճաւորութեան նշանակ: Եւ ընդ որ միանգամ անցանէին, այսպէս թողուին յամենայն ճանապարհակիցս, ի վերայ անցից պողոտայից: Եւ ելին լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց. հանդեցին, գերեցին առ հասարակ աւերեցին. սփռեցան տարածեցան զսահմանօք, լի և լի ծաւալեցան մինչև ի փոր հաղարիկն Սատաղու, և մինչև ի Գանձակ սահմանս ատրպատականաց. խաղացուցին ի մի վայր ժողովեցին, ի ժամադիր կողմանս յայրարատեան գաւառին բանակ մեծ լինէր:

Եւ խոյս ետ թագաւորն Հայոց Խոսրով յիւրմէ եղբարցն, նոյն ի Սանէսանայ յարևայէն Մագբաց. և անկան յամուր բերդն Դարեւնից[5] յերկիրն Կովգայ[6], և ընդ նման ծերունին Վրթանէս եպիսկոպոսապետն Հայոց: Ապա առնուին պահս պահել, և խնդրել յաստուծոյ զի փրկեսցէ զնոսա յայնմ ի դառն դահճէն, և սկսան խնդրել ի տեառնէ աստուծոյ: Եւ նա ծածկեալ բռնացեալ ունէր զերկիրն առ հասարակ իբրև տարի մի: Ապա եկն եհաս Վաչէ որդի Արտաւազդայ ի Մամիկոնէն տոհմէն, զօրավար ամենայն Հայոց մեծաց: Չի երթեալ էր նա ի ժամանակին յայնմիկ զերկայն ճանապարհս ի կողմանս Յունաց: Ապա ժողովեաց նա զամենայն բազս բազս նախարարացն, և գունդ կազմէր բազում յոյժ. և հասանէր անկանէր ի վերայ բանակին, յառաւօտուն ժամուն

ՄԱՍՔՈՒԻՔՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԻՆԱԿԱՆ ԱՍՊԱՏԱԿԸ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԱՍՔՈՒԻՔՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԻՆԱԿԱՆ ԱՍՊԱՏԱԿԸ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԻՆՔՉԳԵՍ ՆԱ ՋՕՐՔՈՎ ՄԻԱՍԻՆ ԿՈՏՈՐՎԵՑ

Այն ժամանակ Մասուրեների Սանեսան թագավորը սաստիկ բարկանալով բշնամացավ իր ազգակից՝ Հայոց Խոսրով թագավորի հետ, և ժողովեց գումարեց բոլոր զորերը[16]—Հոներ, Փոխեր, Թավասպարներ, Հեճմատակներ, Խժմախներ, Գաթեր, Գղվարներ, Գուգարներ, Շչբեր, Ճղրեր, Բաղասիհներ, Սգեբսվաններ և այլ խառնիճաղանճ թափառական վաչկատուն ցեղերի անթիվ բազմություն, որոնց առնասարակ իհրն էր իշխում: Սկավ անցավ իր սահմանը, մեծ Կուր գետը, ու սփռվեց ու լցրեց Հայոց աշխարհը: Թիվ չկար նրա հեծյալ գնդերի բազմության և ոչ հաշիվ կոպալավոր հետևակ զորի, որովհետև իրենք էլ չէին կարողանում իրենց զորը համարել: Բայց երբ մի նշանավոր երևելի տեղ էին հասնում և հանդես էին կազմում ըստ գնդերի, դրոշակների և վաշտերի՝ հրամայում էին որ ամեն մի մարդ մի ձեռի մար բերեն, մի տեղ ածեն, կույտ կազմեն, որպեսզի ինչման որ լինի՝ նրանով էլ հասկացվի բազմության չափը, և ապագայի համար մնա անցած օրերի այս անվանի նշանը: Սվ որտեղից որ անցնում էին՝ այսպիսի նշաններ էին թողնում հանապարհների խաչվող տեղերում, պողոտաների վրա: Նրանք եկան, լցվեցին, Հայոց ամբողջ երկիրը ծածկեցին. հանդեցին, գերեցին, միանգամայն ավերեցին, երկրի բոլոր սահմաններում ծավալվեցին մինչև Սատաղու փորիկ հաղարը, մինչև Գանձակ՝ Ատրապատականի սահմանում: (Ավարն ու գերիները) բերին մի սահմանված տեղ ժողովեցին Այրարատյան գավառում, որտեղ մեծ բանակ էր կազմված:

Սվ Հայոց Խոսրով թագավորը խույս տվեց իր եղբորից[17], այսինքն Մասուրեների Սանեսան թագավորից, և գնաց Կովգի[18] երկիրը, ընկավ ամուր Դարեոնք բերդը: Նրանց հետ էր նաև Հայոց ծերունի եպիսկոպոսապետը, Վրթանես: Այնտեղ նրանք սկսեցին պահք պահել և աստծուց խնդրել, որ նրանց փրկե այն դառն դահճից, այս էին խնդրում մեր աստծուց: Իսկ նա գրեթե մի տարի բռնացել, գրավել էր ամբողջ երկիրը:

Այս ժամանակ եկավ հասավ Մեծ Հայքի զորավար Վաչեն, Արտավազդի որդին, Մամիկոնյան տոհմից, որ այդ ժամանակ երկար ճանապարհորդություն էր կատարել Հունաց կողմերը: Նա ժողովեց նախարարներից բաղերին, խիստ բազմամարդ գունդ կազմեց և հար-

այգեճալոյն պաշտամանեն. զի բանակեալ էին նոքա ի լերինն՝ որ կոչի Ցլու գլուխ. և առ նասարակ ընդ սուր հանին զամենեսեան, և ոչ մի ոչ ապրեցուցանէր, և դարձուցանէր զբազմութիւն գերեացն: Եւ յետ այսորիկ առնոյր զաւարս, խաղայր գնայր երթայր իջանէր ի դաշտն Այրարատեան գաւառին. երթայր գտանէր զՍանէսան թագաւորն Մագբաց բուն գնդաւն, անթիւ անհամար զօրովն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքի: Առեալ զգունդն Վաչէ, և յանկարծակի յարձակեցաւ ի վերայ քաղաքին, և մատնեաց զնոսա տէր ի ձեռս նորա:

Եւ իբրև տեսին զնա յարձակեալ ի վերայ իւրեանց, փախեան ելին ի քաղաքէ անտի յառապարն ի կողմն Յօշական բերդին. և զանապատն և զքարուտ տեղիսն ապաւէն իւրեանց համարեցան. և լինէր սաստիկ պատերազմ յոյժ յոյժ: Եւ նիզակակիցք զօրավարին Հայոց, որ էին Բագրատ Բագրատունի, Մեհունդակ և Գարեգին ըՒշխանիք, և Վահան[7] նահապետն Ամատունեաց տոհմին, և Վարազ կամիճական, հասանէին հարկանէին սատակէին զօրսն Ալանացն և Մազբացն և Հոնացն և զայլոց ազգացն, և լնուին զդաշտն առապարացն առ հասարակ դիակամբ մեռելոց. մինչ զի իբրև զգետ յարուցեալ երթայր արիւնն անհնարին, և ոչ լինէր քիւ զօրացն մեռելոց: Եւ զմնացեալսն սակաւս առաջի իւրեանց հալածականս տանէին մինչև յաշխարհն Բաղասեաց, և զգլուխն Սանէսանայ մեծի թագաւորին եկին բերին առաջի արքային Հայոց: Սակայն իբրև եհաս, լալ սկսաւ. ասէ. Եղբայր իմ էր ազգաւ Աւշականի: Ապա եկեալ արքայն ի տեղի ճակատուն, և ընդ նմա մեծ եպիսկոպոսապետն Հայոց. և տեսին զկոտորածն զօրացն հարելոց, զի նեխէր երկիրն ի հոտոյ մեռելոցն: Ապա եառն հրաման՝ Գուգազ հաներ յաշխարհէ, և անդէն ծածկել քարակարկառ վիմօք, զի մի՛ ի շարաւոյ հոտոյն մեռելոցն ախտանայցեն երկիրն պղծեսցի: Եւ դադարեաց երկիրն ի խաղաղութեան ամս հարուստ մի. և այսպէս վրէժ սրբոյն Գրիգորիսի խնդրեցաւ ի թագաւորէն Սանէսանայ և ի բանակէ նորա. զի ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի:

Ը

ՅԱՂԱԳՍ ՄԱՏՐԵԱՑՆ ՏՆԿԱԼՈՑ, ԵՒ ՎԱՍՆ ՊԱՏԵՐԱԶՄԱՑՆ ԸՆԴ ՊԱՐՍ. ԵՒ ՎԱՍՆ ԱՂՑԱՀԱՏՈՒԹԵԱՆ ՏՈՀՄԻՆ ԲԶՆՈՒՆԵԱՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Եւ իբրև առ ժամանակ մի խաղաղացաւ երկիրս Հայոց, ապա եառ հրամանս թագաւորն Հայոց Խոսրով, տալ պարգևս առանցն խաչացն՝ որ

ձակվեց (Սանեսանի) բանակի վրա լուսադեմին (եկեղեցական) պաշտոն կատարելու ժամանակ: Նրանք բանակ էին դրել Ցլու գլուխ կոչված թոռան վրա: (Վաչեն) նրանց բոլորին սրի անցկացրեց, ոչ մեկին կենդանի չթողեց և գերիների ողջ բազմությունը ետ դարձրեց: Հետո ժողովեց ավարը և գնաց իջավ Այրարատյան գավառի դաշտը: Այնտեղ նա Վաղարշապատ քաղաքում գտավ Մասուրքների Սանեսան թագավորին բուն գնդի հետ, որ անհամար բազմություն էր կազմում: (Վաչեն) հանկարծակի հարձակվեց քաղաքի վրա, և տերը նրանց նրա ձեռքը մատնեց:

Երբ քշնամիները տեսան նրա հարձակումն իրենց վրա՝ քաղաքից դուրս եկան, փախան դեպի առապարը, Օշական բերդի կողմը, ապավինելով այն անապատին ու քարքարոտ տեղերին: Սաստիկ մեծ պատերազմ եղավ: Եվ Հայոց զորավարի նիզակակիցները, որ էին Բագրատ Բագրատունին, Մեհունդակ և Գարեգին Իշխանիները և Ամատունյաց տոհմի նախարար Վահանը և Վարազ Կամիճականը, հասնում զարնում ջարդում էին Ալանների, Մասուրքների, Հոների և մյուս ազգերի զորքերը և ամբողջ առապարի դաշտը լցնում էին մեռածների դիակներով, այնպես որ արյունը գետի նման առատ հոսում էր, և քիվ չկար սպանված զորքերին: Սակավաթիվ մնացորդներին էլ առաջ խաղնելով հալածում էին մինչև Բաղասեիների աշխարհը: Սանեսան մեծ թագավորի գլուխն էլ բերում էին Հայոց թագավորին: Իսկ նա երբ տեսավ՝ սկսեց լալ ու ասաց. «Իմ եղբայրն էր, Աւշականի ցեղից»: Այնուհետև թագավորը Հայոց մեծ եպիսկոպոսապետի հետ եկավ ճակատամարտի տեղը: Տեսան սպանված զորքերի կոտորածը. մեռածների հոտից երկիրը լցվել էր գարշահոտությամբ: Հրաման տվին՝ աշխարհից գուգազ[19] հանել, դիակները թաղել, վրան քարերով ծածկելով, մի գուցե երկիրը ապականվի մեռելների գարշահոտ շարավից: Երկիրը խաղաղացավ բավական տարիներ: Այսպես սուրբ Գրիգորիսի վրեժը առնվեց Սանեսան թագավորից և նրա բանակից, որովհետև նրանցից ոչ մեկը չմնաց:

ՄԵՐԻՆԵՐԸ ՏՆԿԵԼԸ, ԳԱՐՍԻԿՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ԲԶՆՈՒՆՅԱՑ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՀՄԻ ՍԵՐՀԱՏՎԵԼԸ

Երբ Հայոց երկիրն առ ժամանակ խաղաղացավ՝ ապա Հայոց Խոսրով թագավորը հրամայեց պարգևներ տալ այն հաջ մարդկանց,

վաստակեցին ճմա, և փոխանակեցին զանձինս իւրեանց փոխանակ աշխարհին Հայոց մեծաց յամենայն ի մարտ ճակատուցն պատերազմաց: Եւ ետ Վաչէի զօրավարի զակաս Ջանչանակին և զՋրաբաշխս և զՑլու գլուխ, ամենայն գաւառակօճն հանդերձ. նոյնպէս և այլոց նախարարացն մեծամեծ պարգեւս: Եւ ետ հրաման թագաւորն զօրավարին իւրոյ՝ հանել խաչար յաշխարհէն բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տընկել զայն յԱյրարատեան գաւառին. և առեալ յամուր բերդէն արմունի, որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտն Մեծամօրի ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ հազարին մեծի Արտաշատու, զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնուհւոյ՝ տնկեցին զկաղնին: Եւ կոչեաց զանուն նորա Տաճար մայրի: Եւ միւս ի մայրեացն յեղէգնաբերանին ի նմանէ ի հարաւակոյս լցին զդաշտն կաղնատուն տնկով. և կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ: Եւ անդ շինեցին զապարանսն արմունական, և զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին. և ոչ կցեցին ի միմեանս վասն պողոտայի ճանապարհին: Եւ աճեաց բարձրացաւ. և ապա զամենայն էրէս և զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն, և լնուլ զհաղորմսն, զի լիցին նոցա տեղիք որսոց զբօսանաց ուրախութեան թագաւորութեան նորա: Եւ զօրավարն Վաչէ կատարէր վաղվաղակի զասացեալսն արքայի:

Եւ մինչդեռ նա յայնմ գործ զմայրեօճն տնկելովք էր, յանկարծակի գուշակ հասանէր առ Խոսրով ի Հէր և ի՛ Զարաւանդ գաւառ, թէ պատրաստեալ են զօրն Պարսից գալ հասանել ի գործ պատերազմի ի վերայ ն: Ապա հրաման ետ արքայ Խոսրով Դատաբայ ճանապետի Բզնունեաց, գուգազ հանել յաշխարհէ աւելի քան զչափն և զհամար զօրսն մատենիկ գնդաւն ընդ առաջ նոցա խաղալ հասանել ի դիմի հարկանել, արգելուլ զբշնամիսն: Ապա Դատաբէն երթայր ընդ առաջ զօրացն Պարսից բազմութեամբ զօրօճն Հայոց: Իբրև հասանէր Դատաբէն, խորհուրդ միաբանութեան դնէր ընդ իշխանսն զօրացն Պարսից. կամեցաւ մատնել ի ձեռս նոցա զարքայն Հայոց զտէրն իւր, դարան հրամայեաց գործել բշնամեացն ի վերայ իւրոց զօրացն, և անդրէն սուր ետ դնել ի վերայ իւրոց զօրացն: Յանկարծ յեղակարծումն տարակարծի՝ քառասուն հազար զօրսն Հայոց միանգամայն կոտորէին, և այլ զօրն փախստական լինէին· և Դատաբէն չարագործ առնոյր զօրսն Պարսից, և կամէր անկանել ի վերայ թագաւորին Հայոց: Ապա փախստականք զօրացն վաղ հասանէին ի բանակ արքային Հայոց, գոյժ առնել զանձնարին կործանումն իրացն եղելոց, զչարագործութիւն մատնութեանն աճօրէն Դատաբենայ:

որոճ նա համար աշխատեցան և պատերազմի ճակատամարտեցան իրենց անձն դրին Մեծ Հայոյ աշխարհի համար: Նա Վաչէ զօրավարին տվեց Ջանչանակի ակունքներ, Ջրաբաշխը և Ցլու գլուխը բոլոր փոքր գավառներով, նոյնպես և մեծամեծ պարգևներ մյուս նախարարներին:

Եվ հրաման տվեց թագավորն իր զորավարին՝ աշխարհից բազմաթիվ մշակներ[20] հավաքել, անտառներից վայրի կաղին հանել ու բերել տնկել Այրարատյան գավառում, սկսելով արմունի ամուր բերդից, որին ասում են Գառնի, մինչև Մեծամորի դաշտը, այն բլուրը, որ կոչվում է Դվին[21] և գտնվում է Արտաշատ մեծ քաղաքի հյուսիսային կողմում: Եվ այսպես մերի տնկեցին գետի ընթացքով դեպի ներքև, մինչև Տիկնուհի ապարանքը: Նա այս մերին կոչեց Տաճար մայրի: Մի ուրիշ մերի էլ տնկեցին նրանից դեպի հարավ, եղեգնուտի եզերքով, և ամբողջ դաշտը լցրին կաղնի տնկով. սրա անունն էլ դրին Խոսրովակերտ: Նույն տեղում շինեցին նաև արմունական ապարանքներ: Երկու մերիներն էլ պարիսպներով փակեցին, առանց իրար հետ կցելու, անցուդարձի հանապարհի համար: (Մերին) աճեց ու բարձրացավ: Հետո թագավորը հրամայեց ամեն տեսակ երեներ ու գազաններ ժողովել ու լցնել պարսպապատված տեղերը, որպեսզի նրա թագավորության որսի՝ զբոսանքի և ուրախության տեղեր դառնան: Վաչեն անմիջապես կատարեց թագավորի ասածները:

Եվ մինչ Խոսրով զբաղված էր մերիները տնկելով՝ հանկարծ լուր հասավ նրան Հեր ու Զարավանդ գավառից[22], թե Պարսից զորքերը պատրաստվում են պատերազմով հեզ վրա գալու: Խոսրով թագավորը հրաման տվեց Բզնունյաց Դատաբե հանապետին՝ աշխարհից գուգազ հանել անչափ և անհամար, և մատենիկ գնդի[23] հետ միասին դուրս գալ բշնամու առաջ, դիմադրել, նրա առաջն առնել: Եվ Դատաբեն գնաց Պարսից զորին ընդառաջ Հայոց զորի բազմությամբ: Երբ Դատաբեն Պարսից զորին ընդառաջ Հայոց զորի բազմությամբ: Երբ Դատաբեն հասավ՝ Պարսից զորքերի մեծերի հետ միաբանեցավ, միտքը դնելով նրանց ձեռքը մատնել Հայոց թագավորին, իր տիրոջը: Նա բշնամիներին հրամայեց դարան սարքել իր զորի դեմ և բշնամու սրերին մատնեց իր զորքը: Հանկարծ՝ անսպասելի կերպով (հարձակվում) կոտորում էին Հայոց քառասուն հազար զորքը, և մյուս զորքը դիմում էր փախուստի: Իսկ չարագործ Դատաբեն առնում էր Պարսից զորքը և կամենում էր Հայոց թագավորի վրա հարձակվել: Փախստական զորքերն ավելի վաղ հասնում էին Հայոց թագավորի բանակը, գուժում էին պատահած սարսափելի կործանումը, անօրեն Դատաբենի մատնության չարագործությունը:

Ապա անկանէր թաւալէր խնդրէր յաստուծոյ բազում պաղատանօք և ուժգին արտասուօք թագաւորն Հայոց Խոսրով հանդերձ Վրթանաւ եպիսկոպոսիւն: Եւ յետ այսորիկ աճապարէր կուտէր զօրսն առ ինքն իբրև երեսուն հազար, հանդերձ զօրավարաւն Վաչէիւ. գայր հասանէր ընդ առաջ նոցա, ամենայն աւագախումբ մեծամեծ նախարարօք իւրովք: Եւ դիպեցան միմեանց առ ափն ծովուն Բզնունեաց, յԱռեստն աւանի, ի ձկնատեսանան արտունի ի վերայ գետակին: Եւ տեսին զօրսն Պարսից, զի ոչ գոյր թիւ բազմութեանն. զի էին իբրև զաստեղս երկնից, և իբրև զաւազ առ ափն ծովու. զի եկեալ էին անթիւ փղօք և անչափ զօրօք: Եւ սոքա հասին անկան ի վերայ բանակին, յուսացեալք առ աստուած. հարին, սատակեցին, կոտորեցին և ոչ թողին ի նոցանէ և ոչ մի: Եւ թափէին աւար բազում, և զփիղսն և զամենայն ոյժ զօրութեան նոցա: Ձերբակալ արարեալ զԴատաբէնն Վաչէ սպարապետն և զայլ Վահան ամատունի, ածէին զնա առաջի մեծի թագաւորին Խոսրովու, և հարկոծ առնէին զնա հարամբ իբրև զայր, որ աշխարհի և գնդի և զօրաց տեառն իւրոյ դաւաճան լեալ իցէ: Եւ զազգ նորա և զկին և զորդիս գտանէր յամրոցի անդ իշխանին բզնունեաց յանուանեալն յԱղբամար կղզւոջ. ի նաւ ելեալ Վաչէ սպարապետն, անցեալ ի կղզին՝ առ հասարակ ոչ զէգ թողոյր և ոչ զարու: Եւ այսպէս բարձաւ ազգատոհմ նախարարութեանն այնորիկ. և զտուն նոցա յարմունիս կալան:

Բայց յետ այսորիկ ոչ դադարէին Պարսք ի տալ պատերազմ ընդ Խոսրովու արքային. և նա դէր օրէնս, զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիւրաւորքն և հազարաւորքն, կայցեն առ արքային, և ընդ նմա շրջեսցին, և մի՛ ոք երթիցէ ի նոցանէ ընդ զօրս արքունի: Զի երկնչէր նա յերկմտութենէ նոցա, զի գուցէ զնոյն գործ Դատաբենայն գործիցեն, և ապստամբ լինիցին ի նմանէ: Բայց վստահ լինէր ի ծերունին Վաչէ, ի բուն սպարապետն ի զօրավարն Հայոց մեծաց, և ի քաջ Վահան յԱմատունի: Գումարէր զօրսն ամենայն տանցն աւագանւոյն ընդ զօրսն արքունի, և տայր զգումարտակն ամենայն ի ձեռս նոցա. և հանապազ կային ի քաջութեան ի մարտ պատերազմի ի սահմանս Պարսից. և ոչ տային անխտիր արշաւել աւերել զերկիրն Հայոց, և ոչ նայել: Եւ կայր արքայ ի հանգստի, և աշխարհ ի շինութեան և ի խաղաղութեան զամենայն աւուրս կենաց նոցա:

Այն ժամանակ Հայոց Խոսրով թագավորը Վրթանես եպիսկոպոսի հետ թավալվում էր գետին, մեծ պաղատանքով, չերմ արտասուքներով աստծուց (օգնություն) էր խնդրում: Սրանից հետո փութով հավաքում էր իր մոտ զորքերը, մոտ երեսուն հազար մարդ, վաչե զորավարի հետ, և (թշնամու) դեմ էր գնում բոլոր իր ավագ նախարարների հետ միասին: Նրանք իրար հանդիպեցին Առեստ ավանում, փորր գետակի վրա արքունական ձկնորսարանում[24]: Տեսան Պարսից զորքի անհամար բազմությունը՝ ինչպես երկնքի աստղերը և ինչպես ավազ ծովի ափին, որովհետև եկել էին անթիվ փղերով և անչափ զորքով: Իսկ սրանք հասան, հարձակվեցին նրանց բանակի վրա, աստծուն հուսալով. զարկին, կոտորեցին, ոչնչացրին. մեկին էլ կենդանի չթողին: Եվ մեծ ավար խլեցին նրանցից և փղերը և նրանց զորության բոլոր ույժը: Նաև Դատաբենին վաչե սպարապետը և քաջ Վահան Ամատունին ձերբակալեցին և բերին Խոսրով մեծ թագավորի առաջ. նրան քարերով քարկոծեցին իբրև մի մարդու՝ որ դավաճանել է իր աշխարհին և իր տիրոջ գնդին ու զորքերին: Նրա տոհմը, կինը և որդիքը գտնվում էին Բզնունյաց իշխանի ամրոցում, Աղբամար կոչված կղզում: վաչե սպարապետը նավ նստեց ու կղզին մտնելով ո՛չ էգ թողեց և ոչ արու: Այս կերպով այդ նախարարական տոհմը ոչնչացավ, և նրա տունը (կալվածները) արքունիք գրավվեց:

Բայց սրանից հետո էլ պարսիկները չէին դադարում Խոսրով թագավորի հետ պատերազմելուց: Եվ նա օրենք սահմանեց, որ մեծամեծ ավագանին, աշխարհակալ՝ աշխարհատեր նախարարները, որոնք բյուրավոր և հազարավոր (զինվորների տեր էին)[25], թագավորի մոտ մնան և նրա հետ շրջին, և նրանցից ոչ ոք չգնա արքունի զորքի հետ: Որովհետև նա վախենում էր նրանց երկմտությունից, մի գուցե Դատաբենի նման վարվին և իրանից ապստամբին: Բայց նա վստահ էր ծերունի Վաչեի, Մեծ Հայքի բուն սպարապետի և զորավարի և քաջ Վահան Ամատունու վրա: Բոլոր ավագ նախարարական տների զորքերը գումարում էր արքունի զորքերի հետ և ամբողջ գումարտակը տալիս էր սրանց ձեռքը, և սրանք շարունակ քաջաբար պատերազմում էին Պարսից սահմաններում և թույլ չէին տալիս դյուրությամբ մտնել ու ավերել Հայոց երկիրը[26]: Եվ թագավորը հանգստություն էր վայելում, աշխարհը շեն ու խաղաղ էր նրանց կյանքի բոլոր օրերում:

ՅԱՂԱԳՍ ԲԱԿՈՒՐ ԲԴԵՇԽԻՆ՝ ՈՐ ԱԳՍՏԱՄԲԵԱՑ ՅԱՐՔԱՅԵՆ ՀԱՅՈՑ, ԵՒ ՓՈԽԱՆԱԿ ՆՈՐԱ ԼԻՆԷՐ ԲԴԵՇԽ ՎԱՂԻՆԱԿ

Ջայնու ժամանակաւ ապստամբեաց յարմայէն Հայոց մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բդեաշխն. որ էր մի ի չորից գահերէց բարձրէրց տաճարին արմունի: Ետ ձեռս յարմայն Պարսից. և մատնեաց զարմուճի տունն, որ յեց յիմնի էր: Եւ էած զօրս արմային Պարսից ի թիկունս իւր, և հատաւ յերկրէն յիշխանութենէն Հայոց, և տայր պատերազմ ընդ արմային Հայոց՝ ուժով Պարսից թագաւորութեանն. և սաստկանայր մարտ պատերազմին: Ապա առաքէր թագաւորն Հայոց զբարեկիր զծառայս իւր, զիշխանն Կորդուաց զՋոնն, և զիշխանն մեծի Մոփաց զՄար, և զիշխանն Մոփաց Շահիլի Ներսեհ, և զիշխանն Սիւնեաց զՎաղինակ, և զիշխանն՝ Հաշտենից զԴատ, և զիշխանն Բասենոյ զՄանակ, հանդերձ բազում զօրօք: Ապա չոգան յաղթեցին զօրացն Պարսից, և առ հասարակ ընդ սուր հանին զամենայն. և սպանին զբդեաշխն, եղբարբ և որդովք իւրովք հանդերձ: Բայց զաղջիկ մի գդուստր նորածին, և զգլուխն Բակուր բդեշխին բերին առ արմայ: Եւ իբրև այլ ոք ոչ էր մնացեալ յազգէն, ետ արմայ զաղջիկն կնութիւն սիրելոյն արմայի Վաղինեկայ սիւնւոյ, և զտունն Աղձնեաց. և արար զնա բդեաշխ և պայեազատ տան նորուն: Ժառանգն բազմացաւ, և հանդերձ աշխարհաւն և ամենայն ուժովն կայր բդեաշխն Վաղինակ ի ծառայութեան արմային հանապազ: Բայց յորդւոցն Բակուր բդեշխի պատանեակ մի փախեաւ անկաւ առ զօրավարն Հայոց Վաչէ, և անդ ապրեցաւ թագուցեալ ի տան նորա: Որ առ յապա ժառանգ տան նորա յինէր: Որ յայլում ժամանակի դարձաւ կալաւ զտունն իւր. որոյ անուն Խեչա կոչէր:

ՅԱՂԱԳՍ ՅԱԿՈԲԱՅ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՄԾԲՆԱՅ

Ջայնու ժամանակաւ խաղաց գնաց մեծ եպիսկոպոսն մծբնացւոց, այր սքանչելի ծերունի, վաստակասէր ի գործս եկմարտութեան, որում անուն Յակոբ, փոխանակ ազգաւն պարսիկ կոչէր, այր բնտրեալ յաստուծոյ, յիրմէ խաղաղէ անտի գալ հասանել ի լերինս Հայոց, ի լեառնն Սարաւադայ ի սահմանս Այրարատեան տէրութեան ի գաւառն Կոր-

ԲԱԿՈՒՐ ԲԴԵՇԽԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱԳՍՏԱՄԲԵՑԱՎ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻՑ, ՈՐԻ ՓՈԽԱՐԵՆ ԲԴԵՇԽ ԴԱՐՁԱՎ ՎԱՂԻՆԱԿԸ

Այդ ժամանակներ Հայոց թագավորից ապստամբեցավ նրա հպատակներից մեկը, Աղձնյաց մեծ իշխանը, որ բդեշխ էր կոչվում[27], որ արմունական սեղանի չորս բարձրագույն գահերից[28] մեկն էր գրավում: Նա ձեռք մեկնեց Պարսից թագավորին և նրան մատնեց արմունի տունը, որ իր կալվածին կից էր[29]: Նա Պարսից թագավորից զորք բերել տվեց իրան օգնության, անջատվեց Հայաստանից և Հայոց թագավորի դեմ պատերազմ էր մղում Պարսից թագավորության ույժով, և պատերազմը սաստկանում էր: Եվ Հայոց թագավորը (նրանց դեմ) էր ուղարկում մեծ զորով իր բարեմիտ հպատակներին— Կորդվաց Ջոն իշխանին, Մեծ Մոփքի Մար իշխանին, Շահեի Մոփքի[30] իշխան Ներսեհին, Սյունյաց Վաղինակ իշխանին, Հաշտենից Դատ իշխանին և Բասենի Մանակ իշխանին: Սրանք գնացին հաղթեցին Պարսից զորերին և բոլորին առհասարակ սրի հաշեցին, նույնպես սպանեցին բդեշխին՝ եղբայրների ու որդոց հետ: Բայց Բակուրի գլուխը և մի նորածին աղջիկ բերին թագավորին: Եվ որովհետև նրա տոհմից ուրիշ ոչ ոք չէր մնացել՝ թագավորն այդ աղջիկը կնության տվեց իր սիրելի Վաղինակ Սյունիին, նրան տվեց նաև Աղձնյաց տունը և նրան դարձրեց բդեշխ և ժառանգ այդ տան: Ժառանգը բազմացավ, և Վաղինակն ամբողջ այդ երկրով և բոլոր ուժով ծառայում էր միշտ թագավորին. բայց Բակուր բդեշխի որդիներից մի պատանի փախավ ու ապաստանեց Հայոց Վաչե զորավարի մոտ և նրա տանը թաքնվելով (մանից) ազատվեց, որ և հետո, ուրիշ ժամանակ, դարձավ, իր տունը գրավեց ու ժառանգ դարձավ: Նրա անունն էր Խեչա:

ՄԾԲԻՆԻ ՀԱԿՈԲ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ

Այն ժամանակներ Մծբինի մեծ եպիսկոպոսը, մի սքանչելի ծերունի, եկմարտության գործերով զբաղված, որի անունն էր Հակոբ, Զգոն կոչված, պարսիկ Անակի որդին[31], աստծու ընտրած մարդը, վեր կացավ իր հաղթից, որպեսզի գա հասնի Հայոց լեռները, Սարաւադ

գուաց. այր լի շնորհօճ Քրիստոսի, որպէս զօրութիւճ ճշանաց և սուտնատից լինէին ի ձեռաց նորա: Սա եկեալ ցանկացեալ փափաճեալ մեծաւ տենչանօք աղաչէր զաստուած՝ տեսանել զփրկական տապանն եդեճեան չինուածոյն, զի յայս լերին հանգեաւ նա ի ջրհեղեղէն. բանզի զամենայն ինչ որ հայցէր, առնոյր ի տեառնէ: Ապա մինչդեռ ելանէր բնդ դժուարին բնդ անջրդի բնդ ափափայսն անապատին Սարարադեան լերինն, աչխատեցան և ծարաւեցան նա և որ բնդ նմայն էին: Ապա դնէր ծունր մեծն Յակոբ ի վերայ երկրին, և կայր յաղօթս առ տէր. և ի տեզուչն՝ ուր եդեալ էր զգլուխ իւր՝ բղխեաց աղբիւր, և արբին նա և որ բնդ նմայն էին. որ մինչև ցայսօր ասեն այնմիկ աղբիւր Յակոբայ: Եւ ինքն ի նմին աչխատեալ դեգերէր՝ զխնդրելին տեսանել առանց յապաղութեան, առնէր աղօթս առ տէր:

Արդ իբրև էր նա խոնճեալ ի վեր ի դժուարին տեղուչն մօտ ի կատարն, և կարի վաստակեալ էր, ննչեաց նա. և եկն հրեչտակ աստուծոյ և ասէ ցնա. Յակոբ Յակոբ: Եւ նա ասէ. Աւասիկ տէր: Եւ ասէ հրեչտակն. Ահա բնկալաւ տէր զաղաչանս ձո, և կատարեաց զխնդրուածդ ձո. այդ. որ կայ բնդ սնարս ձո, է ի փայտից տապանակին. ահա բերի բեզ, անուի է այդ. զի այլ մի՛ ևս յաւելցես տեսանել զայն. զի տէր այդպէս կամեցաւ: Եւ մեծաւ խնդութեամբ յոտն կացեալ, բազում գոհութեամբ երկիր պագանէր տեառն, և տեսանէր զտախտակն՝ իբրև զի կացեաւ հատեալ հանեալ ճեղճեալ ի մեծ ինչ փայտից: Եւ առեալ զառնայր անտի, հանդերձ շնորհատուր պարգեւովն, և որ բնդ նմայն երբեալ՝ իւրովքն ճանապարհորդ լինէր: Եւ ոչ այնպէս մեծն Մովսէս զուարթագոյն ցնծայր յէջսն Սինէական լեռնէն, չասէաք եթէ առաւելովքն պակասագոյն: Քանզի յաստուծոյ առեալ և աստուածագիր հրամանօք ի բազուկս, այր աստուածատեսիլ ի լեռնէն իջաներ: Այլ վասն վրիժագործ ժողովրդեանն, որոյ զթիկունսն ի տէրունիսն[8] և կործան յերեսս՝ տիրադուժ իւրեանցակուռ ձուլելոյն երկիր պագանէին, և նովին զհրամանաբերն սուտասուչ սուտարեկ կացուցանէին: Քանզի ի տախտակացն խորտակելոցն յայտնի երևէր բերելեացն թաղծութիւն: Իսկ այս երանելոյս, վասն որոյ և ճառելոս յարդարին, ոչ բստ այնմ օրինակի՝ որ անդ գործեցաւ. այլ ինքն իւրովքն լցեալ հոգևոր մխիթարութեամբ, կարծեալ զեղուճելեացն զյուժարութիւն յուսով դիտաւորութիւն զնանապարհաց աւետաբերաց: Քանզի յայտնեօք և ծածկելովք, բանզի միոյն միայն յամենագօրէն առ ամենայն ազգս երկրածնաց շնորհին՝ մատակարարէին:

լեռը[32], որ գտնվում էր Այրարատյան տերության սահմաններում, Կորդվաց գավառում: Նա լի էր աստվածային շնորհներով, այնպես որ նրա ձեռքով հրաշքներ էին կատարվում: Նա եկավ մեծ փափագով ու ցանկությամբ և աղաչում էր աստծուն, որ կարողանա տեսնել նոյի փրկական տապանը, որ ջրհեղեղից հետո այս լեռան վրա էր հանգչել. որովհետև ինչ որ նա աստծուց խնդրում էր՝ ստանում էր: Արդ՝ երբ նա բարձրանում էր Սարարադյան լեռան անջրդի անապատ ճարճարոտ տեղերով՝ ինքը և իր հետ եղողները հոգնեցան ու ծարավեցան: Այդ ժամանակ մեծն Հակոբ ծունկ չոգեց գետնի վրա և տիրոջը աղոթեց: Եվ այն տեղից, որտեղ դրել էր գլուխը՝ մի աղբյուր բխեց. և ինքն ու իր հետ եղողները խմեցին: Մինչև այսօր էլ այդ աղբյուրին ասում են Հակոբի աղբյուր: Եվ ինքը նույն չարչարալից գործը շարունակում էր, որպեսզի շուտով ցանկացածը տեսնե, և տիրոջ աղոթում էր:

Արդ՝ երբ նա աստիճ հոգնած էր վերը, կատարի մոտ, դժվար տեղերում՝ ուժասպառ եղավ և ոտները տարավ: Եվ աստծու հրեշտակը եկավ ու նրան ասաց. «Հակո՛բ, Հակո՛բ»: Եվ նա ասաց. «Այստեղ եմ». (լսում եմ): Եվ հրեշտակն ասաց. «Տերը ձո աղաչանքներն ընդունեց և խնդիրդ կատարեց. այդ, ինչ որ գլխիդ տակը դրված է՝ տապանակի փայտերից է. ինձս բերի բեզ համար. այնտեղից է: էլ չաշխատիս (տապանը) տեսնել, տերը այսպես կամեցավ»: Նա մեծ խնդությամբ ոտքի կանգնելով՝ երկրպագում էր տիրոջը մեծ գոհությամբ, և տեսնում էր տախտակը, որ կարծես կացնով կտրած՝ նեղված հանած էր ինչ-որ մեծ փայտից: Առնելով շնորհատուր պարգևը՝ ինքը և հետը եղողները այնտեղից ետ էին դառնում ու գնում իրենց ճանապարհը: Եվ[33] մեծն Մովսեսը այնպես զվարթ չէր ցնծում Սինեական լեռնից իջնելիս, թեպետ չեմ ուզում ասել, թե նրա բերածը պակաս բան էր, իսկ սրանը ավելի: Որովհետև այն աստվածատես մարդը աստծուց էր ստացել աստվածագիր հրամանները և ձեռքերին բռնած իջնում էր լեռնից: Որովհետև այն չարագործ ժողովուրդը տիրոջից երես դարձնելով, կործանվելով տիրադուժ գտնվեցին և իրենց ձուլածին երկրպագում էին, որով (աստծու) հրամանը բերողին սիրտը կոտրում՝ վհատեցնում էին, և հենց տախտակների խորտակելուց հայտնի երևում էր բերողի թախիծը: Իսկ այս երանելուն, որի մասին այստեղ ճառում ենք, այնպես չպատահեց ինչպես այնտեղ եղավ. այլ ինքը և յուրայիները լցված էին հոգևոր ուրախությամբ, գիտենալով որ բնդունողները հոժարությամբ և հուսով սպասում են (նրա վերադարձին) հեռավոր ավետաբեր հանապարհից: Որովհետև[34] միայն և միայն ամենակարողից էր մատակարարվում շնորհ բոլոր երկրածին ազգերին:

Ապա իբրև գայր բերէր այրն աստուծոյ զաստուածագործ մեծութեանցն պատուհասին զիրատու՝ որ առ ամենայն ազգս բանաւորաց և շնչաւորաց յափտենից զնշանակն զփայտն ապրեցուցիչ, զնշանակն հայրենի գործոցն զնոյեան տապանին, ամենայն հաղարն և գաւառն՝ որ շուրջ էին զնովաւ՝ անպայման և անշափ խնդութեամբ և ցնծութեամբ ընդ առաջ ելանէին: Իբրև զառաքեալ Քրիստոսի իբրև զերեշտակ երկնաւոր տեսեալ զսուրբն, զնովաւ պատէին. զմաջ հովիւն իւրեանց իբրև զաստուածախօս տեսանէին և զնովիմբ փառեալ, և զվաստակաչէր զօգտաբեր զգարշապարացն զշաւիղսն համբուրէին: Եւ գրերեալ պարգեացն զշնորհս իւրեանց յօժարութեամբ ընդունէին. որ մինչև ցայսօր նշանակ սմանչելութեան կայ պահեալ առ նոսա երևոյթ փայտն հայրապետական նոյեան տապանին:

Ապա յետ այսորիկ լուր լուաւ յերկրէն հայաստանեայ սմանչելի եպիսկոպոսն Յակոբ. խաղաց գնաց առ մեծ իշխանն աշխարհատէրն մեծ ծառայն արքային Հայոց առ Մանաճիրն Ռշտունի, և եկն թափեցաւ յաշխարհն նորա: Վասն զի լուեալ էր զնմանէ՝ թէ այր շար և անզգամ է, և զուր տարապարտ ի՛ ցասմանէ դառնութեան սրտին իւրոյ կոտորէ՝ անթիւ մարդիկ: Եկն ուսուցանել և խրատել զնա, զի յանէծ տեառն երկուցեալ դարձցի յընդանութեան բարւոյ, և մեկուսի՛ ի վայր դիցէ զանասնաբար գազանամտութիւն մոլեգնութեան իւրոյ: Իսկ իբրև ետես զնա, արհամարհեաց, ծաղր և այպն առնէր անօրէնն Մանաճիրն գայրն աստուծոյ զՅակոբ եպիսկոպոսն: Եւ առ վայրենի բարուցն իւրոց՝ զոր ունէր յանձին իւրում, իբրև նմա հեծուկս առնելոյ, ութ հարիւր այր՝ որ կային՛ ի կապանս առանց յանցման՝ ետ ածել առաջի նորա. և հրամայեաց՛ ի դահճէ միոջէ՛ ի ծով անդր հոսել. և զայնչափ հոգի առանց յանցման կորուսանել, և կատակութեամբ ծաղու հրամայէր հալածել զնա յաշխարհէն իւրմէ: Եւ ասէ. Առ հում բարէսացութիւնդ տեսե՞ր գիա՛րդ մեծարեցի զքեզ. դիւր արարի նոցա՛ ի կապանացն, և՛ ի ծովուն դեռ ղողին: Իսկ նա գնացեալ անտի մեծաւ տրտմութեամբ ըստ հրամանի պատուիրանին տեառն իւրոյ, թօթափէր զփոշի ոտից իւրոց՛ ի վերայ նոցա: Գայր հասանէր՛ ի լեառն երկաթահատացն և կապարահատացն, և որ ընդ նմայն էին, ընդ Ղորշտունիս: Եւ բաժանէր լեառն բարձր, ուստի երևէին գաւառն բովանդակ, որում անուն Ընձաֆիարս կոչէին: Իբրև հուպ եղև յայն լեառն՛ ի սոորդս լերինն. բազում աւուրք էին գի չէր ինչ բնաւ ամենևին ճաշակեալ, և ծարաւեաց խիստ ծարաւով: Եկաց յաղօթս առ տէր, դէր ծունր, և եդ զգլուխ իւր՛ ի վերայ երկրի, և բխեաց աղբիւր. ուստի արբ ինքն և որ ընդ նմայն

Եվ երբ աստծու մարդը գալիս բերում էր նոյան փրկարար տապանի փայտը,— բոլոր բանավորների և շնչավորների ցեղերին հասած պատուհասի հավիտենական նշանը, հայրենի գործերի նշանակը— ապա բոլոր հաղարը և նրա շուրջն եղած գավառները. անշափ, անճման ցնծությամբ և խնդությամբ նրան ընդ առաջ էին դուրս գալիս: Նրան նկատում էին իբրև Քրիստոսի առաքյալ, իբրև երկնային հրեշտակ, նրան շրջապատում էին, իրենց բաջ հովվին իբրև աստվածախոս էին համարում, փաթաթվում էին նրան, համբուրում էին նրա աշխատասեր ու պտղաբեր ոտերի հետերը: Եվ նրա բերած՝ շնորհված պարգևը ընդունում էին հոժարությամբ, որ մինչև այսօր էլ նրանց մոտ պահվում է այդ սմանչելիքի նշանը—հայրապետական նոյեան տապանի փայտը:

Սրանից հետո սմանչելի Հակոբ եպիսկոպոսը լուր ստացավ Հայաստան աշխարհից, ելավ եկավ Հայոց թագավորի մեծ ծառայի, աշխարհատեր մեծ իշխանի՝ Մանաճիրն Ռշտունու մոտ. եկավ մտավ նրա աշխարհը, որովհետև լսել էր նրա մասին, թե շար և անզգամ մարդ է և սրտի դառնությունից չարանում ու անթիվ մարդիկ է կոտորում անմեղ տեղը: Եկավ նրան ուսուցանելու և խրատելու, որ աստծու աչից վախենա, մեղմանա և դեն դնե անասնաբարո գազանային կատաղությունը: Իսկ երբ անօրեն Մանաճիրը տեսավ աստծու մարդուն, Հակոբ եպիսկոպոսին՝ նրան արհամարհեց, ծաղրի ու նախատինքի ենթարկեց: Եվ իր բնածին վայրենի բնավորությամբ, նրա չգրու՝ ութ հարյուր մարդ, որոնք կապանքի մեջ էին առանց հանցանքի, բերել տվեց նրա առաջ և հրամայեց՝ մի գաճավեժից[35] ծովը թափել և այնտեղ հոգի կորցնել առանց որևէ հանցանքի: Եվ կատակով ու ծաղրով հրամայեց նրան իր աշխարհից հալածել: Նրան ասաց. «Տեսա՞ր ո՛րքան ինձ մեծարեցի. ո՛ր բարեխոսության համար նրանց ազատեցի կապանքներից, հիմա նրանք ծովում դեռ լող են տալիս»: Իսկ նա մեծ տրտմությամբ այնտեղից գնաց և տիրոջ պատվիրանի համաձայն՝ իր ոտի փոշին թափ տվեց նրանց վրա[36]: Նա իր հետ մարդկանցով գնաց Ռշտունիքով, հասավ երկաթահատների և կապարահատների լեռը: Սա մի բարձր լեռ է, որ կոչվում է Ընձաֆիարս, որի վերևից բոլոր գավառները երևում էին: Երբ այս լեռան մոտեցավ, ստորոտը հասավ՝ շատ օրեր բոլորովին բան չէր կերել. այդտեղ խիստ ծարավ զգաց: Ծունկ չոքեց, աղոթք արավ տիրոջ և գլուխը գետին դրեց, աղբյուր բղխեց, որից ինքն էլ, հետը եղողները էլ խմեցին: Այստեղ էլ Ռշտունյաց (գավառում) ծովեզերքի մոտ, Ընձաֆիարսի ստորոտում,

էին: Եւ եղև այս ըստ առաջին օրինակին. որպէս արար ի Սարարադ լերինն, սոյնպէս և առ ոտին Ընձամիաս լերինն ի ծովեզերն բնիշտուենաց ծովուն. որ ըստ առաջնոյն օրինակի կոչի և այս աղբիւր Յակոբայ մինչև ցայսօր ժամանակի:

Եւ ելանէր հաճախապետն աստուծոյ Յակոբ ի գլուխ լերինն Ընձամիաս. և ճգովէր զաշխարհն, զի մի պակասեսցէ անտի խոտովութիւն մինչև ի սպառ, փոխանակ տէրունի խաղաղութեան՝ որ ոչ լուան: Եւ սուրբ աւետարանիչ եպիսկոպոսն գնաց ի տեղի իւր: Իսկ յայնմ գաւառի, յետ գճալոյ նորա անտի, յետ երկուց աւուրց սատակեցաւ կինն Մանաճերհայ եւթն որդւով իւրով. յետոյ և ինքն չարամահ ծակոտեալ ելանէր մեծաւ տանջանօք յաշխարհէ: Եւ ըստ բանին՝ որ ասացաւ, ոչ եղև խաղաղութիւն յաշխարհին յայնմիկ յօրէն յայնմանէ և յապա:

Բայց այս Յակոբ գործէր սմանչելիս մեծամեծս. և սա դիպեցաւ ի մեծ սիւնհոդոսին ի Նիկիա, որ եղև յամս Կոստանդիանոսի կայսեր Հոռոմոց, որ ժողովեցան երեք հարեւր և ութևտասն եպիսկոպոսք. վասն անիծեալ աղանդոյն Արիանոսի աղէքսանդրացւոյ, որ էր ի նահանգէ անտի Եգիպտոսի: Արդ ամենայն եպիսկոպոսքն նստէին առաջի Կոստանդիանոսի. և ի Հայոց էր անդ Արիստակէս, որդի Գրիգորի սմանչելոյ՝ առաջի կաթողիկոսին Հայոց մեծաց: Սկսաւ երեւալ սմանչելիօք նշանաց Հոգւոյն սրբոյ այնմ Յակոբայ ծածկեալ գործք զարմանալի թագաւորին: Եւտես զի արհայն Կոստանդիանոս խուռն զգեցեալ էր ի ներքոյ իւրոց ծիրանեացն և պատմուճանին, և հրեշտակն կայր պահապան սպասաւորել նմա: Զարմացեալ եպիսկոպոսն Յակոբ, ասաց այլոց բազմութեան ժողովոյն եպիսկոպոսացն գիրս հրեշտակին, որ ոչ հաւատային իրացն: Իսկ նա պնդեալ վիճէր և ասէր. Որովհետև դուք գիտէք գիրս ծածկեալս, ճախ գայդ յայտ արարէք, զի՞նչ է այն որ զգեցեալն է թագաւորն ի ներքոյ պատմուճանին: Որ ինքն ի մէջ կացեալ, ի ձեռն Հոգւոյն սրբոյ յայտնէր զխոնարհութիւն կրօնազգեաց աստուածասիրութեան նշանակ թագաւորին Կոստանդիանոսի. և զնեալ առաջի ամենեցուն ցուցանէր, զի ի ներքոյ ընդ ծիրանեօքն խուռն զգեցեալ էր առ սէր ջերմեռանդ հաւատոցն՝ որ առ Քրիստոս ունէր: Ապա ետես և թագաւորն Կոստանդիանոս զհրեշտակն սպասաւոր երեսացն Յակոբայ, և անկաւ առաջի ոտից նորա, և մեծապատիւ մեծապարգև մեծարեաց զնա: Եւ արկ զաթոռ նորա ի վերայ ճաճ զրագումս ի նոցանէ, որ ի սիւնհոդոսին յայնժամ էին: Բայց ոսկերք նորա չնորհեցան հաղարիւն ամդացւոց, ընդ այլ մծբնացիսն ի փոխել նորա անտի անդր ի մարտս պատերազմացն Յունաց թագաւորացն ընդ թագաւորին Պարսից:

նոյնպես արաւ, ինչպես արել էր Սարարադ լեռան վրա: Այս աղբյուրն էլ, առաջինի նման, մինչև այսօր կոչվում է Հակոբի աղբյուր:

Հետո աստծու հաճախայապետ Հակոբը բարձրացավ լեռան գլուխը և անիծեց այն աշխարհը, որպեսզի այնտեղից իսպառ խռովությունը չպակասի, փոխանակ որ նրանք չլսեցին տերունի խաղաղության խոսքին: Հետո սուրբ ավետարանիչ եպիսկոպոսը գնաց իր տեղը: Իսկ նրա գնալուց երկու օր հետո այդ գավառում մեռավ Մանաճիրհի կինը իր յոթը որդիներով. հետո ինքն էլ ծակոտվելով չարաչար մահով գնաց այս աշխարհից: Եվ նրա ասածի պես՝ այն օրից ի վեր խաղաղություն չեղավ այս աշխարհում:

Բայց այս Հակոբը մեծամեծ սմանչելիքներ էր գործում. նա պատահեց Նիկիո մեծ ժողովում. որ տեղի ունեցավ Հռոմների Կոնստանդիանոս կայսեր օրերում, երբ ժողովվեցին երեքհարյուր տասնևութ եպիսկոպոսներ Արիանոս Աղեքսանդրացու անիծված աղանդի պատճառով, որ Եգիպտոսի նահանգից էր: Արդ՝ բոլոր եպիսկոպոսները նստած էին Կոստանդիանոսի առաջ: Հայերի կողմից էլ այնտեղ էր Արիստակեսը. Մեծ Հայքի առաջին կաթողիկոսի՝ սմանչելի Գրիգորի որդին: Եվ սուրբ հոգու սմանչելի նշանով այս Հակոբին սկսեցին երևել թագավորի զարմանալի թաքուն գործերը: Նա տեսավ, որ Կոստանդիանոս թագավորը խուռն էր հագել իր ծիրանի պատմուճանի տակ, և հրեշտակը կանգնել էր նրան սպասարկելու: Հակոբ եպիսկոպոսը զարմանալով՝ ժողովի մյուս բազմաթիվ եպիսկոպոսներին հաղորդեց հրեշտակի մասին: Բայց նրանք չհավատացին: Իսկ նա վիճում, պնդում էր և ասում. «Որովհետև դուք թաքուն բաները գիտեք, ուստի նախ այն բացատրեցեք, թե ի՞նչ է հագել թագավորը պատմուճանի տակ»: Եվ ինքը մեջ տեղը կանգնելով՝ սուրբ հոգու շնորհով երևան էր հանում Կոստանդիանոս թագավորի կրոնասիրական խոնարհությունը, նրա աստվածասիրության նշանը, և զննելով՝ բոլորին ցույց էր տալիս, որ ծիրանիի տակ խուռն էր հագել՝ դեպի Քրիստոս ունեցած սիրու և ջերմեռանդ հավատի համար: Սրանից հետո Կոստանդիանոսը ինքն էլ տեսավ հրեշտակին, որ սպասավորում էր Հակոբին. նրա ոտների առաջ րնկավ և մեծ պատվով նրան մեծարեց և նրա աթոռը ժողովում եղողների շատ շատերի (աթոռներից) բարձր դրեց:

Բայց նրա ոսկորները չնորհվեցին Ամիդ քաղաքին, երբ Հունաց թագավորների պատերազմների պատճառով Պարսից թագավորի հետ՝ (ոսկորները) Մծբինից այնտեղ փոխադրվեցին այլ բաների հետ:

ՅԱՂԱԳՍ ՄԵԾԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՊԱՐՍԻՑ ԵՒ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՄԻՄԵԱՆՑ. ԵՒ ԱՆԿԱՆԵԼՈՑ, Ի ՊԱՏԵՐԱԶՄԻՆ՝ ՋՕՐԱՎԱՐԻՆ ՎԱՋԷՒ. ԵՒ ՄԱՀՈՒՆ ԽՈՍՐՈՎՈՒ ԱՐՔԱՅԻ. ԵՒ ՓՈԽԵԼՈՑ ՅԱՇԵԽԱՐՀ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՎՐԹԱՆԱՅ

Եւ յետ այսորիկ յաւել ևս լինել մարտ խստութեամբ պատերազմի Ի մէջ Պարսից և Հայոց ընդ միմեանս. զի ժողովեցան հասին կուտեցան առնուլ զաշխարհն Հայաստան երկրին: Ապա ժողովէր սպարապետն զօրավարն Հայոց մեծաց Վաչէ զազատախումբ բանակ նախարարակոյտ զօրացն: Եւ ելանէր տայր ընդ զօրսն Պարսից պատերազմ, և լինէր անհնարին կոտորուած յերկոցունց կողմանցն, և բազում ծախ մեծամեծ աւագանւոյն կոտորելոցն: Անկանէր Ի պատերազմին յայնմիկ մեծ սպարապետն Հայոց Վաչէ. և լինէր ամենայն աշխարհին սուգ անհնարին, զի բազում անգամ էր տէրն փրկութիւն տուեալ Հայոց Ի ձեռն նորա: Ապա ժողովէր եպիսկոպոսապետն Վրթանէս, մխիթարէր զամենեսեան, և զինեին բագաւորն գնոսովք, և զօրսն ամենայն, որ բազում անձկայրեաց արտասուակաթ ողբովք և ծանրաթախիծ հոգով, մեծաւ կոծովք և անհնարին աշխարաճօք պաշարեալք, զգնացելոցն կարիս մնացելոցն համարեալ՝ սգային: Զորս մատուցեալ սփոփէր գնոսա մեծն Վրթանէս, և ասէր.

Մխիթարեցարուք Ի Քրիստոս. վասն զի մանաւանդ որ մեռանն, ևոքա յաղագս աշխարհի և եկեղեցեաց և աստուածագործ օրինացն տուչութեան, զի մի գերեալ բանդեսցի աշխարհս, և սուրբ եկեղեցիքն աճօրինեսցին, և կամ մարտիրոսք անարգեսցին, և կամ սուրբ սպասքն Ի ձեռս պղծոցն և աճօրինացն անկցին, և սուրբ ուխտն այլայլեսցի, և որդիք մկրտութեամբ գերութեամբ անկցին Ի պէսպէս պղծութիւնս աճօրէնութեան կարգաց պաշտամանց: Եւ եթէ գաշխարհս ունիցին արդեւք բշնամիքն, և զիւրեանց զանօրէն զանկրօն զանաստուած կրօնիցն զօրէնս աստ արդեւք հաստատէին, որ, զոր խնդրեմք, ա՛ւ և մի լիցի: Իսկ մեր բարեպաշտութեան նահատակք Ի վերայ այսորիկ ճգնեալ պատերազմաւ, զչար պահեալ հեռացուցեալ հալածեալ յաշխարհէ՝ մեռան, զի մի յայսպիսի աստուածապաշտ և աստուածասէր աշխարհ անօրէնութիւն մտեալ չարի կամացն Ի ծառայութիւն արկցէ, և զբազում ոգիս ջերմեռանդն սիրով բնութեան Ի միմեանց բակտեալ բայբայեսցէ: Իսկ սոքա մինչդեռ կենդանի էին, արդար վաստակօք Ի վերայ այսորիկ վաստակեցան. և Ի մահուն իւրեանց զմիամտութեան հաստատութեան զանձինս փոխանակ տալով ընդ ճշմարտութեան տեառն, մատուցին Ի վերայ եկեղեցեաց, և Ի վերայ մարտիրոսաց, և Ի վերայ ուխտին սրբ-

ՊԱՐՍԻՑ ԵՒ ՀԱՅՈՑ ՄԻՋԵՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ, ՈՐԻ ՄԵՋ ԸՆԿԱՎ ՎԱՋԷ ՋՈՐԱՎԱՐԸ. ԽՈՍՐՈՎ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՀԸ ԵՒ ՎՐԹԱՆԷՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻՑ ՓՈԽՎԵԼԸ

Սրանից հետո դարձյալ խիստ պատերազմ տեղի ունեցավ Պարսիկների և Հայերի մեջ, որովհետև սրանք մեծ բազմությամբ եկան Հայոց աշխարհն առնելու: Ապա Մեծ Հայրի սպարապետ և զորավար[37] Վաչեն ժողովում էր նախարարական զորքերի ազատների բանակը և դուրս էր գալիս Պարսից զորքերի հետ պատերազմելու: Երկու կողմից էլ անասելի կոտորած էր լինում, և շատ մեծամեծ ավագանիներ կոտորվում փչանում էին: Այս պատերազմում ընկնում էր նաև Վաչեն, Հայոց մեծ սպարապետը. և բոլոր աշխարհը մեծ սգի մեջ էր ընկնում, որովհետև տերը շատ անգամ նրա ձեռով փրկություն էր շնորհել հայերին: Ապա Վրթանես եպիսկոպոսապետը ժողովում մխիթարում էր բոլորին, իրան՝ խոսրով թագավորին և բոլոր զորքը, որոնք սրտակեզ ողբով ու արտասուով, թախծալից հոգսերով, մեծ լաց ու կոծով կաշկանդված սգում էին, գնացածների կարիքները մնացածներին համարելով: Մեծն Վրթանես սրանց սփոփում էր և ասում.— «Մխիթարվեցե՛ք Քրիստոսով, որովհետև նրանք որ մեռան՝ մեր աշխարհի, եկեղեցիների և աստվածատուր հավատի համար (մեռան), որպեսզի մեր աշխարհը չգերվի, քարուքանդ չլինի, սուրբ եկեղեցիները չպղծվին, մարտիրոսները չանարգվին, (եկեղեցական) սպասները պիղծ և անհավատ մարդկանց ձեռքը չանցնեն, (եկեղեցու) սուրբ ուխտը չայլայլվի, մկրտված ժողովուրդը գերի չգնա ու չմատնվի անհավատների պաշտամունքի զանազան պղծություններին: (Որովհետև) եթե բշնամիները մեր աշխարհը գրավեն՝ այստեղ կհաստատեն իրենց անօրեն, անհավատ, անաստված կարգերը, որ, հուսանք, թե երբեք լինելու չէ: Իսկ մեր բարեպաշտ նահատակները այս բանի համար պատերազմ մղեցին, և չարիքը մեր աշխարհից հալածելով ու հեռացնելով մեռան, որպեսզի անհավատությունը այս աստվածապաշտ և աստվածասեր աշխարհը մուտ չգործե և չարի կամքին ծառա չդարձնե և շատ հոգիներ, որ ջերմեռանդ սիրով իրար հետ կապված են՝ միմյանցից չբաժանե, չբայբայե: Իսկ սրանք մինչ կենդանի էին՝ արդար աշխատանքով աշխատեցին այս բանի համար, և մեռնելիս հաստատ պահեցին իրենց հավատարմությունը և իրենց անձերը զոհեցին աստվածային ճշմարտության համար, եկեղեցիների, մարտիրոսների, կրոնի սուրբ ուխտի, հավատի կարգերի համար, հանճարական ուխտի և

բութեան օրինացն, և ի վերայ կարգաց հաւատոցն, և ի վերայ ուխտին հաճանայութեան, և ի վերայ անթիւ նոր ի Քրիստոս մկրտելոցն, ի վերայ բանակի տեառն աշխարհիս: Որ այնմ ամենայնի վտխանակ զանձինս իւրեանց ոչ խնայեցին, զի վկայս Քրիստոսի է նոցա համար պատուոյ: Արդ մի՛ լացցուք զնոսա, այլ պատուեսցուք զի ճշմարտութեան, առ նահատակսն դիցուք զի աշխարհ օրէնս յափտեանս յափտենից զի ամենայն ոք զսոցա յիշատակ բարեպաշտութեան իբրև Քրիստոսի նահատակաց անխափան կատարեսցէ: Եւ մեք տօնս արասցուք, և ուրախ լիցուք. զի աստուած այսոքիւ նահեսցի զի մեզ, յայսմ հետէ խաղաղութիւն շնորհեսցէ:

Եւ եդ օրէնս զի աշխարհ մեծ հաճանայապետն Վրթանէս, զնոցա առնել զյիշատակն ամ յամէ. և որ փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ի նմանութիւն նոցա, եդ կանոն՝ յիշել զսոսա առ սուրբ սեղանն աստուծոյ ի ժամ պատարագին. յորժամ զանուանս սրբոցն կարգիցեն, և ապա զկնի նոցա զնոցայնն. և մնացելոցն յանցելոցն գութ և խնամ կալցին: Զի սոքա, ասէ, ի նմանութիւն Յուդայ և Մատաթեայ Մակաբէի անկան ի նահատ պատերազմի, և նմանութիւն եղբարց նոցա: Սակայն զվաչէի զօրավարի փոքրիկ մանգիկ մի զնորուն զորդի ի հայրենի բարձր գահուն մատուցանէին, որում անուն էր յանուն հօր իւրոյ Արտաւազդ: Առաջի թագաւորին զհօրն պատիւն ի գլուխ դնէին, և զսպարապետութեան նորուն տեղի· զի կարի որդի վաստակաւորի էր, և ի վաստակաւոր ազգէ. զի այլ յազգին ոչ գտաւ հօժկու, զի ի մեծ պատերազմին մեռան: Եւ զզօրավարութեան գործ յանձն առնէին Արշաւայ Կամսարականի՝ իշխանին Շիրակայ և Արշարունեաց գաւառին, և Անդովկայ իշխանին Սիւնեաց. զի նոքա փեսայք էին տանն Մամիկոնեան տոհմին: Եւ հրամայեաց մեծ եպիսկոպոսապետն Վրթանէս հանդերձ թագաւորաւն՝ Արշաւայ և Անդովկայ սնուցանել զպատանեական զԱրտաւազդ, զի կացցէ ի տեղի նախնեացն իւրոց է հօր հուր ի, և առ-ծ ւաօութեւն առ-ծեսէ յ ւեեաատեառն հոսանոսի, և առաջին իւրոյ մարմնաւոր բնատերացն արշակունեաց բարեպաշտութեան զոր արանց, և տան և կենաց. և խնամակալ լիցի այրեաց և որբոց, և զնորուն գործ բարեպաշտութեան սպարապետութեան անդուանի զօրավարութեան յաջորդեսցէ զամենայն աւուրս կենաց իւրոց:

Ապա յետ ասորիկ փոխեալ լինէր բարեպաշտն աշխարհաշէնն Խոսրով, թագաւորն Հայոց մեծաց: Ժողովեալ, աշխարհ եդեալ, լացին ամենայն սահմանք աշխարհաց գաւառաց Հայոց մեծաց. և տարան առ իւր նախնիսն յԱնին յեկեղեցագաւառն[10] Դարանաղեաց: Եւ յետ սորա փոխեցաւ ևս յաշխարհէ մեծ հաճանայապետն Վրթանէս. և ժողովեցան ամե-

Քրիստոսի անունով անթիւ նոր մկրտվածների և աշխարհի բնիկ[38] տիրոջ համար. և նրանք որ իրենց կյանքը չխնայեցին այս բոլորի համար՝ նրանք պետք է պատվվին Քրիստոսի վկաների հետ: Ուրեմն նրանց չլանք, այլ արժանապես պատվենք նահատակների հետ. մշտական կարգ սահմանենք ամբողջ մեր աշխարհում, որ ամեն ոք անխափան կատարե սրանց բարեպաշտության հիշատակը՝ ինչպես Քրիստոսի նահատակների: Իսկ մենք տոն կատարենք և ուրախ լինինք, որ աստված սրանցով մեզ հետ հաշտ լինի և այսուհետև խաղաղություն շնորհե»:

Եվ Վրթանես մեծ հաճանայապետը օրենք սահմանեց (մեր) աշխարհում՝ տարեց-տարի նրանց հիշատակը կատարել, ինչպես և նրանց, որոնք նույն կերպով աշխարհի փրկության համար կմեռնին: Կանոն դրեց՝ սրանց անունները հիշել աստծու սեղանի առաջ պատարագի ժամանակ՝ երբ սրբերի անունները հիշվում են. որոնցից հետո սրանցը, իսկ ընկածների մնացորդներին գութ և խնամք տանին: Որովհետև, ասում էր, սրանք պատերազմի նահատամարտում ընկան Հուդա և Մատաթիա Մակաբեների և նրանց եղբայրների նմանությամբ:

Սակայն Վաչե զորավարի որդուն, որ փոքր մանուկ էր, հայրենական գահն ու բարձն էին տալիս, իր պապի[39] անունով կոչվում էր Արտավազդ: Թագավորի առաջ նրա գլուխն էին դնում հոր պատիվը, նրան տալիս էին սպարապետությունը, որովհետև մեծ վաստակավորի որդի էր, վաստակավոր տոհմից, իսկ նրանց տոհմում ուրիշ չափահաս մարդ չգտնվեց, որովհետև մեծ պատերազմում մեռել էին: Իսկ զորավարության գործը հանձնում էին Արշավիր Կամսարականին, Շիրակի և Արշարունյաց գավառի իշխանին, և Սյունյաց իշխան Անդոկին, որովհետև սրանք Մամիկոնյան տոհմի փեսաներ էին: Եվ Վրթանես մեծ եպիսկոպոսապետն ու թագավորը հրամայեցին Արշավիրին ու Անդոկին՝ պատանի Արտավազդին սնուցանել, որպեսզի (մեծանալով) իր նախնիների և իր հոր տեղը բռնե, բարեպաշտության գործերը կատարե ամենատեր Քրիստոսի համար և իր մարմնավոր բնիկ տերերի՝ բարերաց Արշակունիների համար, (ժողովրդի) կյանքն ու տները պաշտպանե, որբերին ու այրիներին խնամակալ լինի և իր (նախորդների) բարեպաշտության գործերը կատարե, նրանց սպարապետության և անվանի զորավարության հաջորդը լինի մինչև իր կյանքի վերջը:

Սրանից հետո (աշխարհից) փոխվում էր բարերաց՝ աշխարհաշեն Խոսրովը, Մեծ Հայքի թագավորը: Ամբողջ Մեծ Հայքի աշխարհներից ու գավառներից ժողովվեցին, սուգ արին, լացին ու տարան իր նախնիների մոտ, Անի, Դարանաղիի Եկեղյաց գավառը: Նրանից հետո աշխարհից փոխվեց նաև Վրթանես մեծ հաճանայապետը: Ամբողջ

նայն աշխարհն Հայոց, և մեծաւ պաշտամամբ, սաղմոսիւք և երգովք հոգևորօք, կանթեղօք և մոմեղինօք և խնկածու հոտովք, արմուկական կառօք զսուրբն Վրթանէս, աննեարին բեկմամբ՝ վասն իւրեանց յայնմ ի բնակ տեառնէն կամ ի հոգևոր վարդապետութենէն որ մնալոյ, մեծաւ լալեաց տրտմութեամբ մինչև ի գետն Թորդան ի Դարանաղեաց գաւառն յուղարկէին: Եւ անդ առ մեծի հայրապետին Գրիգորի զսուրա սուրբ զսկերսն հանգուցանէին. և զմշտակատար զսուրա կենդանի յիշատակն ի վերայ կատարեալ, դառնային:

ԺԲ

ՅԱՂԱԳՍ ԹԱԳԱՒՈՐՆԱՑՈՑ ՏԻՐԱՆԱՑ ՅԵՏ ՀՕՐ ԻՒՐՈՑ. ԵՒ ԹԷ ՈՐՊԷՍ ՅՈՒՍԻԿՆ ՅԵՏ ՀՕՐ ԻՒՐՈՑ ՎՐԹԱՆԱՑ ԿԱԼԱՒ ԶԱԹՈՌ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ, ԵՒ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ՍԿԱՆԱՒ Ի ՏԻՐԱՆԱՑ ԱՐՔԱՅԷ ՅԱՂԱԳՍ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԵԱՆ

Եւ յանցանելն յաշխարհէ թագաւորին Խոսրովու, Տիրան որդի Խոսրովու առ զթագաւորութիւնն իշխանութիւն աշխարհացն Հայոց մեծաց: Եւ ընդ նմին սուրբ երանելի մանուկն Յուսիկ յաջորդեաց զտեղի հայրապետացն Հայոց: Բայց գումարեաց ընդ նմա թագաւորն Տիրան զմեծամեծ նախարարսն ըստ սովորութեան օրինակին. զմեծ հազարապետն ի հազարապետութեան: Իսկ ի տոհմէ ամենայն Հայոց մեծաց, զվաղարշ, որ էր իշխան Անձտայ, և ընդ նմա Զարեհ իշխանն, նահապետն մեծի Սոփաց. և զվարազ Շահունի իշխանն Սոփաց աշխարհին. և զԳնիթ իշխան Հաշտենից գաւառին ի կամխական տոհմէն. զվորոթ իշխանն Վանանդայ գաւառին. և զՇահէն իշխանն Անձևացեաց տոհմին. և զԱտամ իշխանն Գողթան. և զմահաւազ իշխանն կողբացոց· զԳորութ իշխանն Զորոց աշխարհին. և զմահասպ գնորխոռունեաց գիշխանն մաղխազունեան տանն, զմերոյ տոհմի ազգի իշխանն Սահառունեաց, և զԱբա իշխանն Գնունեաց:

Զնոսա զամենեսեան հրամայեաց երթալ ընդ մեծի հազարապետին Վաղարշու, զի նստուսցեն զերանելին Յուսիկ յարմունական կառսն, և խաղասցեն գնասցեն ի սահմանակի՛ցս իւրեանց ի մայր քաղաքացն Գամրաց ի Կեսարիա, հասուցանել զմանուկն Յուսիկ յառաքելական աթոռն հայրապետացն: Գնացին եկին հասին ի քաղաքն կեսարացւոց. եռուն ի կաթողիկոսութիւն զՅուսիկն ձեռնադրել, զորդին Վրթանայ: Եւ նստուցին գնա յաթոռն Առաքելոյն Թադէոսի, և յաթոռ իւրոյ հաւուն մեծին Գրիգորի. և դարձան անդրէն մեծաւ խնդութեամբ, եկեալ առողջութեամբ, յաջողեալ հասանէին յԱյրարատեան աշխարհն: Եւ զիշխանսն երկոսին, և նոցուն Սոփացն, յառաջ արձակէին աւետաւոր առ արքայն:

Հայոց աշխարհը ժողովվեց և մեծ պաշտամունքով, սաղմոսներով ու հոգևոր երգերով, կանթեղներով մոմեղեններով, անուշահոտ խնկով՝ արմունական կառներով փոխադրեցին սուրբ Վրթանեսին, մեծ վշտով՝ որ որբ մնացին իրենց բնիկ տերից և հոգևոր վարդապետից. և մեծ լաց ու կոծով ու տրտմությամբ բերին Դարանաղյաց գավառի Թորդան գյուղը և Գրիգոր մեծ հայրապետի մոտ նրա մարմինը ամփոփեցին և նրա կենդանի մշտակատար նիշատակը կատարելով ետ դարձան:

ԺԲ

ՏԻՐԱՆԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ԻՐ ՀՈՐԻՑ ՀԵՏՈ ԵՎ ԹԵ Ի՛ՆՉՊԵՍ ՀՈՒՍԻԿԸ ԻՐ ՎՐԹԱՆԵՍ ՀՈՐ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԸ ՆՍՏԵՑ ԵՎ Ի՛ՆՉՊԵՍ ՏԻՐԱՆԻՑ ՍԿԱՆԱՎԵՑ՝ ՆՐԱՆ ՀԱՆԴԻՄԱՆԵԼՈՒԻՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Երբ Խոսրով թագավորը այս աշխարհից փոխվեց՝ Մեծ Հայք աշխարհի թագավորական իշխանությունը առավ Խոսրովի որդին Տիրանը: Նույնպես և մանուկ սուրբ Հուսիկը հաջորդեց ու գրավեց Հայոց հայրապետների տեղը: Տիրան թագավորը, սովորության համաձայն, նրա հետ գումարեց մեծ նախարարներին—Վաղարշ մեծ հազարապետին[40], որ Մեծ Հայքի հազարապետության տոհմից էր և Անձիտի իշխանն էր, և նրա հետ Մեծ Սոփքի Զարեհ իշխանին և (մյուս) Սոփաց աշխարհի Վարազ Շահունի իշխանին և Հաշտենից գավառի Գնիթ իշխանին Կամխական տոհմից և Վանանդի իշխան Որոթին և Անձևացյաց տոհմի իշխան Շահենին, և Գողթնի իշխան Ատամին, և Կողբացոց իշխան Մահավազին, և Զորի աշխարհի իշխան Գորութին, և Խոռխոռունյաց տոհմից Մախազության տան իշխան Մահասպին, և Սահառունյաց տոհմի իշխան...ին[41], և Գնունյաց իշխան Աբային: Այս բոլորին հրամայեց՝ Վաղարշ մեծ հազարապետի հետ գնալ, երանելի Հուսիկին արմունական կառք նստեցնել, առնել տանել սահմանակից Գամիրի[42] Կեսարիա մայրաքաղաք՝ մանուկ Հուսիկին հայրապետանեի առաքելական աթոռը բարձրացնելու համար:

Նրանք էլան գնացին ու հասան Կեսարացոց քաղաք և կաթողիկոս ձեռնադրել տվին Հուսիկին, Վրթանեսի որդուն, նրան նստեցրին Թադեոս առաքյալի և իր պապի՝ մեծն Գրիգորի աթոռը, և մեծ խնդությամբ ետ դարձան ողջ առողջ և աջողությամբ եկան հասան Այրարատյան աշխարհը: Եվ իրանցից առաջ ավետավորներ ուղարկեցին երկու Սոփիերի երկու իշխաններին:

Ապա իբրև լուաւ իճիճ արքայն, ընդ առաջ ելանէր նմա ի դաշտն յայն կոյս գետոյն Տափերն կամրջի, ամենայն բանակօքն բազմութեամբ: Ապա ողջոյն տուեալ զցանկալի ողջոյնն միմեանց, անցեալ ընդ կամուրջն Տափերայ, մտեալ ի քաղաքն մեծ յԱրտաշատ, յեկեղեցին դառնային. և նստուցանէին զցանկալի մանուկն Յուսիկ յաթոռ հայրապետական: Սա զնետ հօրն իւրոյ Վրթանայ զառաքելական յաջորդէր, հայրական չափոցն նմանեալ ծնունդ, ամենևին զամենայն յամենայն հրեշտակակրօն զանձն ցուցանէր, զամենայն ըստ պարգևացն աստուածոյ զշնորհացն կատարէր: Քրիստոսական բանաւոր խաշանցն հովուելով, աւետարանական պատգամատուրօքն խրատելով ընձեռեցաւ: Զի աւուրք մանուկ, տիօք առոյգ, և բարձր հասակաւ. գեղով երեսաց սմանչելի և չճեղ, զի այլ ոչ գտանէր ուրեք նման նմա ի վերայ երկրի: Սուրբ և պայծառ հոգւով, ամենևին ոչ ինչ զբաղեալ ընդ աստիս. իբրև զհաչ սպառազէն Քրիստոսի, իբրև զախոյեան նահատակ ի տղայութենէ տիոց ճշկանէր, աներեւոյթ բշնամոյն յաղթութեամբ սպառնացեալ: Ակն առնուլ կամ աչառել մարդկան բնաւ ամենևին ոչ գիտէր. այլ զբան Հոգւոյն սրոյ սուսեր ածեալ ընդ մէջ իւր կրէր: Իսկ շնորհաւոր Հոգւոյն լցեալ զնա, գիտութեան էր աղբիւրացեալ զամենայն լսելեացն ցուցս ակնջացն և սրտիցն երկրին:

Իսկ թագաւորն Տիրան և այլ մեծամեծ աւագանին նախարարացն, կամ աշխարհն ամենայն, ոչ ինչ ըստ աստուածոյ կամացն վարս յանձն առեալ՝ իմաստուն ինչ գնացեալ լինէին: Քան զամենայն մանաւանդ թագաւորն կամ իշխանն սպանութիւնս՝ անխիթր ի՛ ճեղուլ զարիւն արդար ի տարապարուց գործէին, և այլ մեղս բազումս. և ոչ ճայէին ի նրամանս վերնոյն ի ճանապազարդ լսելոյն ոչ խրատեալ՝ ի յուշն նոցա առնելոց յաստուածոյ յայսն: Վասն որոյ ճանապազ բնդդիմացեալ լինէր երանելի հայրապետն Յուսիկն, վարժ բանիւք ճամեստութեան հրիստոսական խրատուն՝ ճանապազ յերեսս յանդիմանութեամբ ճարկանելով խրատելով կշտամբելով արկանէր, զպաճուճն տանջանաց յաւիտենական բարկութեան աջէջ նրոյն գառաստատնին պատմելով, բողոքէր: Զի քէպէտ աւուրք մանուկ էր. այլ զաւգութիւն ծերութեան խրատուն յիճեխեն ցուցանէր, զճայրենի գործ խրատուականն զառաքելութիւն հաչութեամբ կատարէր: Հարցն նմանեալ ի մանկութեան իմաստութեան, զծերութեան պատիւ պատուական պատուականութեանն զճանճարայն գաւարթութեան անուշութեան, իբրև զծաղիկ ի դիտաւորութեան ճասեալ, վասն նշմարտութեան միշտ ի մանն մարտնչէր. նախ զանձն պարեցուցա-

Այս լսելով՝ իճիճ թագավորն անձամբ բոլոր բանակի բազմության նետ նրան ընդ առաջ էր գնում դաշտերով մինչև Տափերի կամուրջի[43] այն կողմը: Ապա միմյանց ցանկալի ողջույնը տալով՝ անցնում էին Տափերի կամուրջը, մտնում էին մեծ Արտաշատ քաղաքը, դիմում եկեղեցին, ցանկալի մանուկ Հուսիկին նստեցնում էին հայրապետական աթոռը: Սա իր Վրթանես հորից ժառանգել էր առաքելական (ընթացքը), հատկություններով հորը նման որդի դառնալով. ամեն բանում ամենակերպ երևում էր հրեշտակային վարքով, ամեն ինչ կատարում էր աստծուց պարգևած շնորհքով: Նա հովվում էր Քրիստոսի բանավոր հոտը և խրատում էր ավետարանի պատգամներով: Նա տարիքով դեռ մանուկ էր, բայց առույգ, բարձր հասակով, դեմքի սմանչելի գեղեցկությամբ և չճեղ, որի նմանը աշխարհում ուրիշ տեղ չէր գտնվում: Հոգով մեծ էր և պայծառ, աշխարհային բաներով բնավ չէր զբաղվում, այլ իբրև Քրիստոսի հաչ սպառազեն, իբրև ախոյան նահատակ՝ տղայության հասակից ի վեր խիզախում էր՝ անհրեվույթ թշնամուն հաղթել սպառնալով: Նա բոլորովին չգիտեր աշխարքում անել, ակնածել, այլ սուրբ հոգու խոսքերը կրում էր՝ ինչպես մեջքին կապած սուր. իսկ շնորհաւոր հոգին նրան լցրեց գիտությամբ, որ աղբյուրի նման ողողում էր լսողների ականջները և նրանց սրտերի երկիրը:

Իսկ Տիրան թագավորը և մյուս ավագ նախարարները և բոլոր աշխարքը ամենևին չէին վարվում աստծու կամքով, խելացի կյանք վարելով: Մանավանդ թագավորն ու իշխանները առավելապես անխիղճ սպանություններ էին գործում, զուր տեղը անմեղ արյուն թափում և ուրիշ շատ մեղքեր էին գործում. նրանք ուշ չէին դարձնում սիրոյ հրամաններին, չնայելով որ (Հուսիկը) անդադար խրատում էր նրանց և հիշեցնում էր աստծու պատվիրանները: Այս պատճառով երանելի Հուսիկ հայրապետը շարունակ նրանց դիմադրում էր, վարժ խոսքերով, համեստությամբ ըստ Քրիստոսի խրատի, միշտ նրանց երեսովն էր տալիս, հանդիմանում էր, խրատում, մեղադրում. պատմում էր (աստծու) բարկության հավիտենական տանջանքների՝ (վերջին) դատաստանի անշեջ հուրը, և բողոքում էր: Որովհետև թեպետ տարիքով մանուկ էր, բայց գործ էր դնում ավագ տարիքի՝ ծերության խրատը, խրատելու և առաքելության հայրենական գործը մեծ հաչությամբ կատարում էր: Մանկությունից ի վեր իմաստությամբ հայրերին նմանելով՝ ծերության պատվաբեր պատիվը, զվարթ հանգարտ արտահայտում էր ինչպես մի անուշահոտ ծաղիկ. նշմարտության համար կռվում էր մինչև մահ[44]. նախ իր անձը փրկելու, նետո նաև ուրիշների հոգիների

նելոյ, և վասն այլոց նոգւոց զնոյն առնել կամէր: Այնչափ էր երկիւղած՝ ի տեառնէ, զի ոչ զսէր և ոչ զաճ թագաւորին առ ոչինչ նամարէր: Իսկ գիտութեամբն աստուծոյ, դպրութեան գրոց սրբոց առուեստուն լի էր. և առնոյր ի պատուհասել և յանդիմանել. արգելոյր զթագաւորն և զմեծամեծսն չտալ թոյլ մտանել յեկեղեցին:

Արդ ելեալ կապէր մեծապէս պատուհասիւ հաճանայական իշխանական բանիւ յանդիմանութեան, վասն անօրէնութեան պոռնկութեանն և առուագիտութեան և արենհեղութեանն, զրկութեան, յափշտակութեան, աղխատատեցութեան և այլոց բազում մեղաց՝ որ այսմիկ նման իցէ: Եւ իճն վասն անի սաստից օրինացն տեառն՝ թշնամի նամարեալ թուէր, որոց հանապազ անցանէին զկարգօճն Քրիստոսի, և հանապազ ի սմանէ սուրբ բանիւն աստուծոյ խոցոտեալ լինէին: Եւ այս մարտ պատերազմի էր սորա առ հասարակ ընդ ամենեսեան յանդիմանութեան զամենայն աւուրս կենաց իւրոց: Որ իբրև օր մի յաւուրց տարեկան, դիմեաց գալ թագաւորն Տիրան հանդերձ այլովք աւագանովն մտանել յեկեղեցին. իսկ նա ընդդէմ բարբառեալ ասէր. Ջես արժանի, ճի՞մ գաս, մի՛ գար ի ներս: Վասն որոյ անդէն ի ներս հարշէին զնա յեկեղեցւոջն, բրածեծ եղել չաղչախեալ հաճանայապետն աստուծոյ սուրբ, երանելի մանուկն Յուսիկ, կիսամահ կոչկոճեալ ընկեցեալ լինէր: Զոր բարձեալ պաշտօնէիցն դրան եկեղեցւոյն ի Բնաբեղ բերդէն արճուճի՝ մեծ Սոփաց գաւառին, եկին բերին ի գաւառն Դարանաղեաց ի գեղն Թորդան. և անդ ոչ ինչ յետ բազում աւուրց հանգեաւ, և եղաւ մօտ առ Գրիգորի և ընդ նարս իւր:

ԺԳ

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՋԻՒ՛ՐԴ ՅԵՏ ՄԱՀՈՒԱՆՆ ՅՈՒՍԿԱՆՆ ԱՆԱՐԱՋՆՈՐԴ ԼԻՆԷՐ ԵՐԿԻՐՍ ՀԱՅՈՑ ԵՒ ՈՉ ՈՐԴԻՔՆ ՅՈՒՍԿԱՆՆ ԱՐԺԱՆԻ ԵՂԵՆ ՀՕՐՆ ԱԹՈՌՈՅՆ

Եւ յետ այսր անցեալ ժամանակաց, զկնի թոպամահն լինելոյ երանելոյն Յուսկան, առաջնորդ եղեալ՝ իբրև զկոյրս մոլորեցան երկիրն լեզուին Թորգոմական աշխարհի: Քանզի տուաւ նոցա ոգի մոլորութեան, աչս՝ զի մի՛ տեսցեն, և ականջս՝ զի մի՛ լուիցեն, և սիրտ՝ զի մի՛ իմացիցեն դառնալ յապաշխարութիւն: Եւ զխաւարային խորխորատ կորստեան գտեալ, ճարեալ իւրեանց անձանց ճանապարհ, կործանեցան անկեալք. զի ոչ այն

նամար նույն բանն ուզում էր ասել: Այնման երկյուղած էր տիրոջից, որ ոչինչ էր նամարում թագավորի սերը կամ նրա աճը: Իսկ աստծու գիտությամբ, սուրբ գրի ընթերցման արվեստով լի էր, որ և գործ էր դնում պատժելու և նանդիմանելու նամար, և արգելում՝ թույլ չէր տալիս թագավորին և մեծամեծներին եկեղեցի մտնել:

Այսպես նա քաճանայական իշխանության խոսքով նրանց կապում նանդիմանում էր ու խիստ պատուհասում նրանց անօրենության, պոռնկության, արվագիտության, արյունհեղության, զրկողության, նափշտակության, աղքատատեցության և սրանց նման ուրիշ շատ մեղքերի նամար և տիրոջ օրենքի սաստի պատճառով միշտ թշնամի էր նամարվում նրանց՝ որոնք այդ օրենքից դուրս էին գալիս, որովնետև նրանք շարունակ նրանից խոցոտվում էին աստծու սուրբ խոսքով: Եվ այս նանդիմանությունը, այս պատերազմը նա շարունակ մղում էր բոլորի նետ իր ամբողջ կյանքի ընթացքում:

Եվ անա մի անգամ, տարեկան (տոնի) մի օր, Տիրան թագավորը մյուս ավագանիի նետ եկավ որ եկեղեցին մտնե, իսկ նա դեմ դուրս գալով ասաց. «Արժանի չես, ինչո՞ւ ես եկել. ներս մի՛ մտներ»: Ուստի նրան իսկույն ներս էին քաշում եկեղեցին, բիրերով ծեծելով չարդեցին աստծու քաճանայապետին, սուրբ ու երանելի մանուկ Հուսիկին, և չարդարուրդ անելով կիսամահ թողին այնտեղ: Նրան վերցրին (արճունական) դրան եկեղեցու պաշտոնյաները արճունի Բնաբեղ բերդից, Մեծ Սոփի գավառից, և բերին նասցրին Թորդան գյուղը Դարանաղյաց գավառում, որտեղ մի օրերից նետո վախճանվեց ու թաղվեց Գրիգորի և նայրերի մոտ:

ԺԴ

ԹԵ Ի՛ՆՉԳԵՍ ՀՈՒՍԻԿԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ԱՆԱՐԱՋՆՈՐԴ ԷՐ ՄՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՀՈՒՍԻԿԻ ՈՐԴԻՔԸ ԱՐԺԱՆԱՎՈՐ ՉԷԻՆ ԻՐԵՆՑ ՀՕՐ ԱԹՈՌԻՆ

Այն օրերից նետո, երբ երանելի Հուսիկը բրածեծ լինելով մահացավ՝ նայ լեզուն խոսող թորգոմական աշխարհը անառաջնորդ մնալով՝ կույրերի նման մոլորվեց: Նրանց տրվեց մոլորության նոգի,— աչերը՝ որ չտեսնեն, ականջներ՝ որ չլսեն և սիրտ՝ որ չնասկանան և չդառնան ապաշխարության: Նրանք խավարած՝ կորուստի խորխորատը նասան, իրենք իրենց նամար ճանապարն բանալով՝ կործանվեցին ու

ոք գոյը՝ որ նոցա մոլեգնութեանն պատկառուկս արկանէր ըստ մեղս գործելոյ, այլ անճոռվիւք էին: Զկորստեան ճանապարհն համարձակէին՝ ի չարիս կամօք գնացեալք, և կամօք լեալք որդիք բարկութեան. և առանց աստուծոյ շրջէին յաշխարհի կամակոր ազգ տանն Հայոց երկրին: Նմանեալք լինէին այնմ ճօտի խաշանց, որ զպահպանութիւն չանցն պահողաց պահպանացն ի բաց մերժեցին, և կամօք իւրեանց կերակուր գէշ թշնամութեան գայլոցն մատնեցան, ըստ նմանութեան մեծին աբեղացւոց խաղտին:

Յայնմ ժամանակի զբազաւորն իւրեանց օրինակ չարի առնէին, և նովին օրինակաւ ձեռն սկսան, և նոյնպէս գործել: Զի ի վաղնջուց, յորմէ հետէ առին նոքա զանուն հրիստոնէութեանն, լոկ միայն իբրև զկրօնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց և ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան, այլ իբրև զմոլորութիւն իմն մարդկութեան ի հարկէ: Ոչ եթէ որպէս պարտն էր գիտութեամբ յուսով կամ հաւատով, բայց միայն սակաւ ինչ զնանգամանս գիտէին հելլէն կամ ասորի դպրութեանց, որ էին հասու ինչ այնմ փոքր ի շատէ: Իսկ որ արտաքոյ բան զգիտութիւն աւուրեսին էին այլ խառնաղանն բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն և կամ շինականութեանն, եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդապետացն և ըստ նմանութեան ամպոցն իբրև գյո՛ղանեղեղ ինչ անձրևաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, ոչ ոք ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ դոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ զոր լսէինն, և ոչ կարէին ինչ ուսել ի մտի: Վասն զի միտք իւրեանց բնդ անպիտանս բնդ անօգուտս ևեթ զբօսեալ էին. զոր օրինակ մանկունք տղայք բնդ մանգութեանն և բնդ տղայութեանն խաղալիկ խանկարեալք, և զպիտոյիցն և զկարևորացն ոչ ինչ փոյթ առաբեալ, սոյնպէս և դեգերեալ մաշէին յանուղղայ կրթութիւն բնդ չճնոտի մտացն ի ճնութիւն հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս խուժադուժ միտս ունելով: Եւ զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն, և նմին հաւատացեալք, և ի նոյն հանապազորդեալք, ի ճեռ և ի նախանձ բնդ միմեանս չարակնութեամբ, բշնամութիւն ոխութեանց, զմիմեանս խածատել, և նենգել այր զընկեր և զեղբայր: Սիրելիք սիրելեաց, և մերձաւորք մերձաւորաց, և բնտանիք բնտանեանց, ազգականք ազգականաց, խնամիք խնամեաց դնէին գայթակղութիւն:

Անդ էր տեսանել այր ընկերի արեամբք ծարաւեալ ըմպելով, ոգովք չափ գային վնասուցն՝ անխրատ վարս և անհանճար միտս ունելով: Եւ զգիցն ճնութեան պաշտամունս ի նմանութիւն պոռնկութեան գործոյն բնդ խաւար կատարէին. և ոմանք զնոյն իսկ ցանգութիւն զիշեր-

րնկան, և չկար մեկը, որ նրանց ամաչեցներ մոլեգնության գործերից ու մեղքերից, որովհետև անճովիվ էին մնացել: Նրանք նմանվում գնում էին կորուստի ճանապարհով, իրենց կամքով չարիքների մեջ էին ընկնում, իրենց կամքով դառնում էին բարկության որդիներ և աշխարհում շրջում էին առանց աստծու՝ Հայոց աշխարհի այդ կամակոր ազգը: Նրանք նմանում էին ոչխարների այն հոտին, որոնք իրենց պահապան և պաշտպանող շները իրենցից հեռացրին և իրենց կամքով մատնվեցին թշնամի գայլերին, նրանց կերակուր դարձան Աստեացոց մեծ խաղտի նմանությամբ:

Այդ ժամանակ (մարդիկ) իրենց համար չարի օրինակ վերցրին թագավորին, նրա պես սկսեցին ձևել, նրա պես գործել: Որովհետև վաղուց ի վեր, երբ նրանք հրիստոնեության անունն ստացան՝ այդ (կրոնը) հանձն առան հարկից ստիպված՝ իբրև մի մարդկային սովորություն, իբրև մի մոլորություն, առանց ջերմեռանդ հավատի: (Կրոնն ընդունեցին) ոչ թե գիտությամբ, հուսով ու հավատով, ինչպես որ հարկն էր, այլ միայն էշերը, որոնք փոքր ի շատե ծանոթ էին հունական կամ ասորի գրագիտության՝ մասամբ հասկանում էին այդ (կրոնը): Իսկ որոնք որ գրագիտության արվեստից զուրկ էին, նախարարների և շինականների մյուս խառնիճաղանճ բազմությունը,— եթե ուսուցիչները նստելով գիշեր ցերեկ ամպերի նման ուսումը ինչպես հորդ անձրև նրանց վրա հոսեցնեին՝ նրանցից ոչ մեկը ոչ մի խոսք, ոչ կես խոսք, ոչ մի բան, ոչ մի նշույլ իրենց լսածներից չէին կարող մտքերը պահել կամ հասկանալ: Որովհետև նրանց մտքերն զբաղված էին անպիտան, անօգուտ բաներով, ինչպես փոքր երեխաները, որոնք տարվում են իրենց երեխայական խաղալիքներով. այնպես և նրանք, անփույթ լինելով պիտանի ու կարևոր բաներ՝ իրենց տեսս մտքերով՝ իրենց (ժամանակը) մաշում էին պարապելի կրթություններով, հին հեթանոսական սովորություններով, խուժադուժ բարբարոսական միտք ունենալով: Նրանք սիրում էին իրենց առասպելների երգերը, վիպասանությունները, նրանցով կրթվում էին, նրանց հավատում էին, նրանց մեջ հարատևում: Ատելություն ու նախանձ իրար դեմ, չարակամություն, թշնամություն, ոխակալություն, իրար խածատել, ընկերին և եղբորը նենգել, սիրելիները սիրելիներին, մերձավորները մերձավորներին, բնտանիքներն բնտանիքներին, ազգականներն ազգականներին, խնամիները խնամիներին դավեր էին սարքում: Այնտեղ մարդիկ ծարավ էին մեկը մյուսի արյունը խմելու, ճիգ էին թափում իրար վնասելու, անուղղա վարքի և անխելքության պատճառով: Ասվածների հին պաշտամունքները կատարում էին գիշերները՝ նման

բեաև պոռնկութեան կատարէին յանձինս իւրեանց: Վասն այսորիկ ոչ գիտաս իմաստութեան լսէին, և ոչ առաջնորդացն ասելոյ զաստուածոյ պատգամսն անսացեալ ճնազանդէին. այլ վասն ի նոցանէն յանդիմանութեանն, ատէին և ճալածէին զնոսա և սպանանէին: Եւ ըստ մարգարէական բանին առ նոսա ասելոյ, թէ «Ատէին ի դրունս զյանդիմանիչս», և զբանս սուրբս արհամարհէին: Քանզի ոչ էին թէ որպէս այլոց ազգականացն և ճաւատացելոցն կամ իմաստնոցն ետ նոցա զգիտութիւն նշմարտութեան ճաւատոցն աստուածաբանիւ բարոզութեանն, որպէս որ ընկալանն՝ առին գոնութեամբ և ճաւատացին և վայելեցին ի շնորս մարդասիրութեանն արդեւ, այլ ըստ նէական մտացն կուրացելոց և խաւարելոց և կաղացելոցն ի նշմարտութենէն: Թերևս և առ այս ազգ միտէր բանն մարգարէական յառաջագիտական, եթէ «Որդիք անմիտ, և ոչ որդիք իմաստուն. իմաստուն են զչար գործել, և զբարի գործել նոքա երբէք ինչ ոչ գիտացին»: Եւ դարձալ ասէ. «Որդիք եղբերիկք խստասիրտ, խստաշունչ, որք դառնացուցին զիս նոքա և ճարք իւրեանց»: Այսպէս լեալք և սոքա, զի ոչ իմացան և ոչ ճաւատացին յաներևոյթսն աստուածոյ երևելեօք. յարարածոց աստի չիմացան՝ զարարիչն և զկարգիչ և զխնամիչն առնուլ ի միտ: Յաճախեաց զերեվոյթ նշանս իւր և զսքանչելիս, մինչև զմարդկային բնութիւնս շարժեաց ի կերպարանս անասնոյ. ուստի փրկութեանն նոցա լինէին պատճառք:

Եւ մինչև յայս յանպիտան և յանմիտ թագաւորութիւնն իսկ, առ այն թագաւորաւ Տիրանաւ, ընդ նոյն իսկ ընդ այս նայեցեալք, անցուցին չարութեամբք բան յամենայն դարս: Մանաւանդ բան զամենայն, զի զգլխաւորն առաջնորդն թոպատան սպանին, և այնուհետև ըստ կամաց գնային: Քանզի ոչ ոք այն ոք գոյր, յորմէ խիթայիքն յանդիմանութեանն՝ որ նոցա արգել արկանէր գնալ յանօրէն ճանապարհն ելանել: Ապա բարձեալ թողեալ եղեն նոքա ի ձեռանէ տեառն, երթեալք ըստ նետ կամաց սրտից իւրեանց. ապա չկայր ոք առաջնորդ և ոչ գլուխ բանականութեանն: Սակայն փոյթք եղեն նոքա ոչ վասն նշմարտութեան ինչ խնդրել իւրեանց նովիւ կամ առաջնորդ՝ որ կայցէ գլուխ ժողովրդեանն ճօտապետութեանն, այլ բանից ընկեր իւրեանց խնդրէին զայն ոք՝ որ ըստ նոցա կամացն վարիցէ:

Յայնժամ խորհուրդ արարեալ թագաւորին և իշխանացն, և ճամօրէն իսկ աշխարհին, թէ զո՞ արժանի այնմ իմիք գտանիցեն. բանզի երկու մնացեալ[11] երկուորիք երկու մանգուկք, միումն Պապ անուն, և

պոռնկական գործի. ոմանք ետնց իրենց վրա կատարում էին նույն պոռնկական ցանկությունը: Ուստի ո՛չ խելացի խրատի էին լսում և ոչ ճնազանդում էին առաջնորդների քարոզած աստծու պատգամներին, այլ նրանց հանդիմանական խոսքերի համար նրանց ատում էին, ճալածում և սպանում: Եվ ինչպես մարգարեական խոսքը ասել էր նրանց, թե «Հանդիմանողներին ատում էին դռներում». այսպես էլ նրանք արհամարհեցին սուրբ խոսքերը: Որովհետև աստվածային խոսքի քարոզությունը նրանց չտվեց ճշմարիտ ճավատի գիտությունը ինչպես ուրիշ ազգերին, հավատացյալներին ու իմաստուններին[45], որոնք գոհությամբ ընդունցին, հավատացին և աստծու մարդասիրության շնորհը վայելեցին, այլ հրեաների կուրացած ու խավարած մրտերի նման նրանք կաղում էին ճշմարտության մեջ: Գուցե այս ազգին էլ էր վերաբերում մարգարեի նախագուշակ խոսքը, թե «Անմիտ որդի և ոչ իմաստուն որդի, իմաստուն են չարիք գործելու մեջ, իսկ բարիք գործել նրանք երբեք չգիտցան»: Եվ դարձյալ ասում է. «Պրծդերես, խստասիրտ, խստաշունչ որդի, որոնք ինձ վշտացրին, իրենք և իրենց հայրերը»: Սրանք էլ նույնպես լիված էին, որովհետև չճասկացան և աստծու աներևույթներին չճավատացին երևցող բաների միջոցով, արարածների միջոցով չճանաչեցին արարիչին, չճասկացան նրանց կարգիչին ու խնամողին: Նա ճանախեց իր երևցող նշաններն ու սքանչելիքները, նույնիսկ մարդկային բնությունը վերածեց անասնի կերպարանքի, որ և պատճառ դարձավ նրանց փրկության:

Եվ ետնց այս անպիտան ու անմիտ թագավորության ժամանակ, այն Տիրան թագավորի օրերում, ետնց նրան նայելով՝ չարություններով բոլոր դարերից գերազանցեցին: Ամենամեծ (չարությունն) այն էր, որ իրենց գլխավորին և առաջնորդին բռածեծ անելով սպանեցին, և այնուհետև ամեն ոք վարվում էր իր ուզածի պես: Որովհետև այլևս չկար մեկը, որի հանդիմանությունից ֆաշվեին, որ նրանց արգելք դներ անօրեն ճանապարհով գնալու: Ասված էլ նրանց բարձրթողի արավ, նրանք էլ իրենց կամքին, իրենց սրտի ցանկություններին ետևեցին, որովհետև չկար ո՛չ առաջնորդ և ոչ ճանանայության գլուխ:

Բայց նրանք անփույթ չգտնվեցին (մի մարդ ընտրել), ոչ նրա համար, որ իսկապես իրենց նովիվ ու առաջնորդ լինի, ժողովրդի հոգատար դառնա, այլ փնտռում էին այնպիսի մեկին, որ իրենց զրուցընկեր լինի և իրենց ուզածի պես վարվի:

Այն ժամանակ թագավորն, իշխանները և բոլոր (Հայոց) աշխարհը խորհուրդ արին, թե ո՞վ է արժանի այդ պաշտոնին, որովհետև (Հուսիկից) մնացած երկվորյակ մանուկները, մեկի անունը Պապ,

միւսումն Աթանագինէս, ճանաչէին ստանակք և աճխրատք, որք ոչ ինչ ըստ իմաստութեան աստուածեղէն գրոց, և ոչ վարժ հրաճանգօք առաքինութեանցն, և ոչ ճօրն իւրեանց չափոց ինչ նմանեցին միտ եդեալ, և ոչ ընդ իւրեանց ծնիչսն հայրն Յուսիկ նայեցան, և ոչ մեծին Գրիգորի յառաքինութիւնսն ուշ եդին, և ոչ զիւրեանց նոգևոր պատուականութիւն յափտենական կենացն զպատիւ ինչ եդին ՚ի մտի: Այլ իւրեանց ժամանակի դարուն նմանեալք, և պանծացեալք յիւրեանց յանցաւոր սնոտի ՚ի մարմնաւոր տոհմականութիւնն ազգականութեան, զինուորական զվարսն ընտրեցին: Վասն այնորիկ անընտիր եղեալք, ՚ի հպարտութեանն խոտեցան ըստ առաջագոյն տեսլեանն ճօրն իւրեանց. ոչ մտին ՚ի լուծ աստուածպաշտութեանն: Եւ ոչ այլ ոք ՚ի նմին տանէ զաւակին Գրիգորի գոյր ոք. զի այնչափ իսկ կային մարմնաւոր զաւակին, և սոքա ինչ ոչ թէ արժանի հարցն գնացեալ նմանեցին վարուց: Եւ այլ ոչ ոք էր, որ զառաջնորդութիւն գլխաւորութեան հաճանայապետութեանն վերակացութեանն ոք տէրունական տանն հրամանատարութեանն կատարեալ, պաշտաման յաջորդէր:

ԺԴ

ՅԱՂԱԳՍ ՎԱՐՈՒՑ ՆԻ ԳՈՐՇՈՑ ՄԵԾԻՆ ԴԱՆԻԷԼԻ ԱՌՆ ԱՍՏՈՒԾՈՑ, ՆԻ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ՅԱՆԴԻՄԱՆԱՑ ՁԹԱԳԱՒՈՐՆ ՏԻՐԱՆ, ՆԻ ԿԱՄ Ո՛ՐՊԷՍ ՊԱՏՈՒՀԱՍԵԱԼ ՄԵՌԱՒ ՚Ի ՆՄԱՆԷ

Բայց յայնժամ դեռ ևս կենդանի էր ծերունի սուրբն մեծն Դանիէլ, այր սմանչելի: Աշակերտ եղեալ էր սա մեծին Գրիգորի, վերակացու և գլխաւոր եկեղեցւոյ նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռակա՝ իշխանութեանն կողման մասին գործակալութեանն մեծի դատաւորութեանն, ունէր զիշխանութիւնն զայն առանձինն. այլ վերակացու և հրամանատար տեսուչ և հոգաբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց մեծաց ընդ ամենայն տեղիս. այլ և ՚ի կողմանս Պարսից յօտար տեղիս հառոգեաց սա, և անթիւս ՚ի մոլորութենէ դարձոյց:

Եւ էր սա ազգաւ ասորի. և ունէր սա զաստիճան աթոռոյն գլխաւորութեան Տարօնոյ, ՚ի մեծն և նախ զառաջին եկեղեցին ՚ի մայր եկեղեցեացն ամենայն Հայաստանեաց: Այս իմն նախ և զառաջին և գլխաւոր տեղին պատուական. զի յառաջ նախ անդ շինեալ էր զսուրբ եկեղեցին, և ուղղեալ սեղան յանուն տեառն: Նոյնպէս և ՚ի ներքոյ հան զնա մարգարէանոցն Յովհաննու, նոյնպէս մօտ ՚ի տուն տեառն Հանգիստ առաքելոցն: Արդ այս տեղիք վասն յառաջակարգութեան, կանոնաւ ՚ի հայրապետացն և ՚ի թագաւորացն պատուեալք լինէին. որպէս ՚ի Թարանաղեաց գաւառին յեկեղեցին Թորդանու պատուին վասն գե-

մյուսիցն Աթանագինէս, ճանաչված էին իբրև անխրատ ստահակներ, որոնք ո՛չ աստվածային գրի ուսումն ունեին, ո՛չ դաստիարակված էին առաքինության մեջ, ո՛չ իրենց հայրերին նմանեցան, ո՛չ իրենց ծնողին՝ Հուսիկին նայեցին, ո՛չ մեծն Գրիգորի առաքինություններին ուշադիր եղան, և ոչ իրենց հոգևոր պատվականությունը՝ հավիտենական կյանքի պատիվը մտերը բերին. այլ իրենց դարի (մարդկանց) նմանելով իրենց սնոտի մարմնավոր ազնվականությամբ և ազգականությամբ պանծալով՝ զինվորական կյանքն ընտրեցին: Այս պատճառով ընտրելի չդարձան նրանք, այլ իրենց հպարտության պատճառով մերժվեցին, ինչպես առաջուց տեսիլքում հայտնվել էր նրանց հորը, նրանք աստվածապաշտության լծի տակ չմտան: Եվ Գրիգորի տան սերունդներից ուրիշ մեկը չկար. որովհետև նրա մարմնավոր զավակները միայն սրանք էին, իսկ սրանք իրենց վարքերով չնմանեցան իրենց հայրերին: Եվ ուրիշ մեկը չկար, որ առաջնորդության, գլխավոր հանանայապետության, եկեղեցիների վերակացության ու հրամանատարության պաշտոնը կատարեր:

ԺԴ

ՄԵՆՔ ԴԱՆԻԷԼԻ՝ ԱՍՏՎԱԾ ՄԱՐԴՈՒ ՎԱՐՔԻ ԵՎ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԱ ՀԱՆԴԻՄԱՆՑԻ ՏԻՐԱՆԻՆ ԵՎ ՆՐԱՆԻՑ ՍՊԱՆՎԵՑ

Այս ժամանակ դեռ կենդանի էր սուրբ և մեծ ծերունի Դանիել fորեպիսկոպոսը[46], մի սմանչելի մարդ: Սա եղել էր մեծն Գրիգորի աշակերտ և (նշանակված էր) վերակացու և գլխավոր՝ Տարոն նահանգի եկեղեցիների[47], որ Գրիգորի սեփական իշխանություններն էր կազմում, և այդ կողմի մեծ դատավարության գործակալ: Այս իշխանություններ նա առանձին ուներ, բայց (ընդհանրապես) վերակացու, հրամանատար, տեսուչ և հոգաբարձու էր Մեծ Հայքի բոլոր եկեղեցիներին ամեն տեղ. նա նույնիսկ Պարսկաստանի կողմերում օտար տեղերում հառոգեց և անթիվ մարդիկ մոլորություններից դարձրեց:

Սա ազգով ասորի էր և Տարոնի մեծ և առաջին եկեղեցու, բոլոր Հայաստանի մայր եկեղեցու աթոռի գլխավոր աստիճանն ուներ, այսինքն առաջին և պատվական գլխավոր տեղի, որովհետև առաջին անգամ այնտեղ էր շինված սուրբ եկեղեցին և տիրոջ անվան սեղան կանգնեցրած: Նույնպես նրանից ներքև Հովհաննեսի մարգարեանոցը, նույնպես և առաքյալների Հանգստարանը՝ տիրոջ տան մոտ: Արդ՝ այս տեղերն, իբրև առաջնակարգ հայրապետներից ու թագավորներից

ռեզմաճացն հայրապետին Գրիգորի: Սոյնպէս և զյիշատակս թագաւորին Տրդատայ թէ կամօք թէ ակամայ, որ արժանին լեալ էր նախածանօթ ի Քրիստոսն հաւատոց: Վասն այսորիկ կամ եղև աշխարհին զնախնեաց ժամանակին հարանց եպիսկոպոսաց զայս տեղիս պատուել, ուր սոքա եղեալն էին. զի սիրելի էր աշխարհին, պատուել զյառաջընծայն Քրիստոսի զթագաւորն իւրեանց Տրդատ: Նոյնպէս և զյառաջեպիսկոպոսն զնախավաստակն զԳրիգորիս. սոյնպէս և ի գաւառն Այրարատեան զնախավկայսն Քրիստոսի, ուր Գայիանէն և Հռիփսիմէն կային, իւրեանց հանդերձ գործակցօքն, սոյնպէս առաւել և զնախեկեղեցին:

Այս տեղիքս սմա էին յանձն հանդերձ գաւառօքն յորս էին. հաւատարիմ էր սա այնմ գլխաւոր սեղանոյն, իշխանութեան աթոռոյն հայրապետացն, հաստատութեան ուխտին կաթուղիկէ եկեղեցւոյն: Եւ էր սորա ընկալեալ զհոռեպիսկոպոսութեան ձեռնադրութիւն աստիճանին ի ձեռաց մեծին Գրիգորի, յաւուրս յորում կործանեաց զթագինս մեհենիցն Հերակլայ՝ այս իմն Վահագնի, որում տեղոյ Աշտիշատն կարդացեալ. որ նախ եդ զհիմունս եկեղեցւոյ սրբոյ:

Եւ էր սա այր զարմանալի, առնէր նշանս և զօրութիւնս մեծամեծս յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Սա և կօշկօք ֆայլելոյն գնայր ի վերայ ջուրց գետոց, և ոչ թանային. և ոչ հանէր սա: Եւ յաւուրս ձմերանոյն՝ յորժամ կուտեալ դիզեալ զմեծութիւն բազմութիւն թանձրութեան ձեանցն կուտակեալ հիւսեալ ձեանցն ի վերայ ձմերայինն լերանցն՝ յայնպիսի լերանց ի վերայ ընդ այնպիսի ժամանակի կամէր ուրեք երթալ ի՛ պէտս նահապարհի, յանկարծօրէն ձիւնն ցամաք արջն լինէր առաջի նորա: Եւ զի կամէր ի հեռաստան ուրեք երթալ, իբրև զփայլակն սլացեալ լինէր անաշխատ. իբրև թռուցեալ յոր կամէրն երթալ ի տեղին, յանկարծօրէն անդ գտանէր: Յարուցանէր զմեռեալս, առնէր և բժշկութիւնս հիւանդաց, և այլ ևս մեծ նշանս և զօրութիւնս ևս զնոյնս գործէր զոր ոչ բաւեցէ ընդ գրով նշմարանաց փակել: Եւ բնակութիւն իւրոց կայենիցն յանմարդի լերինս, այլ գտեսչութիւն մարդկան պիտոյից ոչ երբէք անփոյթ առնէր: Միանձնդերձ մաշկանափորոն սանդաղաւոր, և կեռակուր իւր արմատ բանջարոց, և գաւազան անգամ ընդ ինքեան ոչ ունէր: Եւ առ բանն աստուածոյ անշափ էր հզօր, զի զինչ հայցէրն յաստուածոյ՝ առնոյր, և զոր ինչ ասէր՝ այն լինէր: Եւ կայեանք տեսչութեան իւրոյ, յորժամ յանապատաց ի շէնս իջանէր վասն գործոյ աստուածոյ, ի գլխաւոր տեղիսն յեկեղեցեացն լինէր: Եւ յանախ յակն աղբերս ի ներոյ սարաբարձր մեհենատեղւոյն Հերակլայ, որ կայ դէմ յանդիման լերինն մեծի՝ որում

սահմանված կանոնով պատվում էին, ինչպես և Դարանաղյաց գավառում պատվվում է Թորդանի եկեղեցին՝ Գրիգոր հայրապետի գերեզմանի պատճառով, ինչպես և Տրդատ թագավորի հիշատակի համար, որ կամա թե ակամա արժանավոր դարձավ Քրիստոնեական հավատն առաջին անգամ ընդունելու: Ուստի աշխարհը կամեցավ պատվել այս տեղերը, որտեղ թաղված էին նախնի հայրերն ու եպիսկոպոսները: Աշխարհը սիրում էր պատվել իր Տրդատ թագավորին, Քրիստոսի առաջին հավատացյալին, նույնպես և առաջին եպիսկոպոսապետ նախավաստակ Գրիգորիսին, այսպես և Այրարատյան գավառում Քրիստոսի նախավկաներին, Գայիանեին ու Հռիփսիմեին, որ այնտեղ թաղված էին իրենց գործակիցների հետ միասին, և մանավանդ առաջին եկեղեցին:

Այս տեղերը հանձնված էին նրան գավառներով հանդերձ, որտեղ նրանք գտնվում էին. և նա հավատարիմ էր այն գլխավոր սեղանին, հայրապետական աթոռի իշխանության, Կաթողիկե եկեղեցու ուխտի հաստատության: Սա հոռեպիսկոպոսական աստիճանի ձեռնադրությունն ստացել էր մեծն Գրիգորի ձեռից այն ժամանակ, երբ նա կործանեց Հերակլի՝ այսինքն Վահագնի մեհյանի բագիները Աշտիշատ կոչված տեղում, որտեղ և հիմք դրեց առաջին սուրբ եկեղեցուն:

Սա զարմանալի մարդ էր, մեծամեծ նշաններ ու սքանչելիքներ էր գործում մեր տեր Հիսուս Քրիստոսի անունով: Առանց կոշիկները հանելու՝ ոտով քայլելով անցնում էր գետերի ջրերի վրայով, և ոտները չէին թրջվում: Ձմեռվա օրերին, երբ խոր ձյունը կուտակված դիզված էր լինում լեռների վրա, և նա կամենում էր այսպիսի ժամանակ այսպիսի լեռներով ճանապարհորդել, ձյունը ճանկարծակի ցամաքում էր նրա առաջ, սև հողը բացվում: Եվ երբ կամենում էր մի հեռու տեղ գնալ՝ առանց նեղության սլանում անցնում էր փայլակի նման. կարծես թե թռչելով իսկույն այնտեղ էր լինում՝ ուր կամենում էր գնալ: Մեռելներ էր հարուցանում, հիվանդների բժշկություն էր անում, և դեռ սրանից ավելի նշաններ ու սքանչելիքներ էր գործում, որ նույնիսկ գրով նկարագրել չէ կարելի: Նա իրան բնակություն էր հաստատել անմարդ լեռներում, բայց մարդկանց կարիքների հոգատարությունը անտես չէր անում: Նա մի գգեստ էր կրում, մաշկեղեն ճափորա[48] և սանդալներ. նա կեռակրվում էր բանջարներով ու արմատներով, մինչև անգամ գավազան չէր գործածում, և այնչափ աստծուն ընդունելի էր նրա խոսքը, որ ինչ որ աստծուց խնդրում էր՝ ստանում էր, ինչ որ ասում էր՝ այնպես էլ լինում էր: Եվ իր բնակության տեղերը, երբ անապատներից[49] չներն էր իջնում տեսչության՝ աստծու գործի համար՝ գլխավոր եկեղեցիներն էին լինում: Հանախ նա (գալիս էր) այն աղբյուրի մոտ,

ծուլե աճուաճեալ կարդաճ, ի՛ բագինի տեղւոչէ ի բացագոյն իբրև
ճարբնգէց մի ի ներոյ կուսէ, ի դոյզն ծործորակին ի սակաւ աճուա-
ռակին ի ճացուտ պուրակին՝ որում աճուն տեղոյն իսկ Հացեացն
դրախտ կոչեն: Այս այն աղբեւրն է, յորում առնէր յայնժամ ևս վաղ
մեծն Գրիգոր զմկրտութիւնսն զօրացն բազմաց: Յայնմ տեղոյ էր սուրա
կայեանէ խցկան սրբոյն Դանիէլի, էր դարափոր արարեալ բնակու-
թիւն. և յայնմ տեղոյ զդիտաւորութիւն այցելութեանն կատարէր:

Արդ միաժողով եղեալ մեծամեծօք նախարարացն, և ի մի վայր
եկեալք, խորհուրդ խորհեցան. ճաւանեցուցին զթագաւորն, ածել զծե-
րունին զԴանիէլ յիւրեանց բանակն, զի ածցեն կացուսցեն զնա իւրեանց
գլուխ առաջնորդ, զի նստցի նա յաթոռն հայրապետական: Եւ յղեցին
առ նա Զոմն իշխանն Սահառունեաց տոհմին, և զԱրտաւան զիշխանն
Վանանդայ, և զկարէն իշխանն Ամատունեաց տոհմին, և զՎարազ իշ-
խանն Դիմաքսենից տոհմին: Եւ եկին նախարարքն հասին գտին զնա
յնկեղեաց գաւառին, ի գեղն եկեղեցւոյն ի Թիլն. զի դեռ իմն զգործ
մշակութեան աստուծոյ գործէր: Եւ առին զնա և ածին առ թագաւորն
Տիրան, ի գաւառն Աղձնեաց ի Բառաէջ յաւան: Եւ իբրև մտանէր առա-
ջի թագաւորին Տիրանայ էրեպիսկոպոսն մեծն Դանիէլ, անդէն ի ձեռն
առնոյր զկշտամբութիւն յանդիմանութեանն:

Սկսեալ խօսել, յառաջ մատուցեալ, ասէր՝ «Եթէ բնդէ՛ր մոռացա-
րուք դուք զաստուած զարարիչն ձեր և զգութ նշանացն և խրատուց և
զսքանչելեաց՝ զոր արար առ հարսն ձեր և առ ձեզ. և դուք դարձայք ի
մոլորութիւն կռապաշտութեան նախնեացն ձերոց, և յատելութիւնս և
յագահութիւնս և ի զրկութիւնս և յաղխատակերութիւնս, ի պոռնկու-
թիւնս, ի նենգութիւնս և ի միմեանսզրկութիւնս և ի սպանութիւնս:
Կործանեցայք լեռնայք կասեցէք կաղացայք յարդարութեան ճանապար-
ճաց, և թողէք դուք զբարեբարն ձեր զաստուած՝ որ զձեզ յոչընչէ արար
և հաստատեաց, և ի մոլորութիւնս ձեր անճանօթ եղերուք դուք ի նմա-
նէ: Մինչ դուք զձեր անձինսդ անգիտաս արարեալ էիք ի կորստեանն,
ճա եկն ի խնդրել զձեզ. զի թէպէտ և իմն իսկ միածին որդին աս-
տուծոյ, եկն էջ ուսուցանել զհայր իւրոց արարածոց. զի թէպէտ և ոչ
լուան նմա, և շարչարեցին ևս մինչև ի մահ, և համբեր, սակայն և ոչ
ճա զիւր զօրութիւնն ոչ թագոյց յայմեէկ, զի պատճառք կենաց լիցի
ամենեցուն: Եւ զոր եգիտ արժանիս և պատրաստականս իւրում յա-
րութեանն, բնտրեաց, ուսոյց, և արձակեաց քարոզս և կոչնականս և
հրաւիրակս՝ ի փրկութեան լոյսն հրաւիրել զձեզ:

Սակայն և դուք յայնմ՝ փոխանակ երախտեացն ապախտիս հատու-
ցէք. զարմէ դուք իսկ նախ զձեր զքարոզն և զհրաւիրակն զառաքեալ

Հերակլի բարձրադիր մեհենատեղի ներքև, որ գտնվում է Յուլ կոչված
մեծ լեռան դեմուդեմ, բագինի տեղից մոտ մի քարընկեց հեռավորու-
թյամբ դեպի ներքև, փորիկ ձորակում, հացի ծառերի անշշան պուրա-
կում, որին ասում են Հացիների պարտեզ: Այս այն աղբյուրն է, որտեղ
հնումը մեծն Գրիգոր բազմաթիվ զորքերի մկրտությունը կատարեց:
Այստեղ էր սուրբ Դանիելի բնակության խցիկը, գետնի մեջ փորված.
այստեղ էր նա կատարում իր տեսչական այցելությունը:

Արդ՝ մեծամեծ նախարարները մի տեղ հավաքվելով՝ ժողով կազ-
մեցին, խորհուրդ արին և թագավորին հավանեցրին, որ ծերունի Դա-
նիելին բերեն իրենց բանակը, որպեսզի նրան իրենց գլուխ և առաջնորդ
նշանակեն և նա նստի հայրապետական աթոռը: Նրա մոտ ուղարկեցին
Սահառունյաց տոհմի Զոմն իշխանին, Վանանդի Արտավան իշխանին,
Ամատունյաց տոհմի Կարեն իշխանին և Դիմաքսենից տոհմի Վարազ
իշխանին: Այս նախարարները եկան, նրան գտան Սկեղյաց գավառում
Թիլ գյուղի եկեղեցում, որտեղ նա զբաղված էր աստծու մշակության
գործով: Նրան առան բերին Աղձնյաց գավառի Բառաէջ գյուղը, Տիրան
թագավորի մոտ: Եվ երբ մեծ Դանիել էրեպիսկոպոսը Տիրանի առաջ
եկավ՝ իսկույն ձեռք առավ մեղադրանքներ ու հանդիմանություն:

Նա առաջ եկավ, սկսեց խոսել, ասելով. «Ինչո՞ւ դուք մոռա-
ցաք ձեր արարիչ աստծուն, նրա ձեզ ցույց տված գութը, նշան-
ները, սքանչելիքները, որ կատարեց ձեր հայրերի ժամանակ և ձեր
օրերում, իսկ դուք էլի դարձաք ձեր նախնյաց մոլար կռապաշտության,
ատելության, ագահության, զրկողության, աղքատատեցության, պոռն-
կության, նենգության, միմյանց զրկելու, սպանություններ: Դուք
կործանվեցիք ու ընկաք, ետ կանգնեցիք արդարության հանապար-
հից, դուք թողիք ձեր բարերար աստծուն, որ ձեզ ոչնչից ստեղծեց ու
հաստատեց, և մոլորվելով նրան այլևս չճանաչեցիք: Մինչ դուք ձեր
անձերը կորուստի էիք մատնել՝ նա ինքը եկավ ձեզ փնտռելու և գըտ-
նելու, թեպետ նա ինքը աստծու միածին որդին էր, բայց եկավ՝ իր
արարածներին իր հորը ճանաչեցնելու: Նրան թեպետ չլսեցին, այլ դեռ
մինչև ի մահ չարչարեցին, բայց նա համբերեց, իր զորությունը ոչ
ոքից չթաքցրեց, որպեսզի ամենքի կյանքի պատճառ դառնա: Ուստի որ
նա արժանավոր գտավ և իր հարությանը պատրաստված՝ նրանց ընտ-
րեց, սովորեցրեց և արձակեց քարոզելու, իբրև կոչնակ և հրավիրակ՝
ձեզ դեպի փրկության լույսը հրավիրելու:

Սակայն դուք այստեղ էլ նրա երախտիքների փոխարեն ապերախ-
տություն ցույց տվիք. դուք նախ և առաջ սպանեցիք ձեր քարոզչին, որ

առ ձեզ եկեալն սպանէիք, զայն՝ որ եկեալ զձեզ կոչէր ի փրկական շնորհս արքայութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Զի թէպէտ և դուք առ ձերում անմտութեան՝ տիրապաշտ ազգին խորհրդոյն հաղորդեցայք Հրէիցն. զի նոքա զտէրն կարծեցին սպանանել, հարճն ձեր զնորին առաքեալսն. և զնոսա նորին նմանին չարչարեցին վասն նոյն նորին իրաց: Իսկ զկնի սորին իրացս այսոցիկ եկին բազմութիւք սրբոց վկայիցն աստուծոյ, նոցին Առաքելոցն ճգնակիցք. որ մինչ ի վտանգ չարչարանացն ճգնեալք, մինչ յիւրեանց մահն, պընդեալք ցուցանեն ձեզ զճշմարտութիւնն, զի թերևս նոքօք դառնայցէք յիմաստութիւն գիտութեան որդւոյն աստուծոյ: Սակայն և առ նոսա լցէք կատարեցէք բովանդակեցէք զսովորութիւն սպանութեանց ամբարշտութեանցն կամացն ձերոց: Սակայն նորին արեամբն՝ զոր ասացի՝ բազում և պէսպէս նշանօք խրատեաց զձեզ, և ի մահ ոչ մատնեաց վասն բազում ողորմութեանն. և իւր մեռանուրս արար զձեզ, և խառնեաց զձեզ ի բնակութիւն կենդանութեան ընտանութեան վարդապետութեանն իւրոյ, ուղղութեան օրինացն, յառաւելութիւն որդւոյն սիրելւոյ իւրոյ:

Եւ յետ այսորիկ եթող ձեզ զամենայն վնասս ձեր, և ետ ձեզ վարդապետս զսիրելիս իւր: Բայց դուք և ոչ զմի զայն ոչ յիշեցէք, ոչ եդիք ի մտի, ոչ կալայք ի սրտի, այլ յետս դարձայք հրէական ազգին նմանեալք. առէք զնոյն յանձինս ձեր զնոցուն օրինակն գործոց: Զի պարտ էր ձեզ յիշել զերախտիսն տեառն ձերոյ Քրիստոսի, որ ոչ յիշեաց զմեղս ևարցն ձերոց, և ոչ զանօրէնութիւնս ձեր: Եւ ձեզ անպարտ մոռանալ զճգնութիւն ևարցն սրբոցն խրատչացն և վարդապետացն ձերոց, որ ուսուցիչքն էին ձեր, որ հանապազ տենչին վասն փրկութեան ոգւոց ձերոց. և արժան էր ձեզ ունել գութ ընդ նոսա՝ որ հոգեպէս բանին վարդապետութեանն երկնեցին և ծնան զձեզ վերստին, և ըստ ձերում եղծման անդրէն դառնալոյ՝ դարձեալ միւսանգամ վերստին ընգերոյ չարեացն ապաշխարելոյ ինքեանք իւրեանց խնդրուածովքն երկնեցին զձեզ դարձեալ, մինչև կերպարանեսցեն զՔրիստոս ի ձեզ, զի արժանի լինիցիք մտանել յերկինս յարմայութիւնն անդր: Պատշաճ էր և ձեզ խնամել զնոցին որդիսն և զաշակերտսն, որ ըստ հոգևոր բանին ըստ աստուածային ծննդեանն էին որդիք, առաջնորդք և վերակացուք ձեր ի տէր. թող թէ որ մարմնապէս իսկ էին նոցա եէտ, և հոգևոր նոցին գործոց ոչ ինչ պակաս ևս զնարսն իւրեանց:

Արդ ձեր թողեալ զաստուած, և յիշեցուցէք զչարիսն ձեր զառաջինքս, և լցէք զչափ մեղացն ևարցն ձերոց: Որ զի նոքա սպանին զնարսն աստուս չարչարանօք՝ վասն բարւոյն չկամելոյ լսել զօգտակարն խրատ ի նոցանէն, և դուք զորդիս և զժառանգս և զգործակիցս և զնմանողս

ձեզ մոտ էր ուղարկված իրեն նրավիրակ, որ եկել էր ձեզ նրավիրելու մեր տեր Հիսուս Քրիստոսի արքայությունը, դեպի փրկության շնորհը: Դուք ձեր անմտությամբ տիրապաշտ Հրեից ազգի խորհրդին հաղորդակից եղաք. որովհետև նրանք իրենց կարծիքով սիրուց սպանեցին, իսկ ձեր հայրերը նրա առաքյալներին (սպանեցին), և հետո նրանց նմաններին շարչարեցին նույնպիսի բանի համար: Այս անցքերից հետո եկան աստծու բազմաթիվ սուրբ վկաներ, նույն առաքյալների ճգնակիցներ. նրանք շարչարանքների վտանգին ենթարկվեցին, մինչև մահ տոկացին մնացին, որպեսզի ցույց տան ձեզ ճշմարտությունը, գուցե նրանց միջոցով իմաստնանաք և աստծու որդուն ճանաչեք: Բայց դուք նրանց վերաբերությամբ էլ կատարեցիք ձեր ամբարիշտ կամքը, ձեր սովորական սպանությունը, բայց և այնպես նա նրանց[50] արյունով, որ ասացի, և զանազան նշաններով ձեզ խրատեց և ձեզ մահվան չենթարկեց իր մեծ ողորմությամբ, ձեզ իրեն մերձավորներ դարձրեց, ձեզ խառնեց իր վարդապետությունն ընդունողների մեջ իրեն բնտանիներ, բերեց ուղիղ օրենքի իր սիրելի որդու համար:

Սրանից հետո ձեզ ներեց ձեր բոլոր հանցանքները և իր սիրելիներին ձեզ տվեց ուսուցիչներ: Բայց դուք (նրանց խրատներից) ոչ մեկը չհիշեցիք, մտքերդ չպահեցիք, այլ Հրեից ազգին նմանելով ետ դարձաք, նրանց գործերի նման սկսեցիք և դուք գործել: Որովհետև դուք պետք է հիշեիք ձեր տիրոջ՝ Քրիստոսի երախտիքը, որ չհիշեց ձեր հայրերի մեղքերը և ձեր անօրեն գործերը: Դուք պարտավոր էիք չմոռանալ ձեր սուրբ հայրերի՝ ձեր խրատիչների և ուսուցիչների աշխատանքները, որոնք շարունակ տենում էին ձեր հոգիների փրկության համար, դուք պետք է գութ ունենայիք նրանց վրա, որոնք (աստծու) խոսքը ուսուցանելով ձեզ հոգևորապես երկնեցին և նորից ձեզ ծնան[51]... մինչև որ Քրիստոսին տպավորեն ձեր մեջ, որպեսզի արժանանաք երկնքի արքայությունը մտնելու: Պատշաճ էր, որ դուք էլ խնամեիք նրանց որդոց ու աշակերտներին, որոնք հոգևոր խոսքի նկատմամբ նրանց որդիքն էին աստվածային ծնունդով, ձեր առաջնորդներն ու վերակացուները, մանավանդ որ մարմնով էլ նրանց ծնունդներն էին և հոգևոր գործերով ոչ պակաս էին իրենց հայրերը:

Բայց դուք թողիք աստծուն և կրկնեցիք ձեր նախկին չարիքները և ձեր հայրերի մեղքերի չափը լրացրիք: Ինչպես որ (ձեր հայրերը) չարչարելով սպանեցին սուրբ հայրերին, չկամենալով օգտակար խրատը լսել նրանցից, այսպես էլ դուք նրանց որդոց ու ժառանգներին, նրանց գործակիցներին և նմանողներին սպանեցիք, որոնք ձեր մեղավոր գոր-

նոցին սպանէէ, որ ոչ հաւանեալ գործոց մեղացն ձերոց, սուրբ մանուկն Յուսիկն զհայրապետն զաքոռակալն զվիճակակալն զվիճակին Թադէոսի առաքելոյն և զնորին նմանոյն Գրիգորի: Եւ դուք զերէկան բարուցն բերէք զօրինակն յանձինս ձեր, սպանութեանցն սովորութեանց զրկութիւնս. որպէս և նոքա անխրատ զիւրեանց զառաքեալսն կամ զմարգարէսն կոտորեցին, սոյնպէս և դուք ըստ նոցին օրինակի կատարեցէք.

Արդ վասն այսչափ ստութեանց ձերոց և պղծութեանց, բարձէ տէր զքազաւորութիւնդ ձեր ի ձէնջ. բարձէ և զհաճանայութիւնդ ի ձէնջ: Յրուեսջիք և բաժանեսջիք, և ցրուեսցին սահմանք ձեր որպէս և Իսրայէլ, և անտէրունչք և անխնայ և անխնամք լիջիք. և լիջիք դուք իբրև զխաշինք, զի ոչ գոյէ նոցա հովիւ: Մատնեսջիք իբրև զհօտ ի ձեռս գազանաց, և անկջիք ի փառաց ձերոց և ի ձեռս օտար թշնամեաց մատնեսջիք դուք ի գերութիւն և ի լուծ ծառայութեան, և ոչ բարձցի երբէք կամ պակասեցէ լուծ ծառայութեան ի ձէնջ, և ոչ երբէք պակասեցէ լուծ չար սարկութեան ծառայութեանն ի պարանոցաց ձերոց. հաշեսջիք և մաշեսջիք ի ցանկութիւնս ձեր: Որպէս պատառեցաւ Իսրայէլ, և ոչ կարկատեցաւ, սոյնպէս և դուք ցրուեսջիք և կործանեսջիք. և այլք վայելեսցեն ի վաստակս ձեր, և այլք կերիցեն զօրութիւնս ձեր, և ոչ ոք գտանիցի, որ փրկեսցէ զձեզ. և ոչ հաճեսցի ընդ ձեզ տէր, և ոչ ճայեսցի և ոչ փրկեսցէ այլ զձեզ:

Այլ զի կոչեցէք զիս ելանել գալ առ ձեզ, զա՞յս ամենայն կամէիք լսել դուք յիենէն: Եթէ իմ չէր զայս ամենայն պատմել ձեզ, սակայն այս ամենայն լինելոց էր ձեզ վասն սպանման արդարոյն մեծին մանգանեայ Յուսկան առաքինւոյն առաջնորդին ձերոյ. որ էր ի տանէն զաւակին Գրիգորոյ, զի այս ամենայն լինելոց է ձեզ, զի այսպէս եցոյց ինձ տէր: Այլ զի յղեցէդ առ իս, եթէ է՛կ կաց մեզ գլուխ և առաջնորդ, զիա՞րդ լինիցիմ առաջնորդ այնոցիկ՝ որ ոչ դառնայցեն զկնի տեառն. կամ զիա՞րդ կայցեմ գլուխ ազգի, զոր եթող տէրն ի ձեռանէ: Կամ զիա՞րդ բառնայցեմ զձեռս իմ աղօթիւ առ աստուած վասն այնոցիկ, որոց ձեռք իւրեանց շաղախեալ են արեամբ սրբոց տեառն. կամ զիա՞րդ մատուցանեմ աղօթս պաղատանս այնոցիկ՝ որ դարձուցին զթիկունս առ տէր, և ոչ զերեսս իւրեանց: Կամ զիա՞րդ եղէց բարեխօս վասն այնոցիկ, որ նուաճեցինն. կամ զիա՞րդ խօսիցիմ ի հաշտութիւն վասն այնոցիկ, որ փախուցեալն են և ոչ կամին դառնալ. որոց իմ-ինքն տէր նիւթեաց պատրաստեաց զամենայն չարիս ի վերայ նոցա վասն այսորիկ, զի ասացիր թէ ոչ տեսանէ տէր զայս ամենայն». և որ ինչ նման է սոցին բանիցս:

ձերին հավան չէին, (ինչպես) սուրբ մանուկ Հուսիկին, ձեր հայրապետին, Թադեոս առաքյալի և նրան նմանող Գրիգորի վիճակի վիճակակալին ու աթոռակալին: Դուք հրեական բարերին ու օրինակին եք հետևում. նրանց սպանություններին, զրկողություններին. ինչպես որ նրանք, անխրատ լինելով, իրենց առաքյալներին ու մարգարեներին կոտորեցին, նրանց պես վարվեցիք և դուք:

Արդ՝ ձեր այսման ստությունների ու պղծությունների պատճառով տերը ձեր թագավորությունը կվերացնե, ձեր հաճանայությունը կվերացնե: Դուք կցրվիք ու կբաժանվիք, ձեր սահմաններն էլ Իսրայելացոց նման ցրիվ կգան. դուք կմնաք անտեր, անխնամ, ոչ ոք ձեզ չի խնայի. դուք խաշներ կդառնաք, որոնք հովիվ չունին: Ինչպես (ոչխարների) հետ՝ կմատնվիք գազանների ձեռքը, ձեր փառքերից կզրկվիք, օտար թշնամիների ձեռքը կմատնվիք իբրև գերի, նրանց ծառայության լծի տակ կընկնիք, և այս ծառայության լուծը երբեք ձեզանից չի վերանա և չի պակասի, ձեր պարանոցից երբեք չի պակասի ծառայության՝ շարաչար սարկության լուծը. ձեր ցանկությունների մեջ հալումաշ կլինիք: Ինչպես որ Իսրայելը պատռվեց և այլևս չկարկատվեց, այնպես էլ դուք կցրվիք ու կկործանվիք. ձեր վաստակածը ուրիշները կվայելեն, ձեր զորությունը ուրիշները կուտեն, և չի լինի մեկը, որ ձեզ փրկե, տերը չի հաղորդանա, ձեզ չի նայի, ձեզ այլևս չի փրկի:

Բայց դուք ինչո՞ւ ինձ կանչեցիք որ ելնեմ գամ ձեզ մոտ. ա՞յս էիք դուք կամենում իմանից լսել: Բայց ես թեկուզ այս ամենը ձեզ չպատմեի՝ այնուամենայնիվ այս բոլորը պետք է ձեզ պատահեր, որովհետև դուք սպանեցիք այն արդար մանուկ մեծն Հուսիկին, ձեր առաքինի առաջնորդին, որ Գրիգորի տանիցն էր, նրա զավակը: Այո՛, այս բոլորը ձեզ պիտի պատահի, որովհետև տերը այսպես ինձ ցույց ավեց: Այլ որ ինձ կանչեցիք, թե է՛կ, մեզ գլուխ և առաջնորդ եղիր.— ես ի՞նչպես կարող եմ առաջնորդ լինել այն մարդկանց, որոնք տիրոջ չեն հետևում, կամ ի՞նչպես գլուխ լինիմ մի ազգի, որից տերը երես է դարձրել: Ի՞նչպես կարող եմ ես ձեռներս բարձրացնել աղոթելու այն մարդկանց համար, որոնց ձեռքերը շաղախված են տիրոջ արբերի արյունով. կամ ի՞նչպես աղոթք ու պաղատանք մատուցանեմ նրանց համար, որոնք իրենց թիկունքները դարձրին դեպի տերը և ոչ երեսները. կամ ի՞նչպես բարեխոս լինիմ նրանց համար, որոնք ստամբակեցան[52]. կամ ի՞նչպես (աստծուն) հաշտեցնելու խոսք ասեմ նրանց համար, որոնք (նրանից) փախել են և չեն ուզում ետ դառնալ, որոնց համար ինքը տերը պատրաստել է այս բոլոր չարիքները այն պատճառով որ ասացիր թե տերը չէ տեսնում»:

Զայս բանս խօսեցաւ սուրբ ծերունին Դանիէլ հոռեպիսկոպոսն առաջի թագաւորին Տիրացայ, և առաջի իշխանացն, պետացն և ամենայն զօրացն: Եւ մինչ դեռ խօսէր նա զայս ամենայն, հիացեալ զարմացեալ թագաւորն միտ դնելով լուռ ևեթ կայր: Եւ եղև իբրև զայս ամենայն լուաւ, բորբոքեալ ի բռնաւորութիւն դառնութեան ամբարշտութեան ցասման իւրոյ. զոր տայր հրաման անդէն խեղդամահ առնել զնա: Զոր իբրև լուեալ անդէն սպասաւորացն, կատարեցին զգործ հրամանին վաղվաղակի: Բայց մեծամեծ նախարարացն աւագանին շատ եդին ի մտի արքային, զի մի՛ կատարեսցէ զչարութիւն կամացն իւրոց. առ դառնութեան սրտին ցասման, առ զայրուցս բարկութեանն, ոչ ինչ անսաց նոցա· այլ ճոպան ի փոցս եդեալ, խեղդամահ արարին զնա: Այսպէս կատարեցաւ սուրբն Դանիէլ:

Եւ բարձին զմարմին նորա բազմութիւն մարդկան, որ տեղեակ էին նմա, և գիտէին զնա. և կամեցան մեծարել զնա ընդ ոսկերս սուրբ վկայիցն Քրիստոսի: Ապա իբրև յայտնեալ երեւեցաւ առն սրբոյ աշակերտին իւրում, որոյ անուն կոչէր Եպիփան, զի մի՛ ի պատիւ առցեն զոսկերս նորա իբրև զայլոցն. այլ տարցին ի տեղին՝ ուր իբրև հրամայեաց, և ծածկեսցեն ընդ հողով: Զի այսպէս յայտնեալ բարբառեցաւ նոցա. զի եթէ տէրունական մարմինն, ասէ, ի գերեզմանի ծածկեցաւ աւուրս երկուս մինչև ցօրն երրորդ՝ յորում յարեաւ առ հայր իւր, ո՞րչափ ևս առաւել պարտ է մերում հողեղէն մարմինս ընդ հողով ծածկել: Ապա բարձին զմարմին նորա սուրբ սիրելիք իւր աշակերտք, որոյ գլխաւորին անուն էր Շաղիտա, որ ի նմանէ իսկ աշխարհին Կորդուաց վարդապետ տուեալ էր. և երկրորդին անուն Եպիփան, որ գաւառին Աղձնեաց և մեծաց Ծոփաց ի նմանէ իսկ վարդապետեալ էր, և ընդ նոսա պաշտօնեայք բանակին: Եւ գնացին տարան, եդին զմարմինն ի տեղի՝ ուր յառաջագոյն էր կայեսք խցկանն իւրոյ յերկրին Տարօնոյ, որ էր մայր եկեղեցեացն Հայոց, մօտ յակն աղբերն՝ ուր առնէր Գրիգոր զմկրտութիւնսն աշխարհազօր բազմութեանն, ի տեղւոջն՝ որ անուանեալ կոչի Հացեաց դռախտ: Յայնմ տեղւոջ ծածկեցին զմարմին սրբոյն Դանիէլի ընդ հողով, ըստ յառաջագոյն տեսլեանն ըստ հրամանի նոցա առեալ:

ԺԸ

ՅԱՂԱԳՍ ՈՐՈՒՈՑՆ ՅՈՒՍԿԱՆՆ, ԹԷ Ո՛ՐՔԷՍ ԸՆԹԱԴՐԵԱԼ ԸՆԴ ՈՏՆ ՀԱՐԻՆ ՋՔԱՀԱՆԱՑՈՒԹԵԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՁԳԱՑԻՒ·

Ապա խորհուրդ արարին մատուցանել զորդի սրբոյն Յուսկան ի խաճանայութիւն հարցն վարդապետութեանն: Ապա առաքեց իւրեանց

Այս բոլորը և սրանց նման ուրիշ բաներ խոսեց ծերունի Դանիել հոռեպիսկոպոսը Տիրան թագավորի, իշխանների, պետերի և բոլոր զորքերի առաջ: Եվ մինչ նա խոսում էր այս ամենը՝ թագավորը ապշած զարմացած լուռ լսում էր: Եվ երբ այս բոլորը լսեց՝ զայրացավ. բռնավորական ամբարիշտ ցասումով բորբոքվեց, հրամայեց անմիջապես նրան խեղդամահ անել: Սպասավորները հրամանը լսելով՝ իսկույն կատարեցին: Թեպետ մեծամեծ ավագ նախարարները շատ հորդորեցին թագավորին որ չար կամքը չկատարե, բայց նա այնքան դառնացած էր սրտով, այնքան զայրացած էր, որ նրանց չլսեց: Չվանը վիզը ձգելով խեղդամահ արին: Այսպես վախճանվեց սուրբ Դանիելը:

Եվ բազմաթիվ մարդիկ, որոնք նրան ճանաչում էին ու գիտեին՝ նրա մարմինը վերցրին և ուզում էին մեծարել Քրիստոսի սուրբ վկաների ոսկորների նման: Բայց իմբը (Դանիելը) երևաց իր աշակերտին, Եպիփանին, որ մի սուրբ մարդ էր, և հայտնեց, որ իր ոսկորները չպատվեն ինչպես ուրիշ (վկաներինը), այլ տանին հողի տակ թաղեն այնտեղ՝ որտեղ իմբը կամեցավ և հրամայեց: (Դանիելը) այսպես ասաց. «Եթե տերունական մարմինը երկու օր գերեզմանում ծածկվեց մինչև երրորդ օրը, երբ հարություն առավ իր հոր մոտ (գնալու), ո՞րչափ ավելի պետք է որ մեր մարմինները հողի տակ ծածկվին»: Ուստի նրա մարմինը վերցրին նրա սիրելի սուրբ աշակերտները, որոնցից գլխավորը կոչվում էր Շաղիտա, որ նրանից նշանակված էր Կորդվաց աշխարհի ուսուցանող, և երկրորդը Եպիփան, որ դարձյալ նրա կողմից նշանակված էր ուսուցանող[53] Աղձնիքի և Մեծ Ծոփքի. սրանց հետ էին նաև բանակի հոգևոր պաշտոնյաները: Սրանք մարմինն առան տարան Տարոն ու թաղեցին այն տեղում, ուր նրա բնակության խցիկն էր գտնվում, որ Հայոց մայր եկեղեցին էր, այն աղբյուրի մոտ, որտեղ Գրիգոր մկրտում էր աշխարհի զորքի բազմությունը. Հացյաց դռախտ կոչված տեղում: Այստեղ հողի տակ ծածկեցին սուրբ Դանիելի մարմինը՝ ինչպես որ առաջուց տեսիլքում նրանց հրամայել էր:

ԺԹ

ՀՈՒՍԿԻԻ ՈՐՈՑ ՄԱՍԻՆ, ԹԷ ԻՆՔԳԵՍ ՈՏԻ ՏԱԿ ՏԱԼՈՎ ԱՐՀԱՄԱՐՀԵՑԻՆ ԱՍՏՑՈՒ ՔԱՀԱՆԱ ԴԱՌՆԱԼՈՒ ԳԱՏԻՎԸ

Ապա խորհուրդ արին սուրբ Հուսիկի որդիներից ընտրել հաճայության համար: Նրանց իրենց կամքի հակառակ բռնեցին, եպիսկո-

կամացն բմբռնեցան, և բռնաբարեցան ի միաբանութեան եպիսկոպոսացն. զի կալեալ, ակամայ առեալ գձեռնադրութիւն սարկաւագութեան՝ հարկեցան Պապն և Աբահագենէս: Որոց հարեալ զաւանդն հոգևորն պատուի, անձամբ զանձինս իւրեանց խտորատուր[12] յարուեստն գինուորութեանն գինեցան, և յերկիր կործանեցան: Եւ բնտրեցին գերկրաւոր կեանս, և առին ևս իւրեանց կանայս գհոռս թագաւորին, և մերժեցին զանձինս իւրեանց ի ժառանգութենէ աստուծոյ: Բայց անուանի կանանց նոցա, անուն կնոջն Պապայ՝ Վարազդուխտ, նոքա անդրդիմ անզաւակ ելին յաշխարհէ. անուն կնոջն Աբահագենի՝ Բամբիշն. ի սոցանէ ծնաւ այր սմանչելի և զարմանալի Ներսէս, որ առ յապայն եկաց ֆանաևայապետ:

Բայց յայնմ ժամանակի ոչ ոք գոյր, որ առաջնորդէր նոցա գհաճանայապետութիւնն: Ապա խորհուրդ արարին՝ թէ գո՛ գտցեն իւրեանց առաջնորդ. ապա կամ եղև ամենեցուն առ հասարակ, զի ի նմին տանէ իշխանութեանն Գրիգորի գտցեն, որ կալցի նա զաթոռ հարցն:

ԺԹ

ՅԱՂԱԳՍ ՓԱՌԵՆԱՑ, ՈՐ ԿԱԱՒ ԶԱԹՈՌ ՀԱՅՐԱԳԵՏԱՅՆ

Յայնմ ժամանակի համարեցան արժանի զՓառէն ոմն էրէց, ի գաւառէն Տարօնոյ, ի մեծէ մարգարէանոցէն Յովհաննու, որ էր նախ չինեալ տուն աղօթից և խնդրուածոց ի հանգիստ սրբոցն, զի տեղին այն նմա էր հաւատացեալ: Ապա կոչեցին զնա առ արքայն. և առաքեաց զնա պատարագօք թագաւորն, և հրովարտակօք և ճոխ իշխանօք՝ որ ընդ նմա առաքեցանն: Մեծ զօրավարն Հայոց՝ որում անուն էր Վասակ, ի Մամիկոնեան տոհմէն. և Մեհենդակ ընդշտունի, և Անդովկ Սիւնի, և Արշաւիր Կամսարական, մեծ և գլխաւոր նահապետք. և տասն այր այլ, արք պատուականք, առին. գնացին զՓառէն սուրբ ի մայրաքաղաքն Գամրաց ի կեսարիա, և անդ ձեռնադրեցին զնա ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց: Եւ զան դարձեալ յիւրեանց աշխարհն խաղաղութեամբ:

Եւ նստաւ Փառէն յաթոռ հայրապետական սակաւ ժամանակս. և այլ ինչ չհամարձակէր նա կամ խրատել ինչ, կամ յանդիմանել զմոլորութիւն ինչ զուրուք կամ զամբարշտութիւնս: Բայց միայն զիւր անձն սուրբ պահէր, և ի հարկէ ընկերէր աճօրէն թագաւորին, և ըստ նորին կամացն երբեմն ճնազանդեալ: Եւ յետ այսորիկ հանգեաւ, և յաւելաւ առ հարս իւր. և առեալ պաշտօնէիցն եկեղեցւոյ բանակին զմարմինն,

պոսների միահամուռ կամովն բռնադատեցին և հարկադրեցին սարկավագության ձեռնադրություն ստանալ— Պապին ու Աբահագինեսին: Բայց նրանք հոգևոր պատվի ավանդը ոտնատակ տալով՝ իրենց կամովն զինվորական ուսյան արվեստի կարգով զինվեցին և կործանվեցին: Նրանք գերադասեցին երկրավոր կյանքը, իրենց կին առան թագավորի դուրերին և հրաժարվեցին աստծու ժառանգությունից: Նրանց կանանց անուններն էին— Պապի կնոջը՝ Վարազդուխտ—որոնք անորդի անզավակ մնացին ու մեռան,— իսկ Աբահագինեսի կնոջը՝ Բամբիշ: Սրանցից ծնվեց սմանչելի և զարմանալի Ներսեսը, որ ետոն ֆանանայապետ դարձավ:

Բայց այն ժամանակ չկար մեկը, որ իբրև ֆանանայապետ նրանց առաջնորդեր: Ապա խորհուրդ արին, թե ո՛ւմ ընտրեն առաջնորդ: Բոլորը միաբան որոշեցին, որ նույն Գրիգորի իշխանության տնից գտնեն մեկին, որ իր հայրերի աթոռը նստի:

ԺՀ

ՓԱՌՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՅՐԱԳԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԸ ՆՍՏԵՑ

Այս ժամանակ (կաթողիկոսության) արժան համարեցին մի ոմն Փառեն երեցի Տարոն գավառից, մեծն Հովհաննեսի մարգարեանոցից, որտեղ արքերի հանգստարանում առաջին անգամ շինված էր աղոթքի և խնդրվածքների տուն, և հանձնված էր նրա (Փառենի) տեսչության: Նրան կանչեցին թագավորի մոտ: Թագավորը նրան ուղարկեց ընծաներով ու հրովարտակներով և մեծամեծ իշխանների ուղեկցությամբ, որ էին— առաջինը Հայոց Վասակ զորավարը Մամիկոնյան տոհմից, ետոն Մեհենդակ Ռշտունին, Անդովկ Սյունին և Արշավիր Կամսարականը—մեծ և գլխավոր նահապետներ և էլի ուրիշ տասը պատվավոր մարդիկ: Սրանք Փառենին առան գնացին Գամիրքի մայրաքաղաքը, Կեսարիա, և այնտեղ նրան ձեռնադրեցին Մեծ Հայքի կաթողիկոս, և խաղաղությամբ վերադարձան իրենց աշխարհը:

Փառենը կարճ ժամանակ նստեց հայրապետական աթոռը: Նա չէր համարձակում նրանց խրատել, որևէ մեկի մոլորությունը կամ ամբարիշտ գործերը նանդիմանել: Նա միայն ինքն իրեն մաճառ էր պահում և հարկից ստիպված ընկերանում էր թագավորին, նրան նինազանդում էր ու նրա կամքովը վարվում: Ապա նա վախճանեցավ, հայրերի մոտ գնաց: Բանակի եկեղեցու պաշտոնյաները նրա մարմինը առան տարան

գնացեալ ի գաւառն Տարօնոյ՝ տարաւ ի յազարակն մեծի մարգարէացոցին Յովհաննու, որ էր իճին ի կենդանութեանն իւրում յառաջագոյն բնակեալ. և անդ գեղեցիկ շիրիմ գործեալ, և զսուրա ոսկեաս ծածկեցին:

ԺԷ

ՅԱՂԱԳՍ ՇԱՀԱԿԱՑ՝ ՈՐ ԷՐ Ի ՋԱՒԱԿԷ ԱՂԲԻԱՆՈՍ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ, ՈՐ ՅԱՋՈՐԴԵԱՑ ՋՅԵՂԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ԱՔՈՒԹՈՑՆ. ԵՒ ԿԱՄ ՈՐՊԷՍ ԵՐԿԻՐՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՅՆ ԹՈՂԵԱԼՔ ՋՅԵՐ ԻՒՐԱՆՑ

Ապա յայնմ ժամանակի միաբան խորհեցան աշխարհօրէն խորհուրդ, եթէ ո՛ւմ պարտ իցէ զհայրապետութենանն գկաթողիկոսութիւնն ունել: Ապա իբրև ոչ ոք գոյր ի տանէն Գրիգորի այնմ արժանի, ապա ճամբեցուցին զՇահակ ոմն անուն ի տոհմէ գաւակին Աղբիանոս եպիսկոպոսին: Եւ տան զնա ի ձեռս իշխանին մարդպետութենանն, որում անուն իւր Հայր կոչէր, և յաւագաց գումարեն ընդ նմա գիշխանն Գարդմանաց ձորոյն. և առնեն ընդ նոսա այլ տասն նախարարս. և յուզարկեցին զնա մեծաշուք պատուով յերկիրն Գամրաց ի մեծ քաղաքն Կեսարիա: Անդ ձեռնադրեն զՇահակն ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց, և պատուով դառնան առ թագաւորն:

Եւ յաջորդեաց գտեղի հայրապետացն Շահակն. և սա նմանեաց վարուցն Փառենայ: Առաջնորդէր սա աշխարհի բստ նմին օրինակի: Բայց որոց հովուէրն՝ չեդեալ ունկն ինչ խրատու ճշմարտութեանն, այլ յանդիմանեալ՝ հոլանեալ գործէին զմեղս համարձակութեամբ՝ առանց խիթի յամենայն չարիս դարձեալ, բողեալ գուէր և զպատուիրանս նորա առ հասարակ թագաւորն և նախարարքն և իշխանքն: Եւս չար բան զնոսա առ մարդիկ մարդկանն ամբարշտեալ, ի հնութիւն առաջին գործոցն հարցն իւրեանց դարձեալ, ի փորկանց մինչև ցմեծամեծս ի յայս էին հարեալ, և ի սոյն կանխեալ: Վասն այսորիկ ամենայնի բարկացեալ տէր աստուած ի վերայ նոցա՝ եթող ի ձեռանէ, արար զնոսա կոխան ի յարուցելոցն ի վերայ նոցա բշնամեաց նոցա: Քանզի ի ժամանակաց ի բագաւորութենէն Տրդատայ, յորմէ հետէ գտէրն ճաշելոյ՝ արար խաղաղութիւն, և լռեցոյց շուրջ գբշնամիս նոցա, գի ցածոյց տէր գմարտ պատերազմացն ի սահմանաց նոցա, և մինչև յայնժամանակ ոչ ընդ ումեք բանք գոյին ամբոխի կամ խռովութեան, և ի մեծի խաղաղութեան էին բնակեալ: Ապա ի ժամանակին յայնմիկ յարոյց զօրացոյց զգրգռութիւնս սահմանակցօք շուրջ յամենայն կողմանս գբշնամիս նոցա. և ոչ մի ոք ի բագաւորացն Հայոց ոչ ոք գտաւ ետր նոցա բարեկամ, այլ ամենեքեան բշնամիք:

Տարոն գավառը, մեծն Հովհաննեսի մարգարեացոցի ագարակը, որտեղ ապրում էր կենդանի ժամանակ, և այնտեղ նրա մարմինը թաղեցին ու գեղեցիկ շիրիմ շինեցին վրան:

ԺԷ

ՇԱՀԱԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՂԲԻԱՆՈՍ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՍԵՐՆԴԻՑ ԷՐ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՔՈՒԹԸ ՆՍՏԱՎ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ԹՈՂԵԼ ԷՐ ՏԻՐՈՋԸ ԵՎ ՆՐԱ ԳԱՅՎԻՐԱՆՆԵՐԸ

Այն ժամանակ բոլորը աշխարհովին խորհուրդ արին, թե ո՛վ պետք է հայրապետության աթոռը նստի: Եվ որովհետև Գրիգորի տանից ոչ ոք չկար այդ (պաշտոնին) արժանավոր՝ ուստի հարմար գտան մի ոմն Շահակի, որ Աղբիանոս եպիսկոպոսի սերունդից էր: Նրան հանձնեցին մարդպետության իշխանին, որի անունն էր Հայր[54]. նրա հետ նշանակեցին ավագներից Գարդմանաձորի իշխանին և ուրիշ տասը նախարար, և նրան հանդիսապարհ դրին մեծ հանդեսով Գամրաց երկիրը, Կեսարիա մեծ քաղաքը: Այնտեղ Շահակին ձեռնադրեցին Մեծ Հայրի կաթողիկոս և պատվով վերադարձան թագավորի մոտ:

Եվ Շահակը հաջորդեց հայրապետների աթոռը. սա էլ Փառենին նմանեցավ իր վարքով. նրա նման առաջնորդում էր աշխարհին: Բայց որոնց որ նա հովվում էր՝ չէին լսում նրա հշմարիտ խրատներին, այլ հանդիմանվելիս էլ՝ բացարձակ ու համարձակ գործում էին իրենց մեղքերը, առանց խղճի խայթի գործում էին ամեն տեսակ չարիքներ, մոռանալով (տիրոջը) և նրա պատվիրանները— առհասարակ թագավորը, նախարարները ու իշխանները: Նրանցից է՛լ ավելի վատ էին մյուս մարդիկ, որոնք ամբարշտությամբ իրանց հայրերի առաջին հին գործերին դարձան. մեծերից մինչ փոքրերը աննման էին նրել այս բանին: Այս բոլորի համար ասված բարկանալով նրանցից երես դարձրեց, նրանց ոռնակոխ դարձրեց նրանց դեմ դուրս եկած բշնամիներին: Որովհետև Տրդատի թագավորության ժամանակից ի վեր, երբ տիրոջը հանձնեցին՝ (ասված) խաղաղություն պարգևեց, նրանց բշնամիներին՝ լռեցրեց, նրանց սահմաններից պատերազմները հեռացրեց և ոչ ոքի հետ նրանք խռովության կամ բշնամության գործ չունեին և. ապրում էին կատարյալ խաղաղության մեջ: Իսկ այն ժամանակ սերը գրգռություն հուզեց նրանց բոլոր սահմաններում, զորացրեց նրանց բշնամիներին, և ոչ մեկը ուրիշ ազգերի թագավորներից[55] նրանց բարեկամ չէր, այլ բոլորը բշնամի էին:

ՅԱՂԱԳՍ ՀԱՅՈՑ ՄԱՐԳՊԵՏԻ, ՈՐ ՏԱՅՐ ԿՈՏՈՐԲԻ ՋԱՋԳՍ ՆԱԽԱՐԱՐԱՅՆ

Բայց յայնմ յանմիտ թագաւորութեանն ժամանակի ոչ միայն թշնամիք թշնամեաց և բարեկամք բարեկամաց և ընկերք ընկերաց դաւաճանութիւնս մատնութիւնս սկսան յարուցանել ի մէջ հայաստան երկրին, և բեւր ազգի ազգի թշնամութիւնս գործէին: Վասն զի անկաւ ի նոսա խռովութիւն ի տեառնէ, այս պղծութեան և ոգի մոլորութեան. զի նախ միմեամբք ֆանդեալք աւերեցան վասն անօրէնութեան իւրեանց: Բայց ֆան զամենեսին աւելի այր մի անօրէն և այսամուտ, որ աւելի ընդ ազգս նախարարացն գրգռէր զթագաւորն Տիրան: Այս իմն ունէր զպատիւն մեծի մարդպետութեան, այր ներքինի՝ չարասիրտ չարախորհուրդ չարագործ, որում Հայր կոչէին: Զբազումս ի նախարարացն ետ խութեամբ առանց վնասու կոտորել, և խանգարեաց զմեծ տէրութիւն թագաւորութեանն: Մանաւանդ աւելի զերկու տոհմսն զաւագս տայր իւրով չարախօսութեամբն հանել ընդ սուր, և անունդ առնել միահաղոյն զտոհմսն Ռշտունեաց և զտոհմն Առծրունեաց. բառնային ի միջոյ առանց ամենայն վնասու և յանցման, մինչ անգամ և զէգսն կոտորեցին ազգացն: Յայնմ ժամանակի ի գայթակղի գտանէին ի դայեակս մանկունս փախստեայս, զՏաճատ որդի Մեհրնդակայ ըՌշտունւոյ. և միւս ևս Շաւասպ որդի Վաչէի առծրունւոյ. տղայք սպրդիայք, զոր ածին առաջի թագաւորին: Իբրև տեսանէր, տայր հրաման հանել փղոտել զմանկունսն. զի նոքա ևեթ մեծ էին յազգացն: Եւ անդ դիպեալ Առտաւազդ և Վասակ, տէր ի Մամիկոնեան տոհմէն, որ էին զօրավարք ամենայն զօրացն Հայոց, որ յարուցեալք անկան ի վերայ մանկանցն տղայոց, մէն մի յանբի հարեալ՝ ի դուրս գնացին. զէնն ի վեր առեալ կոուոյ պատրաստէին՝ ի վերայ այնց մանկանց մեռանել: Զի թէպէտ և սնուցանէին նոքա զորդին զարքային զԱրշակ, սակայն գչարեալ ընդ գործ ժամանակին՝ թողին զսանն իւրեանց զԱրշակ, և գնացին ի բաց ի բանակէն տէրունի: Եւ չոգան յաշխարհն իւրեանց յամուրս Տայոց. և անդ նստան ամս բազումս ընտանեօք իւրեանց, և թողին զայլ զտուն իւրեանց: Եւ սնուցանէին զայն մանկունսն, զՇաւասպն և զՏաճատ. և նոքա զգաստերս իւրեանց ի կենութեան, ուստի դարձեալ միւսանգամ ազգն այն սերեցան. և ոչ խառնէին նոքա ի խորհուրդս Հայոց մինչև ի բազում ամս:

ՀԱՅՈՑ ՄԱՐԳՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԿՈՏՈՐԲԻ ԷՐ ՏԱԼԻՍ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՏՈՀՄԵՐԸ

Բայց այս անմիտ թագավորության ժամանակ ոչ միայն թշնամիները թշնամիներին, այլ նաև բարեկամները բարեկամներին, ընկերները ընկերներին դավաճանում ու մատնում էին Հայոց աշխարհում և տեսակ տեսակ թշնամություններ էին անում միմյանց: Որովհետև տերը նրանց մեջ խռովություն ձգեց, չար ոգի հուզեց, որոնցով նրանք մոլորվեցին, մեկը մյուսին ֆանդեցին ու ավերեցին իրենց անօրենության պատճառով: Բայց բոլորից գերազանցում էր մի անօրեն՝ սատանայի գործիք դարձած մարդ, որ Տիրան թագավորին գրգռում էր մանավանդ նախարարական տոհմերի դեմ, այսինքն մեծ մարդպետության պատիվը կրող ներքինին, մի չարասիրտ՝ չարամիտ՝ չարագործ մարդ, որին Հայր էին ասում: Նա խությամբ շատ նախարարներ կոտորել տվեց առանց որևէ հանցանքի և մեծ թագավորության կարգը խանգարեց: Մանավանդ նա իր չարախոսությամբ սրով կոտորել տվեց ու անզավակ դարձրեց երկու ավագ տոհմեր, Ռշտունյաց և Առծրունյաց տոհմերը, որոնց առանց որևէ մեղքի ու հանցանքի միջեհան արին, նույն իսկ էգերին կոտորեցին: Այն ժամանակ երկու երեխա էին գտնում, որոնք փախել ապաստանել էին դայակների մոտ, Մեհենդակ Ռշտունու որդուն Տաճատին և Առծրունի Վաչեի որդուն Շավասպին, որոնք ծծկեր երեխաներ էին: Նրանց բերին թագավորի մոտ: Նա երբ տեսավ երեխաներին՝ հրամայեց վզերը կտրել, որովհետև միայն նրանք էին մնացել այդ երկու տոհմերից ետեր: Այդտեղ պատահեցին Արտավազդը և Վասակը Մամիկոնյան տոհմից, Հայոց բոլոր զորքերի զորավարները: Նրանք վեր կացան, բռնկան երեխաների վրա, ամեն մեկը մի երեխա անութի տակ առնելով դուրս եկան, զենքերը հանած, երեխաների համար մեռնելու պատրաստ: Որովհետև թեպետ նրանք սնուցանում էին թագավորի որդուն Արշակին, բայց այդ ժամանակվա գործերից զգվելով՝ թողին իրենց Արշակ սանին և արքունական բանակից հեռացան: Նրանք գնացին իրենց աշխարհը, Տայքի ամուր տեղերը, և այնտեղ մնացին իրենց ընտանիքների հետ բավական տարիներ, իրենց մյուս կալվածները թողնելով: Այնտեղ նրանք սնուցանում էին այն երկու երեխաներին, Շավասպին, և Տաճատին, և (հետո) նրանց կնության տվին իրենց աղջիկները, որից այդ տոհմերը նորից սերվեցին: Նրանք երկար տարիներ Հայոց գործերին չէին խառնվում:

ՅԱՂԱԳՍ ՈՐԴՈՅՆ ՅՈՒՍԿԱՆՆ, ՊԱՊԱՅՆ ԵՒ ԱԲԱՆԱԳԵՆԻՆ, ԹԷ ՋԻՒ՛ՐԴ ԿԱՄ Ո՛ՐՊԷՍ ՍԱՏԱԿԵՑԱՆ ՅԱՆՕՐԷՆՈՒԹԵՑԱՆ ԻՐԵՆԱՑ

Այլ որդիքն Յուսկանն, Պապն և Աբանագենէս, յաստուածատեցութեանն զկեանս իւրեանց վարէին. յանօրէնութեան և յամբարշտութեան չրչէին: Եւ զամենայն աւուրս կենաց իւրեանց ի մեծի յանդգնութեան էին, և ոչ երկեւղ աստուծոյ առաջի աչաց նոցա. և ի բազում անառակութեան և ի գիշութեան գնային, և զկարգն աստուծոյ արհամարհեալ այպանէին: Եւ էին նոքա յերկիրն Տարօնոյ յեկեղեցւոջ յաւանին յԱշտիշատ. ուր զառաջին էր շինեալ զեկեղեցին ի հաւտյն նոցա Գրիգորէ: Յայն գետ երկոքեան եղբարքն երթեալ հասանէին Պապն և Աբանագենէս: Եւ բազում հատեալ յարշաւութիւն, զաստուածոյ զոտաճարաւն այպրն առնէին. և երթեալ երկոքին եղբարքն մտանէին յեպիսկոպոսանոցն՝ որ էրն անդ, և ըմպէին անդ գինի բոզօք և վարձակօք և գուսանօք և կատակօք. զսուրբ և զճուիրեալ տեղօքն համաճեալ, կոխան առնէին:

Եւ մինչ էին յուրախութեան մեծի, բազմեալ էին ի՛ ներս եպիսկոպոսանոցին ուտէին և ըմպէին, յանկարծակի հրեշտակ տեառն երևեցաւ ի ճմաճուրիւճ փայլատակաւն, և ճարեալ սատակէր զերկոսեան զեղբարսն միանգամայն ի բազմականին անդ: Եւ այլ մարդիկն՝ որք էին անդ, որք տաճարակիցք էին ուրախակիցք և բազմականակիցք էին, որք միանգամ անդ դիպեցան, առ ճասարակ բողին և փախեան, ելին արտաքս ի տաճարէ անտի: Եւ յանէն մեծէ այլ ոչ ևս ոք ի նոցանէ գարձաւ անդրէճ. և ոչ ոք իշխեաց բնաւ այլ մարդ ի մարդկանէ մտաբերել մտանել ի ներս, և ոչ ի դուրսն ճուպ երթալ և դնել, բանգի ի բաց մնաց ի փախչելն նոցա. և ոչ յայլ աւուրս ոք առ գրօճն իշխէր անցանել:

Եւ Պապն և Աբանագենէս երկոքեան եղբարքն այսպէս սատակեցան. անկեալ գնէին ի ներոյ եպիսկոպոսանոցին ի տեղւոջն բազմականացն: Եւ գրուճ տաճարին ի բաց կային, և ոք ճուպ չիշխէր երթալ. մինչև ևնխեցան մարմինքն նոցա և կողոպտեցան, և յաղկեցան, բակեցան յուծան ի միմեանց, գրուեցան ոսկերք նոցա: Եւ բազում ամիսք անցանէին ի վերայ իրացն, ապա իշխեցին մտանել ժողովել բառնալ ճանել անտի զոսկերս նոցա. և գտանէին զճոսա յոկ ցամաքեալ զկնդացնալ զոսկերս նոցա. և ճանէին յայգւոջն եկեղեցոյն, որում Ագարակն կոչեն: Բայց մնաց Աբանագենի որդի ի Բամբրշէն ի ճեռ բազաւորին, և անուն նորա նէրսէս. որ նկաց յաթոռ հայրապետացն առ յապայ ամե-

ՀՈՒՍԻԿԻ ՈՐԴՈՅ՝ ՊԱՊԻ ԵՒ ԱԲԱՆԱԳԻՆԵՍԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԹԷ ԻՆՉՊԷՍ ԻՐԵՆԻՑ ԱՆՕՐԵՆՈՒԹՅԱՄԲ ՍԱՏԿԵՑԱՆ

Իսկ Հուսիկի որդիքը, Պապն ու Աբանագիենեսը, կյանք էին վարում աստվածատեցությամբ, շրջում էին անօրենությամբ և ամբարտավանությամբ: Նրանք սաստիկ ճանդուգն էին, աստծուց երկյուղ չունեին, կյանք էին վարում մեծ անառակությամբ և գիճությամբ, աստվածային կարգերն արհամարհում ու ծաղրում էին:

Նրանք (մի անգամ) Տարոնի երկրում էին, Աշտիշատ ավանի եկեղեցում, որ առաջինը շինված էր նրանց պապի՝ Գրիգորի ձեռով: Երկու եղբայրները, Պապն ու Աբանագիենեսը, գալիս հասնում էին այս գյուղը: Սաստիկ ճարբելով՝ նրանք ծաղրում էին աստծու տաճարը, երկուսով գնում մտնում էին այնտեղ եղած եպիսկոպոսանոցը, այնտեղ գինի էին խմում բոզերի, վարձակների[56], գուսանների և ծաղրածուների հետ:

Երբ նրանք եպիսկոպոսանոցում նստած ուտում խմում էին, ուրախություն էին անում՝ հանկարծ երևեց տիրոջ հրեշտակը փայլատակումի նման և երկու եղբայրներին միասին զարկեց սպանեց նստած տեղերում: Իսկ մյուս մարդիկ, որ այնտեղ էին և նրանց հետ նստած սեղանակից և ուրախակից էին՝ բոլորը թողին ու փախան, դուրս եկան սենյակից: Եվ այնքան մեծ էր ահը, որ նրանցից ոչ մեկը էլ հետ չդարձավ, ոչ մի մարդ չհամարձակվեց նրանց մտաբերել ու ներս մտնել, ոչ ոք դռները չմտեցավ, դուրը վրա չդրեց: Նրանց փախչելիս դուրը բաց մնաց և այնուհետև էլ ոչ ոք չէր վստահում դռներին մոտենալ:

Այս կերպով սատկեցան այն երկու եղբայրները, Պապն ու Աբանագիենեսը, նրանք եպիսկոպոսանոցում հաշի սեղանի տակ ընկած մնացին: Տաճարի դռները բաց էին մնացել, և ոչ ոք չէր համարձակում մոտենալ, մինչև նրանց մարմինները նեխեցան, բայբայվեցին, անդամ-անդամ լուծվեցին, ոսկորները ցրվեցան: Սրա վրա շատ ամիսներ անցան, ապա թե սիրտ արին, ներս մտան՝ հավաքելու և այնտեղից դուրս հանելու նրանց ոսկորները, որ ցամաքել չորացել էին: Նրանց հանեցին (ու թաղեցին) եկեղեցու այգում, որ Ագարակ էր կոչվում:

Բայց Աբանագիենեսին մնաց մի որդի Բամբիշ (կնոջից), որ բազավորի հույրն էր. նրա անունն էր Ներսես, որ հետո բոլոր Հայաստանի

ձայն երկրին Հայոց: Բայց Պապայ ի բուն ի կճոչէն ոչ մնաց, այլ էր ճորա հարճ մի ի գաւառէն Տարօնոյ, ի Հացեաց գեղչէ կարճագատացն. և մնաց որ ի հարճէ աճաի ի Հացեկացւոյն, որում անուն իւր[13] որդւոյ հարճին Վրիկ կոչէր:

Ի

ՅԱՂԱԳՍ ՏԻՐԱՆԱՅ ԹԱԳԱՒՈՐԻ, ԹԷ Ո՛ՐՔԷՍ ՄԱՏՆՑՑԱՒ ՅԻՒՐՄԷ ՍԵՆԵԿԱՊԵՏԷՆ ՓԻՍԱԿԱՅ ՍԻՒՆԻՈՅ. ԵՒ Ո՛ՐՔԷՍ ԿՈՐՑԱՒ ԵԻ ԳԵՐԵՑԱՒ Ի ՎԱՐԱԶԱՅ, ԵՒ ԿԱՄ Ո՛ՐՔԷՍ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԿԻՐ ԸՆԴ ՆՄԻՆ ԳԵՐԵՑԱՒ

Բայց դեռ բարեկամութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց, ի մէջ թագաւորին Հայոց և Պարսից: Նստէր յաշխարհին Ատրպատական որում անուն կոչէր բարձաքիին իւրում Շապուհ Վարազ: Արդ մինչ դեռ ևս յոյժ խաղաղութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց, անկաւ ի տեառնէ խռովութիւն ոչինչ բանիւ՝ արամբ միով անարգաւ, որ ոչ ինչ պակաս ևս զդև էր մոլորութեամբ, որոյ անուն Փիսակ կոչիւր. որ սենեկապետն էր արքային Տիրանայ, ազգաւ սիւնի: Սա դեսպանագնացեալ էր առ Վարազ Շապուհ, զոր թողեալ էր սահմանապահ արքային Պարսից յԱտրպատական աշխարհին:

Ձայնու ժամանակաւ ձի մի էր երիվար արքային Տիրանայ, զորմէ կարի զարմանային: Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն. սա լի էր ֆոյութեամբ, անուանի և ճոյակապ, մեծ և բարձր երկայն ևս զամեձայն ձիս, և տեսանելով ևս զայլս գեղեցիկ, զանազան՝ որ համեմատ նմա այլ ոչ գտանէր: Զորմէ յերթալն իւրոյ դեսպանութեանն՝ սենեկապետն արքային Փիսակ մատնեաց զձին Վարազայ, վասն զի բարեկամացեալ էր ընդ նմա. և ի նմանէն իմն թուղթ առեալ, բերեալ մատուցանէր արքային Հայոց: Զորմէ չհաւանեալ, տալ ոչ առնոյր յանձն: Այլ վասն զի կասկածէր յառնէն զի գոյժ խռովութիւն ինչ ի մէջ թագաւորացն երկոցունցն առացէ, ի խնդիր անկանէր՝ զնոյն գոյն ձի, զնոյն նշան, զնոյն պատկեր, բաց ի մեծութենէ՝ զի այնչափ ուրեք ոչ գտանէր, զնոյն նման զնոյն կերպարանս ճարտուկ ճանճկէն գտեալ, և ճանդերձ հրովարտակօք և պատարագօք ի ձեռն մոլեկան Փիսակայն առ իշխանն յԱտրպատական առ Վարազն առձակէր: Եւ միտս դնելով խորհուրդ առնէր. զի ասացես, ասէ, եթէ այս ինձն է զոր խնդրեցեր, զի առ սէր ոչ խնայեաց ի էն: Իսկ նա յորժամ հասեալ առ Վարազն, յայտ առնէր զիրս խնայութեանն, ի գրգռութիւն յանացեալ՝ ոչ կամէր բժշկել զենեգախօսութիւնն իւր. այլ ևս ևս զևս սրեալ զչարախօսու-

հայրապետական աթոռոր նստեց: Իսկ Պապը իսկական կնոջից որդի չունեցավ, բայց նա մի հարճ ուներ Տարոն գավառի կարճազատների[57] Հացյաց գյուղից, և այս հացեկացի հարճից մնաց մի որդի, անունն էր Վրիկ[57]:

Ի

ՏԻՐԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ Ի՞ՆՉԳԵՍ ՄԱՏՆՎԵՑ ԻՐ ՍԵՆԵԿԱՊԵՏ ՓԻՍԱԿ ՍՅՈՒՆԻԻ ՉՕՒՔՈՎ, ԻՆՉԳԵՍ ՎԱՐԱԶԻՑ ԳԵՐԻ ԲՌՆՎԵՑ ՈՒ ԿՈՐԱՎ, ԵՎ ԹԵ Ի՞ՆՉԳԵՍ ԲՈԼՈՐ ՀԱՅՈՑ ԵՐԿԻՐՆ ԷԼ ՆՐԱ ՀՕՏ ԳԵՐՎԵՑ

Բայց դեռ բարեկամություն էր տիրում երկու թագավորների՝ Հայոց և Պարսից մեջ: Այս ժամանակ Ատրպատականում նստում էր մի բարձր պաշտոնյա, որի անունն էր Շապուհ Վարազ: Արդ՝ մինչ կատարյալ խաղաղություն էր տիրում երկու թագավորների մեջ՝ տիրոջ կամքով մի չնչին բանի պատճառով խռովություն ծագեց մի անարգ մարդու ձեռքով, որ մոլորությամբ դևից պակաս չէր, անունը Փիսակ, Տիրան թագավոր սենեկապետը Սյունյաց տոհմից: Սա դեսպան էր գնացել Վարազ Շապուհի մոտ, որին Պարսից թագավորը սահմանապահ էր թողել Ատրպատականում:

Այս ժամանակ Տիրան թագավորը մի ձի ուներ, որի վրա բոլորը զարմանում էին: Այդ ձին մուգ շագանակագույն և պուտպուտիկ[58] էր, ֆոյությամբ լի, ճոյակապ տեսքով, բոլոր ձիերից մեծ և բարձր, բոլորից զանազանվում էր աննման գեղեցկությամբ, որի նման ուրիշը չկար: Փիսակը, թագավորի սենեկապետը, դեսպան գնալիս այս ձին մատնեց Վարազին, որի հետ բարեկամացել էր, և նրանից թուղթ առնելով բերում մատուցանում էր Հայոց թագավորին: Թագավորը չկամեցավ (ձին) տալ: Բայց որովհետև այն մարդուց կասկածում էր, մի գուցե երկու թագավորների մեջ խռովություն ծագեցնե՝ հարց ու խնդիր եղավ և գտավ այն գույնով մի ձի, նույն նշանով, նույն տեսքով, բացի մեծությունից,— որովհետև այնպիսի մեծությամբ ուրիշը չկար—նույն տեսակ պուտպուտիկ, և հրովարտակով ու ընծաներով Ատրպատականի իշխանին՝ Վարազին էր ուղարկում նույն մոլի Փիսակի ձեռքով: Նրան խրատում ու խորհուրդ էր տալիս, թե «ասա՛, այս այն ձին է որ խնդրեցիր. ես սիրու համար բեզանց չխնայեց»: Իսկ նա երբ Վարազի մոտ հասավ՝ խնայելու գաղտնիքը բացեց և չանաց (Վարազին) գրգռել նրան սովորությամբ. նա ավելի սրեց իր չարախոսությունը

բիւնն իւր, ասելով եթէ այնչափ ի ճեռ և ի նախանձ, ի չարակնութեան և ի բշնամութեան, ի յատելութեան և ի չկամութեան, յերկմտութեան և յաներկիւղութեան առ թագաւորն Պարսից և առ ամենայն զօրսն Պարսից արհայն Հայոց Տիրան, մինչ անգամ վասն կաշոյ միոջ խնայ արարեալ՝ թագոյց, և զհեզ ծաղր արարեալ, և այլ բազ այլոյ զմիտս գողանալ ես. զոր յիմ ձեռն եւս ածել, առ հեզ առաքեաց: եւ ոչ այդ միայն է, ասէ. այլ ի կայսր և ի զօրս նորա յուսացեալ, խորհի հանել զթագաւորութիւն Պարսից յազգէն Սասանայ. զի ասէ, թէ մեր լեալ է և հարցն մերոց այն տէրութիւնն: Արդ ասէ, թէ չեմ ծուղալոց՝ մինչև դարձցի պատիւ հարցն նախնեաց. զնախնի զթագաւորութիւնն այսրէն առ որդի և առ զաւակ նոցա յազգս իմ և ի տունս իմ և յանձն իմ դարձուցանեմ: եւ այսչափ և այսպիսի բանիւ գրգռէր զնա Փիսակն աճօրէն ի վերայ տեառն իւրոյ բնակի, և նիւթէր զմահ ի վերայ իւրոյ թագաւորին:

Ապա իբրև զայս ամենայն լուաւ Վարազ Շապուհ Ատրպատականաց մարզպան ի կատաղախօս ի շնաբերանն Փիսակայ, վաղվաղակի նամակ ամբաստանութեան գրեալ Վարազայ յարհայէն Հայոց մատուցանէր Ներսեհի արհային Պարսից: եւ այնչափ զայրացոյց գրգռեաց յուզեաց դրդեաց սրտմտեցոյց բարկացոյց զթագաւորն Պարսից ի վերայ արհային Հայոց, որ ապա առ հրաման ի նմանէ, զի չև է հնար գտանել մարթել նահապարհս, մեքենայիւք գայթակղութիւնս դնել՝ որսալ ըմբռնել զարհայն Հայոց: եւ մինչ դեռ խաղաղութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց, բարկութիւն տեառն գրգռեաց յուզեաց զվրէժս, զի խնդրեսցին սուրբ արիւնք մանուցն երկուց մեծացն Հռհռեայիցն առաջնորդացն յաճօրէնն Տիրանայ:

Ապա յայնմ ժամանակի Վարազն առձակէր դեսպան առ արհայն Հայոց, ի հաշտութիւն խաղաղութեան դառնալ խօսել ընդ նմա. զանձուկ սիրոյ պատճառեալ, համառձակութիւն խնդրէր՝ գալ նմա առ նա: Իսկ իբրև լուաւ զայն Տիրան արհայն Հայոց, փութապէս վաղվաղակի մեծաւ ուրախութեամբ առ իւր կոչել հրամայէր: եւ մինչ չև նա եկեալ էր, խորհէր արհայն ընդ իւր ծառայսն ճերիճիսն սպասաւորսն իւրում սենեկի. ասէ. Արժանի է մեզ, այր որ գայ առ մեզ՝ զբաւուցանել և ուրախ առնել որովք և բազմականօք, և ամենայն պէսպէս վայելչութեամբք: Այլ ոչ եթէ այնչափ իրչ արժան է զմեծ իրչ որոյ տեղիս ի մերում երկրի ասա եմա տեսանել՝ վասն չարակնութեան յաշաղանաց չարութեան ենեգութեանն ազգին պարսկաց. այլ եմանեցուցէ տեղիս գոյզճագիտ որոց իրչ՝ որով լոկ զբաւուցուսք զնա, և մի՛ որսացուսք զառնառ իրչ որոց զտեղիս, և զի մի՛ մեծ իրչ նախճիրս որոց կոտո-

ասելով. «Հայոց Տիրան թագաւորը այնման լցված է նախանձով, չկամությամբ, բշնամությամբ և ատելությամբ, այնման անհավատարիմ և աներկյուղ է Պարսից թագավորից և բոլոր Պարսից զորերից, որ մինչև իսկ մի ձիու կաշի խնայեց ու թաքցրեց և հեզ խաբելու ու ծաղրելու համար մի ուրիշ ձի հեզ ուղարկեց իմ ձեռով: Եվ միայն այս չէ, ասում էր նա. նա նույս է դրել կայսրի ու նրա զորի վրա, մտադրվել է Սասանի ցեղից խլել Պարսից թագավորությունը, որովհետև, ասում է, այդ տերությունը մերն է եղել և մեր հայրենիքը. ես, ասում է, չեմ հանգստանա, մինչև մեր նախնի հայրերի պատիվը ետ չդարձնեմ, մինչև նախնի թագավորությունը չդարձնեմ հայրենի գավակներին, այսինքն իմ տոհմիս և իմ տանս և ինձ»: Այս և այսպիսի խոսքերով աճօրեն Փիսակը գրգռում էր Վարազին իր բնիկ տիրոջ դեմ, իր թագավորի համար մահ էր նյութում:

Երբ Վարազ Շապուհը, Ատրպատականի մարզպանը, այս բոլորը լսեց կատաղախոս, շնաբերան Փիսակից՝ անմիջապես ամբաստանության թուղթ գրեց Հայոց թագավորի մասին և ուղարկեց Պարսից Ներսեհ թագավորին: Եվ այն աստիճան Պարսից թագավորին գրգռեց, զայրացրեց, հուզեց, շարացրեց, բարկացրեց Հայոց թագավորի դեմ, որ նրանից հրաման տացավ՝ որևէ հնար գտնել, որևէ միջոց հնարել՝ Հայոց թագավորին խորամանկությամբ որսալու և բռնելու: Եվ մինչ երկու թագավորների մեջ խաղաղություն էր տիրում՝ աստված բարկանալով վրեժխնդիր եղավ, որպեսզի աճօրեն Տիրանը տուժե երկու մեծ հանճարների ու առաջնորդների անմեղ մահվան և արյունի համար:

Այն ժամանակ Վարազը դեսպան էր ուղարկում Հայոց թագավորի մոտ՝ հաշտության և խաղաղության պատրվակով դավ սարքելով նրա դեմ: Նա սերն ու կարոտը պատճառ բերելով՝ թույլտվություն էր խնդրում՝ նրան այցելության գալու: Երբ Հայոց Տիրան թագավորն այս լսեց՝ փութով մեծ ուրախությամբ հրամայում էր հրավիրել նրան: Դեռ նա չեկած՝ թագավորը իր սենյակի ներքին սպասավորների հետ խորհուրդ էր անում: Նա ասում էր. «Մեզ մոտ եկող հյուրին հարկավոր է զվարճացնել և ուրախացնել որսերով, կերուխումով և ամեն տեսակ վայելչություններով: Բայց պետք չէ, որ նա այստեղ մեր երկրում տասն որսի տեղեր տեսնե, որովհետև Պարսից ազգը չարասիրտ, նախանձոտ, չարաբարո, նենգ մարդիկ են. այլ պետք է գտնել որսով ոչ հարուստ տեղեր, որով նրան զվարճացնենք, բայց առատ որս չանենք, որպի մեծ կոտորածներ չանենք ցույցի համար. միայն ձևի համար անենք՝ պար-

ռեալ առ ի ցոյցս առնելոյ: Այլ վարկպարագի արասցուք, ասէ, վասն զառնացող շար ազգին չարութեանն զառնացող ազգին: Այլ յերկրին Ապաճունեաց, յոտին մեծի լերինն Մասեաց, տեղին զայն որասցուք. տեղւոյն՝ որում անուն կոչի հաղամ Աղիռոսք:

Ապա եկն եհաս Շապուհ Վարազն երիւք հազարօքն, և յանդիման եղև թագաւորին յերկրին Ապաճունեաց. և մեծապէս մեծարեցաւ ի նմանէ: Եւ այն բանիւն, որ վասն որոյն ի թագաւորէն ասացաւ, վաղվաղակի յունկն զօրավարին Պարսից հասանէին ի բերանոյ շորիկն շոգմոգն տիրաճենկն և տիրադրուժն տիրասպանուն տիրամատնիչն Փխակայ, յայն յաշխարհակորոյս յառնէ անտի. և առուրս սակաւս ուրախ լինէին ի միասին: Այլ իշխանն Պարսից զքշնամութիւնն, զոր ունէր ի ներոյ, խոհամանգեալ ծածկեալ մեխենայեալ առագաստեալ բերէր, և առնէր սպաս զդաւն կատարել:

Եւ ի ժամանակին յայնմիկ այնպէս դիպեցաւ, յայնմ ժամանակի զօրավարին չէին անդ, այլ սարտուցեալ էին. և այլ մեծամեծ նախարարացն և աւագ տանուտէրք ազատանին. սոյնպէս և զօրն արուճի յիւրաքանչիւր տունս յիւրաքանչիւր կայեանս յիւրաքանչիւր դադարս դադարեալ էին: Եւ ոչ ոք էր՝ որ մնացեալ էր առ թագաւորին, և ոչ գունդ և այրևձի. բայց միայն սակաւ սպասաւորօք հանդերձ, և որոցն պառականօք, և ռանվիրայ մարդկանն, և խառնաղանջ խորանապան զօրուն, և ռամիկսպաս զօրօքն, և տիկնանն հանդերձ և արքայորդին մանուկն Արշակ: Այսպէս սակաւուք դիպեալ ի ժամանակին յայնմիկ, զի թէպէտ և տեսեալ հարուստ գնդաւ եկեալ զօրավարն Պարսից, զի էին ընդ նմա սպառազէնք վառեալք արք իբրև երեք հազարք, ոչ ինչ խիթացեալ զգուշաւ անկասկած լինէր: Քանզի տեսանէր զնա իբրև ի՛ պատճառս խաղաղութեան եկեալ, մեծաւ պատարագօք և պատուական ընծայիւք և մեծաշուք մեծարանօք:

Եւ իբրև ոչ ինչ բազում աւուրք ընդ մէջ եղեն, յրնթրիս կոչեն ի նաց հրաւիրեալ զարքայն. ի պատիւ մեծարանաց կոչէր: Ապա իբրև ընդ գինիս մտին, էաջ արբեալ լինէին թագաւորն և որ ընդ նմայն էին, զօրն դարանակալ յանպատրաստից յանկարծօրէն յայլակարծուց գնացս յանկարծուստ յիւրաքանչիւր բազմականի ի վերայ հասեալք ըմբռնէին, և վանանափակ շերտաւորացն պատէին զթագաւորն Տիրան: Եւ կալեալ կապեալ զոտս և զձեռս նորա ի կապս երկաթիս, և զրանակն՝ զոր գտանէր՝ աւար հարկանէր. և զգանձս և զստացուածս զկին և զորդիս թագաւորին, զոր գտին ի բանակին, խաղացուցին յերկրէն Ապաճունեաց:

Իբրև եկին հասին ի գետն մի, որում անուն Դալարիս կոչէին.

սիկներ դառնութեան և չարութեան պատճառով: Ընտրեմք Ապաճունեաց երկրում մեծ Մասիսի ստորոտում որսի տեղ, Աղիռոսք կոչված հաղամում»[59]:

Շապուհ Վարազը եկավ հասավ երեք հազար մարդով, ներկայացավ թագավորին Ապաճունյաց երկրում և մեծ պատվով նրանից մեծարվեց: Իսկ այն խոսքերը, որ թագավորը որսի մասին ասաց՝ անմիջապես Պարսից զորավարի ականջին էին հասնում այն իսու և բանսարկու, այն տիրաճենգ ու տիրադրուժ, տիրասպան ու տիրամատնիչ Փխակի, այն աշխարհավեր մարդու բերանով:

Մի քանի օր նրանք միասին ուրախություն էին անում. բայց Պարսից իշխանը իր ունեցած քշնամությունը խորամանկությամբ ծածուկ էր պահում և հարմար առիթի էր սպասում որ գլուխ բերե:

Դեպքն այնպես բերեց, որ այդ ժամանակներ զորավարներն այնտեղ չէին, այլ խռովել հեռացել էին[60], այսպես էլ մյուս ազատանին, մեծամեծ նախարարներն ու ավագ տանուտերները. նույնպես էլ արհունական զորերը իրենց տներում, իրենց կացարաններում հանգստանում էին: Թագավորի մոտ ուրիշ մարդ չէր մնացել, ո՛չ հետեակազոր և ո՛չ այրուձի, բայց միայն սակավաթիվ սպասավորներ, որսորդական շների պահապաններ, նռնապարհների մշակներ, խորանների խառնիճաղանճ պահնորդներ, ռամիկ սպասավորներ: Այնտեղ էին նաև տիկինը և արքայորդին, մանկահասակ Արշակը: Այսպես քիչ մարդիկ պատահեցին այնտեղ այդ ժամանակ. որովհետև թեպետ տեսնում էր, որ Պարսից զորավարը ուժեղ գնդով է եկել,— որովհետև երեք հազար լավ սպառազինված մարդիկ կային նրա հետ,— բայց միամիտ անկասկած էր, քանի որ տեսնում էր, թե նա խաղաղության համար է եկել մեծ նվերներով, ընծաներով և շքեղ մեծարանքներով:

Ոչ շատ օրեր անցնելուց հետո՝ թագավորին ընթրիքի հրավիրեցին, նրան պատվելու համար: Երբ խմելն սկսեցին՝ թագավորը և նրա հետ եղողները սաստիկ հարբեցան, և այս ժամանակ դարանակալ մարդիկ անսպասելի կերպով հանկարծակի վրա պրծնելով Տիրան թագավորին հենց նստած տեղում բռնեցին և շրջապատեցին զինված մարդկանցով: Նրա ոտներն ու ձեռները կապեցին երկաթե շղթաներով. ամբողջ բանակը, ինչ որ գտան՝ ավար առան: Թագավորի գանձերը, գույքը, կինը, որդիքը, ինչ որ բանակում գտան՝ Ապաճունյաց երկրից տարան:

Նկան հասան մի գյուղ, որին ասում էին Դալարիք: Երբ Պար-

յարժամ եկն եմուտ զօրավարն Պարսից ի ներս ի գեղն Դալարիս, ածէր կապեալ զարքայն Տիրան ընդ իւր: Եւ ասէ Վարազ. Աղէ՝ տեսէ՛ք ածուղ, որով երկաթ շողացուսցուք, զի զաչս խարեսցուք զարքային Հայոց: Եւ անդէն բերին ածուղ, որով խարէին զաչսն Տիրանայ: Ապա ինքն խօսել սկսաւ Տիրան, և ասէ. Փոխանակ զի իմ երկու աչս լուսաւորք խաւարեցան յայս տեղւոջս, արդ փոխանակ Դալարեցւս անուան, Ածուղ անուն լիցի սմա մինչև ցյաւիտեանս ժամանակաց. և այս երեսյթ նշանակս մնասցէ յիմ յիշատակի: Այլ ինձ յուշ եղև և գիտեմ՝ թէ այն զի խնդրեցաւ յինէն վրէժ չարեաց մեղացն իմոց, փոխանակ զի խաւարեցուցի ես զաշխարհս՝ որում թագաւորեալ էի՝ յերկուց լուսաւոր վարդապետացն, և կարծեցի շիջուցանել զլոյսն ճշմարտութեանն քարոզութեանն երկուց հաւատարմացն, վասն այսորիկ խաւարեցաւ լոյս տեսանելեաց աչացս իմոց:

Եւ յայնմ ժամանակի վաղվաղակի փութանակի չու առնէր յԱծուղ գեղչէն, խաղայր գնայր ճեպով իշխանն արքային Պարսից հանդերձ Տիրանաւ արքայիւ և ամենայն գերութեամբն յերկիրն Պարսից, և երթայր յԱսորեստան առ տէրն իւր յարքայն Պարսից: Լու եղև այս ամենայն կործանումն գունդի չարեացն յանկարծօրէն թշուառութեանն հասանելոյ: Ապա ժողով լինէր նախարարացն և իշխանացն, գործակալք և զօրագլուխք, պետք և ամենայն աշխարհաժողովք բազմութեանն եկելոց կուտելոցն: Թէպէտ և ժողովեցան կազմեցան գունդ եղեն, պատրաստութեամբ զճետ կրթէին Վարազայ, ոչ ինչ կարացին հասանել: Սակայն հասանէին առնուին զկողմ ի Պարսից աշխարհէն. առ հասարակ մարդակոտոր առնէին, և զաշխարհն յայրեաց և յաւար դարձուցանէին: Եւ ինքեանք դառնային, և ի մի վայր ժողովէին, կոծ եդեալ աշխարհաւք լային զիւրեանց բնական տէրն զարքայն Հայոց. սոյնպէս և զկորուստ աշխարհին, և զանձանց անտէրչութիւն կործանմանն վարանացն աղիողորմ գործէին:

սից զօրավարն եկավ Դալարիք գյուղը մտավ՝ իր հետ տանում էր կապված Տիրան թագավորին: Եվ Վարազը ասաց. «Ապա ածուխ գտեք, որով երկաթ շիկացնենք, էս Տիրան թագավորի աչքերը դաղենք»: Խնկույն ածուխ բերին և Տիրանի աչքերը դաղեցին: Այն ժամանակ Տիրանը խոսեց ու ասաց. «Փոխանակ որ իմ զույգ լուսավոր աչքերս այս տեղում խավարեցան՝ թող այսուհետև Դալարիքի փոխարեն Ածուխ կոչվի սա հավիտյան, և այս հայտնի նշանը մնա ինձ հիշատակ. բայց ես միտս բերի և գիտեմ, որ իմ գործած չարիքների ու մեղքերի վրեժը ինձանից պահանջվեց, որովհետև ես այս աշխարհը, որում թագավորում էի, խավարեցրի՝ երկու լուսատու ուսուցիչներից (զրկելով) և կարծում էի, թե ճշմարիտ վարդապետության երկու հավատարիմ քարոզիչների լույսը կհանգցնեմ. այս պատճառով էլ իմ աչքերիս լույսը խավարեց»:

Այնուհետև Պարսից թագավորի իշխանը ամենայն շտապով Ածուխ գյուղից մեկնում էր, հետն առնելով Տիրան թագավորին և ամբողջ գերությունը, փութով գնում հասնում էր Պարսից աշխարհը և գնում էր Ասորեստան[61] իր տիրոջ՝ Պարսից թագավորի մոտ:

Այս հանկարծակի վրա հասած չարիքի ու թշվառության՝ այս կործանման գույժը տարածվում էր: Ժողովվում էին նախարարներն ու իշխանները, գործակալներն ու զորագլուխները, պետերը և աշխարհից մեծ բազմություն: Նրանք ժողովվեցին, գնդեր կազմեցին, պատրաստությամբ հետամուտ եղան Վարազին, բայց չկարողացան հասնել: Բայց և այնպես Պարսից աշխարհի մի կողմն առնում էին, մարդկանց առհասարակ կոտորում էին, աշխարհը այրում ու ավարի էին առնում: Մի տեղ ժողովվելով կոծում, սգում ու ողբում էին իրենց բնիկ տիրոջ՝ Հայոց թագավորին, ինչպես և աշխարհի կորուստն և իրենց անտիրական մնալն ու կործանվելը. աղիողորմ կերպով լալիս էին:

ՅԱՂԱԳՍ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԺՈՂՈՎԵՑԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ ՆԱԽԱՐԱՐՔՆ ՀԱՅՈՑ, ԵՒ ՋՈԳԱՆ ԱՇԻՆ ՋԹԱԳԱՒՈՐՆ ՅՈՒՆԱՑ՝ ԻՐԲԱՆՑ Ի ԹԻԿՈՒՆՍ ՕԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ի ՅԵՐԿԻՐՆ ՀԱՅՈՑ. ԵՒ ԹԷ ՈՐՊԷՍ ԵԿՆ ԹԱԳԱՒՈՐՆ ՊԱՐՍԻՑ ԲԱԶՈՒՄ ՋՕՐՕՔ, ԵՒ ՄԻԱՁԻ ԺՈՂՈՊՐԵԱԼ ՓԱԽՉԷՐ ՅԵՐԿԻՐՆ ՊԱՐՍԻՑ

Ապա առաւել ժողովեցան Ի մի ժողով միաբանութեամբ մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք. բայց Ի զօրավարացն, այլ և Ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն: Ապա խօսել սկսան այր ընդ ընկերի, և ասեն. Ջինչ է այս, որ Ի սուգ մտեալ եմք. թշնամիք այսու գամագիւտ լինին. այլ հաճ սակաւ ժամանակք են, այսրէն արշաւեսցեն թշնամիքն: Այլ եկայք, զանձինս անձամբք մխիթարեսցուք. անձանց և աշխարհի պահ կալցուք, և զտեառն բնակի վրէժ խնդրեսցուք: Ապա առնասարակ ամենայն մարդիկ աշխարհին Ի մի միաբանութիւն և Ի մի խորհուրդս ժողովեցան վասն օգնականութեան և Ի բիկունս իւրեանց գտանելոյ:

Յայնմ ժամանակի առաքեցին Ի մեծ նախարարաց աետի աւագանին Հայոց հանդերձ պատարագօք առ թագաւորն Յունաց, զի Ի նա ձեռս առնել ծառայեսցեն նմա հնազանդութեամբ, և լինի՛ցի նա ճոգա բիկունք օգնականութեան՝ խնդրել վրէժս Ի թշնամեաց ճոգա: Ապա առաքեցին զԱնդովկ նահապետն Սիւնեաց, և զԱրշաւիր կամսարական, նահապետն Արշարունեաց: Որք երթեալ հասեալ էին յաշխարհն Յունաց Ի կայսերական պալատս թագաւորացն. և տային զերդուարտակն, և ունէին զպատարագսն բերեալ առաջի, և մատուցանէին զաշխարհապաղատ պատգամսն առաջի թագաւորին: Ջոր իբրև լուաւ կայսրն զիրսն զայնոսիկ, մեծաւ փութով և բազում պատրաստութեամբ Ի խնդիր ելանէր իրին հասելոյ. և օգնական և բիկունք լինէր աշխարհին Հայոց: Մանաւանդ զի զուխտն յիշեալ զդաշանցն կռիոյց զերդմանցն հաստատութեան, միջնորդութեամբ Ի մէջ կայսերն Կոստանդիանոսի և Ի մէջ թագաւորին Տրդատայ եղեալ էր:

Արդ մինչ դեռ դեսպանքն երթեալք յերկրէն Հայոց Ի կայսերական պալատս չև էին աճապրէն յիւրեանց աշխարհն դարձեալ, Ի կողմանց արեւելից խաղաց գնաց ինքն Ներսեհ արքայն Պարսից, գալ առնուլ այրել և աւերել, կոտորածել և միանգամայն իսկ յիւր վտարել զամենայն Հայաստան երկրին: Եւ առեալ զամենայն զօրս իւր բնիւ աղխի և ամենայն մեծաւ կարաւանաւ, փղակոյտ բազմութեամբ հանդերձ, աճքիւ վանատոք և բնիւք մաշկապանծօք, և ամենայն կանանօք, և հանդ-

ԹԵ Ի՛ՆՉՊԵՍ ՀԱՅՈՑ ԲԱԼՈՒ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՔ ԺՈՂՈՎՎԵՑԻՆ ԵՒ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՆԱՑԻՆ, ՀՈՒՆԱՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԲՈՐԻՆ ԻՐԵՆՑ ՕԳՆԱԿԱՆ, ԵՒ Ի՛ՆՉՊԵՍ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐՔ ՄԵԾ ՋՕՐՔՈՎ ԵԿԱՒ ԵՒ ՄԻ ՁԻՈՎ ՀՈՂՈՊՐԵՑ ՓԱԽԱՒ ՊԱՐՍԻՑ ԱՇԽԱՐՀՔ

Այնուհետև ավելի մեծ միաբանությամբ ժողովվեցին Հայոց աշխարհի մարդիկ.—մեծամեծ նախարարները, ավագները, կուսակալները, աշխարհակալները, ազնվականները, զորագլուխները, դատավորները, պետերը, իշխանները,— բացի զորավարներից, նույնիսկ ռամիկ շինական մարդիկ: Սկսեցին իրար հետ խոսել և ասում էին. «Այս ի՞նչ է մեր արածը, նստել սուգ ենք անում. թշնամիները սրանից կօգտվին. շատ չանցած՝ էլի մեր երկիրը կարշավեն: Եկե՛ք, մենք մեզ մխիթարենք, մեր գլուխներն ու աշխարհը պահպանենք և մեր բնիկ տիրոջ համար վրեժխնդիր լինինք»: Այսպես աշխարհի բոլոր մարդիկ ժողովվելով խորհուրդ արին, միաբանեցան, որ իրենց համար օգնություն ու բիկունք գտնեն:

Այն ժամանակ Հայոց ավագանին մեծ նախարարներից (բաղկացած պատգամավորություն) ուղարկեց Հունաց թագավորի մոտ վերներով, (առաջարկելով) որ նրան ձեռք մեկնեն և հնազանդությամբ նրան հպատակեն. իսկ նա իրենց բիկունք լինի և օգնէ վրեժխնդիր լինելու թշնամիներից: (Պատգամավոր) ուղարկեցին Սյունյաց Անդովկ նահապետին և Արշարունյաց նահապետ Արշավիր Կամսարականին: Սրանք գնացին հասան Հունաց աշխարհը, կայսերական պալատը, ներկայացրին (Հայոց) աշխարհի խնդիրը: Կայսրը բոլոր հանգամանքները լսելով՝ մեծ փութով ու պատրաստությամբ հանձն առավ նրանց խնդիրը կատարել, բիկունք և օգնական եղավ Հայոց աշխարհին, մանավանդ որ հիշում էր այն ուխտի դաշինքը, որ երդումով հաստատած էին Կոստանդիանոս կայսրը Տրդատ թագավորի հետ[62]:

Եվ մինչ դեսպանները, որոնք Հայոց աշխարհից կայսերական պալատն էին գնացել, դեռ չէին դարձել իրենց աշխարհը՝ արևելքի կողմից ինքը Պարսից Ներսեհ թագավորը շարժվեց ու եկավ, որ Հայոց աշխարհը այրե, ավերե, ամբողջապես փշացնե և ամբողջ սահմաններով գրավե: Նա եկավ իր բոլոր զորքով, բոլոր աղխով, մեծ կարավանով, բազմաթիվ փղերի կույտով, անշափ մթերքներով, բուն մաշկապանյա-նով[63], բոլոր կանանցով և տիկնանց տիկիններով. եկավ մտավ Հայաս-

դեռ տիկճաց տիկճաւճ, եկն եճաս ի սահմանս Հայոց. խճողեաց ելից զերկիրճ առ ճասարակ: Յայնմ ժամանակի ազատազօրճն նախարարացն Հայոց առեալ զիւրամաճչիւր ընդանիս, լիեալճ փախստականճ, ի կողմանս Յունաց անգաճելին, գոյժ տային կայսերճն բազմագունդ բանակին նախարարացն: Ապա իբրև զայս ամենայն լսէր թագաւորն Յունաց, նոյնօրինակ և նա զիւր զօրսն գումարէր, և չու արարեալ գայր ճասաճէր յերկիրճ Հայոց ընդդէմ թագաւորին Պարսից: Եւ եթող զիւր զբաճակճ զՍատաղ բաղաքաճճ. և իճն ընտրեաց իւր արս երկուս գլխաւորս, արս իմաստունս Հայաստան բանակելճ, այս իճն զԱրշաւիրճ և զԱնդովկըճ. զի այս արճ էին, որ չոգան առ նա դեսպանութեամբ յառաչեալ եուագին: Եւ այսպէս ճանդերձ եոfof իճն իսկ կայսրն ի շինականութեան կերպարանս, ի կաղամբավաճառի օրինի, մտաճէր ի բանակն Պարսից:

Իբրև էր նա բանակեալ ի գաւառին Բասենոյ, ի գիւղն՝ որ աճուանեալ կոչի Ոսխայ, եկին մտին ի բանակն արքային Պարսից, դիտեցին ճճեցին զչափ առին զնոցա զօրութիւն զօրացն: Եւ անտի դարձան յիւրեանց բանակն, կազմեցան պատրաստեցան. գային ճասանէին գտանէին զբանակն արքային Պարսից ի ճմին տեղւոջ բանակեալ ի պղերգութեան յանճոգութեան յանկասկած խաղաղութեան: Ապա ճասեալ ի տուրնչէն ժամուն, անկանէին ի վերայ թագաւորին Պարսից, ընդ սուր զամենայն բանակն ճանէին, և ոչ զմի ոչ ապրեցուցանէին: Եւ առին զկապուտ զաւար բանակին, և զկանայս թագաւորին և զբամբիշն, և զբանական ընդ նոսին, և զիճչս և զսաացուածս նոցին ընդ ճմին ի գերութիւն վարէին, զկանայս նոցա և զգանձս և զկեանս և զկազմած նոցա: Բայց միայն թագաւորն պրծեալ մազապուր, պէշասպիկ[14] մի սուրճանդակ առաջի, պրծեալ ելանէր փախստական. ճագիւ ուրեմն կարէր անկանել ճասանել յաշխարճ իւր: Իսկ կայսրն մեծաւ շքեղութեամբ անճանէ ճասանէ պերճացեալ ի մէջ բանակին երեալ. զայր ի չափ ճասեալ առ ճասարակ կոտորէին, և զայլ ամենայն ի գերութիւն վարէին յերկիրճ Յունաց: Եւ ի վերայ երկրին բողոյր գիշխանսն վերակացուս զԱնդովկ և զԱրշաւիր, մեծապարգև մեծապատիւ մեծարէր. և յանձն արարեալ զնոսա ամենայն իշխանացն և զաշխարճն նոցա, և իճն կայսրն չու արարեալ գնաց յերկիր իւր յերկիրճ Յունաց:

Եւ արքայն Պարսից գնացեալ փախստական յերկիր իւր. և իբրև եճաս անդր՝ ժողովէր առ իճն զամենայն մնացեալս իշխանութեան իւրոյ, և ի խոյզ և ի խնդիր անկանէր: Խորհուրդ ի մէջ առնոյր, ճարցանճին առնել ճրամայէր վերսաին, զի տեսցեն և յայտ արասցեն՝ թէ ուսաի՛ եղև սկիզբն պատերազմացն և մարտին: Ապա ի վեր եկին և

տանի սահմանները, ամբողջ աշխարճն բռնեց: Այս ժամանակ Հայոց նախարարների ազնվական զորճերն իրանց բնտանիքներն առնելով փախչում էին Հունաց կողմերը, գուժում էին (այս լուրը) կայսերական բազմագունդ բանակի նախարարներին: Հունաց թագավորը երբ այս բոլորը լսում էր՝ ասյա ինճն էլ իր զորճն էր գումարում և չվում գալիս էր Հայոց աշխարճը՝ Պարսից թագավորի դեմ:

Նա բանակը բողեց Սատաղ[64] բաղաքի մոտերը. ինճն ընտրեց հայկական բանակից երկու գլխավոր իմաստուն մարդ, այսինքն Արշավիրին և Անդովկին, որոնք դեսպանությամբ նրա մոտ էին գնացել առաջ: Նրանց հետ միասին իճը կայսր շինականների կերպարանքով, իբրև կաղամբ վաճառող, մտնում էր Պարսից բանակը, որ այդ ժամանակ գտնվում էր Բասյան գավառում, Ոսխա կոչված գյուղում: Նրանք մտան Պարսից թագավորի բանակը, դիտեցին, ճճեցին, նրանց զորճերի զորության չափն առան և այստեղից դարձան իրենց բանակը: Կազմակերպվեցին, պատրաստվեցին, վրա ճարձակվեցին և գտան Պարսից բանակը նույն տեղում, որ անհոգաբար միամիտ, անկասկած և անգործ բանակել էին: Լուսաբացին նրանք ճարձակվեցին Պարսից թագավորի վրա, ամբողջ բանակը սրի բերան տվին, ոչ մեկին կենդանի չթողին: Բանակը կողոպտեցին, ավար առան, բռնեցին թագավորի կանանց ու Բամբիշին (տիկնանց տիկին) և նրանց հետ տիկիններին[65], նրանց բոլոր գույճ ու ստացվածճներ, գանձեր, պաշարեղենը, սարճ կանանց հետ միասին գերի վերցրին: Միայն թագավորը ճազիվ ճազ պրծնելով մի առաչընթաց սուրճանդակով փախչում էր, ճազիվ կարողանում էր իր աշխարճն ընկնել: Իսկ կայսրը մեծ շքեղությամբ պերճացած երեց բանակում. բոլոր չափահասներին կոտորեցին, իսկ մնացածներին գերի տարան Հունաց աշխարճը: Իսկ (Հայոց) աշխարճի վրա վերակացու թողեց երկու իշխաններին, Անդովկին և Արշավիրին, որոնց մեծ պարգևներով մեծարեց. և նրանց ճանձնելով բոլոր իշխաններին ու աշխարճը՝ ինճը վերադարձավ Հունաստան, իր երկիրը:

Իսկ Պարսից թագավորը փախավ գնաց իր երկիրը: Երբ այնտեղ ճասավ՝ իր մոտ ժողովեց իր իշխանության մեջ մնացածներին, և ճճեություն ու ճարց ու փորձ էր անում: Խորճուրդ էր անում, ճրամայում էր նորից ճճել և իմանալ, թե ո՞րտեղից առաջ եկավ այս պատերազմը: Այն ժամանակ ճանգամանճները բացվեցին և ճայտնի դարձավ, որ մի

յայտնեցան իրճ առաջի նորա. զի յոչինչ իրաց և վատբար բանից համարեցան զիրսն եղեալս, վասն ձիոյ միոյ կարծիս առնել զայն ամբոխ խռովութեան ՚ի մոլեկան առնէն Շապուհ Վարազայն: Ապա նրամանն ետ հանել զպատիւն ՚ի բաց, և մերկանալ ՚ի նմանէ զպատուական պատմուճանն, և մեծաց հարուածոց արժանի առնէր զՎարազն: Ըստ պարսկի օրինակին հրամայէր զմորթն ՚ի բաց հանել և խոտով լնուլ, և ՚ի հրապարակի իւրում ՚ի տեսիլ ծանականաց կանկնել հրամայէր: Եւ իճն ՚ի զղջումն եկեալ վասն իրացն եղելոց, ապա արձակէր զիշխանսն պատուականս ՚ի ննջազանդութիւն խաղաղութեան վասն գերեդարձ առնել ՚ի կայսերէն միւսանգամ, և այնուհետև աղօթակերս արձակել ՚ի հաշտութիւն խաղաղութեան. խօսել ընդ կայսերն, զի գոնեա զկանայս իւր արձակեսցէ ՚ի գերութենէն, և բարձցէ ՚ի նմանէ զծանակութեանցն զգաստովութեանցն նախատինս:

Ապա գտանէր հռովարտակ թագաւորն Յունաց Վաղէս առ արքայն Պարսից. Նախ դու, ասէ, դարձուսցես զգերութիւն առեալ յերկրէն Հայոց, և զթագաւորն Տիրան իւրմէն գլխովին, և զամենայն ինչ զոր առեալ էցէ անտի. ապա յորժամ զայդ արասցես, և ես զիմս դարձուցից զոր առեալ եմ. զի եթէ ոչ՝ նախ դու զնոցա զաւարն դարձուսցես, և ես ապա զէայդ դարձուցից: Եւ իբրև լուաւ զայն հրաման արքայն Պարսից, վաղվաղակի զիրսն կատարէր. հանէր զկապեալն Տիրան ՚ի տանէն բանդի կապանաց, խօսէր ընդ նմա ողոմով, զի թագաւորեցուսցէ զնա անդրէն յիւր աշխարհն արձակելով, զի երթիցէ նա պատուով: Ապա տուեալ պատասխանի Տիրանայ, եթէ անօգուտ է ինձ և անպատշաճ է, կուրութեամբ, անմարթ իսկ է կարի, ունել զթագաւորութիւն. բայց փոխանակ իմ թագաւորեցո՛ զԱրշակ զորդի իմ:

Յայնմ ժամանակի թագաւորեցուցանէր զԱրշակ որդի նորա ՚ի վերայ աշխարհին Հայոց. և զկանայս թագաւորին և զայլ գերին ամենայն, գանձիւ ընծայիւ և ստացուածովք հանդերձ, և միաճգամայն դարձ առնէր ամենայն գերութեան: Եւ զինքին Տիրան թագաւոր Պարսից հանդերձեալց կազմեաց մեծաւ կազմութեամբ, և արձակեաց յիւր աշխարհէն յերկիրն Հայոց. և կատարեալ հաւատարմացոյց զասացեալսն հրամանաց թագաւորին Յունաց: Եւ իբրև զնաւա ՚ի Հայս յուղարկէր, ապա և զ՚ի թագաւորէն Յունաց զառ իճն եկեալսն դեսպանսն արձակէր յիւրմէ. զի երթիցեն պատմեսցեն թագաւորին Յունաց՝ եթէ ո՛րպէս և ՚ամ զի՛ր նա զհրամանսն կատարեաց զթագաւորին Յունաց, զի և թագաւոր Յունաց դարձուսցէ զգերութիւնն՝ զոր առեալ զթագաւորին Պարսից: Եւ եղև իբրև լուաւ զայս ամենայն թագաւոր Յունաց՝ եթէ կատարեաց ՚ի գրոփս ճնճղ զայս ամենայն ՚ի նմանէ զառեալ հրամանն

չնչին բանից, մի վատբար չարախոսութենէ է ծագել, այն մոլի Շապուհ Վարազր այդ խռովութիւնը հարուցել է մի ձիու պատճառով: Ուստի հրաման տվեց՝ պատիվր նրանից առնել, պատվական պատմուճանը վրայից հանել և մեծամեծ չարչարանքների ենթարկել Վարազին: Եվ ըստ պարսկական սովորության հրամայում էր նրա մորթը հանել, խոտով լցնել և հրապարակում կանգնեցնել նախատինքի համար: Ինքն էլ եղածի վրա զղջալով՝ պատվական իշխաններ էր ուղարկում (կայսեր մոտ) հաշտության մասին (բանակցելու), գերիները ետ դարձնելու համար. աղաչավորներ էր ուղարկում կայսեր ետ խաղաղության ու հաշտության մասին բանակցելու, որ գոնե իր կանանց գերությունից արձակի և խայտառակությունն ու նախատինքը վերացնե:

Այն ժամանակ Հունաց Վաղես թագավորը հռովարտակ էր գրում[66] Պարսից թագավորին. «Նախ դու, ասում է, ետ դարձրու Հայոց աշխարհից տարածդ գերիները, Տիրան թագավորով հանդերձ, և առհասարակ ինչ որ այնտեղից առել ես. երբ դու այս անես՝ ապա ես էլ ետ կդարձնեմ ինչ որ առել եմ. ուրեմն առաջ դու նրանցից առածդ ավարը վերադարձրու, ապա ես ոնր կվերադարձնեմ»:

Պարսից թագավորը երբ այս հրամանը լսեց՝ իսկույն նրա ասածները կատարեց. կապված Տիրանին բանտից ու կապանքներից արձակեց, խղճմտությամբ խոսում էր նետը, թե նրան կրկին կթագավորեցնե և պատվով իր աշխարհը կուղարկե: Իսկ Տիրանը պատասխանեց, թե «Ինձ կույր տեղովս, անօգուտ, անպատշաճ, նույնիսկ անկարելի է թագավորություն անել. իմ փոխարեն թագավորեցրու իմ որդուն, Արշակին»:

Այն ժամանակ (Պարսից թագավորը) նրա Արշակ որդուն թագավորեցնում է Հայոց աշխարհի վրա, և թագավորի կանանց և մյուս բոլոր գերիներին, գանձերով, ընծաներով, ստացվածքներով հանդերձ առհասարակ գերությունից ետ էր դարձնում. իրան՝ Տիրան թագավորին էլ Պարսից թագավորը մեծ պատրաստությամբ ու պատվով արձակեց, որ գնա իր երկիրը, Հայոց աշխարհը: Այսպես նա հավատարմությամբ կատարեց Հունաց թագավորի հրամայածները: Երբ նրանց բոլորին Հայաստան ուղարկեց՝ ապա Հունաց թագավորի կողմից իր մոտ եկած դեսպաններին էլ արձակում էր, որպեսզի գնան, Հունաց թագավորին պատմեն, թե ի՛նչպես ինքը կատարեց Հունաց թագավորի հրամաները, որպեսզի Հունաց թագավորն էլ վերադարձնե Պարսից թագավորի գերիներին, որ տարել էր:

Երբ Հունաց թագավորը լսեց, թե Պարսից թագավորը լիով կատա-

թագաւորն Պարսից, և դարձ արար գերութեանն Հայոց և Տիրանայ արքային, եհեծաւ: Յայնմ ժամանակի և թագաւորն Յունաց առնէր գերէդարձ գերութեան արքային Պարսից: Եւ եհանդերձեաց կազմեաց թագաւորն Յունաց զինանայս թագաւորին Պարսից մեծաւ պատուով, և զամենայն գերութիւնս նոցա ընդ նոսին յերկրէն Յունաց յերկիրն Պարսից դարձուցանէր, և բարեաւ առ թագաւորն յուղարկէր:

ԿԱՏԱՐԵՑԱՒ ԵՐՐՈՐԴ ԴԱՐՁ, ՔՍԱՆ ԵՒ ՄԻ ԳԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԴԳՐՈՒԹԻՒՆՔ, ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ԿԱՆՈՆՔ ՓԱՒՍՏԵԱՑ ԲՒԶԱՆԴԵԱՑ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ՄԵՍԻ ԳԱՏՄԱԳՐԻ, ՈՐ ԷՐ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ՅՈՒՆԱՑ

րեց իր տված հրամանները և Հայաստանի գերիներին և Տիրան թագաւորին ազատ արձակեց՝ գոհացավ. ապա ինքն էլ, Հունաց թագաւորը, Պարսից թագաւորի գերիներին ազատ արձակեց, և Պարսից թագաւորի կանանց կարգով սարմով ու մեծ պատվով, բոլոր գերիներին էլ նրանց հետ Հունաց աշխարհից վերադարձրեց Պարսից աշխարհը և բարով հասցրեց իրենց թագաւորի մոտ:

ԱՎԱՐՏՎԵՑ ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆ ՔՍԱՆ ԵՎ ՄԻ ԳԼՈՒԽ ԳԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ ՄԵԾ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ԳԱՏՄԱԳՐԻ, ՈՐ ՀՈՒՆԱՑ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ԷՐ

ԶՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Բ Ի Ւ Զ Ա Ն Դ Ե Ա Յ

ԶՈՐՐՈՐԴ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ
ԶՈՐ ԱՍԵԼՈՑ ԵՄ ԿԱՐԴԱԼ ԶԴԳՊՈՒԹԻՒՆ ԿԱՆՈՆՔ ԴԱՐՔ ԵՒ ԴԱՐՔ
ԳԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԶՐՈՒՅԱՑ

ԽՈՍՏՈՒՄՆ ԽՈՍՏԱՅԵԼՈՑՍ

Ա. Յաղագս թէ ո՛րպէս յետ բազում շփոթի պատերազմաց ընդ Ներսէհի արքային Պարսից, թէ ո՛րպէս թագաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ, և արձակեաց յաշխարհն Հայոց ճանդեր Տիրանաւ եարբե իւրով, և ամենայն գերութեամբն ճանդեր:

Բ. Յաղագս շինութեան կարգաց և յօրինուածոց աշխարհին Հայոց, վարուց և կարգաց եաւանութեան, և յօթինելոյ և եարոգելոյ թագաւորութեանն:

Գ. Յաղագս արթյն Ներսեհի, թէ ո՛ւսոի կամ ո՛րպէս ընտրեցաւ լինել կաթուղիկոս Հայոց մեծաց:

Դ. Յաղագս թէ ո՛րպէս առին զնացին տարան զՆերսէս ի Կեսարիա. և կամ ո՛րպէս սմանչելիքն ասասուծոյ եղեն:

Ե. Յաղագս Ներսեհի կաթուղիկոսի Հայոց, թէ զիա՛րդ յԱրշակայ արքայէ Հայոց առաքեցաւ առ Վաղէս թագաւոր Յունաց ճանդեր ճախարարօրն, և թէ զիա՛րդ ախտորեցաւն, և կամ զիա՛րդ զայլ ճախարարսն ճանդեր այլովքն պատարագովք արձակէր յերկիրն Հայոց:

Զ. Յաղագս և թէ զիա՛րդ իբրև ախտորեցաւ սուրբն Ներսէս, և ընկեցաւ ի կղզին յաճապատ, և թէ ո՛րպէս և կամ զիա՛րդ կերակրեցաւ, և յասուածոյ եղեն սմանչելիքն զոմս իննն:

Է. Յաղագս ասուածոյ սմանչելիքն, որ երևեցաւն ի Ներսէսի կամ ի Բասիլիոս. և վասն ճախաճանդ Ներսեհի եպիսկոպոսի Բասիլիոսի:

Ը. Յաղագս և թէ ո՛րպէս թագաւորն Յունաց ճալածեաց զամենայն ուղղափառս զճատագնեալսն, և կամ ո՛րպէս կամեցաւ փայփայ առնել՝ ի մէջ ճշմարիտ ճատագնելոցն և ի մէջ ձախող աղանդին արիանոսաց: Եւ կամ ո՛րպէս այս սմանչելեացն տեսլեամբն Բասիլիոս կոչեալ լինէր ի կայսերէն ի փայփարէ, և ամենայն զօրութեամբն յաղթէր ախոյանին առ եպիսկոպոսին Ներսեհի: Եւ կամ ո՛րպէս եպիսկոպոսապետն կեսարու Ներսեհիոս վճարեալ լինէր ի բանդին և կամ ո՛րպէս Բասիլիոս արձակեալ:

Թ. Յաղագս թէ ո՛րպէս տարին զԲասիլիոս եպիսկոպոսապետ կեսարու, և կամ

ԲՈՒԶԱՆԴԻ

ԶՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ

ՅԱՆԿ ԶՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅԱՆ

ԻՆՉ ՈՐ ԱՍԵԼՈՒ ԵՄ, ԳԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՐՔԵՐ[67]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Թե ի՛նչպես պատերազմներից և մեծ շփոթություններու հետո Պարսից Ներսեհ թագավորը թագավորեցրեց Տիրանի Արշակ որդուն և ի՛նչպես նրան արձակեց և ուղարկեց Հայոց աշխարհը Տիրան հոր և բոլոր գերիների հետ:

Բ. Հայոց աշխարհի շենանալն ու բարեկարգվելը, վարքերի ուղղումը, թագավորության նորոգվելն ու բարեկարգվելը:

Գ. Սուրբ Ներսեսի մասին, թե ո՛րտեղից և ի՛նչպես ընտրվեց Մեծ Հայքի կաթողիկոս:

Դ. Թե ի՛նչպես Ներսեսին առան տարան Կեսարիա և ի՛նչպիսի սմանչելիք եղավ աստծուց:

Ե. Հայոց Ներսես կաթողիկոսի մասին, թե ի՛նչպես նա նախարարների հետ Հայոց Արշակ թագավորից ուղարկվեց Հունաց Վաղես թագավորի մոտ, ի՛նչպես նա ախտորվեց, և թե ի՛նչպես (Վաղեսը) մյուս նախարարներին, (այլ պատանդների հետ)[68] նվերներով արձակում էր Հայոց աշխարհը:

Զ. Թե ի՛նչպես սուրբ Ներսեսը ախտորվեց ու աճապարանքով կղզին ձգվեց և թե ինչպես ինքը տարի կերակրվեց աստծու սմանչելիքով:

Է Աստծու սմանչելիքի մասին, որ երևաց Ներսեսի և Բասիլիոսի վրա և թե ի՛նչպես եվսեբիոս եպիսկոպոսը նախանձում էր Բասիլիոսին:

Ը. Թե ի՛նչպես Հունաց թագավորը հալածեց բոլոր ուղղափառ հավատացյալներին, ի՛նչպես կամեցավ վհճարանություն սարքել ճշմարիտ հավատացյալների և արիանոսյան ձախ աղանդավորների միջև, կամ ի՛նչպես սմանչելի տեսիլով Բասիլիոսը կայսեր կողմից հրավիրվում էր այս վհճարանությամբ և եվսեբիոս եպիսկոպոսի ներկայությամբ ախոյանին հաղթում էր մեծ զորությամբ. կամ ի՛նչպես Կեսարիայի եվսեբիոս արհեպիսկոպոսը վախճանում էր բանտում, իսկ Բասիլիոսը ազատ արձակվում:

Թ. Թե ի՛նչպես Բասիլիոսին Կեսարիայի եպիսկոպոսապետ ընտրեցին, և ի՛նչ

զի՛նչ նշաճի Նդնե յատուածոյ սմանչելիքն. և կամ ո՛րպէս բազաւոր նրամայեաց յափշտակել զամենայն ինչսն որ ՚ի Քրիստոս հաւատացելոցն. և կամ թէ ո՛րպէս խնդութեամբ որ բերէին տային ՚ի գուռս վասն իւրեանց հաւատոցն, և կամ ո՛րպէս և որպիսի՛ խնդրուածովք խնդրէին յատուածոյ ՚ի վերայ իւրամանչիւր եպիսկոպոսացն:

Ժ. Յաղագս թէ գիա՛րդ կոչէր կայսրն Վաղէս զսոփեստսն յանդիմանութի՛ւնն ընդդէմ ճշմարտութեանն հաւատոցն. և կամ գիա՛րդ նոսս սոփեստսն զսմանչելացն տեսիլն, և բազաւորն Վաղէս սատակեցաւ ճշաճօճն եղելովք, և բազում խաղաղութիւն եկեղեցեացն լինէր:

ԺԱ. Յաղագս գործի իշխանացն յերկրէն Յունաց յերկիրն Հայոց անգրէն, որ ես երթեալ ընդ հայրապետին Հայոց Ներսէսի առ բազաւորն Վաղէս, և եկին գործառ անգրէն առ արեալն Արշակ բազաւոր: Եւ թէ ո՛րպէս ըմբոստացեալ Արշակ արեալն Հայոց, ապատակաւ մնդանչել տան բազաւորին Յունաց:

ԺՌ. Յաղագս խոգոյ եպիսկոպոսի բազրաւանդացոյ, զոր էր բողեալ յիւր տեղւոջն հայրապետին Հայոց Ներսէսի. թէ սա որպիսի՛ այր էր կամ որպիսի՛ նշան և սմանչելիս առեր, և կամ ո՛րպէս կայր ՚ի ճշմարտութեանն, և ոչ առնոյր ակն բազաւորին մեծի Արշակայ արեալին Հայոց, և կամ ո՛րպէս դիմանայր ընդդէմ ճորս վասն անօրէնութեանն ինչ գործոց. և ո՛րչափ սիրէր զաղխաս իրեւ զնայրապետն Հայոց զՆերսէս:

ԺԳ. Յաղագս թէ ո՛րպէս գործաւ սուրբ կաթուղիկոսն Հայոց Ներսէս յերկրէն Յունաց և կամ ո՛րպէս յանդիմանէր զմեծ բազաւորն Հայոց զԱրշակ. և թէ ո՛րպէս յատուածոյ հասանէին ճարուածք ՚ի վերայ աւանին Արշակաւանին, և սատակէր առ հասարակ յանկարծօրէն ամենայն բազմութիւն մարդկան՝ որ միանգամ ժողովեալ էին յայնմ տեղւոջ:

ԺԴ. Յաղագս Հայր մարդպետի, որ եկն էջ ՚ի գաւառն Տարօնոյ. և թէ գիա՛րդ նկեալ էր ՚ի տեղին աղօթից յԱշխչատ, և կամ գիա՛րդ գատապարտեալ զնաց անտի յիւր բերանոյն խօսից. և կամ գիա՛րդ մանու պարտ եղեալ սատակեցաւ ՚ի Շաւասպայ արձրանոյ:

ԺԵ. Յաղագս բազաւորին Արշակայ, թէ գիա՛րդ կամ ո՛րպէս սպան զնդրօտոդին զԴենէլ ՚ի չարախօսութենէն Տիրիթայ, կամ ո՛րպէս կշտամբեալ և յանդիմանեալ եղե ՚ի յառնէն սատանոյ ՚ի Ներսէսէ. և կամ ո՛րպէս սպան զնոյն Տիրիթն և կամ ո՛րպէս զկին սպանելոյն Դենելոյ առնոյր իւր կին Արշակ բազաւորն. և կամ ո՛րպէս ՚ի վերայ այնր կացաւց միւս ևս այլ կին առնոյր Արշակ բազաւորն, զոր ած ՚ի Յունաց աշխարհէն, որում անուն Ոզեմբին կոչէր: Եւ կամ որպէս էրեցն գրաւ արեալին, Մուշուհին, զմանուն դեղ տալով ընդ օրէնսն՝ սպանանէր զՈզեմբին խարեբայով ննեզուքեամբն Փառանձեմայ:

ԺԶ. Յաղագս թէ որպէս կամ գիա՛րդ կոչեաց Շապուհ բազաւորն Պարսից զԱրշակ բազաւորն Հայոց. և կամ գիա՛րդ մնծարեցաւ ՚ի նմանէ: Եւ կամ թէ գիա՛րդ վասակ Մամիկոնենան սպարապետն Հայոց սպանանէր զօրականն ասպատակին բազաւորին Պարսից: Եւ կամ գիա՛րդ Արշակ բազաւորն Հայոց աւեարանաւն երգնու բազաւորին Պարսից, ոխակեր նմա. և կամ թէ գիա՛րդ յետոյ սանաց, և փախեաւ ՚ի նմանէ. և կամ թէ գիա՛րդ յաղագս այնորիկ արս ելբանանաւն զատաւոյ պաշտօնեայսն կոտարէր Շապուհ:

ԺԷ. Յաղագս թէ գիա՛րդ յուզարինաց զեղծածեալսն Շապուհ բազաւորն Պարսից ՚ի վերայ հրեստանեաց հաւատոյ:

սմանչելիքեաւ եղան ատածուց, կամ ի՛նչպես բազաւորը նրամայեց Քրիստոսի հավատացյալների բոլոր ստացվածքները հափշտակել և ի՛նչպես իրենց հավատի համար ուրախությամբ չերում էին (եկեղեցու) գործը, կամ ի՛նչպես խնդրվածքներով դիմում էին ատածուն իրենց եպիսկոպոսների համար:

Ժ. Թե ի՛նչպես Վաղես կայսրը կանչում էր սոփեստներին հակառակելու ճշմարիտ հավատի դեմ, կամ ի՛նչպես սոփեստը տեսավ սմանչելի տեսիլը, և Վաղես բազաւորը սատկեցավ երեցած նշաններին համաձայն, և եկեղեցիները խաղաղություն գտան:

ԺԱ. Իշխանների Հունաստանից Հայոց աշխարհը վերադառնալը, որոնք Հայոց Ներսես հայրապետի հետ գնացել էին Վաղես բազավորի մոտ և էլի դարձան նկան Արշակ բազավորի մոտ. և թե ի՛նչպես Հայոց Արշակ բազավորն ըմբոստանալով ապստակնց ու վճասեց Հունաց բազավորի երկրները:

ԺՌ. Բազրևանդացի Խոդ եպիսկոպոսի մասին, որին Հայոց Ներսես հայրապետը իրեն տեղակալ էր թողել, ի՛նչպիսի մարդ էր նա, ի՛նչպիսի սմանչելիքներ էր գործում, հատատ մեում էր ճշմարտության մեջ, չէր ակնածում Հայոց Արշակ մեծ բազավորից, ի՛նչպես բեդդիմանում էր նրան՝ նրա անօրեն գործերի պատճառով և որտեղ սիրում էր աղոտաներին Հայոց Ներսես հայրապետի նման:

ԺԳ. Թե ի՛նչպես Հայոց Ներսես սուրբ կաթողիկոսը նա դարձավ Հունաց աշխարհից, ի՛նչպես հանդիմանում էր Հայոց Արշակ մեծ բազավորին, և ի՛նչպես ատածուց հարվածներ էին հասնում Արշակավան ավանի վրա և մի անգամից կոտորվում էր այնտեղ ժողովված մարդկանց բոլոր բազմություններ:

ԺԴ. Հայր մարդպետի մասին, որ եկել էր Տարոն գավառը Աշխիշատի աղոթարանը և ի՛նչպես այնտեղից գնաց իր բերանի խոսքերով դատապարտված և ի՛նչպես մանապարտ դառնալով Շավասպ Արձռունուց սպանվեց:

ԺԵ. Արշակ բազավորի մասին, թե ի՛նչպես Տիրիթի չարախոսությամբ սպանեց իր Դենել եղբորորդուն, ի՛նչպես մեղադրվեց ու հանդիմանվեց Ներսեսից՝ ատածու մարդուց, կամ ի՛նչպես նույն Տիրիթին էլ սպանեց, կամ ի՛նչպես իրեն կին առավ սպանված Դենելի կնոջը. կամ ի՛նչպես Արշակ բազավորը բացի այն կնոջից ուրիշ կին առավ Ոլոմբին անունով, որին բերել ավել Հունաց աշխարհից: Եվ ի՛նչպես բազավորի դեմ երեց Մուշուհիկը, Փառանձեմի նենգավոր խորհրդով սպանում էր Ոլոմբին հազորդության մեջ մանգլեղ խոսենով:

ԺԶ. Թե ի՛նչպես Պարսից բազավորը նրավիրեց Հայոց Արշակ բազավորին և ի՛նչպես նրան մեծարեց: Կամ ի՛նչպես Հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանն սպանեց Պարսից բազավորի սխոռի սխոռապետին: Կամ ի՛նչպես Հայոց Արշակ բազավորը ավետարանի վրա երդվելով ոխակեց Պարսից բազավորին և սպանելու նպատակով նրանից փախավ, և թե ի՛նչպես այս պատճառով Շապուհը կոտորեց ատածու պաշտոնյաների յոթանասուն հոգի:

ԺԷ. Թե ի՛նչպես Պարսից Շապուհ բազավորը հալածանքներ բարձրացրեց հրեաստանեան հավատի դեմ:

ԺԸ. Յաղագս մանուածե Վարդանայ ՚ի թագաւորէն Արշակայ ենեգութեամբ իւրոյ եղբօրե Վասակայ:

ԺԹ. Յաղագս թէ գիա՛րդ անմտութեամբ յանդգնութեամբ գնայր ՚ի սպանութիւնն նախարարացն ազխաւր Արշակ Հայոց արքայ:

Ի. Յաղագս թէ գիա՛րդ պատերազմ սաստկացեալ էր ՚ի մէջ Յունաց և Պարսից. և թէ գիա՛րդ արքայն Հայոց Արշակն զօրափղն լինէր թագաւորին Պարսից, և նաձէր ընդ առ զզօրսն Յունաց, և կամ գիա՛րդ դաւաճանութեամբ սիւնոյն Անդովկայ լինէր փախստական Արշակ ՚ի Շապհոյ թագաւորէն Պարսից:

ԻԱ. Յաղագս թէ գիա՛րդ եղև պատերազմ ընդ Շապուհ թագաւորն Պարսից և ընդ Արշակ թագաւոր Հայոց. և կամ թէ գիա՛րդ յաղթեաց Արշակ արքայն Հայոց:

ԻԲ. Յաղագս որ յետ այսորիկ ար ընդ երիս տեղիս եդեալ ճակատ յերկրին Հայոց ՚ի միում ամսեանց. ՚ի միում ՚ատուր, ՚ի միում ժամանակի ընդ զօրավարսն Պարսից, երեցուցեալ ճշմեն յաղթութեան Հայոց կանգնէր:

ԻԳ. Յաղագս Մեհրուժանայ Արծրունւոյ, որ ապստամբեաց յարքայէն Հայոց Արշակայ, և անկաւ առ թագաւորն Պարսից, և ևս առաւել գրգռէր զպատերազմսն ընդ. և թէ գիա՛րդ ուրացաւ յաստուծոյ, և թէ գիա՛րդ եղև խոչընդոտն և խոչընդոտն երկրին Հայոց միշտ յապայ:

ԻԴ. Յաղագս Մեհրուժանայ, թէ գիա՛րդ ապստամբեաց. գրգռէր զթագաւորն Պարսից զՇապուհ, և առնէր ստէպ ստէպ պատերազմսն: եւ կամ գիա՛րդ լեալ էր առաջնորդ թագաւորին Պարսից Շապհոյ. ածէր զնոսա՝ ՚ի Հայաստան աշխարհն, և գերէր զսակերս թագաւորացն Արշակունեաց. և կամ թէ գիա՛րդ զօրավարն Վասակ Հայոց խափեաց զկերուրիւնն, և յաղթեաց թշնամիացն:

ԻԵ. Յաղագս թէ գիա՛րդ արշաւեաց Արշակ Հայոց արքայն յերկիրն Պարսից, և աւերէր զԱտրպատական երկիրն. և հանդէր ճարկաւէր աւերէր, առնոյր զքանակն Շապհոյ արքային ՚ի Թաւրէզն:

ԻԶ. Յաղագս Վնայ պարսկի, և չորեքհարիւր նազարիկ՝ որ եկեալն էին ՚ի պատերազմի, և նկուն լինէր ՚ի զօրացն Հայոց:

ԻԷ. Յաղագս մնդավարին Պարսից Անդիկանայ, որ տառասուն բիւրու հասանէր աւար առնուլ զերկիրն Հայաստանեայց. և թէ գիա՛րդ Վասակ սպարապետն ելանէր ընդ առաջ նոցա երկոտասան բիւրու հանդերձ Հայոց զօրօքն, և կոտորէր զզօրս Պարսից հանդերձ զօրագլխաւն իւրեանց:

ԻԸ. Յաղագս Հազարուխտոյ, որ էր մի ՚ի նախարարացն Պարսից. զոր առաքեաց Շապուհ արքայ ուխտուն բիւրովն ճարկանել զերկիրն Հայոց. եթէ գիա՛րդ ել ընդ առաջ նոցա Վասակ մեռասան հազարաւ, և ճարկանէր սատակէր զնա և զզօրս նորա ՚ի սահմանս Աղձնեաց:

ԻԹ. Յաղագս Դմայունդ Վսեմականայ, որ իննսուն բիւրուն տապրիկ զօրօքն՝ զոր առաքեաց ՚ի վերայ Արշակայ արքային Հայոց արքայն Պարսից, ապա ելանէր Վասակ սպարապետն Հայոց, հասանէր սատակէր զնա և զզօրս նորա:

Լ. Յաղագս Վաճրիճի Կաճրիճայ, որ յարքայէն Պարսից չորեք հարիւր բիւրու զայր հասանէր, տայր պատերազմ ընդ թագաւորին Հայոց և կամ գիա՛րդ մատնեցաւ ՚ի ձեռս Վասակայ սպարապետին, և նա և զօրն իւր անկանէին ՚ի ձեռս զօրացն Հայոց:

ԼԱ. Յաղագս Գումանդ Շապհոյ, որ մեծաւ պարծանօք պարծեցաւ առաջի թագաւորին Պարսից Շապհոյ, և հարեւր հազար զօրօքն գայր հասանէր միշտ ՚ի Հայս, և նկուն եղեալ մեռչէին յերկրէն Հայոց:

ԺԸ. Վարդանի մանր Արշակ թագավորից նրա Վասակ եղբար ենեգությամբ:

ԺԹ. Թե ի՛նչպես Հայոց Արշակ թագավորը անմտաբար հանդգնությամբ անխոհր կոտորում էր նախարարներին:

Ի. Թե ի՛նչպես պատերազմը սաստկացել էր Հունաց և Պարսից մէջ և ի՛նչպես Հայոց Արշակ թագավորը օգնում էր Պարսից թագավորին և արի էր անց կացնում Հունաց զորերը և թե ի՛նչպես Անդոկ Սյունիի դավաճանությամբ Արշակը փախուստ էր տալիս Պարսից Շապուհ թագավորից:

ԻԱ. Թե ի՛նչպես պատերազմ ծագեց Պարսից Շապուհ թագավորի և Հայոց Արշակ թագավորի մէջ և թե ի՛նչպես հաղթեց Հայոց Արշակ թագավորը:

ԻԲ. Թե ի՛նչպես սրանից հետո Հայոց աշխարհում երեք տեղ հակառամարտ տեղի ունեցավ նույն ամսում, նույն օրը և նույն ժամին Պարսից զորավարների հետ, և երեքումն էլ հաղթություն տանում էին հայերը:

ԻԳ. Մերուժան Արծրունու մասին, որ Հայոց Արշակ թագավորից ապստամբելով Պարսից թագավորի մոտ գնաց և ավելի ևս գրգռում էր պատերազմները. ի՛նչպես նա աստծուն ուրացավ և այնուհետև Հայոց աշխարհի խանգարիչն եղավ:

ԻԴ. Մերուժանի մասին, թե ի՛նչպես ապստամբելով Շապուհ թագավորին գրգռում էր և հաճախակի պատերազմներ էր անում. թե ի՛նչպես նա Պարսից Շապուհ թագավորին առաջնորդ դառնալով՝ ասպատակ զորք էր բերում Հայոց աշխարհը, գերի էր տանում Արշակունի թագավորների ոսկորները, և ի՛նչպես Հայոց Վասակ զորավարը թշնամիներին հաղթեց և գերիներին նրանցից ետ խլեց:

ԻԵ. Թե ի՛նչպես Հայոց Արշակ թագավորը արշավեց Պարսից աշխարհը, Ատրպատականն ավերեց, բառնալով արավ և գրավեց Շապուհ թագավորի բանակը Թավրիզում:

ԻԶ. Վիհ պարսկի և չորս հարյուր հազար (զորի) մասին, որ եկել էին պատերազմի և Հայոց զորքերից պարտություն կրեցին:

ԻԷ. Պարսից Անդիկան զորավարի մասին, որ բառասուն բյուրով եկավ Հայաստան աշխարհն ավերելու, և թե ի՛նչպես նրա դեմ դուրս եկավ Վասակ սպարապետը տասներկու բյուր հայկական զորքով և կոտորեց Պարսից զորքերը իրենց զորավարի հետ միասին:

ԻԸ. Հազարավուխտի մասին, որ Պարսից նախարարներից մեկն էր, որին Շապուհ թագավորն ուղարկեց ուխտուն բյուրով՝ Հայոց աշխարհը կոտորելու և թե ի՛նչպես նրա դեմ դուրս եկավ Վասակը տասնևմեկ հազարով և նրան զորքի հետ միասին ջարդեց Աղձնիքի սահմաններում:

ԻԹ. Դմայունդ Վսեմականի մասին, որին (Շապուհը) իննսուն բյուր Տպպարատանի զորքով ուղարկեց Հայոց Արշակ թագավորի վրա. նրա դեմ էր ելնում Հայոց Վասակ սպարապետը, հասնում սպանում էր նրան և զորքերը կոտորում:

Վաճրիճ Կաճրիճի մասին, որ Պարսից թագավորի կողմից գալիս էր չորս հարյուր բյուրով և պատերազմում էր Հայոց թագավորի հետ, և թե ի՛նչպես նա մատնվեց Վասակ սպարապետի ձեռքը ու ինքն իր զորքի հետ Հայոց զորքի ձեռքն ընկան:

ՀԱ. Գումանդ Շապուհի մասին, որ շատ պարծեցավ Պարսից Շապուհ թագավորի առաջ և հարյուր հազար զորքով գալիս հասնում էր մինչև Հայաստան և պարտություն կրելով հալածվում էր Հայոց աշխարհից:

ԼՈ. Տպագա Գեղեկայ Եսեփպետի, որ սատմեցաւ ի Շապհոյ արքայէն Պարսից ի վերայ Աշխակայ արքային Հայոց զօրք բազմօք. ապա ետարկաւեր սատակէր զեա և զօրս նորա զօրավարն Հայոց Վասակ:

ԼՑ. Տպագա Սուրէնայ Գաղլափ, որ եկե ի վերայ Հայոց. ապա և սա ևս եկաւ լինէր իբրև զառաչինեան:

ԼԳ. Տպագա Ապահան Վահմահանայ, որ եկե եօտա աքթիւ և անձամբ զօրք ետանդրձ յերկիրն Հայոց ի պատերազմ. ապա և նմա ևս ձախողեցաւ արդէն և առաչնոցե:

ԼԵ. Տպագա Զրկայ Եուիրակապետի Պարսից, որ սատմեցաւ ի բազաւարէն Պարսից ի Շապհոյ ի վերայ Հայոց ի պատերազմ, ետանդրձ բազում զօրք. և նա ևս խորտակեցաւ իբրև զառաչինեան:

ԼԶ. Տպագա Սուրենայ պարսկի, որ յետ Զրկայն է սա եկե ի պատերազմ. և նա ի բոլոր ամենայն վասակայ սպարապետին Հայոց, ետանդրձ զօրքն՝ որ ընդ իւրն էին՝ սատակեցան:

ԼԷ. Տպագա Հրէշտակայ որ սատմեցաւ ի բազաւարէն Պարսից ի վերայ Հայոց իննսուն բիւրու. և այն անգամ ևս լինէր յաղթութիւն, և ճշմե յաղթութեամբ Հայոց կանգնէր:

ԼԸ. Տպագա Պատգայն, որ չարեաճարիւր բիւրուն զայր ետասներ ի բազաւարէն Պարսից՝ սոյ պատերազմ ընդ բազաւարին Հայոց. և բէ զիա՛րդ և սա եկաւ եպարտեցաւ ի ձեռս Վասակայ:

ԼԹ. Տպագա Բոյականայ և Խառասուն բիւրուն, զոր ետարկաւեր չընչեր սպարապետն Հայոց Վասակ:

Ի. Տպագա Վաչականայ պարսկի, որ եկե ի Հայս ուրուասոն բիւրուն, և կամեր ապատակել աւար առնել գերկիրն. ապա և զեա վանեաց Վասակ սպարապետն Հայոց, և զամենայն զօրս ետարս ետայր զամենայն:

ԻԱ. Տպագա Մշկանայ և երեսուն և հինգ բիւրուն, որ արշաւեցին յերկիրն Հայոց. և կամ զիա՛րդ կոտարեցան ի Վասակայ և ի՛ զօրացե:

ԻԲ. Տպագա Մատուճանայ և վաթսուն բիւրուն, երէ զիա՛րդ եկեալ ի վերայ բազաւարին Աշխակայ յերկրէն Պարսից, և երէ զիա՛րդ ետարկաւեր սատակէր զեռա Վասակ զօրավարն:

ԻԳ. Տպագա զեղակապետին, որ իննսուն բիւրուն եկե յերկիրն Հայոց. ապա ետարկաւեր սատակէր զեռա Վասակ ետանդրձ զօրքն:

ԻԴ. Տպագա արդայն Աշխակայ արքային, որոյ անուն էր Պապ, երէ զիա՛րդ էր ի զիւօք ի ծննդենէն իւրմէ. կամ զիա՛րդ յայտնեալ լինէին դիւքն ի նմա, և ետանդրձ ետօք զործէր պղծութիւն:

ԻԵ. Տպագա Սակատան ետանդրձապետին, որ սատմեցաւ ի Շապհոյ արքային Պարսից. ետանդրձ չարեաճարիւր բիւրուն. և փախոյց ևս զեա Վասակ զօրավարն, ետանդրձ զօրքն Հայոց:

ԻԶ. Տպագա Շապտան տախտապետին Պարսից, որ եկե հինգ ետարիւր բիւրուն ի վերայ աշխարհին Հայոց. ապա զեռա ետարկաւեին սատակէին զօրքն Հայոց:

ԻԷ. Տպագա մոգուցն ետանդրձապետին, որ ուր և սատե բիւրուն եկե եօտա՝ սոյ ետինա ընդ բազաւարին Հայոց. և սա կարծաւեր իբրև զառաչինեան:

ԻԸ. Տպագա ետարսակապետին Պարսից, որ իննսուն բիւրուն եկե մատռնչեր ընդ զօրս բազաւարութեանն Հայոց. և սատակեցաւ ի Ծագամաս ի զօրացն Հայոց ի զինէ Վասակայ:

ԼՈ. Գեղեկ ետանդրձապետի մասին, որ մեծ զօրով Պարսից Շապուհ բազաւորի կողմից ուղարկվեց Հայոց Աշչակ բագավորի դեմ, իսկ Հայոց Վասակ զօրավարը կոտորում էր ետան իր զօրի հետ:

ԼՑ. Սուրեն Պահլավի մասին, որ Հայոց վրա եկավ. սա ևս պատրաստ կրեց առաչինների նման:

ԼԳ. Ապահան Վահմականի մասին, որ անթիվ անհամար զօրերով եկավ Հայոց աշխարհը պատերազմի. ետան էլ առաչինների նման անաջողությամբ ետանդրձեց:

ԼԵ. Պարսիկ Զիկ եվիրականապետի մասին, որ Պարսից Շապուհ բագավորի կողմից պատերազմի ուղարկվեց Հայոց դեմ բազմաթիվ զօրով. ետան էլ առաչինների նման չարդուրուդ եղավ:

ԼԶ. Սուրեն պարսկի մասին, որ Զիկից հետո նույնպես եկավ պատերազմի. ետան էլ իր զօրի հետ Հայոց Վասակ սպարապետի ձեռքն ընկավ ու սպանվեց:

ԼԷ. Հրեշտակոմի մասին, որ Պարսից բագավորի կողմից իննսուն բիւրավ ուղարկվեց Հայոց դեմ, այս անգամ ևս հաղթությունը Հայոց էր մնում:

ԼԸ. Պատգոզանի մասին, որ Պարսից բագավորի կողմից եկավ չորս հարյուր բիւրով՝ Հայոց բագավորի դեմ պատերազմելու. և բէ ի՛նչպես ետան էլ պատրաստ կրեց Վասակից:

ԼԹ. Բոյականի և Խառասուն բիւր (զօրի) մասին, որոնց կոտորում ոչնչացնում էր Հայոց Վասակ սպարապետը:

Խ. Վաչական պարսկի մասին, որ Հայաստան եկավ տասնեւութ բիւրով և կամենում էր երկիրն ասպատակել և ավարի առնել, ետան էլ հաղթահարեց Հայոց Վասակ սպարապետը և նրա ամբողջ զօրը սրի մատնեց:

ԽԱ. Մշկանի և նրա երեսունհինգ բիւր (զօրի) մասին, որոնք արշավեցին Հայոց աշխարհը, և բէ ի՛նչպես կոտորվեցին Վասակից և նրա զօրերից:

ԽԲ. Մատուճանի և նրա վաթսուն բիւր (զօրերի) մասին, և բէ ի՛նչպես Պարսկաստանից եկան Աշչակ բագավորի վրա, և բէ ի՛նչպես ետանց զօրենում կոտորում էր Վասակ զօրավարը:

ԽԳ. Զեղակապետի մասին, որ իննսուն բիւրով եկավ Հայոց աշխարհը. ետան զօրի հետ միասին ոչնչացնում էր Վասակը:

ԽԴ. Աշչակի արդա մասին, որի անունն էր Պապ. բէ ի՛նչպես ետա ծնած օրից է վեր լի էր դևերով, բէ ի՛նչպես դևերը հայտնի էին նրա մոտ, որոնց հետ ետա պղծություն էր գործում:

ԽԵ. Սակատան ետանդրձապետի մասին, որ Պարսից Շապուհ բագավորի կողմից ուղարկվեց չորս հարյուր բիւրով. ետան ևս փախցրեց Վասակ զօրավարը Հայոց զօրերով:

ԽԶ. Պարսից Շապտան տախտապետի մասին, որ հինգ հարյուր բիւրով եկավ Հայոց աշխարհի վրա. Հայոց զօրերը ետանց էլ չարդեցին ոչնչացրին:

ԽԷ. Մոգուց ետանդրձապետի մասին, որ տասնեւութ բիւրով էկավ ետան պատերազմ մղելու Հայոց բագավորի դեմ. սա էլ կարծանվում էր առաչինների նման:

ԽԸ. Պարսից ետարսակապետի մասին, որ իննսուն բիւրով եկավ ու պատերազմում էր Հայոց զօրի հետ և Ծագամասում կոտորվեց Հայոց զօրերից և Վասակի զենից:

ԽԲ. Յաղագս Մոկաճայ, որ հառաւուն բիւրու եկեն ՚ի Պարսից՝ կռուել ընդ թագաւորին Հայոց, և սատակեցաւ զօրօք իւրովք ճանդերձ ՚ի գեղացն Հայոց, և ՚ի զօրավարէն Վասակայ ՚ի Մախազան:

Ը. Յաղագս հակտելոյ և հայհայելոյ թագաւորութեանն Հայոց, թէ ո՛րպէս թագում ճախարարքն Հայոց ապստամբեցին յարքայէն Հայոց, և ձեռս եառուն ՚ի Շապուհ արքայ Պարսից. և կամ զիա՛րդ ճապ այսր անդր ցուցեցաւ, և մեծապէս թագաւորութիւնն Հայոց նուազէր:

ԸԱ. Յաղագս թէ զիա՛րդ միաբան համօրէն աշխարհօրէն որք միաբան մնացեալք էին աշխարհին՝ ժողովէին առ իւրեանց հայրապետն Ներսէս. և թէ ո՛րպէս զբռնօք ճարկանէին առաջի նորա, և ձեռնթափ լինէին և թողուին ՚ի ձեռաց գիւրեանց թագաւորն Արշակ:

ԸԲ. Յաղագս թագաւորին Պարսից, թէ զիա՛րդ ՚ի ժամանակին լռեցոյց պատերազմ ասալ ընդ Արշակայ թագաւորին Հայոց, և ճենգութեամբ առ իճեն կոչէր ՚ի հաշտութիւն:

ԸԳ. Յաղագս կրկին աճգամ Խոշելոյ Շապուհ արքայ Պարսից զԱրշակ արքայ Հայոց, և նորա երթալոյն առ նա, և միճանգամայն[15] կռճշելոյն:

ԸԴ. Յաղագս թէ ո՛րպէս դարձեալ զդիւթսն և զֆաւղեայսն և զկախարդսն ճարցեալ Շապհոյ ճմայիւ՝ փորձէր զմիտսն Արշակայ, և տայր զճա յԱճուշ բերդն ՚ի պատիժս. սոյնպէս և զսպարապետն Հայոց չարամահ առնել ճրամայէր:

ԸԵ. Յաղագս աշխարհին Հայոց գերութեանճ և ճարուածոց, և գերութեան ՚ի Պարս վարելոյն տիկնոջ Փառանձեմայ. և խաղաղացն Հայոց աւերելոյ, և աշխարհին ՚ի հիմանց տապալելոյ:

ԸԶ. Յաղագս վկայութեանճ Ջուիթայ երիցուճ, յԱրտաշատ խաղաղէ, յերկրին Պարսից:

ԸԷ. Յաղագս աղօթճն ՚ի ժամ մանուճ Ջուիթայ:

ԸԸ. Յաղագս գալոյն Շապհոյ արքային Պարսից յերկիր Հայոց, և միաճգամայն սատակելոյ զմնացորդ երկրին Հայոց:

ԸԹ. Յաղագս Մեհրուժանայ և Վաճանայ, թէ ի՛նչ մնացին յաշխարհին Հայոց. և թէ զի՛նչ շատ գործեցին ընդ աշխարհն, և կամ թէ զիա՛րդ սատակեցաւ Վաճառ և կիճն յիւրեանց արդեամբ:

ԽԹ. Մոկաճի մասին, որ Պարսկաստանից խռովութիւն բերաւ եկավ Հայոց թագավորի ճետ պատերազմելու և Մախազանում իր զորքերի ճետ միասին կոտորվեց Հայոց գնդերից և Վասակ զորավարից:

Ը. Թե ի՛նչպես Հայոց թագավորությունը խափվեց ու ցիրուցան եղավ. ի՛նչպես Հայոց շատ նախարարներ ապստամբեցան Հայոց թագավորից և ձեռք մեկնեցին Պարսից Շապուհ թագավորին և ի՛նչպես շուտով այս ու այն կողմը ցրվեցան, և Հայոց թագավորությունը մեծապես նվազեց:

ԸԱ. Թե ի՛նչպես աշխարճում մնացածները միաբան միասին ժողովվում էին Ներսես հայրապետի մոտ և ի՛նչպես նրա առաջ բողոքում էին (Արշակ թագավորի դեմ) և նրանից ձեռք ցնչեցին ու հրաժարվեցին:

ԸԲ. Պարսից թագավորի մասին, թե ի՛նչպես այդ ժամանակ դադարեցրեց պատերազմը Հայոց Արշակ թագավորի դեմ և ճենգությամբ իր մոտ էր կանչում հաշտության համար:

ԸԳ. Թե ի՛նչպես Պարսից Շապուհ թագավորը կրկին աճգամ Հայոց Արշակ թագավորին կանչեց, և նա գնաց նրա մոտ ու միանգամայն կորավ:

ԸԴ. Թե ի՛նչպես Շապուհը վճուկներին, խավդեաներին և կախարդներին ճարցնելով՝ ճմայությամբ փորձում էր Արշակի դիտավորությունը և նրան պատժելու համար ուղարկում էր Աճճուշ բերդը և ի՛նչպես նրամայում էր շարաչար մանով պատճել Հայոց սպարապետին:

ԸԵ. Հայոց աշխարճի գերությունճ ու ճարվածները, Փառանձեմ տիկնոջ գերի տարվելը Պարսկաստան, Հայոց խաղաղճերի ավերմունքը և աշխարճի հիմնովին կործանվելը:

ԸԶ. Արտաշատ խաղաղի Ջվիթ երեցի վկայական մասը Պարսից աշխարճում:

ԸԷ. Ջվիթի աղոթքը մանվան ժամանակ:

ԸԸ. Պարսից Շապուճ թագավորի Հայաստան գալը և Հայոց աշխարճի մնացած մարդկանց միանգամայն կոտորելը:

ԸԹ. Մեհրուժանի և Վաճանի մասին, թե ի՛նչպես մնացին Հայոց աշխարճում և ո՛րճան չարիքներ գործեցին աշխարճում և ի՛նչպես Վաճառն և իր կիճը սպանվեցին իրենց արդյուք:

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՉՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳՒՐՔ ՄԱՏԵՆԻՑ ՏԱՆ ՈՐԴՒՈՑ ԹՈՐԳՈՄԱՑ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՑ

Ա

ՅԱՂԱԳՍ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ՅԵՏ ԲԱԶՈՒՄ ՇՓՈԹԻ ՊԱՏԵՐԱԶՄԱՑՆ ԸՆԴ ՆԵՐՍԵՀԻ ԱՐՔԱՅԻՆ ՊԱՐՍԻՑ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԹԱԳԱՒՈՐՑՈՅՑ ՋԱՐՇԱԿ ՋՈՐԴԻ ՏԻՐԱՆԱՑ, ԵՒ ԱՐՁԱԿԵԱՑ ՅԱՇԵԱՐՀՆ ՀԱՅՈՑ ՀԱՆԴԵՐՁ ՏԻՐԱՆԱՒ ՀԱՐԲ ԻՒՐՈՎ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԳԵՐՈՒԹԵԱՄԲՒՆ ՀԱՆԴԵՐՁ

Այլ իբրև եղև հաճութիւն և բազում խաղաղութիւն ՚ի մէջ բազաւորին Յունաց և Ներսեհի արքային Պարսից, հաւանեցաւ մեծաւ սիրով առնել զկամս միմեանց. և դարձուցանէր կայսրն Յունաց զգեղութիւն արքային Պարսից: Ապա և բազաւորն Պարսից Ներսէհ բազաւորեցոյց զԱրշակ որդի Տիրանայ և ետ նմա զնորին և հանդերձ կանամբք իւրեանց և ամենայն գերութեամբք հանդերձ և գանձիւ իւրեանց և սատուածովք արձակեաց մեծաւ փառօք: Եւդաց գնաց Արշակ արքայ Հայոց մեծաց. բազաւորեաց յերկրին ասորեստանեայց հանդերձ հարբն իւրով և ամենայն բնտանեօքն իւրովք. եկն եհաս յերկիրն Հայոց, և ժողովեաց զգրուեալս երկրին, և բազաւորեաց ՚ի վերայ նոցա:

Եւ եղև խաղաղութիւն մեծ ՚ի ժամանակին յայնմիկ: Ժողովեցաւ ամենայն բազուցեալքն փախուցեալք կորուսեալք երկրին Հայոց. և էին անկասկածք բնակել ՚ի խաղաղութեան մեծի ընդ հովանեաւ արքային Արշակայ: Ապա կարգեցաւ կազմեցաւ յօրինեցաւ խաղաղացաւ աշխարհն Հայոց ՚ի մէջ երկուց բազաւորացն. և յայնմ հետէ բնակեալք խաղաղութեամբ վայելեալք յիւրաքանչիւր յարուս իւրեանց:

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹՑՈՒՆՆԵՐ

ՉՈՐՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՑՒՒՆ

ԹՈՐԳՈՄԻ ՈՐԴՈՑ ՏԱՆ՝ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԳԼՈՒԽՆԵՐ

Ա

ԹԷ ԻՆՉՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻՑ ԵՒ ՄԵՐ ՇՓՈԹՈՒԹՑՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ՊԱՐՍԻՑ ՆԵՐՍԵՀ ԹԱԳԱՒՈՐԸ ԹԱԳԱՒՈՐԵՑՐԵՑ ՏԻՐԱՆԻ ԱՐՇԱԿ ՈՐԴՒՆ ԵՒ ԱՐՁԱԿԵՑ ՈՒՂԱՐԿԵՑ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ՀՈՐ ԵՒ ԲՈԼՈՐ ԳԵՐԻՆԵՐԻ ՀԵՏ

Երբ հաշտութիւնը կայացավ և կատարյալ խաղաղութիւն հաստատվեց Հունաց թագավորի և Պարսից Ներսեհ թագավորի միջև՝ ապա սիրով համաձայնեցին մեկը մյուսի կամքը կատարել, և Հունաց կայսրը ետ էր դարձնում Պարսից թագավորի գերիներին: Ապա Պարսից Ներսեհ թագավորն էլ թագավորեցրեց Տիրանի Արշակ որդուն և նրա հոր, նրանց կանանց ու բոլոր գերիների հետ, բոլոր նրանց գանձերով ու ստացվածքներով արձակեց մեծ փառով: Արշակ, Մեծ Հայքի թագավորը, Ասորեստանում թագավոր դառնալով՝ (այնտեղից) իր հոր և բոլոր ընտանիքի հետ միասին վեր կացավ եկավ հասավ Հայոց աշխարհը, երկրում գրվածներին ժողովեց ու նրանց վրա թագավորեց:

Այն ժամանակ մեծ խաղաղություն հաստատվեց: Հայոց աշխարհի բոլոր մարդիկ, որոնք կորել էին, փախել ու քաշ էին կացել՝ ժողովվեցին և ապահով ու խաղաղ ապրեցին Արշակ թագավորի հեզահնազանդության տակ: Աշխարհն էլ երկու թագավորների միջև խաղաղացավ, բարեկարգվեց, կազմակերպվեց, և բոլորն իրենց բնակության տեղերում վայելում էին խաղաղություն:

ՅԱՂԱԳՍ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԱՑ ՅՕՐԻՆԵԼՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ, ՆՈՒԱՃՈՒԹԵԱՆ ՅԻՐԱՔԱՆՉԻՒՐ ՏԵՂԻՑ ՎԱՐՈՒՑ ԿԱՐԳԱՑ, ՆՈՐՈԳԵԼՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Յայնմ ժամանակի խնդիր ելանէր արքայն Աշոկ տոհմին զօրավարաց ազգին Բաչացն Մամիկոնենից. մանաւանդ զի իւր դայեակս և սնուցիչք էին: Ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին Տայոց յիւրեանց աշխարհին, և դարձուցանէր զնոսա յընդհանուրիւնն, զի պատակտեալք և խակտեալք էին յընդհանուրենէն և յամենայն գործոց Հայոց ի ժամանակս խուլութեանն Տիրանայ: Եւ կացոյց արքայն զվարդան զերէց եղբայրն ի նահապետութեանն ազգին իւրեանց, և զվասակ զմիւսին եղբայրն զիւր դայեակն ի սպարապետութիւնն զօրավարութեան յիւրս պատերազմացն. սոյնպէս և զկրտսերն ի պետս զօրացն կացուցանէր: Սոյնպէս և զամենայն ազգսն զօրացն մեծամեծացն նահապետացս, որպէս առաջին թագաւորն նուաճեալ յիւրմանչիւր չափու: Եւ ճնազանդէր զմեծամեծսն, զիւրմանչիւր զօրս բաժանեալ յամենայն կողմանց, սահմանացն Հայոց սահմանապահս կացուցանէր:

Եւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեանն Հայաստան երկրին որպէս և զառաջինսն. մեծամեծքն յիւրմանչիւր գաւու, և գործակալքն յիւրմանչիւր չափու: Եւ սկիզբն գործակալութեանն նազարապետութեանն աշխարհատես խնամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց՝ նազարապետն ամենայն երկրին: Նոյնպէս ստրատելատութեան սպարապետութեանն զօրավարութեանն մարտի կռուելոյ, գործոյ բազմիկ նախատամուղ նիզակին, իրափառն[16] աղանազգիի աղանադրօշի արծուէնշանի վարժնականիշի աներկիւղ հաչասիրտ հաչանուեի, բարեհնշանս բարեհամբաւ բարեգործ յաջողակի ի գործ պատերազմաց ի բուն ի նախնեացն կարգաց ի Մամիկոնեան ազգին, ի վերայ իշխանութեանն բովանդակ՝ ի վերայ ամենայն զօրավարութեանն բազմութեանն Հայոց մեծաց, նահապազ յամենայն ժամ յաղթող ազգին պարգեւեալ յերկնից բարիանուն իրաւաց ի մեծի նահապետութեան պատերազմի: Եւ այլ յայսմ ազգաց և ի խոնարհ որ գործակալս անուն բարձիւ առաջի արքային պատիւ ի գլուխ բազմէին. բո՛ղ զնահապետս մեծամեծս և զտանուտեարս՝ որ գործակալ միայն էին, ինն հարեւր բարձ՝ որ մտանէր ի ժամ տաճարին ուրախութեանն բազմակալացն կարգելոց. բոլ զտունկայս գործակալութեանն սպասու:

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՇԵՆԱՆԱԼՆ ՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՎԵԼԸ. ԱՄԵՆ ՏԵՂ ՆԱՀԱՊԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏՎԵԼԸ, ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՆՈՐՈԳՎԵԼԸ

Այն ժամանակ Աշոկ թագավորը դուրս էր գալիս փնտռելու Բաչ Մամիկոնյան զորավարների տոհմը, մանավանդ որ նրանք իր դայակներն[70] ու սնուցանողներն էին եղել: Գնում նրանց գտնում էր նրանց Տայքի ամուր վայրերում. իրենց աշխարհում. նրանց սիրտն առնում ու հաչտեցնում էր, որովհետև նրանք Տիրանի խնկագար[71] գործերի ժամանակից ի վեր պառակտվել, անջատվել էին Հայոց միաբանությունից և բոլոր գործերից: Թագավորը Վարդանին, ավագ եղբորը, նշանակեց նրանց ցեղի նահապետ, միջին եղբորը, Վասակին, իր դայակին՝ նշանակեց սպարապետ և զորավար պատերազմական գործերում, նույնպես և կրտսերին նշանակեց զորապետ: Նույնպես և մյուս մեծամեծ նահապետների զորերն ըստ իրենց աստիճանների հաստատեց՝ ինչպես որ նախկին թագավորների ժամանակ[72] եղել էր: Մեծամեծներին էլ ճնազանդության էր բերում, բոլորի զորերը կողմերի վրա բաշխելով՝ Հայաստանի սահմանների վրա սահմանապահ էր նշանակում:

Եվ Հայաստան աշխարհի թագավորությունը նորոգվեց ու պայծառացավ ինչպես առաջ. մեծամեծներն իրենց գահերում, գործակալներն իրենց աստիճաններում: Եվ առաջին գործակալ— նազարապետ նշանակեց շինականներին շենացնող Գնունյաց ցեղը, որպեսզի իբրև բոլոր երկրի նազարապետներ՝ նոգատարությամբ խնամեն աշխարհաշեն՝ աշխարհը կերակրող գյուղացիությանը: Նույնպես և սպարապետության՝ զորավարության գործում, նակատ ատ նակատ նիզակներով կռիվ մղելու համար, նշանակեց փառավոր ու ազնվազգի, աղավնակիր դրոշակներով, արծվի՝ Վարուժանի[72] նշաններով, աներկյուղ ու հաչասիրտ նախամարտիկ, հաչանուն, բարեհնշան, բարեհամբավ ու բարեգործ, պատերազմական գործերում աչողակ Մամիկոնյանների ցեղից, բուն նախնյաց կարգերի համաձայն, որին երկիրը միշտ և հանապաղ պարգևում էր հաղթության և հաչության բարի անուն պատերազմական գործերում,— և տվեց նրանց զորավարության իշխանություն Մեծ Հայքի բոլոր զորերի վրա: Այս ցեղերից զատ՝ խոնարհ աստիճանի գործակալներ, որոնք թագավորի ներկայությամբ բարձրի վրա բազմում էին, պատիվները գլխներին,— չհաշվելով մեծամեծ նահապետներին ու տանուտերներին, լոկ միայն գործակալներ՝ իրը հարյուր բարձ էին կազմում, որոնք թագավորական սեղանի ուրախության մասնակից էին լինում, բացի ոտնկա սպասավորության պաշտոնյաներից:

Ապա ՚ի մի ժողով կուտեցան առ արքայն Արշակ մեծամեծ ճանապետ ազգաց ազգաց, տոհմաց տոհմաց, գնդից և դրօշուց տեառ. ամենայն սատրապ նախարար և ազատ, պետ և իշխանք, զօրավար և սահմանապահ, ՚ի մի հաւանութիւն միաբանական խորհուրդ, զի եկեսցեն տեսցեն և խորհեսցին վասն իւրեանց առաջնորդաց, թէ ո՛ւմ արժան իցէ նստել յաթոռ հայրապետութեանն և հովուել բանաւոր խաչաց Քրիստոսի: Ապա յաղթաց կալաւ այս բան խորհրդի ամենեցուն առ հասարակ որ աճդ էին, զի ՚ի մնացորդաց տանն Գրիգորի, յայնմ գաւակէ գոցեն զառաջնորդութիւն: Զի ամենեքեան ասէին ցարէայն. վասն զի ճորոգեաց աստուած զթագաւորութիւն ձեր, սոյնպէս պարտ է ՚ի յայնմ գաւակէ ճորոգել զճոգեոր ճանապետութիւնն: Զի ընդ ճորոգել այնր աթոռոյ, ասեն, ճորոգեսցին պայծառ վարք աշխարհիս Հայոց:

Ապա յակաճէ յաճուաճէ իսկ խնդրեցին աշխարհաժողով զօրն բազմութեան զայն, որ աճուաճեալ կոչէր Ներսէս, զորդի Աթանագենի, զթոռն Տաճատ Յունական, որդւոյ Վրթաճայ, որդւոյն Գրիգորի մեծին՝ առաջնոյ Տաճատ Յունական. և մօր սորա Խամբիչն աճուն, Տոյր արքային Տիրանայ: Սա լեալ էր ամուսնաւոր յաշխարհակեաց կեանս ճախ յաստիս մանկութեան. ՚ի տղայութենէ սնեալ և ուսեալ ՚ի կենսարացոց Տաղտին Գամրաց ընդ հաւատարիմ վարդապետօք. և ցանկալի եղեալ իւրոյն հարազատաց զուգակցացն: Այլ ՚ի ժամանակին յայնմիկ էր ՚ի վարս գինուորութեան ՚ի գործակալութեան, սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ՚ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեանն ՚ի ներքոյ և արտաքոյ:

Այր էր սա մեծ և բարձր ցանկալի հասակաւ, և վայելուչ գեղով. զի ոչ գտանէր ուրեք նման նմա գեղեցկութեանն ՚ի վերայ երեսաց երկրի, տեղւոյն ցանկալի և զարմանալի և աճագին ամենայն նայեցողաց, և նախանձելի արութեանն ՚ի գինուորական կրթութեանն: Երկիւղած ՚ի տեառնէ աստուծոյ, յոյժ աւանդապահ պատուիրանաց նորա. մարդասէր սուրբ զգաստ, սաստիկ խմաստուն և առանց ակնառութեան, իրաւացոյց իրաւարար, ցածուն խոնարհ ազգատասէր, ՚ի արքունիսն ամուսնութեանցն օրինաւոր, և կատարեալ սիրովն աստուծոյ: Եւ առ իւր ընկերս բատ պատուիրանին սի-

Ապա Արշակ թագավորի մատ ժողովի գումարվեցին եպիսկոպոսաց եղերի ու տոհմերի մեծամեծ նախարարներք, գեղերի և դրօշակների տերերք, բոլոր սատրապներք[73], նախարարներն ու ազնվականներք, պետերք, իշխաններք, զորավարներն ու սահմանապահներք: Ընդհանուր համաձայնութեամբ խորհուրդ արին, որ հավաքվեն ու մատնեն իրենց առաջնորդների մասին, թե ո՛վ է արժանավոր հայրապետական աթոռը նստելու և Քրիստոսի բանավոր նոտը հովվելու: Բոլոր ժողովականների մեջ այս միտքն ընդհանուր հավանություն գտավ, որ առաջնորդ ընտրեն Գրիգորի տան մնացորդներից, նրա սերունդից: Որովհետև բոլորն ասում էին թագավորին. «Ինչպես որ ասված նորա գից ձեր թագավորությունը՝ պետք է նույնպես նրա սերունդից նորագել հոգևոր նահապետությունն. երբ այդ աթոռը նորոգվի՝ ասում էին, ապա և պայծառ վարքերը կնորոգվեն Հայոց աշխարհում»:

Ապա աշխարհաժողով բազմությունը հասան հավասն ճիշեց Ներսեսին, Աթանագինեսի որդու, Հուսիկ հանճարապետի թոռանը, Վրթանեսի որդու, որ առաջին մեծ հանճարապետ Գրիգորի որդին էր. նրա մոր անունն էր Խամբիչ, որ Տիրան թագավորի քույրն էր: Սա մանկությանն հասակում աշխարհակալի կյանք վարելով ամուսնացած էր. տղայության հասակից ի վեր սնվել ու սովորել էր Գամիրքի կեսարիա քաղաքում, հավատարիմ ուսուցիչների ղեկավարությամբ և սիրելի էր դարձել իր ընկերակիցներին: Իսկ այս ժամանակ նա զինվորական պաշտոնյա էր, Արշակ թագավորի սիրելի սենեկապետն էր, թագավորի կյանքի բոլոր կարգերին հավատարիմ ներքուստ և արտաքուստ:

Սա մի մեծ տղամարդ էր՝ ցանկալի բարձր հասակով, գրավիչ գեղեցկությամբ, որի նման գեղեցիկ աշխարհի վրա ուրիշ տեղ չէր գտնվում. տեսչալի, ցանկալի, զարմանալի և պատկառելի բոլոր նայողների համար և զինվորական կրթություններ մեջ նախանձելի արթությամբ: Աստծու երկյուղը սրտումն ուներ, խստիվ պահպանում էր նրա պատվիրանները, մարդասեր, սուրբ և պարկեշտ էր, շատ իմաստուն էր, ազնաշատ, իրավադատ, ճիզ, քաղցր, խոնարհ, ազգատասեր, ամուսնական կյանքում օրինավոր, աստծու սիրովը լցված: Ընկերների հետ վարվում էր պատվիրանի նմանությամբ—սիրել ընկերոջը ինչպես իրեն: Զինվորական ատաքների մեջ էլ նա այսպես կատարյալ էր առա-

րել զամենայն ընկեր իրև զանձն. զի ի զինուորութեանն այսպէս կատարեալ էր վարուք քաւութեամբ, որ միշտ մանուկ իսկ էր՝ գեայր նա ամենայն պատուիրանօքն տեառն և արդարութեամբ, անարատութեամբ և ամենայն պաշտամամբք առ ընկերս իւր: Անձանձրոյթ էր, և ունէր զնախանձն աստուծոյ, և եռայր սուրբ հոգւովն, այսպէս իսկ էր ամենայնի կատարեալ յամենայնի: Եւ զաղօտս և զտառապեալս այսպէս սիրէր և ակն ածէր ի վերայ նոցա, զի զիւր ինչ զհանդերձս և զկերակուր հասարակէր ընդ նոսա: Եւ նեղելոց և տարակուսելոց օգնական և վերակացու, և չատագով ամենայն զրկելոց լինէր նա:

Միշ դեռ ևս զզինուորական ձևն յինեան բերէր, և զարդարեալ էր գեղեցիկ պատմուճանաւ և զարդ վայելուչ, և ցանկալի գեղով իւրով, երկայն հասակաւ, և չճաղատես հերօք վարսից իւրոց. կայր ի սպասու թագաւորին մօտ ի սնարս արքային, զարմանական սուսերն զպողովատիկն զոսկեպատեանն հանդերձ ականակալ մարգարտազարդ կամարաւն ի սպասու նորա բարձեալ ունէր, առ հասարակ ատեանն զբոլոր բարձեալ աղաղակէին՝ եթէ Ներսէս լիցի մեր հովիւ: Զոր իբրև լուաւ, զբոլոր բառնալով՝ զանձն անարժան համարեալ, չկամէր չառնոյր յանձն: Իսկ յորժամ տեսանոյր զամենեսեան ի նոյն յառաջին բանին վերայ պնդեալ, զի զնոյն աղաղակէին առաջի թագաւորին. ասէին. Ոչ ոք լիցի մեր հովիւ, բայց ի դմանէ. և ոչ ոք ճշտի այլ յայնմ աթոռ, բայց դա: Իսկ նա իբրև զանձնն չկամէր արժանի իրին առ յոյժ խոնարհութեան իւրում, ապա ի մէջ եկաց, սկսաւ ստել սակաւ մի, խօսել զանձնէ իւրմէ զանօրէնութիւնս և զբամբասանս մեղաց՝ որ իւր չէր գործեալ:

Զոր իբրև լուան բազմութիւնքն, գիտացեալ զստելն նորա վասն անձինն, ամենեքեան առ հասարակ հանդերձ թագաւորաւն թալացեալ էին ի ծաղուէ: Իսկ զօրքն աղաղակէին առ հասարակ. Իմեզ և ի գլուխ մեր դարձցին այն մեղք՝ զոր գործեցերն. ի վերայ անձանց մերոց և ի վերայ որդւոց մերոց լիցին գործքն, բայց դու զգործս հօրն Գրիգորի, զնոյն առաջնորդութիւնն նորոգեա մեզ: Իսկ նա իբրև այլ ինչ ոչ եգիտ տալ նոցա բանիցն պատասխանի, զի բշնամանս լինէր զօրացն, և ասէր. Անօրէնք էք և պիղծ, ես ոչ կարեմ ձեզ հովիւ կալ, և ոչ գձեր մեղսդ ընդ անձամբ բառնալ. ապա ոչ կարեմ աշառել, և ոչ ձերում չարութեանդ համբերել: Եւ այսօր տարապարտուց սիրէք դուք գիս տարապարտ, և վաղիւ ատելի և թշնամի և թակն զգլխոյ ձերմէ կոշկոճիչ կապէք գիս. այլ թո՛յլ տուք ինձ, անհոգութեամբ րստ իմում չափուս անարժանութեամբ գկեանս իմ տառապանօք և մեղօք հանդերձեալ դատաստանին յափտենից ակն ունելով, անցուցանել թերևս կարացից: Ապա

ինի վարով: Նա դեռ մանկության հասակից ապրում էր տիրոջ պատվիրանների համաձայն, արդարությամբ, անարատությամբ, ընկերներին ծառայություններ անելով: Նա ձանձրանալ չգիտեր, աստծու նախանձը սրտումն ուներ, սուրբ հոգով եռում էր. ամեն բանով կատարյալ էր: Աղքատներին, տառապյալներին սիրում էր, նրանց վրա խնամք ուներ, մինչև իսկ իր զգեստներն ու կերակուրը նրանց հետ կես էր անում: Նեղվածներին, դժվարության մեջ ընկածներին օգնում էր, զրկվածներին հովանավոր ու պաշտպան էր դառնում:

Արդ՝ միշտ դեռ նա զինվորական զգեստ հագած, զարդարված էր գեղեցիկ պատմուճանով և վայելուչ զարդերով, ցանկալի գեղեցկությամբ, երկայն հասակով, չճաղ վարսերով, կանգնած էր թագավորի սպասավորության, նրա սնարքում, գոտուց կախված արքայական պողպատյա սուրը՝ ականակուռ մարգարտազարդ ոսկի պատյանով,— պատյանի ամբողջ բազմությունը ձայն բարձրացնելով միաբերան աղաղակեց. «Ներսեսը լինի մեր հովիվը»: Երբ նա լսեց՝ բողոք բարձրացրեց, չէր կամենում, ճարժարվում էր ասելով, թե ինքն անարժան է: Բայց նա տեսավ, որ բոլորը նույն բանի վրա պնդելով թագավորի առաջ նույնն էին աղաղակում. «Ուրիշ ոչ ոքի չենք ուզում մեզ հովիվ, այլ միայն դրան. ուրիշ ոչ ոք չպիտի նստի այն աթոռը, այլ միայն դա»: Իսկ նա, տանի որ իր խոնարհությունից իրեն արժանավոր չէր համարում այդ (աստիճանին), առաջ եկավ, սկսեց մի քիչ սուտ խոսել իր մասին, սկսեց իրեն բամբասել այնպիսի մեղքերի և անօրենությունների մեջ՝ որ . չէր գործել:

Երբ բազմությունը այս լսեց, և գիտեր որ նա իր մասին ստեր է ճնարում՝ բոլորը միասին թագավորի հետ ծիծաղից թուլանում էին: Իսկ բոլոր զորքերը միաբերան աղաղակում էին. «Թող մեր վրա, մեր գլխների վրա դառնան ֆո գործած մեղքերը. թող մեր վրա, մեր որդոց վրա թափին ֆո (անօրեն) գործերը. բայց դու ֆո հոր Գրիգորի գործերը, նույն առաջնորդությունը նորոգիր մեր մեջ»: Իսկ նա որովհետև ուրիշ բան չգտավ նրանց պատասխանելու, որ զորքի համար վիրավորանք կլիներ՝ ասաց. «Դուք անօրեն եք ու պիղծ. ես չեմ կարող ձեզ հովիվ լինել և ձեր մեղքերը ինձ վրա վերցնել. ես չեմ կարող աշառություն անել, չեմ կարող ձեր գործած չարիքներին համբերել: Դուք այսօր զուր եք ինձ սիրում, վաղն իմ թշնամիներն ուատողները կդառնաք. դուք ինձ կապում եք ձեզ հետ՝ ձեր գլուխը թակելու համար: Ինձ հանգիստ թողեք, թերևս առանց հոգսերի իմ տառապանքներով ու մեղքերով լի կյանքը րստ իմ անարժանության անցկացնեմ՝ հանդերձյալ հավիտենական դատաստանին սպասելով»:

զրոզոմ բառնային բազմութիւմ զօրացն, և ասէին՝ եթէ այդ մեղաւորդ լիցի մեզ հովիւ. զի այնչափ պնդեալ մարդկանն, յաստուածոյ տեսչութենէն լինէր այնպէս: Ան սրտին գազանութեանն և յոյժ ցասմանն բազաւորն Արշակ իմն ձգտեալ զսուսերն արհուեական կամարաւն. զոր նմա Ներսէսն բարձեալ ուներ ի սպասու թագաւորին ըստ օրինաց սենեկապետութեանն, ի բաց հանէր ի նմանէ: Եւ հրամայէր զնա կապել զիւրով առաջն. զեերսն գանգրագեղս զվայելուչ բազազանգուր վարսիցն, զի ուրեմ երբեմ նման նմա ոչ գտանէր, զայն ի բաց խզեալ հրամայէր. և ըզդ նմին զվայելուչ պատմուճանն, զայն ի բաց պատառեալ հրամայէր: Հրաման տայր, և բերին զնանդերձ կղերիկոսաց զգեցուցանէին նմա. եւ հրաման, և կոչեցին զծերունի եպիսկոպոսն՝ որում անուն էր Փաւստոս, և տայր զնա ձեռնադրել ի սարկաւագութիւն: Բայց յոյժամ զեերսն դեռ վիրային ի նմանէ, ան յոյժ գեղեցկութեանն բազումք յարտասուս հարան՝ որ յուսեն կամ տեսին, ի գեղն աւելցնել՝ զկերպարանսն փոփոխելովն: Այլ յոյժամ տեսին զնա հրիստոսեան գեղովն զարդարեալ՝ բազմաց լինէր ուրախութիւն, յոյժամ շնորհք բարեբարք կոչեցին զնա լինել նոգեբարձու տանն Քրիստոսի:

Յայնժամ եդ տէր ի միտս ամենեցուն խնդրել իւրեանց հովիւ զայն, որ նոցա կարող լինել զառաչնորդութիւնն կենացն ճանապարհին ցուցանել: Եւ մինչ դեռ իսկ զնա զինուորութեան յիմեթան բերէր յերեվելիս, ներհին մարդովն զՔրիստոս էր զգեցեալ յանձն իւր, և ազնուական վարս էր յիմեթան կերպարանեալ: Եւ յուսովն՝ զոր ուներ՝ խաչեալ էր ըզդ Քրիստոսի, և բաղակից եղեալ էր ըզդ նմին. և սիրով հաւատոյ մեռեալ էր մեղացն, և յարութեան յուսոյն արդարութեամբ սպասէր: Վասն այսորիկ յիրաւի արժանի եղև սա աթոռոյն հայրապետաց և տեղոյ հարցն իւրոց առաջնոց, զաթոռն Թադէոսի Առաքելոյ, և ժառանգութիւն ճօրն մարմնապէս ի նոյն նոգևորին Գրիգորի. այլ իբրև ի տեառնէ եղև կոչումն նմա գալ յիրս այսպիսի, և էարկ ի միտս ամենեցուն խնդրել զսա արժանի այնմ իրին: Իսկ նա յոյժ առ երկիւղածութիւնն և բազում խոնարհութեանն զանձն իւր անարժան համարեալ իրացն, մեծ կարգաց ասպիճանին ասառուծոյ, յոր ձգեալ էին զնա: Այլ բռնաբարութիւն և միաբանութիւն և հրաման ասառուծոյ, մանաւանդ առ ճախճեօճն, վասն ճորա իսկ ասացեալ էր ի տեսլեանն ասառուծոյ առ Յուսիկն՝ եթէ այր լինելոց է ի սորա զաւակէ, լիցի լոյս աշխարհի:

Բայց զորի բազմությունը բոզոմ բարձրացնելով ձայն ավեց. «Հենց դու մեղավորդ պետմ է մեզ հովիվ լինես»: Ասածու տեսչությունից էր, որ մարդիկ այսման պնդում էին: Այն ժամանակ Արշակ բազավորը, չարացած ու զայրացած՝ դեպի իմն իրեն էր ֆաշում սուրը արհուեական կամարով, որը նա կրում էր իրև սենեկապետ՝ բագավորին սպասավորելիս, և նրա վրայից հանում էր: Ապա հրամայում էր նրան իր առաջ կապել, խուզել նրա գանգուր վայելուչ վարսերը, որոնց նմանը ոչ մի տեղ չէր գտնվում. նույնպես հրամայում էր պատառել, վրայիցը հանել վայելուչ պատմուճանը: Հրաման ավեց. բերին կրնավորի զգեստներ ու նրան հագցրին: Ապա հրաման ավեց. կանչեցին ծերունի Փավստոս եպիսկոպոսին և նրան ձեռնադրել ավին սարկավագ: Բայց մինչ մազերը խուզում էին՝ նրանց գեղեցկության պատճառով շատերը (ափսոսալով) լաց էին լինում, երբ տեսնում էին, թե ի՛նչպես կերպարանքը փոխվելով գեղեցկությունը կորավ: Բայց երբ տեսան նրան հրիստոնեական գեղեցկությամբ զարդարված՝ շատերն ուրախացան, որ բարերար (աստծու) շնորհով նա հրավիրվեց Քրիստոսի տան հոգաբարձուն լինելու:

Տերն էր, որ բոլորի մեջ միտք ծագեցրեց իրենց համար հովիվ խնդրելու նրան, որ կարող էր նրանց առաջնորդել դեպի կյանքի ճանապարհը: Նա դեռևս երբ զինվորական ձև էր կրում արտաքուստ իր վրա, ներքուստ Քրիստոսի զգեստն էր կրում, և ազնվական կերպարանք ուներ: Իր ունեցած հույսով նա խաչված էր Քրիստոսի հետ. սիրով մասնակից էր եղել նրա թաղման և հավատով՝ մեռած էր մեղքերի համար և արդարությամբ սպասում էր հարության: Ուստի նա իրավացի կերպով արժանացավ հայրապետների աթոռին և իր առաջին հայրերի տեղին, Թադեոս առաքյալի աթոռին և իր մարմնավոր ճոր նաև հոգևոր ժառանգության: Բայց սիրոջ ազդեցությամբ էր որ նա հասավ այն պաշտոնին, և նա էր որ բոլորի մեջ միտք ծագեցրեց՝ նրան այս պաշտոնին արժանավոր համարելու: Թեպետ նա աստիճ երկյուղածությունից և խոնարհությունից իրեն անարժան էր համարում ասածուն սպասավորելու բարձր աստիճանին, բայց նա (այս աստիճանին հասավ) բրնաղատվելով (ժողովրդի) միաբանությամբ և ասածու հրամանով, մանավանդ որ առաջուց էլ սրա մասին էր հայտնվել Հուսիկին տեսիլքում, թե նրա սերնդից կլինի մի մարդ՝ որ աշխարհի լույս կլինի:

ՅԱՂԱԳՍ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԱՌԻՆ ԳՆԱՑԻՆ ԵՒ ՏԱՐԱՆ ՋՆԵՐՍԷՍ Ի ԿԵՍԱՐԻԱ. ԵՒ ԹԷԹԷ Ջ՛ԻՆՔ ԵԱՏ ՍՔԱՆՉԵԼԻՔ ԵՂԵՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ, ԵՒ ԿԱՄ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ՀՈՎՈՒԵԱՅ ԻՐՐՈՑ ՀՕՏԻՑՆ ԱՌԱՔԵԼՕՐԷՆ

Ապա գումարեցին գիշխանսն մեծամեծս, զի առցեն զցանկալին ներսէս, և գնասցեն ուր սովոր էին զհայրապետսն օծանել: Նա և բազմութիւն եպիսկոպոսացն Հայոց ժողովեցան առ թագաւորն վասն նորին խնդրոյն. խոնարհել ամենեցուն միով միաբանութեամբ զնա ընտրել հաճոյ թուեցաւ ամենեցուն, զի նստցի նա յաթոռ գլխաւորութեանն: Ամենեցուն միաբանութեամբ եպիսկոպոսացն և թագաւորին և աշխարհախառն ձայիւ հաւանութեամբ ի միասին առնակեցան և գնացին: Զնայր մեծ իշխանն մարդպետութեանն, և զԲագարատ մեծ իշխանն ասպարապետութեանն, և զԴաճիէլ մեծ իշխանն Ոտից, և զՄեհճաղակ Ռշտունի, զԱճդովկ իշխանն Սիւնեաց, և զԱրշավիր իշխանն Շիրակայ և Արշարունեաց, և զնոյն իշխանն միւսոյ Ոտից, և զՊարգև իշխանն տանն Ամատունեաց. զնասա զամենեսին կազմեցին և առնակեցին բազում բնծայիւք և մեծամեծ պատարագօք և հաւատարիմ հրովարտակօք առ կաթողիկոսաց կաթողիկոսն Եւսեբիոս յերկիրն Գամրաց, և ի մայր քաղաքն[17] հռոմ ի կեսարիա, զի ձեռնադրեսցեն աեղ գտուրգ ներսէս կաթողիկոսութիւն Հայոց մեծաց:

Եւ եկին ածին ճոխ ցնծութեամբ ուրախութեամբ, և տեսին աեղ գկաթողիկոս կաթողիկոսացն գտուրգ զմեծաճուճն գերանելին գեղեցկապէս գսահակ եպիսկոպոսապետ Եւսեբիոս: Եւ ապին զհրովարտակն արքային Արշակայ ճմա. և ունէին առաջի ճորա զպատարագս բերեալս: Եւ ճորա սիրով ընկալեալ գճոսա և բազում մեծարանօք, և քան կանոնաց օրինացն ժողովէր առ ինքն մեծ եպիսկոպոսապետն Եւսեբիոս զբազմութիւն եպիսկոպոսացն արարեալ քան առաքելական օրինացն, զի ձեռնադրեսցեն գտուրգ ներսէս լինել եպիսկոպոսապետ Հայոց մեծաց: Եւ եթե մեծ սաճչելիք. զի մինչ գեռ այն ինչ մտեալ էին յեկեղեցին, էջ ապաւէն ապիտակ ի վերայ սեղանոյն յանդիման հանճարոյութեանն և յանդիման ամենայն ժողովրդեանն: Եւ իբրև եմուտ Եւսեբիոս արհեպիսկոպոսապետն և երիցսեմն ընդ ճմա, և էրիցապետ մի սուրբ` առաջ աճառ Բարսիղիոս կոչէր, բռնաւ ապաւէն ի սեղանոյն և ճանգիստ ի վերայ ճորա, և յամեաց բազում ժամս: Ոչ իբրև նեաս ժամ յարժամ կամեցան գներսէս ձեռնադրել, վերացաւ ապաւէն ի արբայն Բարսեղէ, և նստաւ ի վերայ գլխոյն ներսէսի:

Իբրև այս սաճչելիք և նշանք յաստուածոյ լինէին ի վերայ առնն

ԹԷ ԻՆՉՊԵՍ ՆԵՐՍԵՍԻՆ ԱՌԱՆ ՏԱՐԱՆ ԿԵՍԱՐԻԱ ԵՒ ԻՆՉՊԻՍԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՍՔԱՆՉԵԼԻՔՆԵՐ ԵՂԱՆ ԱՍՏՄՈՒԾ, ԵՒ ԻՆՉՊԵՍ ԱՌԱՔԵԼԱԲԱՐ ՀՈՎՎԵՑ ԻՐ ՀՈՏԸ

Այնուհետև գումարեցին մեծամեծ իշխաններին, որ ցանկալի Ներսեսին առնեն տանին այնտեղ՝ որտեղ սովոր էին հայրապետներին օծել տալ: Նաև Հայոց եպիսկոպոսների բազմությունը ժողովվեց թագավորի մոտ նույն հարցի առիթով. բոլորը միաբան խորհուրդ անելով[74] որոշեցին, որ նա նստի գլխավորի աթոռը: Եվ բոլորի միաձայն հավանությամբ,— եպիսկոպոսների և թագավորի և աշխարհականների բազմության,— (դեսպանները) ճանապարհ ընկան ու գնացին.—մարդպետության մեծ իշխան Հայրը, ասպետության[75] մեծ իշխան Բագարատը, Ոտիի մեծ իշխան Դանիելը, Մեհենդակ Ռշտունին, Սյունյաց Աճդովկ իշխանը, Շիրակի և Արշարունյաց իշխան Արշավիրը, մյուս Ոտիի իշխան Նոյը, Ամատունյաց տան իշխան Պարգևը: Սրանց բոլորին պատրաստեցին և ճանապարհ ձգեցին մեծամեծ նվերներով և ընծաներով և հավաստի հրովարտակներով, որ գնան Գամիրի երկիրը, Կեսարիա մայրաքաղաքը, կաթողիկոսների կաթողիկոս Եվսեբիոսի մոտ, որպեսզի այնտեղ նրան ձեռնադրեն Մեծ Հայքի կաթողիկոս:

Նրանք ցնծությամբ եկան հասան և տեսան այնտեղ կաթողիկոսների կաթողիկոսին, սուրբ մեծանուն երանելի հոյակապ և սքանչելի Եվսեբիոսին: Նրան մատուցին Արշակ թագավորի հրովարտակը և բերած նվերները նրան ներկայացրին: Նա սիրով և մեծ պատիվներով նրանց ընդունեց. և հաճածայն (եկեղեցական) կանոնների, առաքելական կարգի՝ ժողովեց սուրբ եպիսկոպոսների բազմությունը, որպեսզի սուրբ Ներսեսին ձեռնադրեն Մեծ Հայքի եպիսկոպոսապետ: Եվ մի մեծ սքանչելիք տեղի ունեցավ, որովհետև նենց որ մտան եկեղեցին՝ մի սպիտակ աղավնի, բոլոր հանճարների ու բազմաթիվ ժողովրդի առաջ, եկավ նստեց սեղանի վրա: Երբ Եվսեբիոս արհեպիսկոպոսապետը և նրա հետ երեցները ներս մտան, որոնց մեջ էր նաև մի սուրբ երեցապետ Բարսիղիոս անունով՝ աղավնին սեղանից թռավ ու եկավ նստեց նրա վրա և երկար ժամանակ մնաց, իսկ երբ հասավ այն ժամը, երբ կամեցան Ներսեսին ձեռնադրել՝ աղավնին սուրբ Բարսեղի վրայից վերացավ ու եկավ նստեց Ներսեսի գլխին:

Երբ աստծուց այս նշանն ու սքանչելիքը նրա վրա երևեցան՝

այսորիկ, կայիճ առ հասարակ ամենայն ժողովուրդն զարմացեալ, և մեծ արհեպիսկոպոսն Եւսեբի: Առ հասարակ աղաղակէին ի վերայ ճորա, թէ՝ Հաճոյ եղեր դու ասուածոյ, և հոգի ասուածոյ հանգեաւ ի վերայ fո. զի եմանուիլն եղև ամենասուրբ Հոգոյն, որ ի վերայ սեառնճ երեսցաւ: Ապա ձեռնադրեցին զնա, և հաւին նստուցին յաթոռ եպիսկոպոսութեանն, և պատուէին զնա. և բազումք ասէին եմա էնկոմիա, որ ասի՝ թէ Հոգի սուրբ հանգեաւ ի սա: Բայց նա ևս fան զևս զանձն իւր աճառժան համարէր իրացն եղելոց: Եւ մեծասքանչելաչուք յուղարկեցին զնա. ճոյնպէս և զմեծամեծ նախարարսն սատրապն Հայոց:

Եւ եկին հասին ճոfո՛ մեծապարծ երեսի հոգևորազգեաց փառոf ի Հայաստան երկիրն. և արfայն Արշակ ընդ առաջ երթայր ճոցա մինչև ի լեառն, որ սեռւաճեալ կոչի Առեւտ: Եւ աճդ պատուեալ միմեանց մեծաւ լրչմունքեամբ, լցեալ օրհնութեամբ ողջունիւն, անդուստ յաշխարճն դարձան: Եւ ճստաւ սուրբն Ներսէս յաթոռն հայրապետութեան. ի ճովութեանն ճորա բազում խաղաղութիւն լիեէր աշխարճին: Զի ի վարս կարգաց գճացիցն իւրոց՝ եմանեաց իւրոյ ճօրն մեծին Գրիգորի, արդարև հայրարարոյ գտաեէր ամենաքարի. զճոյճ ճարցն ճորոգեաց գտաfելաչնորճս, ճոյն գործ երեալ անվնաս պանելոյ յաճերեոյթ բշնամեացն և յայտնեացն:

Սա և առաւել ևս առաչին ծառոցն եմանեալ. որ զճոյճազգեաց զճոյճանաս պտուղս վարդապետութեանն բերեալ սկսեալ վերակացութեանն ճովութեանն՝ անկարօտ մատակարարէր օգտակարսն, զճոգևոր աւօտսն չամբելով: Զի շնորճն այնպէս հանգեաւն ի նմա, զի մեծամեծ նշանս և բժշկութիւնս առնէր ճիւանդաց, ուր դէպ լիեէր. զմոլորութիւնս դարձուցանէր: Առնէր և զայսպիսի սfանչելիսս. զոր կարի յամառեալ տեսանէր, աճ արկանելով ճաւանեցուցանէր. իսկ ճլուացն, որոց ականջf սրտիցն բացեալ էին, զեռս բանիf fարոզութեանն ածէր ի ճաւանութիւն:

Շինէր և զաւերեալ եկեղեցիսս. և կանգնէր զսեղանս ճործանելոյս. և հատատէր ի կատարումն ապաշխարութեան զբեռաճաւատս, զի հաւատացեալ յատուած՝ ապրել կարասցեն: Մխիթարէր զճաւատացեալս յափեռճական յուսով բարութեամբն մշտնջենաւոր պարգեացն, զբազէական աթոռն մեւսանգամ ելից, և իւրոց ճարցն եմանեալ որդի եղև: Եւ չարախօսացն ընդդիմացեալ ըմբերանէր, խափանէր և զանօրէնութիւնս և զխօսս և զգործս զայսպիսեացն միանգամայն: Եւ վասն ճըշմարտութեանն միշտ ի մեռ մարտնչէր, և զաչողակ արդարութեանն fաչալերեալ խնդացուցանէր. և իւրով վարդապետութեանն անձրևաւ պարարէր սեռւցանել զչայիկան արդարութիւնս օրհնութիւնս ընկալու:

բոլոր ժողովուրդը և եվսեբիոս մեծ արհեպիսկոպոսը զարմացած մնացին: Բոլորը ճրան դիմելով աղաղակում էին. դու հաճելի եղար ասածուն, ասածու հոգին fո վրա իջավ, որովճետև դա եմանություն էր. ս. հոգուն,, որ սիրոչ վրա երեաց: Ապա ճրան ձեռնադրեցին և բարեացրին նստեցրին եպիսկոպոսության աթոռը և պատվում էին, չատերը էլ ճրան ենթրողենթր[76] էին ասում, այն մտով թե ս. հոգին հանգչեց ճրա վրա: Բայց նա ավելի և ավելի աճարժան էր համարում իրեն այս եղածներին: Այնուճետև մեծ փառավորությամբ հանապարճ ձգեցին ճրան և Հայոց մեծամեծ նախարարներին՝ սատրապներին:

Նրանի մեծ պարծանիով, հոգևորապես փառավորված եկան հասան Հայաստան աշխարճը: Նրանց դիմավորեց Արշակ թագավորը մինչև Առյուծ կոչված լեռը: Այստեղ ճրանի միմյանց պատանեցին մեծ խնդությամբ, իրար ողջունեցին և օրհնությամբ դարձան եկան աշխարճը: Եվ սուրբ Ներսեսը ճստեց հայրապետության աթոռը. ճրա ճովվության ժամանակ աշխարճում մեծ խաղաղություն տիրեց. որովճետև իր վարքի և ընթացքի մեջ նա եմանեց իր ճոր՝ մեծն Գրիգորին, ամենաքարի եղավ իր նախնիների նման, այն հայրերի առաքելական չնորճները ճորոգեց և նույնպես հոգս էր տանում՝ (իր ճոտը) անվնաս պանելու երկյող և աներևույթ բշնամիներից:

Նա առավելապես եմանեց առաչին ծառերին, և վարդապետության նույնատեսակ և նույնման հասուն պտուղներ էր բերում և իր ճովվության և վերակացության ընթացքում բոլորին առատորեն մատակարարում էր օգտակարը, հոգևոր արոտով սնուցանելով: Նա այնպես լցվեց (աստվածային) չնորճներով, որ մեծամեծ նշաններ էր գործում, հիվանդներ էր բժշկում, որտեղ որ դեպք էր լինում. մոլորվածներին (ուղիղ) ճանապարճի էր բերում: Այսպիսի սfանչելիներ էլ էր կատարում... որտեղ որ մեկին տեսնում էր խիստ համառած՝ աճ ազդելով խոսքի էր բերում, իսկ որոնց որ արտերի ականչներ բաց էին՝ ճրանց խոսքի էր բերում fարոզությամբ:

Շինում էր ավերված եկեղեցիները, վերականգնում էր ճործանված սեղանները. բերանավատների համար սահմանում էր ապաշխարության կարգ, որպեսզի աստծուն հավատան ու փրկվեն: Հավատացյալներին մխիթարում էր մշտնջենավոր բարի պարգեների հույսով: Թագոս (առաքյալի) աթոռը ճորից փառավորեց, իր հայրերին նման որդի եղավ: Չարախոսներին դիմադրելով պապանձեցնում էր: Աճօրեն գործերն ու խոսքերը միանգամայն խափանում էր: Ճշմարտության համար կռվում էր մինչև վերջ, արդար կողմը fաչալերում ու պաշտպանում էր, և իր վարդապետության անձրևով սնուցանում էր չանավնա արդար գոր-

եւ ընդ ամենայն տեղիս սահմանացն Հայոց մեծաց, ընդ որ էր յառաջագոյն նորուն հարցն սերմանեալ զարդոգութիւն բանին կենաց, զնոյն և սա ոռոգեաց անձրեւովն: Զբոյսն աճեցոյց մշակն հնձող, եղեալ գործակից սերմանողաց. և բազմացոյց գյուղաքաղաք արդիւնսն ի շտեմարանս արքայութեանն, կարգացն առաջին հարցն մշակացն փոխանորդ եղեալ՝ գործակից լինելով:

Նա և բազում զօրութիւնս անպատում յանձին իւրում բարձեալ բերէր. նա և կարի իսկ զղօրմածութեան կարգացն փոյթ առաբել ցուցանելոյ, նախ ինքն առնելով առ իւր անձն բարի, և ապա այլոց օրինակ բարեաց դնելով, առ հասարակ վարդապետական բանիւն զամենեցուն զփակեալ դրունս մտաց ի բարին յորդորելով բանայր: Զամենաբարի ուսուցանէր զսէր գյոյս զհաւատս զարքութիւն զխաղցրութիւն զհեզութիւն զանմխակալութիւն, զինամ ունելով դարմանոյ ադհատացն տանելոյ, և յոյս հատուցման ի խոստացեալ աւետիսն Քրիստոսի. և ի դատաստանացն ամենին անշէջ հրոյն՝ յիշատակօք յաւիտենականն չարչարանօք սպառնալով, անաշառական գալստեամբն Որդւոյն աստուծոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ այնու երկեցուցեալ, մինչև ամենեցուն՝ որ ի սահմանս Հայոց էին բնակեալ՝ ամենեքեան հաւատացեալք ընդ ադհատս իւրեանց զիւրեանց ինչս մատակարարեալ հաւանութեամբ հաւասարութեամբ, և ինքեանք լրչմտութեամբ զուարթութեամբ գործէին:

Եւ ինքն երբեալ հասանէր ի կողմանս Տարօն գաւառին. և ժողովէր առ ինքն զամենայն եպիսկոպոսունս Հայոց աշխարհին: Ժողովեցան ի գետն Աշտիշատ, ուր զառաջինն զեկեղեցին էր շինեալ. զի նա էր մայր եկեղեցեացն, և ի տեղի լեալ նախնեացն ժողովոց սիւնհոդոսին: Ի ժողով հաւանութիւնս եկեալ ամենեցուն, և խորհուրդ բարեաց ի մէջ արկանէին, կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն և ժողովն հաւատոցն հաւասարութեան: Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յօրինեցին, և արարին զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն յամուսնութեան օրինացն: Բայց միայն զառաքելակարգ կանոնսն ի վերայ ամենեցուն կացուցանէր սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս. ամենեցուն խրատատու և առաջնորդ յորդորիչ և նախանձաւոր լինէր գործոց բարեաց: Նախ ինքն առնէր, և ամենեցուն զնոյն ուսուցանէր. առ հասարակ զնոյն օրինակ առնել հրամայէր յամենայն աշխարհս և ի գաւառս և ի կողմանս կողմանս, ի կոյս կոյս, ի խորշս խորշս սահմանացն Հայոց. յայտ արարեալ զպատեհ պատեհ տեղիսն գաւուցանել, շինել ադհատանոցս, և ի՛ ժողովել զախտաժէտս և զօրկուսս և զմարմնա-

ծերն օրինութեամբ, Մեծ Հայքի բոլոր սահմաններում, որտեղ նրա հայրերն առաջ սերմանել էին կենարար խոսքի հարոգությունը՝ ինքը նրանց ոռոգեց իր (հարոգության) անձրևով: Բույսը աճեցրեց հնձող մշակը, սերմանողներին գործակից դառնալով և առատ արդյունք համբարեց արքայության շտեմարաններում: Նա իր նախորդ մշակ հայրերին փոխանորդ ու գործակից եղավ:

Իր մեջ կրում էր նա անպատմելի գորություններ. մանավանդ ուշադրություն էր դարձնում ողորմածության կարգեր հաստատելու վրա. նախ ինքը անձամբ բարիքներ էր գործում, հետո ուրիշներին բարեգործության օրինակ տալիս. վարդապետական խոսքով առհասարակ հորդորում էր բոլորին, նրանց մտքերը դեպի բարին էր դարձնում: Ուսուցանում էր որ ամենամեծ բարիքներն են սերը, հույսը, հավատը, արքությունը, խաղցրությունը, հեզությունը, անդխակալությունը: Հորդորում էր խնամել աղքատներին, նրանց դարմանել, և հույս էր տալիս, որ (ողորմածները) հատուցում կստանան Քրիստոսի խոստացած (երկրորդ) գալստյան ժամանակ, երբ դատաստանի ատյան[77] կկազմվի անշեջ կրակով. սպառնում էր հավիտենական չարչարանքները հիշատակելով և Հիսուս Քրիստոսի աստծու որդու գալստով: Եվ այնքան երկյուղ ազդեց, որ Հայաստանի սահմաններում բնակվող բոլոր մարդիկ հավատալով՝ բոլորն իրենց ունեցածները իրենց աղքատներին հավասարապես և հոժարությամբ մատակարարում էին, և այս բանը անում էին ուրախությամբ:

Նա գնաց հասավ Տարոն գավառի կողմերը և իր մոտ ժողովեց Հայոց աշխարհի բոլոր եպիսկոպոսներին: Ժողովվեցին Աշտիշատ գյուղում, որտեղ առաջին անգամ եկեղեցի էր շինված, որովհետև նա էր մայր եկեղեցին և նախնյաց եկեղեցական ժողովների ժողովատեղը: Բոլորը հոժարությամբ ժողովին եկան և օգտակար խորհրդակցություն ունեցան՝ աշխարհական կարգերը բարեկարգելու, հավատի բնդհանուր կանոններ սահմանելու: (Այս ժողովում) կարգ ու կանոն սահմանեցին, կազմակերպեցին և Հայոց աշխարհի բոլոր ժողովուրդը դարձրին իբրև վանականների մի բնդհանուր միաբանություն, բացի ամուսնությունից: Ներսես եպիսկոպոսապետը ամենի վրա տարածում էր առաքյալներից սահմանված կանոնները, բոլորին խրատ էր տալիս, հորդորում էր, առաջնորդում էր դեպի բարեգործություն և նախանձախնդիր էր լինում. նախ ինքն էր անում, ապա ուրիշներին նույնը ուսուցանում: Նույնը հրամայում էր կատարել բոլոր Հայոց աշխարհում, գավառներում, կողմերում, անկյուններում: Որտեղում գտնում էին պատշաճ տեղեր, գաղում էին՝ նրանց մեջ աղքատանոցներ շինելու համար, որտեղ պետք է ժո-

վաս և զամենայն ցաւոս. և նոցուն կարգեցին օրկանոցս և դարմանոց և ռոճիկս, և պատանս ազգատաց: Զի այսպէս ետ հրաման մեծ եպիսկոպոսապետն Ներսէս, և սոյն կամ եղև ամենայն սուրբ ժողովոյն, զի այնպիսիքն միայն նստեալ լիցին յիւրաքանչիւր կայեանս, և մի՛ ելանել ի մուրոյն տառապանս, և մի՛ բնաւ ելանել ըստ իւրաքանչիւր դուս, այլ զի ամենայն ոք պարտապան է նոցա: Հարկ իսկ է զի մի՛ կարգ աշխարհի, ասէ, եղծցի. այլ արժան է զի ամենեքեան առ հասարակ ողորմածութեամբ և երկիւղիւ տարեալ նոցա զդարմանսն, և զպիտոյս նոցա վճարեսցեն:

Շինեաց սոյնպէս, կարգեաց կազմեաց և հաստատեաց, բազում և այլ ողորմութիւնս ուսուցանէր աշխարհի. բազում կարգս կանոնաց հայրենիս կարգէր: Եւ առ յոյսն յարութեան ցուցանէր ունել ակնկալութիւն. և զի մի՛ զմահ մարդկանն առանց դարձի միւսանգամ կենդանանալոյ համարիցին, և անյուսութեամբ ի վերայ գնացելոցն օճիրս գործիցեն լալել կոծոյն, զանառակութիւնս աշխարհին դնելոյ. այլ յուսով տեառն գալստեանն ակն ունել և յարութեանն նորոգութեան, և իւրաքանչիւր գործոցն զյաւիտենական հատուցումն առնուլ իւրաքանչիւր յոյս ունելով աւուր գալստեանն տեառն սպասել: Եւ զի լինիցին յամուսնութեան օրինաւորք. մի՛ ստել և մի՛ դաւ բերել իւրեանց ամուսնութիւնքնգալ կողմանց. և փախչել աւելի ի մեծաւոր և յազգին տոհմակից խառնակութեան ամուսնութենէն. և մանաւանդ ի մեծաւորականն ի. նոյց և որ գամ մի այսմ նման լեալ էր ինչ: Եւ կանոն, հրաժարել ամենևին ի մեռելոտոյ և յարենէ ուտելոյ, և ի դաշտանիկն մերձենալոյ. զայդ ամենայն պիղծ համարէր առաջի տեառն:

Եւ զննգութիւնսն և զխութիւնսն և զագանութիւնս և զչարակնութիւնս, զցանկութիւնս և զզրկութիւնս, զարուագիտութիւնս և զիգութիւնս և զբամբասութիւնս, և զանառակ արբեցութիւնս և զորկորստութիւնս և զյափշտակութիւնս և զպոռնկութիւնս, և զվրէժս ի բշնամեաց, և զատութիւնս և զբշնամութիւնս և զանողորմածութիւնս և զսուտերդմնութիւնս, և զարիւնհեղութեան սպանութիւնս և զանասնագիտութեան պղծութիւնս, որ ոչ ակն ունէին յարութեան, և որ անյուսութեամբն լան զմեռեալս, ընդ մի օրինակ զամենեսեան ի միում խորխորատ կորստեանն համարէր: Եւ ամենայն աշխարհին պատուիրէր, և գլխովին թագաւորին, առ հասարակ ամենայն մեծամեծացն, և ամենեցուն՝ որ ոք ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն, գութ ունենալով ընդ իւրեանց ծառայս և ընդ կրսերս և ընդ աշակերտս, և սիրել իւրև զընտանիս, և մի՛ անարժանս և աւելի տարապայմանս հարկօք նեղել քան զչափն. յուշ առնելով,

ղովիքն ախտավորներին, բորոտներին, հաշմանդամներին, ցավագարներին: Որոշեցին չինել ուրկանոցներ[78], սահմանել նրանց սնունդ և դարման, իսկ աղքատների համար պատսպարան[79]: Որովհետև Ներսես մեծ եպիսկոպոսապետը այսպես հրամայեց և սուրբ ժողովը հավանություն տվեց, որ այդպիսի մարդիկ նստած մնան իրենց կացարաններում, դուրս չգան տառապանքով մուրալու, և բոլորովին իրենց դռներից ոտք դուրս չդնեն, այլ որ ամեն մարդ պարտական լինի նրանց (խնամելու): Կարևոր է, ասում էին, որ աշխարհի կարգը չխանգարվի, այլ պետք է որ բոլորն անխափան ողորմած լինին և զգուշությամբ տանին նրանց կերակուրը և նրանց պիտույքները նոգան: Այսպես էլ չինեց, կազմակերպեց և հաստատեց:

Ուրիշ շատ տեսակ ողորմածություններ էլ սովորեցրեց աշխարհին և շատ հայրենական կարգեր ու կանոններ հաստատեց: Նա խրատ էր տալիս, որ միշտ պետք է նկատի ունենալ հարության հույսը, չկարծել թե մարդու մահն անդառնալի է, նորից կենդանանալու հույս չկա. ուստի և պետք չէ մեռածի վրա անհուսությամբ լաց ու կոծ անել, անշափ ու անկարգ սուգ անել, այլ հուսով նկատի ունենալ տիրոջ (երկրորդ) գալուստը և հարությամբ նորոգվելը, ուրեմն սպասել տիրոջ գալստյանը, երբ ամեն մարդ հավիտենական հատուցում կստանա ըստ իր գործերի: Նաև խրատում էր, որ ամուսնության մեջ օրինավոր լինին, որ ամուսնացածներն իրար չխաբեն, իրար դեմ դավ չսարքեն, հեռու մնան ազգակցական մերձավոր խառնակ ամուսնություններից, մանավանդ հարսների հետ մերձավոր ամուսնությունից և սրանց նմաններից: Եվ կանոն էր դնում՝ մեռած անասուն և արյուն չուտել, ամսականի ժամանակ կնոջ չմերձենալ, որովհետև դրանք պիղծ են տիրոջ առաջ:

(Նա դատապարտում էր) նենգությունը, խաբությունը, ագահությունը, ուրիշին նախանձելը, ցանկական կրքերը, զրկողությունը, արվագիտությունը, իգանալը, բամբասանքը, մոլի հարբեցողությունը, որկրամոլությունը, հափշտակությունը, պոռնկությունը, բշնամուց վրեժխնդրությունը, տռախոսությունը, բշնամությունը, անողորմածությունը, սուտ երդումը, արյունահեղ սպանությունը, պիղծ անասնագիտությունը, (երկրորդ) հարության հույս չունենալը, անհուսությամբ մեռնելներին սգալը—այս բոլորը միևնույն կորստյան խորխորատն են տանում, ասում էր նա: Եվ բոլոր աշխարհին պատվիրում էր նա, նույնիսկ թագավորին, մեծամեծներին և առհասարակ նրանց, որոնք ուրիշի վրա իշխանություն ունեին, որ գութ ունենան իրենց ծառաների, ստորադրյալների և աշակերտների վրա, սիրել նրանց իբրև իրենց քնատ-

զի և նոցա տէր գոյ յերկինս: Սոյնպէս և ծառայից պատուիրէր՝ կալ յարդարն հնազանդութեան իւրեանց տեառնց, զի ՚ի տեառնէ լինիցի նոցա վարձ:

Եւ եղև խաղաղութիւն և նորոգութիւն յաւուրս նորա ամենայն եկեղեցեաց. և յաճախէր շուք պատուի ամենայն եպիսկոպոսացն ընդ ամենայն տեղիս Հայոց մեծաց: Եւ լուսաւորութիւն կարգի եկեղեցւոյ ամենապայծառ ծաղկեաց ամենամեծ լիութեամբ. կարգեցան կարգք կաթողիկէ եկեղեցեաց ամենայն վայելչութեամբ, և բազմացան կարգք սքանչութեան պաշտամանցն և պաշտօնէիցն յաճախութիւն: Եւ բազմացոյց զկարգս եկեղեցեաց ՚ի չէնս և յանշէնս. սոյն օրինակ բազմութիւնք կրօնաւորաց:

Կարգէր և ՚ի տեղիս տեղիս դպրոցս յանւարէն և ասորերէն յամենայն գաւառս Հայոց. և բազում եղելոց և տառապելոց գերեաց փրկութիւն և գերէդարձ առնէր, զորս անիւ խարոգութեան փառացն Քրիստոսի զկէս, և զայլս գնովք փրկաճօք ազատէր, և յիւրամանչիւր տեղիս գործուցանէր: Այրեաց և որդոց և շխաւորաց հանգիստ և դարման առնէր. և ադմատ զօրհնապազ ընդ ճմա ուրախ լինէին. և տաճար իւր և սեղան զօրհնապազ ադմատաց և օտարաց էր և ճիւրաց: Եւ այսպէս առ յոյժ ադմատասիրութեանն, զի թէպէտ և շինեաց զամենայն ադմատանոցս ընդ ամենայն գաւառս, և կարգեաց նոցա անդէն դարմանս, այսպէս զի բստ իւրեանց անկողինս մահճացն մի՛ ուրեք աշխատ լիցին գալեալ. սակայն և զիւր տաճարն առանց նոցա ոչ առնէր. այլ կաղ և խայրէ և մարմճանարք, խուլ և հաշմեալք և ցանկանեալք և կարօտեալք ընդ ճմա և ՚ի նորա ակրմբի դարմանէին բազմեալք: Եւ ինքն իւրովք ձեռօքն լուանայր զամենեսեան. օծանէր պատէր, և ինքնին իսկ ճամբէր նոցա զիւրամանչիւր կերակուրս, և զամենայն ինչ ՚ի պէտս նոցա ծախէր. և ամենայն օտարք ընդ ճմա, նովանեաւ նորա հանգուցեալք, գազարէին:

Եւ ամենեցուն զար ինքն առնէր՝ զայն ուսուցանէր. և ինքն սուրբ և զգաստ և արթուն, և զամենայն մարդ պատրաստակամ առ բանն աստուծոյ առնէր: Եւ ինքն ամենեցուն բստ մարգարէիցն և կամ բստ Առաքելոցն ճմահարութեան զոգորմածութիւնս ուսուցանէր. և երէ զմեղս ձեր ողորմութեամբ պարտ է խափել ձեզ, և զանօրէնութիւնս ձեր գթութեամբ և արօք ադմատաց: Եւ այնպէս ատեաւ եցոյց՝ զառաքեալսն յուշ առնելով, ար պաշտօն ադմատաց, գմեծն և զճախավկայն գյառաչսատարկատգն Ստեփաննոս և զբնգերս նորա՝ զոր բնտրեցին, ար զերկինս երաց, և զերկին ընդ աչմէ Հօր աստուծոյ այս գործով արժանի եղև տեսանել:

ճիներին, ապօրինի կերպով ու չափազանց հարկերով նրանց չնեղել, հիշեցնելով, որ նրանց համար էլ աստված կա երկնում: Տառաներին էլ պատվիրում էր հավատարիմ և հնազանդ լինել իրենց տերերին, որի համար վարձ կստանան տերից:

Եվ բոլոր եկեղեցիներ նրա օրերում խաղաղություն և նորոգություն գտան. բոլոր Մեծ Հայքում եպիսկոպոսների պատիվը մեծացավ, եկեղեցիների կարգերը ծաղկեցան, ամենակերպ լիովին պայծառացան, ամենայն վայելչությամբ հաստատվեցին կաթողիկե եկեղեցիների կարգերը, սուրբ պաշտամունքի կարգերը աճեցին, պաշտոնյաները ավելացան: Եկեղեցու կարգերը շատացրեց շեն և անշեն տեղերում, նույնպես և կրոնավորների թիվը բազմացրեց:

Ջանգազան տեղերում Հայաստանի բոլոր գավառներում հիմնեց հունարեն և ասորերեն լեզուների դպրոցներ: Շատ նեղվածներ փրկում էր, գերության մեջ տառապողներին գերությունից թափում էր, ոմանց՝ քարոզելով Քրիստոսի անը, և մյուսներին՝ փրկանք տալով գնում ազատում էր և իրենց տեղերը դարձնում: Այրիներին, որբերին, չքավորներին հանգիստ ու դարման էր մատակարարում, աղքատները միշտ նրա հետ ուրախանում էին. իր սեղանատունն ու սեղանը միշտ բաց էին աղքատների՝ օտարականների և հյուրերի համար: Եվ այնքան մեծ էր նրա աղքատասիրությունը, որ թեպետ բոլոր գավառներում աղքատանոցներ շինեց և նրանց համար դարման նշանակեց, այնպես որ իրենց անկողիններից վեր կենալուց ավելի նեղություն չքաշեն, բայց և այնպես առանց նրանց սեղան չէր նստում, այլ կաղերը, կույրերը, հաշմանդամները, խուլերը, տանկերը, կարոտյալները նրա հետ սեղան էին նստում ու կերակրվում: Եվ ինքը իր ձեռներով բոլորին լվանում էր, օծում, (վերքերը) կապում, իր ձեռքով նրանց կերակուր էր բաժանում, իր բոլոր ունեցածը նրանց վրա էր ծախսում. բոլոր օտարականները նրա մոտ, նրա հովանու տակ հանգիստ կերակրվում էին:

Եվ ինչ որ ինքն էր անում՝ նույնը սովորեցնում էր անել և ուրիշներին. ինքը մարդ, զգաստ և արթուն մարդ էր և բոլոր մարդկանց պատրաստում էր աստծուն լսելու: Մարգարեների և առաքյալների ճամանությամբ սովորեցնում էր ողորմած լինել: «Ձեր մեղքերը, ասում էր, պետք է ողորմածությամբ քավեք և ձեր անօրեն գործերը գթությամբ և աղքատներին ողորմություն տալով»: Հիշեցնում էր առաքյալներին, որոնք աղքատների խնամակալության համար ընտրեցին մեծ նախավկա և նախասարկավագ Ստեփանոսին իր ընկերներով, նրան որ երկինքը բացեց. և այս գործով արժանի դարձավ Որդուն տեսնելու Հոր աստծու աջ կողմը:

Սոյնպէս և զԱյծեմնիկն իւր ազատմածութիւնն և խաղակնք այրեացն ազգումն, ի ձեռն մեծին Պետրոսի, և զհրաժարեալն զգնացեալն զմեռեալն միւսանգամ այսրէն դարձուցանէր ի կենդանութիւն: Սոյնպէս և մեծն Պօղոս, ասէր, պատմէ՝ թէ իբրև տեսին զշնորհսն, որ տուեալ էին ինձ, Յակոբոս և Կեփաս և Յովհաննէս՝ որ բուն սիւնքն էին, իբրև տեսին՝ թէ հաւատարիմ եմ ես յաւետարանն աքլփատութեան, որպէս ճոխա ի թլփատութեանն, ևս զայ համարձակեցին. ձեռն տուին հաւատութեանն ինձ և Բառնաբայ. զի մեք ի հեթանոսս, և ճոխա ի թլփատութիւնն: Բայց միայն պատուիրեցին ինձ, ասէ, զի աղքատաց խնամ կալցուք. զոր ես իմիսին իսկ, ասէ, փութայի չանալ կատարել:

Սոյնպէս ևս առաքելագոյն գտերունականն դնէր առաջի, որ մեծատուճն էր՝ որ զամենայն պատուիրանսն կատարեալ էր, ապա լուաւ ի տեառնէ՝ երթ վաճառեա զինչս ընդ և տուր աղքատաց, և գոցես ինձ գանձս յերկինս. և որ զկնի սորին՝ երթ դիւրին է մալխոյ մտանել քան ծակ ասղան, քան մեծատան ազանի յարքայութիւն աստուծոյ: Եւ դարձեալ՝ երթ արարէ ձեզ բարեկամս ի մամոնայէ անտի անիրաւութեան, որ ընկալցին զձեզ ի յարկս իւրեանց յաւիտենից: Կամ որպէս նոյն իսկ Պօղոս բարեաց գործոց նախանձաւոր լինէր, սահիպէ ամենեցուն ասելով՝ երթ զհետ երթայր սիրոյ, և նախանձաւոր լերուր նոգևորացն: Որոյ գործարութիւն ախայեցուցն վասն պաշտաման սրբոցն ի Մակեդոնիա պատմեալ՝ նախանձեցուցեալս յորդորեաց. այլ և համարձակութիւն իսկ տայ անխափան ի բարեացն առաքինութիւնս, թէ լաւ է յամենայն ժամ նախանձել ի բարիս: Դարձեալ փութայ ամենեքումբ հանդերձ բան Քրիստոսի հետացն վարել: Հայեցարուք, ասէ, ի զօրագլուխն հաւատոց և ի կատարիչն Յիսուս. դարձեալ՝ թէ յիշեցէք զառաջնորդս ձեր և զվերակացուս ձեր ի տէր, որք խօսեցան ձեզ զբանն կենաց. հայեցարուք յելս գնացից նոցա, և նմանողք լերուք հաւատոց նոցա: Եւ միանգամայն՝ թէ զայս խորհեցի իւրմանչիւր ոք ի ձէնջ, որ ի Քրիստոս Յիսուս. և դարձեալ՝ թէ սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել: Իսկ ցանկալի եղբայր տեառն Յակոբոս զհամօրէն իսկ զգուշդս սրբոցն հանդերձ արբասէր տեառնէ յօրինակ առեալ ի բղխին իւրում, ասելով՝ երթ օրինակ առէք, եղբարք, զչարշարանաց երկայնամտութեանն զմարգարէսն՝ որք խօսեցան յանունն տեառն. զհամբերութիւնն Յոբայ լուարուք, և զկատարումն տեառն տեսէք:

Ջայս և այսպիսի ինչ, և որ ինչ այսմիկ նման էին բանք, խօսէր հանապազ. զսիւ և զգիշեր ոչ դադարէր ի խրատելոյ և ի բողոքելոյ: Եւ խմաստութեամբ Հոգւոյն սրբոյ, որ բնակեալ էր ի նմա, քան ամենայն ատուց իւրաց ժամանակացն ամաց կենաց իւրոց երանելի եպիս-

(Հիշեցնում էր) և Այծեմնիկին[80], նրա ողորմածութիւնը, այրիների ազգը և թէ ի՛նչպես Պետրոս մեծ (առաքյալը) կյանքից հրաժարված ու մեռածին դարձյալ կենդանութիւն էր բերում: «Պողոս մեծ (առաքյալն) էլ պատմում է, ասում էր, թէ Հակոբոսն ու Կեփասը, բուն սյուներ[81], երբ տեսան ինձ տրված մեծ շնորհը և որ ես աքքլփատներին ավետարանը հարոզելու մէջ աչողութիւն գտա, ինչպես նրանք թլփատվածների մէջ, ինձ ավելի ևս համարձակութիւն տվին և համաձայնեցին, որ ես և Բառնաբասը (հարոզենք) հեթանոսների մէջ, ինչպես իրենք թլփատվածների մէջ: Միայն ինձ պատվիրեցին, ասում է, որ աղքատներին խնամք տանիմ, ինչ որ ես էլ, ասում է, աշխատում էի կատարել:

Այսպես և ավելի ևս հիշեցնում էր Քրիստոսի (խոսքերը), որ նա ասաց մի մեծատան, որ բոլոր պատվիրանները կատարել էր. տերը նրան ասաց. «Բոլոր ունեցածներդ ծախի՛ր և աղքատներին տուր, և դու գանձ կգտնես երկնքում». և սրանից հետո ասաց. «Հասու չվանը ավելի հեշտ կմտնի ասեղի ծակով՝ քան ագահ մեծատունը արքայութիւն»». և դարձյալ, թէ «ձեզ բարեկամներ ստեղծեցէք անիրաւ մամոնայից», որոնք ձեզ ընդունեն հավիտենական հարկերի տակ: Կամ ինչպես ինքը Պողոսը բոլորին ստիպում է բարի գործերի նախանձավոր լինել, ասելով— «սիրո հետևեցէք, հոգևոր բաների նախանձավոր եղէք»: Նա պատմելով, թէ ի՛նչպես ախայեցիք հոժարամտությամբ ապաստակում էին սրբերին Մակեդոնիայում՝ հորդորում, (լսողների) նախանձն էր շարժում, այլ և նրանց հաչալերում էր անխափան բարի՝ առաքինական գործեր կատարել, ասելով թէ «լավ է միշտ նախանձել դեպի բարին»: Դարձյալ նա ձգտում էր բոլորի հետ միասին Քրիստոսի հետով գնալ. «նայեցէ՛ք», ասում է, հավատի զորագլուխ և կատարող Հիսուսին». և դարձյալ՝ թէ՝ «հիշեցէ՛ք ձեր առաջնորդներին ու վերակացուներին, որոնք ձեզ կյանքի խոսքը վարդապետեցին, նայեցէ՛ք նրանց ընթացքին և նմանեցէ՛ք նրանց հավատին»: Եվ միանգամայն ասում էր. «Այսպես բոլ մտածէ ձեզանից ամեն մեկը, որ հավատում է Հիսուս Քրիստոսին»: Դարձյալ ասված է. «Հիսուս սկսեց գործել և ուսուցանել»: Իսկ սիրոյ ցանկալի եղբայր Հակոբոսը իր բղխում օրինակ բերելով սրբերի բոլոր գնդերը և սրբասէր սիրոյ՝ ասում էր. «եղբայրներ, օրինակ առէք սիրոյ աճուճով խոսող մարգարեների համբերությունը շարշարանքներին. լսեցէ՛ք Հոբի համբերության պատմությունը, սիրոյ կատարումը տեսէք»:

Այս և սրանց նման բաներ նա շարունակ խոսում էր գիշեր և ցերեկ. չէր դադարում սովորեցնելուց և հանդիմանելուց: Եվ նրա մէջ

կոպոսապետն Հայոց Ներսէս այսպէս առ ամենեսեան զխրատ վարդապետութենանն առ հասարակ իբրև զհայր բազմագութ իբրև զմայր գթած ցուցանէր. զհոգևոր սիրոյն եռանդն ածէր առ ամենեսին, առ մեծամեծս և առ պատուականս և առ անարգս, առ հարուստս և առ աղքատս, առ ազատս և առ շինականս: Եւ զվերակացութիւնս աշխարհի ամենայն հոգաբարձութեամբ, առանց ամենայն ծուլութեան և ամենայն յապաղութեան, տաճէր մինչև ի վախճան իւր, և ոչ երբէք ուրեք եղև նման նմա այլ ոք ի Հայաստան երկրին:

Ե

ՅԱՂԱԿՍ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, ԹԷ ՉԻԱՐԴ ՅԱՐՇԱԿԱՑ ԱՐՔԱՅԷ ԱՌԱՔԵՑԱԻ ԱՌ ՎԱՂԷՍ ԿԱՅՍՐՆ ՀԱՆԴԵՐՁ ՆԱԽԱՐԱՐՕՔՆ. ԹԷ ՎԱՍՆ ՈՐԴՈՑՆ ԿԱՅՍԵՐՆ ՉԻՆՁ ԽՕՍԵՑԱԻ ՇԱՏ ԲԱՆՍ ՀԱՒԱՏՈՑ, ԵՒ ԿԱՄ ՉԻԱՐԴ ԿԱԳԵՑԱԻ ԵՒ ԱՔՍՈՐԵՑԱԻ, ԵՒ ՉԱՅԼ ՆԱԽԱՐԱՐՍՆ ԱՐՁԱԿԵՑԱ ՀԱՆԴԵՐՁ ՊԱՏՄԱԲԱՆՕՔ

Ապա վասն խաղաղութեան ուխտին միաբանութեան դաշինն, որ էր աշխարհին Հայոց ընդ կայսերն Յունաց, դեպ եղև առաքել անդր կազմութեամբ մեծաւ արքային Հայոց. զի իբրև մեծ կաթողիկոսն Հայոց Ներսէս, և ի մեծամեծացն Հայոց սատարապս տասն ընդ նմա առնել, զի երիցէ. ի մէջ կայսերն և ի մէջ իւրեանց զուխտն հաւանութեան և խաղաղութեան նորոգեսցեն: Ապա չոգան գնացին հասին ի կայսերական պաղատն բագաւորացն Յունաց:

Զայնու ժամանակաւ բագաւորն մեծ Յունաց Վաղէս ի խստորութենանն հերետիկոսութեան աղանդութեանն արիանոսաց էր ի հաւատս: Արդ իբրև եռես զնոսա բագաւորն, զառաջինն մեծապայծառ փառօք մեծաւ շքով մեծարեաց զնոսա: Ապա դէպ եղև՝ զի որդի միամօր կայսերն, այն իսկ գտաճէր նորա զաւակ, անգթալ դնէր յախտս սաստիկ ճիւանդութեան. ապա բագաւորն վասն աղօթս առնելոյ ի վերայ մանկանն ստիպէր զսուրբ կաթողիկոսն Հայոց գներսէս: Իսկ նա ի մէջ մաուցեալ. խօսել սկսաւ և ասէ.

Եթէ հաւատացես՝ եթէ տէր Յիսուս Քրիստոս որդի և ծնունդ աստուծոյ միածին, իմով յիմնութենէ և իսկ յիսկութենէ, յորովայնէ հօր ծնունդ և ոչ արարած, ծագումն հօր, լոյս փառաց էականին, և նկարագիր էութեան նորա. զի այն ծնունդ է և որդի ի բնութենէ նորա. ոչ որպէս հայրն՝ ճոյնպէս և որդի ի բնութենէ յառաջ քան զամենայն յաւիտեանս ի հօրէ ծնեալ, յառաջ քան զլինելն արարածոց՝ ծնունդ, գործակից արարչակից յամենայնի առ հօր ի

բնական սուրբ հոգու իմաստությամբ իր կյանքի ամբողջ ժամանակ ամեն օր Հայոց երանելի Ներսես եպիսկոպոսապետը ամենին վարդապետում խրատում էր ինչպես մի բազմագութ հայր, ինչպես մի գթած մայր, հոգևոր սիրով ոգևորում էր բոլորին— մեծամեծներին, պատվականներին ու անարգներին, հարուստներին և աղքատներին, ազատներին, շինականներին: Եվ աշխարհի վերակացությունը ամենայն հոգատարությամբ առանց ծուլանալու և առանց հապաղելու կատարում էր մինչև իր կյանքի վերջը: Նրա նման ուրիշ մեկը չեղավ Հայոց աշխարհում:

Ե

ՀԱՅՈՑ ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԱ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻՑ ՈՒՂԱՐԿՎԵՑ ՎԱՂԵՍ ԿԱՅՍԵՐ ՄՈՏ, ԵՎ ԹԵ Ո՛ՐՔԱՆ ՇԱՏ ԲԱՆ ԽՈՍԵՑ ԿԱՅՍԵՐ ՈՐԴՈՒ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱԳՎԵՑ ՈՒ ԱՔՍՈՐՎԵՑ, ԻՍԿ ՄՅՈՒՍ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ (ՎԱՂԵՍԸ) ԱՐՁԱԿԵՑ ՆՎԵՐՆԵՐ ՏԱՌՈՎ

Ապա Հայոց աշխարհի և Հունաց կայսեր մեջ կնքված խաղաղության և միաբանության դաշինքի առիթով կարիք եղավ, որ Հայոց բագավորը Հայոց Ներսես մեծ կաթողիկոսին և Հայոց մեծամեծներից տասը սատրապ նրա հետ մեծ պատրաստությամբ ուղարկեց, որ գնան և կայսեր ու իրենց մեջ եղած համաձայնության և խաղաղության դաշինքը նորոգեն: Նրանք գնացին հասան Հունաց բագավորների կայսերական պալատը:

Այս ժամանակ Հունաց Վաղես մեծ բագավորը հավատի կողմից մոլորված՝ ընկած էր արիանոսների[82] հերետիկոսության մեջ: Արդ երբ բագավորը նրանց տեսավ՝ սկզբում մեծ փառով ու շքեղությամբ նրանց մեծարեց: Կայսրը միամոր մի որդի ուներ, իր միակ զավակը, որ ծանր հիվանդությամբ պառկած էր: Ապա բագավորն ստիպում էր Հայոց Ներսես սուրբ կաթողիկոսին, որ երեխայի վրա աղոթք անել. իսկ նա մեջտեղ գալով սկսեց խոսել և ասաց. «Եթե հավատաս, որ տեր Հիսուս Քրիստոս աստծու միածին որդին ու ծնունդն է, նրա իմ հոգուց և իսկությունից, հոր որովայնից ծնունդ և ոչ թե արարած, հորից ծագած, էականի փառքի լույսը, նրա էության նկարագիրը, որ նա նրա բնությունից է, ծնունդն ու որդին, որովհետև ինչպես որ հայրն էր, այնպես էլ որդին նրա բնությունից, բոլոր ժամանակներից առաջ հորից ծնված, բոլոր արարածների լինելությունից առաջ, սկզբից ի վեր ամեն

սկզբանէ. զի ամենայն ի հօրէ եղեւ յերկինս և յերկրի. զի միշտ ընդ հօր ի սկզբանէ յառնելն զամենայն արարածս, և ի բնէ և ի սկզբանէ ընդ նմա ունէր զճամենմատ կերպարանս զիւրոյ ծնողական տպոցն նմանութեանն՝ հանգոյն գուգակցութեանն. որ ի սկզբանէ աշխարհի կրել զամենայն բանիւ զօրութեան, և իւրով բնական իշխանութեամբն վարէ ուղղէ և առաչնորդէ ամենայն արարածոց. որ ի սկզբանէէ արար և հաստատեաց զհիմունս երկրի, և ձգեաց զերկինս որպէս զխոհան. որոյ ձեռն արարին և հաստատեցին զամենայն երեսս երկնից. որ արար զմարդն իսկ ի հողոյ, և կարգեաց զբանաւորս գխօսունս իմաստունս աննենականս: Եւ իբրև աննենիշխան կամօք ապականեցաւ մարդիկ, ոչ ծանեան զարարիչն և ոչ զպատուիրանս նորա, ոդի ի բնէ ի սկզբանէ նստէր ընդ աչմէ հօր, և աթոռակից ծնողին իւրոյ էր. իսկ իբրև եռես եթէ արեամարհեալ կայր հայր ի մարդկանէ, խաղաց եկն էչ յաչմէ աթոռոյ անտի. ամփոփեցաւ փորհկացաւ, և ի կուսէն մարմնացաւ, մարդացաւ, և զանձն ունայնացոյց. և մարդ եղեալ, կամօք կրեալ զվիշտս, մեռաւ և յարեաւ և կեցոյց զամենեսեան առ հաստարակ. և վերացաւ և նստաւ յաթոռ իւրոյ բնութեանն, ընդ աչմէ Հօր՝ իւրոյ ծնողին:

Արդ եթէ զայս այսպէս հաւատացես եթէ Քրիստոս ոդի և ծնունդ է ասուածոյ, որովք և բազմօք և անթիւ վկայութեամբ կարեմք հաճել զհեզ, և լուանալ զհեզ ի սուտ և ի պիղծ մկրտութենէ հերետիկոսութեանն հաւատոց: Եւ ընկալ դու զմկրտութիւն սրբութեանն հաւատոցն ի շնորհս յանուն Հօրն արարչին, և ի խոստովանութիւն ծննդեան Որդւոյն ի Հօրէ, որ է յառաչ քան զյաւիտեանս և զժամանակս, որ է ըստ բնութեանն գոյացութեան իւրոյ. և ի մարմնանալ ի կոյսն սուրբ, որ եղև ի վաղչաւ ժամանակաց, որ եղև վասն մերոյ փրկութեան և կենդանութեանն. ի մահն և թաղումն նորուն Որդւոյն Յիսուսի Քրիստոսի. և ի խաղաղութիւն և ի միաբանութիւն և ի պարգեւ նորուն Հոգւոյն սրբոյ: Մկրտեաց դու ի սոյն յայս խորհուրդս սմանչելի կենաց բողոքեան և նորոգութեան. և զմանուկն ես այժմ սրբութեանն երանութեան լուսոյ բողոքեան մկրտութեանն արժանի արասցուք. և խնդրեսցուք ի Քրիստոսէ տեառնէ մերմէ, զի բողոքէ զմեղս աննենաւատութեան ներանուածողութեանն, և ողորմի. վասն որոյ ցաւ և տանջանք եղեն ի սկզբանէ և լինին: Այժմ ես լինիմ երաշխաւոր վասն տեառն ողորմածի՝ զի զմանուկն ոչ տեարառ առաչի ես կալայց, եթէ դու յուղղափառ եկեսցես, և իբրև զայլ արդոյս խոստովանեսցիս ընդ մեզ:

Ապա թէ ոչ խոստովանեսցիս ի Քրիստոս միածին Որդին ասուածոյ, զոր նախ յառաչ քան զամենայն՝ Հայր ի բնութենէ իւրմէ բառական

բանում իր ներքո գործակից և արարչակից. որ ամեն ինչ երկնքում և երկրի վրա ներից իչավ նրա միջոցով. որ նա սկզբից ի վեր ներ հետ է եղել բոլոր արարածներին ստեղծելիս. ի բնե, սկզբից ի վեր նրա հետ էր և իր ծնողի տիպն ու կերպարանքը կրում էր. որ աշխարհի սկզբից ի վեր իր խոսքի զորությամբ և իր բնական իշխանությամբ կառավարում է, ուղղություն է տալիս, առաչնորդում է բոլոր արարածներին. որ սկզբից ստեղծեց և երկրի հիմքը ձգեց, երկինքը վրանի նման տարածեց (նրա վրա), որի ձեռքերն ստեղծեցին ու հաստատեցին երկնքի բոլոր տարածությունը, որ և մարդուն ստեղծեց հողից իբրև բանավոր, խոսուն, իմաստուն և ազատ կամքով: Եվ երբ մարդիկ իրենց աննենիշխան կամքով ապականվեցին, արարչին ու նրա պատվիրաններ մոռացան՝ ապա նրա որդին, որ սկզբից ի վեր նստում էր ներ աչ կողմը և իր ծնողի աթոռակիցն էր, երբ տեսավ որ հայրը արհամարհված է մարդկանցից՝ վեր կացավ աչակողմի աթոռից, փորացավ, ամփոփվեց, կույսից մարմնացավ, մարդացավ, իրեն իրեն նվաստացրեց, մարդ դարձավ, իր կամքով վշտեր կրեց, մեռավ և հարություն առավ, բոլորին առհասարակ կյանք պարգևեց, (երկինքը) վերացավ և նստեց իր բնական աթոռը՝ իր ծնողի՝ ներ աչ կողմը:

Արդ՝ երբ դու այսպես հավատաս, թե Քրիստոս աստծու ծնունդն ու որդին է, որի մեչ հեզ կարող ենք համոզել անթիվ վկայություններով և հեզ լվալ ու մաքրել հերետիկոսական հավատի սուտ և պիղծ մկրտությունից: Ընդունիր դու սուրբ հավատի մկրտությունը արարիչ ներ անունով և խոստովանելով որդու ծնվելը հորից բոլոր ժամանակներից առաչ, ըստ իր բնական գոյացության, և մարմնանալը սուրբ կույսից վերջին ժամանակներում, որ եղավ մեր փրկության և կենդանության համար. նույն որդու՝ Հիսուս Քրիստոսի մահն ու թաղումը, խաղաղությունը և միաբանությունը և սուրբ հոգու պարգևները.— ապա մկրտվի՛ր դու կյանքի նորոգության, բողոքության այս սմանչելի խորհուրդներին անունով՝ ապա հո երեխային էլ կարժանացնենք այս սուրբ՝ երանության, նույսի և մեղսաթափիչ մկրտության, և կխնդրենք մեր տեր Քրիստոսից, որ ներե ձեր հերձվածող անհավատության մեղքերն ու ոդորմի, որոնց պատճառով էլ սկզբից ևեթ ցավերն եղել են ու լինում են: Եվ ես երաշխավոր եմ ոդորմած տիրոչ կողմից, որ երեխայիդ ոդչ ու անարատ կկանգնեցնեմ հո առաչ՝ եթե ուղղափառության գաս և մեզ հետ իրեն ուղղափառ դավանես:

Իսկ եթե չդավանես աստծու միածին որդի Քրիստոսին, որին ամեն բանից առաչ հայրը ծնեց իր կարող հայրական էությունից, իբրև

իւրոյ բնութեան հայրութեանն ծնաւ ծնունդ կատարեալ միածին, նոյն նման զուգակից և աթոռակից և արարչակից. որ վասն սիրոյն նորա սիրեաց զմեզ, առ սէր մեր առաքեցաւ ի Հօրէ ի կոյսն սուրբ Մարիամ, և երևեցաւ մարդ ի կնոջէ այն՝ որ նման էր բնութեան իւրոյ ծնողին, և ի բնութենէ ուղէր զբնութիւն Հօրն իւրոյ, մարմնովն վասն մեր եղև իւրովք կամօք ի կերպարանս ծառայի: Եւ բանզի անկան մարդիկ ինքնակամ կամօք ի ծառայութիւն, արդ ինքն տէր եղև ի կերպարանս ծառայութեանն, զի ի ծառայութենէ ազատեսցէ զմեզ: Զի ի սկզբանէն յարժամ առնէր աստուած զարարածս, յետուստ արար զմարդն՝ յերևոյթ և յանեռևոյթ իւրոյ զօրութեանցն ի մի և նոյն ժողովեալ. և այսպէս զամենայն ի նոյն պնդեալ ձուլեաց զարարածս, զոր և ըստ նմանութեան պատկերի կերպարանաց իւրոց արար. և եդ զնա իշխան անձնիշխան իւրոց կամաց: Վասն որոյ նախանձու սատանայի ապականեալք ճնացան ի բանսարկութիւն խարդախութեան պատրանացն: Իսկ տէր եկն յայց ելեալ կորստականին, ծնաւ ի կուսէն ի մարդկան կերպարանս, զի արասցէ խաղաղութիւն յերկինս և յերկրի, և ածցէ զիւր հայրն ծնօղ ի հաշտութիւն ընդ արարածս իւր՝ մարդակերպ պատկերաւն, զի յանդիման լիցին ամենայն մեծաձայն մեծաձայն արարածքն աներևոյթն աստուծոյ:

Ապա յիրաւի ուրեմն ի նորոգման արարածոց, զամենայն վերստին նորոգէ, զի եթէ իցէ ոք ի Քրիստոս, նոր արարած: Զի այն, որ հինն էր, էանց. արդ ահասիկ եղև նոր ամենայն. զի եկն էառ զմարդկան կերպարանս, և ինքեամբ դարձեալ զամենայն նորոգեալ հաստատեաց: Ինքն եղև օրինակ մերոյ կենդանութեանս, անդրանիկ ամենայնի մեռելոցն՝ մեռանելովն. և նախ ի մեռելոցն յարութեամբն, զի յայտնի արասցէ ինքեամբ զամենայն. զի զմեզ առանց փոխման արասցէ հոգւով, և անմահ մարմնով. զի մի՛ միայն մարդիկ յանփոփոխումն հոգւոյն կացեսցուք, այլ յանմահութիւն մարմնոյն. զի և անեռևոյթքն դարձեալ և բանաւոր զօրութիւնքն ամենայն անփոփոխմանս այսմիկ ընդ մեզ ակն կալցին: «Քանզի ամենայն արարածք ազատեսցին ի ծառայութենէ անտի ապականութեան յազատութիւն փառաց Որդւոյն աստուծոյ»: Զի առ այն, ասեն, որ ի մէնջ ի կուսէ անտի մարդ ծնաւ աստուածն, որ մեծ աստի առ ժամայն ի հաստատութենէն բօթափեալք, և հանդերձեալ ժամանակին ի լաւագոյնսն հասեալք ամենեքին, հայեցեալք սպասեալք ակն ունիմք ի սկզբանէն յարարիչն և յառաջնորդն նորոգ արարածոց: Քանզի ծնունդ և կերպարանք է նա անեռևոյթին աստուածոյ, միածին ծնունդ Հօր, արարիչ ամենայն արարածոց. ուստի և զհանգամանսն բարգմանեալ, ածէ թափէ Առաքեալ միանգամայն և ասէ՝

կատարյալ միածին ծնունդ, նույնանման զուգակից, անվանակից և արարչակից. նա նրա սիրո համար սիրեց և մեզ: Մեր նկատմամբ (տածած) սիրո համար նա հորից ուղարկվեց սուրբ կույս Մարիամի մոտ և այն կնոջից երևան եկավ իբրև մարդ: Նա էությամբ նման էր իր ծնողին և բնականորեն ուներ իր նոր բուն կերպարանքը ու մարմնով մեզ համար իր կամքով ծառայի կերպարանքով հանդես եկավ: Եվ որովհետև մարդիկ ինքնակամ մտան ծառայության մեջ, ուստի ինքը ծառայի կերպարանքով տեր դարձավ, որպեսզի մեզ ծառայությունից ազատի: Երբ աստված սկզբում ստեղծում էր արարածներ, հետո ստեղծեց մարդուն՝ իր աներևույթ և երևացող զորություններով ի մի հավաքելով. և այսպես ամեն ինչ նույն ձևով հաստատելով համախմբեց արարածներին (և մարդուն), որին ստեղծեց իր պատկերի ու կերպարանքի համաձայն և նրան դարձրեց իր կամքի տերը: Սակայն սատանայի նախանձով, խաբեական խարդախ բանսարկությամբ (մարդը) փչացավ: Իսկ տերը եկավ խղճալու կորչողին, ծնվեց կույսից մարդու կերպարանքով, որպեսզի երկնքում ու երկրում խաղաղություն հաստատի և իր ծնող հորը հաշտեցնի նրա մարդակերպ պատկերն ունեցող արարածների հետ, որպեսզի բոլոր մեծաձայն արարածները ներկայանան աներևույթ աստծուն, ուստի իրավացիորեն արարածներին նորոգելիս բոլորին կրկին նորոգում է, որպեսզի ով հավատա Քրիստոսին, նորոգված արարած լինի. ինչ հին էր, անցավ, իսկ այժմ ահա ամեն ինչ նորոգվեց, որովհետև (Քրիստոսը) մարդկանց կերպարանքի առավ և իրենով դարձյալ ամեն բան նորոգեց, հաստատեց: Ինքն եղավ մեր կենդանության օրինակը, մեռնելով դարձավ բոլոր մեռելներից անդրանիկը և իր հարությամբ առաջինը, որ իրենով ամեն ինչ հայտնի դարձավ, որպեսզի մեռ ստեղծի անփոփոխ հոգով ու անմահ մարմնով, որպեսզի մենք՝ մարդիկս, միմիայն հոգու անփոփոխությամբ չապրենք, այլև՝ մարմնի անմահությամբ, որ բոլոր աներևույթ ու բանական զորությունները մեզ հետ նույն ունենան այս անփոփոխությանը. «Որովհետև բոլոր արարածները կազատվեն ապականության ենթարկվելուց՝ աստծու որդու փառքի ազատության համար»: Նրա համար,— ասում են,— այն կույսից, որ մեզնից էր, աստված ծնվեց իբրև մարդ, որ մենք այս աշխարհի այժմյան կյանքից ազատվելով՝ ամենս հանդերձյալ կյանքի լավ բաներին հասնելով՝ սկզբից հուսալով նայում ենք արարչին՝ նոր արարածների առաջնորդին: Նա աներևույթ աստծու ծնունդն ու կերպարանքն է, նոր միածին ծնունդը և բոլոր արարածների արարիչը: Այստեղից էլ առաքյալը հանգամանքները վերարտադրելով՝ միաժամանակ ասում է՝

թէ «Նովաւ հաստատեցան ամենայն որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, եթէ երեւելիք և եթէ աներեւոյթք, եթէ աթոռ, եթէ տէրութիւնք, եթէ իշխանութիւնք, եթէ պետութիւնք, եթէ զօրութիւնք»: Եւ խոնարհագոյն յայտնագոյն առնէր զասացեալսն. «Զի ինքն է անդրանիկ ի մեռելոց զի եղիցի յամենայնի ինքն յառաջացեալ. զի նմա հաճեցաւ ամենայն լրութիւն բնակել, և կամ նովաւ կատարել զամենայն, զի առասցէ խաղաղութիւն արեամբ խաչին իւրով, նովաւ այն որ ինչ յերկինս, և որ ինչ յերկրի»: Զի չարչարանօք տեառն Քրիստոսի միածնի Որդւոյն աստուծոյ, ամենայն ի նոյն ժողովեցաւ որ յերկինս և որ յերկրի:

Քանզի մեծութիւն աստուծոյ արար զամենայն, և կացոյց զմարդն տէր ամենայնի. հրամայեաց և բազմացան: Ապա կացոյց իշխանս և կարգեաց առաջնորդս: Իսկ յորժամ ի պատուիրանաւանդութիւնն գործեցին առ գամ մի, անկան յիշխանութենէ, զոր առնալ յառաջն ունէին: Իսկ յերկրորդին՝ լոկ միայն վասն կարօտութեանն պիտոյից ետ իմիք իշխել, և իմիք չիշխել. զի գոնեա ապա յետոյ յետուստ իշխելովն ծանիցուք զշնորհն, և չիշխելովն զամենատեառնն տէրութիւնն գիտասցուք: Իսկ ո՞վ իցէ, որ ոչ ցանգանայ մեծութեանն և կամ մարմնոյ առողջութեանն, և կամ կամարարութեանն կարօտիցի, որ միայն միում միածնի Որդւոյն աստուծոյ վայել է: Իսկ մարդկանն, ոչ առ ամենեսին մեծութիւնն, և ոչ առ բնաւ աղքատութիւնն և ոչ միշտ մեծք, և ոչ ի սպառ աղքատք, կամաւ մեծացեալք և կամաւ աղքատացեալք: Ոմանց ծնեալ, և ոչ սնուցեալ. ի չափ հասուցեալ, և անարգեալ բշնամանօք: Ո՞վ իցէ, որ սիրեաց զհիւանդութիւնն և ատեաց զառողջութիւնս. յամենայնի պակասեալք, և ոչ կարօտեալք: Կէսք ի կռապաշտութեան և ի սպանութիւնս, ի պոռնկութեան և ի բազմազգի չարիք կաշկանդեալք զմածեալ կան. կէսք մոլորեալք և դանդաչունս մոք բնդ պատահարօք[18] կապեն զամենայն, եթէ զբարի և եթէ զչար:

Իսկ յոյս արեգական արդարութեան զլուսաւորութիւն հաւատոցն ծագէ, և զմէգ տգիտութենէն խաւարին սևութեամբն ճալածէ, նոքա ճանապազ յանդիմանեն զստութիւնս և զմոլորութիւնս: Եւ նախ իբրև գործովք և օրինակ բարեաց յանձինս ցուցանելով, և ապա զայլս ուսուցանելով զնոյն. նախ ոչ երկմտելով ի հաւատոցն յերորդութենէն զօրութեան արարչութենէն, և ապա զանձինս սրբութեամբ և զգաստութեամբ և պարկեշտութեամբ պահել յաշխարհէ: Եւ կեալ ամենայն հանդարտութեամբ ըստ կամացն Քրիստոսի, մերոյ արարչին, Որդւոյն աստուծոյ. և արհամարհել կոխել զամենայն անցաւոս, և վերամբարձ ի բես սուրբ Հոգւոյն թոչել անցանել ի վերայ ազբախումբ զօրութեանցըս՝ որ աստէն առ մեւ պատաղիչք. և այնչափ խորշել և մերժել և

«Նրանով հաստատվեցին այն բոլորը, ինչ որ երկնքում ու երկրում են. թե երևացողները, թե աներևույթները, թե տերություններն ու իշխանությունները, թե զորությունները»: Եվ էլ ավելի հետո պարզում ասածները. «Մեռելներից ինքը եղավ անդրանիկը, որ ամենի մեջ ինքն առաջացած լինի, որովհետև նրան հաճելի եղավ ամենուրեք լրիվ բնակվելը և նրանով ամեն ինչ կատարելը, որ խաղաղություն հաստատի իր խաչով ու արյունով. նրանով է այն, ինչ երկնքում և երկրում է»: Որովհետև աստծու միածին որդի տեր Քրիստոսի չարչարանքներով երկնքում ու երկրում եղած ամեն բան ի մի հավաքվեց. որովհետև աստծու մեծությունն ստեղծեց ամեն ինչ և մարդուն դարձրեց ամեն ինչի տերը. հրամայեց, և բազմացան: Ապա իշխաններ նշանակեց և առաջնորդներ կարգեց: Իսկ երբ մի անգամ պատվիրանազանց եղան, իշխանությունից զրկվեցին, որ ստացել և առաջուց ունեին ու երկրորդ անգամ միայն կարիքների համար թույլ տվեց ոմանց իշխել, ոմանց չիշխել, որպեսզի գոնե հետո իշխելով ճանաչենք շնորհը և չիշխելով ամենատիրով իշխանությունը գիտակցենք: Իսկ ո՞վ է, որ չի ձգտում մեծության, մարմնի առողջության և կամ կարիք չզգա կամակատարության, որ վայել է միայն աստծու միածին որդուն, իսկ բոլոր մարդկանց հավասարապես հատուկ չէ ո՛չ մեծությունը և ոչ էլ բուն աղքատությունը: Ոմանք ծրնվում են, բայց չեն սնվում, չափահաս են դառնվում անարգվելով հայհոյանքներով: Ո՞վ է, որ սիրում է հիվանդությունը և ատում առողջությունը, ամեն բանի պակասություն ունի, բայց չի կարոտում: Մի մասը կռապաշտության ու սպանության մեջ, մի մասը պոռնկության ու բազմատեսակ չարիքների մեջ կաշկանդված, կպած են մնացել. ոմանք մոլորված, ցնորական մտքերով, խաբեությամբ կաշկանդում են ամեն ինչ, թե՛ բարին, թե՛ չարը:

Իսկ որոնց վրա արդար արեգակը սփռում է իր հավատի լույսը և ցրում խավարի, տգիտության սև մառախուղը, նրանք մշտապես անարգում են սուտն ու մոլորությունը՝ նախ իրենց գործերով ու բարի օրինակով և ապա ուրիշներին նույնը սովորեցնելով, նախ չկասկածելով արարչության զորության երրորդության հավատին, ապա սրբությամբ, զգաստությամբ և պարկեշտությամբ իրենց աշխարհիկ բաներից զերծ պահելով, ապրում են լրիվ հանգստությամբ մեր արարիչ աստծու որդի Քրիստոսի կամքով և արհամարհում, ոտնատակ են տալիս բոլոր անցավոր բաները և սուրբ հոգու թևերով բարձրացած թռչում են, անցնում խաժամուժ խմբերի վրայով, որոնք այս աշխարհում, մեր օրերում խանգարիչներ են: Նրանք խորշելով մերժում են անհարկի բաները

յանպիտոյիցս, մինչև զկերակուրս առնուն ոճկին առհամարհել, քող թէ զմիս կամ զգինի ճաշակել, որ զնախճամէջ պարտ յուղացուցեալ մանկացուցանէ և զնարպն և զերիկամամիսն պատեալ. ուստի բոյր և ազգի ազգի ելանեն անթիւ անօրէնութիւնն: Որ տայ այնպիսեացն, որ զայն սիրեն, ապա գնալն ըստ կամս անձանց իւրեանց:

Այլ մեզ ընդ այսր լիցի վայել ի շնորհս մարդասիրութեանն, յոր ամենայն ազգ և ազինք խոստովանին զտէր Յիսուս Քրիստոս ծնեալ ի Հօրէ, ծնեալ և ոչ արարեալ, իսկակից հօր և բնակից ծնօղին իւրում. ծագումն, լոյս փառաց Հօր, կերպարանակից իւրոյ ծնօղին: Եւ որոց իցեն աչք մտաց, և չեն կուրացեալ ի հաւատոցն եշմարտութենէն, նոցա նայելիս ցուցանէ, որոց ամենայն կողմանէն հայելիք են: Լի լուսով նորա է ամենայն երկինք և երկիր և ամենայն աշխարհ, և ամենեցուն լսելիս որոշի՝ որ ամենայնիւն լսելիք են. և ամենայն ծածկեալ սրտից և խորհրդոց մտանեն ի լսելիս նորա, և զնեէ զամենայն շունչս մարմնոյ: Եւ իւրովք կամօք երեեցաւ մարմնով հասակաւ անձամբ կերպարանօք և պատկերաւ, գթութիւնն իւր արարին. և որ սիրեն զնա, սէրն իւրեանց կերպարանէ զնա ի սիրտս իւրեանց, և երկիր պագանեն նմա ճոգւովն եշմարտութեամբ. արբեալ զսիրտս իւրեանց և զմարմինս իւրեանց, առնեն տաճար սուրբ Հոգւոյն. և հաղորդ և հաւասարորդ և բաժանորդ առնին մեր երանութեանս, զոր եռն տէր և ասէ՝ եթէ «Ուրանի՛ որ հաւատայցեն եշմարտութեանն». եթէ «Որ եռնս զիս, եռնս զՀայրն իմ». և եթէ «Ուրանի՛ որ ոչն տեսին զիս, և հաւատասցեն յիս. զի եռա զՀայր տեսցեն»: Եւ միտ՝ որ յաստուածտեսութենէն հաւատոցն անմասն եղեալ են, ի կերպարանացն թափուր և ունայն իրն ախերակի[19]:

Իսկ որ լուսաւորեալ են տեսանելեաց աներեւոյթ սրտին աչօք, որպէս ասէ մարգարէն. «Ի բեզ ասաց սիրտ իմ, և խնդրեցին երեսք իմ զերեսս քո». դարձեալ ասէ. «Ընդ զտէր առաջի իմ յամենայն ժամ, զի էր ընդ աջմէ իմմէ, զի մի՛ սասանեցայց». և դարձեալ ասէ. «Ուրախ եղէց յուրախութիւն երեսաց քոց»: Որ այժմ ի ծածուկ լուսաւորութենէն խորհրդովքն տեսանէին զնա ըստ նորա կամացն, ապա ի վաղճանի դէմ յանդիման երեսցի. որպէս երանելի Առաքեալն Պօղոս ասէ՝ եթէ այժմ ընդ հայելի օրինակաւ տեսանեմք, իսկ յապա առ յապա յորժամ գայցէ՝ բերիցէ իմն տալ մեզ զիւրոց փառացն զանմահութիւնն և զանեղծութիւն. և յորժամ առանց նմանութեանցն և առակացն գայցէ երեեալ Որդի Հօր և սուրբ Հոգւովն, յորժամ հրամայեսցեն ամենեցուն՝ եկեալ անմահութեամբքն՝ որ զաստուածն տեսանիցեն առաւել առ բազմացն արժանեացն ակնկալութեամբ, կամի երեեցուցանել զփառաւոր զգա-

յն աստիճան, որ մինչև անգամ օրվա կերակուրը, ապրուստը արհամարհում են, ո՞ւր մնաց, թե միսը կամ գինին ճաշակեն, որոնք որովայնը պարուրում ու երիկամները ճարպով պատում են. դրանից բազմատեսակ անօրինություններ են ծագում: Դրանք տրվում են այնպիսիներին, որոնք սիրում և վարվում են ըստ իրենց կամքի: Դրա փոխարեն մենք վայելենք շնորհները մարդասիրական բարեբարության, որով բոլոր ժողովուրդներն ու ցեղերը հավատում են հորից ծնված տեր Հիսուս Քրիստոսին՝ ծնվա՛ծ և ոչ ստեղծված, որը էակից ու բնակից է իր հորը՝ ծնողին: Նա հոր փառքի լույսի սփռումն է, կերպարանքով նման իր ծնողին: Որոնց մտքի աչք ունեն և ճշմարիտ հավատից կուրացած չեն, նրանց նայելու բաներ է ցույց տալիս, որոնք կան նրանց բոլոր կողմերում: Նրա լույսով են լցված երկինքը, երկիրը և ամբողջ տիեզերքը: Բոլորի համար լսելու բաներ է սահմանում, որ ամեն բանով լսվում են: Սրտերի և մտքերի բոլոր գաղտնիքները թափանցում են նրա ականջները, և նա զննում է մարմնի ամբողջ շունչն ու հոգին: Նա կամովին հայտնվեց մարմնով, հասակով, կերպարանքով ու պատկերով: Իր գթություններն ստեղծեցին: Նրան սիրողների սրտում այդ սերը կերպարանում է նրան: Նրանք երկրպագում են նրան ճշմարիտ հոգով. մարելով իրենց սրտերն ու մարմինները՝ տաճար են շինում սուրբ հոգու համար և հավասարապես հաղորդակից են դառնում մեր երանությանը, որը տերը տվեց և ասաց. «Ուրանի նրանց, որոնք հավատում են ճշմարտությանը», կամ՝ «Նրան, ով տեսավ ինձ և իմ հորը» կամ՝ «Ուրանի նրանց, որոնք չտեսան ինձ, բայց հավատում են ինձ, որովհետև հոգով են տեսնում»: Եվ այն մտքերը, որոնք աստվածային հավատը չեն ճանաչում, կերպարանքից զուրկ են, դատարկ, ինչպես ավերակ, իսկ հավատացյալները լուսավորված են սրտի աներևույթ աչքերով, ինչպես ասում է մարգարեն՝ «Քեզ ասաց իմ սիրտը, իսկ իմ դեմքը որոնեց քո դեմքը». կրկին ասում է՝ «Ուրախ եղէց սիրտս իմ առաջ ամեն ժամանակ, որ իմ աչ կողմում էր, որպեսզի չսասանվեմ». և կրկին ասում է՝ «Քո դեմքի ուրախությամբ ուրախ կլինեմ»: Որոնք այժմ հավատի աներեւույթ լույսով ըստ նրա կամքի տեսնում եմ նրան, մեռնելիս դեմ հանդիման կերևա, ինչպես երանելի Պողոս առաքյալն է ասում, թե այժմ տեսանելի օրինակով ենք տեսնում, հետագայում, երբ կգա, իրեն կբերի մեզ տալու իր փառքի անմահություններն ու անաղարտությունը: Երբ ոչ ըստ օրինակների ու խոսքերի գա ու հայտնվի հոր որդին, սուրբ հոգով, հրամայի, որ գան անմահությամբ աստծուն տեսնելու նրանք, որոնց բազմաթիվ արժանիքների ակնկալություն ունեն–կամենում է իր փառավոր գալուստը ցույց տալ, ինչպես երկար համբերողներին, հուսալով

լուսոն իւր, որպէս վասն երկայնամտութեանն համբերողացն և յուսալից սպասելոցն գայցէ երեւեալ Քրիստոս ծնունդ ատուծոյ Հօր: Որ ամենայն արդարոցն գայ պարգեւատուն վասն վկայելոյն ի հաւատոց անտի: Որոց չև ընկալեալ զաւետիսն, աստուծոյ վասն մեր լաւագոյն խորհեալ՝ զի մի՛ առանց մեր կատարեսցին: Զի եթէ ննեսցէ ոք զգիրս սուրբս, յամենայն աստուածաշունչ մատեանսն զսոյն և զաստուածեղէն յանախութիւն նոգեւոր պատգամացն գտանէ ոք. վասն զի կան պահին արդարոցն և հաւատացելոցն լուսաւորք և թագն արքայութեանն յափտենից ժամանակին, և թերահաւատիցն ժխտողացն և անհնազանդիցն ժպրհութեանն պատիժ, եարակ լինել նոցա անշէջ հրոյն յափտենից դատաստանին յանուն տեառն, յանսպառ յանսահման առանց թուոյ և առանց չափոյ ժամանակն տանջանաց գեհենին, խաւարին դատաստանին՝ որ գալոցն է:

Այլ վասն որդւոյն ոք, եթէ դու ի նշմարիտ հաւատս ուղղութեան եկեսցես, խնդրեսցուք ի տեառնէ և դիցուք զձեռս մեր ի վերայ նորա, և ասացուք՝ թէ ըստ հաւատոցն ձերոց բժշկէ զսա Քրիստոս ծնունդ աստուծոյ, և բարեմիտ ողջանդամ յարիցէ նա առաջի ոք. և հանդերձ արքայութեանն նորոգութեանն անմահութեանն յաւերժ բարեաց ևս արժանի արասցէ զձեզ: Ապա եթէ ոչ հաւատասցես, զիա՞րդ արդեւք լինիցի թողութիւն և բժշկութիւն. և կամ մեք զիա՞րդ արդեւք իշխիցեմք յանդիմանել կամ համարձակել և խնդրել, և կամ առնել աղօթս վասն այնոցիկ՝ որք բնաւ իսկ ոչ հանաչէին զտէր, զի բարկութիւնք տեառն վախճանէ զայնոսիկ՝ որք ոչ ուղղութեամբ զտէր խոստովանին. և կամ որ ոչն մարթիցէ խնդրել զնա, որք ոչ հաւատայք գիտութեան պատուիրանացն նորա, և ոչ ի միտ առնուլ զօրէնս նորա: «Զի օրէնք տեառն ամբիծ են, դարձուցանեն զոգիս. վկայութիւն տեառն հաւատարիմ է, իմաստուն առնէ զտղայս: Արդարութիւն տեառն ուրախ առնէ զսիրտս. պատուիրանք տեառն լոյս են, և լոյս տան աչաց. երկիւղ տեառն սուրբ է, և մնայ յաւիտեան: Դատաստանք տեառն ճշմարիտ են, և արդար է ի նոյն. ցանկալի է նա քան զոսկի, և քան զականս պատուականս բազումս. և քաղցր է նա քան զմեղու խորիսխ»: Իսկ որոց զանձինս իւրեանց յապականութիւն տուեալ, և նիւթ հրոյ պահէ զնոսա: «Ոչ են բանք և ոչ են խօսք, որոց ոչ լսին ձայնք նոցա. այլ նոցա ընդ ամենայն երկիր ել բարբառն, և մինչև ի ծագս տիեզերաց են խօսք նոցա»: Իսկ որք ոչն լսենն, և որք լսենն, պահէ նոցա տէր գիատուցումն նորա:

Զայս ամենայն բանս, և որ ինչ այսմ և սմին ինչ նման էին բանք, խօսեցաւ սուրբն Ներսէս ընդ կայսերն. և զայն յաւել՝ եթէ յորէ յայսպատողներին, կգա և կենայտնվի նոր՝ աստծու ծնունդ Քրիստոսը, որը գալիս է պարգև տալու արդարներին՝ հավատի պատճառով նահատակվելու համար: Իսկ որոնք որ դեռ չեն ընդունել հավատը, աստված բարվոք մտածեց, որ նրանք էլ առանց մեզ հետ լինելու չմեռնեն: Քանի որ եթե մեկը ուսումնասիրի սուրբ գրքերը ամբողջ Աստվածաշունչ մատյաններում, այսպիսի շատ պատգամներ կգտնի. արդարների և հավատացյալների համար հավիտենապես պահվում են լուսատուներ ու արքայության թագեր, իսկ թերահավատների, մերժողների, անհնազանդների համար՝ դաժան պատիժներ, որոնք հարակ կլինեն հավիտենական դատաստանի անշեջ կրակին՝ հանուն տիրոջ, անսպառ անսահման, անթիվ, անշափ ժամանակ (կենքարկվեն) գեհենի տանջանքներին, խավար դատաստանին, որ գալու է:

Իսկ ինչ վերաբերում է որդուն, երբ դու նշմարիտ ուղղափառ հավատի դառնաս՝ մենք տերից կխնդրենք, մեր ձեռքը նրա վրա կդնենք և կասենք.—ձեր հավատի համաձայն բժշկում է սրան Քրիստոս, աստծու ծնունդը, և նա ողջ առողջ վեր կկենա կկանգնի որ առաջ, և ուրիշ շատ բարիքների էլ ձեզ կարժանացնե և հավիտենական նորոգ կյանքի արքայության կհասցնե:

Իսկ եթե չես հավատա՝ ի՞նչպես կարող է թողություն ու բժշկություն լինել, և կամ մենք ի՞նչպես կհամարձակինք նրա առաջ դուրս գալ, խնդրել և աղոթք անել այնպիսիների համար, որոնք բնավ չեն ճանաչում տիրոջը, որովհետև տիրոջ բարկությունը սպասում է նրանց, որոնք տիրոջը ուղիղ չեն խոստովանում: Դուք էլ չեք կարողանա խընդրել, քանի որ չեք հավատում և չեք ուզում գիտնալ նրա պատվիրանները, չեք հասկանում նրա օրենքները, «որովհետև տիրոջ օրենքներն անբիծ են, հոգիները ետ են դարձնում. տիրոջ վկայությունը հաստատուն է և երեխաներին իմաստնացնում է: Տիրոջ արդարությունը սրտերն ուրախացնում է. տիրոջ պատվիրանները լույս են և աչերին լույս են տալիս, տիրոջ երկյուղը սուրբ է և հավիտյան կմնա: Տիրոջ դատաստանը ճշմարիտ է և արդար. նա ավելի ցանկալի է քան ոսկին և շատ թանկագին քարեր, ավելի քաղցր է քան մեղրի խորիսխը»: Իսկ որոնք որ ապականության անձնատուր են լինում՝ նրանց (տերը) պահում է ինչպես կրակի նյութ: «Չկան բառեր ու խոսքեր, որոնց ձայները չլսվի, իսկ նրանց ձայները ամբողջ երկրում տարածվեց, որոնց խոսքերը մինչև տիեզերքի ծայրերը հասան»: Իսկ որոնք որ չեն լսում և որոնք որ լսում են՝ նրանց համար տերը պահում է հատուցում»:

Բոլոր այս խոսքերը և սրանց նման էլի ուրիշ խոսքեր խոսեց սուրբ Ներսեսը հայսեր հետ. այն էլ ավելացրեց, թե «այս օրվանից հաշված

մանէ ինչ յատուս ննգետասան վասն ողորմածութեան բարերարութեանն վասն ներելոյն անսացեալ էեզ, կէտ ժամանակաց այնչափ աւուրց անսացեալ էեզ, եթէ ոչ ուղիղ եկեսցես ի հաւատոն, նշան էեզ այս լիցի. որ մինչև յայն օր ի հաւատոն ոչ հաստատեսցիս, յետ լինոյ եդեալ կիտին՝ մեռցի մանուկն. զի գիտասցես եթէ հաւատարիմ է այս ամենայն, զոր խոսեցայ առաջի ֆո:

Եւ իբրև լուաւ թագաւորն զայս ամենայն, զի մինչ դեռ խոսէրն առաջի նորա՝ նա լուռ ևեթ կայր, ոտն զոտամբ արկեալ, արմունկն ի ծնունդ և ձեռն ի ծնօտի՝ նստաւ այնպէս, մինչև կատարեաց խոսեցաւ զամենայն զբանս իւր: Եւ գրէին զայս սեմիարէ նոտարացի արեային, որէ կային առաջի թագաւորին: Ապա մեծապէս ի ցասումն բդեալ լինէր թագաւորն, և տայր հրաման՝ երկաթի կապանօք մեծապէս կապել զսուրբ եպիսկոպոսապետն Հայոց զՆերսէս և արկանել ի փիւղակէ. զի մինչև տեսեալ ուշ ունիցի մանգանն, եթէ կեցցէ՞ եթէ ոչ. ապա յետ այնորիկ տեսցէ զինչ արժան իցէ առնել: Ապա յետ լնուլ աւուրցն ննգետասանից անցելոցն, սատակեցաւ մանուկն որդի կայսերն. և ընդ ամենայն այն ժառանգ գտանէր նորա: Իբրև ելաց և կոծեցաւ որչափ կոծեալն էր, ապա ետ հրաման և ածին առաջի իւր զսուրբն Ներսէս: Ոմն առ իննն կոչեալ հարցանէր, եթէ ի ձէ՞նջ հրեշտոնէից եղև մանկանն մեռանել: Իսկ նա ետ պատասխանի, և ասէ. Հնգետասան օր յետ բանիցն եղելոյ երկարեաց Քրիստոս, թերևս դարձցիմ. իսկ իբրև ոչ դարձայմ, սատակեցայմ: Իսկ դու այժմ եթէ հաւատասցես, կարող է Որդին ասուածոյ Յիսուս Քրիստոս յարուցանել զնա, և հանդերձ արդւովն fո և ամենայն ընդանեօն:

Ապա զայրացեալ ընդ բանսն թագաւորն, կամեցաւ զնա չարամահ առնել. ապա մատուցեալմ առ թագաւորն աւագ իւրոյ դրանն և խորհրդականմ, և ասեն ցկայսրն՝ եթէ յօտար և ի հեռաստան երկրէ վասն որոյ յղեալ զդոսա հզօր թագաւորի, և մեծի տեառն հրեշտակմ են, մի՛ ինչ լիցի դոցա վնաս ի մէնջ. եթէ ոչ, մեծ պատերազմ յառնելոց է ընդ մեզ և ընդ մեծ թագաւորն Հայոց, և մեծ թշնամութիւն ի մէջ անգանելոց է. զի ոչ եթէ նորա բանիւ մանուկն կեայր կամ մեռանէր: Եւ թէպետ այսպիսի բազում ինչ ասէին, ոչ կարէին զսրտմտութիւն բարկութեանն շիջուցանել զթագաւորի:

Ապա իբրև յանհնարին մտանէին իրն, և պեղեալ յամառէին ամենայն բազմութիւնն՝ զի մի՛ զայրն սպանցէ, ապա ուրեմն հազիւ հազիւ կարացին իւր զօրն ի հաւան ածել զթագաւորն. այնչափ առնել, գոնեա մի՛ սպանցէ: Բայց սակայն արձակել տալ ոչ կարացին. այլ արկին յայն չափս, զի ախտեսցի միայն: Զի այսպէս մեծապէս ճգնեալ խոր-

մինչև տասնևհինգ օր (տերը) իր ողորմածության ու բարերարության պատճառով ներողամտաբար կսպասե, այսման օր էեզ ժամանակ կտա, կնամբերե, որպեսզի ուղիղ հավատի գաս: Սա էեզ նշան լինի, որ եթե մինչև այն օրը հավատի մեջ չհաստատվիս՝ ժամկետը լրանալուց հետո երեխան կմեռնի, որպեսզի համոզվիս, որ ինչ որ էեզ ետո խոսեցա՝ նշմարիտ է»[83]:

Մինչ նա այս բաները խոսում էր՝ թագավորը բոլորը լուռ լսում էր, ոտը ոտի վրա ձգած, արմունկը ծնկանը, ձեռը ծնոտին. այսպես նստած լսում էր՝ մինչև նա բոլորը խոսեց. (նրա խոսածները) գրում էին թագավորի արագագիր քարտուղարները, որ թագավորի առաջ կանգնած էին: Ապա թագավորը մեծապես զայրացավ. հրաման տվեց երկաթե կապանքներով պինդ կապել Հայոց եպիսկոպոսապետ սուրբ Ներսեսին և բանտը տանել պահել և ուշադիր լինել երեխային, արդյոք կապրի՞ թե ոչ, որից հետո կտեսնե թե ի՞նչ պետ է անել: Տասն և հինգ օրը լրանալիս երեխան մեռավ, կայսեր որդին, որ նրա մեկ հատիկ ժառանգն էր: Երբ (թագավորը) նրան լացեց ու կոծ արավ որքան պետ էր կոծել, ապա հրաման տվեց և սուրբ Ներսեսին բերին նրա առաջ: Նրան մոտ կանչեց ու հարցրեց. «Դուք՝ քրիստոնյանե՞րդ նրա պատճառ երեխայի մահվան»: Իսկ նա պատասխան տվեց. «Իմ խոսածներից հետո Քրիստոս տասն և հինգ օր հետածգեց (մահը), գուցե դառնամ: Բայց դուք չդարձամ, մեռամ: Դեռ այժմ էլ, եթե հավատաս՝ Հիսուս Քրիստոս աստծու որդին կարող է նրան կենդանացնել, որդիդ և բոլոր ընտանիդ»:

Թագավորը այս խոսքերի վրա զայրանալով կամեցավ նրան չարաչար մահով սպանել: Բայց թագավորի մոտ եկան պալատի ավագներն ու խորհրդականները և կայսրին ասացին. «դրանք օտար ու հեռավոր երկրից գործի համար ուղարկված են մի հզոր թագավորի կողմից. դրանք մեծ տիրոջ պատգամավորներ են. մեր կողմից նրանց վնաս չպիտի հասնի, եթե ոչ՝ մեծ պատերազմ կծագի մեր և Հայոց մեծ թագավորի միջև, մեծ թշնամություն կընկնի. երեխայի սպրելը կամ մեռնելը դրա խոսքից չէր կախված»: Թեպետ շատ այսպիսի բաներ էին ասում, բայց չէին կարողանում թագավորի բարկությունն ու զայրույքը զիջեցնել:

Բանը շատ դժվար տեղը հասավ. բոլոր բազմությունը համառորեն պնդում էին, որ չսպանե (Ներսեսին). վերջապես հազիվ հազ կարողացան թագավորին համոզել, որ գոնե նրան չսպանե: Բայց չկարողացան այնպես անել որ ազատ արձակե, այսման միայն աչողեցրին, որ միայն ախտվի: Որովհետև իմաստուն (խորհրդականները) երկար մտածե-

ենեցան իմաստուներն, զի առ գամ միայն աֆսորելովն ապրեսցի, գոնեա ապա առ յապա դարձ լիցի առնն, զի մի՛ ի խռովութիւն և ի պատերազմ ի մէջ թագաւորութեանցն երկուցուց լինիցի: Զի ասէին. Ոչ երբէք ուրեմն եղեալ է, և ոչ ի մէջ բշնամեաց ուրեմն, և ոչ ի մէջ պատերազմի բարամատար նրեշտակաց ինչ կալևկապ և ոչ բանեմն, թող թէ մանուկ. զի ոչ երբէք ուրեմն ի ննոց ժամանակաց հետէ, թող թէ այր մեծ և ուսուցող և աշխարհի միոյ գլուխ: Զի թագաւորն դոցա աշխարհին և դա, որպէս ասեն, ընդ մի համար են. և ասեն՝ թէ աշխարհն այն, ուստի դոքա եկեալ են, սիրեն զայրդ. և երեելի է դա անդ: Եւ որպէս ետուն գրոյց որ ընդ նմա եկեալ էին, թէ ազգակից համարին զսա և մերձաւոր թագաւորին. և իւրեանց աշխարհն սիրեն զայրդ զայդ:

Իսկ թագաւորն տայր նոցա պատասխանի. Բարիոք ասացէք՝ եթէ այդ այդպէս իցէ, ով արդ իմաստուն. զի եթէ տէր նորա տուեալ էր ինձ ի ձեռն նորա զանարգութեան բշնամանս, ոչ գոյր նորա մեղ դնել բամբերին, և ոչ պատիժ և ոչ բանի: Իսկ նա իւրովի կամօք բշնամանեաց զիս, և իւրովի կամօք եղև երաշխաւոր մանուն որդւոյն իմոյ. և ասաց՝ բայց ես իսկ սպանի զնա: Իսկ եթէ նորա թագաւորն զնա առ սէր յղեաց, նա եկն կոտորել զմեզ, վասն այսորիկ առ իւր թագաւորն իսկ է վնասակար: Բայց փոխանակ զի ինքն անձամբ զանձն իւր կալաւ, պարտ ինչ է այնմ իմիք. ես ինձէն գիտեմ թէ չեղև ի նմանէ, մանաւանդ պարտ է:

Ապա ոչ ինչ անսաց նոցա թագաւորն, այլ նրամանեաց առնուլ զերեանելին Ներսէս, և տանել ընկենուլ զնա ի կողի մի ի ծովուն մեծի, յայնպիսի յանապատ տեղի՝ ուր ոչ մարդ կայցէ և ոչ ջուր ըմպելոյ, և ոչ կերակուր, բայց սոսկ միայն անապատ իցէ, զի սովամահ սատակեսցէ զնա: Եւ ժողովեալ զամենայն իւրոյ իշխանութեանն խաղաց զամենայն որթոդոքս զեպիսկոպոսս զերիցուս զսարկաւագունս, որ միանգամ յուղղութեանն էին և ի հաւատս. և մեծ ժողով առ հասարակ իշխանութեանն ժողովեցան: Եւ խօսէր ընդ նոսա, զի ամենեքեան յանձն առցեն դառնալ ի խոտորութեան հաւատոն աղանդութեանն արիանոսաց, և դարձցին անդրէն երթալով յիւրաքանչիւր վիճակս, և շրջեսցեն զիւրաքանչիւր ժողովուրդս յարիանոսաց հաւատն: Իսկ իբրև ոչ ոք ի նոցանէն յայսմիկ յանձն առնուլ հաւանեցան, ապա աֆսորեաց զնոսա, և ընկէց յաշխարհս օտարս, զի մի՛ ոք ի նոցանէն դարձցի յիւր տեղիս: Եւ փոխանակ նոցա՝ զանօրէնութեան հովիւսն կացուցանէր, յամենայն հաղաս արիանոսս չեպիսկոպոսս յղէր. և եղև մեծ շարժումն և խռովութիւն և ներքնածայն եկեղեցիս տիեզերաց:

լուց հետո այսպես գտան, որ աֆսորի միջոցով առ այժմ մահից կազատվի, իսկ ապագայում նա աֆսորից կվերադառնա, և այսպիսով երկու թագավորությունների մէջ խռովություն ու պատերազմ չի լինի: Նրանք ասում էին. «Ոչ մի տեղ եղած բան չէ, ո՛չ բշնամիների միջև և ոչ պատերազմի ժամանակ, որ թեկուզ մի հասարակ պատգամավոր կալանավորության, կապանքի և բանտի[84] ենթարկվի, ո՛ւր մնաց թե մահվան. հին ժամանակներից ի վեր երբեք և ոչ մի տեղ այսպիսի բան չի եղել. իսկ դա դեռ մեծ ու ավագ մարդ է և մի աշխարհի գլխավոր է. որովհետև, ինչպես ասում են՝ դրանց աշխարհում թագավորն ու դա մի հաշվի են. և ասում են, թե այն աշխարհում, որտեղից դրանք եկել են՝ այդ մարդուն սիրում են, նա երեելի մարդ է: Դրա հետ եկողները մեզ պատմեցին, թե դա թագավորի ազգական ու մեծավոր է, և դրանց աշխարհը դրան սիրում է»:

Իսկ թագավորը նրանց պատասխանում էր. «Դուք ճիշտ եք ասում, ո՛վ իմաստուն մարդիկ. այդ այդպես է: Եթե նրա տերը նրա միջոցով ինձ անարգանք ու նախատինք հասցներ՝ չէր կարելի նրա բանբերին մեղադրել, պատժի կամ բանտի ենթարկել, բայց նա իր սեփական կամքով ինձ բշնամություն արավ, իր կամքով իմ որդու մահվան երաշխավոր եղավ, նա ինձ ասաց թե ես ինքս նրան սպանեցի: Իսկ երբ նրա թագավորը սիրո համար նրան մեզ մոտ ուղարկեց, իսկ նա գալով մեզ կոտորեց՝ ինձ իր թագավորի առաջ էլ ենթացավոր է: Բայց որովհետև նա ինքն իր գլխի բան արավ՝ պետք է պատասխանատու լինի. նա մահապարտ է, որովհետև գիտեմ որ թագավորի կողմից չէ դրա արածը»:

Թագավորը այլևս (խորհրդականներին) չլսեց, այլ հրամայեց տվեց երանելի Ներսեսին աֆսորել, տանել ձգել մեծ ծովում մի կղզի, այնպիսի մի անապատ տեղ, ուր ո՛չ մարդ լինի, ոչ խմելու ջուր և ոչ կերակուր. լոկ մի անապատ լինի, որպեսզի սովից մեռնի:

Ապա նա իր ամբողջ իշխանության հաղարներից ժողովեց բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, հաճախներին ու սարկավագներին, որոնք ուղիղ հավատ էին դավանում: Բոլոր իշխանության տեղերից եկան, մեծ ժողով կազմեցին: Թագավորը նրանց հետ խոսեց, (և առաջարկեց) որ բոլորն էլ ընդունեն արիանոսական աղանդի սխալ դավանությունը, ապա դառնան իրենց վիճակները և իրենց ժողովուրդները դարձնեն արիանոսական հավատին: Երբ նրանցից ոչ մեկը հանձն չառավ՝ ապա բոլորին աֆսորեց և ջնջեց օտար աշխարհներ, որպեսզի նրանցից ոչ մեկը իր տեղը չդառնա, իսկ նրանց փոխարեն անօրեն դավանության հովիվներ էր նշանակում, արիանոս չեպիսկոպոսներ էր

Եւ մեծ եղև ընդ ամենայն տիեզերս փոռնուիւնք եղուբեանց վտանգի հան զառաջին թագաւորացն. ևս չար, որ ի ձեռանասացն պատերազմն և խռովութիւնքն յառաջագոյն յառնէր առ այլովք դիցապաշտ մեծենասէր թագաւորօք: Ամենայն ճշմարիտ ուղղափառ հաւատով վարդապետք մեծեցան յիւրաքանչիւր ժողովրդոց, և զնոցա տեղիսն կալան մշակք սատանայի. և ամենայն հաւատացելոց ի Քրիստոս հասանէին բազում եղուբիւնք, և առ հասարակ ամենայն ժողովրդոցն լինէր սուգ և տրտմութիւնք: Ջի կալան զեկեղեցիսն ամենայն պաշտօնեայքն սատանայի, և ձեռացան հովիւքն յիւրաքանչիւր ճօտից, և եղեն խաշինք գրուեալք. զի ոչ գոյր նոցա առաչնորդ, և ոչ մնաց տեղի աղօթից հաւատացելոց ժողովրդոց: Այլ զի մի՛ հրեշտակացն սատանայի հաւանեսցին, ճոխա ի բացատ յանչարկ տեղիս՝ արտաքս և դաղաքաց և շինաց ասէին կալ յաղօթս. և ի կատարել զաղօթսն իւրեանց՝ խնդրէին ուխտիւք յաստուածոյ, զի փոխեսցէ զանցուսցէ զչար ժամանակն, և դարձուսցէ զեշմարիտ իւրաքանչիւր վերակացուս յիւրաքանչիւր ժողովուրդսն, և յիւրեանց վաստակս ի շինեալ եկեղեցիսն՝ ուստի մերժեցանն, թերևս դարձ լիցի նոցա այսրէն:

Իսկ յայն յիշխանաց՝ որ ընդ սրբոյն Ներսէսի երթեալ էին յերկրէն Հայոց, զնոսա բազում գանձիւք լցեալ արձակէր, կաշառակուրծս կաշառեակս առնէր առ հասարակ՝ որ միայն անդ էին. և բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց ի ձեռն նոցա՝ արքային առաքէր, իբրև այնու կամէր հանել զմիտս թագաւորին: Ջի ոչ գոյր չափ և ոչ թիւ, զի անհամար գանձս առաքէր արքային Հայոց. գրէր առ նա գիր ամբաստանութեան զսրբոյն Ներսիսէ, իբրև թէ սպան զորդի նորա: Եւ արձակեաց ևս զպանդխտսն զԱրշակունիսն թագաւորին Հայոց, որ կային ևս ի կայսերական պաղատանն. զի են նոքա եղբօրորդիք արքային Արշակայ, զի միումն անուն էր Գնել, և միւսումն անուն Տիրիք, եւ ի ձեռս սատարապացն Հայոց, և զնոսա զայս օրինակ աճդուստ յուղարկէր:

Զ

ՅԱՂԱԳՍ ԵՔԷ ՋԻԱ՛ՐԴ, ԻՐԲԻ ԱՔՍՈՐԵՑԱՒ ՍՈՒՐԲՆ ՆԵՐՍԷՍ ԵՒ ԸՆԴԵՑԱՒ Ի ԿՂՋԻՆ ՅԱՆԱԳԱՏՆ, ԹԷ Ո՛ՐՔԷՍ ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ԵՐԱԿՐԵՑԱՒ, ԵՒ ԿԱՄ Ո՛ՐՔԷՍ ՅԱՍՏՈՒԱԾՈՅ ՆՂԵՆ ՍՔԱՆՉԵԼԻՔ ՋԱՄՍ ԻՆՆ

Ապա իբրև տրտմեալ թագաւորն վաղէս յարոյց հալածանս ի վերայ եկեղեցեաց սրբոց ընդ ամենայն կողմանս իւրոյ իշխանութեանն,

ուղարկում բոլոր գաղաքները: Եվ աշխարհի բոլոր եկեղեցիներում մեծ շարժում առաջ եկավ, խռովություններ ու հերձվածներ ծագեցին: Եվ բոլոր աշխարհում մեծամեծ եղողություններ, փորձություններ ու վտանգներ առաջ եկան հան նախկին թագավորների ժամանակները,— ավելի վատ՝ հան կռապաշտ մեծենասեր թագավորների ժամանակ ծագած պատերազմներում: Բոլոր եշմարիտ և ուղղափառ վարդապետները վտարվեցին իրենց ժողովուրդների մոտից, նրանց տեղերը գրավեցին սատանայի մշակները, բոլոր Քրիստոսի հավատացողներն ենթարկվեցին տեսակ-տեսակ եղողությունների, բոլոր ժողովուրդները սգի ու տրտմության մեջ ընկան: Որովհետև բոլոր եկեղեցիները գրավեցին սատանայի պաշտոնյաները, հովիվները անչատվեցին իրենց հոտերից և խաշինները գրվեցին. նրանց համար առաչնորդ չմնաց և ոչ հավատացյալ ժողովրդի համար աղոթքի տեղեր: Նրանք որպեսզի սատանայի սպասավորներին չենթարկվին՝ գաղաքներից ու գյուղերից դուրս ամայի տեղերում բաց երկնքի տակ աղոթք էին անում, և աղոթքների վերջում ուխտադրությամբ խնդրում էին աստծուց, որ այդ չար ժամանակը փոխե վերացնե, եշմարիտ առաչնորդներին դարձնե իրենց ժողովուրդների մոտ, դարձնե իրենց աշխատանքով շինված եկեղեցիները, որտեղից հալածվել էին:

Իսկ այն իշխաններին, որոնք Հայոց աշխարհից սուրբ Ներսեսի հետ գնացել էին՝ (Վաղեսը) արձակում էր՝ շատ գանձերով լիացնելով, մտածում էր բոլորին կաշառքներով կուրացնել, և նրանց ձեռքով ոսկու, արծաթի և թանկագին ակների մեծ գանձեր էր ուղարկում (Արշակ) թագավորին, նրա սիրտը առնելու համար: Թիվ ու հաշիվ չկար այն գանձերին, որ ուղարկում էր Հայոց թագավորին, և նրան ամբաստանության գիր էր գրում Ներսեսի մասին, իբրև թե նա սպանեց իր որդուն: Նաև արձակեց Հայոց թագավորի Արշակունի պատանդներին, որ կայսերական պալատում էին գտնվում, Արշակ թագավորի եղբորորդիքը, որոնցից մեկի անունն էր Գնել, մյուսինը Տիրիք: Սրանց հանձնեց Հայոց սատրապներին և այս կերպով նրանց հանապարհ ձգեց:

Է

ԹԷ ԻՆՉՊԵՍ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԱՔՍՈՐՎԵՑ ՈՒ ՉԳՎԵՑ ԱՆԱԳԱՏ ԿՂՋԻՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԵՐԱԿՐՎԵՑ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԱՍՏՎԱԾ ՍՔԱՆՉԵԼԻՔ ՅՈՒՅՑ ՏՎԵՑ ԻՆՔ ՏԱՐԻ

Երբ Վաղես թագավորը զայրանալով հալածանք բարձրացրեց բոլոր սուրբ եկեղեցիների վրա իր իշխանության բոլոր կողմերում, և

և զամենայն եպիսկոպոսս մեկնեաց եհան յիւրամանչիւր ժողովրդոց և ընգէց զնոսա յօտարութիւն, առաւելիւր նիւթեալ մեծաւ բարկութեամբ ի վերայ սրբոյն Ներսէսի. վասն զի պատճառ մահուան միամօր որդւոյն սիրելոյ իւրոյ եղև նա, ապա չարապէս չարութեամբ դառնութեամբ մահուան կամէր վճարել զնա: Որում մեծամեծիճն և ամենայն խորհրդակաճ թագաւորին չհաւանեալ չառնուին յանձն, այլ հազիւ հազիւ կարացին թափել ի մահուանէ: Ապա ետ հրաման ընգենուլ զնա ի կողքին մի մեծ ովկիանոս անագին ծովու, յանապատ յանջուր տեղի մի՝ ուր ոչ բոյս ինչ դալար, և ոչ արմատ ինչ, և ոչ այլ ինչ ամենևին՝ որ ինչ ի պէտս մարդկան լինիցի. բայց միայն ջուր և աւազ ապառաժ, և ոչ ճանապարճ ուրեք ընդ այն, և ոչ գնացք ինչ նաւաց:

Ապա անցուցին զնա ի տեղին հրամայեալ, և ընդ նմա արս եւթանասուն, որ կէսքն եպիսկոպոս էին յայլոց քաղաքաց, կէսք կղերիկոսք յայլոց եկեղեցեաց: Իսկ նա խնդայր և ուրախ էր ընդ այն, զի եհաս նմա կրել չարչարանս վասն անուան տեառն Յիսուսի Քրիստոսի Որդւոյն աստուծոյ: Եւ էին նորա այն որք ընդ նմայն ափսոսեցան յիւրոցն՝ երկու, անուն միոյն Ռաստոմ սարկաւագ, և երկրորդին՝ Տիրանամ. և այլքն եւթանասունքն որ ընդ նոսա, զորս ուստեք ուստեք ընդ նոսա ամացեալ ի նաւն՝ ի կղզին խաղացուցին: Եւ գնաց մեկնեցաւ նաւն՝ որ զնոսայն տանէր, և ըստ հողմոյն յաջողութեան ի ննգետասան օր հասանէր ի հրամայեալ տեղին. և թափեաց զնոսա նաւն ի կղզին, և իսկ այսրէն դարձաւ:

Եւ յայնմ կղզւոջ ոչ գտանէր ոչ ջուր ըմպելոյ և ոչ դոյզն ինչ արմատ, զի անարմատ, աւազ միայն էր. զի վասն այնորիկ իսկ տարեալ էր զնոսա անդր, զի սովամահ արասցեն զնոսա ըստ խստութեան թագաւորին հրամանին: Եւ եղև իբրև եհաս նոցա յամել ամսօրեայ մի ժամանակս, որ տկարագոյնքն էին ի նոսա՝ սկսան նիհոդել ծարաւել նուաղել և ներգևել դորսովել ի հաղցոյ կամ ի ծարաւոյ: Ապա մխիթարել և բաջալերել սկսաւ զամենեսեան Ներսէս, և ասէ. Պինդ կացէք, հաստատուն լերուք, և մի՛ երկնչիք. զի այն տէր մեր Յիսուս Քրիստոս՝ որ հրամայեաց ծառոյն սաբեկայ բերել զխոյն պտուղ, և ընկալաւ գԻսահակ կենդանի զոհ, և օրհնեաց զՅակոբ ի պանդխտութեան, և ապրեցոյց զՅովսէփ ի ծառայութենէն և տիրացոյց, հրամայեաց և մարենուց հրով տերևել ծաղկել, և օդոցն հրամայեաց հաղցրութեանն հացին կերակրոյ ի վերուստ ցօղել, և զլորամարգին ի թոչնոց տալ ապրուստամբող և դառնացող ժողովրդեանն, և իսկ Քրիստոս վէմ եղեալ՝ ընդ նոսա շրջէր յանապատին յանջրդին, և զհաղցրութիւն ջուրցն ի ծարաւ նոցա մատուցանէր, և խորհուրդ հանդերձելոցն՝ որ առ յապա լինելոցն էր՝

բոլոր եպիսկոպոսներին հեռացնելով իրենց ժողովուրդներից օտարության մեջ ձգեց՝ նա ավելի մեծ բարկությամբ գրգռված էր սուրբ Ներսեսի դեմ, որովհետև նրան էր համարում պատճառ իր մեկ հատիկ որդու մահվան, ուստի կամենում էր նրան չարաչար դառն մահով վախճանեցնել: Թագավորի մեծամեծներն ու խորհրդականները չհամաձայնեցին այս բանին և հազիվ հազ կարողացան նրան մահից ազատել: Այն ժամանակ նա հրաման տվեց նրան ձգել մեծ անապին օվկիանոս ծովում մի կղզի, մի անապատ անջուր տեղ, որտեղ ո՛չ դալար բույս կար, ո՛չ արմատ, և ոչ ուրիշ մի բան՝ մարդու (սնունդի) պիտանի, այլ միայն քար, ավազ, ապառաժ: Ճանապարհ էլ չկար դեպի այդ կողմը և ոչ նավերի երթևեկություն:

Նրան տարան հասցրին հրամայված տեղը և նրա հետ յոթանասուն մարդ, որոնցից կեսը եպիսկոպոսներ էին ուրիշ քաղաքներից և կեսը հոգևորականներ ուրիշ եկեղեցիներից: Իսկ նա (Ներսեսը) ուրախ էր այս բանին, որ իրան վիճակվեց չարչարանքներ կրել Հիսուս Քրիստոսի՝ աստծու որդու անվան համար: Նրա հետ ափսոսվածներից երկուսը իր մարդիկն էին. մեկի անունը Ռաստոմ սարկավագ, երկրորդինը՝ Տիրանամ. նրանց հետ եղած մյուս յոթանասունին էլ (ճանապարհին) այստեղից և այնտեղից նավը լցնելով տարան դեպի կղզին: Նավը, որ նրանց տանում էր՝ մեկնեց, աջողակ ճամբով տասնևհինգ օրում հասնում էր հրամայված տեղը: Նավը նրանց կղզին ափ հանեց և իսկը ետ դարձավ:

Այս կղզում ոչ խմելու ջուր կար և ոչ մի չնչին արմատ, որովհետև անարմատ ավազ էր միայն. հենց այս պատճառով էլ նրանց այնտեղ էին տարել, որ սովամահ անեն թագավորի խիստ հրամանի համաձայն: Երբ նրանք մի ամսաչափ ժամանակ այնտեղ մնացին՝ նրանց մեջ ավելի թույլերն սկսեցին հաղցից ու ծարավից տանջվել, տառապել, թուլանալ, նվաղել:

Այն ժամանակ Ներսեսն սկսեց բոլորին քաջալերել ու մխիթարել՝ ասելով. «Հաստատ ու պինդ մնացեք, մի՛ վախենաք, որովհետև մեր տեր Հիսուս Քրիստոսն էր, որ սաբեկա ծառին հրամայեց խոյ բերել իրեն պտուղ[85], որ Իսահակին զոհ ընդունեց կենդանույն, որ Հակոբին օրհնեց պանդխտության մեջ, որ Հովսեփին տերկութունից փրկեց ու տեր դարձրեց, որ մարենուն հրամայեց՝ կրակով տերև հանել ու ծաղկել, որ օդին հրամայեց՝ վերևից հաղցր կերակուր ցողել[86], և դառն ապստամբ ժողովրդին լորամարգի թռչուններ տվեց ուտելու, և ինքը Քրիստոս վեմ դառնալով նրանց հետ շրջում էր անջրդի անապատում. և ծարաված ժողովրդին հաղցր ջուր մատակարարում, և իրեն ապա-

գուշակէր գաւազանաւն ի ձեռն Մովսէսի, վէմն խոցեալ՝ ճոսէր ճոցա ջուր, գնոսա անդ զառաջինսն օրինակօքն կեցուցանէր, և իմն կերակրեաց ի սակաւ հացէ զժողովուրդն յանապատի անդ, և ըստ ծառոյն՝ որ գիսոյն երիւ՝ իմն գխաչէն պրկեալ կախեալ խաչեցաւ, և օրինակաւն ըստ նմանութեան ի կողոսն խոցեցաւ, և եհան մեզ անտի ջուր փրկութեան ի լուացումն սրբութեան ապաշխարութեան՝ յաղագս կենաց մերոց, և իմն վասն մեր հաց եղև, և զարիւնն իւր ըմպել ետ մեզ, զի զմարմինն ի մարմինն խառնեսցէ և արիւնն յարիւն, զի զաստուածութիւնն յոգիս մեր միացուցեալ, զմեզ ընդ սուրբ Հոգւոյն, և ի վախճանի զմեզ բնակիցս աստուածութեանն առասցէ. արդ որ այնչափ երախտիս առնէր մեզ, մինչև մեծ անգամ բանս գոհացողութեան փոխարէն չնորհս ոչ հասուցանէաք նմա, իսկ արդ գիա՞րդ վասն անուան նորա արժանի եղեալ սակաւիկ մի բշնամանաց՝ սովամահ ինչ կարծիցէք լինել: Ոչ այդպէս, այլ հաւատով խնդրեսցուք, և տացի մեզ կերակուր: Իսկ արդ նշա՞ն խընդրեմք, ոչ. այլ նշան բերանաւատից պիտոյ է, և առ գչարսն գարձուցանելոյ յաղագս. այլ մեզ, գիտէ տէր զպիտոյսն մեր և զօգտակարսն, և ըստ այնմ պատրաստէ զինչ և պիտոյ է մեզ: Իսկ մեծ ոչ այնպէս, որ ա՛ւ և մի՛ լիցի, որպէս ասացաւն. ասէ. «Ազգ չար նշան խնդրէ»: Իսկ մեզ կարևորն առանց ուրոյն ի մարդկան աղանդէն չիք ճար լինել: Իսկ տէրն կարող է և առանց կերակրոյ պահել զմեզ կենդանիս, և կարող է տալ կերակուր. և արդարացուցանել կարող է, և արժանիս առնել՝ վասն իւրոյ անուանն պատրաստել մեզ մեռանել. տալ մեզ սովորական բնդունելութիւն բնութեան մանուն, որ չերբայ ուրեմն ի մարդկանէ, այլ պատճառս միայն առնէ զանուն իւր ի վերայ աներևոյթ մարմնոյն. մանէ, և իւրոյ արհայութեանն զմեզ բազորդս բաժանարդս առնէ: Կարող է և ի՛ խաղաղութեան վախճանել. և առնել արժանիս արհայութեան կարգացն:

Զայս և այսպիսի և որ երբայր զնետ սորին՝ իբրև խօսեցաւ. արդ՝ ասէ՝ դի՛ մուր ամենեցուանն, զի արժանի միայն լիցուք մարդասիրութեանն Քրիստոսի: Ու՝ ի գնել ճոցա երիցս անգամ ծուր և կալ յաղօթս, և յարեաւ ի ծովու անդ ճողմ սաստիկ, և սկսաւ բնկենուլ ի կողի անդր ձուկն սաստիկ յոյժ, մինչև շեղջս շեղջս կուտէր ի ցամաքի կողմանէ. և բնդ նմին փայտ սաստիկ յոյժ: Իբրև ճանիկ կուտեցին զփայտն, խորհէին թէ ճար պիտոյ է, արդ զփայտն լուցցուք: Յանկարծակի իմնիկն լուցեալ փայտն ճրով վառէր, և ճոխա յարուցեալ գոհացեալ, զաղօթսն կատարեալ՝ մատեան արկին ի խորովս, և բազմեցան և մատեան յուտել: Ու իբրև կերան յագեցան, և պէտ եղեալ ըմպելոյ ջուր՝ յոտն եկաց սուրբն Ներսէս, և մատուցեալ փառաց զաւազն ի կզգայ, և բխեաց աղբեր՝

զայսմ լինելիի գուշակութիւն՝ Մովսեսի գավազանով ապառաժն խոցելով ջուր էր ճոսեցնում ճրանց ճամար և այս օրինակով առաչին անգամ ճրանց կյանքը պաճպանում, և իմն էլ անապատում բիչ ճացով ժողովուրդը կերակրեց, և նման այն ծառին որ խոյ բերեց՝ իմն էլ խաչին գամվեց ու կախվեց, և վերի օրինակի ճամաձայն իմն էլ կողից խոցվեց և այնտեղից մեզ ճամար ճանեց փրկության ջուր, որպեսզի ապաշխարությամբ լվացվինք ու մաքրվինք, կյանք գտնենք. իմնը մեզ ճամար ճաց եղավ, իր արյունը տվեց մեզ խմելու, որպեսզի մարմինը մարմնի ետ խառնե, արյունը արյունի ետ, աստվածությունը մեր ճոգու ետ միացնե և մեզ սուրբ ճոգու ետ և վերջում մեզ աստվածության ետ բնակակից դարձնե: Արդ՝ նա որ այսման երախտիք էր մեզ ցույց տալիս, մինչդեռ մենք նույնիսկ շնորհակալության խոսք չէինք ասում իրեն, ի՞նչպես կարող էինք կարծել, թե նա սովամահ կթողնե մեզ, որ թեկուզ մի փոքր չափով բշնամանք կրեցինք նրա անվան ճամար: Ո՛չ, այդպես չէ. մենք ճավատով խնդրենք, և մեզ կերակուր կտրվի: Ինչ է, մենք նշա՞ն ենք խնդրում. ո՛չ, նշանը բերանավատների ճամար է պետք և չարերին ուղղության բերելու ճամար. իսկ մեր վերաբերությամբ՝ տերը գիտե մեր կարիքներն ու օգտակարը և ըստ այնմ կպատրաստե՝ ինչ որ մեզ պետք է: Մենք այնպես չենք՝ ինչպես ասաց թե «Չար ազգը նշան է խնդրում», բավ լիցի: Ինչ որ մեզ կարևոր է՝ առանց մարդկանց օգնության էլ կարող է տացվել: Տերը կարող է առանց կերակրի էլ մեզ կենդանի պահել, կարող է և կերակուր տալ, կարող է և արդարացնել, կարող է մեզ մանվան արժանացնել իր անվան ճամար, տալով մեզ սովորական բնական մանը, որից մարդ զգաստում չունի[87], և մեզ արհայության մասնակից դարձնել. կարող է մեզ խաղաղ մանով վախճանեցնել և արհայության արժանացնել»:

Այս և սրանց ճամապատասխան ուրիշ բաներ խոսելուց ետո նա ասաց. «Բոլորդ ծուռ դրեք, որ արժանանանք Քրիստոսի մարդասիրության»: Եվ երբ նրանք երեք անգամ ծուռ դրին և աղոթեցին՝ ծովամբ սաստիկ քամի բարձրացավ և սկսեց կողին թափել մեծ բանությամբ ձուկ, այնպես որ կողու վրա կուտակներ ձևացան, և սրա ետ միասին շատ-շատ փայտ: Երբ փայտը հանեցին, կույտ շինեցին՝ մտածեցին թե կրակ է հարկավոր, որով փայտը վառենք: Հանկարծ փայտը իմն իրան կրակ առավ ու սկսեց վառվել: Նրանք աղոթելուց վեր կացան գոհությամբ, ձուկը խորովեցին, բազմեցան և սկսեցին ուտել: Երբ կերան կշտացան ու խմկելու չուր հարկավոր եղավ՝ ոտի հանգցնեց սուրբ Ներսեսը, կողու մեջ ավազը փորեց. բղխեց անուշ ջրի աղբյուր, և այնտեղից շարունակ խմում էին կողու վրա եղողները:

յուր բաղձր անոյշ, և անտի բմպէին որ ճանապազորդք էին կղզւոջն:

Ցայնմ կղզւոջ գայս օրինակ կերակրեալ լինէին ի ծովէ անտի. և հանապազ մխիթարէր գնոսա սուրբն Ներսէս, և ասէր. Այսպէս յիշեցէք և ի մտի կալարուք զբանն տեառն զոր ասաց, թէ «խնդրեցէք զարքայութիւնն աստուծոյ և զարդարութիւն նորա, և այն ամենայն տացի և յաւելցի»: Ցեսէք, եղբարք, զի աճաւասիկ իբրև հայր յորդիս մատուցեալ և առ մեզ աստուած՝ խրատել զմեզ, զի զմեզ պիտանիս արասցէ, և զանունն քաջութեան ժառանգեցուսցէ մեզ, և զմեզ մեծաց վարձուց արժանիս արասցէ: Զի զպատնառս սակաւիկ առաքինութեան ի մէնջ խնգրէ. այնչափ միայն. զի սիրեսցուք զնա. և ապա զանթիւ զանչափ զանհշիո զանհամեմատ բարեացն առնէ զբարերարութիւնս սմանչելեաց իւրոց. և ցուցանէ զբարիատուր զերախտապարգև ճատուցմանս վասն իւրոյ մարդասիրութեանն: Քանզի և զանձն իւր ոչ խնայեաց գնել ի վերայ մեր. այլ կերակուր և ըմպելի ևս եղև մեզ:

Եւ այսպէս հանապազ հանդերձ եղբարբ գոհանալ և օրհնել զաէր Յիսուս Քրիստոս, զցայգ և զցերեկ կային ի պաշտաման տեառն անդադար: Արեգական մտանելոյ կային եղբարքն, և ապա տէրունասուր կերակրովն ուրախ լինէին, յրնգծնուլ ալեացն ի պատրաստել զկերակուր: Իսկ սուրբն Ներսէս յետն առնուն ի կիրակիէն հասեալ միայն, ապա ճաշակէր: Այլ գայս օրինակ համակ տայր ճոցա զքաջարութիւն սուրբն Ներսէս ամս իննն, որ եղեն յայն կղզւոջ:

ՅԱՂԱԳԱՒ ԱՍՏՈՒԾՈՅ ՍՔԱՆՉԵԼԱՑՆ՝ ՈՐ ԵՂԵՆ Ի ՆԵՐՍԷՍ ԵՒ ԿԱՄ Ի ԲԱՐՍԻԼԻՈՍ. ԵՒ ՎԱՍՆ ՆԱԽԱՆՁՈՒՆ ԵՒՍԵԲԻՈՅ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ԱՒ ԲԱՐՍԻԼԻՈՍ

Իսկ եպիսկոպոսն Կեսարու Եւսեբիոս յորժամ հասս զզարմանալիսն զնախ իչանել զաղաւնոյն՝ որ եկն ի յերկնից, և հանգչել նախ յերիցապետն Կեսարու սուրբն Բարսիլիոս, ի դժկամակ միտս լինէր ընդ նմա. և տեսանէր զնա իբրև զօր հակառակորդ և զբշնամի: Քանզի հոչակ հասեալ էր ընդ երկիր ամենայն. ասէին և պատմէին՝ թէ յորժամ ձեռնադրէին զսուրբ կաթողիկոսն Ներսէս, էջ հանգեալ ի նմանութիւն աղաւնոյ ի վերայ՝ նախ յերիցապետն ի սուրբն Բարսիլիոս. և ապա յարուցեալ նստաւ ի բանաձայապետն Ներսէս: Եւ այս հոչակ հատեալ էր զնացեալ. մանաւանդ յաչխարհն Գամրաց: Մեծապէս բուէին մարդ-

Այս կղզու վրա այս կերպով նրանք կերակրվում էին ծովից, և սուրբ Ներսեսը շարունակ նրանց մխիթարում էր և ասում. «Այսպես հիշեցե՛ք և մտերմութ պահեցե՛ք տիրոջ խոսքը, որ ասաց. դուք աստծու արքայությունն ու նրա արդարությունը փնտռեցեք, և այդ բոլորը ձեզ կտրվի ու կավելանա: Տեսնո՞ւմ եք, եղբայրներ, որ աստված մեզ հետ վարվում է՝ ինչպես որդոց հետ՝ մեզ խրատելու համար, որպեսզի մեզ պիտանի մարդիկ դարձնե, քաջության անուն մեզ ժառանգեցնե և մեծամեծ վարձերի արժանացնե: Իրև փոխարեն նա մեզանից մի փոքր առաքինություն է պահանջում— որ նրան սիրենք, որի փոխարեն նա անթիվ, անչափ, անհաշիվ անհամեմատ բարիքներ, բարերարություններ և սքանչելիք է անում մեզ համար և իր մարդասիրությամբ բարի հատուցում է անում. որովհետև նա նույնիսկ իր անձը չխնայեց մեզ համար դնել, այլ մեզ համար կերակուր և ըմպելիք դարձավ»:

Այս կերպով եղբայրները շարունակ գոհությամբ օրհնում էին տեր Հիսուս Քրիստոսին, գիշեր ցերեկ անդադար տիրոջ պաշտոնն էին կատարում: Նրանք սպասում էին արեգակի մայր մտնելուն, ապա տիրոջ տված կերակրովն ուրախանում էին, որ ալիքները դուրս էին ձգում՝ կերակուր պատրաստելու համար: Այս կերպով սուրբ Ներսեսը միշտ սրտապնդում էր նրանց իրը տարի[88], որ այն կղզումը մնացին:

ԱՍՏՎՈՒ ՍՔԱՆՉԵԼԻՔԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՐԵՎԵՑ ՆԵՐՍԵՍԻ ԵՎ ԲԱՍԻԼԻՈՍԻ ՎՐԱ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՎՍԵԲԻՈՍ ԵԳԻՍԿՈՊՈՍԸ ՆԱԽԱՆՁՈՒՄ ԷՐ ԲԱՍԻԼԻՈՍԻՆ

Իսկ Կեսարիայի Եվսեբիոս եպիսկոպոսը երբ այն զարմանալիքը տեսավ, այսինքն որ երկնից իջած աղավնին նախ նստեց Կեսարիայի երիցապետ սուրբ Բարսիլիոսի վրա՝ մտմտմտմ առելություն զգաց նրա դեմ և նրան համարում էր իրեն հակառակորդ[89] և թշնամի, որովհետև բոլոր երկրում հռչակվել էր, թե երբ Ներսես սուրբ կաթողիկոսին ձեռնադրում էին՝ (ս. հոգին) աղավնու կերպարանքով իջավ ու կանգնեց նախ երիցապետ սուրբ Բարսիլոսի վրա և ետու նրա վրայից բարձրացավ նստեց Ներսես բանաձայապետի վրա: Այս հռչակը նրանց մասին տարածվում էր մանավանդ Գամիրք աշխարհում: Մարդիկ շատ

կանճ սմանչելիքն ամենայն. և ամենայն մարդ պատուէին զսուրբն Բարսիլիոս. Մանաւանդ վասն սրբութեան վարուցն նորա, և կարգացն եղմարտութեան, և բազում խոնարհութեան նորա, և վասն աստուածախօս ջերմեռանդն աղօթիցն նորա, և վասն վարուց կարգաց պարկեշտութեանն. և կամ վասն աղքատասիրութեանն և վասն տառապելսէր[20] վարուցն, և պատուիրանակատար մշտակիր հանապազորդութեան նորա, կամ վասն բազում գիտութեանն, զի աղբեր էր անպակաս իմաստութեամբն. և վասն ուսուցիչ հաւատարիմ վարդապետութեան նորա, զի փիլիսոփայական արուեստիւն խնդիր արկանէր հանապազ զամենայն զուր բացեալ զբերանս հերետիկոսացն, և զհաւատս եղմարիտ ամենասուրբ երրորդութեանն ամենեցուն հաստատէր: վասն այսր ամենայնի նայէին ընդ նա իբրև ընդ առաքեալ Քրիստոսի, իբրև զհրեշտակ երկնաւոր. և ամենայն ոք վկայէր թէ արժանի իսկ էր նա Հոգւոյն աստուծոյ:

Իսկ նա զանձն կարի ՚ի խոնարհութեան ունէր, և անարժան համարէր, թէպէտ և ամենայն ոք վասն գիտութեան արուեստին կարօտէր առ նա գալ. մանաւանդ արտաքինն իսկ ճարտարապետ փիլիսոփայիցն առ նա ընթանային վասն իւրեանց արուեստին: Այլ նա զբազումս դարձուցանէր ՚ի պէսպէս յիւրաքանչիւր կարծեացն խոտորութենէ ՚ի եղմարտութեանն հաւատս, երկրպագուս Քրիստոսի անթիւ մարդկան կացուցանէր: Եւ ամենայն երկիր սկսան ի նա նայել, որպէս թէ անդուստ յերկնից ՚ի վերուստ իջեալ իցէ. այնչափ՝ որպէս զի թէ կամիցի ոք պատմել, ոչ կարասցէ: Այլ յորժամ խոժոռադէմ երեսօք տեսանէր զիւր եպիսկոպոսն ընդ իմեանս, սուրբն Բարսիլիոս տեղի տայր նմա, թողոյր զխաղսն, և գնայր նա անտի, ելեալ բնակէր մի ՚ի շինացն՝ ուր և նմա պատշաճ իցէ կալ անդ:

ՅԱՂԱԳՍ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԿԱՅՍՐՆ ՎԱՂԷՍ ՀԱԼԱԾԵԱԼ ՋԱՄԵՆԱՅՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏԱՑԵԱԼՍ. ԵՒ ԿԱՄ Ո՛ՐՊԷՍ ԿԱՄԵՑԱԻ ՅԱՆԴՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՌՆԵԼ ԿԱՅՍՐՆ ՚Ի ՄԷՋ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆՆ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ, ԵՒ ՚Ի ՄԵՋ ՁԱՒՈՂ ԱՂԱՆԴՈՅՆ ԱՐԻԱՆՈՍԱՑ, ԵՒ ԿԱՄ Ո՛ՐՊԷՍ ՍՓԱՆՉԵԼԵԱՅՆ ՏԵՍԼԵԱՄԲՆ ՍՈՒՐԲՆ ԲԱՐՍԻԼԻՈՍ ԿՈՉԵՑԵԱԼ ՚Ի ԳԱՅՋԱՐՆ, ԵՒ ՅԱՂԹԷՐ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՋՕՐՈՒԹԵԱՄԲՆ՝ ԱՌ ԵԳԻՍԿՈՊՈՍԱՒՆ ԵՒՍԵԲԻ. ԵՒ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԵՒՍԵԲԻՈՍ ՎՃԱՐԵՐ ՚Ի ԲԱՆԴԻՆ. ԵՒ ԿԱՄ Ո՛ՐՊԷՍ ԲԱՐՍԵՂ ԱՐՁԱԿԵԱԼ ԼԻՆԷՐ

Ընդ այն ժամանակս աճօրէն կայսրն Վաղէս մեծաւ բարկութեամբ դատէր ընդդէմ եղմարտութեանն մշակացն. այս ինքն որ միանգամ

ակնածում էին այս սմանչելիքից և բոլորը պատվում էին սուրբ Բարսիլիոսին, մանավանդ որ նա մեծ վարք ուներ, եղմարիտ կարգերի էր հետևում, շատ խոնարհ էր, ջերմեռանդ աղոթում էր աստծուն, պարկեշտ էր պահում իրեն. սիրում էր աղքատներին և տառապյալներին և միշտ ու հանապազ կատարում էր (աստվածային) պատվիրանները: Բացի սրանցից նա մեծ գիտության տեր էր, իմաստության անպակաս աղբյուր էր և հավատարիմ ուսուցիչ ու վարդապետ, որովհետև նա իր փիլիսոփայական արվեստով միշտ փակում պապանձեցնում էր հերետիկոսների զուր բացած բերանները և ամենասուրբ երրորդության եղմարիտ հավատը հաստատում էր ամենի առաջ: Այս բոլորի պատճառով ամենքը նրա վրա նայում էին իբրև Քրիստոսի առաքյալի, ինչպես մի երկնավոր հրեշտակի վրա, և բոլորն էլ վկայում էին, թե նա հիրավի արժանի էր աստծու հոգուն:

Իսկ նա իրեն շատ խոնարհ էր պահում և անարժան էր համարում, թեպետ ամեն մարդ ցանկանում էր նրա մոտ գալ նրա գիտության պատճառով. մանավանդ նրա մոտ հաճախում էին փիլիսոփաների պարագլուխները իրենց արվեստի պատճառով. նա (նրանցից) շատերին իրենց սխալ կարծիքներից դարձնում էր դեպի եղմարիտ հավատը, անթիվ մարդիկ դարձնում էր Քրիստոսի երկրպագողներ: Բոլորն այնպես սկսեցին նայել նրա վրա, իբրև թե նա հենց երկնից իջած լինի— այն աստիճան որ պատմել չի լինի: Բայց երբ նա նկատում էր իր եպիսկոպոսի խոժոռած երեսը իր դեմ՝ սուրբ Բարսիլիոսը տեղի էր տալիս, թողնում էր խաղսը, գնում ապրում էր գյուղերից մեկում, որտեղ նրան պատշաճ էր մնալ:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՂԵՍ ԿԱՅՍՐԸ ՀԱԼԱԾԵՑ ԲՈԼՈՐ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱՄԵՑԱՎ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՐՔԵԼ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ԵՎ ԱՐԻԱՆՈՍՅԱՆ ՁԱՒ ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ. ԵՎ ԻՆՉՊԵՍ ՍՓԱՆՉԵԼԻ ՏԵՍԻԼՔՈՎ ՍՈՒՐԲ ԲԱՐՍԻԼԻՈՍԸ ՀՐԱՎԻՐՎՈՒՄ ԷՐ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ ԵՎ ԱՍՏՎՈՒ ՋՕՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՂԹՈՒՄ ԷՐ ԵՎՍԵԲԻՈՍ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ. ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՎՍԵԲԻՈՍԸ ՎԱՒՃԱՆՈՒՄ ԷՐ ԲԱՆՏՈՒՄ, ԻՍԿ ԲԱՐՍԵՂԸ ԱՋԱՏ ԱՐՁԱԿՎՈՒՄ

Այս ժամանակներս աճօրեն Վաղես կայսրը մեծ բարկությամբ կռվում էր եղմարտության մշակների հետ, այսինքն նրանց հետ, որոնք

զհաւատոն Քրիստոսի արժանապէս հաւատացցեն՝ թէ ճշմարիտ արդարև Որդի աստուծոյ իցէ, և ծնունդ ՚ի բնութենէն Հօրն աստուծոյ: Վասն այսորիկ կամէր հալածանս տանջանս չարչարանս միահաղոյն[21] յարուցանել, և սաստիւ իշխանութեամբ առ ամենեսեան գրեալ հրաման:

Ապա ՚ի մի վայր եղեալ՝ խորհեցան մոլեկան արիանոսացն աղանդոյն վարդապետք. զի ասէին՝ թող ընդ նոսա պայմար յանդիմանութեան հակառակութեան լիցի, արմայ. և որ կողմն յաղթեսցէ, յայտ լիցի, զի մի զնա բռնադատ, զադատ ինչ երևեսցի յաղթութիւնն: Եւ թագաւորն Վաղէս զայս լուեալ խնդալից լիներ. ընտրեաց իւր առ ճարտարս և պատրաստաբանս, զորս կարծէր դպիրս բանիբունս, որ անուանեալք էին չեպիսկոպոսունս աղանդոյն արիանոսաց: Եւ յղեաց առ եպիսկոպոսն Կեսարու Եւսեբիոս. և ժամ խնդրէր ՚ի նոցանէ բանիցն ճնութեան, զի ՚ի հանդէս ածիցէ առ նա զնովաւ, և որ ճշմարիտն իցէ՝ յայտնի երևեսցի: Ապա իբրև սահմանեցաւ ժամադրութիւն, առեալ եպիսկոպոսն Եւսեբիոս զկղերն զամենայն, և ՚ի մեծ հոգս մտանէր. ուստի կարծիցես բանիցն պատասխանիս պատրաստել. զի և բանիւ ոչինչ կարի էր առաւել: Ապա հաստատեցաւ այս բան ՚ի խորհրդեանն, զի յղեսցեն հաւանեցուսցեն զերառնելին Բարսիլիոս, զի եկեսցէ նա: Զի նա, ասէ, կարող է բանիւ զօրութեանն. նա մեծ է, ասեն, ՚ի նմա շնորհն խափանել զենգութիւն դաւաճանութեանն սատանայի. զի խորհի նա ՚ի վերայ արբոյ եկեղեցւոյ նորա, զոր իմն առեմբն ստացաւ:

Գրեաց թուղթ աղաչանաց եպիսկոպոսն Եւսեբիոս առ երիցապետն Բարսեղ, և մեծաւ պաղատանօք որ ինչ վասն պատուին պաշտամանն. զի մի՛ դիցէ ինչ ՚ի մտի զառաջին եղեալ բանիցն գժտութիւն. այլ վասն զի առ աստուած հաւատոց են[22] բանքն և ճնութիւնքն, վաղվաղակի փութասցի գալ առանց դանդաղանաց: Արկին և կղերքն ամենայն ձեռնագիր աղաչանաց, զի մի՛ ինչ դանդաղեսցի գալ, այլ յարուցեալ փութանակի երթիցէ: Եւ առ հաւատարիմս պատուականս յղեցին վասն վաղվաղ գալոյ:

Եւ այն ինչ արճ յուղի անկան, որ երթային են ածել զնա անդր. արդ մինչ դեռ յուղի անկեալ երթային արճ՝ էին ՚ի ճապարհի, սուրբ Բարսիլիոս ուր էին՝ մինչ դեռ ՚ի պաշտաման տեառն կայր, անկաւ նմա հուն ծանր թանձրամած, և տեսանէր ՚ի տեսլեան, զի այգի մի էր մեծ և վայելուչ, բաւական լի պտղով. և խոզք երեք անգեալ էին յայգին, և մտեալ ՚ի ներս ՚ի յայգին՝ ապականէին զայգին և բրէին: Պատառէին բազում ունջս որթոյ, արմատաքի խլէին և զտաշտն գլխովին և զբազուկ ընջովին, և մեծամեծ ապականութիւնս ՚ի ներքո գործէին: Եւ մատուցեալ էին այգեգործն, չանային և ոչ կարէին հանել զվնասակար

Քրիստոսի մասին արժանապես դավանում էին, թե նա իսկապես աստծու որդի է, հոր աստծու բնությունից ծնված: Սրա պատճառով նա բնդհանուր հալածանք, տանջանքներ ու չարչարանքներ կամենում էր հարուցանել, և (այս մտով) խիստ հրաման գրեց ամենքին:

Ապա արիանոսների մոլի աղանդի ուսուցիչները մի տեղ ժողովվեցին ու ասացին թագավորին. «Թող դեմ առ դեմ վիճաբանություն կազմակերպենք, թագավո՛ր, և ո՛ր կողմը որ հաղթե՝ թող հայտնի դառնա, և այնպես չերևա, թե հաղթությունը բռնությամբ և սուրյամբ են ետ տարել»: Վաղես թագավորը այս լսելով ուրախացավ. նա իր կողմից ընտրեց ճարտար՝ վիճաբանության հմուտ մարդիկ, որոնք համարվում էին բանիբուն և ուսյալ՝ արիոսական աղանդի չեպիսկոպոսների մեջ: Կեսարիայի Եվսեբիոս եպիսկոպոսին էլ (մարդ) էր ուղարկում, հայտնելով որ նշանակված է նրանց դավանության հնություն, որ նա գա և իր ներկայությամբ հնություն կատարվի, որպեսզի հայտնի դառնա, թե ո՛րն է ճշմարիտը: Երբ այս ժամադրությունը հաստատվեց՝ Եվսեբիոս եպիսկոպոսը բոլոր հոգևորականներին հավաքեց, և տարակուսանքի մեջ էր ընկել, թե ինչպես պիտի կարողանա (հակառակորդների) խոսքերին պատասխանել[90], որովհետև խոսելու մեջ էլ շատ շնորհ չուներ: Խորհրդակցության մեջ որոշեցին, որ մարդ ուղարկեն երանելի Բարսիլիոսի մոտ համոզելու, որ գա. որովհետև, ասում էին, նա հզոր է խոսքով, նա մեծ շնորհ ունի սատանայի դավաճան նենգությունը խափանելու. որովհետև նա մտածում է (Քրիստոսի) եկեղեցու մասին, որը նա հաստատեց իր արյունով:

Եվսեբիոս եպիսկոպոսը աղաչանքի թուղթ գրեց Բարսեղ երիցապետին, որի մեջ արժանավայել պատվով ու մեծ պաղատանքով խրնդրում էր, որ առաջ պատահած գժտությունը մտքից հանե, այլ փութա առանց դանդաղելու գա, որովհետև խոսք ու հնություն պետք է կատարվի հավատի մասին: Բոլոր հոգևորականներն էլ աղաչանքի թուղթ ստորագրեցին, որ չդանդաղի, անմիջապես գա. հավատարիմ պատվավոր մարդիկ էլ ուղարկեցին, որ շտապեցնեն նրա գալուստը:

Երբ այս մարդիկ, որ գնում էին նրան բերելու, հանապարհ բնկան ու հանապարհին էին՝ սուրբ Բարսիլիոսը իր եղած տեղում տիրոջ պաշտոնը կատարելիս՝ մի ծանր խոր հնի մեջ ընկավ: Երազում տեսնում էր մի մեծ վայելուչ այգի, առատ պտուղներով լի. երեք խոզ բնկել էին այգին, մտել ու ապականում փորփրում էին այգին: Վազների տակ շատ տեղ գետինը փորում էին, վազներն արմատախիլ անում, ճողով հանդերձ դուրս էին հանում, ճարուճանդ էին անում: Այգեպանները եկել աշխատում էին, բայց չէին կարողանում վնասարար խոզերը

խոզսն յայգւոյ աճսի: Ապա զաղաղակ ճարեալ գոչէին առ Բասիլիոս, և ասէին. Եթե ոչ դու, Բասիլիոս, եկեսցես, ոչ ոք կարէ ճանել զխոզս յայգւոյ աստի, և ոչ մեծ ապականութիւնս դադարեսցէ. աճապարեա եկ ճասիր, զի տակաւին աւասիկ վճասս մեծամեծս առնեն: Ապա մատուցեալ Բասիլիոս ճանէր զվճասակարս զխոզսն յայգւոյ աճսի, և կազմէր զխախտածն:

Եւ զարթեաւ սմանչելին Բասեղ, և զարմացեալ ընդ այն տեսիլն, էր մտախոհ. և խորհէր ընդ միտս իւր վասն տեսլեանն՝ թէ զինչ իցէ. և անդէն ճասեալ մատուցանէին նմա զթուղթն առաքեալին ի Կեսարիայ Բաղաքէ Եւսեբի եպիսկոպոսի: Այլ իբրև ընթերցաւ, խնդայր և ուրախ լիներ. զի գիտաց թէ յաստուծոյ պատրաստեցաւ կոչել զնա չատագով ճշմարտութեանն առ ի տալ պատասխանի: Յարուցեալ փութանակի գնաց զհետ կոչելեացն բղթին. և չոգաւ առ եպիսկոպոսն Եւսեբիոս: Եւ իբրև խորհեցան ընդ միմեանս զարժանն, ասաց Բասիլիոս եպիսկոպոսն Եւսեբիոս, զի խնդրեսցէ ի կայսերէ իշխանութիւն՝ զոք յերիցանց տանել ընդ իւր: Եւ մտանէր Եւսեբիոս առ կայսրն, խրնդրէր ի նմանէ և ասէր. Երկուս ածեր ինձ ախոյեանս, թո՛ղ եկեսցէ մի ոք ընդ իս յերիցանց իմոց: Եւ ճարցանէր կայսրն ցարիանոս եպիսկոպոսն, և յանձին կալաւ նոքա Եւսեբի ճանի[23] ածցէ րնկերս ընդ ինքեան, յորժամ գայցէ յատեանն:

Իսկ իբրև ժամ ատենին ճասանէր, առեալ կայսերն զեպիսկոպոսն Եւսեբիոս, և ընդ նմա երանելին Բասիլիոս երիցապետն, և երկու ախոյեանքն ճակառակութեանն՝ որ ի կողմանէն կուսէ սատանայի էին, այս ինքն արիանոսք չեպիսկոպոսքն, և մտին ի բանից ի ճննութիւն ճակառակութեան վասն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Որդւոյն աստուծոյ, եթէ իցէ ծնունդ և որդի ի բնութենէ Հօր աստուծոյ, եթէ ոչ: Ապա Հոգւով սրբով լցեալ լիներ երանելին Բասիլիոս, որ կայր զկնիագոյն եպիսկոպոսին Եւսեբի. և սա գրէր վկայութիւնս ի գրոց յԱրարածոց ի սկզբանէ յօրինաց և ի մարգարէից և յԱռաքելոց և յամենայն աստուածաշունչ գրոց. յայտ առնէր և ցուցանէր, և զերկոսեան ախոյեանսն սատանայի կարկեալս ըմրոնեալս ամօթապարտեալս ճանդերձ բագաւորաւն կացուցանէր:

Ապա ճայեցաւ բագաւորն Վաղէս ընդ եպիսկոպոսն, և ետես զի բռնեալ էր, սկսաւնէր խօսել և ասէր. Այդ զի՞ է, զի զայդչափ ճոսին ի էնն բռուիդ, զի ի բանս ճշմարտութեան ճննութեան վարձկանագրչաւդ յաղթեցեր: Եւ պատասխանի Բասիլիոս բագաւորին և ասէր. Երկուս խոզս և մի էշ վարեալ այնչափ ընդ երկար ճանապարհ, և դու ասես. Զի՞ ես բռնեալ այդչափ: Ապա զղջացաւ բագաւորն՝ թէ ընդէ՞ր

այգուցը դուրս աճել: Ապա նոքաճ ձայն էին տալիս Բասիլիոսին ու ասում. «Եթե դու, Բասիլիո՛ս, չգաս՝ ուրիշ ոչ ոք չի կարողանա այս խոզերը այգուց դուրս ճանել և ապականությունը չի դադարի. շտապի՛ր, է՛կ. ճասի՛ր, տե՛ս թէ ի՛նչ մեծ վճասներ են գործում»: Ապա իճրը Բասիլիոսը՝ ներս էր մտնում, վճասարար խոզերը դուրս էր անում այգուց և խախտված տեղերը նորից կարգի բերում:

Քնից զարթեց սմանչելի Բասեղը, զարմանում էր այս տեսիլի վրա և մտածում էր, թէ այդ ի՞նչ է նշանակում, և ահա եկան այն մարդիկ, որ Եվսեբիոս եպիսկոպոսի կողմից ուղարկված էին Կեսարիա Բաղաքից, և թուղթը ճանձնեցին: Կարդաց և ուրախ եղավ, որովճետև իմացավ, որ աստծուց էր թելադրված՝ իրեն հրավիրել ճշմարտությունը պաշտպանելու և (արիանոսներին) պատասխան տալու: Ուստի իսկույն վեր կացավ, հրավիրողների հետ միասին գնաց Եվսեբիոս եպիսկոպոսի մոտ: Հարկավոր բաների մասին խորհրդակցեցին, Բասիլիոսը Եվսեբիոս եպիսկոպոսին ասաց, որ կայսրից իրավունք խնդրե իրենցից մեկին իր հետ տանելու: Եվսեբիոսը գնաց կայսեր մոտ և խնդրեց ասելով. «Դու իմ դեմ երկու ախոյան ես ճանում, թող ինձ հետ էլ գա իմ երեցներից մեկը»: Կայսրը հարցրեց արիանոս եպիսկոպոսներին, նրանք էլ համաձայնեցին, որ Եվսեբիոսը առյան գալիս իր հետ բերե մի քանի րնկերներ:

Երբ առյանի ժամը հասավ՝ կայսրը առավ Եվսեբիոս եպիսկոպոսին և նրա հետ երանելի Բասիլիոս երիցապետին, իսկ հակառակորդներից, որոնք սատանայի կողմից էին՝ նրանց երկու ախոյաններին, արիանոս եպիսկոպոսներին, և հննության ու վիճաբանության մեջ մտան Հիսուս Քրիստոսի, աստծու որդու մասին, արդյոք նա ծնո՞ւնդ է և որդի նոր աստծու բնությունից թե ոչ: Երանելի Բասիլիոսը, որ կանգնած էր Եվսեբիոս եպիսկոպոսի նետև, սուրբ Հոգով լցված՝ վկայություններ էր գրում Արարածոց գրից, օրենքներից, մարգարեներից, առաքյալներից, ամբողջ աստվածաշունչ գրից, բացատրում էր և ապացուցանում և սատանայի արբանյակ երկու ախոյաններին՝ բագավորի հետ միասին պապանձեցնում էր և ամոթապարտ դարձնում:

Այս ժամանակ Վաղես բագավորը նայեց եպիսկոպոսի վրա ու տեսավ որ րռնել է: Սկսեց խոսել ու ասաց. «այդ ի՞նչ բան է՝ ինչո՞ւ ես այդրան րռնել, ճշմարտությունը հննելու ժամանակ դու այդ վարձկան գրչի միջոցով ճաղթեցիր»: Եպիսկոպոսը բագավորին պատասխանեց ու ասաց. «երկու խոզ ու մի էշ այսրան երկար ճանապարհ էշեցի, և դու դեռ ասում ես, թե ինչո՞ւ ես րռնել»: Բագավորը զղջաց, որ

զԲարսիլիոսն հրամայեցին օժանդակ բնաւ նսեբի քողով ՚ի ներս: Ապա յոտն կացեալ ամօթով արիանոսն ասացին ցթագաւորն, թէ ընդէ՞ր այս աշխատութիւն ճնութեանց եմ. այլ միրաբար տուր հրամանդ. զի որ fn կամացդ ոչ լուիցեն, անկցին ՚ի տագնապ նեղութեան: Եւ թուծեալ զատեանն վճարեցաւ:

Եւ ետ հրաման՝ զի զնսեբիոս արկանել ՚ի բանդ, և ընդ նմա զբազումս, և նեղութիւն ՚ի վերայ ուղղահաւատ օրթոդոքսաց քրիստոնէից հասուցանէր. և ետ հարկս ՚ի վերայ եկեղեցեացն տուժիւք մեծաւ ծանրութեան տուգանօք: Յայնժամ ՚ի դառն կապանացն պատուհասէն մեռանէր եպիսկոպոսն նսեբիոս ՚ի ներս ՚ի բանդին: Իսկ վասն սրբոյն Բարսեղի ասէին ժողովուրդքն զնա ՚ի բանդէդ, այրեմք զքաղաս զամենայն: Յորժամ ամենեքեան միաձայն զայս աղաղակէին, թողացոյց թագաւորն, և արձակել հրամայէր զերանելին Բարսիլիոս:

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՈՐՔԷՍ ԱՐԱՐԻՆ ՋՍՈՒՐՔՆ ԲԱՐՍԻԼԻՈՍ Ե�պԻՍԿՈՊՈՍ, Ո՛ՐՔԷՍ ԵՂԵՆ ՅԱՍՏՈՒԾՈՅ ՍՔԱՆՉԵԼԻՔՆ. ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ՀՐԱՄԱՅԵԱՑ ՋԱՄԵՆԱՅՆ ԳԱՆՁՍՆ ՈՐ ՚Ի ՔՐԻՍՏՈՍ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԷԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ՝ ԺՈՂՈՎԵԼ, ԵՒ ՆՈՔԱ ԽՆԴՈՒԹԻՒՆԱՄԲ ԲԵՐԷԻՆ ԵՒ ՏԱՅԻՆ ՚Ի ԴՈՒՐՍ ՎԱՍՆ ԿԵՆԱՐԱՐԻՆ ՄԵՍԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ. ԵՒ ԿԱՄ ՋԻԱՐԴ ԽՆԴՐԷԻՆ ՈՒԽՏԻՔ ԵՒ ԽՆԴՐՈՒԱՑՈՎՔ ՚Ի ՎԵՐԱՅ ԻՐՐԱՔԱՆՉԻՒՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

Ապա ժողովեցաւ ամենայն եպիսկոպոսք իշխանութեանն Կեսարու, և ընտրեցին զսուրբն Բարսիլիոս առնել արհեպիսկոպոս Կեսարու: Եւ իբրև ժողովեալք էին ՚ի միահամուռ հաստատակ միաբան ամենայն եպիսկոպոսք ՚ի ձեռնադրել զսուրբն Բարսեղ, էջ աղաւնին յերկնից և հանգեաւ ՚ի վերայ նորա, որպէս յառաջնումն յառնելն զեպիսկոպոսապետն Ներսէս: Եւ եղեն զարմանալիք մեծապէս յաչս ամենեցուն. սկսան գոհանալ զմարդասիրէն Քրիստոսէ, զի որ յանձն իւր յայտնեաց զնշանս աստուածութեանն, զայն և ոչ ՚ի ծառայիցն և ՚ի սրբոցն արգելոյր: Եւ եկաց Բարսեղ յաթոռ կաթողիկոսութեանն Կեսարու:

Այլ թագաւորն Վաղէս նեղէր զհրիստոնէից ժողովուրդն. Զի, ասէ, որ հրիստոնեայ անուն յիշխանութեան իմում կայցէ, մի գոցի նորա արծաթ և ոսկի, զի տայցէ յարհուրիս: Եւ սկսան ժողովել ՚ի զօրաց ՚ի զօրավարաց և ՚ի հաղարաց հաղարաց երդմամբ, զի որ զայն անունն ունիցին, մի՛ գոցի ոսկւոյ կամ արծաթոյ զանակ առ ումեք. ապա

թույլ տվին Բարսիլիոսին էլ ներս մտնել նվսեբիոսին օգնական: Իսկ արիանոսները ամոթահար վեր կենալով ասացին թագավորին. «Ի՞նչ պետք են այս հնություններն ու նեղությունները. իբրև տեր հրամայի՛ր, որ fn կամքին չհնազանդողները հալածանքի ենթարկվին»: Սրա վրա ատյանը լուծվեց ու վերջացավ:

Նվ (Վաղես թագավորը) հրամայեց բանտը դնել նվսեբիոսին և նրա հետ ուրիշ շատերին, և ուղղահավատ ուղղափառ քրիստոնյաներին հեղություն էր տալիս, բոլոր եկեղեցիների վրա հարկ դրեց շատ մեծ տուգանքով:

Նվսեբիոս եպիսկոպոսը բանտի մեջ մեռավ դառն նեղություններից: Իսկ սուրբ Բարսեղի վերաբերմամբ Կեսարիայի ժողովուրդները ասում էին. «Եթե դրան բանտից չարձակեք՝ ապա մենք քաղաքին կրակ կտանք կայրենք»: Երբ բոլորն սկսեցին այսպես աղաղակել՝ ապա թագավորը ներեց և հրամայեց երանելի Բարսիլիոսին ազատ արձակել:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԲԱՐՍԵԼԻՈՍԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԸՆՏՐԵՑԻՆ ՆՎ ԻՆՉՊԵՍ ԱՍՏՄՈՒՑ ՍՔԱՆՉԵԼԻՔ ԵՂԱՎ. ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՀՐԱՄԱՅԵՑ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՎԱՏԱՑՈՂ ԺՈՂՈՎՐԴԻՆ՝ ԲՈԼՈՐ ԳԱՆՁԵՐԸ ԲԵՐԵԼ ԵՎ ՆՐԱՆՔ ՈՒՐԱԽՈՒԹՅԱՄԲ ԲԵՐՈՒԻՄ ՏԱԼԻՍ ԷԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԿԵՆԱՐԱՐ ԱՍՏՄՈՒ ՀԱՄԱՐ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՈՒԽՏ ՈՒ ԽՆԴՐՎԱԾՔՆԵՐ ԷԻՆ ԱՆՈՒՄ ԻՐԵՆՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ապա Կեսարիայի սահմանի բոլոր եպիսկոպոսները ժողովվեցին և սուրբ Բարսիլիոսին ընտրեցին Կեսարիայի արհեպիսկոպոս: Երբ բոլոր եպիսկոպոսները միատեղ ժողովված էին սուրբ Բարսեղին ձեռնադրելու՝ երկնից աղավնին իջավ ու հանգչեց նրա վրա՝ ինչպես առաջին անգամ, երբ ձեռնադրում էին Ներսես եպիսկոպոսապետին: Զարմանքը բոլորին բռնեց. սկսեցին գոհություն մատուցանել մարդասեր Քրիստոսին, որ ինչպես իր վրա ցույց տվեց աստվածության նշանները՝ նույնը ցույց տվեց (իր) ծառաների և սրբերի վրա: Եվ Բարսեղը նստեց Կեսարիայի կաթողիկոսության աթոռը:

Իսկ Վաղես թագավորը նեղում էր հրիստոնյա ժողովուրդներին. «Ով որ, ասում էր նա, իմ իշխանության մեջ հրիստոնյա անուն է կրում՝ նա ոսկի և արծաթ չպիտի ունենա, պարտավոր է պետության տալ»: Եվ սկսեցին զանազան հաղարներից, զորքերից ու զորավարներից երդումով ժողովել, որպեսզի հրիստոնյա անուն կրողներից ոչ մեկի մոտ ոչ մի դանկ[91] ոսկի կամ արծաթ չմնա, իսկ եթե գտնվի՝

եթէ առ ումեք գտցի, մեռցի: Ապա ամենայն ոք խնդութեամբ բերէին տային ՚ի դուրս վասն անուանն Քրիստոսի, կամեցեալ խնդութեամբ կրել զպատուհաս: Ապա սիրել սկսան և գործակալքն թագաւորին ժողովել արծաթ և ոսկի ՚ի ժողովրդոցն կեսարացւոց հաղարին. ապա հաչալերել սկսաւ զնոսա երանելին Բարսիղիոս, զի խնդամիտ սրտիւ բերցեն: Սկսաւ ասել ցնոսա այսպէս, թէ՝ Բերէ՛ք ՚ի ձեռն իմ, ես լինիմ երաշխաւոր. զի նոյն իսկ ած Քրիստոս միածին Որդին աստուծոյ, վասն որոյ ես խոստացեալ է ՚ի մարտս, սատակեսցի ՚ի նմանէ: Այլ դուք վասն տեառն ձերոյ զափշտակութիւն ընչից ձերոց խնդութեամբ ընկալարուք. զի ձեզ յերկինս պահի գանձն՝ որ ոչ անցանէ, այլ զի զայս գանձս ես տաց ձեզ դարձուցեալ ձեռն ՚ի ձեռն ՚ի հուպ ժամանակի: Ապա ամենայն ժողովուրդք հաղարին կեսարու եկին բերին ՚ի մի վայր ժողովեցին որ մի անգամ ոսկի կամ արծաթ ուրուք գտաւ. լցին զեկեղեցի, և ածին զիշխանսն թագաւորին զեւաւտարիմս. կրնեցին զդուրս եկեղեցոյն:

Յետ այսորիկ ետ հրամայ թագաւորն Վաղէս կապել կրկին զեպիսկոպոսապետն Բասսեղ, արկանել ՚ի բանտ ՚ի նեղութիւն. սոյնպէս զամենայն եպիսկոպոսունս ընդ ամենայն հաղարս: Այլ ամենայն ժողովուրդն յուխտս և ՚ի խնդրուածս լինէին վասն բարկութեանն հասելոյ, զի դադարեսցէ, և դարձ լիցի նշմարիտ հովուացն յիւրաքանչիւր տեղի և յիւրաքանչիւր ժողովուրդս:

ԺԸ

ԹԷ ՋԻԱ՛ՐԴ ԿՈՉԵԱՑ ԿԱՅՍՐՆ ՎԱՂԷՍ ՋՍՈՓԵՍՏԷՍՆ ՚Ի ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ, ԵՎ ԹԷ ՋԻԱ՛ՐԴ ԵՏԵՍ ՍՈՓԵՍՏԷՍՆ ՋՍՔԱՆՉԵԼԻՍՆ. ՏԵՍԱՆԵԼՈՎ ՋԲԱՋՄՈՒԹԻՒՆ ՎԿԱՅԻՑՆ ՚Ի ՆԵՐՔՍ ՚Ի ՎԿԱՅԱՔԱՆԻՆ. ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ԿԱՅՍՐՆ ՎԱՂԷՍ ՍԱՏԱԿԵՑԱՒ ՆՇԱՆՕՔՆ ԵՂԵԼՈՎՔ ՅԱՍՏՂԻՄՈՅ. ԵՒ ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԼԻՆԷՐ ԵԿԵՂԵՑԵԱՑՆ ԱՍՏՒՈՄՈՅ

Ապա խնդիր հրամայէր առնել թագաւորն Վաղէս, զի տեսցեն գացեն այր մի ճարտար, որ կարող իցէ դնել գրով բանս դիմադարձութեան ընդդէմ հաւատոց հրիստոնէութեան: Եւ պատմեցին նմա, զի էր այր մի սոփեստէս ճարտար ՚ի հաղարի միոջ: Ապա առաքեաց կայսրն առ նա մագիստրիանոսս, զի երթիցեն փութով և անզբաղապէս զայրն առ նա ածցեն. և առեալ ածին փութապէս:

Իբրև գնացեալ գայր օրհանս երկուս, դէպ եղև նոցա դիպել այլ հաղարի միոջ. և արտաքոյ հաղարին վկայանոց մի սուրբ տիկնոջն Թեկ-

այնպիսին մեռնի: Ապա ամեն ոք խնդութեամբ բերում հանձնում էին եկեղեցուն Քրիստոսի անվան համար, հոժարութեամբ հանձն առնելով այդ պատուհասը: Այս կերպով թագավորի գործակալներն ստիպեցին կեսարիա հաղարի ժողովրդին՝ ոսկին ու արծաթը ժողովելու: Երանելի Բարսիղիոսն սկսեց հաչալերել ժողովրդին, որ ուրախ սրտով բերեն: Նրանց այսպես էր ասում. «բերե՛ք իմ ձեռքս հանձնեցեք, և ես երաշխավոր եմ լինում, որ իսկ մեր տեր Հիսուս Քրիստոսը, աստծու որդին, որի դեմ թագավորը խոհոտացել կռվում է՝ նրան կատակեցնե: Բայց դուք ձեր տիրոջ համար հանձն առեք ուրախությամբ ձեր ստացվածքների հափշտակությունը, որովհետև երկնքում ձեզ համար պահվում է այն գանձը, որ չէ կորչում. իսկ այստեղի գանձը ես կարճ ժամանակում անձամբ ձեր ձեռքը կհանձնեմ դարձյալ»: Ուստի կեսարիա հաղարի բոլոր ժողովուրդը բերեց մի տեղ ժողովեց որքան ոսկի կամ արծաթ յուրաքանչյուրի մոտ կար. բերին լցրին եկեղեցին, կանչեցին թագավորի հավատարիմ իշխաններին և եկեղեցու դռները կնքեցին:

Սրանից հետո Վաղես թագավորը հրամայեց նորից կապել Բասսեղ Եպիսկոպոսապետին, բանտը ձգել և նեղել, նույնպես և բոլոր հաղարներում բոլոր եպիսկոպոսներին: Բայց բոլոր ժողովուրդը ուխտ ու խնդրվածքներ էր կատարում, որ այս վերահաս բարկությունը դադարի և նշմարիտ հովիվները դառնան գան իրենց տեղերը, իրենց ժողովուրդների մոտ:

ԺԹ

ԹԷ ԻՆՉՊԵՍ ՎԱՂԵՍ ԿԱՅՍՐԸ ՍՈՓԵՍՏԵՍԻՆ ԿԱՆՉԵՑ ՀՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՄԱՔԱԲԵԼՈՒ. ԻՆՉՊԵՍ ՆԱ ՏԵՍԱՎ ՍՔԱՆՉԵԼԻՔԸ, ՈՐ ՎԿԱՆԵՐԸ ԺՈՂՈՎՎԵԼ ԷԻՆ ՎԿԱՅԱՐԱՆՈՒՄ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՎԱՂԵՍ ԿԱՅՍՐԸ ՍԱՏԿԵՑԱՎ ԱՍՏՂՈՅ ԵՐԵՎԱՑԱԾ ՆՇԱՆՆԵՐՈՎ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԳՏԱՆ ԱՍՏՂՈՅ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Այն ժամանակ Վաղես թագավորը հրամայում էր փնտռել գտնել մի ճարտար մարդ, որ կարող լինի գրով հակաճառել հրիստոնեական հավատի դեմ: Նրան պատմեցին, թե ինչ-որ հաղարում կա մի ճարտար սոփեստես[92]: Կայսրը նրա մոտ մագիստրոսներ[93] ուղարկեց, որ շուտով գնան և նրան անհապաղ իր մոտ բերեն: Գնացին իսկույն տարան:

Երկու օրհան անցնելով նրանք եկան հասան մի ուրիշ հաղար. հաղարից դուրս կար մի վկայարան սրբուհի Թեկղիի[94]: Երբ այստեղ հա-

պի: Իբև պատաճեաց այնմ, էչ սոփեստէս և իւ վանս ուճէր 'ի ճերմս 'ի վկայանոցի անդ. իսկ մագիստրիանոսմն ուճէին վանս իւրեանց 'ի ֆաղաքին: Եւ իբև կեռաւ ճաց սոփեստէսն, էարկ անկողին, և փակեաց զդուռս վկայանոցին. և իմն 'ի նիստ եղեալ 'ի վեռայ անկողնին, կամէր լինել 'ի կողմն. մինչ դեռ արթուն էր, աչօք բացօք տեսանէր, զի յանկարծ բացան դուռնք վկայանոցին, որ եղև ժողով մեծ բազմութեան վկայիցն, որ երևեցան մեծապէս փառօք: Եւ ելանէր ընդ առաչ նոցա սուրբ տիկինն Թեկղէս զարդարեալ մեծապայծառ, զի նշոյլք որպէս 'ի լուսոյ ճառագէին 'ի նմանէն. և առնէին միմեանց ողջոյն. և ասէր ցնոսա տիկինն Թեկղ, թէ՝ Բարի՛ եկիք, սիրելիք բարեկամք և վաստակաւորք Քրիստոսի: Տուեալ միմեանց ողջոյն, արկեալ գիւրաճանչիւր զաթոռսն, նստէին կարգաւ: Ապա սկսանէին սուրբքն խօսել, և ասէին. Սուրբ տեառն, որ չև են հրաժարեալ յերկրէս, դեռ ևս աստէն 'ի ներդութեան են. են որք 'ի կապանս են, են որք 'ի փիւղակէս են, են որք յաֆսորս, և են որք յայլ բռնութեան են 'ի զրպարտութեան 'ի հարկս և 'ի խոշտանգանս չարչարանաց: Եւ մեք փութապէս ժողովեցաք, զի մի անտեսութեամբ անփոյթ առասցուք նախանձախնդիր լինել տեառն հատուցելոց: Վասն զի մանաւանդ բազում մշակք տեառն խափանեալ կան, և բազում անգ 'ի դերև ելին, և բազում այգիք խոպանացան. պարտ է մեզ զխափանիչս մշակացն զվաղէս խափանել, զի ամենայն մշակ 'ի գործ իւր կարենասցէ: Եւ ֆայ մշակն Բասիլիոս յիւրմէ գործոյն կայր խափանեալ: Առ եկայք առաւեսցուք 'ի մէնչ երկուս, որ երթիցեն վճարիցեն 'ի կենաց զչարագործն Վաղէս: Ապա միում անուն էր Սարգիս 'ի նոցանէ, և միւսումն Թէոդորոս. առնակէին գնոսա, դնէին ժամ և ասէին. 'Ի սոյն ժամ եկեսջիք դուք և մեք: Եւ յարուցեալ գնացին և մեկնեցան:

Եւ զայս ամենայն լուեալ սոփեստէսն, որ էր 'ի վկայանոցին, և տեսեալ զայս տեսիլ աչօք բացօք, և կայր զարմացեալ, և անճուն լինէր մինչև յառաւօտն զցայգն: Եւ ընդ այգս այգոյն եկին ճասին մագիստրիանոսմն. և ասեն ցսոփեստէսն. Արի գնասցուք զճանապարհս: Եւ խօթապատճառս լինէր, և ոչ կարէր 'ի տեղւոյն խաղալ: Իբև սկսան նոքա սպիպել գնա, իսկ նա թալանայր, ճանէր զոգին, ոգի զոգւով ածէ՞, և ոչ կարէր բանիցն տալ պատասխանի մինչև յերեկոյ: Ապա իբև երեկոյ եղև, թողին զնա մագիստրիանոսմն 'ի վկայանոցին, և գնացին 'ի ֆաղաքն 'ի վանս իւրեանց: Եւ սոփեստէսն փակէր զդուռս վկայանոցին, 'ի կողմն եղեալ յիւրում տեղւոջն, յանկարծակի դարձեալ երևեցաւ նմա, զի բացան դուռնք վկայանոցին, եկին կուտեցան, և լի եղև վկայանոցն նոքիւն վկայիւք: Եւ ելանէին միմեանց ընդ առաչ մե-

սան սոփեստեսնք իջավ և իրեն կացարան ընտրեց վկայարանի ներսը, իսկ մագիստրոսներն իջևանեցին ֆաղաքում: Սոփեստեսը հաց կերավ, անկողին ձգեց, վկայարանի դռներ փակեց, անկողնի վրա նստեց և ուզում էր պառկել: Եվ մինչդեռ արթուն էր՝ բաց աչերով տեսավ, որ վկայարանի դռներ բացվեցին և երևեց վկաների մեծ բազմություն մեծ փառով: Նրանց առաջ դուրս եկավ սրբուհի տիկին Թեկղին փառավոր զարդարված, կարծես լույսի ճառագայթներ էին թափվում վրայիցը: Իրար ողջունեցին, տիկին Թեկղին ասում էր նրանց. «Բարով եկաք, Քրիստոսի սիրելիներ, բարեկամներ և վաստակավորներ»: Իրար ողջունելուց հետո, աթոռներ դրին ու կարգով նստեցին: Հետո սրբերն սկսեցին խոսել և ասում էին. «Տիրոջ այն սրբերը, որոնք դեռ ապրում են աշխարհում, նեղությունների մեջ են, ոմանք կապանքներում, ոմանք բանտերում, ոմանք ախտորում, ուրիշները ենթարկված են բռնությունների, ապօրինի հարկերի, տանջանքների: Մենք փութացինք այստեղ ժողովվել, որպեսզի անուշադիր չմնանք այս (չարչարանքներին), այլ նախանձախնդիր լինինք աստծուն հավատացողների համար: Մանավանդ որ տիրոջ շատ մշակներ խափանվել են, շատ արտեր անմշակ են մնացել, շատ այգիներ խոպանացել են. հարկավոր է մշակների (գործը) խափանող Վաղեսին խափանել, որպեսզի ամեն մի մշակ իր գործին կանգնի: Բասիլիոս ֆայ մշակն էլ իր գործից խափանվել է: Եկե՛ք, մեզանից երկուսին ուղարկենք, որ գնան, չարագործ Վաղեսին կյանքից զրկեն»: Ապա ընտրում էին երկուսին, մեկի անունը Սարգիս, մյուսինը Թեոդորոս[95], նրանց ուղարկում էին և ժամադիր էին լինում. «(Վաղը) նույն այս ժամին եկեք, մենք էլ կգանք»: Հետո վեր կացան, իրարուց բաժանվեցին գնացին:

Այս բոլորը լսեց սոփեստեսը, որ վկայարանումն էր գտնվում, բայց աչքերով տեսավ, մնացել էր զարմացած, մինչև լույս անքուն մնաց: Լույսը բացվելուն պես մագիստրոսներն եկան և ասացին սոփեստեսին. «Վե՛ր կաց, մեր ճանապարհը գնանք»: Նա պատճառ բերեց թե տկարացել է, չի կարող տեղից շարժվել: Երբ նրան սկսեցին սպիպել՝ նա թալկացավ, ուշաթափվեց, հազիվ էր շունչ քաշում և մինչև երեկո չէր կարողանում նրանց պատասխան տալ: Երբ երեկո եղավ՝ մագիստրոսները նրան թողին, գնացին քաղաք, իրենց կացարանը: Իսկ սոփեստեսը վկայարանի դռները փակեց և իր տեղումն բնկոլմանեցավ: Նրան հանկարծ դարձյալ երևաց, որ վկայարանի դռները բացվեցին, եկան ժողովվեցին և վկայարանը լցվեց նույն վկաներով: Իրար առաջ էին դուրս

ծաւ ուրախութեամբ,՝ և տային միմեանց ողջոյն. ապա արկանէին զաբռոս իւրաքանչիւր կարգաւ յօրինեալ բոլորէին կարգէին ՚ի նստել: Ապա գային սուրբն Սարգիս և Թէոդորոս երկոքեան ՚ի գործոյն՝ յոր առաքեալ էին, և մտանէին ՚ի ժողովս սրբոցն: Ապա հայեցան բազմութիւն ժողովոյ վկայիցն, եթէ՝ ո՞րպէս յոր գործ երթեալ էիք՝ վճարեցէք: Պատասխանի տուեալ ասէին, թէ՝ էր իսկ յորժամ ՚ի ձենջ գնացաք, սպանաք զբշնամին ճշմարտութեանն զվաղէս. և ՚ի՛ սոյն ժամ առ ձեզ դարձեալ եկեալ եմք աւասիկ առ ձեզ: Եւ յարուցեալ գոհանային ամենայն բազմութիւն ժողովոյն զտեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. և իբրեաք մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս: Եւ յաճի մեծի լինէր սոփեստէսն մինչև յայգ յառաւօտն:

Ապա իբրև այգ եղև, եկին մագիստրիանոսն, ասեն ցսոփեստէսն. Արի գնացուք առ կայսրն: Նորա պատասխանի տուեալ, ասէ. Կայսրըն մեռաւ, արդ մեք առ ո՛ երթիցուք: Եւ բազմ վիճումն ՚ի մէջ եղեալ նոցա վասն այսր բանիս, և գրաւական եդեալ ՚ի մէջ վասն այսր բանիս մինչև յերիս աւուրս: Եթէ ոչ, ասէ, հարցին աւար վաճառ, և հաղաք յափշտակեսցին, ես՝ եթէ կայցէ նոյն կայսրն՝ գլխատեցայց, զի իշխեցի զայս ճառել: Ապա թոյլ տային նմա մագիստրիանոսն մինչև յերիս աւուրս. և յետ երից աւուրցն սուգեցան զոյցն, զի մեռեալ էր կայսրն:

Ապա յետ այսորիկ արձակեցան ամենայն, որ միանգամ ոք կայր ՚ի պատիժս կամ յահսուրս. և դարձան ուրուք ուրուք որ միանգամ ինչք էին յափշտակեալք: Սոյնպէս և զկեսարացւոցն հրաման ետուն տալ զիւրաքանչիւր իւրաց. և կոչեցեալ սրբոյն Բասղի, զի զիւրաքանչիւր առցեն, և ոչ կամէին նուազ լինել: Զի թէպէտ և ասէր ցնոսա Բասեղ՝ եթէ աճաւասիկ երաշխաւոր իմ թափեցաւ ձեզ, զի ասացի, թէ և տաց ձեզ ձեռն ՚ի ձեռն ՚ի ձեռս ձեր: Եւ ոչ ինչ կամէին ունկնդիր լինել, այլ ասէին. Այդ ՚ի գանձ տեառն երթիցէ, որ դատեցաւ գդատաստանս մեր, և խնդրեաց վրէժ սուրբ եկեղեցւոյ ուխտի իւրոյ: Եւ ոչ ոք ՚ի կեսարացւոց աճտի հպեցաւ յարծաթ իւր, և ոչ մի ոք. բայց թողին զայն ՚ի գանձ եկեղեցւոյն: Ապա էառ զայն արհեպիսկոպոսն, արար աւազանս մկրտութեան կնոջ տալոյ. և կան հաստատեալ աւազանքն արծաթիք ՚ի տուն լուսարանին մինչև ցայսօր ժամանակի:

գալիս մեծ ուրախությամբ, իրար ողջունում էին և աթոռներ դնելով կարգով բոլորվում նստում էին: Հետո եկան սուրբ Սարգիսն ու Թեոդորոսը այն գործից, որի համար ուղարկված էին, և մտնում էին սրբերի ժողովը: Ապա ժողովված վկաների բազմությունը հարցրեց. «Ի՞նչպես վերջացրիք այն գործը, որի համար գնացել էիք»: Նրանք պատասխանեցին ասելով. «Հենց որ երեկ ձեր մոտից գնացինք՝ ճշմարտության բշնամուն վաղեսին սպանեցինք[96] և միևնույն այս ժամին դարձանք եկանք մեզ մոտ»: Ժողովված բոլոր բազմությունը վեր կացավ, գոհացավ մեր տեր Հիսուս Քրիստոսից, հետո բաժանվեցին, ամեն մեկը գնաց իր տեղը: Սոփեստեսը մեծ աճի մեջ մնաց մինչև առավոտ:

Երբ լուսացավ՝ մագիստրոսներն եկան և ասացին Սոփեստեսին. «Վե՛ր կաց, գնանք կայսեր մոտ»: Նա պատասխան տվեց ու ասաց. «Կայսրը մեռավ, էլ ո՞ւմ մոտ պիտի գնանք»: Այս մասին նրանց մեջ մեծ վեճ բացվեց, գրազ եկան այս առիթով մինչև երեք օր: «Եթե, ասաց նա, պարանոցները չթալանվին, բաղարները չկողոպտվին, եթե կայսրը նույնը մնա՝ ապա թող ես գլխատվիմ, որ այսպիսի բան համարձակվեցա ասել»: Նրան մագիստրոսները երեք օր ժամանակ տվին, երեք օրից լուրը ստուգվեց որ կայսրը մեռել է:

Սրանից հետո ազատ արձակվեցին բոլոր նրանք, որոնք պատիժների էին ենթարկված կամ աքսորված էին. և ումից ինչ որ հափշտակված էր՝ վերադարձրին: Նույնպես կեսարացոց համար հրաման տվին՝ ամեն մեկի իրերը վերադարձնել: Սուրբ Բարսեղը կանչեց, որ ամեն մեկը իր բերած իրը վերցնե, բայց ոչ ոք չէր ուզում մոտենալ: Թեպետ և Բարսեղը նրանց ասում էր. «Ահա իմ երաշխավորած իրերն ազատվեցին, և ես ձեզ խոստացա, թե անձամբ ձեր ձեռքը կհանձնեմ ձեր ստացվածքները». բայց նրանք չէին ուզում նրան լսել, այլ ասում էին. «Այդ իրերը թող մտնեն տիրոջ գանձարանը, որ մեր դատաստանը տեսավ և իր եկեղեցու սուրբ ուխտի վրեժն առավ»: Այսպես կեսարացիներից ոչ ոք իր արծաթին չնայեց, բոլորը թողին եկեղեցու գանձարանին: Ապա արհեպիսկոպոսը նրանցից չինել տվեց մկրտության ավազաններ, և այս արծաթե ավազանները մինչև այժմ էլ հաստատ մնում են լուսարանի[97] տանը:

ՅԱՂԱԳՍ ԴԱՐՁԻ ԻՇԽԱՆԱՅՆ ԱՆԴՐԷՆ ՅԵՐԿԻՐՆ ՀԱՅՈՑ, ՈՐՔ ԵՐԹԱԼՔ ԷԻՆ ԱՌ ԿԱՅՍՐՆ ՎԱՂԷՍ, ՋԻ ԵԻԿ ԴԱՐՁԱՆ ԱՌ ՏԷՐՆ ԻՐԵՆՑ ԱՐՇԱԿ. ԵԻ ԿԱՄ Ո՛ՐՔԷՍ ՏՐՏՄԵԱԼ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԱՐՇԱԿԱՅ ԸՆԴ ԿԱՅՍՐՆ, Ո՛ՐՋԱՓ ԻՆՔ ՎՆԱՍԵՑՑ ԱՍՔԱՏԱԿԱՒ ԿՈՂՄԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՅՈՒՆԱՑ

Այսոհիկ են իշխանքն, որք չոգան ՚ի թագաւորէն մեծէ Արշակայ ՚ի Հայոց աշխարհէն առ կայսրն Յունաց առ Վաղէս: Իմիքին մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս. և մեծ նահապետն Մամիկոնեան տոհմին, որում անուն Վարդան կոչիւր. եղբայր սա մեծի ստրատելատին Հայոց որում Վասակն կոչէր. որ դայեակի և սնուցիչի էին թագաւորին Արշակայ: Եւ ընդ նմա Մեհենն նահապետն Ռշտունեաց, և Մեհեան նահապետն Անձևացեաց, և Գարջոյլ Մաղխազ նահապետն Խոխոռունեաց, և Մուշկ նահապետն Սահառունեաց, և Դեմետ նահապետն Գնթունեաց, և Կիշկէն նահապետն Բագէնից, և Սուրիկ նահապետն Հռսիձորոյ, և Վրկէն նահապետն Հաբուժենից. սոքա չոգան դեսպանութեամբ ՚ի սէր միաբանութեան առ կայսրն Վաղէս: Իսկ թագաւորն Վաղէս արգել ամսոռեաց զմեծ խահանայապետն Ներսէս, և փոխանակ սորա արձակեաց գեղբօրորդի զթագաւորին Արշակայ զԳնել և զՏիրիթ. և գանձս բազումս և անթիւս վասն զմիտս հանել թագաւորին Արշակայ, ՚ի ձեռս Վարդանայ և որ ընդ նմա էին, առաքէր: Եկին հասին դեսպանքն երթեալ ՚ի կայսրէն առ թագաւորն Հայոց մեծաց Արշակ. և մատուցանէին նմա գիրս վարուակն կայսերն. և ընդ նմին գիր տրտնջելոյ և ամբաստանութեան: Ջի գրեալ էր կայսրն զարքոյն Ներսիսէ առ թագաւորն Հայոց Արշակ, թէ նա սպան զորդին իւր զմիամօր, վասն այսորիկ արգելաւ աստէն. զի մի՛ մեղադիր ինչ լինիցիս, ընկալ և զպատանեակսդ առաջի զարձակեալսդ զերկոսեան զեղբօրորդիսդ Արշակայ, զԳնելն և զՏիրիթն: Ունէիր և զանթիւ կարասի գանձուցն առաջի թագաւորին:

Իսկ թագաւորն Արշակ, իբրև լուաւ և ետես զայս ամենայն, աճշնորհ առնէր զտալիսն և զբերելիսն կարասոյն: Ի ցասումն մեծապէս բարկութեամբ ընդ կայսրն նիւթեաց, եթէ զիա՛րդ իշխեաց արգելուլ զայնպիսի այր զմեծ և զպատուական, զգլուխ և զվարդապետ զառաջնորդ աշխարհի և զթագաւորութեան միոջ: Քարիճ բազումք, ասէ, ՚ի վերայ կայսերն, և ձեր ՚ի բերելդ. քարիճ և մեր շատ կան ՚ի թափել զատամունս նորա ՚ի տալն, և ձեր ՚ի բերելդ. զմեր վատթարութիւնս յո՛ տարայց. արդ այդմ երախտեացդ ես դարձուցանեմ: Տայր հրաման վասակայ իւրում զօրավարին զօր ժողովել, զգունդս վանդակել, ելանել ճարկանել և աւար առնուլ զկողմանս Գամրաց: Իսկ զօրավարն

ԻՇԽԱՆՆԵՐԻ ՆՈՐԻՑ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԸ, ՈՐՈՆՔ ԳՆԱՑԵԼ ԷԻՆ ՎԱՂԵՍ ԿԱՅՍԵՐ ՄՈՏ ԵՎ ԷԼԻ ԴԱՐՁԱՆ ԻՐԵՆՑ ՏԻՐՈՋ ԱՐՇԱԿԻ ՄՈՏ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԸ ՁԱՅՐԱՑԱՎ ԿԱՅՍԵՐԻ ՎՐԱ ԵՎ Ո՛ՐՔԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՄԲ ՎՆԱՍԵՑ ՀՈՒՆԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹԱՆ ԿՈՂՄԵՐԻՆ

Սրաճք են այն իշխանները, որոնք Հայոց աշխարհից Արշակ մեծ թագավորի կողմից գնացին Հունաց Վաղես կայսեր մոտ: Իմիքը, Հայոց մեծ եպիսկոպոսապետ Ներսեսը և Մամիկոնյան ցեղի մեծ նահապետը Վարդան անունով, Հայոց մեծ ստրատելատ Վասակի եղբայրը, որոնք Արշակ թագավորի դայակներն ու սնուցանողներն էին: Նրանց հետ Ռշտունյաց Մեհենն նահապետը, Անձևացյաց Մեհյան նահապետը, Խոռխոռունյաց Գարջույլ Մախազ նահապետը, Սահառունյաց Մուշկ նահապետը, Գնթունյաց Դեմետ նահապետը, Բագենից Կիշկեն նահապետը, Հռսիձորի Սուրիկ նահապետը, Հաբուժենից Վրկեն նահապետը[98]: Սրաճք դեսպանությամբ գնացին Վաղես կայսեր մոտ սեր և միաբանություն հաստատելու. իսկ Վաղես թագավորը արգելեց ու ամսոռեց Ներսես մեծ հահանայապետին և նրա փոխարեն արձակեց Արշակ թագավորի եղբորորդիներին՝ Գնելին և Տիրիթին, և Արշատ թագավորի սիրտը առնելու համար անթիվ անհամար գանձեր տվեց Վարդանի և նրա հետ եղողների ձեռքը և նահապարհ դրեց:

Դեսպանները կայսեր մոտից մեկնելով՝ եկան հասան Մեծ Հայքի թագավոր Արշակի մոտ, երբ մատուցին կայսեր հրովարտակը, որ պարունակում էր տրտունջ և ամբաստանություն: Որովհետև կայսրը Հայոց Արշակ թագավորին գրել էր սուրբ Ներսեսի մասին, թե նա սպանեց իր մեկ հատիկ որդուն, այս պատճառով այստեղ արգելվեց: Մեզ չմեղադրես. ընդունի՛ր մեր ազատ արձակած երկու պատանիներին, Արշակի եղբորորդիներին, Գնելին և Տիրիթին: (Դեսպանները) մատուցին թագավորին նաև անթիվ գանձեր:

Իսկ Արշակ թագավորը երբ լսեց ու տեսավ այս ամենը՝ դժգոհություն հայտնեց գանձերը տվողին էլ, բերողներին էլ: Սաստիկ զայրույթ արտահայտեց կայսեր դեմ, թե ի՞նչպես նա համարձակվեց արգելանքի ենթարկել այնպիսի մեծ և պատվավոր մարդու, որ մի աշխարհի և թագավորության գլխավորը, ուսուցիչն ու առաջնորդն էր: (Այդ) «չատ բաներ, ասում էր, կայսեր գլխին թափին և ձեր՝ որ բերել եք: Քաներ մենք էլ շատ ունինք՝ (դրանց) տվողի և ձեր՝ բերողներիդ ատամները թափելու. ի՞նչպես պետք է այս անպատվությանը դիմանամ: Ես այս երախտիքի փոխարենը կհատուցանեմ»: Հրաման տվեց իր Վասակ զորավարին՝ զորք ժողովել, գնդեր կազմակերպել, գնալ,

սպարապետն Վասակ, վաղվաղակի գտուեալ հրամանս նորա կատարէր. զօրս բազումս իբրև գերկերոյր և զվաթսուն հազարաց 'ի մի վայր կուտէր. հարկանէր աւար առնոյր զկողմանս Գամրաց մինչև 'ի Խաղոն յանկուարացուց. զվեց ամ զմիմեանց զհետ աւերէր զաշխարհ սահմանացն Յունաց: Լցան աւարաւ բազմաւ և պէսպէս մեծութեամբ, բոնութեամբ սաստիկ մեծաւ թշնամութեամբ ընդ կողմանս ընդ այնոսիկ:

ԺԲ

ՅԱՂԱԳՍ ԽԱԴԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԲԱԳՐԱՒԱՆԴԱՅԻՈՅ, ՋՈՐ Է�ր ՁԵՌՆԱԴՐԵԱԼ ԻՒ ԹՈՂԵԱԼ ԷՐ ՆԵՐՍԷՍԻ ԾՏՂԱԳԱՀ ՅԻՒՐ ՏԵՂԻ. ԵՒ ԹԷ ՈՐՊԻՍԻ՛ ԱՅՐ ԷՐ. ԵՒ ԿԱՄ Ո՛ՐՋԱՓ ՆՇԱՆՔ ԿԱՄ ՁՕՐՈՒԹԻՒՆՔ ՈՐ 'Ի ՆՄԱՆԷՆ ԼԻՆԷԻՆ, ԿԱՄ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԿԱՅՐ 'Ի ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆՆ, ԵՒ ՈՉ ԱՌՆՈՅՐ ԱԿՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՄԵԾԻ ԱՐՇԱԿԱՅ, ԵՒ ԸՆԴՐԻՄԱՆԱՅՐ ԵՒՍ ԸՆԴՐԷՄ ՆՈՐԱ ՎԱՍՆ ԱՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՅ ԻՆՁ. ԿԱՄ ՈՐՊԷՍ ՆՆԱՄ ՏԱՆԷՐ ԱՂՔԱՏԱՅ ԻՐՐԻՒ ՁԵԳԻՍԿՈՊՈՍԱԳԵՏՆ ՆԵՐՍԷՍ

Այրս այս Խադ բուն էր սա 'ի Կարին գաւառէ, ի' գեղջէ Մարագայ. ձեռնասուն էր սա եպիսկոպոսապետին Ներսէսի, զաւագեաւ իւրով զսա էր սնուցեալ: Այլ իբրև 'ի միտս աչողակս եբեր, և յառաջադէմ եղև 'ի հաւատս, և հաւատարիմ յամենայն գործ գտաւ, իսկ իբրև յայնմ ևս առաւել 'ի պաշտօնն՝ զոր ունէր զսէրն ընդ եկեղեցին աստուծոյ, ապա աղխատաց ևս տեսչութիւն 'ի սրբոյն Ներսէսէ սմա հաւատացաւ. իսկ յայնմ ևս առաւել զբարեխնամութիւն ցուցանէր:

Ապա եպիսկոպոսապետն Ներսէս յորժամ երթայր յուղեգնացութիւնն յերկիրն Յունաց, ձեռնադրեաց զայս Խադ յեպիսկոպոսութիւն Բագրաւանդայ և Արշարունեաց, եթող զսա իւր փոխանակ եռեղապահ, և գնաց: Իսկ աշխարհ ամենայն Հայոց լեզուին, 'ի գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, տեղեաց տեղեաց մեծամեծ աշխարհակալ գաւառատեաւ նահապետ մեծազգեացմ և ամենայն ուխտ բահանայութեան, ժողովմ միաբանական ժողովրդոցն, 'ի սուգ տխրութեան ընկղմեալ էին վասն իւրեանց հօտապետ գլխաւորին, զի հեռացաւ 'ի նոցանէ: Իսկ սուրբն Խադ եպիսկոպոսն առ հասարակ աշխարհի տայր հրաման 'ի պահս և յաղօթս մտանել և 'ի խնդրուածս, զի դարձ լիցի սրբոյն Ներսէսի: Եւ զամենայն ժամանակս, որչափ և արգելաւ նա անդ, համակ խնդրէին պահօք ժողովուրդն. և ամենայնի իսկ Խադն առաջնորդէր նոցա, ոչ ինչ պակաս բան զիւրեանց բուն գնովուապետն Ներսէս, մինչև 'ի գալուստն նորա. մինչև կատարեաց տէր զաշխարհի խնդրուածս, և դարձաւ սուրբն Ներսէս 'ի տեղի իւր:

զարնել և ավարի առնել Գամիրխի կողմերը: Զորավար Վասակ սպարապետը իսկույն կատարում էր նրա հրամանը, մի տեղ էր ժողովում մոտ երկու հարյուր վաթսուն հազար զորք, գնում զարնում ավարի էր առնում Գամիրխի կողմերը մինչև Անկյուրիա քաղաքը. վեց տարի[99] հետևեհետև ավերում էր Հունաց սահմանի երկիրները: Լիացան մեծ ավարով և տեսակ-տեսակ մեծություններով, բուռն թշնամությամբ սաստկապես (ասպատակելով) այդ կողմերը:

ԺԲ

ԲԱԳՐԵՎԱՆԴԱՑԻ ՆԱԴ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ, ՈՐԻՆ ՆԵՐՍԵՍԸ ՁԵՌՆԱԴՐԵԼ ԷՐ ՈՒ ԻՐԵՆ ՏԵՂԱԳԱՀ ԹՈՂԵԼ, ԻՆՉՊԻՍԻ ՄԱՐԴ ԷՐ ՆԱ. ԿԱՄ ԻՆՉ ՍՔԱՆՉԵԼԻՔՆԵՐ ԷԻՆ ԿԱՏԱՐՎՈՒՄ ՆՐԱ ՁԵՌՔՈՎ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՀԱՍՏԱՏ ԷՐ ՄՆՈՒՄ ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ, ՁԷՐ ԱԿՆԱԾՈՒՄ ԱՐՇԱԿ ՄԵԾ ԹԱԳԱՎՈՐԻՑ, ԱՅԼ ԵՎ ԸՆԴՐԻՄԱՆՈՒՄ ԷՐ ՆՐԱՆ ՆՐԱ ԱՆՕՐԵՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՄԱՐ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՆՆԱՄՈՒՄ ԷՐ ԱՂՔԱՏՆԵՐԻՆ՝ ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԳԵՏԻ ՆՄԱՆ

Այս Խադը բուն Կարին գավառից էր, Մարագ գյուղից. նա Ներսես եպիսկոպոսապետի ձեռնասունն էր, նրա մոտ սնված: Նա ցույց տվեց ընդունակություններ, հավատի մեջ առաջադեմ հանդիսացավ, բոլոր գործերում հավատարիմ գտնվեց իր պաշտոնի մեջ առավելապես սեր ցույց տվեց դեպի աստծու եկեղեցին: Ապա սուրբ Ներսեսը նրան հավատաց աղոտների հոգաբարձության գործը. այստեղ էլ նա առավելապես երևաց իբրև բարեխնամ տեսուչ:

Ուստի երբ Ներսես եպիսկոպոսապետը պատրաստվում էր Հունաց աշխարհը ուղևորվելու՝ այս Խադին ձեռնադրեց Բագրավանդի և Արշարունյաց եպիսկոպոս և նրան թողեց իրեն փոխանորդ ու տեղապահ և ինքը գնաց: Իսկ հայերեն խոսող ամբողջ աշխարհը բոլոր գավառներում, կողմերում, տեղերում, մեծամեծ աշխարհակալներ, գավառատերերը, նշանավոր ցեղերի նահապետները և ամբողջ բահանայական ուխտը ժողովրդի բազմության հետ ընկղմված էին սգի ու տրտմության մեջ, որովհետև հեռացավ իրենց գլխավոր հոտապետը: Իսկ Խադ սուրբ եպիսկոպոսը բոլոր աշխարհին հրաման էր տալիս պաս պահել, աղոթք անել, խնդրել, որ սուրբ Ներսեսը ետ դառնա: Եվ բոլոր այն ժամանակ, որ նա արգելանքի տակ էր՝ ժողովուրդը պահեցողությամբ աղոթում էր նրա համար: Իսկ Խադը ամեն բանում նրանց առաջնորդում էր, ոչ պակաս բան բուն հովվապետ Ներսեսը, մինչև որ տերը կատարեց աշխարհի խնդրվածքը, և սուրբ Ներսեսը ետ դարձավ իր տեղը:

Զայնու ժամանակաւ Արշակ արքայ Հայոց ոչ ինչ կարի ’ի ճանապարհ աստուծոյ գնացեալ լինէր. զի որչափ ’ի մատաղութեանն հասակին ըստ աստուածային իմաստութեանն գնացեալ լինէր, նոյնչափ յաւագութեանն ’ի լիութեան ’ի շաղաշատութեան հատաւ[24]. զոր սուրբ հովիւն խադ բազում անգամ յանդիմանեալ կշտամբէր, որում ոչ ինչ անսացեալ լինէր:

Զայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն դաստակերտ մի ’ի հովիտն անուանեալ ’ի Կոգ գաւառի: Եւ ետ հրաման ընդ ամենայն գաւառս իշխանութեան իւրոյ, և հրամայեաց կարգել քարոզ ընդ ամենայն տեղիս աշխարհացն հրապարակին իւրոյ. և ամենայն կողմանս գաւառաց իւրոց լի առնէր հրամանաւն արքունի, զի եթէ ոք ումեք ինչ պարտիցի, եթէ ոք ուրուք ուստեք ինչ վնասեալ իցէ, կամ ոք ումեք ինչ դատ պարտիցի, ամենեքեան եկեսցեն ’ի դաստակերտն շինեսցին: Եթէ արիւնահան ոք իցէ, կամ վնաս ուրուք ումեք արարեալ իցէ, կամ գկին ուրուք տարեալ իցէ, կամ պարտապան իցէ, կամ ոք զուրուք կարասի ունիցի, կամ ոք յումեքէ երկիւղած ինչ իցէ, և եկեսցէ յայն տեղի, դատ և իրաւունք մի՛ լիցին: Իսկ եթէ ոք ումեք ինչ պարտիցի և որում պարտիցին, եկեալ յայն տեղին՝ առանց դատի և իրաւանց կալցին, և ’ի դուրս տարցեն:

Իբրև ել հրաման յարքայէն, ժողովեցան այնուհետև յայն տեղի ամենայն գողք և աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտ և մարդելոյզք, վնասակարք, գանձահատք, զրկողք, ստադատք, զրախօսք, գերփոդք, յափշտակողք, ժլատք: Բազում վնաս վնաս առնէին, և անդր անկանէին. բազում կանայք զարս թողուին, և անդր անկանէին. բազում արք գիւրեանց կանայս թողուին, և զայլոյ կանայս առեալ՝ անդր անկանէին. բազում ծառայք գիւրեանց տեառնց զգանձս ըմբռնեալ, փախուցեալք անդր անկանէին. բազում աւանդառուք զաւանդս լի զպահեստս բարձեալ, անդ անկանէին. գերփէին աւերէին զերկիրն ամենայն: Զի բէպէտ և կարի յոյժ բազմացաւ աղաղակն, դատ չկայր, և իրաւունք ումեք յարմուհուստ ոչ ելանէին: Վասն այսորիկ ամենայն մարդ հառաչելով վայէին, և ասէին ’ի հաւանել բանիցն իւրեանց. այս բանք ըստ այսմ օրինակի պաշտէին, առ հասարակ ամենեցուն ասելով՝ թէ իրաւունք մեռան, և վասն այսորիկ ոչ գտանէին. այլ թէ էր, և կորուսեալ էին, ուր և էր չանայաք խնդրէաք գտանէաք:

Իսկ տեղին աւանանայր, բաղաքանայր. մեծացաւ, բազմացաւ և ելից զհովիտն ամենայն: Ապա տայր հրաման արքայն Արշակ դնել անուն դաստակերտին յիւրակից անունն Արշակաւան. և շինեցին ևս անդ ապարանս արքունի: Եւ յայնմ հետէ ոչ ինչ երկնչէին ’ի տեառնէ

Այս ժամանակներն Հայոց Արշակ թագաւորը այնքան էլ չէր գնում աստվածահաճո հանապարհով: Որքան որ նա մանկության հասակում աստվածային իմաստությամբ էր վարվում, այնքան էլ չափահաս դառնալիս լկտության[100] խեղճության մեջ ընկավ, և թեպետ խադ սուրբ հովիվը հանախակի հանդիմանում էր՝ նա ուշադրություն չէր դարձնում:

Այս ժամանակ թագավորը իր համար մի դաստակերտ շինեց Հովիտ կոչված Կոգ գավառում, և իր իշխանության բոլոր գավառներին հրաման ուղարկեց. հրամայեց որ ամեն տեղ մուհետիկները կանչեն հրապարակներում, բոլոր գավառներում բոլոր կողմերում հայտնեն թագավորական հրամանը, որ «եթե մեկը մեկին պարտ է, եթե մեկը ուրիշին մի բանով վնասել է՝ թող բոլորը գան այդ դաստակերտը, և ապահով կլինին: Եթե մեկը (ուրիշի) արյուն է թափել, մեկին վնասել է, կինը տարել է կամ պարտապան է. կամ մեկի գույքը գրավել է, կամ որևէ մեկից երկյուղ ունի՝ թող գա այն տեղը. նրա դեմ դատ ու պահանջ չի լինի: Եվ եթե մեկը մեկին մի բան պարտ է և պարտատերը այդ տեղը գա (պահանջելու)՝ նրան առանց դատի ու արդարադատության բռնեն և դուրս հանեն»:

Երբ թագավորից այս հրամանը դուրս եկավ՝ ապա այդ տեղում ժողովվեցին բոլոր գողերը, ավազակները, արյունապարտները, մարդասպանները, ստախոսները, խաբեբաները, վնասարարները, գրպանահատները, զրկողները, դատի մեջ ստողները, զրպարտողները, կողոպտողները, հափշտակողները, ժլատները[101]: Շատ հանցանքներ էին գործում, և այնտեղ ապավինում: Շատ կանայք իրենց մարդկանց թողնում էին ու այնտեղ ընկնում· շատ տղամարդիկ իրենց կանանց թողնում էին և ուրիշների կանանց առնելով այնտեղ էին ընկնում. շատ ծառաներ իրենց տերերի գանձերը հանկ ձգելով փախչում այնտեղ էին ընկնում. շատ ավանդառուներ իրենց մոտ պահեստի դրված ավանդները վերցնում այնտեղ էին ընկնում. ամբողջ աշխարհը գերփում ավերում էին: Թեպետ և ամեն կողմից աղաղակ բարձրացավ՝ բայց դատ չկար, ոչ ոքի իրավունքը արհունիքից չէր պաշտպանվում: Այս պատճառով բոլոր մարդիկ վա՜յ տալով հառաչում էին. բոլորի բերանում ընդհանուր խոսք էր դարձել և միշտ ասում էին, թե «իրավունքը մեռավ. եթե նա գոյություն ունենար, բայց կորած լիներ՝ կփնտռեինք, մի տեղ կգտնեինք նրան»:

Իսկ այն տեղը ավան ու բաղաք դարձավ մեծացավ, բազմամարդացավ, ամբողջ հովիտը բռնեց: Արշակ թագավորը հրամայեց այդ դաստակերտի անունը դնել Արշակավան, իր անունով. նրա մեջ նաև թագավորական պարանոց շինեցին: Այնուհետև այլևս տերից ամե-

ամենեւին. և ամենայն մարդ զրկեալ էր իրօճն այնոհիւ, և բազմաց կառաչ աղաղակի տրտնջելոյն յաճախեալ բազմանայր: Վասն որոյ բազում անգամ ընդդիմանայր նմա և յանդիմանէր սուրբն Խադ եպիսկոպոսն. մանաւանդ յորժամ ստիպէին զնա, թէ ե՛կ ուղղեա սեղան յեկեղեցւոջն յաւանն յԱրշակաւանն: Իսկ նա բազում անգամ կշտամբէր և յանդիմանէր զթագաւորն Արշակ և զամենայն մեծամեծս և զիշխանս: Բայց ես, ասէ, ետեղապահ եմ. և ոչ ինչ առանց այնորիկ, որ թողն զիս հայրն, ունիմ իշխանութիւն գործել ինչ: Ապա կամեցեալ Արշակ թագաւորն պատուաւ և ազաւնութեամբ կարասոյն մեհենայիւ խաբել զսուրբ եպիսկոպոսն Խադ, բազում ոսկի և բազում զանձս արծաթոյ, և բազում ճոխոյս զարմունական ձիոյ՝ արմունի օճառովք, ոսկիվարաւանդ ապրդմովն, տայր նմա. պատրել հաճել զմիտս նորա, յիմնի յանգուցանել: Իսկ նա զկարասին, զոր առնոյր յարքայէն, յանդիման նորա աղխատաց բաշխէր, և զյանդիմանութիւնն ոչ ինչ թուլացուցանէր, մինչև նրամանն տայր հալածել զեպիսկոպոսն Խադ 'ի բանակէ անտի:

Իսկ նա ա՛ռ շրջել ընդ աշխարհն, կարգել և խրատել, ուսուցանել և զարմանել զաղխատսն, որպէս էր նմա յանձն արարեալ սրբոյն Ներսիսի, և իւր գնացեալ: Բազում նշանս և արուեստս և զօրութիւնս բժշկութիւնս հիվանդաց լինէին 'ի ձեռս նորա. բազում յոյժ առնէր սմանչելիս մեծամեծս: Բայց իբրև պաշտէր զաղխատսն, և սպառէր թափէր զամենայն յուրանս և զնորամանս և զմառանս գինւոյն, և զկարասս ամենայն մառանացն տայր բաշխել աղխատացն, երբայր յայլում աւուր տեսանէր լցեալ իւրեանք իբրև 'ի հրամանէ աստուծոյ. և դարձեալ օր ըստ օրէ մատակարարէր աղխատացն, և այն ստէպ ստէպ լցեալ լինէր:

Այսպիսի սմանչելիս մեծամեծս լինէին 'ի ձեռն առնս այսորիկ. էր սա զարմանալի անուանի և հռչակաւոր 'ի մէջ ամենայն Հայոց. շրջէր խրատէր և ուսուցանէր զեկեղեցիս Հայոց ընդ ամենայն տեղիս իբրև գիւր վարդապետն գՆերսէս: Բայց 'ի ժամանակեան միոջ եկին գողք, և գողացան զեզինս եկեղեցւոյն սրբոյ գհաղայ եպիսկոպոսին, առին և գնացին: Իսկ 'ի միում աւուր աչք կուրացեալ եղեն գողոցն, և իբրեաք յանիմաստս առ խարխափս եկին ածին 'ի դուրս սրբոյն Խադայ զամենայն եզինսն: Իսկ իբրև սուրբն Խադ ելեալ տեսանէր զնոսա, և գոհանայր զտեառնէ՝ որ այնչափ վերակացու և այցելու եղև հաւատացելոց իւրոց: Կայր յաղօթս եպիսկոպոսն Խադ, և բժշկէր զաչս գողոցն, և հրաման տայր յուանալ զանձն նոցա, և դնէր նաշ առաջի նոցա, և քայ ուրախ առնէր զնոսա մեծապէս: Ապա օրհնէր զնոսա, և տայր նոցա զեզինսն՝ զոր իւրեանցն էր գողացեալ, և արձակէր զնոսա գիւրեանց նահապարհն. և գնացին: Այսպէս բազում համբերութիւնս յամենայն գործս

նեւին չէին վախենում, ամենքը զրկանքներ էին կրում այդ պատճառով տրտունջ, բողոք, աղաղակ երկիրն էին բարձրացնում: Այս գործի նամար սուրբ Խադ եպիսկոպոսը շատ անգամ նրան նանդիմանում էր և դիմադարձություն էր անում, մանավանդ երբ նրան ստիպում էին, թե ե՛կ Արշակավան ավանի եկեղեցում սեղան կանգնեցրու: Իսկ նա նախատում ու նանդիմանում էր Արշակ թագավորին և բոլոր մեծամեծներին և իշխաններին: «Ես, ասում էր, տեղապահ եմ, ես իրավունք չունիմ որևէ բան անել առանց իմ հոր, որ ինձ թողեց (տեղապահ): Ապա Արշակ թագավորը մտածեց խորամանկությամբ՝ պատիվների, ստացվածքների միջոցով խաբել սուրբ Խադ եպիսկոպոսին, տվեց նրան շատ ոսկի և արծաթ, արմունական ախոռից շատ նժույգներ՝ արմունական սարքերով, ոսկեղեն կրծակալներով ու փորկապերով. սրանցով կամենում էր նրա խելքը նանգեցնել, իր կողմը դարձնել: Իսկ նա թագավորի առաջ աղխատներին էր բաժանում այն ստացվածքը, որ թագավորը տալիս էր, բայց նանդիմանությունը չէր պակասեցնում մինչև այն աստիճան, որ թագավորը նրամայեց՝ բանակից նրան նալածել:

Եվ նա գնաց աշխարհում շրջելու. բարեկարգում էր, խրատում և ուսուցանում, խնամում էր աղխատներին, ինչպես իրեն պատվիրել էր սուրբ Ներսեսը գնալիս: Նրա ձեռով կատարվում էին շատ նշաններ ու սմանչելիքներ, նիվանդների բժշկություններ: Բայց երբ նա օգնում էր աղխատներին և դատարկում էր բոլոր կնունքներն ու ամանները, մառանի բոլոր կարասները աղխատներին բաժանելով՝ մյուս օրը գնում տեսնում էր, որ նրանք նորից լցվել են, կարծես աստծու նրամանով այն էլ բաժանում էր աղխատներին, և նրանք շարունակ լցվում էին:

Այսպիսի մեծ սմանչելիքներ էր կատարում այս մարդը. նա մի զարմանալի, անվանի և նռչակված անձ էր բոլոր Հայաստանում. շրջում էր ամեն տեղ Հայոց եկեղեցիները, խրատում և ուսուցանում էր ինչպես իր ուսուցիչ Ներսեսը: Մի անգամ երկու գող էին եկել, սուրբ Խադ եպիսկոպոսի եկեղեցու եզները գողացել տարել էին: Մյուս օրը այս գողերի աչքերը կուրացան, և նրանք առանց գիտակցելու, խարխափելով բոլոր եզները բերին սուրբ Խադի դուռը: Նրանք սուրբ Խադը դուրս եկավ, նրանց տեսավ և գոնություն տվեց աստծուն, որ այնքան վերակացու և խնամող է իրեն նավատացողներին: Հետո Խադ եպիսկոպոսը աղոթքի կանգնեց, գողերի աչքերը բժշկեց, նրամայեց նրանց լողացնել, ապա նրանց առաջը նաչ դրեց և շատ ուրախացրեց: Այնուհետև նրանց օրհնեց. տվեց այն եզները, որ նրանք գողացել էին և նանապարհ դրեց, և նրանք գնացին: Այսպես բոլոր իր գործերում մեծ

իւր ցուցանէր. և բազում առնէր նշանս և զսքանչելիս: Եւ էին նորա երկու դստերք. և ետ զմինն Աւրկոյ ումեմն կին, և զկնի աներոյն իւր՝ ետ կալաւ զաթոռն Խադայ:

ՅԱՂԱԳՍ ՈՐ ԻՆՁ ԻՐՐԻ ԴԱՐՁԱԻ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՆԵՐՍԷՍ ՅԵՐԿՐԷՆ ՅԱՒՆԱՅ, ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԿՇՏԱՄԲԷՐ ԶԱՐՔԱՅՆ, ԿԱՄ Ո՛ՐՊԷՍ ԼԻՆԷԻՆ ՆՇԱՆՔ ԱՀԱԳԻՆՔ Ի ՎԵՐԱՅ ԱՒԱՆԻՆ ԱՐՇԱԿԱՒԱՆԻ, ԵՒ ՍԱՏԱԿԵՑԱՆ ԱՌ ՀԱՍԱՐԱԿ ՅԱՆԿԱՐԾՕՐԷՆ ԱՄԵՆԱՅՆ ԲԱԶՄՈՒԹԻԻՆ ՄԱՐԴԿԱՆ՝ ՈՐՔ ՅԱՅՆՄ ՏԵՂԻՈՑ ԷԻՆ

Այլ իբրև սատակեցաւ կայսրն, դարձան ամենայն հովիւքն եպիսկոպոսքն՝ որք ախտորեալք էին, և կեցեալք էին յիւրաքանչիւր քաղաս: Յայնժամ դարձաւ և սուրբ կաթողիկոսն Ներսէս յանապատ՝ ի կղզւոյ անդի, ուր էր զնոսա արգելեալ. և համաշխարհի էին խնդրուածք. միաւանգամ աշխարհի շնորհեցաւ: Իբրև եկն յաշխարհն Հայոց, ընդ առաջ երթային նմա ի գաւառաց գաւառաց եպիսկոպոսք հանդերձ իւրաքանչիւր ժողովրդովք, և նախարարք ամենայն և ամենայն գաւառակալք: Եւ բերէին առաջի նորա զիւրաքանչիւր հիւանդս, և բժշկէր զնոսա. ուր և բազում իսկ և կարի յանախէր գոհութիւն ի փառս աստուծոյ, և ամենայն մարդիկն առ բազում գութ հովուապետին՝ համարէին զանձինս իւրեանց թէ իճեանք իբրև զնոսա ի գերութենէ դարձեալ իցեն:

Եւ առնէին ուրախութիւն բազում հոգևոր մեծաւ ցնծութեամբ: Համաշխարհ ամենայն ոք իւրաքանչիւր տեառն աստուծոյ զեղեալ ուխտս կատարէին, որ ի վերայ հոգևոր գանձին հայրապետին՝ որ առաւ նոցա. և կատարեաց նոցա զխնդրուածս նոցա, և զորբութիւն արտառուրեան անձանցն սրտկեղ ցաւոցն սրտարեկութեանն, միաւանգամ սիրով գթով վարդապետութեամբ հոգևոր հարբն մխիթարեաց զամենեսեան: Ամենեքեան ի դժնէ տրտմութենէն զուարթացեալք, յուրախութիւն դառնային: Իճն իսկ թագաւորն Արշակ երթայր ընդ առաջ նորա, մինչև ի կողմանս Բահասերոյն, և անդի մեծաւ զուարթութեամբ դարձան: Եւ սկսան նորոգել և պայծառանալ վարք աշխարհի և կարգացն և օրինացն եկեղեցեացն:

Այլ իբրև եկն հայրապետն Ներսէս ի Հայս, ի վերայ հասանէր իւրում եռեղապահին սրբոյն Խադայ, զի էր կացեալ ի ճշմարտութեան և յուղղութեան, և գնացեալ էր զճանապարհս տեառն աստուծոյ, և ոչ էր թիւրեալ յաջ կամ յահեակ, բազում գութիւնս մատուցանէր աստուծոյ, զի զեաղ զնոգևոր որդեակն իւր եգիտ ըստ կամացն՝ որպէս իճն

համբերություն էր ցույց տալիս և շատ սաքանչելիքներ էր գործում: Նա երկու աղջիկ ուներ. նրանցից մեկը կնության տվեց մի ոմն Աւրուկի (կամ Աւրիկի), որ աներոջ՝ Խադի մահից հետո նրա աթոռը նստեց:

ԹԷ ԻՆՁ ՊԱՏԱՀԵՑ ՆԵՐՍԵՍ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀՈՒՆԱՑ ԱՇԽԱՐՀԻՑ ՎԵՐԱԴԱՌՆԱԼԻՍ ԵՎ ԻՆՁԳԵՍ ՆԱ ՆԱԽԱՏՈՒՄ ԷՐ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԵՎ ԻՆՁ ԱՀԱՎՈՐ ՆՇԱՆՆԵՐ ԿԱՏԱՐՎԵՑԻՆ ԱՐՇԱԿԱՎԱՆ ԱՎԱՆՈՒԹ ԵՎ ԻՆՁԳԵՍ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՄԻԱՀԱՄՈՒՌ ԿՈՏՈՐՎԵՑԻՆ ԱՅՆՏԵՂ ԵՂԱԾ ԲՈԼՈՐ ՄԱՐԴԻԿ

Երբ Վաղես կայսրը սատկեց՝ ետ դարձան բոլոր հովիվ եպիսկոպոսները, որոնք աքսորված էին և ապրում էին զանազան քաղաքներում: Ետ դարձավ նաև սուրբ Ներսես կաթողիկոսը այն անապատ կրղզուց, ուր նրանք աքսորված էին: Նա նորից շնորհվեց իր աշխարհին, որ նրա համար խնդրվածքներ էր անում: Երբ նա հասավ Հայոց աշխարհը՝ նրան ընդառաջ էին գնում զանազան գավառներից եպիսկոպոսներն իրենց ժողովուրդներով, բոլոր նախարարները, գավառների տերերը: Նրա առաջ էին բերում իրենց հիվանդները և նա բժշկում էր նրանց, որի համար գոհություն ու փառք էին տալիս աստծուն, բոլոր մարդիկ այնպես էին սիրում հովվապետին, որ համարում էին, թե իրենք ևս նրա հետ գերությունից ետ են դարձել:

Մեծ ցնծությամբ շատ ուրախություն էին անում. ամեն ոք կատարում էր իր ուխտն աստծուն, որպեսզի իրենց հոգևոր գանձն ու հայրապետը ետ դառնա, և աստված կատարեց նրանց խնդրվածքը, նրանց ցավալի որբությունը, նրանց սրտերը մաշող վշտերը փարատեց և իրենց հոգևոր գթասիրտ հոր վարդապետությամբ բոլորին մխիթարեց. բոլորը զվարթացան, դժնդակ տրտմությունը ուրախության փոխվեց: Իճը Արշակ թագավորը նրան ընդ առաջ գնաց մինչև Բահասերի[101] կողմերը և այնտեղից մեծ զվարթությամբ ետ եկան: Աշխարհի վարքը, եկեղեցիների կարգերը նորոգվեցին ու պայծառացան:

Արդ՝ երբ Ներսես հայրապետը Հայաստան վերադարձավ՝ վերահասու եղավ իր տեղապահի՝ սուրբ Խադի գործերին և տեսավ, որ նա ճշմարտությամբ և ուղղությամբ էր գործել, գնացել էր տեր աստծու ճանապարհով, ո՛չ աջ էր շեղվել և ոչ ձախ. ուստի մեծ գոհություն էր մատուցանում աստծուն, որ իր հոգևոր որդուն Խադին տեսավ այնպես՝ ինչպես իճը էր կամենում. նրան ընդունում էր սիրով ու կարոտով: Բայց երբ Խադից լսում էր թագավորի անօրենություններ, շատ գոր-

Գիտես, ո՛վ թագաւոր. վասն այսր ամենայնի ասացեալ է կանխասացութեանն աստուծոյ բերանովմ մարգարէիցն, եթէ «Վայ որ շինէ զտուն իւր՝ և ոչ արդարութեամբ, և վերնայարկս իւր՝ և ոչ իրաւամբ». եթէ «Յառակ առցին ողբն, և ասասցեն՝ եթէ վա՛յ որ ագահեսցէ զագահութիւն անձին իւրում, որ ոչ է իւր. զի եթէ տունմ գեղեցիկ իցեն և մեծամեծ իցեն, սակայն յաւեր դարձցին. զի մի՛ ոք բնակիցէ ՚ի նոսա մարդ, այլ ճարակ ճօտից լիցի, և դադարք գազանաց և որջք գազանաց և որջք բորենից և ճագարաց և աղուեսուց, բոյն խորդոց և ագռաւուց, և անդք սահմանակցաց. վասն այդորիկ աւերեսցին գործք ձեռաց իոց և մի՛ շինեսցին, և միանգամայն սատակեսցին ամենայն անօրէնքն բնակեալքն ՚ի նմա. և եղիցին դադարք եզանց և ճարակք ցոց, և աղուէսք մուտ և ելս խաղասցեն յարկս նոցին. և մի՛ շինեսցին, և մի՛ ևս բնակեսցեն, մինչև գլափտեան»:

Եւ զայս ամենայն խօսեցաւ հայրապետն Ներսէս, և գնացեալ ՚ի թագաւորէն ելեալ շրջէր ընդ գաւառս աշակերտութեանն ուղղել կարգել և հաստատել զեկեղեցիսն յամենայն գաւառս Հայոց: Եւ յետ երից աւուրց անցանելոյ բանիցն ասացելոց ՚ի վերայ, որ խօսեցեալ եղեն ՚ի բերանոյն երանելոյն Ներսէսի, մատենաց տէր զգեւդամաղաքն զԱրշակաւանն ՚ի ձեռս ճարտուածոցն: Եւ սկսաւ հաստանել զոր չարակեղծ իմն կոչեն, իսկ կէսքն ժանդ անուանեն. ելանէր ՚ի վերայ մարդկանն և անասնոցն: Ոչ աւելի եղև ճարտուածոցն ՚ի վերայ նոցա քան զերիս աւուրս յերկարեցաւ, զի անմարդացաւ. քան զքսան հազարք սատակեցան երդք մարդկան, ոչ մնաց ՚ի նոցանէ և ոչ մի. զի առ ճասարակ սատակեցան կոտորեցան յանկարծօրէն քանդեցան. զի միանաղոյն եկն սատակումն ՚ի վերայ նոցա:

Եւ յետ այսորիկ իճիճին թագաւորն ելանէր ՚ի խնդիր հայրապետին Ներսէսի. և գտեալ՝ խնդրէր ՚ի նմանէ, զի մատուսցէ աղօթս վասն նորա, զի մի՛ գուցէ և նա սատակեսցի, քանզի կարի զարհուրեալ էր: Ապա խօսել սկսանէր եպիսկոպոսապետն Ներսէս ընդ թագաւորին, և ասէր. Զի այժմ յաշխարհիս յայսմիկ, վասն զի արդարք և մեղաւորք զոյգ ճասարակ խառն են, վասն արդարոցն խնային մեղաւորք առ ժամանակ մի և ապրին, և յերկարին յաշխարհիս վասն նոցա կենացն և նոքա ՚ի պատճառս նոցա: Զի որոմն սերմանեալ թշնամւոյն ՚ի վերայ սուրբ բուսոյն սերմանն ցորենոյն, ընդ նմին զոյգ ճասարակ բուսեալ են. խնային վասն ցորենոյն սրբութեան և բոյս աղտեղութեան որոմնն. զի մի՛ գուցէ մինչ զորոմնն խաղանան արարեալ խլիցեն, խլիցի ընդ նմա և ցորեանն: Վասն այնորիկ առ ժամանակս վայելեն ՚ի դարմանոյ ցորենոյն և որոմն ընդ նմին ՚ի ցօղս և յանձրևս և յոռոգմունս, և ՚ի

ասելով. «Գիտացած լինիս, ո՛վ թագաւոր, որ այս (ըո արածի) մասին է գուշակել աստված մարգարեի բերանով, թե «վա՛յ նրան, որ տուն է շինում ոչ արդարությամբ և վերնաճարկ է կառուցանում՝ ոչ իրավունքով», և դարձյալ՝ թե «Իբրև առակ ողբեր պիտի ասեն. վա՛յ նրան, որ ագահությամբ խլում է այն որ իրենը չէ, որովհետև եթե գեղեցիկ ու մեծամեծ տներ լինին՝ ավերակ կդառնան և նրանց մեջ մարդ չի բնակի, նրանք ոչխարների արոտատեղ կդառնան, գազանների, բորենիների որջեր, ճագարների և աղվեսների ծերպեր, կոունկների և ագռավների բույներ, ցանկերի արտեր: Ուստի ըո ձեռների շինածները կավերվին ու էլ չեն շինվի, նրա մեջ բնակած բոլոր անօրենները միանգամայն կկոտորվին. այնտեղ եզները կպառկին, ցիռերը կարածեն, աղվեսները նրա ճարկերը էլ ու մուտ կանեն. նրանք չեն շինվի և նրանց մեջ ճավիտյան մարդ չի բնակի»: Այս բոլորը խոսեց Ներսես հայրապետը և թագավորից հեռանալով գնաց շրջելու Հայաստանի բոլոր գավառները՝ ուսուցանելով, եկեղեցիներում կարգեր հաստատելու:

Նրանելի Ներսեսի բերանից ելած այս խոսքերից հետո հազիվ էր անցել երեք օր, որ աստված Արշակավան գյուղաքաղաքը հարվածների ենթարկեց: Մարդկանց և անասունների վրա սկսեցին դուրս գալ վատրակ պալարներ, որ ոմանք կոչում են ժանտ[103]: Այս հարվածը երեք օրից ավելի չտևեց, որ (քաղաքը) անմարդացավ. մոտ քսան հազար բնակիչ կոտորվեցին, մարդկանցից մեկը կենդանի չմնաց, որովհետև բոլորը հանկարծակի կոտորվեցին, ոչնչացան. կոտորածն ընդհանուր էր:

Ապա իճիճը թագավորը դուրս էր գալիս Ներսես հայրապետին փնտռելու. նրան գտավ և խնդրում էր իր համար աղոթել, մի գուցե իճիճն էլ մեռնի, որովհետև անհրեկ էր եղել: Այն ժամանակ Ներսես եպիսկոպոսապետը խոսել սկսեց թագավորի հետ և ասաց. «Որովհետև այս աշխարհիս վրա արդարներն ու մեղավորները խառն են ապրում, ուստի արդարների պատճառով մեղավորներն էլ խնայվում են և ապրում են. արդարների պատճառով մեղավորների կյանքն էլ երկարում է այս աշխարհում: Ինչպես թշնամու ձեռով մարդու ցորենի մեջ ցանած որոմը, որ նրա հետ միասին բուսնում է՝ խնայվում է, մարդու ցորենի հետ (աճում է) և կեղտոտ որոմը, մի գուցե որոմը խղճահ անելիս ցորենն էլ պոկվի: Այս պատճառով որոմն էլ ցորենի պես առժամանակ դարմանվում է ցողով, անձրևով, ոռոգումով, ջերմությամբ և պայծառ

ջերմութիւնս խարակեալ և ի ճեշտ առևս առեգականն: Այսպէս այս լինի մինչև ի ժամանակս ննջոց, մինչև եկեսցէ ժամանակն յորժամ ննջեսցի ցորեան արմտեացն. զայն ի շտեմարանս արքայութեանն ժողովեսցեն, և զորոմն յայրումն յաւիտենական հրոյն. որ է իմն հունձ կատարած ժամանակաց, յորժամ Որդին ասուածոյ եկեալ հասանիցէ, և ապացէ հրամայ երկնաւոր մշակացն ընդ նմա իջելոց ի վերուստ՝ ի գերեզմանացն ննջել զամենայն ննջեցեալսն յարուցեալս:

Արդ այնուհետև ընդդրութիւն առնիցէ. զարդարսն նման ցորենոյ ընդ իճեան յարքայութիւնն իւր ընդունիցի, և զմեղաւորսն որոման նմանեալս՝ յանշէջ ի յաւիտենական ի հուր հրամայիցէ արկանել: Արդ այժմ ժամանակն ննջոց չև ևս էր, դու կանուխ խաղաճան որոմանն ի ցորենոյն առարեր, և կանուխ զորոմնն ի մի վայր առանց ցորենոյն ժողովեցեր. վասն այդորիկ յայնժամ կանխեաց հուրն, անխնայ յարձակեցաւ այրել, զամենայն որոմնն ի մի վայր ժողովեալս ի միում վայրի գտեալս միանգամայն վախճանեաց: Այլ այր դու, տես զանձն fո, զի մի՛ և դու կորիցես, և աշխարհս վասն fո: Իսկ թագաւորն ի գուես ճարեալ, մեծաւ աղաչանօք և բազում աղօթկերօք աղաչէր թագաւորն՝ ճաշեալ ընդ նմա. և եդ ուխտ, զի այլ ոչ ևս երբէք անցցէ զրանիւ ճորա:

ԺԴ

ՅԱՂԱԳՍ ՀԱՅՐ ՄԱՐԴԳԵՏԻՆ, ՅՈՐԺԱՄ ԵԿՆ ԷՋ Ի ԳԱՒԱՌՆ ՏԱՐՕՆՈՑ՝ ԵՔԷ ՋԻԱ՛ՐԴ ԵԿՆ ԵՒ Ի ՏԵՂԻ ԱՂՕԹԻՑՆ ԱՇՏԻՇԱՑ, ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ԴԱՏԱԳԱՐՏԵԱԼ ԳՆԱՑ ԱՆՏԻ ՅԻՒՐՈՑ ԲԵՐԱՆՈՑՆ Ի ՆՕՍԻՑՆ. ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ԱՆԿԱԼ, ՄԱՀՈՒՆ ԳԱՐՏ ԵՂԵԱԼ, ՍԱՏԱԿԾԱԼ Ի ՇԱՒԱՍԳԱՑ ԱՐԲՐՈՒՆՒՈՑ

Եւ էր մարդպետն Հայր այր չար և ժանտաբարոյիւք աճօրէն և անիրաւ ճան զառաջին Հայր անուն մարդպետաց: Սա կոտորեաց զամենայն ազգս նախարարացն ի ժամանակս թագաւորութեանն Տիրանայ արքայի. և սոյնպէս ատ թագաւորութեամբն Արշակայ՝ ևս չար ճան զառաջինն գործել չար ատ ամենայն մարդ: Արդ ելանէր սա շրջէր ընդ մարդպետութիւնն իւր. ապա եկն էջ Հայր Մարդպետ ի գաւառն Տարօնոյ ընդ իւր գետգն տեսանել:

Զայնու ժամանակաւ սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն. զի ննգետասան գաւառ զայն ձեռական իշխանութեան ունէին իրև սեպհական ի բնէ, առանձին առոյգի նոցա էր կարգեալ: Եւ յայն գաւառ գլխաւոր գաւառք այս էին՝ Այրարատ, Դարանաղէ,

արեգակի լուսով: Այս այսպես կշարունակվի մինչև հունձի ժամանակը, երբ ցորենի բերքը ննձում ու ժողովում են արքայության շտեմարաններում, իսկ որոմը հավիտենական կրակի մեջ են ածում ու այրում: Այս հունձը՝ ժամանակների վերջն է, երբ աստծու որդին կգա և իր հետ իջած երկնավոր մշակներին կհրամայե ննձել գերեզմաններից դուրս եկած բոլոր ննջեցյալներին: Այն ժամանակ նա ընտրություն կանե. արդարներին ցորենի նման իր հետ արքայություն կտանի, իսկ մեղավորներին որոմի նման կհրամայե ածել հավիտենական անշէջ կրակը:

Արդ՝ դեռ հունձի ժամանակը չհասած՝ դու որոմը խաղճան արիր ցորենից և վաղաժամ մի տեղ հավաքեցիր առանց ցորենի, ուստի և կրակը վաղաժամ եկավ և բոլոր որոմը, որ միատեղ հավաքված էր՝ մի անգամից ոչնչացրեց. իսկ դու զգույշ եղիր fո մասին, մի գուցե դու էլ կորչես, աշխարհս էլ fո պատճառով»: Իսկ թագավորը ծունկ չոգած մեծ աղաչանքով, պաղատանքով խնդրում էր (Ներսեսից) իր հետ ճաշակել, և ուխտեց, որ այնուհետև նրա խոսքից երբեք դուրս չի գա:

ԺԴ

ՀԱՅՐ ՄԱՐԴԳԵՏԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԱՐՕՆ ԳԱՎԱՌԸ ԳԱԼՈՎ ՄՏԱՎ ԱՇՏԻՇԱՏԻ ԱՂՕԹԱՐԱՆԸ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՅՆՏԵՂԻՑ ԳՆԱՑ՝ ԻՐ ԲԵՐԱՆԻ ՆՈՍՔԵՐՈՎ ԴԱՏԱԳԱՐՏՎԱԾ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՄԱՀԱԳԱՐՏ ԴԱՌՆԱԼՈՎ ՇԱՎԱՍԳ ԱՐԲՐՈՒՆՈՒՑ ՍԳԱՆՎԵՑ

Եվ Հայր մարդպետը չար ու չարամիտ մարդ էր, ավելի անօրեն և անիրավ քան նախկին Հայր մարդպետները: Սա էր, որ Տիրանի թագավորության ժամանակ կոտորել տվեց բոլոր նախարարական ցեղերը, նույնպես Արշակի թագավորության ժամանակ ավելի շատ չարիքներ էր գործում բոլոր մարդկանց՝ քան առաջ: Արդ՝ սա դուրս էր եկել իր մարդպետության (սահմանները) շրջելու. եկավ իջավ նա Տարոն գավառը՝ իր գյուղերը տեսնելու:

Այս ժամանակներն սուրբ Ներսես շրջում էր իր ձեռական իշխանության[104] մեջ: Որովհետև տասն և հինգ գավառ այդ ձեռական իշխանությունն ունեին ի բնե իրև հատուկ իրենց սեփական: Այս գավառում գլխավոր գավառներն էին Այրարատ, Դարանաղի, Եկեղյաց, Տարոն,

եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Մոփք, և որ ընդ մէջ նոցա և որ շուրջ զնոսօք: եկն էջ և Հայրն Մարդպետ զիւրով իշխանութեամբն շրջել. ապա եկն և սուրբ կաթողիկոսն Ներսէս յառաջին տեղին, ուր նախ էր զեկեղեցին շինեալ ի Գրիգորէ, և զվկայարանսն սրբոցն զվկայիցն, և անդ գյիշատակս սրբոցն կատարէր: Ապա դէպ եղև անցանել Հայր Մարդպետին առ տեղօրն, ցանկացաւ ելանել ի սուրբ տեղիսն Աշտիշատու կալ յաղօթս, և առնուլ ողջոյն ի սրբոյ եպիսկոպոսապետէն Ներսէսէ: Ապա իբրև կային յաղօթս, եառն ողջոյն. նոյնպէս տայր սուրբ հայրապետն Ներսէս, եկելոցն ճաշ պատրաստել: եւ մինչ դեռ նոքա պատրաստէին ինչ ըստ նմա արժանի աւագօրէն սպաս, նա ելանէր յեպիսկոպոսական կայենէն յապարանիցն մինչև ի վկայարանս սրբոցն. ի մեծ և ի գեղեցիկ հրապարակին զերթեւեկս առեալ շրջէր, զճեմս առեալ: Ապա տեսանէր զգեղեցկութիւն վայրացն, զնիստ շէնութեանն ի բարձրաւանդակ տեղեացն և զնայեացն ի խոնարհն, զի կարի վայելուչ էր տեղին. և շարակնեաց:

Ապա եմուտ բազմեցաւ յուտել և ըմպել: Իսկ յորժամ արբեցաւ սխաղակեցաւ, սկսաւ ներհինին խօսել բանս նպարոս և ամբարտաւանս յարբելեաց՝ դնէր թշնամանս Տրդատայ արքայի, ի մեռեալս և կենդանեացն ի կեանս, ազգի և տակի և տոհմի Արշակունեաց թագաւորացն Հայոց: Զիա՞րդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկանց տուեալ է, և ոչ արանց: եւ զսուրբ տեղօրն համաճեալ արհամարհէր, և ասէր՝ եթէ զայս տեղիս ի բաց ձգեմ, զի աստ պարտ է շինել զպարանս արքունի: եւ թէ ես Հայր Մարդպետ կենդանի իցեմ և առ թագաւորաւն հասից, ասէ, որ ինչ աստ իցէ, զայն ի բաց փոխեցից. և որ աստ իցեն, ասէ զնոսա հանից, և զտեղիս՝ արքունի սենեակ կազմեցից:

Իսկ սուրբ եպիսկոպոսապետն յորժամ լսէր, և ասէ՝ եթէ տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ընտրեաց նախ զայս տեղի՝ դնել զանուն իւր աստ, որոյ անունն առ հասարակ ընդ ամենայն տեղիս փառաւորեալ է Հարբն և սուրբն Հոգովն հանդերձ, որ պատուիրեաց մի՛ ամենևին յայլոյ ինչ ակն դնել կամ ցանգալ. իսկ որ ժլատեալ ի նորա նուէրսն բերեն աչս, և այնմ ցանկան, վասն այսորիկ նա մի՛ հասցէ առ այն՝ որով սպառնացաւն, այլ խափան լիցի իւր յառաջն նմա բազում մակարդ մեղացն իւրոց գործելոց: Ապա գնայր Մարդպետն Հայր ի սուրբ տեղեացն, և էջ յափն գետոյն հոսանացն եփրատու, հովիտսն բանձրախուռն անտառին, ի գետախառնուածն երկուց գետոցն, ի բաւուր խարձիցն մամխեացն, որ ի տեղւոջն ի հնոցն իմն շինած էաղաք՝ զոր շինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղւոյն Մծուրք կոչի:

Բզնունիք, Մոփք, և նոցանց մէջ ու նոցանց շուրջն եղածներն: Արդ՝ երբ Հայր մարդպետն եկել էր իր իշխանության մէջ շրջելու՝ սուրբ Ներսես կաթողիկոսն էլ եկել էր այնտեղ, ուր առաջին եկեղեցին էր շինված Գրիգորից և սուրբ վկաների վկայարանները, և այստեղ սրբերի ճիշատակն էր կատարում: Հայր մարդպետը, դեպքի բերմամբ, այդ տեղերով անցավ, ցանկաց Աշտիշատի սուրբ տեղերը բարձրանալ, որպեսզի աղոթե և Ներսես սուրբ եպիսկոպոսապետի ողջույնն ստանա: Աղոթք արին, իրար ողջունեցին, և սուրբ Ներսես հայրապետը հրամայեց եկողների համար ճաշ պատրաստել: Մինչ մարդիկ զբաղված էին նրա համար արժանավոր նոխ ճաշ պատրաստելով՝ նա եպիսկոպոսական կացարանից դուրս եկավ և նեմում էր ապարանքից մինչև սրբերի վկայարանները, մեծ և գեղեցիկ հրապարակում: Երբ նա տեսավ այդ տեղերի գեղեցկությունը, տեղի բարձր շէնը և ներքը բացված տեսարանը, որ շատ վայելուչ էր՝ նախանձով ու չկամությամբ լցվեց:

Հետո ներքինին ներս մտավ, բազմեց, կերուխումն սկսվեց: Երբ նա լավ խմեց ու հարբեցավ սկսեց հպարտ ու ամբարտավան խոսել: Հարբած դրությամբ սկսեց նախատինք բափել Տրդատ թագավորի վրա, Հայոց Արշակունի թագավորների՝ կենդանիների և մեռածների վրա, նրանց ցեղի և արմատի վրա: «Ինչպես, ասում էր նա, այսպիսի տեղերը տվել են կանանց շորեր հագած հոգևորականներին և ոչ թե տղամարդկանց»: Քամահրելով ու արհամարհելով սուրբ տեղերը՝ ասում էր. «Մենք այս տեղերը կքանդենք. այստեղ պետք է արքունի պարանք շինել: Եթե ես, Հայր մարդպետս, կենդանի մնամ և թագավորի մոտ հասնեմ՝ ինչ որ այստեղ կա՝ հանել կտամ, այստեղ եղողներին կհեռացնեմ և այստեղ թագավորի բնակության սենյակներ կշինեմ»:

Իսկ սուրբ եպիսկոպոսապետը երբ այս լսեց՝ ասաց. «Մեր տեր Հիսուս Քրիստոսը նախ այս տեղն ընտրեց, որ իր անունով կոչե, որի անունը ամեն տեղ փառավորվում է իր նոր և սուրբ հոգու հետ: Նա պատվիրեց ուրիշների ունեցածին աչք չդնել ու չցանկալ: Իսկ ով որ պարզապար աչք է դնում և ցանկանում է նրան նվիրվածին՝ նա չի հասնի այն նպատակին, ինչ որ պարզեց, այլ նրա գործած բազմաթիվ մեղքերը նրա մտադրությունը կխափանեն»:

Սրանից հետո Հայր մարդպետը սուրբ տեղերից հեռացավ և իջավ եփրատ գետի ափը, խիտ անտառով ծածկված հովիտը, մամուխի ծառերի թավուտները, երկու գետերի խառնուրդի մոտ, որտեղ հնոց ի վեր մի էաղաք է շինված եղել Սանատրուկ թագավորից Մծուրք կոչված տեղում:

Արդ իբրև եկեն եհաս յայն տեղի, ապա յուզեցաւ դատաստան բարկութեան ի տեառնէ ի վերայ աճօրէնն Հայրի, և իւրոց գործոցն և բանից խօսելոյ: Ապա մատնեցաւ նա ի ձեռս առն միոյ, որոյ անուն Շաւասպ կոչէր, մնացորդ ազգին Արծրունեաց: Մինչդեռ նստէր նա ի կառս, և երթայր զճանապարհն, եկն Շաւասպն: Սկսեալ պատմել Մարդպետին սուտ ի մաց իւրոց, և ասէ. Աւր մի տեսի սպիտակ իբրև զձիւն: Եւ հրապուրեաց զՄարդպետն իջանել ի կառաց անտի, և հեծանել ի ճժուգի. և մտեալ պառակէին մայրեացն: Իսկ իբրև ընդ բաւսքն անկանէին, զկնի եղեալ սակաւ մի Շաւասպն յետագոյն մնացեալ, յետոյ յառաջ հետիւ հարկանէր զմէջ ներքինւոյն Հայրի. անդէն բախ հանեալ զետն, և անդ յերկիր անգեալ սատակեցաւ: Եւ առն աստուծոյ ասացեալքն հուպ ընդ հուպ վաղվաղակի կատարեցաւ. զի ամենեքին բան ի գետին ոչ անկանէր առն աստուծոյ:

ԺԲ

ՅԱՂԱԳՍ ԱՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԱՐՇԱԿԱՅ, ԹԷ Ո՛ՐՔԷՍ ԵՍՔԱՆ ՋՈՐԻ ԵՂԲՕՐ ԻՒՐՈՑ, ՈՐՈՒՄ ԱՆՈՒՆ ԳՆԷ, Ի ՔՍՍՈՒԹԵՆԷ ՋԱՐՈՒԹԵՆԷ ՏԻՐՈՒԹԱՑ. ԿԱՄ Ո՛ՐՔԷՍ ՅԱՆԴԻՄԱՑԵԱԼ ԵՂԵՒ ՅԱՌՆԷՆ ԱՍՏՈՒԾՈ Ի ՆԵՐՍԻՍԷ, ԿԱՄ Ո՛ՐՔԷՍ ՋՄԵՒՍ ԵՎՍ ԵՂԲՕՐՈՐԴՒՆ ՏԻՐՈՋ. ԿԱՄ Ո՛ՐՔԷՍ ՉԿԻՆՆ ԳՆԵԼԱՑ ԱՐԱՐ ԻՒՐ ԿԻՆ. ԿԱՄ Ո՛ՐՔԷՍ ԷԱՑ ԻՒՐ ԿԻՆ Ի ՅՈՒՆԱՑ ՋՈՂՈՎԻՆ, ԿԱՄ Ո՛ՐՔԷՍ ԵՐԷՑՆ ՄՐՋԻՒՆԻԿՆ ՄԱՀՈՒԱՆ ԴԵՂՈՎՆ ՉՆԱ ԸՆԴ ՕՐԷՆՍՆ ՍՔԱՆԱՆՉԷՐ՝ ԽՈՐՀՐԴՈՎ ՓԱՌԱՆՁԵՄԱՑ

Յայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ որումն, մի ի նախարարացն նահապետին Սիւնեաց, որում անուն Փառանձեմ կոչէր. զորմէ կարի անուանեալ էր գեղեցկութեամբ և պարկեշտութեամբ: Ապա Գնել պատանեակն եղբօրորդին արքային էառ զնա ի կնութիւն իւր: Եւ համբաւ գեղեցկութեան աղերկանն ընդ վայրսն տարածեցաւ, և համբաւ գեղոյ նորա յանախեալ բազմանայր և ճնշէր: Ապա առ համբաւ ցանկութեան անուանն տրփեալ լինէր մին ևս ճօրեղբօրորդին Գնելոյ, որում անուն Տիրիթ կոչէր: Վասն որոյ անգանէր ի գաղտագողօնս, մինչ զի զնուն իւր տեսանել կարասցէ: Եւ յորժամ կարացն տեսլեանն՝ որում ցանկայր, այնուհետև հնարս խնդրէր առն կնոջն կորստեան, ո՛ գիտէ՝ զկին նորա նմա հնար լիցի յափշտակել:

Ապա Տիրիթն ի հնարս նենգութեան մտանէր, և բազում վարձէր իւր օգնականս և սատարս, որով զիւր չարախօսութիւնն յառաջ վարել կարասցէ: Եւ խիս ստութեան զԳնելոյն նենգութեամբ առ թագաւորն Արշակ մատուցանէր՝ թէ Գնել թագաւորել կամի, և զքեզ սպանանել. և

Երբ նա այստեղ հասավ՝ տիրոջ բարկության դատաստանը կատարվեց աճօրեն Հայրի, նրա գործերի և նրա խոսածների վրա: Նա մատնվեց մի մարդու ձեռքը, որ կոչվում էր Շավասպ և Արծրունյաց ցեղի մնացորդն էր[105]: Երբ նա կառք նստած գնում էր ճանապարհով՝ Շավասպը նրա մոտ եկավ. սկսեց իր գլխից հնարել և ասաց. «Մի առտեսա ձյունի նման սպիտակ»: Նա այնքան հրապուրեց մարդպետին, որ սա կառքից իջավ, ձի հեծավ, սկսեցին անտառում (առջին) հետևվել: Երբ թավուտների մեջ ընկան՝ Շավասպը փոքր ինչ ետ մնաց և Հայր ներքինուն հետևից մեջքին խփեց նետով, այնպես որ նետը նրա մարմնով անցավ: Նա գետին գլորվեց ու սատկեցավ: Այսպես աստծու մարդու ասածը անմիջապես կատարվեց, որովհետև աստծու մարդու ոչ մի խոսքը գետին չէր ընկնում:

ԺԲ

ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՆՕՐԵՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՏԻՐԻԹԻ ՉԱՐ ՔՍՈՒԹՅԱՄԲ ՍՊԱՆԵՑ ԻՐ ԳՆԵԼ ԵՂԲՕՐՈՐԴՈՒՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՀԱՆԴԻՄԱՆՎԵՑ ԱՍՏՎՈՒ ՄԱՐԴՈՒՅ՝ ՆԵՐՍԵՍԻՑ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՍՊԱՆԵՑ ԻՐ ՄՅՈՒՍ ԵՂԲՕՐՈՐԴՈՒՆ ՏԻՐԻԹԻՆ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԻՐԵՆ ԿԻՆ ԱՌԱՎ ԳՆԵԼԻ ԿՆՈՋԸ, ԻՆՉՊԵՍ ՀՈՒՆԱՍՏԱՆԻՑ ՈԼՈՄԻՆ ԻՐԵՆ ԿԻՆ ԲԵՐԵԼ ՏՎԵՑ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՄՐՋՅՈՒՆԻԿԸ ՓԱՌԱՆՁԵՄԻ ԽՈՐՀՐԴՈՎ ՆՐԱՆ ՍՊԱՆԵՑ, (ՀԱՂՈՐԴՈՒԹՅԱՆ) ԽՈՐՀՐԴԻ ՄԵՋ ՄԱՀՎԱՆ ԴԵՂ ԽԱՌՆԵԼՈՎ

Այս ժամանակներս Սյունյաց նախարարներից մեկը, Անդովկը, մի գեղեցիկ դուստր ուներ Փառանձեմ անունով, որ շատ հռչակված էր իր գեղեցկությամբ ու պարկեշտությամբ: Ապա Գնել պատանին, թագավորի եղբոր որդին, նրան կին առավ: Այս աղջկա գեղեցկությունը շատ հռչակվեց ու տարածվեց այդ տեղերում: Այս համբավից բորբոքված՝ Տիրիթը, Գնելի մյուս հորեղբոր որդին, սիրահարվեց իր հարսին[106] և մի հնարք էր որոնում որ կարողանա հարսին տեսնել: Երբ իր ցանկությանը հասավ, հարսին տեսավ այնուհետև սկսեց հնարքներ մտածել այդ կնոջ մարդուն կորցնելու, հուսալով թե գուցե կարողանա հետո նրա կինը հափշտակել:

Տիրիթն սկսեց նենգավոր հնարքներ մտածել. վարձում էր շատ օգնականներ ու գործակիցներ, որոնցով կարողանա իր չարախոսությունը առաջ տանել: Եվ նենգությամբ ստահոդ խոսքեր էր ուղարկում Արշակ թագավորին, (իբրև) թե «Գնելը մտադրություն ունի թագավորել և քեզ սպանել: Բոլոր մեծամեծները, նախարարները և

ամենայն մեծամեծօք և նախարարօք և ազատօք սիրեն զԳնել, և ամենայն աշխարհիս նախարարք կամին զտէրութիւն նորա ի վերայ իւրեանց առնուլ ման զհո: Արդ, ասեն, գիտեա և տես, արքայ, զինչ գործեացես. որպէս և կամիս, զիարդ մարթասցիս ապրել: Եւ այսպիսի բանիւք գրգռէին զթագաւորն Արշակ, մինչև հաստատէին ի միտս թագաւորին զիւրեանց ասացեալսն:

Ապա ոխացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնելոյ, և բազում անգամ հալածական առնէր զնա. և նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս: Ապա զնաւասարդաց ժամանակօքն առնէր խորհուրդ թագաւորն Արշակ, կոչել առ իմն զպատանեական Գնել և սպանանել: Ապա առաքէր զվարդան գեղբայր սպարապետին զնահապետ ազգին Մամիկոնեան տոմին, զի մեծաւ երդմամբ և նենգութեամբ կոչել կարասցէ, զի մի' խորհուրդն յայտնեսցի. գուցէ փախիցէ և ապրիցի. այլ զի պատրանօք և հրապուրանօք ածիցէ մինչև ի տեղին մահուն: Եւ էր բանակ թագաւորին ի Շահապիվանի ի բուն բանակի տեղոն Արշակունեացն ի ներոյ Սիւսեացն և ի վերայ ասպարիսացն: Եւ առաքեալ զվարդանն, զմեծ նահապետն յարքայէն Արշակայ, եկն եգիտ զպատանեական Գնել ի մօտաւոր տեղւոջն, այս իմն ի գետն Առաւիւտոյ անուանեալ: Մեծաւ ուխտիւ և բազում պատրանօք զպատանեական Գնել նանդերձ իւրով կնաւն և դրամբն նաւանեցուցանէր երթալ նասանել ի բանակն արհուն. իբրև այն թէ ի մեծարանս ինչ զնա կոչիցէ թագաւորն, բազում խնդանօք տարեալ նասուցանէր՝ եթէ թագաւորն Արշակ ոչ կամեցեալ զոօնս նաւասարդաց առանց հո անցուցանել, զի նաճեալ և խաղցացեալ է ընդ հեզ, վասն զի ըստ բանից չարախօսացն ոչ ինչ գոաւ ի հեզ չարութիւն. և ենաս իմն ի վերայ, զի զուր այժմ ատէր զհեզ՝ որ ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես:

Ապա չուեաց ամենայն կազմութեամբն իւրով Գնել, երթեալ նասանէր ի բանակն արհուն զգիշերն ամենայն բազում փութով տագնապաւ: Վասն զի վաղիւն նասելոյ առաւօտուն օրն լուսանայր կիւրակէն: Եւ յայնմ առուր տօն դիպեցաւ յիշատակի մեծին Յովանննու, որ ի Գրիգորէ և ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր: Ապա յայնմ յիշատակ աշխարհաբնակք մարդկան՝ որ ժողովեալն էին, և բազում եպիսկոպոսք՝ որ յայլոց գաւառաց. և ապա մեծ եպիսկոպոսապետն Ներսէս փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն զԽադ, և զիւր արհիդիակոնն եպիսկոպոսին՝ որում անուն Մուրիկ կոչէր. զի երթիցեն նոքա, պէտ զինչ և իցեն ժողովոյն՝ ընդ նորա վճարեսցեն: Եւ իմն անդէն մնաց յարքունական բանակին, զի զնոյն նաղորդութեանն և անդ

ազատներ սիրում են Գնելին, մեր բոլոր աշխարհիս նախարարներ գերադասում են, որ Գնելը լինի իրենց տեր ման քե դու, ուրեմն, թագավո՛ր. նայիր քե ի՛նչ պիտի անես, ի՛նչպես պիտի կարողանաս հեզ փրկել»: Այսպիսի խոսքերով գրգռում էին Արշակ թագավորին, մինչև որ նրան համոզեցին:

Ուստի թագավորը Գնել պատանուն ոխանալով՝ շատ անգամ հալածում էր նրան և երկար ժամանակ նենգավոր խորհուրդ էր մտածում նրա դեմ: Ապա նավասարդի (տոներին) մոտ Արշակ թագավորը մտածեց պատանուն իր մոտ հրավիրել և սպանել: Նրա մոտ էր ուղարկում Մամիկոնյան ցեղի նահապետ վարդանին, սպարապետի եղբորը, որ նենգությամբ, մեծամեծ երդումներով կարողանա կանչել, որ այս խորհուրդը բոլորովին գաղտնի մնա, մի գուցե փախչի ազատվի, այլ խաբելով ու հրապուրելով բերե հասցնե մինչև մահվան տեղը: Թագավորի բանակը գտնվում էր Շահապիվանում, Արշակունիների բուն բանակատեղում, պարսպապատ որսատեղի տակ, ձիարշավի հրապարակի վրա[107]:

Վարդան մեծ նահապետը Արշակ թագավորի կողմից եկավ, գտավ պատանի Գնելին մոտակա տեղում, այսինքն Առավյուտոց գյուղում: Մեծ երդումներով ու վարպետ խաբեությամբ համոզեց պատանի Գնելին՝ իր կնոջ ու տանու մարդկանց հետ գնալ արհուն բանակը, (նավատացնելով), թե Արշակ թագավորը նրան մեծարանքի համար է հրավիրում: Թագավորը, (ասաց նա), չկամեցավ նավասարդի տոները առանց հեզ անց կացնել. նա այժմ բարեհաճ է դեպի հեզ, որովհետև իմացավ, որ հո մեջ չկա չարություն, ինչպես որ չարախոսներն էին ասում. նա համոզվեց, որ մինչև այժմ ի զուր էր հեզ ատում, մինչդեռ դու նրա կողմից արժանի ես սիրո»:

Գնելը իր ամբողջ կազմությամբ նանապարհ ընկավ. ամբողջ գիշերը մեծ շտապով գնալով եկավ հասավ արհուն բանակը, որովհետև հաջորդ օրը, որ լուսանում էր՝ կիրակի էր: Այդ օրն էր հանդիպում մեծն Հովհաննես (Մկրտչի) նիշատակի տոնը, որ Գրիգորից և Տրդատից սահմանված էր Բագավան ավանում: Այդ տոնին եկել էին աշխարհական մարդկանց մեծ բազմություն և զանազան գավառներից շատ եպիսկոպոսներ: Ներսես մեծ եպիսկոպոսապետն էլ իր կողմից ուղարկեց իր աթոռակից Խադին և իր եպիսկոպոսական ավագ սարկավագին Մուրիկ անունով[108], որ երթան այնտեղ և ինչ որ հարկավոր է կատարեն. իսկ իմքը մնաց արհունական բանակում, որպեսզի հաղորդության (խորհուրդը) այնտեղ էլ կատարեն: Եվ այդ գիշեր բանակում

կատարեցեն: Եւ յայնմ գիշերի ցայգապաշտօն մեծ եղև ի բանակին առ կաթողիկոսին:

Իսկ իբրև առաւօտն ծագեաց, հասանէր վաշտն Գնելոյ ի բանակն արուեստի. և մինչ Գնելն արուեստական բանակին լինէր միջամուխ, ազդ լինէր թագաւորին եկն նորա: Ապա ելանէր հրաման յարուեստս, արտա՛ս ունել և տանել սպանանել: Եւ մինչ դեռ գայր նա ընդ բանակամէջն, և էր հեծեալ յերիվարին իւրում, իբրև մերձ եղև ի հրապարակն արուեստի, և անդ ի յարուեստս հասանէին բազում սպասաւորք վառեալ սուսերաւորք նիզակաւորք վաղրաւորք սակրաւորք սունաւորք և սպարակիրք հետևակք, որք մատուցեալք բուռն հարեալք ընկենուին յերիվարէ աճտի զպատահեսցեն Գնել. և ձեռն յետս կապէին զնա, և առեալ գնային ի տեղի կառափելոյն: Եւ ահագին կին նորա եկեալ էր ընդ նմա ժանուաւ, ի նմին ի նորին վաշտու էր ընդ առն իւրում: Իսկ իբրև տեսանէր թէ կալան զայր իւր և կապեցին, վաղվաղակի ընթացաւ յեկեղեցախորանն ժողովուրդն, ուր պաշտօն մարդկան բանակին առ աստուած կատարէր, մինչ դեռ առաւօտին աղօթքն մատչէին. և անդ Ներսէս մեծ եպիսկոպոսապետն: Իսկ կինն հասեալ առ արեւեպիսկոպոսապետն, գոյժ արկանէր նմա զիւրոյ առնն տարապարս կորուստն, ճչեալ մեծաձայն: Վաղ հասիր, ասէ , դեռ զամուսինն իմ զուր առանց վնասու և յանցանաց խողխողեն: Իսկ նորա խափանեալ զպաշտօնն, ընթանայր ի խորանն արուեստի, հասեալ ի դռացն ի ներս առ թագաւորն անգանէր: Իսկ թագաւորն իբրև տեսանէր զմեծ հաւանայապետն, գիտացեալ զբարեխօսութիւն համոզելոյն վասն առնն մանուանն զի մի՛ մեռցի, յայնժամ թագաւորն զիւր սամոյրսն զգլխովն ածեալ, ի փոյթ կնչանն մտեալ, զիւր դէմս երեսացն ծածկէր. բնոյ պատճառ եղեալ՝ զի նորա բանսն մի՛ լուիցէ:

Իսկ սուրբն Ներսէս մատուցեալ բուռն հարկանէր զթագաւորէն. խօսէր ընդ նմա, և ասէր. Թագաւոր, յուշ լիցի քեզ ո՛ տէրն՝ որ վասն մերոյ սիրոյ խոնարհեցաւ յիւրմէ ի բնական բարձրութենէն, և եղև եղբայր ծառայութեան մերոյ անարժանութեանս. ոչ վասն այլ իրիք, այլ զի լիցի վարդապետ սիրոյ. զի մեզ խնայելով ի միմիանս, նայեցեալ յաստուածեղէն վարդապետն, զմիմեանս սիրեսցուք երկեղիւ. զի մի միմեանց վնասել իշխեսցուք: Իսկ եթէ դու ի ո՛ եղբայր և ի ծառայակիցն և յընկերակիցն և ի հարազատն ոչ խնայեսցես, որ կամօքն եղբայրացեալ է մեզ տէրն՝ ի քեզ ոչ խնայեսցէ: Զի նա մեզ այսպէս ասաց. «Որ ձեզ լսէ, ինձ լսէ. և որ զձեզ ընդունի, զիս ընդունի. և որ զձեզ անարգէ, զիս անարգէ»: Եւ որ այժմ դեռ մեւք ընդ քեզ խօսի, լուր Քրիստոսի, զի մի՛ կորիցես դու. գուցէ անկեալ ի թագաւորութենէդ

կաթողիկոսի ներկայութեամբ գիշերային մեծ պաշտամունք (նախատոնակ) կատարվեց:

Լույսը բացվելու դեմ Գնելի խումբը հասավ արուեստի բանակը: Երբ Գնելը բանակի մեջ էր մտնում՝ թագավորին իմաց տվին նրա գալուստը: Ապա արուեստիից հրաման տվեց՝ բանակից դուրս պահել նրան և տանել սպանել: Եվ մինչ նա ձի հեծած անցնում էր բանակի միջով և մոտենում էր արուեստի հրապարակին՝ այդտեղ արուեստիից վրա էին հասնում բազմաթիվ սպասավորները՝ զինված սրերով, նիզակներով, սվիններով, վաղրերով ու սակրերով, և սպարակիր հետևակ զորք: Նրանք հասան, բռնեցին Գնել պատանուն, ձիուց վեր ձգեցին, ձեռները հետևը կապեցին և առան տարան գլխատելու տեղը: Նրա կինը նրա հետ էր գալիս ժանվարով[109], խմբի հետ: Երբ տեսավ որ իր ամուսնին բռնեցին ու կապեցին՝ իսկույն վազեց խորան-եկեղեցին, որտեղ բանակի մարդկանց համար աստվածային պաշտամունքն էր կատարվում, առավոտյան աղոթքը, որտեղ գտնվում էր նաև Ներսես մեծ եպիսկոպոսապետը: Կինը հասնելով եպիսկոպոսապետի մոտ՝ գուժում էր իր ամուսնի կորուստը: Ճիչ բարձրացրեց ասելով. «Շտապի՛ր, հասի՛ր, ամուսնուս առանց մեղքի, առանց հանցանքի տանում են աճա մորթելու»: (Կաթողիկոսը) պաշտոնը խափանելով, վազում էր թագավորի խորանը, դռան մոտ հասնելով՝ ներս էր բնկնում թագավորի մոտ: Իսկ թագավորը, երբ տեսավ մեծ հանանայապետին, գիտնալով, որ եկել է բարեխոսելու և համոզելու, որ (Գնելը) չսպանվի՝ սամուրենին գլխին հաշած, երեսը ծածկած մտավ խորանի ֆունջը[110], ճած ձևանալով, որպես թե նրա խոսքերը չէ լսում:

Իսկ սուրբ Ներսեսը մոտեցավ, բռնեց թագավորից, սկսեց խոսել. «Հիշի՛ր, թագավոր, ասում էր նա, մեր տիրոջ, որ մեր սիրո համար իջավ իր բուն բարձրությունից, եղբայր դարձավ մեզ՝ անարժան ծառաներիս, ոչ ուրիշ նպատակով՝ այլ միայն որպեսզի սիրո վարդապետող լինի, որպեսզի մենք էլ մեր աստվածային վարդապետին նայելով՝ միմյանց խնայենք, միմյանց սիրենք, իրար վնասել չհամարձակինք: Իսկ եթե դու ո՛ եղբորը, ծառայակցին, ընկերակցին ու հարազատին չխնայես՝ մեր տերն էլ, որ կամավորապես մեզ եղբայրակից է դարձել՝ քեզ չի խնայի: Որովհետև նա մեզ այսպես ասաց. «Ով ձեզ լսե՝ ինձ կլսե. ով ձեզ ընդունե՝ ինձ կընդունե, և ով որ ձեզ անարգե՝ ինձ կանարգե»: Լսիր Քրիստոսին, որ ներկայումս քեզ հետ խոսում է մեր բերանով, մի գուցե թագավորությունիցդ զրկվիս, կենդանույն մեռնակ

fումմէ, կենդանւոյն միայն շրջիցիս, և ոչ ոք fեզ օգնիցէ: Այլ այժմ լո՛ւր Քրիստոսի, և խնայեա յանձն fo, մի՛ ետղով զարիւն եղբօր fo ճարազատի՝ սպանանել զարդարն ի տարապարտուց յանխնայ:

Իսկ թագաւորն սալացեալ, ոչ ինչ լսէր. զերեսսն վտաւատօճն ծածկեալ՝ ոչ բանայր, և ոչ կամէր առնել բանիցն պատասխանի. այլ ընկողմնեալ պատեալ ծածկեալ կայր ի գահոյսն, զի և շարժել անգամ ոչ ազէր: Իսկ մինչ դեռ նա զայս և այսպիսի բանս ողոքոյ ընդ թագաւորին խօսէր, գայր արտաքուստ դահճապետն Երազմակ մտանէր ի խորանն արքունի, սկսանէր պատմել՝ զի ի գլուխ հանի կատարեցի, ասէ, զամենայն հրամանս արքունի. առի գնացի գԳնէլ, տարայ մինչև յորմ Սիւսիճ սպանի, և անդէն թաղեցի:

Ապա խօսել սկսանէր սուրբն Ներսէս, և ասէր. Արդարև իսկ իբրև օձի fարբի, զի խնու զականջս իւր՝ զի մի՛ լուիցէ նա զձայն թովչի ճարտարի, և մի՛ առցէ զդեղ ի դեղատուէ իմաստնոյ, սոյն օրինակ և դու խցեր զականջս, և կափուցեր զլսելիս, զի մի՛ լուիցես զօգտակարս բարբառոց զաստուածեղէն բանիցն խրատուն. այլ զգազանաց առեալ զբարուցս, սկսար լինել մարդախառն: Վասն այնորիկ որ ի վերայ նոցա ասացաւ, լիցի այն ի վերայ fo. որպէս ասէն. «Աստուած փշրեսցէ զատամունս նոցա ի բերանս նոցա, և զժանիս առիւծուց խորտակեաց աէր»: Վասն զի ընդդէմ դարձար Քրիստոսի տեառն fo, վասն այնորիկ անարգ լիչիր դու իբրև զչուր ճեղեալ. և ի լարել աղեղան սուր՝ տկարասչիր: Եւ կործանումն՝ որ բերանով մարգարէին ածի ի վերայ ձեր, ըմպել ազգիդ Արշակունեաց զչեփն բաժակն, արբչիf արբեսչիf և կործանեսչեf, և այլ մի՛ ևս կանգնեսչիf: Եւ անսպառ ժամանակին հոյն սպառնալիf հասանիցեն ձեզ ի տեառնն գալստեան. և անկչիf ի խաւարն, և մի՛ ևս տեսչիf զարև փառաց Որդւոյն աստուծոյ: Այլ դու, Արշակ, փոխանակ զի զգործս Կայէնի գործեցեր, զանէծսն Կայէնի զգեցչիր. անկչիր կենդանւոյն ի թագաւորութենէդ fումմէ, և չարչարեսցիս առաւել fան զՏիրան զհայրն fo, և դառն մահուամբ զկեանս fo յերկրէս մեծ նեղութեամբ վճարեսչիր:

Եւ զայս ամենայն խօսեցեալ ընդ թագաւորին fահանայապետին մեծին Ներսէսի, գնաց ի թագաւորէն, և այլ ոչ դարձաւ անդրէն յայն բանակ: Իսկ զպատանեական Գնել առնուին գնային մօտ ի Սիւսն արքունի, և անդէն կառափէին ի սարակ լերինն. որում տեղւոյն լսին անուանեալ է, մօտ յորմածս արգելոցացն որոյն էրիոցն, ընդդէմ մուտասատանին աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բանակետեղ բնին:

Ապա հրաման եղև յարքայէն. Ամենայն մարդիկն որ իցեն ի բանակին, մեծ և փոքր առ հասարակ, մի՛ ոք իշխեսցէ չերթալ. այլ ամենքն շրջես, և ոչ ոք fեզ չօգնե: Լսի՛ր Քրիստոսին, իճիդ fեզ խնայիր. fo հարազատ եղբոր արյունը մի՛ թափեր, արդար մարդուն անմեղ տեղը անխնա մի՛ սպաներ»:

Իսկ թագավորը fար կտրածի պես ոչինչ չէր լսում, երեսը ծածկել էր շորովը և չէր բաց անում, չէր կամենում նրա խոսքերին պատասխանել. այլ գահույքում կողքի ընկած փաթաթվել ծածկվել էր, տեղիցը շարժվել անգամ չէր ուզում: Եվ մինչդեռ (սուրբ Ներսես) այսպիսի բողոքական խոսքերով հորդորում էր թագավորին՝ Երազմակ դահճապետը մտավ ներս, թագավորի խորանը, և սկսեց պատմել. «Արքունի բոլոր հրամանները կատարեցի, ասաց. Գնելին առա տարա մինչև որսատեղի պատի տակը, սպանեցի և նույն տեղում թաղեցի»:

Այն ժամանակ սուրբ Ներսեսը խոսել սկսեց և ասաց. «Ինչպես որ fարբ օձը խցկում է իր ականջները, որպեսզի ճարտար թովիչի ձայնը չլսե և դեղ չընդունե իմաստուն դեղատվից՝ այնպես էլ դու ականջներդ խցկեցիր, լսողությունդ փակեցիր, որպեսզի աստվածային խոսքի խրատը չլսես, այլ գազանների fարf ստանալով՝ սկսեցիր մարդիկ ուտել: Ուստի ինչ որ գազանների մասին է ասված՝ fեզ վրա կկատարվի: Ասված է. «Աստված նրանց ատամները նրանց բերաններում կփշրե, և առյուծների ժանիքները տերը խորտակեց»: Որովհետև դու fo տիրոջ Քրիստոսին դեմ դարձար՝ ուստի անպիտան ու անարգ դառնաս ինչպես թափված ջուրը, և տկարանաս՝ իբր նրա աղեղը լարե: Եվ այն կործանումը, որ մարգարեի բերանով ասվեց՝ կճասնի ձեր վրա, որ դուք, Արշակունյաց ցեղդ, կխմեք վերջին բաժակը, կխմեք, կճարքեք ու կկործանվեք, և այլևս չեք կանգնի: Եվ տիրոջ (երկրորդ) գալստյան ժամանակ հավիտենական կրակի սպառնալիքը ձեր վրա հասնի, ընկնեք խավարի մեջ և այլևս չտեսնեք աստծու որդու փառքի արևը: Իսկ դու, Արշակ, որովհետև կայենի գործը գործեցիր՝ կայենի անեծքին գաս. կենդանույն թագավորությունիցդ զրկվիս և չարչարանքներ կրես fo Տիրան հորից ավելի և դառն մահվամբ մեծ նեղության մեջ կյանքդ վերջացնես»: Ներսես մեծ fահանայապետը այս բոլորը խոսեց թագավորին և նրա մոտից գնաց և այլևս բանակը չդարձավ:

Իսկ Գնել պատանուն առնում տանում էին արքունի որսատեղի մոտ և գլխատում էին լեռան մի բլուրի վրա, որին Լսին ես ասում, որսերի արգելոցի պատի մոտ, բանակատեղի դեմուդեմ. մուտաստանի աղբյուրի մոտ արված արքունի բազմոցների հանդեպ:

Ապա հրաման դուրս եկավ թագավորից. բանակում եղող բոլոր մարդիկ, մեծ և փոքր առհասարակ առանց բացառության, գնան կռ

նայն ոք առ հասարակ երթիցեն դիցեն աշխար կոծոց, և լացցեն զԳնել մեծ սեպուհն Արշակունի զսպանեալն: Իսկ ինքն թագաւորն գնացեալ ի լալիսն, նստեալ լայր զեղբօրորդին իւր, զոր ինքն եսպան: Երթեալ նստէր մօտ առ դին, լայր ինքն, և տայր հրաման՝ կոծ մեծ և աշխար դնել շուրջ զսպանելով դիակամբն: Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն գնանգերձանն պատառեալ, զգէսս արձակեալ, մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր. ձայն արկանելով ճչէր, յողբս արտասուաց յաղիողորմ գուժի առ հասարակ զամենեսեան լացուցանէր: Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն տեսանէր զկինն սպանելոյն, առփէր և ակն դնէր՝ առնուլ զնա իւր կնութեան:

Իսկ այն որ զենգութիւն՛ խութեանց նիւթեաց, և դաւով ի վերայ իւրոյ հարազատին սպանութիւնս կատարեաց, վասն նորին կնոջն արար զայն. զի մեծապէս սիրով հարեալ էր ի նմա: ՁՏիրիթն ասեմ, որ յառաջագոյն հարեալ ի կնոջն յայնմիկ, վասն որոյ զենգութիւնս սպանութեանցն թագաւորաւն գործեաց: Իսկ մինչ դեռ ի նմին կոծն սաստկացեալ էր, Տիրիթն սկսանէր ժոյժ չունելոյ տուփանացն: Պատգամ յղէր առ կին մեռելոյն, ասէ՝ զի մի՛ կարի զանձն ի աշխատ առներ այդչափ, զի այր բարի ես եմ հան զնա. ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա ի մահ, զի զքեզ առից ինձ կնութեան: Արդ մինչ դեռ կոծ մոլութեան զդիակամբն ցայլէին, զայսպիսի պատգամս առաքէր Տիրիթն: Բողոք բառնայր՝ թէ լուարուք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև. զի որ ինձ ակն եդ վասն իմ, զայրն իմ ետ սպանանել: Ձնեռն փետէր, ճչէր ընդ կոծելն:

Ապա իբրև մեծ իրն ճամարձակ յայտնեցան ի լսելիս ամենեցուն և ի ձայնարկուին ամենայն, եղև նա մայր ողբոցն, և ձայնարկուինն ամենայն ի ձայն ողբոցն սկսան նուագել զիրսն տրփանացն Տիրիթայ, զակն դնելն, զխութիւնն զնարս մահու նիւթել, զսպանումն, ձայնիւքն մրմնջոցն ի վերայ սպանելոյն ի մէջ կոծոյն բարբառէին գեղգեղեալ խանդաղատութեամբ: Ի նուաճել իւրեանց ձայնիցն, իրն յայտնեալ ճոչակ ճարկանէր: Զոր իբրև լուաւ թագաւորն Արշակ, և եհաս ի վերայ իրացն, զարմացեալ լինէր արմանայր ընդարմանայր, ստոյգացեալ ի միտ առնոյր զիրսն: Ապա խօսել սկսանէր թագաւորն, ծափս զծափի հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իրսն՝ զոր գործեաց, ասէ. Վասն զի ի կնոջն Գնելոյ զանարժան սիրով հարաւ Տիրիթն, առ այնմ զչարիսն նիւթեաց զխութիւն, զմահուն գոռութիւն զուր և տարապարտ. և զմեզ ևս արդար արեանն շաղախեաց վասն իւրոյ պղծութեանն. զեղբայրն իւր ետ կորուսանել, և զանճառիսն չարիսն և զանէծս որ ոչ անցանեն՝ ետ մեզ ժառանգել:

անեն և ողբան սպանված Արշակունի մեծ սեպուհ Գնելին. ոչ ոք չճամարձակվի ետ մնալ: Ինքն էլ թագավորը կոծի տեղը գնալով՝ նստել ողբում էր իր եղբորորդուն, որին ինքն սպանեց: Գնացել նստել էր դիակի մոտ, ինքը լալիս էր և հրամայում էր լաց ու կոծը սաստկացնել սպանվածի համար: Իսկ սպանվածի կինը, Փառանձեմը, զգեստներ պատառոտած, վարսերը արձակած, կուրծքը բաց, կոծում էր սգատեղում, բարձր ճչում էր, աղիողորմ ողբով ու արտասուքով բոլորին լացացնում էր: Իսկ Արշակ թագավորը սգատեղում տեսնում էր սպանվածի կնոջը, ցանկանում էր նրան և մտքում որոշում էր նրան կին առնել:

Իսկ նա, որ նենգությամբ այն խությունը սարքեց և դավով (թագավորի ձեռքով) կատարել տվեց հարազատի սպանությունը, այսինքն Տիրիթը, սաստիկ սիրահարված էր այդ կնոջը, այդ պատճառով էլ թագավորի ձեռքով նենգությամբ այդ սպանությունը կատարեց: Արդ՝ երբ կոծը սաստկացած էր՝ Տիրիթն այլևս չէր կարողանում իր կրքերը զրսպել: Մարդ էր ուղարկում մեռելի կնոջ մոտ և ասում. «Շատ էլ մի՛ շարշարվիր, ես նրանից լավ տղամարդ եմ. ես քեզ սիրեցի, այս պատճառով էլ նրան մեռցնել տվի, որպեսզի քեզ կնության առնեմ»: Արդ՝ մինչ բազմությունը դիակի շուրջը մոլեգնաբար կոծում էր՝ Տիրիթն այսպիսի պատգամ էր ուղարկում: Կինը բողոք բարձրացրեց. «Լսեցե՛ք բոլորդ, իմ ամուսնու մահը իմ պատճառով եղավ. մեկը ինձ աչք տնկեց և ամուսնուս սպանել տվեց»: Մազերը փետում էր, ճչում էր կոծելիս:

Երբ այս կարևոր իրողությունը բացվեց, ամենքին հայտնի դարձավ, ձայնարկուները ևս լսեցին՝ (Փառանձեմը) ողբի մայր դարձավ, ձայնարկուները[111] սկսեցին ողբաձայն խաղի նման երգել Տիրիթի սիրահարությունը, (կնոջ վրա) աչք տնկելը, խությունը, մահվան ճնարհ գտնելը, սպանությունը: Սպանվածի վրա կոծ անելով. աղիողորմ ձայնով երգում էին այս բաները: Երբ նրանց ձայները դադարեցին՝[112] իրողությունն արդեն տարածվել ճոչակվել էր: Արշակ թագավորը երբ այս լսեց և ճանգամանքներին վերաճասու եղավ՝ զարմացավ, ապշեց մնաց և ստրջանում էր եղածի վրա: Ապա սկսեց նա խոսել ծափը ծափին խփելով՝ մեծ զղջումով իր արած գործի համար. «Որովհետև Տիրիթը անարժան սիրով սիրահարվել էր Գնելի կնոջ՝ այս պատճառով էլ այդ չարիքը ճնարեց խությամբ, անմեղ մահվան պատճառ դարձավ. մեզ էլ իր պղծության համար արդար արյունի մեջ շաղախեց, իր եղբորը կորցնել տվեց և մեզ ժառանգել տվեց անճնարիճ չարիք և անեծք, որոնք չեն անցնի»:

Ապա իբրև հասանէր թագաւորն յիրացն հաստատութեան ի վերայ, և ճշգրտէր զիրսն, խլխլեալ անսայր բանին առ ժամանակ մի: Իսկ իբրև զմեռեալն ծածկեցին անդէն ի տեղւոջն՝ յորում սպանաւն, և առուրն հարուստ անցին ի վերայ իրացն գործելոց, պատգամ յղէր Տիրիթն առ թագաւորն: Կամ լիցի, ասէ, ես արքայի, զի հրաման տացես՝ զՓառանձեմ կին Գնելոյ բող առից ինձ կնութեան: Ջոր իբրև լուեալ արքային, ասէ. Արդ հաստատ գիտեմ զոր լուայն թէ ստոյգ է, վասն կնոջն իւրոյ եղև մահն Գնելոյ: Եւ անդէն արքայն մահ խոռհէր, սպանանել զՏիրիթ ևս փոխանակ ընդ մահուն Գնելոյ: Ջոր իբրև լուաւ Տիրիթ, զանի հարեալ յարքայէն՝ գիշերի փախստական լինէր: Ապա ազդ լինէր թագաւորին Արշակայ փախուստն Տիրիթայ, զայր հրամայ թագաւորն Արշակ ազատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն. զի իբրև հասցեն նմա, անդէն՝ ի տեղւոջն սպանցեն: Բազումք և քաջք զհետ լինէին փախուցելոյն Տիրիթայ. ապա երթեալ հասանէին ի գաւառին Բասենոյ ի մէջ մայրեացն. ի տեղւոջն՝ յորում հասանէին, անդէն զՏիրիթն սպանանէին:

Եւ յետ այսորիկ էառ իւր Արշակ զկինն սպանելոյն զՓառանձեմն: Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն, նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ. ասելով՝ թէ թաւ է մարմնով, և թուխ է գունով: Ապա իբրև կինն ի նա ոչ յանգոյց զմիտս իւր, առաքեաց արքայն Արշակ յերկիրն Յունաց, և խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհմէն ազգաւ, զի անուն էր նորա Ողոմպի: Եւ ուժգին սիրով սիրեաց զնա, և նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն. և կինն Փառանձեմ ոխացաւ ընդ Ողոմպին, և խնդրէր սպանանել զնա: Բայց ծնաւ ապա Փառանձեմ թագաւորին ուստր մի, և կոչեցին զանուն նորա Պապ, և սնուցին զնա, և ի չափ հասուցին: Եւ իբրև չրթափեաց և եղև հուժկու, եատուն զնա պատանդ ի դուռն կայսերն յերկիրն Յունաց:

Իսկ Փառանձեմն ի մեծ նախանձու և ոխութեամբ գնայր ընդ Ողոմպինոյն, և խնդրէր սպանանել զնա դեղովք: Իբրև ոչինչ ճնարս մեքենայից չկարէր գտանել, վասն զի անձինն իւրում կարի զգուշ կայր, մանաւանդ ի կերակրոց և յրմպելեաց, բայց զիւրոց նաժշտացն կերակուրս արարեալ և կամ զնոցին պարզեալ զգինի նաշակէր, և եթէ ոչ ինչ գտանէին ճնարք դեղել զնա մահուան դեղօք, ապա դրան երէց ումն արքունի՝ որ էր ի ժամանակին յայն, որում անուն Մրջիւնիկ, յԱրշամուճեաց տեղեացն ի նահանգէն Տարօն գաւառէն, զնա ի բանս արկանէր Փառանձեմն անօրէնն: Ջանարժանս զանկատար զանչնչելի գչարեացն մեղացն չմոռացական տանջանացն կատարեաց զգործսն զանարժանս զանտես զանելուր, այս ինքն ընդ կենաց դեղն զդեղ մահուն խառնելով. որ ուրեք երբէք այսպիսի գործ յումեքէ ի վերայ երկրի ոչ գործեցան:

Երբ թագավորը հաստատապես իմացավ գործի հանգամանքները՝ առժամանակ սուտ-խուլ եղավ, սպասում էր: Իսկ երբ մեռելը թաղեցին նույն տեղում որտեղ սպանվել էր, և այս անցքի վրա բավական ժամանակ անցավ՝ ապա Տիրիթը պատգամավոր էր ուղարկում թագավորի մոտ. «Բարեհաճի՛ր, արքա, և հրաման տուր, որ Գնելի կնոջ Փառանձեմին ինձ կին առնեմ»: Թագավորն այս լսելով ասաց. «Այժմ հաստատ գիտցա որ լսածս ճիշտ էր. Գնելի մահը նրա կնոջ պատճառով եղավ»: Թագավորն իսկույն մտածեց Տիրիթին նույնպես սպանել Գնելի մահվան փոխարեն: Տիրիթն երբ այս լսեց՝ թագավորից սաստիկ վախեցած՝ գիշերով փախավ: Թագավորին իմաց տվին Տիրիթի փախուստը: Արշակ թագավորը հրաման տվեց ազատների բանակին՝ հետամուտ լինել Տիրիթին և որտեղ որ նրան հասնեն՝ նույն տեղում սպանեն: Շատ քաջ հեծյալներ փախստական Տիրիթին հետամուտ եղան, գնացին հասան մինչև Բասեն գավառը և անտառի մեջ, որտեղ նրան հանդիպեցին՝ տեղնուտեղը սպանեցին Տիրիթին:

Հետո Արշակը իրեն կին առավ սպանված (Գնելի) կնոջը՝ Փառանձեմին: Եվ որքան Արշակ սիրում էր կնոջը՝ այնքան էլ սա ատում էր Արշակ թագավորին, ասելով, թե՝ «թավամազ մարմին ունի, թուխ գույն ունի»: Վերջը, երբ կնոջ սիրտը Արշակին չկպավ՝ սա մարդ ուղարկեց Հունաց երկիրը և այնտեղից՝ կայսերական տոհմից, խնդրեց բերել տվեց իրեն կին Ողոմպի անունով: Նրան ուժգին սիրով սիրեց և նրանով գրգռում էր առաջին կնոջ նախանձը: Փառանձեմը սրտումը ոխ պահեց Ողոմպիի դեմ և միջոց էր փնտռում նրան սպանելու: Բայց հետո Փառանձեմը թագավորից ունեցավ մի տղա, որի անունը դրին Պապ, նրան մեծացրին, չափահաս դարձրին: Երբ նա առույգ պատանի դարձավ՝ նրան պատանդ ուղարկեցին կայսեր դուռը, Հունաց երկիրը:

Իսկ Փառանձեմը, մեծ նախանձով ու ոխով լցված էր դեպի Ողոմպին և միջոց էր որոնում՝ դեղերով նրան սպանելու. բայց չէր կարողանում ոչ մի հնարք գտնել, որովհետև (Ողոմպին) շատ զգույշ էր իր անձին, մանավանդ կերակուրների և ըմպելիքների մեջ. նա ուտում էր միայն իր նաժիշտների պատրաստած կերակուրներ և խմում էր նրանց պարգած գինին: Երբ ոչ մի հնարք չգտնվեց նրան մահացու դեղերով բունավորելու՝ ապա անօրեն Փառանձեմը իրեն դավակից էր դարձնում Մրջյունիկ անունով մեկին Տարոն գավառի Արշամունիքից, որ այն ժամանակ արքունական դռան երէց էր: Անարժան՝ երբեմ չկատարված, անչնչելի՝ անմոռանալի չարագործություն՝ հավիտենական տանջանքի արժանի, չտեսնված, չլսված անարժան գործ կատարեց, կյանքի դեղի

Ընդ տէրունական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն ընդ հացն օրինաց խառնէին գդեղն սատակման. երեցն Մրջիւնիկ անուն, տալով չեկեղեցւոջն Ողոմպեայ տիկնոջն ընծեռել գմահուն գործ, և սպանանէր: Ըստ չարեացն կատարելոց զՓառանձեմայն ամենայն չարեօք լցեալ զկամս կատարէր. և յաճօրէնն Փառանձեմայն պարգև առեալ չերիցուն զգեղն՝ ուստի իսկ իմն էր ի հանհանգէն Տարօն գաւառէն, որում անուն Գումկունք կոչին:

Այլ սուրբ կաթողիկոսն Ներսէս այլ ոչ ես յաւել տեսանել գերեսս թագաւորին Արշակայ մինչև յօրն նորին կոտանեաւ. այլ փոխանակ Ներսիսի զՁունակ ոմն անուն, և կացուցին փոխանակ նորա գլուխ էրիստոնէութեանն. և էր ըստուկ ի ստրկաց արմունի: Ապա հրաման տայր թագաւորն՝ կոչել զամենայն եպիսկոպոսս Հայոց աշխարհին, զի եկեսցեն ձեռնադրեսցեն զՁոնակն ի կաթողիկոսութեան Հայոց: Եւ ոչ մի ոք ոչ հաւանեաց գալ. բայց միայն Աղձնեաց և Կորդուաց եպիսկոպոսք եկին, և զՁոնակն ձեռնադրեցին կաթողիկոսութիւն ըստ հրամանի թագաւորին: Եւ էր Ձոնակն այր զգօն, և ոչ ինչ ունէր լկղու յանդիմանութեան կամ խրատու, այլ հաւանեալ էր թագաւորին գինչ և նա գործիցէ:

ՅԱՂԱԳՍ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ԿՈՉԵՑԵԱԼ ԵՂԵՒ ԱՐՇԱԿ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ Ի ՇԱԳՀՈՑ ԱՐՔԱՅԷ ԳԱՐՍԻՑ, ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ՄԵԾԱՐԵՑԱՒ Ի ՆՄԱՆԷՆ ՄԵԾԱԳՏՍ. ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ՎԱՍԱԿ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՍՊԱՐԱԳԵՏՆ ՀԱՅՈՑ ՍՊԱՆԱՆՏՐ ՁՍՈՐԱԿԱԼ ԱՍՊԱՍՏԱՆԻՆ ԱՐՔԱՅԻՆ ԳԱՐՍԻՑ. ԿԱՄ ԹԷ ՋԻԱ՛ՐԴ ԱՐՇԱԿ ԱՐՔԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱՒՆ ԵՐԴՈՒԵԱԼ ԱՐՔԱՅԻՆ ԳԱՐՍԻՑ, ՈՒԽՏԷՐ ՆՄԱ, ԿԱՄ ԹԷ ՋԻԱ՛ՐԴ ՍՏԵԱՅ ՅԵՏՈՑ ԵՒ ՓԱԽԵԱՒ. ԿԱՄ ԹԷ ՋԻԱ՛ՐԴ ԱՐՔ ԵՒՐԱՆԱՍՈՒՆ ՁԱՍՏՈՒԾՈՑ ԳԱՇՏՕՆԵԱՅՍՆ ԿՈՏՈՐԷՐ ԱՐՔԱՅՆ ԳԱՐՍԻՑ ՎԱՍՆ ՆՈՐԱ

Յայնմ ժամանակի կոչէր առ իմն Շապուհ արքայն Պարսից զթագաւորն Հայոց զԱրշակ. և մեծարեցաւ ի նմանէ բազում պատուով և մեծաւ փառօք, բազում գանձու ոսկւով և արծաթով, ամենայն մեծութեամբ թագաւորութեանն: Եւ իբրև զեղբայր որպէս զորդի գրգեալ եղև ի նմանէ և երկրորդական զմեծ տուն տայր նմա յԱտրպատական աշխարհին. և ի միասին ի միում տախտի գահուն ի ժամ ուրախութեանն բազմէին, զմիագոյն զմիանշան գհամահանդերձ զարդու: Եւ զմիօրինակ զթագն օր ըստ օրէ իմեան և նմա թագաւորն Պարսից զարդ պատրաստէր. զոյգ երկոքին ի միասին որպէս զեղբարս հարազատս ան-

մէջ մահվան դեղ խառնելով: Տերունական սուրբ և աստվածային մարմնի, այսինքն հաղորդության հացի հետ խառնում էին սպանիչ դեղը, և Մրջյունիկ անունով երեցը եկեղեցում Ոլոմպի տիկնոջն էր տալիս այն մահաբեր (հաղորդությունն) և սպանում էր: Անօրեն Փառանձեմի ամենաչար կամքը նրա ուզածի պես կատարելով՝ այս չերեցը[113] նրանից պարգև էր ստանում Տարոնի գավառում Գումկունք գյուղը, որտեղից իմն էր:

Իսկ սուրբ Ներսես կաթողիկոսն այլև Արշակ թագավորի երեսը չտեսավ մինչև նրա կոչելու օրը: Ուստի Ներսեսի փոխարեն հրիստոնեության գլուխ նշանակեցին մի ոմն Ձունակի, որ արմունի ստրուկների մեջ ամենից ստրուկն էր: Թագավորը հրամայեց, որ Հայոց աշխարհի բոլոր եպիսկոպոսները ժողովվեն, Ձունակին՝ Հայոց կաթողիկոս ձեռնադրեն: Ոչ ոք չհամաձայնեց գալ, բացի Աղձնիքի և Կորդուքի եպիսկոպոսներից, որոնք և Ձոնակին կաթողիկոս ձեռնադրեցին թագավորի հրամանով: Այս Ձոնակը մեղմ ու հանդարտ մարդ էր, հանդիմանելու կամ խրատելու լեզու չուներ, այլ համակերպվում էր թագավորի արածներին՝ ինչ էլ նա գործեր:

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐԸ ՀՐԱՎԻՐՎԵՑ ԳԱՐՍԻՑ ՇԱԳՈՒՀ ԹԱԳԱՒՈՐԻՑ ԵՒ ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆԻՑ ՄԵԾԱՄԵԾ ԳԱՏԻՎՆԵՐՈՎ ՄԵԾԱՐՎԵՑ ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱԳԵՏ ՎԱՍԱԿ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆ ՍՊԱՆԵՑ ԳԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԱՒՈՒՐ ԱՒՈՒՐԱԳԵՏԻՆ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐԸ ԳԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՐԴՈՒՄ ՏՎԵՑ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՎՐԱ ԵՎ ՀԱՏՈ ԵՐԹՄԱՆ ՈՒԽՏԸ ՍՏԵԼՈՎ ՓԱՒԱՎ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՆՐԱ ԳԱՏՃԱՌՈՎ ԳԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԸ ՅՈՓԱՆԱՍՈՒՆ ՄԱՐԴ ԷՐ ԿՈՏՈՐԵԼ ՏԱԼԻՍ ԱՍՏՎԱԾ ԳԱՇՏՈՆՅԱՆԵՐԻՑ

Այս ժամանակ Պարսից Շապուհ թագավորը իր մոտ էր հրավիրում Հայոց Արշակ թագավորին և նրանց մեծարեց մեծ պատվով ու փառքով, ոսկու և արծաթի շատ գանձով և թագավորական ամեն տեսակ մեծություններով: Նրան փայփայեց ինչպես իր եղբորը, ինչպես իր որդուն, նրան պարգևեց երկրորդական մեծ տունը[114] Ատրպատական աշխարհում. ուրախության ժամանակ նրանք մի տախտի վրա էին բազմում գահերում, միևնույն գույնի և միևնույն նշաններով ու զարդերով միատեսակ զգեստ էին հագնում. ամեն օր միատեսակ թագ էր պատրաստում Պարսից թագավորը իր համար և նրա համար. ինչպես երկու

բաժինս յղփացեալ էին ի միում ուրախութեան, և յանպատում ուրախութեան ուրախ լինէին:

Ապա եղև դէպ օր մի յաւուրց, եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել զասպաստանաւ միով զարհային Պարսից. իսկ ախոռապետն արհային Պարսից նստէր ի ներս ի տան ասպաստանին: Իբրև տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեաց զնա, և ոչ ինչ շուխս դնէր նմա. այլ և անարգանս ևս դնէր թշնամանաց, ասելով ի պարսկերէն լեզու՝ թէ այծից Հայոց արհայ, եկ նիստ ի խրձան խոտոյ ի վերայ: Զոր բանս իբրև լսէր սպարապետն զօրավարն Հայոց մեծաց, որում Վասակն կոչէր, ի Մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութեամբ և բազում սրտմտութեամբ բարկանայր. ի վեր առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ի տեղւոջն գախոռապետն արհային Պարսից գլխատէր ի ներս յասպաստանի անդ: Զի ոչ կարաց լսել և ժոյժ ունել զիւրոյ թագաւորին զանարգանս. գիր մանն առաջի եդեալ լաւ հաշուէր բազում անգամ, հան զտեառն իւրոյ լսել զվատթարութեան թշնամանս: Իբրև ի Պարսից աշխարհի էին, յայլոց ի տեղի և ի նոցուն հրապարակի աներկիւղ և անկասկած յանկարծօրէն գայսպիսի զգործ կարաց գործել: Իսկ թագաւորն Պարսից յորժամ գայս լսէր, բազում շնորհս ունէր զօրավարին Վասակայ, ընդ բաջարտութեանն զարմացեալ և ընդ բազում աներկիւղութիւնն: Եւ բազում պարգեաց և պատուոյ արժանի առնէր, զքաջութիւն և զտիրասիրութիւնն գովեալ: Վասն այնր իրաց մեծաւ սիրով սիրէր զնա, և ըստ արժանի իւրում պատուէր զնա. մեծարէր զամենայն աւուրս հաշտութեան և խաղաղութեանն, որ ի մէջ նոցա էր:

Ապա մինչ դեռ անդէն ևս էր արհայն Հայոց առ արհային Պարսից, և մեծ սէր էր ի մէջ նոցա և մեծ խաղաղութիւն, երկնչելով երկեաւ թագաւորն Պարսից Շապուհ, եթէ գուցէ ստեսցէ սիրոյն նորա Արշակ արհայ Հայոց, և լիցի միաբան ընդ կայսերն Յունաց, և կամ կողմակ ինչ լիցի ի նմանէ: Եւ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն, և կացցէ յուխտին միաբանութեան ընդ նմա: Վասն այսորիկ երդումն պահանջէր ի նմանէն, մինչև կարի ստիպեալ բռնադատեաց զնա: Հաւանեաց, ասէ, և երդուիր ինձ յօրէնս հո, զի մի՛ ստեսցես ինձ: Իսկ իբրև կարի բռնադատեցաւ և ի նեղ անգաւ և շտապեալ տագնապեցաւ, եւտուն հրաման ածել զերիցուսն եկեղեցւոյն Տիսպոնի քաղաքի, որում անուն գլխաւորին Մարի. և բերին զաւետարանն սուրբ, և տայր երդումն արհայն Պարսից Շապուհ արհային Հայոց Արշակայ՝ երդնուլ յաստուածեան աւետարանն, զի այլ մի՛ ևս ստեսցէ նմա. այլ կացցէ յուխտի նորա, և պահեսցէ զդաշինս նորա: Եւ վասն

հարազատ եղբայրներ նրանք անբաժան իրար հետ էին լինում ուրախությունների ժամանակ և անպատմելի ուրախություններով լինում էին:

Այս օրերից մեկում՝ դեպի եղավ, որ Հայոց Արշակ թագավորը մտավ շրջելու Պարսից թագավորի պալատներից մեկում. իսկ Պարսից թագավորի ախոռապետը նստած էր ներսը պալատում. երբ նա թագավորին տեսավ՝ իսկի ուշադրություն չդարձրեց, ոչ մի մեծարանք ու պատիվ ցույց չտվեց, դեռ նրան ծաղրի և անարգանքի ենթարկեց՝ պարսկերեն լեզվով ասելով. «Այծ-հայերի թագավոր[115], ե՛կ այս խոտի խուրձի վրա նստիր»: Երբ այս խոսքերը լսեց մեծ Հայոց զորավար և սպարապետ Վասակը, Մամիկոնյան տոհմից՝ սաստիկ բարկացավ ու գայրացավ, հաշեց իր սուրը, որ մեջքից կախած ուներ, զարկեց, տեղնուտեղը գլխատեց Պարսից թագավորի ախոռապետին ներս պալատի մեջ, որովհետև նա չկարողացավ տանել այն անարգանքը, որ հասցվում էր իր թագավորին. նա ավելի լավ էր համարում իր անխուսափելի մահը, քան լսել իր տիրոջ հասցրված որևէ վիրավորանք կամ անարգանք: Երբ նրանք Պարսից աշխարհումն էին, օտար երկրում օտարների ներկայությամբ՝ նա կարողացավ հանկարծ աներկյուղաբար այսպիսի բան գործել: Իսկ Պարսից թագավորը երբ այս բանը լսեց՝ մեծ շնորհակալություն հայտնեց Վասակ զորավարին, զարմանալով նրա հպարտության և մեծ աներկյուղության վրա: Շատ պարգևներ ու պատիվներ էր տալիս նրան, գովելով նրա քաջությունն ու տիրասիրությունը: Այս պատճառով էլ շատ սիրում էր նրան, նրա արժանիքի համաձայն պատվում ու մեծարում էր նրան բոլոր ժամանակ՝ մինչ նրանց մեջ հաշտություն ու խաղաղություն էր տիրում:

Արդ՝ մինչ Հայոց թագավորը Պարսից թագավորի մոտ էր և երկուսի մեջ մեծ սեր ու խաղաղություն կար՝ Պարսից Շապուհ թագավորը երկյուղ զգաց, մի՛ գուցե Հայոց Արշակ թագավորը իր սերը ստե, Հույնաց կայսեր հետ միաբանի կամ իրենից անջատվի, որովհետև չէր հավատում նրան, թե նա իր մտերմական սերը կպահէ և իր հետ կապած միաբանության ուխտին հաստատ կմնա: Ուստի պահանջում էր, որ նա երդում տա և սաստիկ ստիպմունքով բռնադատում էր. «Համաձայնի՛ր, ասում էր նա, և ոչ հավատով երդվի՛ր, որ ինձ չես խաբի, չես դավաճանի»: Երբ սաստիկ ստիպմունքից ետքն ընկավ ու շվարեց՝ ապա կանչեցին Տիսբոն քաղաքի եկեղեցու երեցներին, որոնց գլխավորի անունն էր Մարի. բերել տվին սուրբ ավետարանը, և Պարսից Շապուհ թագավորը երդում էր անել տալիս Հայոց Արշակ թագավորին աստվածային ավետարանի վրա, որ նրան չի խաբի, չի դավաճանի, այլ հաս-

պի պատգամատու իսացս այսոցիկ էր տանուտէրն նահապետն մամիկոնէից առնելիք երկց եղբարց վասակայ սպարապետին, որում անուն Վարդան կոչէր, մեծապէս արհայ Շապուհ յակն առեալ սիրէր զնա: Իսկ իւր եղբարն վասակ զօրավարն Հայոց նախանձ բերէր ընդ երիցու եղբարն իւրում թնդ Վարդանայ: Կամեցաւ խանգար առնել ի մէջ Արշակայ թագաւորին Հայոց և փախչել. այլ ասէր Շապուհ, թէ՝ ձեր սուտ մեռանել գիտեմն, գիա՞դ կարէր ըստ հաւանութեան ելանել հոգւովնգի և կամ փախչել: Այլ, ասէ, գիտեմ զի կախարդութեամբ խաբեցէ գիս: և ես ունի զօրէնսն ձեր, զնա սիրեցէք. և նենգութեամբ ձեզ խաբեպիցէ եկեալ, յինէն փախուցէք: Եւ կամիմ դուք զաէրութիւն Աշակունեաց ի վերայ ձեր, և զնոյն խնդրէք:

Եւ երկեան նապուհ արհայ յարեզակն և ի ջուր և ի կրակ, եթէ ոչ միայն մարգոյ, այ յայդմ օրէնս հրեշտակութեան է, ոչ սամ սպրել. և ճշմարիտ ապա զամենեսեան առնել սպանանիլ: Եւ առնէին զպիտաւորն ճաշա գինւոյ խէզ. և զայլ երիցունսն և զսարկաւագունսն. ապէի նոքա փութանային այր. ի մի գոյր զամենեսեան զնոսա փոքրագիծ: Եւ զանկարաննէ առաւ՝ յոր երկուսս թագաւորն Արշակ՝ կապէր պատէր երկայն սաձան, և իւրաքանչիւրեան ձեռին. ի գանձ տան ճրամայէր. և ապա ճրամայն պանդխտացուցանէր:

ԺԴ

ՏԱՐԱՒԱՆ ԵՒ ՉԻՒՐԻ ՅԱՐՁԱԿԻՆ ՇԱՊՈՒՀ ԱՐՁԱԿ ԳԱՐՍԱՒ Ի ՎԻՐԱՒ ՔՐԻՍՏՈՍՆԵՈՒԹԵԱՆ

Այլ ի ժամուն յայնմիկ, յորում սպանաւ երիցն Մարիճ նահատակ եւրանականսն, յարոյց նալածանս մեծ Շապուհ արհայն հրեշտակութեանն հաւատոյ. հարկօք և պէսպէս վշտօք ընդէր գնոսա և հարուածովք բազում: Եւ յետ այսորիկ հրամայն ապա ընդ ամենայն տերիս իշխանութեան իւոյ, թէ որ միանգամ գանսն հրեշտակութեան ուղիղ յիշխանութեան իւում, գամենայն մարդ միանգամայն նահատակն ընդ սուր սպատակեցեն. զի մի գոցի յիշխանութեան իւում, որ հրեշտակեայ անուն անուանեսցէ գանձն իւր: Ապա բիւրս թիւրաց կոտորէին, և հաւատարս հազարաց. զի այնպէս առաւ հրաման ի թագաւորէն, զի ամենեքին հրեշտակեայ անուն ի սանձանն նոցա մի գոցի:

տատ կմնա իր ուխտին և նրա հետ դաշինքը անխախտ կպահպանե: Եվ որովհետև այս գործի մեջ միջնորդի դեր էր կատարում Վարդանը, Մամիկոնյան տոհմի տանուտերն ու նահապետը, Վասակ սպարապետի երեց եղբայրը՝ ուստի Շապուհը նրան պատվում ու սիրում էր, իսկ Հայոց զորավար Վասակը նախանձ զգաց իր երեց եղբոր Վարդանի դեմ. կամեցավ խանգարել (դաշնը) Հայոց Արշակ թագավորի և[116]... փախչել: Բայց Շապուհն ասում էր. «Եթե դուք երդումը հավատարմությամբ տված լինեիք՝ ի՞նչպես նա կկարողանար երդման դեմ գնալ և կամ խախտել: Ես գիտեմ, ասում էր, որ դուք կախարդությամբ ինձ խաբեցիք, դուք սիրեցիք նրան՝ որ ձեր կրոնին է պատկանում, նրա հետ հեշտությամբ խորհուրդներդ մեկ արիք և ինձանից փախցրիք: Դուք ավելի կամենում եք, որ Արշակունիները լինեն ձեր տերը և այս բանին հետամուտ եք»:

Եվ Շապուհ թագավորը երդվեց արեգակի, ջրի ու կրակի վրա, թե կհեղանի չեմ թողնի ոչ մի մարդ, որ հրեշտակեական հավատ ունի», և հրամայում էր բոլորին տանել սպանել: Եվ տարան նրանց գլխավորին, Մարի երեցին, և մյուս երեցներին ու սարկավագներին, ավելի քան յոթանասուն մարդ, և մի գրի մեջ կտրում էին նրանց շլինհներր: Իսկ այն սուրբ ավետարանը, որի վրա Արշակ թագավորը երդվեց՝ կապել էր տալիս երկաթե լարերով և իր մատանիով կնքելով՝ հրամայում էր գանձարանում զգուշությամբ պահել:

ԺԵ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԳԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՀ ԹԱԳԱՒՈՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑՆ ՔԱՐՁՐԱՑՐԵՑ ՔՐԻՍՏՈՍՆԵՈՒԹԵԱՆ ԳՆԴ[117]

Նույն այն ժամանակ, երբ Մարի երեցն սպանվեց յոթանասուն (մարդկանց) հետ՝ Շապուհ թագավորը մեծ հալածանք բարձրացրեց հրեշտակեական հավատի դեմ. հարկերով, տեսակ-տեսակ վշտերով ու հարվածներով նեղում էր հրեշտակյաներին: Հետո իր իշխանության բոլոր տեղերում հրաման արձակեց, թե «Ով որ իմ իշխանության մեջ հրեշտակյա անունն է կրում, բոլորին պետք է սրի ֆաշել, որպեսզի իմ իշխանության մեջ չմնա հրեշտակյա անունը կրող ոչ մի մարդ»: Այնուհետև բյուրերով ու հազարներով կոտորում էին, որովհետև թագավորից այնպես հրաման տրվեց, որ ոչ մի հրեշտակյա չմնա նրա իշխանության սահմաններում:

ՅԱՂԱԳՍ ՎԱՐԴԱՆԱՅ ՄԱՀՈՒՆ Ի ԹԱԳԱՒՈՐԷՆ ԱՐՇԱԿԱՅ, ՆԵՆԳՈՒԹԵԱՄԲ ԻՐՈՅ ԵՂԲՕՐՆ ՎԱՍԱԿԱՅ ՍՊԱՐԱՊԵՏԻՆ

Իսկ Վարդանն, Մամիկոնեան տոհմին տաճուտէրն, զայր հասանէր ճրեշտակութեամբ յարմայէն Պարսից առ արքայն Հայոց Արշակ. և մատուցանէր զիրովարտակն առաջի նորա: Եւ պատմէր նմա ի նմանէ բանս խաղաղութեան և զիաշտութեան, և զերդմանցն հաստատութիւն: Եւ տայր պատգամ, թէ որ ինչ եղեն, այն անա թողեալ լիցի վնասն. բայց դու յայսմ հետէ կաց յուխտին բանի, և մի՛ անցաներ ըստ բան երդմանցն fում օրինաց՝ յոր երդուար: Ապա թէ ոչ, դու գիտես, և fn օրէնքն որում ստեան: Իսկ Արշակ թագաւորն սիրով ունէր և սիրով լսէր պատգամին, և հաւանէր զասացելոցն: Եւ խաղաղութեամբ արձակէր զմեծ նահապետն ի տուն իւր, զի երթիցէ հանգիցէ յաշխատութենէն յերկայն ճանապարհէն. և գնաց:

Եւ յորժամ եկն նահապետն Վարդան առ Արշակ, ոչ դիպեցաւ անդ կրսեր եղբայր նորին Վասակ առ արքայի: Ապա յետ այսորիկ եկն Վասակն, և գրգռէր զթագաւորն ընդ իւրում եղբօրն երիցու, ասելով՝ թէ Վարդան է որ մատնէ զfեզ թագաւորին Պարսից, և կամի կորուսանել զfեզ. եթէ ոչ աճապարեցես վաղագոյն սպանցես զնա, դու կորնչիս և աշխարհս Հայոց: Ապա և կին թագաւորին ևս գրգռէր զթագաւորն սովին բանիւք, և զբանս զօրավարին Վասակայ հաւատարիմ առնէր նմա: Վասն զի ունէր նա զոխսն զայն ընդ Վարդանայ, զի նենգութեամբ և դաւով և մեծաւ երդմամբ սա այս Վարդան կոչեաց զԳնելն զայր նորա. յորժամ սպանանէր զնա թագաւորն Արշակ: Իսկ կինն զնոյն ոխութիւնս պահէր նմա, վասն այնորիկ աւելի ևս գրգռէր կինն թագաւորին ի վերայ նորա. մինչ զի և զօր գումարեցին ի վերայ Վարդանայ, զի երթեալք սպանցեն զնա. նա և ինքն իսկ իւր եղբայր Վասակ երթայր ի վերայ նորա:

Ապա երթեալ գտանէին զնա յիւրում գաւառին ի Տայս, յիւր ամուր բերդին՝ որում անուն էրախանի կոչի: Իրև տեսին զգունդն թէ Վասակ է, ոչ ինչ երկեան և ոչ զգուշացան կամ կասկածեցին. համարեցան զզօրն եղբօրն՝ թէ խաղաղութիւն է եկն նորա, մինչ իշին առ խորանին դուրս, զի էր հարեալ զխորանն ի ձոր յուրջ բերդին: Եւ մարդիկ զօրացն Վասակայ էին ամենեքեան ի ծածուկ վառեալք և ի վերայ ագուցեալք նահդերձ: Եւ մինչ դեռ նա լուանայր զգլուխ իւր մերկանդամ, հասանէին սուսերօք բազում մարդիկ, և խոցոտէին զնա մինչ դեռ նա կայր

ՎԱՐԴԱՆԻ ՄԱՀԸ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻՑ ՆՐԱ ԵՂԲՕՐ ՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՆԵՆԳՈՒԹՅԱՄԲ

Իսկ Վարդանը, Մամիկոնյան տոհմի տանուտերը, Պարսից թագավորի կողմից պատգամավոր էր գալիս Հայոց Արշակ թագավորի մոտ և (Շապուհի) հրովարտակը մատուցանում էր նրան: (Շապուհի) կողմից նրա հետ խոսում էր խաղաղության, հաշտության և երդումը հաստատ պահելու մասին: Հաղորդում էր (Շապուհի) պատգամը, թե «Ինչ որ եղավ՝ եղավ, այդ հանցանքը մոռացության եմ տալիս. բայց դու այսուհետև հաստատ կաց ուխտիդ և մի՛ դուրս գար fn երդումից՝ որ տվիր fn հավատով: Ապա թե ոչ՝ դու գիտես և fn հավատը, որին ստում ես»: Արշակ թագավորը սիրով լսում ընդունում էր այս պատգամը, համաձայնում էր նրա ասածներին: Հետո նա խաղաղությամբ արձակեց մեծ նահապետին, որ իր տունը գնա և հանգստանա երկայն ճանապարհի նեղությունից: Նա էլ գնաց:

Երբ Վարդան նահապետը Արշակի մոտ եկավ՝ նրա կրտսեր եղբայրը, Վասակը, պատահմամբ թագավորի մոտ չէր: Իսկ սրանից հետո, երբ Վասակն եկավ՝ սկսեց թագավորին գրգռել իր երեց եղբոր դեմ ասելով, թե «այդ Վարդանն է, որ fեզ մատնում է Պարսից թագավորի ձեռքը և ուզում է fեզ կորցնել: Եթե դու չչտապես, նրան մեջտեղից չվերացնես՝ թե դու կկորչես և թե Հայոց աշխարհը»: Թագավորի կինն էլ (Փառանձեմը) նույնպիսի խոսքերով գրգռում էր թագավորին և հաստատում էր Վասակ զորավարի ասածները: Որովհետև նա (արտումը) պահած ուներ ոխը այս Վարդանի դեմ, որովհետև այս Վարդանն էր, որ մեծ երդումով նենգությամբ դավաճանորեն նրավիրեց իր ամուսին Գնելին՝ երբ Արշակ թագավորը որոշել էր նրան սպանել: Կինը այդ ոխը դեռ պահում էր նրա դեմ, ուստի ավելի ևս գրգռում էր թագավորին նրա դեմ, մինչև որ զորք գումարել տվին, որ գնան Վարդանին սպանեն. ինքը Վասակն էլ գնաց իր եղբոր վրա:

Գնում գտնում էին նրան Տայոտում, իր գավառում, իր ամուր բերդում որ կոչվում էր էրախանի: Երբ տեսան որ գունդը Վասակի գունդն է՝ երկյուղի կամ կասկածի մեջ չընկան, չզգուշացան. մտածեցին թե եղբոր զորքն է, եկել է խաղաղության համար: Այս կերպով հասան մինչև վրանի դուռը, որովհետև (Վարդանը) վրան էր զարկել բերդի տակ, ձորում: Վասակի զորքերը ծածուկ զինված էին և վրայից սովորական զգեստ հագած: Եվ մինչ նա մերկանգամ լվանում էր գլուխը՝

խոնարհեալ՝ զի արկցեն չուր ի վերայ նորա: Եւ ոչ ոք տայր ժամանել յառնել, զի անդէն ի կողի սպանանէին զնա:

Եւ կինն նորա յղի էր, և հասեալ էին ատուրք ծննդեան իւոյ: Մինչ դեռ ի վեր ի բերդին նստէր ի գահոյս իւրում, եղև գոյժ սաստիկ. իսկ նա իբրև զձայն գուժոյն լսէր, վազէր ի գահոյից անտի: Եւ ընդ վազելն ծնաներ զմանուկն: Եւ կոչէին զանուն մանկանն յանուն հօր իւոյ Վարդան:

ԺԲ

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՋԻԱՐԴ ԱՆՄՏՈՒԹԵԱՄԲ ԳՆԱՑԲ Ի ՍԳԱՆՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ՅԱՆՆՆԱՑ ԱՐՇԱԿ ԱՐՔԱՑ ՀԱՅՈՑ

Այլ աճա ի ժամանակին՝ յորժամ մեռեցաւ յարմուճական բանակէն սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս, և ոչ ոք գոյր ընդդիմացեալ թագաւորին՝ որ տայր նմա գյանդիմանութեան գխրատն, այնուհետև ըստ կամաց չարութեանն իւոյ գնացեալ լինէր նա. և զբազումս ի նախարարացն կոտորեաց, զբազումս ազգատ արարեալ անհիտեաց, և զբազմաց տունս հատանէր յարմուճիս: Բայց զտոհմս Կամսարականացն՝ որ էին գաւառաց տեառ, Շիրակայ և Արշարունեաց, ազգատ[25] առնէր. և զգաւառսն ունէր յոստան:

Բայց յազգէն յայնմանէ մանկիկ մի փոխրիկ, անուն Սպանդարատ, թագուցեալ ապրեցուցանէր սպարապետն զօրավարն Հայոց Վասակ, որ յետոյ լինէր ժառանգ աշխարհին: Թագաւորն Արշակ հրամայեաց տալ՝ յԱրշարունեաց գաւառին շինել իւր բերդ մի ամուր, Արտագերս անուն: Եւ զգաւառն յուսեստ ի պատրաստութիւն համբարաց թողոյր բերդին, վասն զի կարի ամուր էր բերդն այն:

Ի

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՋԻԱՐԴ ԳԱՏԵՐԱԶՄ ՍԱՍՏԿԱՑԵԱԻ ԷՐ Ի Մ�էՋ ՅՈՒՆԱՑՆ ԵՒ ԳԱՐՍԻՑ, ԵՒ ԹԷ ՋԻԱՐԴ ԱՐՇԱԿ ԱՐՔԱՑ ՀԱՅՈՑ ՋՕՐԱՎԻԳՆ ԼԻՆԷՐ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԳԱՐՍԻՑ, ԵՒ ՀԱՆԷՐ ԸՆԴ ՍՈՒՐ ՋԶՕՐՍՆ ՅՈՒՆԱՑ. ԿԱՄ ՋԻԱՐԴ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԵԱՄԲ ՍԻՒՆՈՑՆ ԱՆԴՈՒԿԱՑ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԼԻՆԷՐ ԱՐՔԱՅՆ ԳԱՐՍԻՑ

Այլ գառաւիճն իբրև փախեաւ թագաւորն Արշակ յարմայէն Շապհոյ, և աճարգեաց զնա յետ երդմանցն իւրոց, զառաւիճն Շապուհ ար-

վրա էին հարձակվում շատ մարդիկ սրերով, խոցոտում էին նրան՝ մինչ նա կռացել էր, որ չուր ածեն վրան: Էլ միջոց չունեցավ գլուխը վեր բարձրացնելու, որովհետև կողից խփելով սպանեցին նրան:

Իսկ նրա կինը հղի էր, ծննդյան օրերը մոտեցել էին: Մինչ նա վերը բերդում իր բազմոցում նստած էր՝ հանկարծ սաստիկ ճիչ բարձրացավ. նա երբ սարսափի ճիչը լսեց՝ բազմոցից վար վազեց և վազելիս երեխային ծնեց: Երեխային հոր անունով Վարդան կոչեցին:

ԺԲ

ԹԷ ԽՆԶԳԵՍ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐԸ ԱՆՄՏՈՒԹԵԱՄԲ ԱՆՆՆԱ ԿԱՏՈՐՈՒՄ ԷՐ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՆ

Իսկ այն ժամանակ, երբ Ներսես սուրբ եպիսկոպոսապետը արմուճական բանակից հեռացավ, և ոչ ոք չկար թագավորին դիմադրող, որ նրան խրատեր ու հանդիմաներ՝ այնուհետև նա սկսեց իր շար կամքին հետևել.— նախարարներից շատերին կոտորեց, շատերին սերհատեց և ժառանգ չթողեց, շատերի կալվածները արմուկիք գրավեց: Կամսարականների տոհմերը, որոնք Շիրակի և Արշարունիքի տերերն էին՝ սերհատեց և այս գավառները Ոստանին[118] միացրեց:

Բայց հայոց զորավար և սպարապետ Վասակը նրանց ցեղից փախցնում ու փրկում էր մի փոքրիկ մանուկ, Սպանդարատ անունով, որ հետո այդ գավառները ժառանգեց: Իսկ Արշակ թագավորը հրամայեց Արշարունյաց գավառում իր համար շինել մի ամուր բերդ Արտագերս անունով և այս գավառը հատկացրեց բերդին իբրև համբարանոց՝ ուտելիքի համար, որովհետև այդ բերդը շատ ամուր էր:

Ի

ԹԷ ԽՆԶԳԵՍ ԳԱՏԵՐԱԶՄԸ ՍԱՍՏԿԱՑԵԼ ԷՐ ՀՈՒՆԱՑ ԵՒ ԳԱՐՍԻՑ ՄԵՋ ԵՒ ԽՆԶԳԵՍ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐԸ ՕԳՆՈՒՄ ԷՐ ԳԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՒ ՍՐԻ ԷՐ ԱՆՑԿԱՑՆՈՒՄ ՀՈՒՆԱՑ ՋՈՐՔԵՐԸ ԵՒ ԽՆԶԳԵՍ ԱՆԴՈՒԿ ՍՅՈՒՆԻՔԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՇԱԿԸ ՓԱՌՈՒՍ ԷՐ ՏԱԼԻՍ ԳԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԻՑ [119]

Այն ժամանակ, երբ Արշակ թագավորը փախավ Շապուհ թագավորի մոտից և իր երդումից հետո նրան անարգեց՝ սկզբում Շապուհը այնքան էլ խստություն գործ չդրեց նրա դեմ, որովհետև դեռ խիստ

ֆայն Պարսից ոչ ինչ խստութեամբ ջանացաւ ընդ նմա. վասն զի մարտ դեռ բազում սաստկացեալ էր ի մէջ իւր և ի մէջ թագաւորին Յունաց: Եւ իբրև հաղ ևս զինաղ յաւել լինել պատերազմ, իսկ թագաւորն Հայոց Արշակ զառաջինն ընդ միտս իւր մեծամտեալ էր, և նայէր տեսանել՝ թէ ո՛վ ի նոցանէն կոչեսցէ զնա ի թիկունս օգնականութեան յաղագս գործոյ պատերազմին: Ակն ունէր, երթալ կամելով յօժարութեամբ ի թիկունս կայսերն Յունաց. իսկ նոքա ոչ կոչեցին զնա, և ոչ չուք ինչ եղին նմա և ոչ մեծարանս:

Իսկ թագաւորն Պարսից Շապուհ յղէր առ նա հրեշտակս խաղաղութեան. յուշ առնէր նմա զառաջին երդումն, ասելով՝ եթէ կամ լիցի եղբօր զի եկեսցես օգնեսցես ի գործ պատերազմիս, զի ի թիկունս հասցես ևս զնդաւդ. ասէ. Թէ դու ի մեր կոյս լինիս, գիտեմ զի մեր լինելոց է յաղթութիւնն: Ապա յորժամ զայս լսէր Արշակ արքայ Հայոց, մեծաւ ուրախութեամբ կամեցաւ երթալ ի թիկունս օգնականութեան, զօրավիգն լինել Շապհոյ թագաւորին Պարսից: Ապա տայր հրաման թագաւորն Արշակ Վասակայ իւրում սպարապետին, գունդ գումարել, զօրս պատրաստել: Եւ նա վաղվաղակի կատարէր զհրամանս թագաւորին. չորեքհարիւր հազար զօր կուտ վառեալ, որ ընտիրք և պատերազմողք էին, լի արութեամբ արուեստաց նահատակութեանն: Նիզակաւորք, սուսերաւորք, աղեղնաւորք, անվրէպք, կոռովիք, վազրաւորք, սակրաւորք, որք ոչ գիտէին զերկեւղ զանգիտելոյ յարանց յախոյանց. համակ ճեծելազօրք զրահաւորք, պատենազէնք, սաղաւարտաւորք, դռօշաւորք, կազմ նշանաւորք բազմաձայն փողարօքն:

Խաղաց գնաց թագաւորն Արշակ բազմակոյտ նախարարօքն, չուեաց ընդ Աղձնիս ընդ իւր իշխանութիւնն. չոգաւ թափեցաւ յերկիրն արուածաստանի դէմ յանդիման մրծբնացւոց խաղաքին, որ էրն տեղի նակատուն պատերազմին: Ապա երթեալ տեսանէին զի ժամադիր արարեալ միմեանց վասն իրաց պատերազմին կողմանցն երկոցունց: Իսկ զօրքն Յունաց հասեալք, մածեալք բանակեալք էին իբրև զաւազ առ ափն ծովու բազմութեամբք: Իսկ զօրքն Պարսիկ չև էին հասեալ ի ժամադիր տեղի պատերազմին: Իսկ զօրքն արքային Հայոց կանուխ ևս զՊարսսն ի տեղի նակատուն հասանէին, և զտեղի առեալ կային: Ապա տապել սկսան զօրքն Հայոց ընդ իւրեանց նիստ խափանածոյն. և ոչ առնուին յանձն մնալ կամ անսալ զօրացն Պարսից, այլ կամեցան յարձակել դիմել հասանել ի վերայ թագաւորին Յունաց իբրեաք առանց Պարսից զօրացն, անձամբք վճարել զգործ պատերազմին: Եւ այր ամենայն զօրացն Հայոց իբրեակամք իւրաքանչիւր առձակ առձակ խաղային. ևս առաւել զօրավարն նոցին Վասակ ևս զամենայն զօրսն ելեալ առնէր,

պատերազմ էր մղվում նրա և Հունաց թագավորի մէջ: Երբ պատերազմը հետզհետե երկարեց՝ Արշակ թագավորը սկզբում մեծամտելով սպասում էր, թե նրանցից ո՛րը իրեն օգնության կկանչե այդ պատերազմում: Նա նույս ուներ և հոժարությամբ ուզում էր գնալ Հունաց կայսեր օգնության: Բայց սրանք ո՛չ նրան հրավիրեցին, և ոչ մի պատիվ կամ հարգանք ցույց տվին: Իսկ Պարսից Շապուհ թագավորը նրա մոտ էր ուղարկում խաղաղության պատգամավորներ. հիշեցնում էր նրա նախկին երդումն և ասում. «Բարեհաճի՛ր, եղբայր, այս պատերազմում ինձ օգնել. ոն գնդովդ ե՛կ ինձ օգնության. եթե դու մեր կողմը լինիս՝ գիտեմ որ հաղթությունը մերը կլինի»:

Արշակ թագավորը երբ այս լսեց՝ մեծ ուրախությամբ հոժարացավ օգնության գնալ Պարսից Շապուհ թագավորին. ուստի նա հրաման տվեց իր Վասակ սպարապետին՝ գունդ գումարել, զորք պատրաստել: Վասակը շատ շուտով կատարում էր թագավորի հրամանը—կազմակերպում էր չորս հարյուր հազար մարդուց բաղկացած լավ սպառազինված զորք՝ ընտիր ռազմիկ մարդկանցից, արիասիրտ կովողներ, որոնք զինված էին նիզակներով, սրերով, աղեղներով, վաղրերով, սակրերով, անսխալ խփող և ուժեղ նետաձիգներ, ախոյանների առաջ տեղի չտվող կովողներ, ամբողջ ճեծելազօրքը պահպանակներով, զրահավորված սաղավարտներով պաշտպանված, իրենց դրոշներով, նշաններով և բազմաձայն պատերազմական փողերով:

Արշակ թագավորը բազմաթիվ նախարարների հետ վեր կացավ գնաց, անցավ իր իշխանության միջով՝ Աղձնիքով, և եկավ խուժեց. Արվացաստանի[120] աշխարհը, Մծբին քաղաքի դիմաց, որտեղ պիտի լիներ պատերազմը: Եկավ այնտեղ, տեսավ, որ երկու կողմերն այդ տեղն էին նշանակել պատերազմելու համար, և Հունաց զորքերը հասել, խմբվել, բանակել էին այնտեղ բազմությամբ՝ իշտես ավազը ծովի ափին, իսկ Պարսից զորքերը դեռ չէին հասել պատերազմի համար նշանակված տեղը: Իսկ Հայոց թագավորի զորքերը նախատամարտի տեղն էին հասել պարսիկներից առաջ և կանգ առել, սպասում էին: Հայոց զորքերն սկսեցին նեղվել իրենց պարապ անգործ նստելուց, չէին համաձայնում սպասել Պարսից զորքերի գալուն, այլ կամենում էին ենց իրենք, առանց Պարսից զորքերի՝ մենակ հարձակվել Հունաց թագավորի վրա, անձամբ պատերազմի գործը գլուխ բերել: Հայոց զորքերից ամեն մեկը ինքնակամ ու համարձակ ցույցեր էին անում, և բոլոր զորքերից ավելի նրանց Վասակ զորավարը վազում էր, սան-

կապակոտոր լինէր, չմնայր հաւանութեան մինչև զօրճ Պարսից եկեսցեն, այլ զի միայն իմիեամբ վճարեսցեն զգործ պատերազմին:

Ապա միաձայնուն զօրճ Հայոց անկանէին առաջի և խնդրէին յիւրեանց թագաւորէն Արշակայ, զի մի՛ պանեսցէ զնոսա մինչև եկեսցէ արքայն Պարսից Շապուհ, այլ վասն որոյ իրիք եկեալ իցեն, վաղագոյն նոցա զպատերազմն առ յանդիման արարեալ համարձակեսցէ յարձակել ևան զանեալն յօտար աշխարհին. առաւել մղձկէին, զի լաւ հաշուէին զմեռանելն առաւել ևան գյամելն յօտար աշխարհին: Ապա թոյլ տայր նոցա թագաւորն Արշակ, և յանդիմանէր նոցա զգործ պատերազմին: Ապա կարգէր կազմէր պատրաստէր զամենայն զզօրսն Հայոց Վասակ զօրավարն սպարապետն Հայոց մեծաց: Վարէր զինէր ժամակալ լինէր Վասակ. հանդերձ ամենայն պատերազմող զօրօքն այրարատեան գնդաւն ելանէր անկանէր ի վերայ բանակին: Առ հասարակ ընդ սուր հանեալ կոտորէին, այնպէս զի ոչ ապրեցուցանէին ի նոցանէ և ոչ զմի: Եւ առնուին զկապուտ զաւար յունական զօրուցն, զի ոչ գոյր չափ կամ թիւ որչափ լցան գանձօք. և անհամար կարասեաւ մեծաւ աւարացն լցուփացան:

Եւ յետ այսորիկ զտեղի ունէր արքայն Հայոց հանդերձ իւրովք զօրօքն, մինչև գայր հասանէր Շապուհ արքայն Պարսից ամենայն անթիւ և անչափ զօրօքն Պարսից: Իբրև եկն եհաս զմարզուքիւն գործոյն Հայաստան զօրացն, զի գնակատ մղեալ, զպատերազմ յարդարեալ, գյաղթութիւն կազմեալ և զգործ վճարեալ, կայր զարմացեալ մեծապէս. և պատուէր զԱրշակ արքայ Հայոց մեծապէս, և զամենայն մեծամեծս Հայոց. առնպէս և զսպարապետն Հայոց զՎասակ:

Ապա խօսել սկսանէր թագաւորն Պարսից Շապուհ ընդ զօրս իւր թէ զի՛նչ պարգեւս բարեաց, կամ զի՛նչ հատուցումն կարեմք մեք հատուցանել արքայիս Հայոց Արշակայ, զի զայսպիսի գործ գործեաց, կամ զայսպիսի մարտիւն արարեալ, կամ զայսպիսի բշնամիս եհար և զայսպիսի պատերազմ մղեաց, կամ այսպիսի՛ նակատու յաղթեաց և զայսպիսի անուն ստացաւ մեզ: Զի եթէ մեք լեալ էաք, ամենայն Արեաց զօրք հանդերձ այսպիսի աշողութեամբ գայր ի մեռն, հաչ թէ զոյգ հասարակ այսպիսի գործ ի միասին կարէաք գործել. արդ Հայոց արքայ իւրով զօրութեամբն ընդ մեր նահատակեալ, զայսչափ հաչութիւնս պարար, զոր ոչ ոք կարէ առնել ամենևին: Արդ զորպիսի՞ հատուցումն բարեաց կարասցուք մեք առնել նմա: Եւ այսպիսի անգեալ էր ի խորհուրդս, թէ զի՛նչ այն ինչ իցէ զոր տայցեմ ես նմա: Ապա տային պատասխանի նախարարքն իւր Շապհոյ արքային Պարսից, և ասեն ցնա՝ թէ զինչ և կամիս, իւ կամիս, կարող ես հանել զնա. ոսկի ևս շատ

ձերը կտրում, չէր կամենում սպասել Պարսից զորի գալստեան, այլ որ միայն իրենք պատերազմը վարեն ու վերջացնեն:

Ապա ամբողջ զորքերն ընկնում էին Արշակ թագավորի առաջ և խնդրում էին, որ իրենց չպահե մինչև Պարսից Շապուհ թագավորի գալուստը, այլ թույլ տա կատարել այն՝ ինչ բանի համար եկել են— իրավունք տա հարձակվել (հույների վրա) ինքնին ինքս: Նրանք մաշվում էին՝ օտար աշխարհում պարապ նստելուց. լավ էին համարում մեռնել, ևան օտար աշխարհում ժամանակ ևս տալ: Այն ժամանակ Արշակ թագավորը թույլ տվեց և պատերազմի գործը նրանց առաջադրեց: Ապա Վասակը, Մեծ Հայքի զորավարն ու սպարապետը, կազմում պատրաստում էր բոլոր Հայոց զորքը: Նա սպառազինվեց, և սահմանված ժամանակին բոլոր իր պատերազմական զորով՝ այրարատյան բանակով հարձակվեց (հունաց) բանակի վրա: Բոլորին առնաստրակ սրի անց կացրին, կոտորեցին, մի մարդ նրանցից կենդանի չթողին: Եվ հունական զորից այնքան ավար առան, որ չափ ու թիվ չկար. բոլորը լցվեցին ու լիացան գանձերով և անչափ իրերով:

Սրանից հետո Հայոց թագավորն իր զորով այնտեղ մնաց սպասեց՝ մինչև որ եկավ հասավ Պարսից Շապուհ թագավորը անթիվ անհամար զորով: Երբ նա եկավ ու տեսավ հայկական զորի հաջարի գործը, որ հակատ էին կազմել, պատերազմը վարել, հաղթություն տարել և ամեն ինչ վերջացրել՝ շատ և շատ զարմացավ. Հայոց Արշակ թագավորին մեծապես պատվեց, ինչպես և բոլոր Հայոց մեծամեծներին և Հայոց Վասակ սպարապետին:

Պարսից Շապուհ թագավորն սկսեց խոսել իր զորի հետ, թե «ի՛նչպիսի վայելուչ պարգևներ կամ ի՛նչպիսի փոխարինություն կարող ենք մենք հատուցանել Հայոց այս Արշակ թագավորին, որ այսպիսի գործ գործեց, այսպիսի հաչություն ցույց տվեց, այսպիսի բշնամու չարդեց, այսպիսի պատերազմ մղեց, այսպիսի հակատամարտում հաղթեց, մեզ համար այսպիսի անուն վաստակեց: Որովհետև եթե մենք լինենք բոլոր արյաց զորքերով՝ հազիվ թե կարողանայինք այսպիսի աշողություն ձեռք բերել, այլ (Հայոց զորի հետ) միասին այս գործը գլուխ կբերեինք[121]. քանի Հայոց թագավորը իր զորով մեր փոխարեն կռվի դուրս գալով այնպիսի հաչություն գործեց, որ ուրիշ ոչ ոք չէր կարող գործել: Արդ՝ ի՛նչպիսի բարիքներ պետք է մենք նրան հատուցանենք»: Եվ ընկել էր մտածմունքի մեջ, թե արդյոք ի՛նչ բան պետք է նրան տամ:

Պարսից նախարարները պատասխան տվին Շապուհ թագավորին և ասացին. «Ինչ որ կամենաս, ինչով որ կամենաս՝ կարող ես նրան բա-

և արծաթ և կերպաս և մարգարիտ, զինչ և միանգամ դու կամիս շնորճել նմա, տուր նմա: Ապա տայր պատասխանի Շապուհ թագաւորն Պարսից իւրոց իշխանացն, և ասէ. Արդ ոչ եթէ սէր ինչ է, զոր դուքդ ասացէք. այլ եկայք, անմակ սէր առասցուք մեք ընդ Արշակայ արեային Հայոց, զի մինչև յափտեան անբաժին լիցի նա ի մէնջ: Տացեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ արեայի Հայոց, և տաց նմա տուն մեծ. զի յորժամ գնասցէ ի Հայոց գալ առ մեզ, այնպէս տացուք նմա տուն, զի ի Հայոց մինչև ի Տիգրոն մինչև առ մեզ համակ յիւրում տան ագցի, մինչև առ մեզ եկեսցէ: Թագաւորին զայս առասցուք. իսկ զօրավարին Վասակայ կամ այլոց մեծամեծացն և զօրավարացն տացուք ոսկի և արծաթ, կերպաս և մարգարիտ: Եւ հանեցան մեծամեծքն և խորհրդակիցք թագաւորին Պարսից ընդ այս խորհուրդ. և հաստատէին զասացեալսն՝ թէ արժան է զայդ առնել:

Իսկ թագաւորն Պարսից Շապուհ մեծաւ ստիպելով ստիպէր զթագաւորն Հայոց զԱրշակ, զի առցէ գնասցէ զնա ընդ իճխեան յԱսորեստան, զի անդ մեծափառ պատուով և փեսայութեամբ մեծարեսցէ զնա: Իսկ Արշակ և ամենայն զօրք իւր տաղտապէին[26] երթալ գիեռի հանապարհն. զի ամենայն ոք յանձնիւր տուն յիւրամանչիւր տեղի զօրչն բարուց Հայաստան մարդկան անձկացեալ էին: Եւ եղև իբրև ի վերայ հասանէր իրացն Անդովկ հանապետն Սիւնեաց գաւառին, եթէ Շապուհ թագաւորն Պարսից կամի տալ զդուստր իւր կնութեան Արշակայ թագաւորին Հայոց, մեծապէս երկեաւ, և բախեցաւ նորա կասկած մտացն իւրոց: Զի եղ ի մտի իւրում՝ թէ յորժամ առցէ Արշակ կին իւր զդուստր թագաւորին Պարսից, յայտ է այնուհետև՝ թէ անարգի դուստր նորա: Վասն զի Փառանձեմ դուստր Անդովկայ, որ էր կին լեալ Գնելոյ, ի ժամանակի անդ էր կին Արշակայ թագաւորին Հայոց. կասկածէր նա՝ թէ գուցէ յորժամ այլ առցէ, զնորայն անարգեսցէ:

Անկանէր այնուհետև Անդովկ ի ճնարս ճնարել, և ի ծուխս խորհրդոց, գտանել պատճառս՝ զի ո՛ գիտէ կարասցէ ցրուել զսէրն մեծ, որ էր անկեալ ի մէջ թագաւորացն երկոցունց: Նախ բազում ոսկի զօրավարին Հայոց Վասակայ Անդովկն մատուցանէր. սոյնպէս և զամենայն մեծամեծսն կաշառէր, զի ճնարեսցի ֆակել զմեծ սէրն, որ իցէն ի մէջ թագաւորացն երկոցունց: Եւ ամենայն մեծամեծքն ձեռն յանձին ճարկանէին, առեալ ոսկւոյն կաշառօք խաւարեցան: Ապա զմի ոմն յաւագաց թագաւորին Պարսից ի ներքին ի բուն խորհրդականացն ի քանի իւրում առնէր Անդովկն գինարաւորութեամբն, զենգաւորութեանն գաւաճանութեամբ, մեհենայութեամբն, զի բանս արկցէ ընդ թագաւորին Պարսից ընդ Շապուհ և ընդ Արշակ: Եւ տայր նմա Անդովկ ոսկի բազում

վականություն տալ: Ոսկիդ ու արծաթդ, կերպասներդ ու մարգարիտներդ շա՜տ. տո՛ւր ինչ որ ստիցդ անցնում է»: Պարսից Շապուհ թագավորը իր իշխաններին պատասխանեց ասելով. «Այդ, ինչ որ դուք եք ասում՝ սեր չէ. եկեք անմակտելի սեր հաստատենք Հայոց Արշակ թագավորի հետ, այնպես որ նա մինչև վերջը անբաժան մնա մեզանից: Ես Հայոց Արշակ թագավորին կնության տամ իմ դուստրը և այնպիսի մեծ կալված տամ նրան, որ Հայաստանից մեզ մոտ գալիս՝ Հայաստանից մինչև Տիգրոն իր կալվածում իջևանի, մինչև մեզ մոտ հասնի: Թագավորին այսպես անենք, իսկ Վասակ զորավարին կամ մյուս մեծամեծներին ու զորապետներին տանք ոսկի, արծաթ, կերպաս և մարգարիտ»: Պարսից թագավորի մեծամեծներն ու խորհրդակիցները հավանություն տվին նրա այս խորհրդին և հաստատեցին նրա խոսքերը, թե լավ է այդպես անել:

Եվ Պարսից Շապուհ թագավորն սկսեց ստիպել ու թախանձել Հայոց Արշակ թագավորին, ուզում էր նրան իր հետ տանել Ասորեստան[122], որպեսզի այնտեղ մեծ փառքով նրան իրեն փեսայացնե: Իսկ Արշակ թագավոր և բոլոր իր զորքը ձանձրալի էին համարում այդքան երկայն ճանապարհ գնալը, որովհետև ամեն մարդ, հայ մարդու բնական սովորությամբ, կարոտել էր իր տանն ու տեղին: Իսկ երբ Անդոկը, Սյունյաց գավառի հանապետը, իմացավ, թե Պարսից Շապուհ թագավորն ուզում է իր աղջիկը կնության տալ Հայոց Արշակ թագավորին՝ շատ վախեցավ և միտքը կասկածի մեջ ընկավ: Նա հասկացավ, որ եթե Արշակը կին առնե Պարսից թագավորի դուստրը՝ ապա իր դուստրը անարգության կկրե. որովհետև այդ ժամանակ Փառանձեմը, Անդոկի դուստրը, որ Գնելի կինն էր եղել՝ Հայոց Արշակ թագավորի կինն էր. ուստի (Անդոկ) կասկածում էր, որ եթե թագավորը ուրիշ կին առնե՝ իր աղջկանը կանարգե:

Այնուհետև Անդոկը մտածմունքների մեջ էր ընկնում, մի հնարք էր փնտռում, որևէ միջոց, որով գուցե կարողանա խափանել սերը երկու թագավորների մեջ: Նախ և առաջ նա շատ ոսկի էր տալիս Հայոց վասակ զորավարին, նույնպես և կաշառում էր բոլոր մեծամեծներին, որպեսզի աջողեցնե երկու թագավորների մեջ եղած մեծ սերը ֆակել: Բոլոր մեծամեծները համաձայնություն տվին, իրենց առած ոսկու կաշառով կուրացան: Այնուհետև Անդոկը իր խորհրդին դավակից էր դարձնում Պարսից թագավորի ավագներից մեկին, որ մի հնարով, որևէ միջոցով ներգությամբ տարաձայնություն ձգե Պարսից Շապուհ թագավորի և Արշակի մեջ: Անդոկը նրան անչափ ու աննման ոսկի էր

և աճեմար, և դեէր բանս ’ի բերան, զի իբրև կերպարանս գուշակի առասցէ ասել ցարեայ Արշակ, թէ ապրեցո զանձն fո, զի ճշգրիտ խորհուրդ խորհեալ է թագաւորին Պարսից ունել զքեզ և սպանանել: Եւ յորժամ դու զայս ասասցես, ասէ, և զմեզ երամայեսջիր կոչել ’ի խորհուրդն. և զfո բանս աւագանին հաստատեն:

Ապա գայր մտաներ խորհրդակից արքային Պարսից առ արքայն Հայոց. խօսել սկսաներ ընդ նմա զբանս ’ի բերան եդեալ Անդուկայն չարագործի, և ասէր՝ թէ՛ արքայդ Հայոց Արշակ, ապրեցո զանձն fո. զի խորհուրդ խորհեալ է թագաւորին Պարսից Շապհոյ ունել զքեզ և սպանանել: Կայր ճիացեալ և զարմացեալ արքայն Արշակ ընդ բանսն ընդ այնոսիկ, և ասէ. ’Ի մեծի վաստակոցն իմոց ’ի վերայ ա՞յս հատուցումն ’ի նոցանէն: Ապա երաման տայր կոչել զառաջեաւ իւրով արքայ Արշակ զամենայն գմեծամեծս իւր, և զամենայն խորհրդակիցս իւր, զվասակ սպարապետն, և զԱնդովկն զաներ իւր, և որ միանգամ էին նախարարքն. և պատմէր նոցա զոր միանգամ լուաւ իճէն ’ի պարսկէ աճէն: Ապա և նոքա ընդ մի բերան ասէին ընդ նմա, թէ մեք զայդ վաղ լուաք, ցքեզ չիշխեցաք ասել. այլ իրդ այդ հաստատ են: Բայց արդ, արքայ, գիտեա տես զիա՞րդ ապրեցուացես զանձն fո և զմեզ: Ապա արքայ Արշակ բազում պարգև գանձուց ոսկւոյ և արծաթոյ տայր պարսկին այնմիկ, որ ասաց նմա զբանս զայսոսիկ: Եւ իճեանք կազմեցան պատրաստեցան. խորհուրդ խորհեցաւ Արշակ թագաւորն Հայոց, և յառնէին ’ի գիշերի որ միանգամ մարդ էր ’ի բանակին Հայոց. ճեծան ’ի ձիս, և փախեան: Եւ առ ետեղ թողին զխորանս և զվրանս զկահ և զկարասի և զկազմած իւրեանց, և զբանակն իւրեանց, և գնացին գաղտուկ. և ոչ ոք ’ի բանակէն Պարսից գիտացին զայն մինչև ցայգ ցառաւօտն:

Եւ իբրև եղև ժամ այգուրելի առ թագաւորն Պարսից, և ամենայն թագաւորք և իշխանք մեծամեծք իւր այգուրեալ գային արքային Պարսից, բայց միայն ոչ ուրեք ’ի մէջ երէր թագաւորն Հայոց Արշակ հանդերձ իւրովք մեծամեծօքն: Ապա տայր երաման Շապուհ թագաւորն Պարսից իւրոցն, երթեալ տեսանել՝ թէ զինչ իրք իցեն ’ի բանակին Հայոց թագաւորին Արշակայ, զի այնչափ ժամս յամեաց գալ յայգուրել թագաւորին Պարսից Շապհոյ: Ապա երթեալ տեսանէին, զի թափուր կայր բանակն առանց մարդոյ. զի թողեալ էր իւրեանց զխորանս և զվրանս և զճովանոցս և զսրաճակս և զգաճոյս և զանկողինս և զկահ և զկազմածս և զկարասի իւրեանց, և զգանձս իւրեանց անգամ. բայց միայն զզէնս իւրեանց որ բարձեալ էին ընդ իճէեանս և գնացեալ: Եւ որք չգան ’ի բանակն, գային զամենայնն պատմէին Շապհոյ արքայի Պար-

տալիս և նրան խրատ էր տալիս, որ խոյս ձևանալով Արշակ թագավորին ասե, թե «Գլխիդ ճարը տես. Պարսից թագավորը հաստատ միտք դրել է քեզ բռնել ու սպանել»: «Երբ դու այս ասես՝ ասում էր Անդոկը, ապա առաջարկիր (թագավորին), որ մեզ խորհրդի կանչե, և բոլոր ավագներքը fո խոսքը կհաստատեն»:

Պարսից թագավորի խորհրդակիցը գալիս էր Հայոց թագավորի մոտ և սկսում էր ասել այն բաները՝ ինչ որ նրան խրատ էր տվել չարագործ Անդոկը. նա ասում էր. «Արշակ թագավոր, գլխիդ ճարը տես, որովհետև Պարսից Շապուհ թագավորը միտք դրել է քեզ բռնել ու սպանել»: Արշակ թագավորը ապշած մնաց այս խոսքերը լսելիս և ասաց. «Իմ այնքան մեծ ծառայության հատուցումն ա՞յս է ուրեմն սրանց կողմից»: Հրամայում էր Արշակ թագավորը իր մոտ կանչել բոլոր իր մեծամեծներին, բոլոր խորհրդականներին, վասակ սպարապետին, իր աներոջը՝ Անդոկին և առհասարակ բոլոր եղած նախարարներին, և նրանց պատմեց այն ամենը, ինչ որ լսել էր պարսիկիցը: Եվ նրանք բոլորը միաբերան ասացին նրան. «Մենք այդ բանը վաղուց էինք լսել, բայց չէինք վստահանում քեզ ասել. բայց դա հաստատ բան է: Հիմա, թագավոր, այն նայիր, թե ի՛նչպես պետք է քեզ և մեզ փրկես»: Այն ժամանակ Արշակ թագավորը ոսկու և արծաթի շատ գանձ պարգև էր տալիս այն պարսկին, որ այն խոսքերն իրեն ասել էր: Արշակ թագավորը մի միջոց մտածեց,— կազմակերպվեցին, պատրաստվեցին, և մի գիշեր վեր կացան որքան մարդ որ կային Հայոց բանակում, ձիերը հեծան ու փախան: Տեղումը թողին նրանք իրենց խոյրաններն[123] ու վրաններր, իրենց կահավորությունն ու սարքը, իրենց իրեղեններն ու բանակը, և գաղտուկ գնացին, այնպես որ Պարսից բանակից ոչ ոք այս բանը չիմացավ՝ մինչև լուսացավ:

Առավոտը, երբ ժամանակը հասավ Պարսից թագավորին բարիլույսի գնալու, և թագավորներն ու մեծամեծ իշխաններր գնում էին Պարսից թագավորին բարիլույս մաղթելու՝ միայն Հայոց Արշակ թագավորն էր իր մեծամեծներով, որ ոչ մի տեղ չէր երևում: Ապա Պարսից Շապուհ թագավորը հրաման էր տալիս իր մարդկանց, որ գնան տեսնեն, թե ի՛նչ է պատահել Արշակ թագավորի բանակում, որ նա այնքան ուշացավ Պարսից թագավորին բարիլույսի գալու: Գնում տեսնում էին, որ բանակը դատարկ էր, մեջը մարդ չկար, որովհետև (զորերը) թողել էին իրենց խորաններն ու վրաններր, հովանոցներն ու սրահակներր, բազմոցներն ու անկողիններր, կահկարասիքը և սարքերր, մինչև անգամ իրենց գանձերր, այլ միայն իրենց գենքերն էին վերցրել ու գնացել: (Հայոց) բանակը գնացողներն եկան և այս բոլորը պատմեցին

սից: Եւ իբրև լուաւ Շապուհ արքայն Պարսից, ֆանզի այր իմաստուն էր, գիտացեալ ի կարծիս իմաստութեան իւրոյ զիրսն՝ որ ինչ եղեն, անդէն ասաց՝ թէ այն փախուստ թագաւորին Հայոց յիմոց աստի եղեալ է. զի ի մէնջ ի մերմէ ի դրանէ աստի էին, ասէ, որ փախուցին զայրն զայն զԱրշակ: Ապա իւրոց աւագացն ի մեծամեծացն դեսպան ձիով զրազումս յղէր զնետ թագաւորին Հայոց, ճանդերձ երդմամբ ի սէր միաբանութեան և յանդիմանութեան. զի դարձցին և գչարախօսութեան զբանս ի մէջ ածեալ կշտամբեսցին: Եւ ոչ կամեցաւ արքայն Հայոց ունկնդիր լինել բանիցն պատգամաւորացն թագաւորին Պարսից Շապհոյ, և ոչ դարձաւ այլ անդրէն յերկիրն Պարսից: Ապա յայն օրէ ետէ և անդր յուզեցաւ պատերազմ գրգռութեան մարտից ճակատուց ի մէջ թագաւորին Հայոց Արշակայ և ի մէջ թագաւորին Պարսից Շապհոյ ամս աւելի քան զերեսուն:

ԻԱ.

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՋԻԱ՛ՐԴ ԵՂԵՒ ԳԱՏԵՐԱԶՄ ԸՆԴ ՇԱԳՈՒՀ ԹԱԳԱՒՈՐՆ ԳԱՐՍԻՑ ԵՒ ԸՆԴ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐՆ ՀԱՅՈՑ ՋԱՌԱՋԻՆՆ, ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ՅԱՂԹԵՐ ԱՐՇԱԿ ԱՐՔԱՑ ՀԱՅՈՑ

Ապա ամս ութ, յետ գնալոյն փախչելոյն արքայիկ Հայոց Արշակայ ի թագաւորէն Պարսից Շապհոյ, լուռ լինէր թագաւորն Պարսից՝ թշնամութենէ. և խօսէր հաշտ ողոքով, և աղաչէր զԱրշակ արքայ Հայոց՝ սիրով հաշտ և միաբան կալ ընդ նմա յոխտի խաղաղութեան: Վասն զի ի մեծ վտանգ շտապի էր թագաւորն Պարսից ստէպ ստէպ յանդադար պատերազմացն ի թագաւորաց անտի Յունաց: Իսկ Արշակ արքայ Հայոց ոչ ինչ կամէր անսալ նմա, և ոչ հնուպ ինչ լինել ի նա. և յղեալ դեսպանս, և ոչ ինչ տալ պատարագս ընծայից, և ոչ հնուպ ինչ կամ մօտ լինել ի նա բնաւին. և զանունն անգամ նոցա ոչ կամէր լսել: Իսկ թագաւորն Պարսից ստէպ ստէպ յղէր պատարագս առ նա, առաքէր դեսպանս: Եւ իւրն հնպենէ կռուէր ընդ թագաւորսն Յունաց:

Այլ իբրև եղև խաղաղութիւն ի մէջ թագաւորացն Յունաց և ի մէջ թագաւորին Պարսից Շապհոյ, ուխտից նամակ գրեալ և կնքեալ տայր թագաւորն Յունաց թագաւորին Պարսից: Եւ գրեալ էր յոխտից նամակին այսպէս. Ետու ինձ, ասէ, զնծբին քաղաք՝ որ է յարուեստանի, և զՄիջագետս Ասորոց, և մէջաշխարհին Հայոց. ձեռնթափ եմ, ասէ, թէ կարասցես յաղթել նոցա և արկանել ի ծառայութիւն, ես ի քիկոնս ոչ եկից նոցա: Արդ ի նեղ ուրեմն անգեալ թագաւորն Յունաց, և ի

Պարսից Շապուհ թագաւորին: Երբ Պարսից Շապուհ թագաւորը այս լսեց՝ որովհետև խելոք մարդ էր՝ իր խելքով բանի եղելութիւնը հասկացավ և իսկույն ասաց. «Հայոց թագավորի այդ փախուստը իմ մարդկանցից է եղել. մեզանից, մեր դռան մարդկանցից են եղել այն մարդիկ՝ Արշակին փախցնողները»: Ապա իր ավագ մեծամեծներից շատերին ձիով դեսպան էր ուղարկում Հայոց թագավորի հետևից՝ սիրո և միաբանության երդումով, որպեսզի հետ դառնա, միասին բնեն չարախոսություններն ու պատժեն: Բայց Հայոց թագավորը չկամեցավ լսել Պարսից Շապուհ թագավորի ուղարկած պատգամը և է՛լ չդարձավ Պարսից աշխարհը: Այդպա այդ օրից սկսած պատերազմ՝ կռիվներ ու ճակատամարտեր ծագեցին Հայոց Արշակ թագավորի և Պարսից Շապուհ թագավորի միջև, որոնք տևեցին ավելի քան երեսուն տարի:

ԻԱ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋԻՆ ԳԱՏԵՐԱԶՄԸ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԳԱՐՍԻՑ ՇԱԳՈՒՀ ԹԱԳԱՒՈՐԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԵՋ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԵՑ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐԸ

Հայոց Արշակ թագավորի Պարսից Շապուհ թագավորից փախչելուց գնալուց հետո Պարսից թագավորը ութ տարի լուռ էր մնում, թշնամություն չէր անում, այլ շարունակ խաղցությամբ խոսում և աղաչում էր Հայոց Արշակ թագավորին՝ սիրով ու հաշտ ապրել իր հետ խաղաղության դաշինքով: Որովհետև Պարսից թագավորն այս ժամանակ մեծ վտանգի ու տագնապի մեջ էր՝ Հունաց թագավորների կողմից տեղի ունեցած անարդար պատերազմների պատճառով: Իսկ Հայոց Արշակ թագավորը ամենևին չկամեցավ նրան լսել, ո՛չ նրա մոտ գնալ, ո՛չ պատգամավորներ ուղարկել, ոչ մի նվեր կամ ընծա ուղարկել. բոլորովին չկամեցավ նրան մոտենալ, անունն անգամ չէր ուզում լսել: Իսկ Պարսից թագավորը նրան հաճախակի նվերներ ու դեսպաններ էր ուղարկում և ինքը եռանդով կռվում էր Հունաց թագավորների հետ:

Այնուհետև խաղաղություն հաստատվեց Հունաց թագավորների և Պարսից Շապուհ թագավորի մեջ: Հունաց թագավորը դաշնագրի թուղթ գրեց ու կնքեց, տվեց Պարսից թագավորին, որի մեջ գրված էր այս. պես. «Քեզ եմ տալիս Մծբինը[124], որ Արվաստանում է գտնվում, և Ասորոց Միջագետքը. Հայաստանի ներքին նահանգներից էլ ձեռ եմ քաշում. եթե կարող ես՝ նրանց հաղթի՛ր և ֆո իշխանության տակ ենթադիր, ես նրանց օգնության չեմ գա»: Այսպես ուրեմն Հունաց թագավորը

ենղին վշտի՝ զայս ձև օրինակի բանիցն կեմէր մուրճակ, և տայր թագաւորին Պարսից. և ապա ճողոպրէր ի նմանէ:

Այլ իբրև եղև խաղաղութիւն ի մէջ թագաւորին Յունաց և ի մէջ թագաւորին Պարսից, այնուհետև կազմէր զզօրս իւր թագաւորն Պարսից Շապուհ, և խաղաց ի վերայ Արշակայ արքային Հայոց մարտի պատերազմաւ: Իսկ սահմանապահքն թագաւորին Հայոց, որ նստէին ի Գանձակ Ատրպատականի, վաղ ազդ առնէին նմա զիրսն մինչև հասեալ էր նա ի սահմանս Ատրպատականի: Ապա իբրև զայն զգայր թագաւորն Հայոց Արշակ, հրամայեր տայր Վասակայ իւրում սպարապետին՝ կազմել զամենայն զզօրս իւր, և հասանել ի դիմի հարկանել թագաւորին Պարսից Շապհոյ: Ապա արագ ժողովեր ի մի վայր, հանդէս առնէր Վասակ սպարապետն ամենայն զօրաց Հայոց. և գտան հեծելազօր սպառազէնք կուռ վառեալ նիզակաւորք համակ վաթսուն բեւր, միասիրտ միաբան միամիտ: Եւ հանդերձ նոքօք յառաջ խաղայր սպարապետն Հայոց Վասակ հասանէր, բախեալ ի դիմի հարկանէր թագաւորին Պարսից: Ան հասարակ զօրսն զամենայն հարկանէին ի սուր սուսերի իւրեանց. և միաձի ճողոպրեալ արքայն Պարսից Շապուհ փախչէր: Սոքա հասանէին, գերէին, այրացաւեր առնէին ան հասարակ գերկիրն Պարսից. և իճխեանք կային ունէին զճակատուն տեղի, այս իճխն զսահմանս Պարսից պահէին:

ԻԲ

ՅԱՂԱԴՍ ՅԵՏ ԱՅՍՈՐԻԿ ՈՐ ՔՆԴ ԵՐԻՒ ՏԵՂԻ ԵՂԵՒ ՃԱԿԱՏՆ ՅԵՐԿԻՐՆ ՀԱՅՈՑ ՔՆԴ ՋՈՐՆ ՊԱՐՍԻՑ, ԹԷ ՋԻԱՐԴ ՆՇԱՆ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ՅԱՅՍՄ ԵՒ ՀԱՅՈՑ ԿԱՆԳՆԵՐ

Յայնմ ժամանակի թագաւորն Պարսից Շապուհ ժողովեաց զզօրս իւր անթիւ և անհամար. իբրև զաւազ առ ափն ծովու. և փիղս բազումս, զի ոչ գոյր նոցա թիւ: Ընդ երիս բաժանեալ զզօրսն, երկուց գնդացն զԱնդիկան և զՀազարաւուխտ զօրագլուխս կացուցանէր. և միում գընդին իճխին թագաւորն լինէր զօրագլուխ: Եւ հրամայեր տայր թագաւորն զօրացն՝ ընդ երիս տեղիս խաղալ մտանել արշաւել յաշխարհն Հայոց: Ապա այս բանիս վաղագոյն ազդ լինէին առ թագաւորն Հայոց Արշակ, և առ զօրավարն նոցին Վասակ. ապա և սոքա բազում զօր յաշխարհէն ժողովեցին, զի ոչ գոյր համար բազմութեանն: Եւ թէ բեւր աճապարեցին, սակայն զօրն Պարսից արշաւէին յերկիրն Հայոց, և ընդ երիս ասպատակէին:

ճեղն էր ընկնում և ճարահատյալ այսպիսի դաշնագիր էր կնքում և ուղարկում Պարսից թագավորին և այս կերպով խալսում էր նրանից:

Արդ՝ երբ խաղաղություն հաստատվեց Հունաց թագավորի և Պարսից թագավորի մեջ՝ այնուհետև Պարսից Շապուհ թագավորը կազմակերպեց իր զորքերը և պատերազմով եկավ Հայոց Արշակ թագավորի վրա: Հայոց թագավորների սահմանապահները, որ նստած էին Ատրպատականի Գանձակում՝[125] վաղօրոք այս բանը իմաց էին տալիս Արշակ թագավորին, դեռ (Շապուհը) Ատրպատական չհասած: Հայոց Արշակ թագավորն այս իմանալուն պես հրաման էր տալիս իր Վասակ սպարապետին՝ իր բոլոր զորքերը կազմակերպել և հասնել, Պարսից Շապուհ թագավորին դիմադրել: Վասակը շուտով մի տեղ էր ժողովում զորք, Հայոց բոլոր զորին զորահանդես էր կատարում. դուրս եկավ վաթսուն բյուր հեծյալ, լավ զինված նիզակավոր զինվոր, միասիրտ, միաբան, հավատարիմ մարդիկ: Նրանց հետ Հայոց Վասակ սպարապետը առաջ շարժվեց, հասավ ու ընդհարվեց Պարսից թագավորի հետ: (Նրա) բոլոր զորքերն առհասարակ կոտորում էին իրենց սրերով, և միայն Պարսից Շապուհ թագավորը մի ձիով փախչում էր: Իսկ սրաճխ հասնում, գերում էին, ավերում ու այրում էին առհասարակ Պարսից աշխարհը, և պահպանում էին հակառամարտի տեղը, այսինքն Պարսկաստանի սահմանները:

ԻԲ

ԹԷ ԻՆՉՊԵՍ ՍՐԱՆԻՑ ՀԵՏՈ ԵՐԵՔ ՏԵՂ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԱՐՍԻՑ ՋՈՐՔԵՐԻ ՀԵՏ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՁԱՒ ՀԱՅԵՐԻՆ ԷՐ ՄՆՈՒՄ

Այն ժամանակ Պարսից Շապուհ թագավորը ժողովեց իր զորքերը անթիվ ու անհամար բազմությամբ, ինչպես ավազը ծովի ափին, և բազմաթիվ փղեր. որոնց թիվ չկար: Նա իր զորքերը երեք գնդի բաժանեց, երկու գնդերին զորագլուխ նշանակեց Անդիկանին և Հազարավուխտին, իսկ երրորդ գնդին զորագլուխ լինում էր ինքը թագավորը: Եվ հրաման տվեց թագավորը՝ երեք տեղից մտնել ու արշավել Հայոց աշխարհը: Այս բաները էլ վաղօրոք հայտնվում էին Հայոց Արշակ թագավորին և նրա Վասակ զորավարին: Սրաճխ էլ աշխարհից զորք հավաքեցին, որոնց բազմության թիվ ու համար չկար, և թեպետ շատ աճապարեցին, բայց և այնպես Պարսից զորքերը Հայաստան մտան և երեք ուղղությամբ ասպատակեցին:

Ապա թագաւորն Արշակ և զիւր զօրսն բաժանէր ընդ երիս. և տայր զմի գունդն Վասակայ սպարապետին, և զերկրորդ գունդն ի ձեռն Բագասի եղբօր նորին, որ ի գործ արուբեան էր աճենարին, բայց ի գործ իմաստութեան բախած էր. և զմիւս գունդն իսկ թագաւորն Արշակ առնոյր: Եւ տայր հրաման՝ յառաջ խաղալ պատրաստել, առ դիպան պատահել զօրացն Պարսից: Ապա գայր սպարապետն Վասակ, գտանէր զառաջին առաջն զօրացն Պարսից զՀազարաւուխտն, զի հասեալ էին ի գաւառն Վանանդայ, ի տեղւոջն՝ որ անուանեալ կոչէր յԵրևեալ. և բախէր ընդդէմ զօրացն Պարսից մարտիւ պատերազմաւ: Ի պատուիրից մատենեցան զօրքն Պարսից, դարձան ի փախուստ, գրուեցան սփռեցան: Հասանէր զօրավարն Վասակ, արկանէր զզօրսն ամենայն փախստէից Պարսից. ոչ ապրեցուցանէին և ոչ զմի և թափեցին աւար բազում և զփիղսն:

Ի նմին ամսեան ի նմին շաբաթու ի նմին աւուր հասանէր Բագոս, հանդերձ զօրօք՝ որ ընդ իւրն էին, գտանէր զառաջ երկրորդ զօրացն Պարսից և զԱնդիկան զօրագլուխ նոցա, զի հասեալ մածեալ բանակէին ի վերայ ձկնատեղիցն Առեստեայ: Ապա վաղ զգացին զօրքն Պարսից զհասանել Բագոսին, և պատրաստեցան ի մարտ պատերազմի ընդդէմ զօրացն Հայոց: Ապա հասանէր Բագոս ամենայն գնդաւն. ընդդէմ յարձակէին նակատուն Պարսից, անդէն հարկանէին սատակէին զամենայն առ հասարակ զզօրսն Պարսից, և գլխովին զԱնդիկան սպանանէին: Ապա դիպէր Բագոսն գնդին փղացն, և տեսանէր զմի ի փղաց անդի մեծապէս զարդարեալ, և զարմուհական նշանս ի վերայ արձակեալ: Համարեցաւ զբագաւորն ի փղին յայնմիկ. իջանէր յերիվարէն, հանեալ զսուսերն իւր յարձակէր ի վերայ փղին, զէն վերացոյց, եմուտ ի ներքոյ փղին, հարկանէր զներսն փղին, և անդէն ընկենոյր զփիղն ի վերայ անձին իւրոյ, և սատակէին երկոքեան. զի ոչ ժամանէր ելանել ներքուստ ի փղէն: Յայնմ նակատու, բայց միայն զի մեռաւ զօրագլուխ զօրացն Բագոսն, այլ ի Պարսից զօրացն ոչ ապրեցուցանէին յայնցանէ և ոչ մի:

Իսկ ի նոյն ամի ի նմին շաբաթի ի նմին իսկ աւուր, ճանզի ի մի or[27] եղեն նակատն երեքեան, արդ հասանէր թագաւորն Արշակ, հանդերձ զօրօք՝ որ ընդ իւրն էին. գտանէր զնոսին թագաւորն Շապուհ, զի հասեալ մածեալ բանակէին ի գաւառն Բասենոյ ի տեղիսն՝ որ անուանեալ կոչի Ոսխա[28]: Ապա անկանէր գիշերի արշալոյս Արշակ և վերայ բանակին Պարսից, և անդէն ընդ սուր հանէր զամենեսեան. բայց միայն միանձի մազապուր ճողոպրէր թագաւորն Շապուհ, փախուցեալ անկանէր յաշխարհն Պարսից: Ապա յայնմ ժամանակի յերիցուց գնդացն մի-

Այն ժամանակ Արշակ թագաւորն էլ իր զորքերը երեք մասի բաժանեց. մի գունդը տվեց Վասակ սպարապետի ձեռքը, երկրորդ գունդը նրա Բագոս եղբորը, որ խոհրության և արիության մեջ նմանը չուներ, բայց խելքի կողմից պակասավոր էր. իսկ երրորդ գունդը վերցնում էր ինքը Արշակ թագաւորը: Ապա հրաման էր տալիս առաջ շարժվել, գնալ, Պարսից զորքերին նակատ առ նակատ պատահել:

Վասակ սպարապետը գալիս էր, Պարսից զորքերի առաջին գունդը, Հազարավուխտի հետ, գտնում էր հասած Վանանդ գավառը, մինչև այն տեղը, որ կոչվում է Երևյալ, և պատերազմով ընդհարվում էր Պարսից զորքերի հետ, որոնք փախուստի դիմեցին և գրիվ եկան: Վասակ զորավարը հասնում կոտորում էր Պարսից բոլոր փախստական զորքերը: Ոչ մեկին կենդանի չէին թողնում և խլում էին շատ ավար ու փղեր:

Միևնույն ամսում, միևնույն շաբաթում, միևնույն օրը Բագոսը իր զորքերի հետ գալիս հասնում էր Պարսից զորքի երկրորդ գնդին, Անդիկան զորագլխի հետ, որոնք եկել կուտակվել, բանակ էին դրել Առեստի ձկնորսարանում: Պարսից զորքերը շուտով իմացան Բագոսի հասնելը, պատրաստվեցին Հայոց զորքերի դեմ պատերազմելու: Բագոսը իր բոլոր գնդով հասավ. հարձակվեցին Պարսից նակատի վրա, Պարսից բոլոր զորքն առհասարակ կոտորեցին, Անդիկանին էլ միասին սպանեցին: Ապա Բագոսը հանդիպում էր փղերի գնդին. տեսնում էր որ փղերից մեկը շատ զարդարված էր և կրում էր արմուհական նշաններ: Բագոսը կարծեց, թե այդ փղի վրա (Շապուհ) թագավորն է, ձիուց իջավ, սուրը հանեց, փղի վրա հարձակվեց. զենքը բարձրացրեց, փղի ոտակ մտավ, փղին փորից զարկեց. փիղն ընկավ նրա վրա և երկուսը միասին մեռան, որովհետև (Բագոսը) ժամանակ չունեցավ փղի ոտկից դուրս գալու: Այդ կռվի մեջ միայն Բագոսը մեռավ, Հայոց զորքի զորագլուխը, իսկ Պարսից զորքերից ոչ մեկին կենդանի չթողին:

Միևնույն տարում, միևնույն շաբաթում, միևնույն օրը—որովհետև երեք նակատամարտերն էլ միևնույն օրը պատահեցին— գալիս հասնում էր Արշակ թագավորը իր զորքերի հետ և գտնում էր իրան՝ Շապուհ թագավորին, որ եկել կուտակվել բանակ էր դրել Բասյան գավառում, Ոսխա կոչված տեղերում: Ապա Արշակ թագավորը գիշերով հարձակվում էր Պարսից բանակի վրա, բոլորին սրի էր ածց կացնում. հազիվ Շապուհ թագավորը միայն մեկ ձիով ճողոպրում էր, փախչում Պարսից աշխարհն ընկնում: Այն ժամանակ (Հայոց) երեք գնդերից հաղթության

մեանց դիպչին աւետաւորն յաղթութեանցն. բայց ի Բագոսէ, զի մեռաւ միայն ի միում ճակատուն, այլ և ոչ մի ի նոցանէն ոչ ծախչին. յաստուծոյ եղև մեծ աջողութիւնն յաղթութեանն: Եւ սոքա ի կողմանս Պարսից ասպատակէին, և ճարկանէին մինչև ի կողմանս՝ որ կոչին Խարտիգան: Եւ լցան գանձիւ բազմօք և զինու և զարդու և բազում աւարու և անչափ մեծութեամբ, և ճարստացան անցին ըստ չափ:

Ի

ՅԱՂԱԳՍ ՄԵՐՈՒԺԱՆԱՑ ԱՐՔՐՈՒՆՈՑ, ՈՐ ԱԳՍՏԱՄԲԵԱՑ ՅԱՐՔԱՅԷՆ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿԱՑ, ԵՒ ԱՆԿԱՒ ԱՌ ԹԱԳԱՒՈՐՆ ՊԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՀ, ԵՒ ԱՌԱՒԵԼ ԳՐԳՌԻՐ ՉԳԱՅԵՐԱԶՄՈՒՆՍՆ, ԵՒ ԹԷ ՉԻԱ՛ՐԴ ՈՒՐԱՑԱՒ ՅԱՍՏՈՒԾՈՑ, ԵՒ ԿԱՄ ՉԻԱ՛ՐԴ ԵՂԵՒ ԽՈՉԸՆԴԱԿՆ ԵՒ ԽՈՉՈՏՆ ԵՐԿՐԻՆ ՀԱՅՈՑ ՄԻՆՉԵՒ ՅԱԳԱՑ

Յայնմ ժամանակի ապստամբեաց յարմայէն Հայոց մի ոմն ի նախարարաց մեծամեծացն, Մերուժան անուն Առծրունի, և չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից Շապհոյ, և դնէր ընդ նմա ոխտ երդմամբ, զի յաւիտեան ծառայ լիցի նմա: Նախ ուրացաւ ի կենացն իւրոց, զոր յաստուածն ունէր. զի եթող զօրէնս հրիստոնէութեան, և խոստովան եղև Վասն անձին իւրոյ՝ թէ չեմ հրիստոնեայ. և կալաւ զօրէնս մազդեզանցն, այսինքն զմոգուցն. եպագ երկիր արեգական և կրակի, և խոստովան եղև՝ թէ աստուածմ այն են, զոր թագաւորն Պարսից պաշտէ: Եդ ոխտ ընդ Շապհոյ արքային Պարսից՝ յայնմ հետէ թէ իցէ և կարացէ յաղթել Շապհոյ և ունել Հայոց զաշխարհն, և ինձ դարձ լիցի յիմ աշխարհն և յիմ տունն, նախ ես, ասէ, չինեցից աւերուչան յիմում տանն սեպհականին, այս ինքն տուն կրակին պաշտելոյ: Եւ կեանս և մահ դնէր ընդ նոսա, խոստացեալ բանիւք և արդեամբք: Եւ զզօրսն Պարսից պատրաստէին առնել ևս հան զառաջինն, և առաջնորդ ունէին զչարագործն Մերուժանն, ասպատակել յաշխարհն Հայոց: Յանկարծօրէն այրացաւեր զերկիրն Հայոց առնէին առաջնորդ Մերուժանայ. զոր տային ի կոխումն փղաց, և զկանայս ընդ ցից սայլից հանէին. առնուին կոտորէին զամենայն բնակիչսն վերճագաւառացն Հայոց:

Մինչ դեռ թագաւորն Արշակ ի կողմանսն սահմանին գաւառացն Անգեղ տան էր յուտեստ, զմիջնաշխարհն հանդեալ բռեալ զօրն Պարսից ապականէին: Ապա զօրաժողով լինէր Վասակ զօրավարն Հայոց, և որ հասին ի ժամանակի անդ ի ձեռն նորա տասն հազար ճիծեալ ընդիր ընդիր և հայ այրեաի, կազմ զինու և բազում պատրաստութեամբ. և հանդերձ նոքօք խաղայր, ի կիրք ձգեալ հասանէր զօրացն Պարսից:

ավետաբերներ հանդիպում էին միմյանց: Բացի Բագոսից, որ ճակատամարտներից մեկում մեռավ՝ ուրիշ ոչ ոք չէր կռել. աստծուց շնորհվել էր մեծ աջողություն ու հաղթություն, իսկ (Հայոց զորքերն) ասպատակում էին Պարսից աշխարհը, ավերում էին մինչև Խարտիգան կոչված տեղը: Լիացան բազմաթիվ գանձերով. զենքերով, զարդերով ու շատ ավարով, և չափից դուրս հարստացան:

Ի

ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐՔՐՈՒՆՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐԻՑ ԱԳՍՏԱՄԲԱԼՈՎ ԳԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՀ ԹԱԳԱՒՈՐԻ ՄՈՏ ԳՆԱՑ ԵՎ ԱՎԵԼԻ ԵՎՍ ԳՐԳՌՈՒԻՄ ԷՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԱ ՈՒՐԱՑԱՎ ԱՍՏՎՈՒՆ ԵՎ ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՆԳԱՐԻՋՆ ԵՂԱՎ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋԸ

Այն ժամանակ Հայոց թագավորից ապստամբեց մեծ նախարարներից մեկը Առծրունյաց ցեղից, Մերուժան անունով. նա գնաց ներկայացավ Պարսից Շապուհ թագավորին և երդումով ոխտ դրեց, որ առ միշտ նրա հպատակը կլինի: Նա ուրացավ իր կյանքը՝ իր աստվածը, որովհետև հրաժարվեց հրիստոնեությունից և իր մասին վկայեց, թե հրիստոնյա չեմ, ընդունեց մազդեզանց՝ այսինքն մոգերի կրոնը, երկրպագեց արեգակին ու կրակին. խոստովանեց թե աստվածներ նրանք են՝ որոնց պաշտում է Պարսից թագավորը: Նա ոխտ դրեց Պարսից Շապուհ թագավորի հետ, թե ապագայում եթե Շապուհը կարողանա հաղթել և Հայոց աշխարհը նվաճել և ես կարողանամ իմ աշխարհը և իմ տունը վերադառնալ՝ նախ ես, ասում էր, աւերուչան կշինեմ իմ սեփական տանը, այսինքն կրակը պաշտելու տուն: Կյանքի և մահվան ոխտ էր դնում նրանց հետ խոսքով ու գործով: (Այնուհետև) պատրաստում էին Պարսից զորք՝ առաջինից ավելի մեծ հանակությամբ՝ Հայոց աշխարհն ասպատակելու: Նրանց առաջնորդն եղավ չարագործ Մերուժանը: Նրա առաջնորդությամբ Հայոց աշխարհը կրակի և ավերածի էին մատնում, ոմանց փղերին ոտնակոխ էին անել տալիս, կանանց սայլերի ցցի վրա էին հանում, Հայոց աշխարհի վերին գավառներն աւերում, բոլոր բնակիչները կոտորում էին:

Մինչդեռ Արշակ թագավորը ուտեստի՝ կերակրվելու համար[126] սահմանի գավառներում էր, Անգեղ տանը՝ Պարսից զորքերը միջնաշխարհը ճարահանդ էին անում: Ապա Հայոց Վասակ զորավարը զորք էր ժողովում. նա կարողացավ այդ ժամանակ կազմակերպել ու սարքավորել տասը հազար ընտիր ու հայ ճիճեալզոր, նրանցով առաջ շարժվեց, փութով հասավ Պարսից զորքի վրա: Նրբ Պարսից թագավորի

Իսկ իբրև զգացին զօրավարքն զօրաց թագաւորին Պարսից՝ եթէ զօրաժողով է ի վերայ նոցա զօրավարն Հայոց Վասակ, զմնացորդս աշխարհին գերփեցին գերեցին առին և փախեան յաշխարհն իւրեանց ճեպով տագնապաւ: Ապա զհետ կրթեր Վասակ Մամիկոնեան, և երթայր հասանէր նոցա. չուէին ի սահմանս Ատրպատականին: Իսկ զօրքն թագաւորին Պարսից բողին զգերին, և փախստական լինէին հանդերձ Մերուժանաւն: Եւ թափէր անչափ և անթիւ զամենայն զառեալ գերութիւնն, և դառնային խաղաղութեամբ առ թագաւորն Արշակ:

Ի

ՅԱՂԱԳՍ ՄԵՐՈՒԺԱՆԱՑ, ԹԷ ՋԻԱ՛ՐԴ ԱԳՍՏԱՄԲԷՐ ԵՒ ԳՐԳՌԷՐ ՋԹԱԳԱՒՈՐՆ ՊԱՐՍԻՑ ՇԱԳՈՒՀ, ԵՒ ԱՌՆԷՐ ՊԱՏԵՐԱԶՄ. ԵՒ ՋԻԱ՛ՐԴ ԼԻՆԷՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ ՇԱԳՀՈՑ, ԵՒ ԱՄԷՐ ՀԷՆ ՅԱՇԽԱՐՀՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ. ԵՒ ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ԳԵՐԷՐ ՋՈՍԿԵՐՍ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ. ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ՋՕՐԱՎԱՐՆ ՎԱՍԱԿ ԹԱՓԵԱՑ ՋԳԵՐԵԱՍՆ ԵՒ ՅԱՂԹԵԱՑ ԹՇՆԱՄԻՈՅՆ

Ապա յետ այսորիկ Մերուժան վատաճչան գրգռէր զթագաւորն Պարսից զՇապուհն ի վերայ թագաւորին Արշակայ մեծաւ բարկութեամբ: Ապա զօրաժողով լինէր թագաւորն Պարսից Շապուհ. և լուեսս առնակէր, դիտել զարմայն Հայոց զԱրշակ: Եւ մինչ նա դեռ զգուշացեալ Արշակ արմայն Հայոց հանդերձ իւրովք զօրօքն զԱտրպատական սահմանօքն, զի անդ սպասէր զօրացն Պարսից, նոցա առաջնորդ կալեալ զՄերուժանն՝ ընդ այլ կաթել ասպատակ յաշխարհն Հայոց առնէին: Զի ընդ Աղձնիս և ընդ Մոփս մեծ, ընդ Անգեղ տունն և ընդ գաւառն Անձտայ ընդ Մոփս Շահունոց, ընդ Մզուր գավառն և ընդ Դարանաղէ, ընդ եկեղեաց, զկողմանս այնց գաւառացն Շապուհ թագաւորն Պարսից հանդերձ անթիւ զօրօքն ասպատակել հեղեալ ծաւալէր բազմութեամբ իբրև զջուրս բազումս:

Այրեացաւեր առնէին, և զանթիւ մարդիկ արկանէին ի սուր սուսերի իւրեանց. զկանայս և զմանկտի հանէին ընդ ցից սայլից, զկէս զօր ի ներքոյ կամացն արկեալ կասուին: Եւ զարանց բազմութիւնս տային ի կոխումն փղաց. և զառանց թուոյ զմատաղ մանկտոյն, զայն ի գերութիւն վարէին. և զբազում ամուրս հանդէին, և զբերդս աւերէին զամուրս: Եւ առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գավառին Աղձնեաց յիշխանութեան բդեշխին. քառասուն հազար երդ, զայն նոյնեհետայն ի գերութիւն խաղացուցին. և իճմեանք ի Մոփս

զօրավարներն իմացան, թե Հայոց Վասակ սպարապետը զօր է ժողովել իրենց դեմ՝ աշխարհում մնացածներին կողոպտեցին, գերի վերցրին ու շտապ-շտապ փախան իրենց աշխարհը: Նրանց հետամուտ եղավ Վասակ Մամիկոնյանը և հասավ (այն ժամանակ), երբ նրանք անցնում էին Ատրպատականով: Պարսից թագավորի զորքերը գերիներ թողին ու փախան Մերուժանի հետ: (Հայոց զորքերը) գերությունից ազատեցին անչափ ու անթիվ բազմությունը և խաղաղությամբ դարձան Արշակ թագավորի մոտ:

Ի

ՄԵՐՈՒԺԱՆԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱԳՍՏԱՄԲԵԼՈՎ ԳՐԳՌՈՒՄ ԷՐ ՊԱՐՍԻՑ ՇԱԳՈՒՀ ԹԱԳԱՒՈՐԻՆ, ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄ ԷՐ ԱՆՈՒՄ. ԻՆՉՊԵՍ ՆԱ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԴԱՒԱՆԱՎՈՎ ԱՍՊԱՏԱԿ ՁՈՐՔ ԷՐ ԲԵՐՈՒՄ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ, ԻՆՉՊԵՍ ԳԵՐԻ ԷՐ ՏԱՆՈՒՄ ԱՐՇԱԿՈՒՆԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐԻ ՈՍԿՈՐՆԵՐԸ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՎԱՍԱԿ ՁՈՐԱՎԱՐԸ ԹՇՆԱՄՈՒՆ ՀԱՂԹԵՑ ԵՎ ԳԵՐԻՆԵՐԸ ՆՐԱՆՑԻՑ ԵՏ ԼԵՑ

Սրանից հետո վատաճչան Մերուժանը Պարսից Շապուհ թագավորին գրգռելով սաստիկ բարկացրեց Արշակ թագավորի վրա: Ապա Պարսից Շապուհ թագավորը զորք էր ժողովում, լրտեսներ էր արձակում՝ Հայոց Արշակ թագավորին դիտելու: Եվ մինչ Հայոց Արշակ թագավորը իր զորքով Ատրպատականի սահմանների մոտ էր գտնվում, այդ կողմերին զգուշանալով— որովհետև այդտեղ էր նա սպասում Պարսից զորքերին՝—սրանք, Մերուժանին առաջնորդ բռնելով՝ ուրիշ կողմ շուռ տալով[127] ասպատակեցին Հայոց աշխարհը: Նրանք անցան Աղձնիքով, Մեծ Մոփքով, Անգեղ տանով, Անձիտ գավառով, Շահունի Մոփքով, Մզուր գավառով, Դարանաղիով, եկեղյաց գավառով: Պարսից Շապուհ թագավորը անթիվ զորքերով այս գավառները մտավ ու ծավալվեց հեղեղի նման:

Կրակի ու ավերածի էին մատնում աշխարհը, անթիվ մարդիկ էին կոտորում իրենց սրերով, կանանց ու երեխաներին սայլերի ցցերի վրա էին հանում, մի մասն էլ կամերի տակ էին ձգում, կալսել էին տալիս, տղամարդկանց բազմությունը ձգում էին փղերի ոտների տակ կոխան լինելու և անթիվ բանակությամբ մանր երեխաների գերի էին տանում: Շատ ամրոցներ բռնում էին, շատ ամուր բերդեր ավերում: Նրանք առան Տիգրանակերտ մեծ քաղաքը, Աղձնիք գավառում, բդեշխի իշխանության մեջ, և այնտեղից բառասուն հազար բնտանիք անմիջապես գերի հղելով՝ իրենք արշավեցին Մեծ Մոփք գավառը: Այնտեղի բերդե-

մեծ արշաւեցին: Եւ անդ էին բերդ, զոր առին. և էր, զոր ոչ կարացին առնուլ: Եւ գային պահ արկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդաւն, որ է յԱնգեղ տանն գաւառին. զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք շիմացն արանցն Արշակունեաց. բազում գանձ մթերեալ մնացեալ կային ի՛ նախնեացն ՚ի հնոց ժամանակաց հետէ: Զուան պահ արկին զբերդաւն. ապա իբրև ոչ կարէին առնուլ վասն ամրութեան տեղւոյն, թողուին և գնային: Եւ զբազում բերդօք զանց առնէին, զի ոչ կարէին մարտնչել ընդ ամուրսն. բայց միայն մատնեցաւ ՚ի ձեռս նոցա ամուր բերդն Անի ՚ի Դարանաղեաց գաւառին անդ, զի չարագործն Մերուժանն ճնարաւորութեամբ մեխէնայէր ամուր բերդին այնմիկ: Ելանէին ՚ի վեր, և կործանէին զպարիսպ նորա, և իջուցանէին անթիւ գանձս ՚ի բերդէն: Եւ բանային զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց զարանց հաչաց զարշակունոյ, և խաղացուցանէին, ՚ի գերութիւն զոսկերս թագաւորացն. բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ վասն անճեղեղ սկայագործ հաստաշինած ճարտարագործ արարածոցն: Ապա գնացեալք անտի ՚ի բաց մերժէին, ընդ այլ դիմեալ՝ ասպատակս կապէին, ընդ կողմանսն Բասէնոյ յառաջ խաղային և իճխանի, կամէին ՚ի թիկանցն կուսէ անկանել հասանել ի՛ վերայ զօրացն թագաւորին Հայոց:

Ապա մինչ դեռ այս ամենայն լիներ, գուժկան հասանէր առ թագաւորն Արշակ, և ասեն նմա. Դու աւադիկ առաջոյ սպասես բշնամեացն, ետես յԱտրպատականի. իսկ բշնամիքն զթիկամբն անկեալ կոտորեցին զաշխարհս. և արդ դիմեալ գան ՚ի վերայ հո: Ապա իբրև զայս լսէին թագաւորն Հայոց Արշակ և զօրավարն նորին Վասակ, հանդէս առնէին զօրացն իւրեանց: Եւ գտան ՚ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ արք գործոց իրև վաթսուն հազար, ընտիրք և պատերազմողք. որ միամիտ և միասիրտ էին միաբանութեան գործոցն պատերազմին, հասանել մարտնչել ՚ի վերայ ոդոց և կանանց իւրեանց, և ՚ի վերայ աշխարհին դնել զանձինս իւրեանց մինչև ՚ի մահ և ՚ի վերայ աշխարհին գաւառացն բնակութեան, հասանել մարտնչել ՚ի վերայ եկեղեցեացն իւրեանց, ՚ի վերայ ուխտին պաշտամանն սրբոյ եկեղեցեաց իւրեանց, ՚ի վերայ հաւատոց ուխտին անուան աստուծոյ իւրեանց, փոխանակ բնակ տեառնց իւրեանց արշակունւոց: Զի անգամ ոչխերք թագաւորացն մեռելոց և բազում ժողովուրդք խլեալք յիւրաքանչիւր տեղեաց, փոփոխեցան յօտարութիւն:

Ապա Վասակ սպարապետն հանդերձ վաթսուն հազարօք յառաջ խաղայր, դարձեալ ընդ կրուկ բողոյր զթագաւորն Արշակ յամուր տեղւոջ ուրեմն յերկրին Մարաց, հանդերձ սպասաւորօքն: Եւ իճխն գայր

րից մի մասն առան, մյուս մասն չկարողացան առնել: Այնտեղից եկան պաշարեցին Անգեղ ամուր բերդը Անգեղ տան գավառում, որովհետև այնտեղ կային Հայոց շատ Արշակունի թագավորների գերեզմաններ և վաղուցվանից ի վեր այնտեղ ամբարված էին շատ գանձեր: Գնացին պաշարեցին բերդը և երբ, տեղի ամրության պատճառով, չկարողացան առնել՝ թողին ու գնացին: Շատ բերդեր էլ թողին անցան, որովհետև չէին կարողանում այն ամրոցների հետ կռվել: Նրանց ձեռքն անցավ միայն Անի բերդը Դարանաղիք գավառում, որովհետև չարագործ Մերուժանը մի հնարք մեքենայեց այդ ամուր բերդի դեմ: Վեր էին բարձրանում, պարիսպներ կործանում էին և բերդից անհամար գանձեր էին դուրս բերում: Բայց էին անում Հայոց նախկին թագավորների, հայ Արշակունիների գերեզմանները և թագավորների ոսկորները գերի էին տանում: Չկարողացան բանալ միայն Սանատրուկ թագավորի շիրիմը՝ նրա անհեղեղ հսկայական պինդ ու ճարտար շինվածքի պատճառով: Այնտեղից հեռանալով, ուրիշ կողմ ասպատակեցին, առաջ շարժվելով դեպի Բասենի կողմերը. մտադրվում էին թիկունքից հարձակվել Հայոց թագավորի զորքերի վրա:

Երբ այս ամենը կատարվում էր՝ գուժկան էր գալիս Արշակ թագավորի մոտ. նրան հայտնեցին, թե «Դու այդտեղ Ատրպատականում նստած՝ թշնամուն սպասում ես առաջից, իսկ թշնամիները ետ թիկունքը անցնելով աշխարհը կոտորեցին և հիմա գալիս են հեզ վրա»: Երբ այս լսեցին Հայոց Արշակ թագավորը և նրա Վասակ զորավարը՝ զորահանդես կազմեցին: Վասակ զորավարի ձեռքի տակ այդ ժամանակ պատրաստ գտնվեց պատերազմական գործի պիտանի մոտ վաթսուն հազար մարդ, ընտիր պատերազմողներ, որոնք միաբան, միասիրտ, հոժարակամ գնում էին պատերազմի, որպեսզի հասնեն ու պատերազմեն իրենց կանանց ու որդոց համար, իրենց կյանքը զոհեն աշխարհի համար, իրենց բնակած տեղերի համար, կռվեն իրենց եկեղեցիների համար, սուրբ եկեղեցիների պաշտոնյաների համար, իրենց հավատի ու աստծու համար, իրենց բիրկ տերերի՝ Արշակունիների համար: Որովհետև նույնիսկ թագավորների ոսկորներն ու բազմաթիվ ժողովուրդ տեղահան արված՝ օտարության էին հշված:

Ապա Վասակ սպարապետը իր վաթսուն հազարովը առաջ էր շարժվում. իր ետևն էր թողնում Արշակ թագավորին սպասավորների հետ Մարաց աշխարհում մի ամուր տեղում, իսկ ինքը գալիս հասնում

հասաւէր, ի միջնաշխարհն Հայոց ի գաւառն Այրարատու. և հասաւէր գառէր զզօրսն Պարսից, զի հասեալ մածեալ էին բազմութեամբ իբրև գաւազ առ ափն ծովու, բանակեալ զգաւառաւն Այրարատեան: Ապա հասեալ Վասակ հանդերձ գնդաւն՝ որ ընդ իւր էին, անկանէր ի վերայ բանակին թագաւորին Պարսից ի գիշերի յեղակարծումն ժամանակի: Եւ անդէն առ հասարակ ընդ սուր հանէին զզօրսն ամենայն Պարսից. բայց միայն թագաւորն միածի նողոպրեալ մազապուր փախչէր: Ջհետ հալածէին զմնացեալսն փախուցեալսն առատաձոյ իւրեանց սահմանացն, և թափէին ի նոցանէ աւար բազում և անթիւ, զի ոչ գոյր նոցա չափ հասմարոյ: Եւ առ հասարակ արկանէին զնոսա ի սուր սուսերի իւրեանց, և թափէին ի նոցանէն զոսկերս թագաւորացն իւրեանց, զոր պարսիկք խաղացուցեալ տանէին ի գերութիւն յաշխարհն Պարսից: Զի ասէին ըստ իւրեանց հեթանոսութեանն ըստ օրինացն, թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս թագաւորացն Հայոց աշխարհն մեր, զի փառք թագաւորացն և բախտն և հաջութիւն աշխարհիս աստի գնացեալ ընդ ոսկերս թագաւորացն յաշխարհն մեր եկեսցեն: Ապա թափէր Վասակ զգերութիւնն ամենայն զՀայաստան աշխարհին. և զոսկերս թագաւորացն Հայոց, զոր թափեաց Վասակ, հանեալ թաղեցին յամուր ի գետն՝ որ Աղձն անուանին, յԱյրարատ գաւառին՝ որ կայն ի խիճն ի գոգս, ի ծոցս յանձուկս ի դժուարս լերինն մեծի, զոր Արագածն կոչեն: Եւ ինքեանք փոյթ արարեալ զաշխարհն նուաճել, յարդարել կարգել յօրինել շինել զամենայն զգերութիւնս յաւերածոյն և այրեցածոյն: Բայց յայնմ նուագի ևս ապրէր Մերուժանն չարագործն, փախուցեալ ընդ արշային Պարսից: Եւ յայնմ հետէ պահ ունէին իւրեանց աշխարհին. արշայն Արշակ հանդերձ զօրավարաւն Վասակայ յերկոսին դուրս սահմանացն զգուշանային մինչև զամենայն ատուրս կենդանութեան իւրեանց:

ԻԲ

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՋԻՒ՛ՐԴ ԱՐՇԱԻԵԱՑ ԱՐՔԱՅՆ ԱՐՇԱԿ ՅԵՐԿԻՐՆ ԳԱՐՍԻՑ, ԵՒ ՔԱՆԴԷՐ ԵՒ ՀԱՐԿԱՆԷՐ ՋՐԱՆԱՆՆ ՇԱԳՀՈՑ ԱՐՔԱՅԻՆ Ի ԹԱՒՐԷԶ

Ապա զօրաժողով լինէր Արշակ արհայ Հայոց, և կուտէր առ ինքն զօրս բազումս իբրև գաւազ բազմութեամբ, և խաղայր ի վերայ աշխարհին Պարսից: Ապա առնոյր Վասակ զգունդն Հայոց, և զՀոնսն հանդերձ Ալանօքն կոչել յօգնականութիւն, և հասանէր դիմէր յօգնականութիւն թագաւորութեանն Հայոց ի վերայ Պարսից: Այլ թագաւորն Պարսից հանդերձ ամենայն իւրովք զօրօքն ի ժամանակի անդ յայնմիկ էր Հայաստանի միջնաշխարհք, Այրարատեան գավառ. գոնում էր այնտեղ Պարսից զորքերը, որոնք այնտեղ կուտակվել բանակ էին դրել մեծ բազմությամբ, ինչպես ավազը ծովի ափին: Վասակն իր հետ եղած գնդով այնտեղ հասնելով՝ գիշերով անսպասելի կերպով գրոհ էր տալիս Պարսից թագավորի բանակի վրա: Եվ տեղն ու տեղը սրի էին անց կացնում Պարսից բոլոր զորքերը. միայն թագավորը հազիվ նողոպրում, փախչում էր մի ձիով: Մնացածներին հալածելով փախցնում էին իրենց սահմաններից դուրս և նրանցից այնքան ավար էին խլում, որ թիվ ու հաշիվ չկար: Նրանց բոլորին առհասարակ կոտորում էին իրենց սրերով, խլում էին նրանցից իրենց թագավորների ոսկորները, որ պարսիկները գերի էին տանում Պարսից աշխարհը: Որովհետև նրանք, ըստ իրենց հեթանոսական կրոնի, ասում էին. «Նրա համար ենք մենք Հայոց թագավորների ոսկորները մեր աշխարհը տանում, որ այս աշխարհի թագավորների փառքը, բախտն ու հաջությունը այստեղից թագավորների ոսկորների հետ մեր աշխարհը փոխադրվին»: Արդ՝ Վասակը խլում է նրանցից Հայաստան աշխարհի բոլոր գերիները, իսկ թագավորների ոսկորները, որ նրանցից Վասակը խլեց՝ տարան թաղեցին Աղձ կոչված ամուր գյուղում, Այրարատ գավառում, որ գտնվում է Արագած մեծ լեռան ներքև ու դժվարամուտ խորշերից մեկում: Իսկ իրանք հոգ տարան աշխարհը խաղաղացնելու, բարեկարգելու, գերիները տեղավորելու, այրածն ու ավերածը նորոգելու: Բայց այս անգամն էլ չարագործ Մերուժանը Պարսից թագավորի հետ փախչում ազատվում էր: Այնուհետև Արշակ թագավորը Վասակ զորավարի հետ պահպանում էին աշխարհը, սահմանագլխի երկու դռներն[128] զգուշությամբ պահելով՝ որքան ժամանակ որ կենդանի էին:

ԻԳ

ԹԷ ԻՆՉՊԵՍ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐՆ ԱՐՇԱՎԵԱՑ ԳԱՐՍԻՑ ԱՇԽԱՐՀԸ, ՔԱՆԴՈՒՄ ԷՐ ԵՒ ԿՈՏՈՐՈՒՄ ԷՐ ՇԱԳՈՒԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԲԱՆԱԿԸ ԹԱԿՈՒՐԵՑՈՒՄ

Այնուհետև Հայոց Արշակ թագավորը զորք էր ժողովում, կուտակում էր ավագի բազմությամբ զորք և վեր էր կենում գնում էր Պարսից աշխարհի վրա: Վասակը վերցնում էր Հայոց գունդը, օգնության էր կանչում նաև Հոներին և Ալաններին, որոնք գալիս էին Հայոց թագավորին օգնության պարսիկների դեմ: Նույն այդ ժամանակ Պարսից

հանգի և ճա խաղացեալ գայր ի վերայ Հայաստան երկրին ընդ դէմ սոցա, ապա սոքա փութացեալք հասանէին յԱտրպատական. և գտանէին զբանակն արքային Պարսից ի Թաւրէզ բանակեալ:

Հասանէր վասակ սպարապետն հանդերձ խաո բիւրուք, անկանէր ի վերայ բանակին Պարսից: Միաձի ճողոպրեալ թագաւորն փախչէր, և առնուին յաւարի զամենայն կարաւանն Պարսից. և զամենայն զօրսն Պարսից բազմութեանն կոտորեցին, և ասին աւար բազում ի բանակէն, զի ոչ գոյր նոցա թիւ: Ասպատակ տուեալ առնուին զամենայն Ատրպայական երկիրն. խաղեալ բէին զերկիրն, մինչև ի հիմանց կործանէին. և խաղաղացուցանէին զգերութիւն երկրին խաո զաստեղս բազմութեամբ: Եւ զամենայն գայր երկրին հանէին ընդ սուր. և իճխեանք զգուշացեալք սահմանօք երկրին իւրեանց, պահ արկեալ պահէին մեծաւ զգուշութեամբ:

ԻԶ

ՅԱՂԱԳՍ ՎՆԱՑ ՊԱՐՍԿԱՑ, ԵՒ ՁՕՐԾՔՀԱՐԻՒՐ ՀԱՁԱՐԱՑՆ՝ ՈՐ ԵԿԵԱԼ ԷԻՆ Ի ՎԵՐԱՑ ՀԱՅՈՑ, ԵՒ ՆԿՈՒՆ ԼԻՆԷԻՆ Ի ՁՕՐԱՑՆ ՀԱՅՈՑ

Ապա գումարեաց թագաւորն Պարսից Շապուհ զվինն ի վերայ արքային Հայոց Արշակայ յորեքհարիւր հազարաւ: Ապա գայր ելանէր վինն, ասպատակ սփռէր ընդ ամենայն երկիրն սահմանացն Հայոց: Եւ ապա իբրև գիտացեալ թագաւորն Հայոց Արշակ, հասանէին ի վերայ զօրացն Պարսից. կոտորեալ առ հասարակ ընդ սուր հանէր զամենայն զօրսն Պարսից, և զմնացեալսն փախստական առնէր մինչև ի կողմանս սահմանացն Պարսից: Սատակէին զնոսա, և իճխեանք դարձեալ ունէին զեկատուն տեղի:

Իէ

ՅԱՂԱԳՍ ՁՕՐԱՎԱՐԻՆ ՊԱՐՍԻՑ ԱՆԹԻԿԱՆԱՑ, ՈՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԲԻՒՐՈՒՆ ՀԱՍԱՆԷՐ ԱՒԱՐ ԱՌՆՈՒԼ ՁԵՐԿԻՐՆ ՀԱՅՈՑ ԹԷ ՁԻԱ՛ՐԴ ՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ ԵԼԱՆԷՐ ԸՆԴ ԱՌԱՋ ՆՈՐԱ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԲԻՒՐՈՒ, ՀԱՐՒԱՆԷՐ ՁՆԱ ԵՒ ՁՁՕՐՍ ՆՈՐԱ

Ապա յետ այսորիկ առաքէր արքայն Պարսից ի վերայ արքային Հայոց գունդ կազմեալ պատրաստեալ առս ընդիրս պատերազմողս իւր և զհառասուն բիւր, գալ առնուլ այրել աւերել զերկիրն Հայաստան, և

թագաւորն էլ իր բոլոր զորերով շարժվել գալիս էր Հայաստան աշխարհի վրա սրանց դեմ. սրանք էլ շտապով հասան Ատրպատական և Պարսից զորը գտնում էին բանակ դրած Թավրեշում[129]:

Վասակ սպարապետը հսաո բյուրով հարձակվում էր Պարսից բանակի վրա: Թագավորը մի ձիով փախչում էր. (հայերը) ավար էին առնում պարսիկների ամբողջ կարավանը[130], Պարսից բազմաթիվ զորք ամբողջապես կոտորում էին և բանակից հաշվից դուրս ավար էին առնում: Ասպատակում էին ամբողջ Ատրպատական աշխարհը, քարուքանդ էին անում երկիրը. հիմքից կործանում էին և գերիներ էին բերում այնտեղից աստղերի բազմությամբ. այդ երկրի բոլոր մարդկանց սրի էին քաշում և իրենք երկրի սահմաններին պահապան կանգնելով՝ մեծ զգուշությամբ պահպանում էին:

ԻԶ

ՎԻՆ ՊԱՐՍԻՒՆ ԵՒ ՁՕՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՀԱՁԱՐ (ՁՕՐՔԻ) ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԵԿԵԼ ԷԻՆ ՀԱՅՈՑ ՎՐԱ ԵՒ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԵՑԻՆ ՀԱՅՈՑ ՁՕՐՔԵՐԻՑ

Ապա Պարսից Շապուհ թագավորը վինին չորս հարյուր հազար զորով գումարեց Հայոց Արշակ թագավորի դեմ: Գալիս էր վինը և ասպատակում էր Հայոց աշխարհի բոլոր սահմանները: Երբ Հայոց Արշակ թագավորն այս իմացավ՝ վրա էր հասնում Պարսից զորերին, բոլոր նրանց զորը կոտորում և առհասարակ սրի էր քաշում, մնացածներին էլ փախցնում էր մինչև Պարսկաստանի սահմանները: Նրանց կոտորեցին և ետ դառնալով պահպանում էին նախկին տեղը:

Իէ

ՊԱՐՍԻՑ ԱՆԹԻԿԱՆ ՁՕՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ ԳԱԼԻՍ ԷՐ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸՆ ԱՎԱՐ ԱՌՆԵԼՈՒ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԸ ՆՐԱ ԴԵՄ ԷՐ ԵԼՆՈՒՄ ՏԱՍՆԵՐՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ ԵՎ ՁԱՐԴՈՒՄ ԷՐ ՆՐԱ ՁՕՐՔԵՐԸ

Սրանից հետո Պարսից թագավորը Հայոց թագավորի վրա էր ուղարկում լավ կազմակերպված գունդ, հառասուն բյուր ընտիր պատերազմող մարդիկ, որ գան Հայաստան աշխարհն առնեն, այրեն ու

Անդկան զօրագլուխ նոցա. գայր հասանէր ասպատակ առնէր յերկիրն Հայոց: Ապա գայր հասանէր ընդ առաջ նորա Վասակ Մամիկոնեան սպարապետն Հայոց Երկոտասան բիւրուք. հարկանէր սատակէր զնա և զզօրս նորա, թափէր զգարդ նոցա, և ոչ ապրեցուցանէր ի նոցանէ և ոչ մի. և իբրև կայր հաւութեամբ ունելով զեակատուն տեղի:

ԻԸ

ՏԱՂԱՏՍ ՀԱՋԱՐԱՎՈՒԽՏՈՅՆ ՈՐ ԷՐ ՄԻ Ի ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ՊԱՐՍԻՑ, ԶՈՐ ԱՌԱՔԵԱՑ ՇԱՊՈՒՀ ԱՐՔԱՅ ՈՒԹՍՈՒՆ ԲՒՒՐՕՔ ՀԱՐԿԱՆԵԼ ՋԵՐԿԻՐՆ ՀԱՅՈՑ. ԵՔԵ ՋԻԱՐԻ ՎԱՍԱԿ ԵԼ ԸՆԴ ԱՌԱՋ ՆՈՐԱ ՄԵՏԱՍԱՆ ՀԱՋԱՐԱՒ. ՀԱՐԿԱՆԷՐ ՍԱՏԱԿԷՐ ՉՆԱ ԵՒ ՉԶՕՐՍ ՆՈՐԱ Ի ՍԱՀՄԱՆՍ ԱՂՁՆԵԱՑ

Եկն եհաս Հազարաւուխտ ի զօրացն Պարսից, գալ այրեացաւեր առնել, ի հիմանց տապալել զերկիրն Հայոց: Եւ դիմեալ ընդ Երկիրն Աղձնեաց, կամեցաւ ծաւալել ընդ Երկիրն Հայոց և ընդ ամենայն սահմանս նոցա: Ապա ելանէր Վասակ ընդ առաջ նորա հանդերձ մեծաւասան հազարաւ. հարկանէր սատակէր, և զզօրսն զմեացեալսն փախուցակաս առկանէր յերկիրն Պարսից. և զՀազարաւուխտն անդէն սպանանէր:

ԻԹ

ՏԱՂԱՏՍ ԴՄԱՒՈՒՆՒ ՎԱՍՄԱԿԱՆԱՅ, ՈՐ ԻՆՆՈՒՆ ԲՒՒՐՈՒՆ ՏԱՓՐԿ ՋՈՐՕՔՆ՝ ՋՈՐ ԱՌԱՔԵԱՑ Ի ՎԵՐԱՅ ԱՐՇԱԿԱՅ ԱՐՔԱՅԻՆ ՀԱՅՈՑ ՇԱՊՈՒՀ ԱՐՔԱՅՆ ՊԱՐՍԻՑ: ԱՊԱ ԵԼԱՆԷՐ ՎԱՍԱԿ ՋՕՐԱՎԱՐՆ ՀԱՅՈՑ, ՀԱՐԿԱՆԷՐ ՉՆԱ ԵՒ ՉԶՕՐՍ ՆՈՐԱ

Ապա գայր հասանէր ի կատարածի տոհմէն Դմաւուեղ Վահմական, հանդերձ իննսուն բիւրուք՝ որ առաքեալ էին ի Շապհոյ արքայէն Պարսից յերկիրն Հայոց, տալ ընդ նոսա մարտ պատերազմի: Ապա կազմեցան պատերազմեցան զօրն Երկրին Հայոց, և Վասակ զօրավար նոցա. ելին պատերազմել ի դիմի հարկանել նոցա: Ապա ի պարտութիւն մատնեցան զօրն Պարսից յերեսաց նոցա, դարձան ի փախուստ: Հասանէր Վասակ, կոտորէր սպանանէր հարկանէր ի նոցանէն. զի և մի ոչ ապրեցուցանէր. և զՎահմականն ի մէջ զօրացն սպանանէր: Եւ սիւնիորեն[29] արտաքոյ իւրեանց սահմանացն հալածեալ տանէին:

ավերեն: Նոանց զօրագլուխն էր Անդիկանը, որ գալիս սպատակում էր Հայոց աշխարհը: Ապա նոա դեմ էր դուս գալիս Հայոց սպարապետ Վասակ Մամիկոնյանը տասներկու բյուրով. ջարդում կոտորում էր նոան և նոա զօրերը, խլում էր նոանց զարդերը, ոչ մեկին կենդանի չէր թողնում, և իբր հաղթությամբ պտճռսլսնում էր նակատի տեղը:

ԻԸ

ՀԱՋԱՐԱՎՈՒԽՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԱՐՍԻՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՑ ՄԵԿՆ ԷՐ, ՈՐԻՆ ՇԱՊՈՒՀ ԹԱԳԱՎՈՐԸ ՈՒՂԱՐԿԵՑ ՔՏՈՒԼՈՒ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ԱՎԵՐԵԼՈՒ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԻՍԻ ՎԱՍԱԿԸ ՆՐԱ ԴԵՄ ԵԼԱՎ ՏԱՍՆԵՎՄԻ ՀԱՋԱՐՈՎ, ՋԱՐԿԵՑ ՈՒ ԿՈՏՈՐԵՑ ՆՐԱՆ ՈՒ ՆՐԱ ՋՈՐՔԵՐԸ ԱՂՁՆԻՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Հազարավուխտը եկավ հասավ Պարսից զօրքերով, որպեսզի Հայոց աշխարհը այրե ավերե, հիմնահատակ անե: Նա դիմեց Աղձնիքի վրա, կամենալով այնտեղից սփռվել Հայոց աշխարհի բոլոր սահմաններըը: Ապա նոա դեմ էր դուս գալիս Վասակը տասնեմի հազարով. ջարդում կոտորում էր նոա զօրերը, մնացածին փախցնում էր Պարսից երկիրը, իրեն Հազարավուխտին էլ սպանում էր:

ԻԹ

ԴՄԱՎՈՒՆՒ ՎԱՍՄԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՀ ԹԱԳԱՎՈՐԸ ԻՆՆՍՈՒՆ ԲՅՈՒՐ ՏԱՓԱՐՍԱՏԱՆԻՅ ՋՈՐՔՈՎ ՈՒՂԱՐԿԵՑ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ԴԵՄ, ԵՎ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ ՋՈՐԱՎԱՐԸ ՆՐԱ ԴԵՄ ԷՐ ԴՈՒՐՍ ԳԱԼԻՍ, ՋԱՐԴՈՒՄ ԷՐ ՆՐԱՆ ԵՎ ՆՐԱ ՋՈՐՔԵՐԸ

Ապա գալիս եասնում էր Դմավուեղ Վահմականը Կավոսական տոհմից իննսուն բյուր զորով, որոնց ուղարկել էր Պարսից Շապուհ թագավորը Հայոց դեմ պատերազմելու: Այն ժամանակ Հայոց աշխարհի զորերը և նոանց Վասակ զորավարը կազմակերպվեցին, պատրաստվեցին և դուս եկան նոանց դեմ պատերազմելու: Պարսից զորերը պարտությունն կրեցին նոանցից և փախուստի դիմեցին: Վասակը հասնում էր, ջարդում կոտորում էր նոանց, ոչ մեկին կենդանի չէր թողնում. Վահմականին էլ սպանում էր զորերի մեջ: Իսկ սիւնիորեներին հալածում էին իրենց սահմաններից դուս:

ՅԱՂԱԳՍ ՎԱՀՐԻՃԱՅ՝ ՈՐ ՋՈՐՔՋԱՐԻՒՐ ԲԻՒՐՈՒՆ ԳԱՅՐ ՀԱՍԱՆԷր, ՏԱՅՐ ԳԱՅՏԵՐԱԶՄ ԸՆԴ ԱՐՇԱԿԱՅ ԱՔԱՅԻՆ, ԵՒ ՋԻԱ՛ՐԴ ՄԱՏՆՑԱԼ Ի ՋՆՈՒՏ՝ՎԱՄԱԿԱՅ ՋՕՐԱՎԱՐԻՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՅՆ ՋՕՐՕՔՆ ՀԱՆԴԵՐՁ

Ապա գայր հասանէր Վահրիճ ի Վահրիճայ, և զօրճն Պարսից չոռեճճարիւր բիւրուն առաքեալ ի Շապհոյ արքայէն ի վերայ Հայաստան աշխարհին, աւար առնուլ և կոտուսանել զերկիրն զօրացն թագաւորութեանցն Հայոց. և գային հասանէին ի տեղին, որ կոչին Մախազեան: Ապա Ճառաստն հազարաւ ելանէր Վասակ զօրավարն ընդդէմ նոցա. հարկանէր ազատակէր զզօրս նոցա, սպանանէր զՎահրիճն, և կոտորէր զզօրսն Պարսից, և ոչ բողոյր ի նոցանէ և ոչ մի. և զգուշանայր զսահմանօք երկրին իւրոյ:

ԼԱ

ՅԱՂԱԳՍ ԳՈՒՄԱՆԴ ՇԱԳՀՈՑ, ՈՐ ՄԵԾԱՒ ԳԱՐԾԱՆՕՔ ԳԱՐԾԵԱԼ ԱՌԱՋԻ ԱՐՔԱՅԻՆ ԳԱՐՍԻՑ ՇԱԳՀՈՑ, ԵՒ ԱՌԵԱԼ ԱՂԷՐ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՑ ԻՆՆՀԱՐԻՒՐ ՀԱՋԱՐ ՋՕՐՍ. ԵՒ ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ՆՈՒՈՆ ԼԻՆԷին. ՁԱՐԱՁԱՐ ՄԵՐԾԵԱԼ ԼԻՆԷին ՅԱՇԽԱՐՀԷն ՀԱՅՈՑ

Եւ եղև յետ այսորիկ գայր հասանէր Գումանդ Շապուհ, առաքեալ ի Շապհոյ արքայէ Պարսից իննհարիւր հազարաւ, պարծեցեալ առաջի թագաւորին: Եւ գնացեալ, գայր հասանէր յաշխարհն Հայոց. և առաջնորդ ունէր ի ձեռին զՄերուժանն վատաճչան, որ էր յԱրծրունեաց տոհմէն յերկրէն Հայոց: Ապա գայր հասանէր, և զեղծ գտանէր զսահմանապահսն՝ որ պահէին զսահմանս Հայոց: Ապա լցան սփռեցան ծաւալեցան ընդ ամենայն երկիրն Հայոց, աւար առնուլ բանդել աւերել զերկիրն ամենայն Հայոց աշխարհին: Ապա կազմէր պատրաստէր Վասակ զօրավարն Հայոց, հասանէր անկանէր ի վերայ արքայագնդին. և նախ զԳումանդ Շապուհն սպանանէր: Եւ ապա ընդ ցիրն ասպատակ սփռեալ հայացիքն, զամենայն զօրսն Պարսից կոտորեալ, անմի արարեալ սպառեցին: Բայց միայն չարագործն Մերուժանն միածի ճողոպրեալ, փախչէր անկանէր յերկիրն Պարսից:

ՎԱՀՐԻՃԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՋՈՐՍ ՀԱՐՈՒՐ ԲՅՈՒՐՈՎ ԳԱԼԻՍ ՀԱՍՆՈՒՄ ԷՐ ԵՎ ԳԱՅԵՐԱԶՄ ԷՐ ՏԱԼԻՍ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՀՏՏ, ԵՎ ԹԵ Ի՞ՆՉԳՈՒՆ ՆԱ ԱՄԲՈՂՋ ՋՈՐՔՈՎ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՁԵՌՔԸ ՄԱՏՆՎԵՑ

Ապա գալիս հասնում էր Վահրիճի (որդի) Վահրիճը չորս հարյուր բյուր Պարսկական զորով, որոնց ուղարկել էր Շապուհ թագավորը Հայոց աշխարհի վրա՝ Հայոց թագավորության երկրներն ավար առնելու, զորերը կոտորելու: Նրանք գալիս հասնում էին Մախազյան կոչված տեղը: Ապա Վասակ զորավարը նրանց դեմ էր դուրս գալիս համառաստն հազարով. զարնում կոտորում էր Պարսից զորերը, ոչ մեկին (կենդանի) չէր թողնում. սպանում էր նաև Վահրիճին, և զգուշությամբ պահպանում էր երկրի սահմանները:

ԼԱ

ԳՈՒՄԱՆԴ ՇԱԳՈՒՀԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՄԵԾ ԳԱՐՇԱՆՔՈՎ ԳԱՐՇԵՑԵԼ ԷՐ ԳԱՐՍԻՑ ՇԱԳՈՒՀ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՌԱՋ ԵՎ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ ԵԿԱՎ ԻՆՔ ՀԱՐՅՈՒՐ ՀԱՋԱՐ ՋՈՐՔՈՎ, ԵՎ ԹԵ Ի՞ՆՉԳՈՒՆ ԳԱՐՏՈՒՂՈՒԹՅՈՒՆ ԿՐԵԼՈՎ ՁԱՐԱՁԱՐ ՀԱԼԱԾՎՈՒՄ ԷՐ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՑ

Սրանից հետո Պարսից Շապուհ թագավորի կողմից ուղարկվում էր Գումանդ Շապուհը իր հարյուր հազար զորով, որ պարծեցել էր թագավորի առաջ: Նա գալիս հասնում էր Հայոց աշխարհը, իր ձեռքի տակ առաջնորդ ունենալով վատաճչան Մերուժանին, որ Հայոց աշխարհից էր, Արծրունյաց տոհմից: Նրանք հասավ, Հայոց սահմաններն պահպանող սահմանապահ (գունդը) գտավ անփույթ և անզգույշ. (ուստի) ներս թափվեցին սփռվեցին ամբողջ Հայաստան աշխարհում, ավարում, բանդում, ավերում էին ամբողջ աշխարհը: Ապա Հայոց վասակ զորավարը կազմակերպվում, պատրաստվում էր, հասնում հարձակվում էր արքայական գնդի վրա և նախ և առաջ Գումանդ Շապուհին էր սպանում: Ապա Հայկական զորը Պարսից ցրված զորերի վրա ասպատակելով բոլորին կոտորում էին, առանց մի մարդ կենդանի թողնելու: Բայց միայն չարագործ Մերուժանը մի ձիով փախչում բնկնում էր Պարսից աշխարհը:

ՅԱՂԱԳՍ ԴԵՀԿԱՆ ՆԱՀԱՊԵՏԻ, ՈՐ ԱՌԱՔԵՑԱՒ Ի ՇԱԳՀՈՑ ԱՐՔԱՅէ ՊԱՐՍԻՑ Ի ՎԵՐԱՅ ԱՐՇԱԿԱՅ ՀԱՅՈՑ ԱՐՔԱՅԻՆ՝ ՋՈՐՕՔ ԲԱԶՄՕՔ. ԱՊԱ ՀԱՍԱՆԷՐ ՍԱՏԱՊԷՐ ՋՆՈՍԱ ՋՕՐԱՎԱՐՆ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ

Յետ այսր ամենայնի Շապուհ արքայն Պարսից զօրաժողով լինէր, և կուտէր զօրս անչափս և անթիւ և աննեամար իբրև գաւազ ծովու, և կուտէր զօրս անչափս և անթիւ և աննեամար իբրև գաւազ ծովու, և կուտ վառեալ՝ որ ճիգակ ի ձեռն առնուին, չորեքհարիւր բեւր զօրս բազումս: Եւ գԴենկան նահապետ, որ տոհմիկ իսկ էր ազգաւ տոհմին զօրավարացն Հայոց՝ այս ինքն Մամիկոնենից, առաջէր գնա բազատրն Պարսից Շապուհ յերկիրն Հայոց ի վերայ Արշակայ արքային Հայոց:

Գայր հասանէր ի սահմանս երկրին Հայոց. ապա և գհայացիսն ոչ ինչ ծուլացեալ ի բուն գոանէր այլ կազմ պատրաստ կային ճնին գործոյ նակատուն պատերազմի: Եւ զօրավարն Վասակ ելանէր ընդ առաջ նոցա երեսանասուն հազարաւ. հարկանէր սատակէր զզօրսն ամենայն Պարսից, սպանանէր գիւր զազգային գԴենկան նահապետն, և զմնացեալսն առաջի իւր տանէր փախուցանել ապրէր, որ առաջնորդէր նոցա: Բայց Մերուժան Արծրունի փախուցեալ ապրէր, որ առաջնորդէր նոցա:

ԼԳ

ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԵՆԱՅ ՊԱՀԼԱՒԻ. ՈՐ ԵԿԱՆ ԵՒ ՆԱ ՋՕՐՕՔ ԲԱԶՄՕՔ. ԵՒ ԱՒԱ ԵՒՍ ՆՄԱՆ ԼԻՆԷՐ ԵՐԲԵՒ ՉԱՌԱՋԻՆՑՈՒՆ

Ապա կրկին լինէր զօրաժողով Շապուհ արքայ Պարսից, կազմէր պատրաստէր գունդս բազումս զօրացն և փիղս անթիւս, զօրս բեղիս և պատերազմողս. և Սուրէն Պահլաւ. որ ազգակից իսկ էր Արշակայ թագաւորին Հայոց, և Մերուժանն առաջնորդ նոցա. և արձակեաց ի վերայ նոցա: Ապա բանգի և Վասակ զօրավարն Հայոց խոպաց գնաց ընդ առաջ նոցա երեսուն հազարաւ, հարկանէր ի դիմի գՍուրէն և սպանանէր, և զզօրսն կոտորեաց. բայց Մերուժան փախչէր:

ԼԴ

ՅԱՂԱԳՍ ԱԳԱԿԱՆ ՎԱՍՄԱԿԱՆԻ. ՉԻ ԵԿԱՆ ՆԱ ՅԱՅՍ ԳԱՏԵՐԱԶՄԻՍ. ԵՒ ՆՄԱ ՉԱՆՈՂԵՑԱՒ ՈՐՊԷՍ ԱՌԱՋՆՈՑՆ

Իսկ յետ Սուրէնայ եկն Վասմական. գայր հասանէր անչափ բազմութեամբ և անթիւ զօրօք, և Մերուժան առաջնորդ առաքեալ ի Շապ-

ԴԵՀԿԱՆ ՆԱՀԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԳԱՐՍԻՑ ՇԱԳՈՒՀ ԹԱԳԱՒՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԵԾ ՋՈՐՔՈՎ ՈՒՂԱՐԿՎԵՑ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐԻ ՎՐԱ, ԵՒ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ ՋՕՐԱՎԱՐԸ ՀԱՍՆՈՒԻՄ ԿՈՏՈՐՈՒԻՄ Է ՆՐԱՆՑ

Այս բոլորից հետո Պարսից Շապուհ թագավորը զօրք էր ժողովում ու կուտակում անչափ և աննեամար բազմությամբ, ինչպես ավազը ծովի ափին, չորս հարյուր բյուր լավ սպառազինված մարդիկ, նիզակ գործածողներ: Եվ Դենկան նահապետին, որ տոհմով ազգակից էր Հայոց թագավորներին, այսինքն Մամիկոնյաններին, (այս զօրով) ուղարկում էր Հայոց աշխարհը, Հայոց Արշակ թագավորի վրա:

Նա գալիս հասնում էր Հայաստանի սահմաններին, բայց ծուլացած կամ ճնած չէր գտնում հայերին. նրանք կազմ և պատրաստ էին պատերազմական գործին: Եվ Վասակ զօրավարը նրանց դեմ էր դուրս գալիս յոթսնասուն հազարով. չարդում, կոտորում էր Պարսից բոլոր զօրքերը, սպանում էր իր ազգական Դենկան նահապետին և մնացածներին իրենց առաջը խառնելով՝ ձի ձեծած ճալածում փախցնում էին: Բայց Մերուժան Արծրունին, որ նրանց առաջնորդում էր՝ փախչելով փրկվում էր:

ԼԳ

ՍՈՒՐԵՆ ՊԱՀԼԱՎԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՆՈՒՅՆՊԵՍ ԵԿԱՎ ՄԵԾ ՋՈՐՔՈՎ ԵՎ ԱՌԱՋԻՆՆԵՐԻ ՆՄԱՆ ԳԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԵՑ:

Պարսից Շապուհ թագավորը նորից զօրք էր ժողովում, կազմակերպում և պատրաստում էր բազմաթիվ գեղեր և անթիվ փղեր, բեմիր ու պատերազմող մարդիկ. Սուրեն Պահլավի (ձեռի տակ), որ Հայոց Արշակ թագավորի ազգական էր, և Մերուժանի առաջնորդությամբ արձակում էր նրանց վրա: Ապա Հայոց Վասակ զօրավարն էլ վեր կացավ գնաց նրանց դեմ երեսուն հազարով: Սուրենի հետ բեդեարվեց, նրան սպանեց, զօրքերը կոտորեց: Բայց պիղծ Մերուժանը փախչում էր:

ԼԴ

ԱԳԱԿԱՆ ՎԱՍՄԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՆՈՒՅՆՊԵՍ ԵԿԱՎ ԱՅՍ ԳԱՏԵՐԱԶՄՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԱՋԻՆՆԵՐԻ ՆՄԱՆ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՊԵՑ

Սուրենից հետո եկավ Վասմականը, որ գալիս հասնում էր անթիվ զօրքերի բազմությամբ. Մերուժանն էլ Պարսից Շապուհ թագավորի

ճոյ արքայէն Պարսից ի գործ պատերազմի ի վերայ երկրին Հայոց: Ապա առաքեցաւ ընդ առաջ նորա Վասակ սպարապետ զօրավարն Հայոց. ճարկանէր սատակէր զԱպականն Վսեմական ճանդերձ զօրօք, և զմին ի նոցանէն ոչ ապրեցուցանէր: Բայց միայն փախչէր չարագործն Մերուժան:

ԼԲ

ՅԱՂԱԳՍ ՋԶԿԱՅ ՆՈՒԻՐԱԿԱՊԵՏԻ, ՈՐ ԱՌԱՔԵՑԱՒ Ի ՇԱԳՀՈՑ ԱՐՔԱՅԷՆ Ի ՎԵՐԱՑ ՀԱՅՈՑ ԲԱԶՈՒՄ ՋՕՐՕՔ Ի ՊԱՏԵՐԱԶՄ, ԵՒ ՍԱՏԱԿԵՑԱՒ ԻՒՐՈՒ ՋԱՌԱՋԻՆՍՆ

Յետ այսորիկ Զիկ նուիրակապետն գիւր առնակեաց Շապուհ արքայ Պարսից, մղել զպատերազմ Հայոց. և զՄերուժանն առաջնորդ ընդ նոսա առնէր: Եւ գումարէր գումարտակ բազում իբրև զաւազ ծովու բազմութեամբ. և գային հասանէին յերկիրն Հայոց: Ապա ելանէր ի դիմի ճարկանէր նոցա Վասակ զօրավարն Հայոց. Զիկն սպանանէր, և զզօրսն զկէսն կոտորէր, և զկէսն առաջի իւրեանց փախստական առնէին: Այն անգամ ևս ոչ կարէին ի բուռն արկանել զՄերուժանն:

ԼԳ

ՅԱՂԱԳՍ ՍՈՒՐԵՆԱՅ ՊԱՐՍԿԻ, ՈՐ ՅԵՏ ՋԶԿԱՅՆ ԵՒՍ ԵԿՆ Ի ՊԱՏԵՐԱԶՄՆ. ԵՒ ՆԱ Ի ԲՈՒՒՆ ԱՆԿԵԱԼ ՎԱՍԱԿԱՅ, ՀԱՆԴԵՐՁ ԻՒՐՈՎՔ ՋՕՐՕՔՆ ՍԱՏԱԿԵՑԱՒ

Եւ եղև յետ մանուն Զրկայ, Սուրէն պարսիկ խաղաց ի թագաւորէն Պարսից Շապհոյ. վաթսուն բիւրու եկն նեաս, տալ պատերազմ ընդ թագաւորին Հայոց Արշակայ. և առաջնորդ ունէր զՄերուժանն: Ապա ժողովեաց զամենայն զօրս նախարարացն Վասակ սպարապետն Հայոց. ելանէր ի գիշերի անկանէր ի ներս ի դակիչն ի' ճետիոտս սուսեր ի ձեռն տային հազարաւ ընտիր ընտիր առամբ: Եւ ճասարակ կոտորէին ճարկանէին և սատակէին զզօրսն Պարսից. և ձերբակալ առնէին զՍուրէն պարսիկ. և ածէին զնա առ արքայն Արշակ: Ապա հրամայեաց տալ ճարակոչիսն առնել զնա: Բայց Մերուժանն ապրէր փախուսեալ:

կողմից առաջնորդ էր նշանակված՝ Հայոց աշխարճի դեմ պատերազմելու ճամար: Ապա Վասակ Հայոց սպարապետն ուղարկվեց նրանց ընդառաջ: Ջարդում էր Պարսից զորքերը, մի մարդ կենդանի չթողնելով, սպանում էր Ապական Վսեմականին: Միայն չարագործ Մերուժանը փախչում էր:

ԼԳ

ՋԻԿ ՆՎԻՐԱԿԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՇԱԳՈՒՀ ԹԱԳԱՎՈՐԻՑ ՄԵԾ ՋՈՐՔՈՎ ՈՒՂԱՐԿՎԵՑ ՀԱՅՈՑ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԱՌԱՋԻՆՆԵՐԻ ՆՄԱՆ ԿՈՏՈՐՎԵՑ

Սրանից ճետո Պարսից Շապուճ թագավորը իր Զիկ նվիրակապետին[132] արձակեց Հայաստան պատերազմի, և նրանց առաջնորդ էր նշանակում Մերուժանին: Նրանց ձեռքի տակ գումարում էր մեծ գունդ, ծովի ավազի բազմությամբ: Նրանք գալիս ճասնում էին Հայոց աշխարճը: Նրանց դեմ էր դուրս գալիս Հայոց Վասակ զորավարը. Զիկ նվիրակապետին սպանում էր, զորքերի կեսը կոտորում էր, մյուս կեսը առաջ խառնելով փախստի էին մատնում: Բայց այս անգամ էլ չկարողացան ձեռք ձգել չար Մերուժանին:

ԼԴ

ՍՈՒՐԵՆ ՊԱՐՍԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԶԻԿԻՑ ՀԵՏՈ ՆՈՒՅՆՊԵՍ ԵԿԱՎ ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ ԵՎ ՎԱՍԱԿԻ ՁԵՌՔԸ ԱՆՁՆԵԼՈՎ ՋՈՐՔԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԿՈՏՈՐՎԵՑ

Զիկի մաճից ճետո Սուրեն պարսիկը Պարսից Շապուճ թագավորի կողմից եկավ վաթսուն բյուրով Հայոց Արշակ թագավորի ճետ պատերազմելու, և առաջնորդ ուներ Մերուժանին: Ապա Հայոց Վասակ սպարապետը ժողովեց նախարարների բոլոր զորքերը և գիշերով ճետիոտս ճարձակվեց Պարսից ամրացրած բանակի[133] վրա սրերով զինված տասը ճազար ընտիր մարդկանցով: Բոլոր Պարսից զորքն առճասարակ կոտորում, ոչնչացնում էին, ձերբակալում էին Սուրեն պարսիկին և բերում էին Արշակ թագավորի մոտ, որ ճրամայեց նրան ճարկոծելով սպանել. բայց Մերուժանը փախչելով ազատվում էր:

ՅԱՂԱԳՍ ՀՐԹԻՇՂՈՒՄԱՅ, ՈՐ ԱՌԱՔԵՑԱՒ ՅԱՐՔԱՅԷՆ ՊԱՐՍԻՑ Ի ՎԵՐԱՅ ՀԱՅՈՑ ԻՆՆՍՈՒՆ ԲԻՒՐՈՒ ԵՒ ԱՅՆ ԱՆԳԱՄ ԵՒՍ ՆՇԱՆ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԿԱՆԽՆԷՐ

Եւ Հրեշտողումն արձակէր ի պատերազմ ի վերայ աշխարհին Հայոց: Զի և սա իսկ ի նմին յազգէ թագաւորին Հայոց ազգական էր, այլ բանիւ Շապհոյ արքայի գայր հասանէր հանդերձ զօրօք իննսուն բիւրուց, տալ պատերազմ ընդ Հայաստանեայսն: Ապա կարգէր կազմէր պատրաստէր Վասակ զօրավարն Հայոց զամենայն զգունդս զօրացն, և դիմեաց ի վերայ նոցա մարտիւ պատերազմաւ: Փախստականս առնէին զնոսա, արկեալ առաջի իւրեանց. և Հրեշտողումն և Մերուժանն փախչէին:

ԼԸ

ՅԱՂԱԳՍ ԱՂԱՆԱՅՈՂԱՅՆ ՈՐ ՁՈՐՔՋԱՐԵՒԲ ԲԻՒՐԱՒ ՁԱՅՐ ՀԱՍԱՆԷՐ Ի ԹԱԳԱՒՈՐԷՆ ՊԱՐՍԻՑ՝ ՏԱԼ ՊԱՏԵՐԱԶՄ ԸՆԴ ԱՐՔԱՅԻՆ ՀԱՅՈՑ, ԵՒ ՁԻԱՐՔ ՆԵՂԱԼ ՊԱՐՏԱՒԱՅ Ի ՁԵՌՆ ՎԱՍԱԿԱՅ

Իսկ Աղանայոզանն, որ Պահլաւն էր ի տոհմէն Աւշականեանց, որ նա խոխոտացեալ առաջի Շապհոյ թագաւորին Պարսից, և զնայր գայր հասանէր ի սահմանս Հայոց: Ապա այս վաղագոյն ազդ լիներ թագաւորին Հայոց Աւշակայ. այնպէս և սա զիւր գործն կազմէր ի ձեռն Վասակայ իւրոյ սպարապետին: Եւ զամենայն հախարարսն Հայոց ընդ նմա գումարեալ, գայր հասանէր ընդ առաջ գօրացն Պարսից. հարկանէր կոտորէր զամենեսեան առ հասարակ. և գմնացեալսն փախստեայս առնէին յերկիրն Պարսից. և իմեանք զգուշանային սահմանացն իւրեանց:

ՅԱՂԱԳՍ ԲՈՅԵԿԱՆ ՄԵԾ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՊԱՐՍԻՑ, ՈՐ ԻՆՔՆ ԵՒ ՍԱ ՔԱՌԱՍՈՒՆ ԲԻՒՐԱՒ. ՁՈՐ ՀԱՐԿԱՆԷՐ ՉՆՉԻԷՐ ՍՊԱՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ

Յետ այսորիկ Բոյեկան մեծ նախարար Պարսից, և բառասուն բեւր բնդ նմա, գային հասանէին յԱտրպատական. կամէին ասպատակ առնել յերկիրն Հայոց: Ապա զառաջեաւ անցանէր Վասակ իւրով Հայաստան գնդաւն, հարկանէր զզօրսն ամենայն Պարսից, և զԲոյեկանեն սպանանէր ի Թաւրէժն: Եւ այրէր աճդ զապարանս թագաւորին Պարսից.

ՀՐԵՎՇՈՂՈՒՄԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՎԵՑ ՀԱՅՈՑ ՎՐԱ ԻՆՆՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ, ԵՎ ԱՅՍ ԱՆԳԱՄ ԷԼ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ ՄՆՈՒՄ ԷՐ ՀԱՅԵՐԻՆ

Հրեվշողումն էր գալիս պատերազմի Հայոց աշխարհի վրա: Սա էլ Հայոց թագավորի ազգականն էր, նրա ցեղից լինելով, որ Շապուհ թագավորի եղբայրով իննսուն բյուր զորով գալիս եղաւ՝ հայերի հետ պատերազմելու: Ապա Հայոց Վասակ զորավարը կազմակերպում պատրաստում էր զորերի բոլոր գնդերը և պատերազմով դիմում էր նրա վրա: Բոլորին իրենց առաջը խառնելով փախուստի մատնեցին: Հրեվշողումն և Մերուժանն էլ փախչում էին:

ԱԼԱՆԱՅՈՂԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԳԱԼԻՍ ՀԱՍՆՈՒՄ ԷՐ ՁՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ԲՅՈՒՐՈՎ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԴԵՄ ՊԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԵՂՎԵՑ ՈՒ ՊԱՐՏՈՒԹՈՒՆ ԿՐԵՑ ՎԱՍԱԿԻՑ.

Իսկ Ալանայոզանը, որ Պահլավ էր, Աւշականիների տոհմից, խոխոտացել էր Պարսից Շապուհ թագավորի առաջ (հայերի դեմ): Նա գալիս հասնում էր Հայաստանի սահմաններըը: Այս բանը վաղորոք հայտնի էր դառնում Աւշակ թագավորին. սա նույնպես իր զորը կազմակերպեց իր Վասակ սպարապետի ձեռով, նրա ձեռքի տակ գումարելով բոլոր հայ նախարարներին: Նա գալիս էր Պարսից զորքի դեմ, բոլորին առնասարակ կոտորում էր, մյուսներին փախցնում էին Պարսից աշխարհը և իրենք զգուշությամբ պահպանում էին իրենց սահմանները:

ՊԱՐՍԻՑ ԲՈՅԵԿԱՆ ՄԵԾ ՆԱԽԱՐԱՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵԿԱՎ ՔԱՌԱՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ, ՈՐՈՆՑ ԿՈՏՈՐՈՒՄ ՈՉՆՉԱՑՆՈՒՄ ԷՐ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԸ

Սրանից հետո Պարսից Բոյեկան մեծ նախարարը հառասուն բյուրով գալիս հասնում էր Ատրպատական, կամենալով Հայոց աշխարհն ասպատակել: Նրա առաջն էր դուրս գալիս Վասակը իր Հայկական գնդով, կոտորում էր Պարսից բոլոր զորքը, Բոյեկանին էլ սպանում էր Թավրեժում: Այնտեղ նա այրում էր Պարսից թագավորի ապա-

գտեալ անդ զպատկեր թագաւորին Պարսից, ճետանձիգ եդեալ՝ ճետացից առնէր: Բայց միայն փախչէր Մերուժանն բնդ ճոսա եկեալ:

Խ

ՅԱՂԱԳՍ ՎԱՋԱԿԱՆԱՅ, ՈՐ ԵԿՆ Ի ՀԱՅՍ ՈՒԹՆԵՒՏԱՍՆ ԲԻՒՐՈՒՆ, ԵՒ ԿԱՄԷՐ ԱՌՆՈՒԼ ՉՀԱՅՍ. ԱՑԱ ԵՒ ՉՆԱ ՎԱՆԵԱՅ ՍՊԱՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՉՁՕՐՍ ՆՈՐԱ

Վաչականն ոմն ի նախարարացն Պարսից արշաւէր յերկիրն Հայաստան, ճանդերձ ուրևտասն բիւրօք: Ապա ժողովէր զօրավարն Հայոց զասակ զամենայն զզօրսն Հայոց. և բողոյր զթագաւորն Արշակ յամուր տղին Դարիւճաց, և իճն զօրավարն Հայոց Վասակ խաղայր անկանէր անդերձ զօրօքն Հայոց զբանական Վաչականայ: Սպանանէր զՎաչականն, և կոտորէր զբանական Պարսից. բայց միայն ապրէր սակաւուք ախուցեալ Մերուժանն, եկեալ առաջնորդ նոցա:

ԽԱ

ՅԱՂԱԳՍ ՄՇԿԱՆԱՅ ԵՒ ԵՐԿՍՈՒՆ ԵՒ ՀԻՆԳ ԲԻՒՐՈՒՆ, ՈՐ ԱՐՇԱՎԷՐ ՅԵՐԿԻՐՆ ՀԱՅՈՑ, ԹԷ ՋԻՒ՛ՐԴ ԿՈՏՈՐԵԱԼ ԵՂԵՒ Ի ՎԱՍԱԿԱՅ ԵՒ Ի ՁՕՐԱՅ ՀԱՅՈՑ

Եւ Մշկան ոմն անուն, մի ի նախարարացն Պարսից, և նա եկեալ ուղղէր ճակատս բնդ թագաւորին Արշակայ: Ապա զօրավարն Հայոց Վասակ ճակատէր զզօրսն Հայոց բնդդէմ նոցա. և դէմ յանդիման մեռան բռնութեամբ միմեանց յարձակէին: Եւ յաղթահարէր զզօրսն Պարսից գունդն Հայաստան. սատակէին, և ոչ մի ի նոցանէն ոչ ապրեցույանէր. և յակաճէ յանուանէ զՄշկանն սպանանէին, և Մերուժանն խախչէր:

ԽԲ

ՅԱՂԱԳՍ ՄԱՐՈՒՃԱՆԱՅ ԵՒ ՎԱՓՍՈՒՆ ԲԻՒՐՈՒՆ, ԹԷ ՋԻՒ՛ՐԴ ԵԿԵԱԼՔ Ի ՎԵՐԱՑ ԹԱԳՒՒՈՐԻՆ ԱՐՇԱԿԱՅ, ԿԱՄ ՋԻՒ՛ՐԴ ՀԱՐԿԱՆԷՔ ՍԱՏԱԿԷՔ ՁՆՈՍԱ ՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏՆ

Մարիճ անուն մեծ նախարար գայր մարտնչէր բնդ երկիրն Հայոց: Ապա ճանդերձ զօրօքն վաթսուն բիւրուն գայր հասանէր միջամուխ[30] լինէր յերկիրն Հայոց. և առաջնորդ ի ձեռին ունէր զՄերուժանն Արծրունի: Ապա ևս պատանէր պատերազմաւ վասակ ամենայն զօրօքն

ռանէր և գտեալով թագավորի պատկերը՝ ճետանգուցյամբ նոցա ծակըռտում էր: Բայց միայն Մերուժանը, որ նոցանց ճետ եկել էր՝ փախչում էր:

Խ

ՎԱՋԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ ԵԿԱՎ ՏԱՍՆԵՎՈՒԹ ԲՅՈՒՐՈՎ ԵՎ ԿԱՄԵՆՈՒՄ ԷՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՎԱՃԵԼ, ԵՎ ՀԱՅՈՑ ՍՊԱՐԱՊԵՏԸ ՎԱՆԵՑ ՆՐԱՆ ԵՎ ՆՐԱ ՁՈՐՔԵՐԻՆ

Պարսից նախարարներից մեկը, Վաչական անունով, տասնեուր բյուրով արշավում էր Հայոց աշխարճի վրա: Ապա Հայոց զորավար Վասակը ժողովում էր Հայոց բոլոր զորքերը, Արշակ թագավորին թողնում էր Դարյունիի ամուր բերդում և ինքը, Հայոց Վասակ զորավարը, Հայոց զորքերով ճարձակվում էր Վաչականի բանակի վրա: Սպանում էր Վաչականին, կոտորում էր Պարսից բանակը. միայն Մերուժանը, նոցանց առաջնորդը, փիչ մարդկանցով փախչում ազատվում էր:

ԽԱ

ՄՇԿԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՐԿՍՈՒՆ ԵՎ ՀԻՆԳ ԲՅՈՒՐՈՎ ԱՐՇԱՎԵՑ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԱ ԿՈՏՈՐՎԵՑ ՎԱՍԱԿԻՑ ԵՎ ՀԱՅՈՑ ՁՈՐՔԻՑ:

Պարսից նախարարներից մեկը, Մշկան անունով, նույնպես գալիս ճակատում էր Արշակ թագավորի դեմ: Ապա Հայոց զորավար Վասակը Հայոց զորքը ճակատեցնում էր նոցանց դեմ, և մեծ սաստկությամբ ճարձակվում էին միմյանց վրա: Հայկական գունդը ճաղթահարում էր Պարսից զորքերին, նոցանց կոտորում էին, ոչ մեկին կենդանի չէին թողնում. ճակատեն ճանվանեն սպանում էին Մշկանին, իսկ Մերուժանը փախչում էր:

ԽԲ

ՄԱՐՈՒՃԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՎԱՓՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ ԵԿԱՎ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՎՐԱ ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆՑ ԿՈՏՈՐՈՒՄ ՈՂՋԱՑՆՈՒՄ ԷՐ ՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԸ:

Մի մեծ նախարար, Մարեճան[134] անունով, գալիս էր Հայոց աշխարճի ճետ պատերազմելու: Նա վաթսուն բյուրով գալիս միջամուխ էր լինում Հայոց աշխարճը, իր ձեռքի տակ առաջնորդ ունենալով Մերուժան Արծրունուն: Ապա Վասակը Հայոց բոլոր զորքերով պատերազմով

Հայոց. ճարկաճէր սատակէր զզօրսն Պարսից կորուսանէր, և զՄարուճանն սպանանէր: Բայց միայն փախչէր Մերուժան:

ԽԳ

ՅԱՂԱԳՍ ՋԻՆԴԱԿԱԳԵՏԻՆ,. ՈՐ ԻՆՆՍՈՒՆ ԲՒՒՐՈՎ ԵԿՆ Ի ՎԵՐԱՅ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԱՑԱ ՀԱՍԱՆԷՐ ՍԱՏԱԿԷՐ Ի ՄԵԾ ՀԱՐՈՒԱԾՍ ՋՋՕՐՍՆ ՊԱՐՍԻՑ ՎԱՍԱԿ ՋՕՐԱՎԱՐՆ

Զինդկապետ ոմն, զօրագլուխ զօրացն բազաւորին Պարսից, ճանդեռն իննսուն բիւրուց գայր ճասանէր ի սահմանս Ատրպատականի: Ապա կանխէր և ելանէր ընդ առաջ նոցա Վասակ զօրավարն Հայոց. անկանէր ի գիշերի ի վերայ դակչին պարսկաց, և ճանէր ընդ սուր առ ճասարակ զամենեսեան, և սպանանէր զզինդկապետն ի մէջ բանակին: Բայց միայն ճողոպրեալ ապրէր Մերուժանն վատանշան:

ԽԴ

ՅԱՂԱԳՍ ԱՐՔԱՅՈՐԴՒՈՅՆ ՊԱՊԱՅ ԹԷ ՋԻՒ՛ՐԴ ԱՅՏՆԻ ԷԻՆ ԴԵՒՔՆ Ի ՆՄԱ, ՅԻ ՀԱՆԴԵՐՁ ՆՈՔՈՔ ԴՈՐՏԷՐ ՁԳՂՈՒԹԻՒՆ

Պապ որդին Արշակայ ծնաւ ի մօրէն Փառանձեմայ սիւնւոյ, որ էր լ[illegible]ալ կին Գնելոյն. զոր եսպան արքայն Արշակ, և առ զկին նորա Փառանձեմ իւր կին, և ծնաւ ի նմանէ որդի՝ որ կոչեցաւ Պապ: Եւ եղև իբրև ծնաւ զնա մայրն իւր, բանզի անօրէն մարդ էր և ամենևին յաստուածոյ ոչ երկնչէր, նուիրեաց զնա դիւաց. և բնակեցին դեւ բազումք ի մանուկն, և վարէին զնա ըստ կամաց իւրեանց: Սնաւ և աճեաց, և գործէր զմեղս. զպոռնկութիւն, զպղծութիւն արուագիտութեան և զանճանագիտութիւն, և զազրալի գարշութիւն. . բայց կարի զարուագիտութիւն: Դարձեալ իճն իգանայր այլոց, և այսպէս մմկեալ բաւլեալ էր:

Եւ երբեմն իբրև զգաց մայր նորա զարուագիտութիւնն, և ոչ կարացեալ ճամբերել պարսաւանացն վատանուանութեանն, ասէ ցսենեկապան որդւոյն իւրոյ, թէ յորժամ նա խնդրեսցէ ի պղծութիւն զարսն՝ ընդ որ սովորէ անկանել, դուք զիս ի ներս կոչեսջիք: Յորժամ պատանեական Պապ իճն ընդ անկողին մտեալ՝ խնդրէր զարսն ի պղծութիւն, եմուտ մայր նորա և նստաւ զառաջեաւ նորա՝ իւր որդւոյն: Ապա սկսաւ ճչել վայել պատանեական. և ասէ ցմայր իւր. Յարիցես գնասցես ի բաց զի մեռանիմ խորովիմ կսկծիմ պայթիմ, թէ ոչ յարիբճիարվում էր ճրան, չարդում, կոտորում, ոչնչացնում էր Պարսից զորերը. Մարուճանին էլ սպանում էր: Միայն Մերուժանը փախչում էր:

ԽԴ

ՋԻՆԻԿԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՆՆՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ ԵԿԱՎ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՎՐԱ, ԱՑԱ ՎԱՍԱԿ ՋՈՐԱՎԱՐԸ ՀԱՍՆՈՒՄ ԿՈՏՈՐՈՒՄ ԷՐ ՊԱՐՍԻՑ ՋՈՐՔԵՐԸ ՄԵԾ ՀԱՐՎԱԾՈՎ

Մի ոմն զինդիկապետ[135], Պարսից թագավորի զորերի զորագլուխը, իննսուն բյուրով գալիս ճասնում էր Ատրպատականի սահմաններ: Հայոց Վասակ զորավարը աճապարում դուրս էր գալիս նրանց առաջ. գիշերով ճարձակվում էր Պարսից ամրացրած բանակի վրա, բոլորին սրի էր ճաշում, զորապետին էլ սպանում էր բանակի մեջ: Միայն վատանշան Մերուժանը ճողոպրում, ազատվում էր:

ԽԴ[136]

ՊԱՊ ԱՐՔԱՅՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԴԵՎԵՐԸ ՀԱՅՏՆԻ ԵՐԵՎՈՒՄ ԷԻՆ ՆՐԱ ՎՐԱ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՆ ԷՐ ԳՈՐԾՈՒՄ

Արշակի որդին Պապը ծնվեց սյունի Փառանձեմից, որ Գնելի կինն էր եղել, որին սպանեց Արշակ թագավորը և նրա կնոջը, Փառանձեմին իրեն կին առավ, և նրանից ունեցավ որդի, որ կոչվեց Պապ: Երբ մայրը նրան ծնեց՝ որովհետև անօրեն մարդ էր և աստծուց բոլորովին երկյուղ չուներ՝ նրան դևերին ճվիրեց, և բազմաթիվ դևեր մանուկի մեջ բնակեցան ու նրան վարում էին ըստ իրենց կամքի: Նա սնվեց, մեծացավ և մեղքեր էր գործում— պոռնկություն, պիղծ արվագիտություն, անասնագիտություն և զազրելի, գարշելի գործեր, բայց մանավանդ արվագիտություն: Բացի սրանից իճն էլ իգանում էր ուրիշներին. այսպես բավլված էր (զազրելի գործերի մեջ):

Մի անգամ երբ մայրը իմացավ, թե նա արվագիտությամբ է պարապում՝ չկարողանալով այդ վատանուն խայտառակության համբերել՝ իր որդու սեճեկապետին ասաց, թե «երբ նա պղծության համար կպահանջե այն մարդկանց, որոնց հետ պղծությունը կատարում է՝ դուք ինձ ներս կանչեցեք»: Երբ պատանի Պապը անկողին մտնելով պահանջեց այդ մարդկանց պղծության համար՝ մայրը ներս մտավ և որդու առաջ նստեց: Ապա պատանին սկսեց ճչել, բղավել և ասաց մորը. «վեր կաց գնա՛ այստեղից, որովհետև մեռնում խորովվում եմ, կայրիմ կպայթիմ, եթե այստեղից չգնաս»: Իսկ մայրն ասաց. «Ես այստե-

ցես գնացես ի տաճէս: Իսկ մայրն ասէ, թէ ոչ գնացեալ ելից ի տաճէ ասի: Իսկ նա հաղ հան գնաղ ճչէր, բազմացուցանէր զվայելն: Իսկ մայրն նայեցեալ տեսանէր աչօք իւրովք օձ սպիտակ, զի պատեալ էին զգաճոյիցն ոտամբք, և ճապատէին ի վերայ պատանեկին Գապայ, մինչ դեռ ընկողմանեալ էր նա. կայր ի մանիճան, վայէր և խրնդրէր զպատանեական ընդ որ սովորն էր գիտանալ: Իսկ մայրն գիտացեալ յիշեաց զայն, որոց ի ծննդեանն նուիրեաց զորդին իւր. գիտաց թէ նոքա են, որ ի կերպարանս օձիցն ճապատէին զորդովն իւրով. յարտասուս ճարեալ, ասաց. Վա՛յ ինձ, որդեակ իմ. զի ես զքեզ տագնապ էր, և ես ոչ գիտէի: Ցարուցեալ գնաց եթող զտեղին, կատարել զպէտս ցանկութեանն: Եւ այսպէս դիւօք վարեալ, յայսպիսի գործս զամենայն աւուրս կենաց իւրոց ըմբռնեալ Գապն որդին Արշակայ, մինչ եհաս ի բագաւորութիւնն, մինչև ի մահ իւր:

ԽԲ

ՑԱՂԱԳՍ ՍԱԿՍՏԱՆ ԱՆԴՐԶԱԳԵՏԻ, ՈՐ ԱՌԱՔԵՑԱՒ Ի ՇԱԳՀՈՑ ԹԱԳԱՒՈՐԷՆ ԳԱՐՍԻՑ ՁՈՐՔՀԱՐԵՒՐ ՀԱՁԱՐԱՒ, ԵՒ ՓԱԽՈՑՑ ՆԻՍ ՁՆԱ ՎԱՍԱԿ ՁՕՐԱՎԱՐՆ ՀԱՅՈՑ

Ապա յետ այսորիկ ժողովեաց բագաւորն Գարսից Շապուհ զզօրս իւր, և հազարս չորեքհարիւր. և Սակստան անդրեձապետ զօրագլուխ նոցա: Ապա խաղացին գնացին ի կողմանս Հայոց. եկին ծաւալեցան ճակատեցան ընդ բագաւորութեանն Հայոց Արշակայ: Ապա ի մի վայր եկեալք ամենայն մեծամեծք նախարարացն Հայոց, խորհուրդ խորհէին. ճանզի ոչ առնուին յանձն երբէք, թէ բագաւորն Արշակ մոցէ ընդ նոսա ի պատերազմ: Ապա զօրավարն Վասակ, հանդերձ ամենայն մեծամեծօքն և նախարարօքն ամենայն Հայոց մեծաց, հարկանէր սատակէր զամենայն զօրսն Գարսից: Եւ սպանանէր Սակստան անդրեձապետն. բայց միայն ապրէր Մերուժանն Արծրունի փախուցեալ:

ԽԳ

ՑԱՂԱԳՍ ՇԱԳՍՏԱՆ ՏԱԿԱՒԱԳԵՏԻՆ, ՈՐ ՆԿՆ ՀԻՆԳ ՀԱՐԵԻՐ ԲԻՒՐՈՒՆ Ի ՎԵՐԱՑ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՑ. ԱՊԱ ԵՒ ՁՆՈՍԱ ՀԱՐԿԱՆԷԻՆ ՍԱՏԱԿԷԻՆ ՁՕՐՔՆ ՀԱՅՈՑ

Շապուհան տակաւապետն գայր հասանէր հինգ հարիւր բիւրուն ի վերայ աշխարհին Հայոց, և կամէր մտանել յաշխարհն Հայոց: Ապա կազմեալ պատրաստեալ գունդն զօրաց բագաւորին Հայոց, և վասակ

ղից դուրս չեմ գա, չեմ գնա»: Իսկ նա ավելի և ավելի սաստկացնում էր ճչելն ու վայելը: Իսկ մայրը նայեց ու տեսավ իր աչքերով, որ սպիտակ օձեր պատել էին բազմոցի ոտները և փաթաթվում էին պատանի Գապին, մինչ նա պառկած անկողնում, քնած էր, պանանչում էր այն պատանիներին, որոնց հետ խառնակվում էր: Մայրը այս տեսնելով՝ հիշեց՝ թե ո՛ւմ էր նվիրել իրեն իր որդուն ծնած ժամանակ: Հասկացավ թե այն (դևերն) են, որ օձերի կերպարանքով փաթաթվում են որդուն: Արտասվելով ասաց. «Վա՛յ ինձ, իմ որդյակ. ես չգիտեի որ դու տանջվում ես»: Վեր կացավ, այնտեղից հեռացավ, որպեսզի (Գապը) ցանկությունը կատարե: Ե՛վ այսպես, դևերից վարվելով՝ այսպիսի գործերի անձնատուր էր եղել Արշակի որդին Գապը իր կյանքի բոլոր ընթացքում, մինչև բագավորության հասնելը, մինչև իր մահը:

ԽԴ

ՍԱԿՍՏԱՆ ԱՆԴՐԶԱԳԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՁՈՐՍ ՀԱՐՅՈՒՐ ՀԱՁԱՐՈՎ ՈՒՂԱՐԿՎԵՑ ԳԱՐՍԻՑ ՇԱԳՈՒՀ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ, ՈՐԻՆ ՆՈՒՅՆԱԳԵՍ ՓԱԽՑՐԵՑ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ ՁՕՐԱՎԱՐԸ

Սրանից հետո Գարսից Շապուհ բագավորը գումարեց իր զորքերը, չորս հարյուր հազար մարդ և նրանց զորագլուխ նշանակեց Սակստան անդրեձապետին[137]: Նրանք շարժվեցին եկան Հայոց կողմերը, ծավալվեցին և պատերազմի բռնվեցին Հայոց Արշակ բագավորի հետ: Ապա Հայոց բոլոր մեծամեծ նախարարները մի տեղ հավաքվելով խորհուրդ արին. նրանք ոչ մի կերպ չէին համաձայնում, որ Արշակ բագավորն էլ իրենց հետ պատերազմի դուրս գա: Այնուհետև Վասակ զորավարը Մեծ Հայքի բոլոր մեծամեծների և նախարարների հետ չարդում կոտորում էր Գարսից բոլոր զորքերը. սպանում էր նաև Սակստան անդրեձապետին, բայց միայն Մերուժան Արծրունին փախչելով ազատվում էր:

ԽԵ

ՇԱԳՍՏԱՆ ՏԱԿԱՒԱԳԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՀԻՆԳ ՀԱՐՅՈՒՐ ԲՅՈՒՐՈՎ ԵԿԱՎ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ, ՆՐԱՆՑ ԷԼ ԿՈՏՈՐՈՒՄ ԷԻՆ ՀԱՅՈՑ ՁՈՐՔԵՐԸ

Շապուհան տակաւապետը[138] հինգ հարյուր բյուրով գալիս հասնում էր Հայոց աշխարհի վրա, ուզում էր նեռս խուժել Հայոց աշխարհը: Ապա Հայոց բագավորի կազմակերպված ու պատրաստ գունդը և Հայոց

զօրավարն Հայոց, եկաներ ի դիմի հարկանել զօրացն Պարսից: Հարկանէին կռուորէին զզօրսն Պարսից, և սպանանէին զՇապստան տակաւռապետն պարսկաց: Բայց միայն փախչէր Մերուժանն, ապրեալ լինէր:

Կէ

ՅԱՂԱԳՍ ՄՈԳԱՑ ՀԱՆԴԻՐԶԱՊԵՏԻՆ՝ ՈՐ ԳԱՅՐ ՀԱՍԱՆԷՐ ՈՒԲՈՒՏԱՍՆ ԲԻՒՐՈՒՆ, ՏԱԼ ՃԱԿԱՏ ԸՆԴ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅՈՑ. ԵՒ ՍԱ ԿՈՐԾԱՆԷՐ ԻՐԻՒՆ ՁԱՌԱՉԻՆՆ

Ապա և Մոգաց անդերձապետն գայր հասանէր ուրուտասն բիւրու, տալ ճակատս բնդ թագաւորին Հայոց Արշակայ: Ապա գնային հասանէին ի մի վայր ամենայն զօրն Հայաստան երկրին և Վասակ զօրավարն սպարապետն, որ էր դայեակ թագաւորին Հայոց Արշակայ: Եթէ կարի չատ աճապարեալ հասանէին, այնչափ ժամանեցին՝ մինչև ի Մաղխազան կարացին հասանել: Եւ անդ բնդ միմեանս գունդն երկոքեան բախէին. ի պատուիրէն մատնեցան զօրն Պարսից, փախստական լինէին յերեսաց Վասակայ զօրավարին և ամենայն զօրացն Հայոց: Եւ սպանանէին անդ զմոգաց անդերձապետն, և զզօրսն անմի արարեալ. բայց միայն Մերուժանն ի տանիկ ձի նստեալ փախչէր:

Կը

ՅԱՂԱԳՍ ՀԱՄԲԱՐԱԿԱՊԵՏԻՆ, ՈՐ ԻՆՆՈՒՆ ԲԻՒՐՈՒՆ ԿԿՌԱԼ ՄԱՐՏՆՁԷՐ ԸՆԴ ՁՕՐՍ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅՈՑ. ԵՒ ՍԱՏԱԿԵՑԱՒ Ի ՍԱՂԱՄԱՍ Ի ՁՕՐԱՑՆ ՀԱՅՈՑ ԵՒ Ի ՁՕՐԱՎԱՐԷՆ ՎԱՍԱԿԱՅ

Ապա համբարակապետն թագաւորին Պարսից, և սա գայր հասանէր ի գաւառն Կորճէից ի Սաղամաս հանդերձ իննսուն բիւրոք: Եւ դակիշ ածեալ յամուր տեղւոջ միոջ, կամէր կռուել բնդ թագաւորին Հայոց բնդ Արշակայ: Ապա գայր զօրավարն Հայոց, հանդերձ տասն հազարաւ զինու բնտիր զօրու. և դարանամուտ լինէր բնդ կողմանս բանակին, և ի գիշերին անկանէր ի դակիշն: Եւ զամենեսեան բնդ սուր հանէին առ հասարակ, և ոչ մի ոչ ապրեցուցանէին. բայց միայն Մերուժանն արտաքոյ գնդին դիպեալ, փախչէր:

Վասակ զօրավարը դուրս էին գային Պարսից զօրի դեմ և բնդհարվում էին նրանց հետ. յարդում կոտորում էին Պարսից զօրերը, սպանում էին նաև Պարսից Շապստան տակաւռապետին: Բայց միայն Մերուժանը փախչելով ազատվում է:

Կէ

ՄՈԳԱՑ ՀԱՆԴԻՐԶԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏԱՍՆԱՎՈՑԻ ԲՅՈՒՐՈՎ ԳԱԼԻՍ ՀԱՍՆՈՒՄ ԷՐ ԳԱՏԵՐԱԶՄԵԼՈՒ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՏ ԵՎ ԿՈՐՈՒԱՎՈՒՄ ԷՐ ԱՌԱՋԻՆՆԵՐԻ ՆՄԱՆ

Այնուհետև Մոգաց հանդերձապետն[139] էր գալիս տասնևութ բյուրով՝ Հայոց Արշակ թագավորի դեմ պատերազմելու: Ապա մի տեղ էին գալիս ժողովվում Հայաստան աշխարհի բոլոր զորերը և Վասակ զօրավար-սպարապետը, որ Հայոց Արշակ թագավորի դայեակն էր: Որոնք էլ շատ աճապարեալ հասանէին՝ հագիվ Մաղխազանում կարողացան նրանց հասնել: Երբ երկու գնդերն իրար բնդհարվեցին՝ Պարսից զորերը պարտություն կրեցին և փախուստ տվին Վասակ զօրավարի և Հայոց բոլոր զորերի առջևից: Այնտեղ սպանեցին Մոգաց հանդերձապետին, զորերը մինչև վերջին մարդը կոտորեցին: Միայն Մերուժանը տանիկ[139] ձի հեծած փախչում էր:

Կը

ՀԱՄԲԱՐԱԿԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԻՆՆՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ ԳԱԼՈՎ ԳԱՏԵՐԱԶՄՈՒԹԻՄ ԷՐ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՁՕՐՔԵՐԻ ՀԵՏ ԵՎ ՍԱՂԱՄԱՍՈՒՄ ԿՈՏՈՐՎԵՑ ՀԱՅՈՑ ՁՕՐՔԵՐԻՑ ԵՎ ՎԱՍԱԿ ՁՕՐԱՎԱՐԻՑ

Ապա Պարսից թագավորի համբարակապետը[140] իննսուն բյուրով գալիս հասնում էր Կորճայքի գավառը՝ Սաղամաս, և մի ամուր տեղում դակիշ պատրաստելով կամենում էր կռվել Հայոց Արշակ թագավորի հետ: Ապա գալիս էր Հայոց զորավարը տասն հազար բնտիր զորով, գաղտնամուտ էր լինում բանակի մի ճանի կողմերում և գիշերով հարձակվում էր դակիշի վրա: Բոլորին առհասարակ սրի էին ճաշում, ոչ ոքի կենդանի չէին թողնում: Միայն Մերուժանը գնդիցը դուրս պատահելով՝ փախչում էր:

ՅԱՂԱԳՍ ՄՈՒԿԱՆԱՑ՝ ՈՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԲԻՒՐՕՔ ԵԿՆ ԿՈՒԻԵԼ ԸՆԴ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅՈՑ, ԵՒ Ի ՎԱՍԱԿԷ ԵՒ ՁՕՐԱՑՆ ՀԱՅՈՑ ՍԱՏԱԿԵՑԱՒ

Ապա Մոիկան ոմն մեծ զօրագլուխն Պարսից fառաստուն բիւրօք գայր հասանէր ի մարտ պատերազմի ընդ Արշակայ արքային Հայոց: Ապա և զօրն Հայոց խրոխտացեալ հանդերձ իւրեանց զօրավարաւն վասակաւ, գազանաբար առիւծաբար դէմ ընդդէմ յարձակէին. և անդէն սատակէին զզօրսն պարսից, և սպանանէին զՄոիկանն: Բայց Մերուժանն և այն անգամ փախչէր:

Ե

ՅԱՂԱԳՍ ՔԱԿԵԼՈՑ ԵՒ ՔԱՅՔԱՅԵԼՈՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ՀԱՅՈՑ, ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԱՊՍՏԱՄԲԵՑԻՆ ԲԱԶՈՒՄՔ Ի ՆԱԽԱՐԱՐԱՑՆ ՀԱՅՈՑ, ԵՒ ԶԵՌՆ ԵՏՈՒՆ Ի ՇԱՊՈՒՀ ԱՐՔԱՅՆ ՊԱՐՍԻՑ. ԵՒ ԹԷ ՋԻԱ՛ՐՄ ՀԱՑ ՅՐՈՎԵՑԱՆ ԱՅՍՔ ԱՆԴՐ, ԵՒ ՆՈՒԱՂԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ ՀԱՅՈՑ

Ջերեսուն և զչորս ամս եառն պատերազմ երկիրս Հայոց ընդ թագաւորին Պարսից, և յետ այնորիկ ձանձրացան պարտեցան լման աշխատեցան երկոքին կողմանքն: Եւ սկսան սորսորել գնալ ի բանակէն Հայոց թագաւորին. քողին գիւրեանց արքայն Արշակ: Բայց նախ այսմ գնալոյ սկիզբն առնէին մեծամեծ աւագանին: Նախ բդեաշխն Աղձնեաց, և Նոշիրականն[31] բդեաշխն, և Մաճկեր տանն, և Նիճորականն և Դասպրնտրէին և ամենայն նախարարուքիւն Աղձնեաց. և զօրն և տունն տոհմին Աղձնեաց կողմանն ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ, և չոգան կացին առաջի արքային պարսկաց Շապհոյ. և պարիսպ ածէին ի Հայոց կուսէ՝ որ Զորայն կոչեն, դրունս դնէին. և զատուցին գիւրեանց աշխարհն ի Հայոց:

Եւ յետ սորա Գուգարաց[32] բդեաշխն, և յետ սորա Զորայ գաւառին տէրն, և Կողբայ գաւառին տէրն, և ընդ նոսա Գարդմանաձորոյ տէրն: Եւ որ մօտ էին ի նոսա կողմն այնր ձեռին, որ շուրջ էին զնոքօք, միաճաղոյն ապստամբեցին ի թագաւորէն Հայոց Արշակայ. և չոգան գնացին առաջի կացին թագաւորին Պարսից Շապհոյ: Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Առձախայ, և ամուր գաւառն Տմորեաց, և ամուր աշխարհն Կորդրեաց. ապա և տէր գաւառին Կորդուաց չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից:

ՄՈՒԿԱՆԻ ՄԱՑԻՆ, ՈՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԲՅՈՒՐՈՎ ԵԿԱՎ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՀԵՏ ԿՌՎԵԼՈՒ ԵՎ ԿՈՏՈՐՎԵՑ ՎԱՍԱԿԻՑ ԵՎ ՀԱՅՈՑ ՁՈՐՔԵՐԻՑ

Ապա մի ոմն Մոիկան, Պարսից մեծ զորագլուխ, fառատուն բյուրով գալիս հասնում էր Հայոց Արշակ թագավորի հետ պատերազմելու: Ապա և Հայոց զորը Վասակ զորավարի հետ խրոխտալով՝ գազանաբար, առյուծաբար հարձակվեցին նրանց վրա, Պարսից զորերը կոտորեցին և Մոեկանին էլ սպանեցին: Բայց Մերուժանը այս անգամ էլ փախչում էր:

Ե

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱԿՎԵՑ ՈՒ ՔԱՅՔԱՅՎԵՑ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՀԱՅՈՑ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻՑ ՇԱՏԵՐԸ ԱՊՍՏԱՄԲԵՑԱՆ ՈՒ ԶՆՈՔ ՄԵԿՆԵՑԻՆ ՊԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՀ ԹԱԳԱՎՈՐԻՆ, ԵՎ ԻՆՉՊԵՍ ՇՈՒՏՈՎ ԱՅՍ ՈՒ ԱՅՆ ԿՈՂՄԸ ՅՐՎԵՑԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՁԵՑ

Երեսուն և չորս տարի մեր Հայոց աշխարհը պատերազմ մղեց Պարսից թագավորի դեմ, որից հետո երկու կողմերն էլ ձանձրացան, ճոգնեցին, պարտություն կրեցին, լքվեցին: Եվ սկսեցին Հայոց թագավորի բանակից fակվել ու հեռանալ, քողին իրենց Արշակ թագավորին, և այս fայfայումն սկսում էին մեծամեծ ավագները: Նախ Աղձնիքի բդեշխը և Նոշիրական բդեշխը և Մաճկերտունը և Նիճորականը և Դասպրնտեն[141]. և Աղձնիքը ամբողջ նախարարությունը, նրանց զորն ու Աղձնիքի տոհմը ապստամբեցան Հայոց Արշակ թագավորից, գնացին Պարսից Շապուհ թագավորի առաջ կանգնեցին, պարիսպ fաշեցին Զորա կոչված տեղում, դռներ դրին և իրենց աշխարհը Հայաստանից զատեցին:

Սրանից հետո Գուգարքի բդեշխը, իսկ սրանից հետո Զորա գավառի տերը, Կողբի գավառի տերը, նրանց հետ նաև Գարդմանաձորի տերը և բոլոր նրանք, որ այդ կողմերն էին գտնվում, նրանց մոտ և շուրջն էին՝ միասին ապստամբեցան Արշակ թագավորից և գնացին Պարսից Շապուհ թագավորի առաջ կանգնեցին, Հայոց Արշակ թագավորից ապստամբեցան նաև Առձախի ամուր գավառը, Տմորիքի ամուր գավառը և Կորդիքի ամուր աշխարհը, հետո նաև Կորդիք գաւառի տերը գնաց կանգնեց Պարսից Շապուհ թագավորի առաջ:

Յետ այսորիկ ապստամբեաց ի թագաւորէն Հայոց և ձեռին իշխանութեանն տանէն Հայոց թագաւորին, որ էր զՎտրպայական աշխարհաւն, յետս եկաց ի թագաւորէն Հայոց ամուր աշխարհն Մարաց. յետս եկաց յարմայէն Հայոց և աշխարհն Կազրից. եթող զարմայն Հայոց և գնաց Սաղամուտ տէրն Անձտեայ, և ընդ նմա իշխանն մեծի Սոփաց. և գնացին առ թագաւորն Յունաց: Միջնաշխարհին մնացեալքն յերկուացան յարմայէն, և ոչ կամէին լսել թագաւորին իւրեանց. ոչ մի ինչ իրս՝ զոր նա կամէր: Եւ գձնեցաւ թագաւորութիւնն մեծապէս:

Եւ Վահան եղբայր Վասակայ սպարապետին. ի Մամիկոնեան ի տոհմէն, անկաւ ի բանս հրապուրանաց նա ի Մերուժանայ Արծրունոյ բնաւորդոյ իւրոյ: Եւ սա ապստամբեաց յԱրշակայ յարմայէն Հայոց, և չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից Շապհոյ: Եւ հաճեաց զմիտս նորա, և նախ ուրացաւ նա ի կենաց իւրոց՝ զոր ի Քրիստոսէ ունէր, և յանձն առ պաշտել զօրէնս մոգութեանն. այս ինքն երկիր պագանել կրակի և ջրոյ և արեգական, և ուրանալ զօրէնս քրիստոնէութեանն՝ յորում ծնեալն էր: Եւ եղև նա ըստ մտի թագաւորին Պարսից. և մատուցանէր ևս ամբաստան գործութիւն զարմայէն Հայոց Արշակայ, և զիւրմէ տանուտեառնէն Վասակայ. և յիշեցուցանէր ևս նմա զմանն Վարդանայ, թէ յաղագս ինր մնաւ: Եւ եղև նա այնուհետև սիրելի Շապհոյ արքային, և ետ նա կին Վահանայ զՈրմիզդուխտ դոյր իւր. և շնորհեաց նմա բարձ և զպատիւ՝ որ նոցուն լեալ էր նախնեաց, և մտերիմ փեսայ արար զնա իւր թագաւորն. և ի մէջ զօրաց իւրոց շրեղացոյց զնա, և խոստացաւ նմա կեանս մեծամեծս առնել: Իսկ թիւն Հայոց պակասեաց յայսմ հետէ և յապա:

ՄԱ

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՋԻԱՐԴ ՄԻԱԲԱՆ ՀԱՄՕՐԷՆ ԱՇԽԱՐՀՕՐԷՆ՝ ՈՐ ՄԻԱՆԳԱՄ ՄՆԱՑԵԱԼՔ ՅԱՇԽԱՐՀԻՆ ԺՈՂՈՎԷԻՆ ԱՒ ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ՀԱՅՈՑ, ԵՒ ՋՐՈՂՔ ՀԱՐԿԱՆԷԻՆ ԱՌԱՋԻ ՆՈՐԱ, ԵՒ ՉԵՌՆՔԱՓ ԼԻՆԷԻՆ, ՈՒ ԹՈՂԻՆ Ի ՉԵՌԱՑ ՉԻՐԵՒԱՆՑ ԹԱԳԱՒՈՐՆ ԱՐՇԱԿ

Ապա ժողովեցան մարդիկ ամենայն աշխարհին իշխանութեանն թագաւորութեանն Հայոց. և եկին առ մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, մեծամեծ նախարարք և կուսակալք կողմակալք գաւառատէրք գործակալք և դասապետք շինականաց. ի մի վայր եկեալ ժողովեցան, խօսել սկսան ընդ Ներսիսի և ասեն. Դու տէր, ճեզէն գիտես, զի այս երեսուն ամ է թագաւորին մերոյ Արշակայ, զի ոչ մի ամ մեզ

Սրանից հետո Հայոց թագավորից ապստամբեցավ Հայոց թագավորական տան սեփական իշխանություններ Ատրպատական աշխարհում Հայոց թագավորից հեռացավ նաև Կազրից աշխարհը. Հայոց թագավորին թողեց ու հեռացավ Անձիտի տեր Սաղամուտը և նրա հետ Մեծ Սոփիի իշխանը, նրանք գնացին Հունաց թագավորի մոտ: Միջնաշխարհում մնացածները երկմտեցին թագավորից և չէին կամենում նրան լսել և ոչ մի բան անել՝ ինչ որ նա կամենում էր: Եվ (Հայոց) թագավորությունը մեծապես նվաղվեց:

Եվ Վահանը, Մամիկոնյան տոհմից, Վասակ սպարապետի եղբայրը, հրապուրվեց Մերուժան Արծրունու խոսքերից, որ իր հետ որդին էր: Նա էլ ապստամբեցավ Հայոց Արշակ թագավորից և գնաց կանգնեց Պարսից Շապուհ թագավորի առաջ: Նրա սիրտը գրավեց, ուրացավ իր քրիստոնեական կրոնը և հանձն առավ ծառայել մոգության կրոնին. այսինքն երկրպագել կրակին, ջրին և արեգակին, ուրանալով քրիստոնեական հավատը, որի մեջ ծնվել էր: Եվ նա հանելի դարձավ Պարսից թագավորին, և ամբաստանություններով գրգռում էր Հայոց Արշակ թագավորի և իր (տոհմի) տիրոջ՝ Վասակի դեմ. հիշեցնում էր նաև Վարդանի մասին, թե ինչպես մեռավ: Այնուհետև նա սիրելի դարձավ Շապուհ թագավորին, և նա Վահանին կնության տվեց իր Որմզդուխտ դստերը, շնորհեց նրան այն բարձն ու պատիվը, որ սկզբում (Մամիկոնյաններն) ունեին, իր մտերիմ փեսան դարձրեց, իր զորքերի մեջ շքեղացրեց և խոստացավ նրան մեծամեծ կալվածներ: Իսկ Հայոց թիվը այդ ժամանակից սկսեց պակասել ու պակասել:

ՄԱ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՄՆԱՑԱՄՆԵՐԸ ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍԻՆ ՄԻԱԲԱՆ ԺՈՂՈՎՎՈՒՄ ԷԻՆ ՀԱՅՈՑ ՆԵՐՍԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄՈՏ, ԲՈԼՈՐՔՈՒՄ ԷԻՆ ԻՐԵՆՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ԴԵՄ ԵՎ ՆՐԱՆՑԻՑ ՉԵՌՔ ԷԻՆ ՔԱՇՈՒՄ, ԹՈՂՆՈՒՄ ԷԻՆ

Ապա Հայոց աշխարհի թագավորության բոլոր մարդիկ ժողովվեցին եկան Հայոց մեծ եպիսկոպոսապետ Ներսեսի մոտ,— մեծամեծներ, նախարարներ, կուսակալներ, կոզմնակալներ, գավառատերեր, գործակալներ, գյուղերի համփաներ[142], սրանք բոլորը մի տեղ հավաքվելով սկսեցին խոսել Ներսեսի հետ և ասացին. «Տե՛ր, դու ինքդ գիտես, որ սա երեսուն տարի է մեր Արշակ թագավորի (ժամանակ), որ մենք ոչ մի տարի պատերազմից հանգիստ չենք ունեցել, շարունակ

ճանգիստ ոչ եղև ի պատերազմէ. և համակ սրով և սուսերօք և ի սլաքս և ի տէգս ճիզակաց զիրառուցս երեսաց մերոց չնչեցաք: Եւ արդ ոչ կարեմք այսմ զժոյժ[33] ունել, և ոչ այլ կարեմք տալ ճակատս. զի լաւ է մեզ՝ քէ ծառայեսցուք մեք թագաւորին Պարսից որպէս ընկերքն մեր արարին, զի բողին գնա և գնացին առ թագաւորն Պարսից. և մեք սոյնպէս առնելոց եմք, զի ոչ այլ ևս կարեմք կռուել: Քէ պէտ իցե թագաւորին Արշակայ կռուել ընդ Շապհոյ, Վասակա և Անդուկա աներաւ իւրով տացէ պատերազմ. այլ յայսմիկ Հայոց աշխարհէս և ոչ մի այր ոչ ոք է երթալոց ի թիկունս օգնականութեան նորա: Նմա եթէ պէտ իցէ, տացէ պատերազմ, քէ պէտ՝ մի՛. մեր բողեալ գնա՝ մեզ չէ փոյթ:

Իսկ սուրբն Ներսէս խօսէր ընդ նոսա որպէս օրէն էր, եթէ տեսէք և ականջ զմտաւ ածէք, և յիշեցէք զբանն տեառն պատուիրանին միաբանութեամբ որպէս պատուիրեացն ծառայից՝ ինձագանդ կալ տերանց իւրեանց: Զի ամենեքեան դուք աւադիկ կայք և վկայէք, մանաւանդ զի ամենեքեան դուք կեցեալ էք յազգէդ արշակունոյ. ոմանք ի ձէնջ գաւառատեարք լեալք ի նոցանէն, և ոմանք մեծամեծք աշխարհաց, ոմանք աւագ աւագ աւանաց գեղից և գանձուց տեարք լեալ էք, և պէսպէս դաստակերտացն: Զի քէպէտ և առ արարիչն աստուած յանցաւոր իցեն պեղծ ազգն Արշակունեաց, սակայն զձեզ կեցուցեալ զամենեսեան և յաղբոյ բօթափեալ է, զոմն գործով, զոմն պատուով զոմն իշխանութեամբ, զոմն գործակալութեամբ: Զի քէպէտ և առ աստուած մեղաւոր է Արշակ արքայ, և պարտական է տոկոսեաց արարչին իւրոյ՝ առ ի տանել նմա վրէժս, սակայն աստուած վասն բազում և անչափ մարդասիրութեան իւրոյ՝ խնայեաց ի նա, և վասն նորա ի ձեզ:

Եւ դուք աւադիկ կամիք անկանել ճեթանոսաց ի ծառայութիւն, և կորուսանել զկեանս ձեր յաստուծոյ, և մեռժել զբնակ տեարսն ձեր՝ զորս տուեալ է ձեզ յաստուծոյ, և օտար տերանց ծառայել, և նոցին անաստուած կռօնիցն ցանկալ: Բայց լա՞ւ լիցի ձեզ զնոյն սիրել և յանձրն առնուլ, և նմին հաւանել, և մեռժել յանձանց ձերոց զարարչապաշտ թագաւորն: Զի քէ բեւր չար իցէ Արշակ, սակայն աստուածապաշտ է. և եթէ մեղաւոր ևս իցէ, սակայն թագաւոր ձեր է. որպէս և դուքդ ասացէք առաջի իմ, քէ այսչափ ամք են՝ զի մարտեալ ևս ի վերայ անձանց ձերոց և հոգւոց, ի վերայ աշխարհի, ի վերայ կանանց և որդւոց ձերոց: Եւ որ մեծն է բան զամենայն, ի վերայ եկեղեցեաց ձերոց, ի վերայ ուխտի հաւատոց ձերոց, զոր ունիմք ի տէր մեր Յիսուս Քրիստոս. և համակ տէր եմ ձեզ յաղթութիւն անուան իւրոյ: Եւ արդ կամիք փոխանակ Քրիստոսի արարչին ձերոյ՝ ծառայել ձեզ անաստուածն մոգութեան անօրինացն և նոցուն պաշտօնէիցն. ի բողոք

մեր երեսեաց հրոիներ սրբել եմ սրերով, սլաքներով, նիզակների տեգերով: Մենք այլևս չենք կարող դիմանալ, ոչ էլ դուրս գալ պատերազմի. ավելի լավ է որ մենք էլ հպատակենք Պարսից թագավորին, ինչպես արին մեր ընկերները, որոնք նրան բողին ու գնացին Պարսից թագավորի մոտ. մենք էլ նրանց պես պիտի անենք, որովհետև այլևս չենք կարող կռվել: Եթե Արշակ թագավորը կամք ունի Շապուհի հետ կռվելու՝ թող Վասակի և իր աներոջ Անդոկի միջոցով պատերազմի, այլ այս Հայոց աշխարհից ոչ ոք, ոչ մի մարդ նրան չի գնա օգնության: Նա ուզում է՝ թող պատերազմի, չէ ուզում՝ չպատերազմի, մեր պետը չէ, մենք նրան բողել ենք»:

Իսկ սուրբ Ներսես խոսում էր նրանց հետ ինչպես հարկն էր. «Լավ մտածեցեք, ասում էր նա, հիշեցե՛ք տիրոջ պատվիրանը միաբանության մասին, որ ծառաները հնազանդ լինին իրենց տերերին: Դուք աճա բոլորդ կամ ու վկա եք, որ բոլորդ Արշակունյաց ազգից եք ձեռք բերել ձեր դիրքը. ձեզանից ոմանք նրանից են նշանակվել գավառների տերեր, ոմանք աշխարհների մեծամեծներ, ոմանք խոշոր ավանների և գյուղերի, ոմանք գանձերի և զանազան դաստակերտների: Որովհետև Արշակունյաց պիղծ ազգը թեպետ և հանցավոր է արարիչ աստծու առաջ, բայց ձեզ բոլորիդ աղրից բարձրացրել և ապրեցրել է, մեկին գործ տալով, մյուսին պատիվ, մեկին իշխանություն, մյուսին գործակալություն: Որովհետև թեպետ Արշակ թագավորը մեղավոր է աստծու առաջ և իր արարչին պարտական է տոկոսը հատուցանել[143], վրեժը կրել, բայց աստված իր մեծ և անչափ մարդասիրությամբ խնայեց նրան և նրա պատճառով ձեզ:

Իսկ դուք աճա կամենում եք հեթանոսների ծառայության տակ բնկնել, կորցնել ձեր կյանքն աստուծով, մեռժել ձեր բնիկ տերերին, որոնք տրված են ձեզ աստծուց, ծառայել օտար տերերի և նրանց անաստված կռոնին ցանկալ: Աստված չանե[144], որ դուք այդ (կռոնը) սիրեք, հավանեք ու հանձն առնեք, հեռանալով ձեր աստվածապաշտ թագավորից: Որովհետև Արշակը թեկուզ բյուր անգամ էլ չար լինի՝ սակայն աստվածապաշտ է, որ նրան էլ մեղավոր լինի՝ սակայն ձեր թագավորն է: Դուք ինքներդ իմ առաջ ասացիք, թե այսքան տարի է, որ կռվում եք ձեր անձերի և հոգիների համար, աշխարհի համար, ձեր կանանց և որդոց համար, և որ ամենից գլխավորն է՝ ձեր եկեղեցիների, ձեր հավատի ուխտի համար, որ ունիք Հիսուս Քրիստոսի անունով, և միշտ ձեզ է շնորհել հաղթություն իր անվան համար: Հիմա դուք փոխանակ ձեր արարիչ Քրիստոսին՝ ուզում եք ծառայել անօրենների անաստված մոգական կռոնին և նրա պաշտոնյաներին, թողնելով մեր

նախ զարարիչն մեր և զնորուն պատուիրանս՝ զոր պատուիրեաց ձեզ. միամիտ կալ առ տեառնէ մարմնաւորս՝ զորս նորայն արարեալ է. զուցէ բարկացեալ տէր աստուած ձեր, և խլիցէ զձեզ արմատախիլ, և մատնեսցէ զձեզ հեթանոսացն ի շար ծառայութիւն սարկութեանն մինչև յաւիտեան. և. ոչ երբէք բարձցի լուծն ծառայութեան ի ձէնջ: եւ բոլորվէ դուք առ տէր, և նա ոչ լսիցէ ձեզ. վասն զի անձամբ անկանիք դուք ի ծառայութիւն հեթանոս տերանց և անաստուած անգէտ մարդկան, ի ձեռս հեթանոս արանց տերանց խստասրտաց. և բազում չարի դիպեալ ելանիցէ առաջի ձեր, և ոչ կարիցէք նորոգել յայնմանէ:

Իսկ նոքա, որ միանգամ էին ի մի վայր ժողովեալ. զաղաղակ ճարկանէին. ճարոզ կարդացեալ՝ միմեանց ձայն առնէին, շփոթէին ամբոխէին և ասէին. Հա՛պա գնասցուք, ասեն, սփոեցարուք յիւրաքանչիւր տեղիս. զի այդմ բանից մեծ ինչ ոչ կամիմք լսել: Սփոեցան յիւրաքանչիւր տունս իւրեանց:

ՄԹ

ՅԱՂԱԳՍ ՇԱԳՓՈՅ ԱՐՔԱՅԻ, ԹԷ ՁԻՒՐԴ ՅԱՅՆՄ ԺԱՄԱՆԱԿԻ ԼՈՒՅՈՅՅ ՁԳԱՏԲԱԶՄ ՏԱԼ ԸՆԴ ԱՐՇԱԿԱՅ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ, ՈՒ ՄԵՂՄՆԱԿԱՆՔ ԱՒ ԻՆՔՆ ԿՈՉԷՐ Ի ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Ապա Շապուհ արքայ Պարսից մեծաւ սպաչաճօք և պատարագօք հրովարտակօք և սիրով զԱրշակ առ իւրն կոչէր, զի յայնմ հետ, սուասցեն ի մէջ իւրեանց սէր և խաղաղութիւն և բարեկամութիւն մեծ: Իսկ Արշակ արքայ թէպէտ պատերազմ կամէր տալ, այլ ոչ կամէին յանձն առնուլ այսմիկ ամենայն զօրքն աշխարհին Հայոց: Ապա թէ կամաւ կամաւ՝ թէ ոչ կամաւ, սակայն եղ սիրա՝ խոնարհութեամբ հրովարտակս առ Շապուհ արքայ Պարսից, որպէս վայելէ ծառայի առ տէր իւր, տալ: եւ առաքէր յիւրմէ նմա պատարագս հաշտութեան:

ՄԿ

ՅԱՂԱԳՍ ԿՈՉԵԼՈՅՆ ԿՐԿԻՆ ԱՆԴԱՄ ՇԱԳՓՈՒՀ ԱՐՔԱՅԻ ՁԱՐՇԱԿ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ, ՈՒ ՆՈՐԱ ԵՐԹԱԼՈՅՆ, ՈՒ ՄԻԱՀԱՂՈՅՆ ԿԱՐԵՂԵԼՈՅՆ ՆՈՐԱ

Ապա յետ այսորիկ դարձեալ առաքեաց առ Արշակ արքայ Հայոց Շապուհ արքայ Պարսից. և ասէ. Իսկ երէ հաճ եմ ես և դու քեզ միմեանս, ևկ տեսցուք զմիմեանս. և յայսմ հետէ իբրև զհայր և զորդի լի-

արարչին ու նրա պատվիրանք, թե պետք է հավատարիմ մնալ մարմնավոր տերերին, որոնց նա է նշանակել: Գուցե տեր աստված էլ ձեզ վրա բարկանա, ձեզ արմատախիլ անի, ձեզ մատնի հեթանոսների ձեռքը՝ հավիտյան սարկաբար նրանց ծառայելու, և ծառայության լուծը երբեք ձեր վրայից չվերանա: եվ երբ դուք բողոքով դիմեք տիրոջը՝ նա ձեզ չի լսի, որովհետև դուք իջնելու եք մտնում հեթանոս տերերի և անաստված ոգեւ մարդկանց ծառայության տակ. (հանձնվում եք) հեթանոս մարդկանց և խստասիրտ տերերի. շատ և շատ չարիքներ դուրս կգան ձեր առաջ, որոնցից չեք կարողանա նորոգել»:

Իսկ նրանք, որոնք միասին հավաքված էին՝ աղաղակ բարձրացրին, իրար ձայն էին տալիս, շփոթություն և աղմուկ հարուցանելով. «վեր կենանք, գնանք, ասում էին, նրանք. հաշվիք գնանք մեր տեղերը. այդ խոսքերը չենք կամենում ընդունել»: Սփռվեցին գնացին ամեն մեկը իր տունը:

ՄԸ

ՇԱԳՈՒՀ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿ ԳԱԳԱՐԵՑԻՐՆ ՁԳԱՏԲԱԶՄԸ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐԻ ԴԵՄ ԵՎ ՆՆՋՈՒԹՅԱՄԲ ԻՐ ՄՈՑ ԷՐ ԿԱՆՉՈՒՄ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ապա Պարսից Շապուհ բազավորը մեծ ողաչաճներով, բնծաներով և հրովարտակներով՝ Արշակ բագավորին սիրով իր մոտն էր կանչում, որ այնուհետև իրար մեջ սեր և խաղաղություն և մեծ բարեկամություն հաստատեն: Իսկ Արշակ բագավորը թեպետ և ուզում էր պատերազմ տալ, բայց Հայոց աշխարհի բոլոր զորքը այս բանին չէր համաձայնում: Ուստի նա կամա ակամա սիրտ արավ՝ խոնարհությամբ հրովարտակ ուղարկել Պարսից Շապուհ բագավորին՝ ինչպես հպատակն իր տիրոջը: Իր կողմից էլ նրան հաշտության բնծաներ էր ուղարկում:

ՄԿ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՇԱԳՈՒՀ ԹԱԳԱՒՈՐԸ ԿՐԿԻՆ ԱՆԴԱՄ ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԿԱՆՉԵՑ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՆԱ ԴՆԱՑ ՈՒ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԿՈՒԱՎ

Սրանից հետո Պարսից Շապուհ բագավորը դարձյալ (պատգամ) ուղարկեց Հայոց Արշակ բագավորին և ասաց. «եթե ես և դու իրար հետ հաշտ ենք՝ ապա եկ, միմյանց հետ տեսություն անենք և այնուհետև

ցուի բնդ միմեանս: Ապա թէ ոչ տեսանես դու զիս, խնդրես պատերազմ ի մէջ իմ և ի մէջ fո: Իսկ Արշակ խնդրէր հաւատարիմ երդումն ուխտի ի նմանէն, զի յայսմ հետէ անկասկած երթիցէ առ նա: Եւ նա ետ բերել՝ ըստ օրինացն հաւատարիմ երդմանց թագաւորութեանն Պարսից՝ աղ, կնճել վարազ նկարագիր մատանեաւ, և յղեաց: Զի թէ իցէ և զայն երդման ևս զհետ ոչ եկեսցէ, ապա կազմ լիցի տալ ճակատս պատերազմի ի մէջ իւրեանց:

Իսկ զայն ևս յորժամ տեսին և լուան ամենայն մարդիկն երկրին Հայոց, ստիպեցին բռնաբռսեցին[34] զիւրեանց թագաւորն զԱրշակ և շտապեցին, զի յարիցէ գնասցէ երթիցէ յանդիման լիցի թագաւորին Պարսից Շապհոյ: Յայնմ հետէ, թէ կամաւ կամայ՝ և թէ ոչ կամաւ, յարեաւ թագաւորն Հայոց Արշակ, առ բնդ իւր զզօրավարն սպարապետն Հայոց զդայեակն իւր, խաղաց գնաց յերկրէն Հայոց յերկիրն Պարսից առ Շապուհ արքայ Պարսից. չոգաւ յանդիման եղև թագաւորին Պարսից Շապհոյ: Իբրև տեսին զնոսա, արկին զերկոսեանն զարքայն Արշակ և զսպարապետն Վասակ, և պահէին զնոսա առձակ ի մէջ ազատագունդ փուշտիպան զօրացն: Եւ կոչեաց արքայ Շապուհ զարքայ Արշակ, և իբրև զծառայ իւր պատուհասեաց զնա. և նա յանցաւոր և մահապարտ զանձն իւր առ նա համարեցաւ: Դարձեալ անդրէն ի նոյն գունդ փուշտիպանաց եառուն զԱրշակ արքայ ի պահեստ:

ԾԴ

ՅԱՂԱԳՍ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԶԴԻՒՔՍՆ ՆԻ ՋՔԱՒԱԴԵԱՅՍՆ ՀԱՐՑԵԱԼ ՇԱԳՀՈՑ՝ ՓՈՐՁԵՐ ՁՄԻՏՍ ԱՐՇԱԿԱՅ, ՆԻ ՏԱՅՐ ՁՆԱ ՅԱՆՈՒՇ ԲԽՐՆ, ՆԻ ԿԱՄ ՁՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ ՁԱՐԱՄԱՀ ՀՐԱՄԱՅԷՐ ԱՌՆԵԼ

Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զդիւրսն և զաստեղագէտսն և զհմտեայսն. խօսէր ընդ նոսա և ասէր՝ եթէ ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, և նա համակ անարգեաց զիս: Եւ եղի ընդ նմա ուխտ խաղաղութեան, և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս հրեշտակութեանն ի գլխաւորութիւն այնմ, զոր աւետարանն կոչեն. նախ այն երդմանն ստեաց: Ես նմա բեւր բարիս խոստացայ որպէս հայր որդւոյ կատարել նմա, և նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց: Իսկ ես կոչեցի զերիցուս եկեղեցւոյն Տիսփոնի քաղաքի, և կարծեցի թէ ճոխ ճեղգութեամբ ինչ եառն նմա զերդումն և եառն ինձ ստել: Եւ պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս. իսկ ասաց ցիս Մարի երէց գլխաւորն ճոցա. ասէին՝ թէ մեք արդարութեամբ առաք նմա զերդումն.

ԾԶ

ԹԷ ԻՆՉՊԵՍ ՇԱԳՈՒՀԸ ՎՀՈՒԿՆԵՐԻՆ ԵՎ ՔԱՎԴԵԱՆԵՐԻՆ ՀԱՐՑՆԵԼՈՎ՝ ՓՈՐՁՈՒՄ ԷՐ ԱՐՇԱԿԻ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԱՆՀՈՒՇ ԲԽՐԸ, ԿԱՄ ԻՆՉՊԵՍ ՀՐԱՄԱՅՈՒՄ ԷՐ ՁԱՐԱՁԱՐ ՄԱՀՈՎ ՍՊԱՆԱԼ ՀԱՅՈՑ ՎԱՍԱԿ ՍՊԱՐԱՊԵՏԻՆ

Ապա Պարսից Շապուհ թագաւորն կանչում էր վհուկներին, աստղահմաներին և խավդեաններին[147], նրանց հետ խոսում էր ու ասում. «Ես շատ անգամ կամեցա սիրել Հայոց Արշակ թագաւորին, բայց նա ինձ միշտ անարգեց: Ես նրա հետ խաղաղության դաշն կապեցի, և նա երդվեց հրեշտակական կրոնի գլխաւոր (սրբության) վրա, որին ավետարան են ասում. նա այն երդումը ստեց: Ես բյուր բարիքներ կամեցա նրան անել՝ ինչպես հայրը որդու, իսկ նա բարիքի դեմ չարիք ինձ հատուց: Ես Տիսբոն քաղաքի եկեղեցու երեցներին կանչեցի, կարծելով, թե նրանք ճեղքությամբ նրան երդվեցրին և ստել տվին: Երբ ես նրանց նախատում էի ինչպես մահապարտներին՝ ինձ ասաց նրանց գլխաւորը, Մարի երեցը. «Մենք նրան արդարությամբ երդվեցրինք, իսկ եթե նա իր երդումը ստեց՝ ապա նույն ավետարանը նրան էլի ձեր ոտքը կբե-րե»: Ես նրան չլսեցի, և հրամայեցի նրանց—յոթանասուն մարդու

բայց եթէ ճա ստեաց, նոյն աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր: Եւ ես նոցա ոչ յուայ. և ետու հրաման՝ եւթանասուն զնոսա ի մի գուբ փողոտել, և զուսումնակիցս նոցա հանել ընդ սուր: Զաւետարանն՝ յոր երդուաւ Արշակ արքայ, որ է գլխաւորութիւն ուսմանց նոցա հրիստոնէութեանն, կապեցի շղթայիւք. և կայ ի գանձի իմում: Բայց բանիւն Մարեայ երիցոյ ուշ եղեն ինձ. և յիշեցի զի ասէր՝ թէ մի՛ սպանաներ զմեզ, այլ ես գիտեմ՝ զի նոյն աւետարանն ածէ զԱրշակ արքայ ի ծունկս հո: Անուասիկ բանիւ արդարութեամբ կատարեցան, զոր ասէրն: Բայց Արշակ արքայ Հայոց այս երեսուն ամ է Արեաց՝ զի ետուն ընդ ճմա ճակատս, և յաղթել և ոչ մի ամ ոչ կարացաք. և ելեալ է եկեալ ոտիւք իւրովք: Բայց թէ գիտէի՝ թէ յայսմ ճետէ կայցէ յուխտին իմում և ի՝ ճնազանդութեան բարեաւ ուխտիւ, մեծապէս մեծարանօք արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարճն:

Իսկ հաւդեայրն ետուն ճմա պատասխանի և ասեն. Թող մեզ այսօր, և վաղիւն պատասխանի արասցուք ճեզ: Իսկ ի վաղիւ անդր ժողովեցան եկին ամենայն հաւդեայրն և աստեղագէտքն, և ասեն ցարքայն. Այժմ զի եկեալ է առ ճեզ թագաւորն Հայոց Արշակ, զիա՞րդ խօսի ընդ ճեզ. կամ զի՞նչ ձայն ածէ, կամ զիա՞րդ ունի զանձն: Ասէ արքայն. Իբրև զմի ի ծառայիցն իմոց ճամարի զինն. ճող ոտից իմոց չանայ լինել: Ասեն նոքա. Առ արա զոր ասեմք ճեզ. պաճնա դու զնոսա ատէն, և առաքեա դու դեսպանս յերկիրն Հայոց, և տուր բերել անտի ճող ի սաճմանացն Հայոց իբրև բեռիս երկուս, և կաճոյր մի չուր: Եւ ճրաման տացես ճարկանել գկէս խորանի յատակ ի բերեալ ճողոյն Հայոց. և առցես ճեզէն գձեռանէ արքային Հայոց Արշակայ, և տարցես նախ յայն տեղ՝ որ բնակ իսկ իցէ ճողն, և ճարցցես ցնա բանս: Եւ դարձեալ առցես դու գձեռանէ նորա, և տարցես ի ճայաստանսն ի ճարեալ ճողոյն. և լուիցես դու բանս ի նմանէ, և ապա գիտասցես դու՝ եթէ կա՞յ յուխտի հո և պաճէ՞ զդաշինս հո թէ ոչ, յետ արձակելոյ հո զնա ի Հայս: Ապա թէ ի վերայ ճայ ճողոյն խիստ ինչ բարբառեսցի, գիտասջիր՝ զի որ օր ճասանէ յերկիրն Հայոց, զնոյն ձայն ածէ ընդ ճեզ, և զնոյն պատերազմ նորոգէ ընդ ճեզ, զնոյն ճակատս և զնոյն թշնամութիւն յուզէ:

Ապա թագաւորն Պարսից, ճանգի զայս լուեալ ի հաւդէիցն, տացին ուղտուք արձակէ ի Հայս արս զնողոյ և զջրոյ, զի եկեսցեն բարձցեն նմա զնմայսն: Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ, զորմէ յղեացն: Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ, զկէս յատակին իւրոյ խորանին ճարկանել ի բերեալ ճողոյն Հայոց, և զջուրն ցանել ի վերայ նորա. և զկէսն ի նոյն ճողն զիւրոյ բնակութեան երկրին թողուլ: Եւ

շլինելոք կարել մի գրի մէջ, իսկ նրանց հավատակիցներին հրամայեցի սրի քաշել: Այն ավետարանը, որի վրա Արշակ թագավորը երդվեց, որ և նրանց քրիստոնեական կրոնի գլխավոր (գիրքն) է՝ շղթաներով կապեցի և այսպես մնում է իմ գանձատանում: Բայց իմ միտքս եկան Մարի երեցի խոսքերը. հիշեցի որ նա ասում էր. «Մեզ մի՛ սպանիր. ես գիտեմ որ նույն ավետարանը Արշակ թագավորին կբերե, որ առաջ ծունկ կչոքեցնե»: Ահա նրա ասած խոսքերն ճիրավի կատարվեցին: Որովճետև Հայոց Արշակ թագավորը անա երեսուն տարի է որ Արյաց ճետ պատերազմ է մղում, և ոչ մի տարի մենք չկարողացանք ճաղթել, իսկ այժմ իրեն իր ոտով ելել եկել է ինձ մոտ: Բայց եթե գիտենայի, թե այսուճետև նա ինձ ճետ դաշինք կպաճե, ճնազանդության ճնկնդ ուխտով, ապա շատ մեծարանքներով նրան խաղաղությամբ կարձակեի, որ գնա իր աշխարճը»:

Քավդյաներք նրան պատասխան տվին և ասացին. «Այսօր մեզ ժամանակ տուր, վաղը ճեզ կպատասխանենք»: Հաջորդ օրը բոլոր հավդյաներն ու աստղաճմաներք ժողովվեցին եկան և ասացին թագավորին. «Հիմա որ Հայոց Արշակ թագավորը եկել է ճեզ մոտ, ի՞նչպես է ճեզ ճետ խոսում, ի՞նչ լեզու է բանեցնում կամ ի՞նչպես է իրեն պաճում»: Թագավորն ասաց. «Նա իրեն ճամարում է ինչպես մեկը իմ ծառաներից. ուզում է իմ ոտի ճողը դառնալ»: Նրանք ասացին թագավորին. «Ա՛ռ արա՛ ինչ որ ճեզ ասում ենք. նրանց այստեղ պաճիր, մարդ ուղարկիր Հայոց աշխարճը, բերել տուր այնտեղից, Հայաստանի սաճմաններից մոտ երկու բեռ ճող և մի ամանով չուր: Ճետո հրամայիր, որ ճն խորանի ճատակի կեսի վրա շաղ տան Հայաստանից բերած ճողը, ապա դու իճդ Հայոց Արշակ թագավորի ձեռքից բռնած նախ տա՛ր խորանի այն տեղը, որտեղ բնական գետին է, և նրան ճարցմունքներ արա: Ճետո նրա ձեռքերը բռնած ճայկական ճող շաղ տված տեղը տար և լսի՛ր թե ի՛նչ կխոսի, և այն ժամանակ կգիտենաս, թե երբ նրան արձակելու լինիս Հայաստան, ճն ուխտն ու դաշինքը կպաճե՞ թե ոչ: Որովճետև եթե ճայկական ճողի վրա խիստ լեզվով խոսի՝ իմացի՛ր, որ Հայոց աշխարճը ճասնելուն պես ճենց նույն օրը նույն լեզուն կբանեցնեն, նույն պատերազմը կնորոգե ճեզ ճետ, նույն ճակատամարտերը, նույն թշնամությունը կչարունակե»:

Պարսից թագավորը հավդյացիներից այս լսելով՝ մարդիկ ուղարկեց Հայաստան տանիկ ուղտերով ճողի և ջրի, որ գնան այդ ճմայության նյութերը բերեն: Քիչ օրերից ճետո եկան ու բերին ինչի ճամար որ ուղարկված էին: Ապա Շապուճ թագավորը հրաման էր տալիս՝ իր խորանի ճատակի կեսի վրա շաղ տալ Հայաստանից բերած ճողը և

ետ ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջև իւրով, և զայլ մարդիկն ի բաց հրամայեաց կացուցանել. և զձեռանէ առեալ՝ շրջէր ճեմելով: Եւ երբեմն առեալ ընդ խոռանն, ասէ ցնա յորժամ ի պարսիկ ի հողոյն ի վերայ ճեմէին՝ թէ ընդէ՞ր եղեր իմ թշնամի Արշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զդուստր իմ ի կնութիւն, և որդի ինձ առնել զքեզ. իսկ դու խստացար ընդ իս, և հովի կամօք՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշնամի. և այս լի երեսուն ամ է, զի պատերազմեցար ընդ իս:

Ասէ Արշակ արքայ, թէ մեղայ քեզ և յանցեայ. զի ես եկի և կոտորեցի, և յաղթեցի թշնամեաց քոց. և ակն ունէի ի քէն պարգև կենաց, և թշնամիք իմ հրապուրեցին զիս, և արկին երկիւղուկս ի քէն, և փախուցին ի քէն: Եւ երդումն իմ, զոր երդուայ քեզ, յառաջ ածին զիս. և եկի աւասիկ առաջի քո: Եւ աւասիկ ծառայ քո ի ձեռս քո կամ. զինչ և պէտ է քեզ, արա զիս, զինչ և կամ իցէ. սպան զիս, զի.ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ:

Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջէր ճեմելով, ի չմեղս առեալ զնա ածէր ի հայկողմն ի հողն հարեալ յառակն: Իսկ իբրև յայն տեղի հասանէր, և զնայ զնողն կոխէր, մեծամեծս ըմբռնացեալ հպարտացեալ՝ այլ ձայն շրջէր. սկսանէր խօսել և ասել. Ի բաց կաց յինէն ծառայ չարագործ տիրացեալ տերանցն քոց. այլ ոչ քողից զքեզ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմահն Աւտհանայ արքայի: Զի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ քողից, եթե ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ[35],

Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարէր զասացեալսն, խոնարհէր բուռն հարկաճէր զոտից նորա, մեծապէս ապաշխարելով զղջմամբ զասացեալ բանսն: Իսկ յորժամ առեալ զձեռանէ զնա տանել ի հայ հողն, ևս խստագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միւսանգամ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութիւն դառնայր: Յայգուէ և երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա. զի իբրև ի վերայ հարեալ հողոյն տանէր, խրստացեալ ամբարտաւանէր. իսկ ի վերայ բուն գետնոյն յառակին՝ և կայր, ի զղջումն դառնայր:

Իսկ իբրև երեկոյ եղև ժամ ընթրեաց թագաւորին Պարսից, հանգի սովորութիւն էր Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա ի նորին տախտին արկանել բազմական, օրէնք էին՝ զի թագաւորն Պարսից և թագաւորն Հայոց ի միում պախտի բազմէին ի միում գահոյս: Իսկ այն օր նախ զառ բազմականացն թագաւորացն, որ անդն էին, զամենեցուցց կարգեցին. հուսկ յետոյ զկնի ամենեցուցց ի ներքոյ

վրայից չուր ցանել, իսկ մյուս կեսը թողնել բնական ճողով: Եվ Հայոց Արշակ թագավորին բերել տվեց իր առաջ և մյուս մարդկանց հրամայեց հեռանալ, և նրա ձեռքից բռնած ճեմելով շրջում էր: Խոսանում երբեմն-երբեմն, երբ ճեմում էին պարսկական հողի վրա՝ ասաց նրան. «Արշակ թագավոր Հայոց, դու ինչո՞ւ ինձ թշնամի եղար. ես քեզ որդու նման սիրեցի, կամեցա աղջիկս քեզ կնության տալ, իսկ դու իմ դեմ խստացար, ինձ քեզանից, հակառակ իմ կամքի, ինձ թշնամի դարձար և ահա ամբողջ երեսուն տարի է ինձ հետ պատերազմեցար»:

Արշակ թագավորը ասում է. «Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ. որովհետև ես եկա, քո թշնամիներին հաղթեցի ու կոտորեցի և հույս ունեի քեզանից կյանքի պարգև ստանալու. բայց իմ թշնամիները ինձ մոլորեցրին, քեզանից վախեցրին և փախչել տվին: Եվ երդումս, որով քեզ երդվեցի՝ ինձ քո առաջը բերեց, ես հիմա քո առաջն եմ, քո ծառադ քո ձեռքի տակ եմ. ինչպես ուզում ես՝ վարվիր ինձ հետ, եթե կամենում ես՝ սպանիր, որովհետև ես, քո ծառադ, շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ»:

Շապուհ թագավորը նրա ձեռքից բռնած շրջում էր ճեմելով և, իբրև միամտաբար, բերում էր հայկական հող շաղ տված հատակի վրա: Իսկ երբ (Արշակը) այն տեղն էր հասնում, հայկական հողի վրա ոտ էր դնում՝ սաստիկ ըմբռնաճալով հպարտանալով լեզուն փոխում էր, սկսում էր խոսել և ասել. «Հեռո՛ւ ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը և Աւտիավան թագավորի մահը[148], Որովհետև այժմ դուք, ծառաներդ, ձեր տերերի՝ մեր բարձն եք հափշտակել, բայց ես չեմ թույլ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չգրավենք»:

(Շապուհը) դարձյալ նրա ձեռքից բռնած տանում էր պարսկական հողի վրա. այն ժամանակ (Արշակը) զղջում էր ասածների վրա, խոնարհում էր, նրա ոտներն էր բռնում, սաստիկ ափսոսում զղջում էր ասածների վրա: Իսկ երբ ձեռքիցը բռնած տանում էր հայկական հողի վրա՝ առաջինից ավելի խիստ էր խոսում: Նորից հեռացնում էր այդ հողի վրայից՝ սկսում էր խոսքերով ապաշխարել: Առավոտից մինչև երեկո շատ անգամ փորձեց նրան, որ երբ հայկական հող շաղ տված հատակի վրա էր տանում՝ (Արշակը) խստանում ամբարտավանում էր, իսկ խորանի բնական հողի վրա լալիս էր[149], զղջում արտահայտում:

Երբ երեկո եղավ, Պարսից թագավորի ընթրիքի ժամը հասավ— սովորությունն այնպես էր, որ Հայոց թագավորի համար բազմելու տեղ էին պատրաստում միևնույն տախտի վրա, իրար մոտ. օրենք էր, որ Պարսից թագավորն ու Հայոց թագավորը մի տախտի վրա էին բազ-

բոլորին զԱրշակայ բազմականն առնէին, ուր գնայ հողն յատակն հարեալ էր: Նախ ամենեցեան իրեւ բազմեցան յիւրաքանչիւր չափու, յետոյ ածէին բազմեցուցանէին զարքայն Արշակ: Արդ եկաց բազմեալ ուռուցեալ վայր մի. իսկ յոտն եկաց, ասէ գթագաւորն Շապուհ. Իմ այդ տեղի, ուր դուդ ես բազմեալ. յոտն կաց այդի, բոդ ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. ապա եթէ յաշխարհն իմ հասից, մեծամեծ վրէժս խնդրեցից ի ձէն:

Ապա տայր հրաման Շապուհ արքայ Պարսից, բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս և ի ձեռս նորա երկաթս, և խաղացուցանել զնա ի յԱնդմըշն՝ զոր Անուշ բերդն կոչեն, և պնդեալ զնա մինչև անդէն մեռցի: Եւ եղև ի վաղիւ անդր ետ հրաման Շապուհ արքայ, ածել զառաջեաւ իւր զՎասակ Մամիկոնեան զզօրավարն սպարապետն Հայոց մեծաց. սկսաւ պատուհասել զնա, բանզի էր Վասակ աճամբ փորիկ, ասէ ցնա արքայն Պարսից Շապուհ. Աղուէս, դո՞ւ էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դու ես այն՝ որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, և զի՞ գործես. զմահ աղուեսու սպանից զմեզ: Իսկ Վասակ տուեալ պատասխանի, ասէ. Այժմ ես տեսեալ գիս անձամբս փորիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես ինձ առեւծ էի, և արդ աղուէս: Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտն ի միոյ լերին կայր, և միւս ոտն իմ ի միոյ լերին կայր. յորժամ յայլ ոտն յենուի, զայլ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի: Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ և ասէ. աղէ՝ տուր ինձ գիտել, ո՞վ են լերինքն այնոքիք՝ զորս դուն ընդ ուչդ տանէիր: Եւ ասէ Վասակ. Լերինքն երկուք, մի դու էիր, և մի թագաւորն Յունաց: Այն մինչ տուեալ էր ինձ ասառուծոյ, զինձ ընդ գետին տանէի և զթագաւորն Յունաց, մինչև օրհնութիւն հօրն մերոյ ներսէսի հանգուցեալ էր ի վերայ մեր, և ասառուծոյ զմեզ ի ձեռանէ չէր թողեալ. մինչև զնորա բանն արարաք, և խրատ նորա եկաց առ մեզ, գիտացաք տալ ինձ խրատ. մինչև մեզէն աչօք բացօք աճկամ ի խորխորատ: Արդ գինչ և կամիս, արա: Ապա ետ հրաման թագաւորն Պարսից մորթել զզօրավարն Հայոց Վասակ, և զմորթն ճանել և լնուլ խոտով, և տանել ընդ նոյն բերդ յԱնդմըշն՝ որ Անյուշն կոչեն. ուր արգելին իսկ զթագաւորն Արշակ:

մում, մի գանի վրա— իսկ այդ օրը նախ պատրաստեցին բոլոր այնտեղ գտնված թագաւորների բազմելու տեղերը, և ամենից վերջը, բոլորից ներքև, Արշակի բազմելու տեղը պատրաստեցին, որի հատակում հայկական հող էին շաղ տվել: Նախ բոլորը բազմեցին ըստ իրենց աստիճանների, ետոյ բերին բազմեցրին Արշակին: Նա մի կարճ ժամանակ բազմեց մնաց մուրքերը կախած. ետոյ ոտի կանգնեց ու ասաց Շապուհ թագաւորին. «Իմս է այդ տեղը, որտեղ դու բազմել ես. վեր կաց այդ տեղից, որ ես այդտեղ բազմիմ, որովհետև մեր (Արշակունյաց) ազգի տեղն այդ է եղել. իսկ եթե ես իմ աշխարհը դառնամ՝ ինձանից մեծ վրէժներ կպահանջեմ»:

Այն ժամանակ Պարսից Շապուհ թագաւորը հրաման էր տալիս բերել երկաթե շղթաներ, կապել Արշակի պարանոցը, ոտքերն ու ձեռքերը, տանել նրան Անդմըշն բերդը, որին ասում են Անհուշ բերդ, և կապած պահել այնտեղ մինչև մեռնի:

Հաջորդ օրը Շապուհ թագաւորը հրամայեց իր առաջը բերել Վասակ Մամիկոնյանին, Մեծ Հայքի զորավար-սպարապետին: Որովհետև Վասակը փոքր էր մարմնով՝ Պարսից Շապուհ թագաւորը ասաց նրան. «Աղվե՛ս, այդ դո՞ւ էիր այն խանգարիչը, որ այսքան տարի մեզ և բաղերին շարշարեցիր, դո՞ւ էիր, որ այսքան տարի կոտորում էիր արիներին. հիմա ի՞նչպես պետք է իմ ձեռքից ազատվիս. ես քեզ աղվեսի մահով պիտի սատկեցնեմ»: Վասակ սպարապետը պատասխան տալով ասաց. «Այժմ ինձ տեսնում ես փոքր մարմնով և սուրս էլ վրաս չէ՝ իմ մեծության չափը չիմացար, որովհետև մինչև այժմ ես քեզ համար աշխատ էի, իսկ այժմ աղվես գառնա: Բայց երբ ես դեռ Վասակ էի՝ ես հսկա էի. մի ոտս մի լեռան վրա էր, մյուսը մյուս լեռան վրա. երբ աջ ոտքիս վրա էի հենվում՝ աջ կողմի լեռը գետինն էի կոխում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում՝ ձախ կողմի լեռն էի գետին կոխում»: Շապուհ թագաւորը հարցրեց և ասաց. «Ձի՞ լինի ասես, այդ ի՞նչ լեռներ են, որ դու տափ էիր կոխում»: Վասակն ասաց. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը Հունաց թագաւորը. բանի որ աստված հաճ էր մեզ հետ՝ մեզ էլ էի գետին կոխում, Հունաց թագաւորին էլ, բանի որ մեր մեր նոր Ներսեսի օրհնություններ մեր վրա կար, և աստված մեզ ձեռքից չէր թողել: Քանի որ մենք նրա խոսքը լսում էինք և նրա խրատով էինք վարվում՝ կարողացանք մեզ խրատ տալ, մինչև որ մենք իրենց պաշխարհով խորխորատի մեջ ընկանք: Հիմա ինչ ուզում ես արա»: Ապա Պարսից թագաւորը հրամայեց՝ Հայոց Վասակ զորավարի մորթը հանել, խոտով լցնել և տանել նույն Անդմըշ բերդը, որ Անհուշ է կոչվում, որտեղ բանտարկեցին և Արշակ թագաւորին:

ՅԱՂԱԳՍ ԳԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՐՈՒԱԾՈՅՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԱՒԵՐԱԾՈՅՆ, ԵՒ ԳԵՐՈՒԹԵԱՆ ՏԱՆԵԼՈՅՆ. Ի ԳԱՐՍ. ԵՒ ՁԱՐԱՄԱՀ ԼԻՆԵԼՈՅՆ ՏԻԿՆՈՋՆ ՓԱՌԱՆՁԵՄԱՑ ԵՒ ՔԱՂԱՔԱՑՆ ՀԱՅՈՑ ԱՒԵՐԵԼՈՑ, ԵՒ ՀԻՄԱՆՑ ԱՇԽԱՐՀԻՆ ՏԱԳԱԼԵԼՈՑ

Ապա առձակեաց արքայն Պարսից Շապուհ ի վերայ աշխարհին Հայոց երկուս ոմանս յիշխանաց անտի իւրոց, միումն Զիկ անուն և միումն Կարէն, հինգ հարեւր բիւրով. զի եկեսցեն բռնացեն բանդեսցեն զաշխարհն Հայոց: Եւ եկին հասին ի վերայ երկրին Հայոց: Ապա իբրև տեսես տիկին աշխարհին Հայոց, կինն Արշակայ թագաւորին Հայոց Փառանձեմ, զզօրս թագաւորին Պարսից, եթէ եկին լցին զաշխարհս Հայոց, առեալ ընդ իւր մարդիկ իբրև մեռասան հազար ազատս ընտիրս սպառազէնս պատերազմողս, և հանդերձ նոքօք դիմեաց եմուտ ի բերդն Արտագերից՝ որ ի յերկրին Արշարունեաց՝ յերեսաց զօրացն Պարսից: Ապա եկին հասին ամենայն զօրքն Պարսից, շուրջ զբերդաւն նստէին, պահ արկանէին. պատեցին պաշարեցին: Իսկ նոքա ի ներքս ամրացեալք, յուսային ի տեղւոյն ամրութիւնն. և նոքա լակիշ ածեալ, նստէին արտաքուստ շուրջ զնոսքօքն: Եւ նստան շուրջ զբերդաւն ամիսք երեք-տասան, և առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին: Աւերեցին հանդեցին զերկիրն ամենայն. ելանէին առնուին աւար զերկիրն ամենայն, շուրջ ի գաւառացն և յաշխարհացն ածէին զգերի մարդկանն և զանասնոյ ի լակիշն իւրեանց. այլուստ բերէին համբարս, և ուտէին. և զբերդն պաշարեալ պահէին:

Իսկ Պապ որդին Արշակայ ոչ դիպեցաւ անդ ի Հայոց աշխարհին, զի առ բագաւորն Յունաց դիպեցաւ: Զի թէպէտ և զայս ամենայն լուան ազատագունդ բանակն Հայոց, չոգան իւրեանց խնդրել թիկունս օգնականութեան. և էր նոցա զօրագլուխ Մուշեղ որդին Վասակայ սպարապետին: Եւ չոգան նոքա առ իւրեանց արքայորդին. մինչ դեռ նոքա ընդ բագաւորին Յունաց խօսէին, հաւանեցուցանէին զնոսա թիկունք լինել իւրեանց: Իսկ յերկիրն Հայոց ստէպ առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ, զի ժուժկալ լինիցի բերդին, և մի՛ ձեռս տացէ ի պարսիկս: Եւ դեսպանս ստէպ ստէպ յորդւոյ նորա ի Պապայ գմիմեանց գկնի ի շաբաթու շաբաթու եկեալ հասանէին. և գաղտ ընդ գաղտնի դուռն ուրեմն մեքենաւորութեամբ ի բերդն մտանէին, տային հաչալերս տիկնոջն. և յերկարեաց ի բերդին ամիսս երեքտասան պաշարումն: Այլ որ գային և երթային, ստէպ ստէպ գային՝ թէ պինդ կաց, զի հասեալ է Պապ որդի Ո և գունդ կայսերական ի թիկունս օգնականութեան: Եւ յերկարեաց խռխռոյսն որ հասանէր, զի ասէին.

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՐՎԱԾՆԵՐԸ ԵՒ ԱՒԵՐՄՈՒՆՔԸ. ՓԱՌԱՆՁԵՄ ՏԻԿՆՈՋ ԳԵՐԻ ՏԱՐՎԵԼԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԵՒ ՁԱՐԱՁԱՐ ՄԱՀԸ: ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔՆԵՐԻ ԱՒԵՐՄՈՒՆՔԸ ԵՒ ԱՇԽԱՐՀԻ ՀԻՄՆՈՎԻՆ ԿՈՐԾԱՆՎԵԼԸ

Այնուհետև Պարսից Շապուհ թագավորը Հայոց աշխարհի վրա արձակեց իր իշխաններից երկուսին, մեկի անունը Զիկ, մյուսինը Կարեն, հինգ հարյուր բյուր զորով, որ գան Հայոց աշխարհը ֆարուհանդ անեն: Նրանք եկան Հայոց աշխարհի վրա: Երբ Հայոց աշխարհի տիկինը, Հայոց Արշակ թագավորի Փառանձեմ կինը, տեսավ, որ Պարսից թագավորի զորքերը լցվեցին Հայոց աշխարհը՝ առավ իր հետ մոտ տասնհմի հազար ընտիր սպառազինված պատերազմող մարդիկ ազատներից, և Պարսից զորքից խույս տալով դիմեց գնաց Արտագերս բերդը[150] Արշարունյաց գավառում: Հետո Պարսից բոլոր զորքերը հասան, բերդի շուրջը նստեցին, պատեցին, պաշարեցին: Նրանք ներսը ամրացան, նույս դնելով տեղի ամրության վրա, իսկ սրանք դակիշ ֆաշելով նստան դուրսը, ձորերի շուրջը: Այսպես տասներեք ամիս բերդի շուրջը նստեցին և չկարողացան բերդն առնել, որովհետև տեղը շատ ամուր էր: Ամբողջ երկիրը ֆանդեցին, ավերեցին, դուրս էին գալիս, շրջակա գավառները և աշխարհները ավարի էին առնում, մարդիկ և անասունները գերելով բերում էին իրենց դակիշը. ուրիշ տեղերից կենսամթերք էին բերում և ուտում, բերդը պաշարման մեջ պահելով:

Իսկ Պապը, Արշակի որդին, այդ ժամանակ Հայոց աշխարհում չպատահեց, նա Հունաց թագավորի մոտ էր[151], իսկ ազատների տոհմերից բաղկացած բոլոր բանակը, այս բաները լսելով՝ գնացին իրենց համար օգնություն խնդրելու. նրանց զորագլուխն էր Մուշեղը, Վասակ սպարապետի որդին: Նրանք գնացին իրենց արքայորդու մոտ և բանակցում էին Հունաց թագավորի հետ, նրան համոզում էին իրենց թիկունքը լինել: Իսկ Հայոց աշխարհը նրանք հաճախ դեսպաններ էին ուղարկում աշխարհի տիկնոջ՝ Փառանձեմի մոտ, որ դիմադրե, բերդը պաշտպանե, Պարսից ձեռքը չտա: Նրա որդուց՝ Պապի կողմից էլ հաճախակի դեսպաններ էին գալիս, շաբաթ շաբաթի վրա, գաղտնի դռնով մի ճնարհով բերդն էին մտնում, սիրտ էին տալիս տիկնոջը. այսպես բերդի պաշարումը տևեց տասներեք ամիս: Իսկ դեսպանները շարունակ գնում գալիս էին ասելով թե՝ «Պինդ կաց, Պապ որդիդ գալիս է և կայսերական գունդ է բերում օգնության»: Այս հաչալերությունը ներ-

վայրիկ մի ևս սակաւիկ մի ևս կալցիս ժոյժ, և աճա հասեալ է օգնականութիւն:

Եւ եղև յետ չորեքտասաներորդ ամսեանն հարուածոց՝ որ յաստուածոյ հասին ի վերայ գաղթականին բերդնորդեացն, զի մահ անկաւ ի վերայ նոցա՝ որ ի բերդին էին, զի ի տեառնէ հասին պատուհասք: Առաջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին և ըմպէին և ուրախ լինէին որ էին ի տաճարին. յանկարծակի ի միում ժամու հարիւր այր, և ի միւսում երկերիւր, և էր՝ զի հինգ հարիւր այր մեռան ի բազմականին՝ յորժամ բազմեալ կային. և օր ըստ օրէ սատակէին: Յորժամ սկսան, զամիս մի ոչ յերկարեաց՝ զի սատակեցան առ հասարակ. զի էին արք իբրև մեռասան հազար, և կանայք իբրև վեց հազար. զի ամիս մի ոչ կացին, զի ամենեքեան՝ որ էին ի բերդին՝ առ հասարակ սատակեցան:

Բայց մնաց ի բերդին Փառանձեմ տիկին, երկու նաժշտօք: Ապա եկե եմուտ գաղտ ի ներս ի բերդն Հայր Մարդպետ ներքինին, և բշնամանեաց զտիկինն մեծապէս իբրև զրոզ մի: Սկսաւ դնել բշնամանս ազգին Արշակունեաց, զի վատախորհուրդ են, վատանշաճ, կորուսիչ զաշխարհս ևս. իրաւի անց բնդ ձեզ այդ, և այլ զի անցցէ: Ել գաղտուկ, և փախեաւ: Իսկ տիկինն Փառանձեմ իբրև եառնս՝ եթէ միայն մնացի, եթաց զդուռն բերդին, և բողացոյց զօրսն Պարսից մտանել ի բերդն: Եւ եկին կալան զտիկինն, և իջուցին ի բերդէն: Ելանէին ի բերդն ի վեր զօրավարն Պարսից, գերէին զգանձս թագաւորին Հայոց, որ կային ի բերդին. և սկսան կրել իջուցանել զամենայն գանձսն, որ կայր ի բերդին: Զինն տիւ և գինն գիշեր համակ իջուցին զոր գտին յԱրտաշատ բերդին, հանդերձ տիկնաւն խաղացուցին:

Եւ յետ այսորիկ եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին գնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս մթերեալս՝ որ կային, և գերեցին զամենայն քաղաքն: Եւ խաղացուցին ի յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն երգ Հրեայս, զոր ածեալն էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն պաղեստինացոց. և քառասուն հազար երդ Հայ, զոր յԱրտաշատ քաղաքէ խաղացուցին: Եւ զամենայն շինեալ քաղաքին հրձիգ արարին զփայտակերտն, և զքարակերտն քանդեցին. զպարիսպն ըստ նմին օրինակի և զամենայն շինուած քաղաքին մինչև ի հիմունսն ապականեցին, և ոչ բողին մի, և ոչ բողին բնաւ քար ի քարի վերայ. անմարդի և թափուր յամենայն բնակչաց իւրոց կացուցանէին:

Եւ եղև յորժամ ածին ժողովեցին զամենայն զգերին քաղաքին ի մի վայր, և անցուցին ըստ Տափերն կամուրջ, և առնէին համար գեր-

կար ձգձգվում էր, որովհետև ասում էին. «Մի հիշ էլ, մի փոքր ժամանակ էլ համբերի՛ր, օգնությունը հասել է»:

Տասնչորսերորդ ամսից հետո աստծուց հարված հասավ բերդում ապաստանած գաղթականների վրա. բերդում եղողների մեջ մահ բնկավ, ասովածային պատուհաս: Փառանձեմ տիկնոջ առաջ սեղանատանը նստած ուտում խմում ուրախանում էին՝ և հանկարծ մի ժամում հարյուր մարդ, մյուսում երկու հարյուր, պատահում էր որ մինչև հինգ հարյուր մարդ մեռնում էին՝ մինչ սեղան բազմած էին լինում: Եվ այսպես օրեց-օր կոտորվում էին: Մահը սկսվելու օրից մի ամիս էլ չհաշեց, որ բոլորը կոտորվեցին, մոտ տասն և մի հազար տղամարդ և մոտ վեց հազար կին. մի ամիս չանցավ՝ որ բերդում եղածները բոլորը կոտորվեցին. բերդումը մնաց միայն տիկին Փառանձեմը երկու նաժիշտով:

Ապա գաղտնի կերպով բերդը մտավ ներքինի Հայր մարդպետը և տիկնոջը ասստիկ նախատեց խնչպես մի բոզի: Սկսեց նախատինքներ թափել Արշակունյաց ազգի վրա, թե վատախորհուրդ, վատանշաճ են, Հայոց աշխարհն էլ կորցրին. տեղն է՝ քնչ որ ձեզ պատահեց և քնչ որ էլի պիտի պատահի: Գաղտուկ դուրս եկավ ու փախավ: Իսկ տիկին Փառանձեմը տեսնելով, որ մենակ մնաց՝ բերդի դուռը բացեց և Պարսից զորը բողեց բերդից ներս: Նկան տիկնոջը բռնեցին և բերդից իջեցրին: Հետո Պարսից զորավարները[152] բերդն էին բարձրանում, ավար էին առնում Հայոց թագավորի գանձերը, որ բերդում պահվում էին. բոլորը վար իջեցրին: Ինը օր, ինը գիշեր շարունակ իջեցնում էին՝ քնչ որ գտան Արտագերս բերդում, և տիկնոջ հետ միասին գերի հշեցին:

Այնուհետև եկան Արտաշատ մեծ քաղաքը. նրան առան, պարիսպները կործանեցին. այնտեղ էլ պահված գանձերը առան և ամբողջ քաղաքը գերի վարեցին: Արտաշատ քաղաքից գերի տարան ինը հազար տուն հրեա, որոնց Արշակուհի Տիգրան թագավորը գերի էր բերել Պաղեստինացոց աշխարհից, և քառասուն հազար տուն հայ: (Այսքան մարդ) Արտաշատ քաղաքից տարան: Քաղաքի շինություններից փայտաշեններ կրակ տվին այրեցին, քարաշեններ քանդեցին, նույնպես և պարիսպը. քաղաքի բոլոր շինվածքները հիմնահատակ կործանեցին, ոչ մի քար քարի վրա չթողին, քաղաքը բնակիչներից թափուր, անմարդի, ավերակ դարձրին:

Որ քաղաքի բոլոր գերիները մի տեղ ժողովեցին՝ անց կացրին Տափերի կամուրջով. գերիներին համարեցին և շերտավար զորքերով

ւյն, ի մէջ շերտափակ զօրացն պատէին, ասեն զօրագլուխքն Պարսից ցՁուիք երէց խաղալիս Արտաշատու. եկեալ ի միջոյ գերեդի, երբ գնա դու յո պէտ է ինձ: Եւ ոչ առնոյր զայս յանձն երէցն Զուիքն, այլ ասէր. Յո գխաշնդ տանիմ, և զնովիւս տարայմ. զի ոչ է մարթ նովուի բողոքել զխաշն իւր, այլ պարտ է նովուի դնել զանձն ի վերայ ոչխարին իւրոյ: Եւ զայս ասացեալ եմուտ ի գերութիւնն, և խաղաց ի գերութիւն ընդ իւրում ժողովրդեանն յերկիրն Պարսից:

Առնուին և զվաղարշապատ խաղամ. խանդէին բրէին գխաղամն ի հիմանց տապալէին, և խաղացուցանէին յայնմ ևս խաղամէ իննևտասն երդս հազար: Ընդ ամենայն խաղամս ոչ թողին ամենևին շինած. զի զամենայն տապալէին, խակեալ խանդէին. և ընդ ամենայն երկիրն ասպատակ սփռեալ՝ զամենայն այր ի չափ հասեալ կոտորէին, գկանայս և զորդիս ի գերութիւն վարէին. և զբերդս ամենայն թագաւորին Հայոց կալան, և լցեալ բազում ամբարօք՝ բերդակալս թողուին: Առնուին և զմեծ խաղամն գԵրուանդաշատ, և խաղացուցանէին անտի երդս խասն հազար Հայ, և երդս երեսուն հազար Հրեայ. և զխաղամն ի հիմանց տապալեալ բրեալ յատակէին: Ապա առնուին և զխաղամն Բագրեւանդայ Ջարեհատան, և խաղացուցանէին անտի հինգ հազար երդ Հայ, և ութ հազար երդ Հրեայ. և զխաղամն ի հիմանց տապալէին յատակէին: Առնուին և զխաղամն մեծ Ջարիշատ՝ որ էր ի գաւառին յԱղձնիովտի, չորեքտասն հազար երդ Հրեայ, և տասն հազար երդ Հայս. և զնա ի հիմանց խանդեալ ապականէին: Առին և զամուր խաղամն Վան, որ է ի գաւառին Տոզբայ. և հրձիգ արարեալ, խակէին զհիմունս նորա. և խաղացուցանէին անտի երդս հինգ հազար Հայ, և ութ և տասն հազար երդս Հրեայս:

Զայս ամենայն բազմութիւն Հրէից, զոր գերեցին տարան յերկրէն Հայոց, ածեալ էր յերկրէն պաղեստինացւոց մեծի թագաւորին Հայոց Տիգրանայ ի ժամանակին՝ յորժամ գերեաց նա և ած ի Հայս զխանձնայապետն Հրէից զՀիւրկանոս զառաջին ժամանակաւ: Եւ էած մեծ արխայն Տիգրան զամենայն գիւղութիւնն զայն բնակեցոյց ի խաղամսն Հայոց յիւրում դարուն ի ժամանակին: Իսկ յայսմ ժամանակի աւերեցին գխաղամսն, և գերեցին զբնակեալսն անդ. և զամենայն երկիրն Հայոց և զամենայն գաւառն ընդ նմին գերեալ, խաղացուցեալ[36] և գայլ գերութիւնս գաւառաց գաւառաց, կողմանց կողմանց, փորի փորի, գաշխարհի աշխարհի, ածին ժողովեցին ի խաղամն Նախճաւան. զի անդ էր զօրաժողով իւրեանց զօրացն: Ապա առին և գնա խանդեցին. անտի երդս Հայս երկուս հազարս, և Հրեայ երդս վեշտասան հազարս անտի խաղացուցին գնացուցին ամենայն գերութեամբն հանդերձ: Եւ անդէն

շրջապատեցին. ապա Պարսից զօրագլուխքներն ասացին Արտաշատ խաղամի Զվիք երեցին. «Գերիների միջից դուրս եկ ու գնա՛ ուր ուզում ես»: Զվիքը այս բանը հանձն չառավ ու ասաց. «Ուր որ այդ խաշինքը տանում եմ՝ նովվին էլ նրա հետ տարեմ. պետք չէ որ նովիվը իր խաշինքը թողնե, այլ պետք է իր կյանքը զոհե ոչխարների համար»[153]: Այս ասելով նա մտավ գերիների մեջ և գերի գնաց Պարսից աշխարհը իր ժողովրդի հետ:

Առնում էին Վաղարշապատ խաղամն էլ. հանդում, բրում էին, հիմից կործանում էին. այս խաղամից էլ գերի էին տանում տասնհինը հազար տուն: Ամբողջ խաղամում շեմ չթողին, բոլորը խարուխանդ էին անում, կործանում: Ասպատակներ ուղարկելով՝ բոլոր չափահաս մարդկանց կոտորում էին, կանանց, երեխաներին գերի էին վերցնում: Հայոց թագավորության բոլոր բերդերն առան, մեծ խնամությամբ պաշարեղեն հավաքեցին նրանց մեջ և բերդապահներ թողին: Առան Երվանդաշատ մեծ խաղամն էլ. այս տեղից դուրս բերին խասն հազար տուն հայ և երեսուն հազար տուն հրեա, իսկ խաղամը հիմնահատակ կործանեցին: Հետո առան Բագրեւանդի Ջարեհավան խաղամը. այնտեղից էլ գերի վերցրին հինգ հազար տուն հայ և ութ հազար տուն հրեա և խաղամը հիմնիվեր կործանեցին: Առան նաև Ջարիշատ մեծ խաղամը Աղձնիովտ գավառում, (գերի վերցրին) տասնչորս հազար տուն հրեա և տասը հազար տուն հայ, և այն էլ հիմնահատակ կործանում էին: Առան նաև Վան ամուր խաղամը Տոզբ[154] գավառում, կրակ տվին այրեցին, հիմերը խանդեցին. այնտեղից էլ դուրս բերին հինգ հազար տուն հայ և տասն և ութ հազար տուն հրեա:

Հրեաների այս բոլոր բազմությունը, որ Հայոց աշխարհից գերի տարան՝ Հայոց Տիգրան մեծ թագավորը բերել էր Պաղեստինացոց երկրից հին ժամանակ, երբ նա գերեց և Հայաստան բերեց հրեաների Հյուրկանոս խնամնայապետին: Տիգրան մեծ թագավորը այս բոլոր հրեությունը իր դարում բերեց բնակեցրեց Հայաստանի խաղամներում: Իսկ այս ժամանակ (պարսիկները) ավերեցին այդ խաղամները, նրանց բնակիչներին գերեցին, նրանց հետ միասին Հայոց ամբողջ աշխարհն ու գավառները: Դուրս բերին գերիներ զանազան գավառներից, կողմերից, ձորագավառներից, աշխարհներից, ժողովեցին բերին Նախճավան[155] խաղամը, որ իրենց զորքերի զորաժողովի տեղն էր: Այս խաղամն էլ առան խանդեցին, այնտեղից էլ հանեցին երկու հազար տուն հայ և տասնվեց հազար տուն հրեա և մյուս գերիների հետ տարան: Հայոց

յերկիրն Հայոց ոստիկանս բաղիճ և վերակացուս, ի ծառայութիւն մատնել[37] զմնացորդս երկրին. և իճխանէ զտիկինն Փառանձեմ առեալ, հանդերձ գանձիւ և բազմութեամբ գերեօք յերկիրն Պարսից խաղացուցանէին. և գնացեալ երթային տանէին հասուցանէին յերկիրն Պարսից առ Շապուհ արքայն Պարսից:

Եւ եղև իբրև չոգաւ տարաւ զտիկինն Փառանձեմ յերկիրն Պարսից, և զայլ ամենայն գերութիւնն Հայոց և զգանձսն կալաւ առաջի թագաւորին և զտիկինն Փառանձեմ, շնորհ մեծ ունէր թագաւորն Պարսից իւրոց զօրավարացն: Եւ իբրև կամեցաւ թագաւորն Պարսից Շապուհ բռնճամանս առնել ազգին աշխարհին Հայոց և թագաւորութեանն, ետ հրամանս ժողովել զամենայն զզօրս իւր և զմեծամեծս իւր և զփոխունս և զամենայն մարդիկ աշխարհին իւրոյ՝ որ իճխէր, և ի մէջ ամբոխին ածել զտիկինն Հայոց զՓառանձեմն: Եւ հրամայեաց ի հրապարակին իմն առնել հրապոյրս մեհենայից, որով հրամայեաց գկինն արկանել, և առնել տիկնոջն Փառանձեմայ ի խառնակութիւն պոռնկութեանն աճապանական պղծութեանն: Այսպէս սատակեցին զտիկին զՓառանձեմ: Իսկ զայլ գերին զամենայն տարան բնակեցուցին, որ յԱսորեստան, որ յերկրին Խուժաստանի:

ԾԶ

ՅԱՂԱԳՍ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ՋՈՒԻՔԱՑ ԵՐԻՑՈՒ ՅԵՐԿՐԻՆ ՊԱՐՍԻՑ

Ապա իբրև չոգաւ տարաւ յերկիրն Պարսից զամենայն գերութիւն Հայոց, և զՋուիք երէց Աւտաշատ խաղաղի ունէին կապանօք առաջի թագաւորին Պարսից Շապհոյ: Եւ նայէր թագաւորն Պարսից Շապուհ, և տեսանէր գերէցն Ջուիք այր բարձր և անձնեայ, և ի տից մանուկ. և ետ գլխոյն ալեւորեալ էին, այլ մուրուքն դեռ տակաւին սեաւ ևս կային: Ապա յորժամ զառաջինն խօսել սկսաւ, ասէ. Եթէ տեսանէ՞ք զառնդ զայդր գչարութիւն. հանգի յայտ է, ի հետաց այտի երևի՝ թէ կախարդ է. զի հետքն սպիտակ են, և մուրուքն սեաւ: Իսկ երիցուն տուեալ պատասխանի, ասէ. Թէ ես գայդ իցէ, այլ գինչ կարիս խօսել և առնել՝ խօսեաց. այլ վասն այդորիկ գիտեա, զի յիրաւունս սպիտակացեալ են նախ հետքս. զի բազում աւուրբ երէց եմ, գոնեա հնգետասան ամօք ևս գմուրուս նախաբոյս եմ: Իսկ թագաւորն հրամայեաց տալ մինչև ի վաղիւն պահել զնա. իսկ ի վաղիւն հրամայեաց տալ ածել ի հրապարակն շղթայիւք: Եւ ելին ոստիկանք արտունի հարցանել, եթէ իցէ՞ յանձն

աշխարհում բաղին ոստիկաններ[156] ու վերակացուներ, երկրի մնացորդ ժողովուրդը հպատակեցնելու, իսկ իրենք տիկին Փառանձեմին առնելով գանձերով և բազմաթիվ գերիներով տարան Պարսից աշխարհը, եկան բերին հասցրին Պարսից աշխարհը Շապուհ թագավորի մոտ:

Երբ Փառանձեմ տիկնոջը բերին հասցրին Պարսից աշխարհը և Հայաստանի բոլոր գերությունն ու գանձերը և Փառանձեմ տիկնոջը թագավորի առաջ հանեցին՝ Պարսից թագավորը մեծ շնորհակալություն հայտնեց իր զորավարներին: Պարսից Շապուհ թագավորը կամեցավ նախատինք հասցնել (Արշակունյաց) ազգին, Հայոց աշխարհին և թագավորությանը: Հրամայեց կանչել իր բոլոր զորքերը, իր մեծամեծներն և ստորին պաշտոնյաները և իր տիրած աշխարհի բոլոր մարդկանց, և այս բազմության մեջ բերել Հայաստանի տիկնոջը՝ Փառանձեմին: Եվ հրամայեց հրապարակում չինել ինչ-որ մեհենություն, որի վրա ձգել ավեց տիկնոջը և արձակել նրա վրա՝ անասնական պիղծ խառնակության համար[157]: Այս կերպ սպանեցին տիկին Փառանձեմին: Իսկ գերիների բոլոր բազմությունը տարան բնակեցրին մի մասը Ասորեստանում, մյուս մասը Խուժաստան երկրում:

ԾԶ

ՋՈՒԻՔ ԵՐԵՑԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Երբ Հայաստանի բոլոր գերիներին տարան հասցրին Պարսից աշխարհը՝ Աւտաշատ խաղաղի Ջվիք երեցին էլ Պարսից Շապուհ թագավորի առաջ բերին. Պարսից Շապուհ թագավորը նայում տեսնում էր Ջվիք երեցին, որ բարձրահասակ բարեկազմ մարդ է, երիտասարդ հասակով, բայց գլխի մազերը արդեն ալեւարել էին, իսկ մորուքը դեռ սև էր: Ապա՝ առաջին անգամ խոսելիս ասաց. «Տեսնո՞ւմ եք այդ մարդու շարությունը. հենց մազերից երևում է, որ դա կախարդ է, որովհետև մազերն սպիտակ են, մորուքը սև»: Իսկ երեցը պատասխան ավեց ու ասաց. «Երբ խոսել ես ուզում՝ խոսիր ինչ որ կամենում ես, բայց մազերիս մասին գիտացի՛ր, որ նրանք իրավացի են սպիտակել, որովհետև շատ ավելի մեծ են տարիքով, գոնե տասնեհինգ տարի վաղ են բուսել քան մորուքս»: Թագավորը հրամայում էր պահել նրան մինչև հաջորդ առավոտը: Մյուս օրը հրամայեց՝ շղթաներով նրան հրապարակը բերել: Նկատ արհուեստական ոստիկաններն ու հարցրին, երբ հանձն կառնե մոգության օրենքը պաշտել, այն դեպքում չի մեռնի:

առցէ պաշտել զօրէնս մոգութեանն, ոչ մեռցի: Իսկ նա ոչ առնոյր յանձն. այլ կամեցեալ մեռանել խնդութեամբ վասն աստուծոյ, երթեալ ի տեղի մահուան, և աղաչեաց զվերակացուս իւրոյ մահուանն, զի թողացուսցեն նմա սակաւ մի կալ յաղօթս: Եւ մատուցեալ յառաջագոյն, եդ ծունր և ասէ.

/

ՍԷ

ԱՂՕԹՔ Ի ԺԱՄ ՄԱՀՈՒՆ ՅՈՒՒԹԱՑ

Արարիչ մեր, որ արարեր զերկինս և զերկիր և զծով յոչնչէ, և ստեղծեր զմեզ ի հողոյ. և զհողեղէնս այսպէս իմաստուն բանաւորս և կենդանիս արարեր: Եւ շնորհեցեր մեզ զգիտութիւն, զոր ցուցեր ազգաց որդւոց մարդկան ի ձեռն սրբոց քոց մարգարէիցն կարապետացն քոց. և դու էիզէն եկիր իջեր մարդացար երևեցար յերկրի, և ընդ մարդկան շրջեցար. և զկատարեալ իմաստութիւնդ քո շնորհեցեր արարածոց քոց, զոր առաքելովքն քարոզեցեր քոց ստացուածոց յաշխարհի: Եւ վարդապետօքն սրբովք, զորս եդիր ի քում յեկեղեցւոջ լուսաւորս, զամենեսեան իմաստնացուցեր: Եւ զիս, զայր զանարժան, արժանի արարեր քում ծառայութեանդ. և պատրաստեցեր զիս տառապելս սնանել և ուսանել ընդ ձեռօք քո սրբոյ և մեծի և քո հաճայապետին Ներսիսի՝ քո պաշտօնէին, և ի ձեռաց նորա առնուլ զձեռնադրութիւն երիցութեան, և ի ձեռաց նորա զիս նուիրեալ էիզ ի հաճայութեան: Եւ յայնմ աշտիճանէ պատրաստեցեր ըմպել զվկայութեան բաժակն փրկութեան, զոր ըմբելով՝ զանուն տեառն կարդացից. զաղօթս իմ ես տեառն տաց առաջի ամենայն ժողովրդոց նորա: Ընդ որում էիզ փառ և զօրութիւն և իշխանութիւն միածնի Որդւոյ քո սիրելոյ Յիսուսի Քրիստոսի, և կենդանարար Հոգւոյդ քում սրբոյ, յառաջ քան զամենայն յաւիտեանս այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ իբրև զայս ամենայն ասաց, բազում մարդիկ ամբոխի ժողովեալ էին. ասացին զամէնն: Ապա զայրացեալք վերակացուք սպանողութեանն, թէ ընդէ՞ր այնչափ երկար թողացուցին նմա խօսել, ապա տագնապաւ ի տեղի մահուն հասուցանէին: Իսկ նա մեծաւ խնդութեամբ կարկառեալ զպարանոցն, վճարէր ի սուսերէն:

Նա հանձն չառաւ, այլ ուրախութեամբ կամեցաւ մեռանել աստծու համար: Իր մահվան վերակացուներից խնդրեց թույլ տալ որ մի քիչ աղոթք: Եվ առաջ անցնելով՝ ծունկ չոքեց և ասաց.

ՍԷ

ՁՎԻԹԻ ԱՂՕԹՔԸ ՄԱՀՎԱՆ ԺԱՄԻՆ

Ո՜վ մեր արարիչ, որ ոչնչից ստեղծեցիր երկինքն ու երկիրը և ծովը, որ մեզ հողից ստեղծեցիր, և հողեղեններիս այսպես իմաստուն, բանական և կենդանի հորինեցիր: Դու մեզ շնորհեցիր որ գիտությունը, որ մարդկային ազգերին հայտնեցիր սուրբ մարգարեների՝ որ կարապետների ձեռով. հետո իջիր եկար, (երկնից) իջար, մարդ դարձար, երկրի վրա երևեցար և մարդկանց հետ շրջեցար, և որ կատարյալ իմաստությունը շնորհեցիր որ արարածներին, որ որ առաքյալների ձեռով քարոզեցիր աշխարհում մեզ հետևողներին, և սուրբ վարդապետների միջոցով, որոնց իբրև լուսատուներ հաստատեցիր որ եկեղեցում՝ բոլորին իմաստնացրիր: Ինձ էլ, անարժանիս, արժանավոր դարձրիր մեզ սպասավորելու, տառապյալիս միջոց տվիր սնվելու և ուսանելու որ պաշտոնյայի՝ որ սուրբ և մեծ Ներսես հաճայապետի ձեռի տակ և նրա ձեռով երեց ձեռնադրվելու և նրանից նվիրվելու որ հաճայության, և այս աստիճանում ինձ պատրաստեցիր՝ փրկության բաժակը խմել հաճատակությամբ, որը ես կխմեմ՝ աստծու անունը կանչելով և իմ աղոթքը կուղղեմ սիրոջը նրա բոլոր ժողովրդի առաջ: Քեզ փառ և զորություն և իշխանություն և որ սիրելի որդուն Հիսուս Քրիստոսին և որ կենդանարար մշտնջենական սուրբ հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Երբ այս բոլորն ասաց՝ ժողովված բազմամարդ ամբոխը ասաց. «ամեն»: Ապա սպանության վերակացուները գայրացան, թե ինչո՞ւ թողին նրան այնքան երկար խոսելու, ուստի շտապեցնելով մահվան տեղն էին հասցնում: Իսկ նա մեծ ուրախությամբ պարանոցը մեկնելով՝ սրի հարվածով վախճանում էր:

ՅԱՂԱԳՍ ԳԱԼՈՅՆ ՇԱԳՀՈՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ ՅԵՐԿԻՐՆ ՀԱՅՈՑ, ԵՒ ՄԵԱՆԳԱՄԱՅՆ ՍԱՏԱԿԵԼ ՉՄՆԱՑԵԱԼՍ ԵՐԿՐԻՆ. ԵՒ ԲԻՒՐ ՉԱՐԵԱՅՆ, ՉՈՐ ԿՐՑԻՆ

Ապա յետ այսորիկ խաղաց գնաց թագաւորն Պարսից Շապուհ ամենայն իշխանութեամբ զօրաց իւրոց, և չոգաւ ել յերկիրն Հայոց. և առաջնորդ ունէր ընդ իւր զվահան ի Մամիկոնեան տոհմէն, և զՄերուժանն յԱրծրունեաց տոհմէն: Ապա հասեալ ասպատակէին յերկիրն Հայոց, և առնուին զամենայն գերիս ի մի վայր ժողովեցին: Եւ թագաւորն ի նախարարացն Հայոց բողոքին զկանայս իւրեանց և զորդիս և զընտանիս, և փախեան ընդ այս ընդ այն գնացին: Իսկ զամենայն կանայս նախարարացն Հայոց, զոր բռնին և փախեանն, ասպատակն ժողովէր. և ածին գնասս առ Շապուհ արքայ Պարսից:

Իրեւ էր բանակն Շապհոյ թագաւորին Պարսից ի գաւառն Բագրեւանդայ յաւերս խաղաքին Ջարեհաւանի, զոր յառաչնումն եկեալ զօրն Պարսից աւերեցին, և ածին ժողովեցին առաջի թագաւորին Պարսից զամենայն գերիս մեացորգաց աշխարհին Հայոց. ապա հրաման տայր թագաւորն Պարսից Շապուհ, զամենայն այր ի չափ հասեալ կոխան առնել փզաց, և զամենայն գկին և զմանուկ հանել ընդ ցից սայլից: Հազարք հազարաց և բիւրք բիւրուց սպանին, զի ոչ գոյր թիւ կամ համար սպանելոցն. և գկանայս ազատացն և նախարարացն զփախուցեալսն հրաման տայր ածել յասպարէզն՝ որ էր ի Ջարեհվան խաղաքի: Եւ հրաման տայր հոլանել զամենայն ազատ կանանքն, և նաւուցանել առաջ առաջ ասպարիսին. և իճեն Շապուհ արքայ հեծեալ ի ձի, չուակի անցանէր առ կանանովն. և որ յոկն գայիր, մի մի ի նոցանէ պղծեալ ի խառնակութիւն տանէր առ իճեն: Քանզի մօտ յասպարէսն հարեալ էր խորանն, յար առեալ մտանէր գործել գաճօրէնութիւն. և այնպէս գրազում աւուրս առնէր գայն բնդ կանայսն: Եւ զազգի Սիւնեաց առնմին զամենայն գայր ի չափ հասեալ կոտորեցին, և գկանայս սպանին, և զամենայն մանր մանկտիսն ետրիճիս հրամայէր առնել, և խաղացուցանել յերկիրն Պարսից: Եւ առնէր գայս ամենայն վասն վրիժուցն Անդուկայ, որ եղև պատերազմ ընդ Ներսեհ արքայ Պարսից:

Եւ տայր հրաման Շապուհ արքայն Պարսից զամուր ամուր տեղիսն Հայոց բերդս շինել, հրամայեաց և բերդակալս կացուցանել: Եւ զազատ կանանքին անդէն ի բերդեանն բաշխէր և բողոյր. զի եթէ ոչ արք նոցա եկեսցեն նմա ի ծառայութիւն, սպանցեն զկանայս նոցա բերդաքալքն՝ առ արս եթող գնոսա: Եւ եթող յաշխարհին զՋիկն և զկարեհեն,

ԳԱՐՍԻՑ ՇԱԳՈՒՀ ԹԱԳԱՒՈՐՒ ՀԱՅՈՑՍԱՆ ԳԱԼԸ ԵՒ ԱՇԽԱՐՀԻ ՄՆԱՑԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՈՏՈՐԱԾԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԿՐԱՒ ԲՅՈՒՐԱՎՈՐ ՁԱՐԻՔՆԵՐԸ

Սրանից հետո Պարսից Շապուհ թագավորը իր իշխանության բոլոր զօրքերով վեր կացավ եկավ հասավ Հայոց աշխարհը: Նա իրեն առաջնորդ ուներ Վահանին, Մամիկոնյան տոհմից, և Մերուժանին, Արծրունյաց տոհմից: Գալիս հասնում ասպատակում էին Հայոց աշխարհը, բոլորին գերի էին վերցնում ու մի տեղ ժողովում: Եվ Հայոց նախարարներից շատեր բողոքում էին իրենց ընտանիքները, կին, արդի, փախչում, ցրվում էին այս և այն կողմը: Եվ ասպատակողները ժողովում էին փախած հայ նախարարների բոլոր կանանց և բերում էին Պարսից Շապուհ թագավորի մոտ:

Պարսից Շապուհ թագավորի բանակը գանվում էր Բագրեւանդ գավառում Ջարեհավան քաղաքի ավերակներում, որ ավերել էին առաջուց եկած զորքերը: Այստեղ բերին ժողովեցին Պարսից թագավորի առջև Հայոց աշխարհի մնացորդների բոլոր գերությունը: Ապա հրաման էր տալիս Պարսից Շապուհ թագավորը՝ բոլոր չափահաս տղամարդկանց փղերին ոտնակոխ անել տալ, իսկ բոլոր կանանց ու երեխաներին սայլերի ցցի վրա հանել: Հազարներով ու բյուրերով սպանեցին. թիվ ու հաշիվ չկար սպանվածներին: Իսկ փախած նախարարների և ազատների կանանց հրամայում էր բերել Ջարեհավան քաղաքի ձիարշավի հրապարակը: Եվ հրամայում էր այն ազնվական կանանց մերկացնել և հրապարակի երկու կողմում նստեցնել, իսկ իճեր Շապուհը, ձի հեծած, արշավելով անցնում էր կանանց միջով, և առնէր ար աչքին դուր էին գալիս՝ մեկ-մեկ տանում էր իր մոտ պիղծ խառնակության. առվոյնուն նրա խորանը զարկած էր հրապարակի մոտ. այնտեղ էր մտնում անօրեն գործը կատարելու: Այսպես վարվում էր այդ կանանց հետ շատ օրեր: Եվ Սյունյաց առնմի բոլոր չափահաս ազամարդկանց կոտորեցին, կանանց սպանեցին և բոլոր մանր ազաներին հրամայում էր ներիճացնել և Պարսից աշխարհը տանել: Այս բոլորը նա անում էր վրեժ առնելու համար Անդոկից, երբ պատերազմ եղավ Պարսից Ներսեհ թագավորի հետ[158]:

Եվ Շապուհ թագավորը հրամանը տվեց՝ Հայաստանի ամուր ամուր տեղերում բերդեր շինել և բերդակալներ նշանակելով՝ ազնվական կանանց մաս-մաս տեղավորում էր այդ բերդերում պահելու, հրամայելով, որ եթե հրանց ամուսիններեր չգան իրեն ծառայության՝ այդ բերդակալները սպանեն այն կանանց, որ բողել էր հրանց մոտ: Եվ Հայոց

զնոցա իշխանս զօրօք բազմօք. և զիշխանութիւն մնացորդացն եւս ի ձեռս Վահանայ և Մերուժանայ, և ինքն գնաց յԱտրպատական:

ՍԲ.

ՅԱՂԱԳՍ ԹԷ ԻՐՐԵՒ ՄՆԱՑԻՆ ՎԱՀԱՆ ԵՒ ՄԵՐՈՒԺԱՆ, ԹԷ ՉԻՆՉ ՇԱՏ ՉԱՐԻՍ ԳՕՐԾԵՑԻՆ ԸՆԴ ԵՐԿԻՐՍ ՀԱՅՈՑ. ԵՒ ԿԱՄ ՉԻԱՐԴ ՍԱՏԱԿԵՑԱՆ ՎԱՀԱՆ ԵՒ ԿԻՆՆ ԻՒՐ ՅԻՒՐԵԱՆՑ ՈՐԴՒՈՑՆ

Այնուհետև Վահանն Մամիկոնեան և Մերուժանն Արծրունի, սոքա երկոքեան արք պիղծ անօրէնք էին, ապստամբեալք էին յուխտէ աստուածպաշտութեանն և զանաստուածն Մազդեզանց աղանդն յանձն առեալ պաշտէին, սկսան այնուհետև յերկիրն Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս աղօթից հրիստոնէից յամենայն կողմանս Հայոց՝ գաւառաց գաւառաց և կողմանց կողմանց: Եւ նեղէին զքաղում մարդիկ՝ զօր ի բուռն արկանէին, թողուլ զաստուածպաշտութիւն և ի պաշտօն դառնալ Մազդեզանցն: Եւ յետ այսորիկ տային հրաման Վահանն և Մերուժանն, զամենայն կանայս փախուցելոցն զնախարարացն՝ որ թողին և գնացին, տային հրաման ի բերդեանն զի նեղեսցեն զնոսա՝ դարձուցանել յօրէնս Մազդեզանց. եթէ ոչ առնուցուն յանձն, սատակեսցեն զամենեսեան չարաչար: Եւ բերդակալեանն յորժամ զայն հրաման ընկալան, ամենայն ոք ո՛ ոք առ ումեք էին՝ նեղեցին զնոսա ըստ հրամանին տուելոյ: Ապա իբրև ոչ մի ոք յանձն առնուին ուրանալ ի հրիստոնէութենէն, չարամահ սպանանէին զամենեսեան յամենայն ի բերդսն՝ յորս տուեալ էր զնոսա անդ:

Իսկ Վահանայ էր հօրաքոյր ի Մամիկոնեան տոհմէն, հօր Վարդանայ, Համազասպունի[38]. և էր նա կին Գարեգնի տեառնն Ռշտունեաց գաւառին: Զսա եթող և փախեաւ Գարեգին այր իւր ի ժամանակին, յորում եկն Շապուհ արքայ Պարսից յերկիրն Հայոց. իսկ զտիկինն Ռշտունեաց ի միջնաբերդն Վան բերդի, որ էր հաղարն ի Տոսբ գաւառին: Իսկ անօրէնն Վահան և Մերուժանն հրաման տային բերդակալին, զի նեղեսցէ զկինն. եթէ ոչ առցէ յանձն զօրէնս Մազդեզանցն, տայր հրաման կախել զբարձր աշտարակէն և սպանանել: Իբրև ոչ առնոյր յանձն Համազասպունի պահել զօրէնս Մազդեզանցն, հանէին ի բարձր աշտարակն՝ որ կայր ի վերայ բարձր գահուն քարին, որ հայի ի կողմն ծովակին ի գետոյ կուսէ. և մերկացուցին զնա իբրև ի մօրէ. և արկեալ կապ զոտիցն, գլխիվայր կախեցին զնա զբարձուէն կուսէ. և այնպէս մեռաւ ի կախաղանին: Եւ էր նա սպիտակ մարմնով, և պայծառ

աշխարհում նրանց վրա իշխան թողեց Զիկին և կարեւին բազմաթիվ զորով. մնացորդների վրա իշխանությունը հանձնեց Վահանին ու Մերուժանին և ինքը գնաց Ատրպատական:

ՍԲ

ՎԱՀԱՆԻ ԵՎ ՄԵՐՈՒԺԱՆԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԵՐԲ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՄՆԱՑԻՆ ՈՐՔԱՆ ՇԱՏ ՉԱՐԻՔՆԵՐ ԳՈՐԾԵՑԻՆ ԱՇԽԱՐՀԻՆ ԵՎ ԻՆՉՊԵՍ ՎԱՀԱՆՆ ԵՎ ԻՐ ԿԻՆԸ ՍՊԱՆՎԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՈՐԴՈՒ ՁԵՌՔՈՎ

Այնուհետև Վահան Մամիկոնյանը և Մերուժան Արծրունին,— այս երկու պիղծ, անօրեն, դժնյա մարդիկ, որոնք եւ էին կացել աստվածապաշտության ուխտից և ուրացությամբ հանձն էին առել ու պաշտում էին Մազդեզական անաստված կրոնը՝[159] սկսեցին Հայոց աշխարհում, բոլոր գավառներում, ամեն տեղ ավերել եկեղեցիները, իրիստոնյաների աղոթքի տեղերը: Եվ շատ մարդկանց, որոնք նրանց ձեռքն էին ընկնում՝ ստիպում էին աստվածապաշտությունը թողնել, Մազդեզական պաշտամունքն ընդունել: Սրանից հետո Վահանն ու Մերուժանը հրամայում էին բերդերին, որ այն կանանց, որոնց ամուսին նախարարները թողել ու փախել էին՝ ստիպել, որ դառնան Մազդեզական կրոնին, իսկ եթե չհամաձայնեն՝ բոլորին շարաչար մահով սպանել: Բերդապահներն այս հրամանն ստանալով՝ ամեն մեկը իր մոտ եղածին նեղում, ստիպում էր՝ ինչպես հրամայված էր: Եվ երբ նրանցից ոչ մեկը հանձն չառավ իրիստոնեությունը ուրանալ՝ բոլորին շարաչար մահով սպանեցին բոլոր բերդերում, որտեղ տեղավորված էին:

Վահանը մի խորթ քույր[160] ուներ Մամիկոնյան տոհմից, Վարդանի քույրը, Համազասպունի անունով, որ Ռշտունյաց գավառի տիրոջ՝ Գարեգինի կինն էր: Նրա ամուսինը, Գարեգինը, փախել էր այն ժամանակ, երբ Պարսից Շապուհ թագավորը եկել էր Հայոց աշխարհը, իսկ Ռշտունյաց տիկինը (Համազասպունին) պահվում էր Վան քաղաքի միջնաբերդում, Տոսբ գավառում: Իսկ անօրեն Վահանն ու Մերուժանը բերդապահին հրամայում էին որ տիկնոջ նեղե, իսկ եթե նա հանձն չառնե Մազդեզական կրոնը՝ այս դեպքում բարձր աշտարակից կախե և սպանե: Երբ Համազասպունին հանձն չառավ Մազդեզական օրենքը՝ նրան հանեցին բարձր աշտարակը, որ գտնվում էր ժայռի բարձր գագաթին, դեպի ծովակի կողմը դարձած նեռի կողմից. նրան մերկացրին՝ ինչպես մորից մերկ և ոտներին չվան ձգելով՝ գլխիվայր կախեցին այն բարձր տեղից, և այսպես մեռավ կախաղանի վրա: Նրա մարմինը սպիտակ

տեսանելովն. կայր կախեալ յերեսոյք տեսիլ նշանակի, և փաղփաղէր մարմինն ի բարձուէն զոր օրինակ ձիւն սպիտակութեամբն. և բազում մարդիկ ժողովէին տեսանել oր քան օրէ, զի իբրև սմանչելի ինչ երևէր յաշխարհին: Յայս տեսիլ տիկնոջն Համազասպուհեայ՝ էառ կին մի դյեական ծորին, ազաւ նա պարէգօտ մի՝ զոր անակիւղս կոչեն, և էած զօտի ընդ մէջ իւր. և կայր առ բարձր գահուն կարին ի ներոյ աշտարակին՝ զորմէ կախեալ էր զսանն իւր, մինչև կողոպտեցաւ ամենայն մարմինն դիոցն: Եւ որչափ ի վայր վայրէին ոսկերն, նա յիւր ծոցն ժողովէր բովանդակ զամենայն ոսկերս սանին. և տեսեալ գնաց յիւրոց:

Եւ այնչափ շար էին արն երկոքին, զի անգամ իւրեանց ումեք ոչ ողորմէին. այլ անխնայութեամբ դատէին զօտարս և զիւրեանց ըստ նիս: Աստուածս չինէին ի բազում տեղիս, և զմարդիկ ճնազանդէին օրինացն Մազդեզանց. և բազում յիւրեանց սեփհականեան չինէին աստուածս, և զորդիս և զազգայինս իւրեանց տային յուսումն Մազդեզանցն: Ապա որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, եհար սատակեաց զՎահան զհայր իւր, և զՈրմիզդուխտ զմայր իւր՝ զքոյր Շապհոյ Պարսից թագաւորին. և ինքն փախստական լինէր յերկիրն հայոցն:

էր, պայծառ տեսքով, կախված մնում էր տեսարանի համար: Նրա մարմինը բարձրում փայլում էր ձյունի սպիտակությամբ, և շատ մարդիկ օրեցօր գալիս էին նրան նայելու՝ իբրև մի սքանչելի երևույթի: Համազասպուհու այս տեսարանը նկատելով՝ մի կին, նրա դայակը, մի կարճ պարեգոտ հագավ, որին ասում են անակյուղոս[61], մեջքը գոտի կապեց, և մնում սպասում էր բարձր աշտարակի ներքև, ժայռի բարձր գագաթի տակ, որտեղից կախված էր իր սանը, մինչև որ բոլորովին մարմինը: Եվ որքան որ ներքև էին թափվում նրա ոսկորները՝ նա ժողովում էր, իր ծոցը դնում և այսպես իր սանիկի բոլոր ոսկորները ժողովեց, տարավ նրա ազգականների մոտ:

Եվ այնչափ շար էին այն երկու մարդիկ, որ մինչև անգամ իրենց մեծավորներին չէին խնայում, այլ անողորմաբար շարչարում էին թե՛ օտարներին և թե իրենց ընտանիներին: Շատ տեղերում աստուածաններ էին շինում, մարդկանց բռնի ճնազանդեցնում էին Մազդեզական կրոնին, իրենց սեփական կալվածներում էլ շինում էին շատ աստուածաններ և իրենց ազգականներին տալիս էին Մազդեզական կրոն սովորելու: Ապա Վահանի մի որդին Սամուել անունով, զարկեց սպանեց իր հոր Վահանին և իր մոր Որմզդուխտին, Պարսից Շապուհ թագավորի քրոջը, և ինքը փախավ գնաց Խաղտիքի աշխարհը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

Բ Ի Ւ Զ Ա Ն Դ Ե Ա Յ

ՀՆԳԵՐՈՐԴ ԽՈՍՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ
ՋՈՐ ԱՍԵԼՈՑ ԵՄ ԿԱՐԳԵԼ ՋԴԳՐՈՒԹԻՒՆ ԴԳՐՈՒԹԵԱՆՑ ԿԱՆՈՆ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ՄԱՏԵՆԻՑ

Ա. Յաղագս բագաւորելոյ Գապայ յերկրին Յունաց, և գալոյ ի Հայս, և յինէն ուսելոյ զաշխարճն. և կամ որ միանգամ գործեաց ո՛րպէս յաջողեցաւ:

Բ. Յաղագս Մուշեղայ զօրավարին Հայոց՝ թէ ո՛րպէս անկաւ ի վերայ բանակին Շապհոյ բագաւորին Պարսից, և եճար զնոսա ի ճարուածս աննճարիս, միչ զի միայն Շապուհ ճողոպրէր:

Գ. Յաղագս Հայր Մարդպետի, թէ ո՛րպէս սպանանել հրամայեաց բագաւորն Գապ:

Դ. Յաղագս դարձեալ պատերազմին, որ եղև ի Բագաւանի յաւանին ի Բագրեւանդ գաւառին ընդ Գապ բագաւորին Հայոց և ընդ զօրսն Պարսից:

Ե. Յաղագս միւսոյ պատերազմին ընդ Հայս և ընդ Պարս ի Գանձակ Ատրպատականի. ևս վասն գուշակութեան Ուռնայրի, զի յայնմ և յաղթութիւն լինէր Հայոց:

Զ. Յաղագս Դղակայ Մարդպետի, որ կացուցին սահմանակալ. և նա խորհրդակից եղեալ Պարսից բագաւորին, թէ ո՛րպէս խոստանայր մատնել զարքայն Հայոց. և վասն մանուն Դղակայ ի Գապայ արքայէ:

Է. Յաղագս մանուն Արշակայ բագաւորին Հայոց, թէ զիա՛րդ մեռաւ յերկիրն Խուժաստանի յԱնուշ բերդի իճինին ձեռօք, և Դրաստամատն լինէր պատճառ մանու նորա:

Ը. Յաղագս թէ զիա՛րդ լուեաց պատերազմ ի կողմանցն Պարսից. ապա սկսաւ սպարապետն Մուշեղ ոգորել ընդ այնոսիկ, որ միանգամ ապստամբեցին ի բագաւորէն Հայոց, զրազում կոյսս կոյսս ճարկանէր մեծաւ պատերազմաւ, նախ յաղագս Տան արքային Հայոց՝ որ յԱտրպատականին էր:

Թ. Յաղագս Նոշիրականի:

Ժ. Յաղագս Կորդուաց և Կորդեաց և Տմորեաց:

ԺԱ. Յաղագս Մարաց:

ԺԲ. Յաղագս Արծխեաց:

ԺԳ. Յաղագս Աղուանից:

ԺԴ. Յաղագս Կասպից:

ԺԵ. Յաղագս Վրաց:

ԺԶ. Յաղագս գաւառին Աղձնեաց:

ԲՈՒԶԱՆԴԻ
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ

ՅԱՆՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅԱՆ, ԻՆՉ ՈՐ ԱՍԵԼՈՒ ԵՄ, ՊԱՏՄԱԿԱՆ ՋՐՈՒՅՑՆԵՐԻ ԳԼՈՒԽՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Գապի բագավորելը Հունաց աշխարհում. Հայաստան գալն ու աշխարհին տիրելը և ի՛նչպես աչողվեց՝ ինչ որ առհասարակ գործում էր:

Բ. Հայոց Մուշեղ զորավարի մասին, թե ի՛նչպես հարձակվեց Պարսից Շապուհ բագավորի բանակի վրա և սոսկալի չարղ տվեց նրանց, այնպես որ Շապուհը մի ձիով ճողոպրում էր:

Գ. Հայր մարդպետի մասին, թե ի՛նչպես Գապը հրամայեց նրան սպանել:

Դ. Երկրորդ պատերազմի մասին, որ տեղի ունեցավ Բագրավանդ գավառի Բագրավան ավանում Հայոց Գապ բագավորի և Պարսից զորերի միջև:

Ե. Մյուս պատերազմի մասին հայերի և պարսիկների միջև Ատրպատականի Գանձակ քաղաքում. Ուռնայրի լուր ճաղորդելը. Հայոց այն անգամ էլ ճաղթություն տանելը:

Զ. Դղակ մարդպետի մասին, որին սահմանապահ նշանակեցին, թե ի՛նչպես նա խորհրդակից էր լինում Պարսից բագավորին և խոստանում է նրա ձեռքը մատնել Հայոց բագավորին, և Դղակի սպանվելը Գապ բագավորի հրամանով:

Է. Հայոց Արշակ բագավորի մահվան մասին, թե ի՛նչպես մեռավ Խուժաստան աշխարհում, Անուշ բերդում իճին իր ձեռքով, և Դրաստամատն էր լինում նրա մահվան պատճառը:

Ը. Թե ի՛նչպես դադարեց պատերազմը պարսիկների կողմից, որից հետո Մուշեղ սպարապետը սկսեց կռվել նրանց հետ, որոնք ապստամբել էին Հայոց բագավորից, և մեծամեծ պատերազմներով շատ տեղեր նվաճում էր: Նախ և առաջ Հայոց բագավորի կալվածի մասին Ատրպատականում:

Թ. Նոշիրականի մասին:

Ժ. Կորդուքի, Կորդիքի և Տմորիքի մասին:

ԺԱ. Մարերի մասին:

ԺԲ. Արցախի մասին:

ԺԳ. Աղվանքի մասին:

ԺԴ. Կասպիցի մասին:

ԺԵ. Վրաստանի մասին:

ԺԷ. Յաղագս մեծաց Սոփից:
ԺԸ. Յաղագս Անգեղ տանճ:
ԺԹ. Յաղագս գաւառին Անձտայ:
Ի. Յաղագս եպիսկոպոսապետին Հայոց Ներսիսի, թէ որպիսի՛ այր, կամ զի՛նչ շատ գործեաց սմանչելիս:
ԻԲ. Յաղագս թագաւորին Պապայ, թէ զիա՛րդ էր դիւօք, կամ ո՛րպէս աճօրէն:
ԻԳ. Յաղագս յանդիմանութեան սրբոյն Ներսէսի, զի ճանապազ բշնամի էր թագաւորին Պապայ վասն մեղաց:
ԻԴ. Յաղագս մանուկ մեծի եպիսկոպոսապետին Ներսիսի՝ ի թագաւորէն Պապայ, ո՛րպէս կամ զիա՛րդ սպանաւ ի նմանէ:
ԻԵ. Յաղագս տեսլեանն, որ երևեցաւ առաքեցն սրբոց Շաղիտայի և Եպիփանու, մինչդեռ նստէին ի յերինն:
ԻԷ. Յաղագս Եպիփանու սրբոյ:
ԻԸ. Յաղագս Եփիփանու սրբոյ:
ԻԹ. Յաղագս մեծամեծ նշանաց սմանչելեացն՝ որ երևեցաւ յաստուածոյ ի Մամբրեա յետ գնալոյն անտի Եպիփանու:
Ի. Յաղագս Յուսկայ՝ որ էր ի տոհմէն Աղրիանոս Եպիսկոպոսի, զոր կացոյց փոխանակ Ներսիսի թագաւորն Պապ յիւրոց կամաց, առանց մեծի եպիսկոպոսապետին Կեսարու. և վասն այնորիկ յայնմհետէ բարձաւ իշխանութիւն հայրապետացն Հայոց զեպիսկոպոսս ձեռնադրել:
Լ. Յաղագս սգոյն՝ որ սգային զհայրապետն Ներսէս, և լինէին զմանէ կաթոգիկ:
ԼԱ. Յաղագս թէ ո՛րպէս զկնի մեռանելոյն հայրապետին Ներսիսի, թէ ո՛րպէս ի նախանձ մտեալ առապելից թագաւորն Պապ զամենայն զեղեալսն կրօնիս կանոնիցն, որ ինչ միանգամ եղեն ի Ներսիսէ առ կենդանութեամբ նորա ի նմանէ:
ԼԲ. Յաղագս թագաւորին Պապայ, թէ ո՛րպէս խռովարեցաւ ի՛ թագաւորէն Յունաց, կամ ո՛րպէս սպանաւ ի զօրագլխացն Յունաց:
ԼԳ. Յաղագս որ ինչ խորհեցան իշխանքն Հայոց. ապա անցին կացին լուռ:
ԼԴ. Յաղագս թագաւորելոյն Վարազդատայ ի վերայ երկրին Հայոց յետ Պապայ:
ԼԵ. Յաղագս թէ ո՛րպէս ի բանս չարախոհեաւքն և անմիտ մարդկան եկեալ թագաւոր Վարազդատ, և զզօրավարսն Հայոց զմուշեղ սպանանէր:
ԼԶ. Յաղագս անմտութեան կարծելացն ընդառեցաւ Մուշեղի և այլ մարդկան:
ԼԷ. Յաղագս գալոյն Մանուէլի ի գեղութենէ Պարսից, և խնդրելոյ զերէվճ Մուշեղայ, և հալածելոյ զթագաւոր զՎարազդատ յերկրէն Հայոց:
ԼԸ. Յաղագս թէ զիա՛րդ սպարապետն Հայոց Մանուէլ ճանգերձ ամենայն աշխարհաւն ձեռս եհ ի թագաւորն Պարսից, և մարզպան և աշխարհակալ աշխարհին Հայոց ած զառաջինն ի թագաւորէն Պարսից զՊաւրէն, և մեծաւ պարգևօք մեծարեցաւ ի նմանէն. կամ որպէս խարամանկութեամբ Մերուժանայ Արծրունւոյ եղև սպառամբութիւնն և պատերազմումբ յուզեցան:
ԼԹ. Յաղագս Գումանդ Շապհոյ, զի առաքեցաւ ի թագաւորէն Պարսից առ պատերազմ ընդ Հայս, և սատակեցաւ ի Մանուէլէ զօրօք իւրովք ճանգերձ:
Խ. Յաղագս Վարազայ, թէ ո՛րպէս կամ զիա՛րդ առաքեցաւ ի թագաւորէն Պարսից, և սատակեցաւ ի Մանուէլէ իբրև զառաջինն:

ԽԶ. Ապճնիք գավառի մասին:
ԽԷ. Մեծ Սոփի մասին:
ԽԸ. Անգեղտան մասին:
ԽԹ. Անձիտ գավառի մասին:
Խ. Հայոց Մուշեղ սպարապետի մասին:
ԽԱ. Հայոց Ներսես եպիսկոպոսապետի մասին, թե ի՛նչպիսի մարդ էր և ո՛րքան սմանչելիքներ գործեց:
ԽԲ. Գալ թագավորի մասին, թե ի՛նչպես դևերից բռնված ու աճօրեն մարդ էր:
ԽԳ. Սուրբ Ներսեսի հանդիմանությունը Գալ թագավորին, որին բշնամի էր նրա մեղքերի պատճառով:
ԽԴ. Մեծ եպիսկոպոսապետ Ներսեսի մահվան մասին, թե ի՛նչպես սպանվեց Գալ թագավորից:
ԽԵ. Տեսլիքի մասին, որ երևաց սուրբ Շաղիտային և Եպիփանիին, մինչ նստած լինեն վրան:
ԽԶ. Սուրբ Շաղիտայի մասին:
ԽԷ. Սուրբ Եպիփանի մասին:
ԽԸ. Մեծամեծ սմանչելի նշանների մասին, որոնք Մամբրեում երևացին աստծուց՝ Եպիփանի այնտեղից մեկնելուց հետո:
ԽԹ. Հուսիկի մասին, որ Աղրիանոս եպիսկոպոսի տոհմից էր և որին Գալ թագավոր Ներսեսի փոխանակ նշանակեց իր կամքով, առանց Կեսարիայի մեծ եպիսկոպոսապետին, որի պատճառով այնուհետև Հայոց կաթողիկոսների՝ եպիսկոպոս ձեռնադրելու իշխանությունը դադարեց:
Լ Թե ի՛նչպես սգում էին Ներսես հայրապետին և նրա կարոտը ճչում:
ԼԱ. Թե ի՛նչպես Ներսես հայրապետի մեռնելուց հետո Գալ թագավոր, նախանձից շարժված, տապալեց այն բոլոր կարգ ու կանոնը, որ սահմանել էր Ներսեսը իր կենդանության ժամանակ:
ԼԲ. Գալ թագավորի մասին, թե ի՛նչպես երես դարձրեց Հունաց թագավորից և սպանվեց Հունաց զորագլուխներից:
ԼԳ. Թե ի՛նչպես խորհուրդ արին Հայոց իշխանները և ի՛նչպես լուռ կացին մնացին:
ԼԴ. Գալից հետո Վարազդատի թագավորելը Հայոց աշխարհի վրա:
ԼԵ. Թե ի՛նչպես Վարազդատ թագավոր չարամիտ և անմիտ մարդկանց խոսքերին լսելով սպանում էր Հայոց զորավար Մուշեղ սպարապետին:
ԼԶ. Մուշեղի բնտանիքի և այլ մարդկանց անմիտ կործիքի մասին:
ԼԷ. Մանուելի դարձը պարսկական գերությունից, Մուշեղի վրեժը պահանջելը և Վարազդատին Հայաստանից հալածելը:
ԼԸ. Թե ի՛նչպես Հայոց Մանուել սպարապետը բոլոր աշխարհի հետ ձեռք մեկնեց Պարսից թագավորին, և սկզբում Հայոց աշխարհի մարզպան և կառավարիչ բերեց Պարսից թագավորի կողմից Սուրենին և մեծ պարգևներ ստացավ Շապուհից, և թե ի՛նչպես Մերուժան Արծրունու խարամանկությամբ ապստամբություն ծագեց և պատերազմներ առաջ եկան:
ԼԹ. Գումանդ Շապուհի մասին, որ Պարսից թագավորի կողմից ուղարկվեց հայերի հետ պատերազմելու, և իր զորքերի հետ չարդվեց Մանուելից:
Խ. Վարազի մասին, թե ի՛նչպես ուղարկվեց Պարսից թագավորից և Մանուելից չարդվեց առաջինի նման:

ԽԱ. Յաղագս Մոկաճայ, որ առաքեաց դարձեալ թագաւորն Պարսից ՚ի վերայ երկրին Հայոց և ՚ի վերայ Մանուէլի զօրօք բազմօք, և սատակեցաւ ՚ի Մանուէլէ իբրև զառաջինսն:

ԽԲ. Յաղագս խաղաղութեան Հայոց ամս երիս:

ԽԳ. Յաղագս Մերուժանայ Արծրունւոյ, որ ճանդիրձ զօրօք Պարսից եկն ՚ի վերայ Մանուէլի, և սատակեցաւ ՚ի նմանէ:

ԽԴ. Յաղագս թէ զիա՛րդ թագաւորեցոյց Մանուէլ մեծ սպարապետն զմանուկն Արշակ. ապա և ինքն Մանուէլ մանու մեռանէր:

ԽԱ. Մոկաճի մասին, որին Պարսից թագավոր դարձյալ ուղարկեց մեծ զորով Հայոց աշխարհի և Մանուելի վրա և Մանուելից չարդվեց առաջիններին նման:

ԽԲ. Յորր տարի տեղի խաղաղության մասին:

ԽԳ. Մերուժան Արծրունու մասին, որ Պարսից զորով եկավ Մանուելի վրա և նրանից սպանվեց:

ԽԴ. Թե ի՛նչպես Մանուել սպարապետը թագավորեցրեց մանուկ Արշակին, ևնա ինքն էլ մեռավ:

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐՔ ՄԱՏԵՆԻՑ ՏԱՆ ՈՐԴՒՈՅՆ ԹՈՐԳՈՄԵԱՑ ԻՇԽԱՆԻՆ ՀԱՅՈՑ

Ա.

ՅԱՂԱԳՍ ԹԱԳԱՒՈՐԵԼՈՑ ՊԱՊԱՅ ՅԵՐԿՐԻՆ ՅՈՒՆԱՑ, ԵՒ ԳԱԼՈՑ Ի՛ ՀԱՅՍ, ԵՒ ՅԻՆՔՆ ՈՒՆԵԼՈՅ ԶԱՇԽԱՐՀ ԻՒՐ, ԵՒ ԿԱՄ ՈՐ ԻՆՔ ՄԻԱՆԳԱՄ ԳՈՐԾԵԱՑ, ԵՒ ՅԱՋՈՂԵՑԱՒ ՆՄԱ

Ապա յետ այսր ամենայնի Մուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն մնացելոյն՝ որ միանգամ մնացեալ էին, և չոգաւ հանդերձ նոքօք առ թագաւորն Յունաց: Եւ եցոյց զպատահանսն աշխարհին Հայոց, և զամենայն անցս տառապանաց՝ որ անցեալ էր ընդ նոսա, և խնդրեաց ի կայսերէն զՊապ զորդի Արշակայ թագաւոր ի վերայ Հայոց աշխարհին: Մեծ թագաւորն Յունաց թագաւորեցոյց զՊապ զորդին Արշակայ ի վերայ աշխարհին Հայոց, որպէս և խնդրեաց նա ի նմանէ. և մեծապէս թիկունք լինէր արքայն Յունաց. զՏէրենտ առնուն ստրատելատն և զԱդէ ոմն կոմս առնակէին ընդ արքային Պապայ յերկիրն Հայոց վեց հարիւր բիւրու:

Եւ եկին հասին ի սահմանս Հայոց. և Մուշեղ լինէր զօրավար սպարապետ Հայոց փոխանակ Վասակայ հօր իւրոյ: Եւ գային ի մի վայր ժողովէին ամենայն ցրուեալ փախուցեալ թագուցեալ, որ էին յերկրին Հայոց. գային ի մի վայր բովանդակէին, և լինէին ի խնդիր սրբոյն մեծի հայրապետին Ներսէսի թագաւորն և ամենայն մարդիկ աշխարհին Հայոց, մեծամեծ գաւառակալ և գաւառատեառք: Որ եկեալ ժողովեալ, զկաթողիկոսն գմեծն Ներսէս խնդրէին. զի գիտէին թէ նա կարող է աղօթս առնել, և խնդրել յաստուծոյ վասն շինութեան ամենայն աշխարհին Հայոց, և փրկել ի բշնամեացն. և դարձեալ զինչ

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ

ԹՈՐԳՈՄԱԿԱՑՈՑ ՏԱՆ՝ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՊԱՊԻ ԹԱԳԱՒՈՐԵԼԸ ՀՈՒՆԱՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ ԴԱՐՁ ՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՏԻՐԵԼԸ, ԵՒ ԹՆ ԻՆՉՊԻՍ ԱՋՈՂՎԵՑ՝ ԻՆՉ ՈՐ ԱՌՋԱՒԱՐԱԿ ԳՈՐԾՈՒՄ ԷՐ

Այս բոլորից հետո Մուշեղը, վասակի որդին, ժողովեց բոլոր մարդկանց ազնվական գնդերից, որոնք որ մնացել էին, և նրանց հետ միասին գնաց Հունաց թագավորի մոտ, Հայոց աշխարհի պատահական խնդիրը ներկայացրեց, պատմեց բոլոր տառապանքները, որ անցել էին նրանց գլխով, և կայսրից խնդրեց՝ Պապին, Արշակի որդուն, թագավոր դնել Հայոց աշխարհի վրա: Հունաց մեծ թագավորը Պապին, Արշակի որդուն, թագավորեցրեց Հայոց աշխարհի վրա, ինչպես նա նրանից խնդրեց, և մեծ օգնություն ցույց տվեց Հունաց թագավորը, Պապ թագավորի հետ Հայոց աշխարհն ուղարկելով Տէրենտ անունով ստրատելատին և Ադե կոմսին վեց հարյուր բյուր զորով:

Եկան հասան Հայոց աշխարհը. Մուշեղը դառնում էր Հայոց զորավար սպարապետ իր հոր Վասակի փոխանակ: Եվ Հայոց աշխարհի բոլոր այն մարդիկ, որոնք ցրվել, փախել, թաքնվել էին կացել, գալիս, մի տեղ էին հավաքվում: Եվ թագավորն և աշխարհի բոլոր մարդիկ, մեծ և փոքր գավառների տերերը փնտռում էին Ներսես մեծ հայրապետին: Նրանք ժողովվելով փնտռում էին Ներսես մեծ կաթողիկոսին, որովհետև գիտեին, թե նա կարող է աղոթք անել և աստծուց խնդրել Հայոց աշխարհին շենություն և փրկություն թշնամիներից, որովհետև. ինչ որ

և խնդրէր յաստուծոյ, տայր աստուած նմա. և միւս ևս, զի իմաստութեամբ՝ իմն կարէր սոցա զօգտակար խրատն մատուցանել: Վասն այսորիկ ոչ եթէ փոխ ինչ էր խնդիրն այնպիսոյն առն լինել, որ կարէր նոցա օգուտ խրատու իմաստութեան շնորհել, և ըստ ժամանակին դիպացն պատահելոյ՝ միսս օգտակարս դնել, որովք զնաճապարհս՝ որ կայրե առաջի՝ գնալ մարթասցեն:

Ապա իւրն թագաւորն Պապ երթայր հասանէր գտանէր գեպիսկոպոսապետն Ներսէս հանդերձ աւագանովն Հայոց. աղաչէր զնա, զի հայր Հայոց ամենայն օգտի խրատու առաջնորդ՝ և խնդրեսցէ ևս վասն նոցա: Ապա մեծաւ չանիւ հագիւ հաւանեցուցին զնա երթալ նմա ընդ նոսա ՚ի բանակն արտունի. զի յաւուրց ժամանակին ՚ի մահուանէն Գնելոյ մինչև յայն ժամանակն թագաւորութեանն Պապայ ոչ էր երթեալ նա ՚ի բանակն արտունի: Ապա յայնմ ժամանակի մեծաւ աղաչանօք տարան զնա ՚ի բանակն արտունի ընդ իւրեանս. և նա էր նոցա վերակացու և խրատատու, կարգիչ և առաջնորդ. և հանապազ խնդրէր վասն նոցա յաստուծոյ: Եւ էր իմաստութեան իրաց առաջնորդ, և հանապազ կցորդ նոցոց և բարձիչ վշտաց աղօթիւ իւրովք. և յամենայնի ամենայնիւ երբէք հայր երևեալ:

Ապա կարգէր կազմէր յօրինէր Մուշեղ սպարապետ զամենայն զգունդս Հայոց զօրացն, և առնէր հանդէս ամենայն զօրացն գնդին՝ որ հասին ՚ի ձեռս նորա տասն հազար: Եւ ածէր զամենայն հանդէսն կարգեալս և պատրաստեալս վառեալս ՚ի պատերազմ, զդրօշս փողփողեալս և նշանս արձակեալս. և ցուցանէր զհանդէս զօրացն Հայոց սպարապետն Հայոց Մուշեղ առաջի իւրեանց թագաւորին Պապայ, և մեծի հաճանայապետին Ներսէսի, և առաջի Տէրենտի և Ադէի զօրագլխացն Յունաց: Եւ մեծ շնորհակալութիւն առնէր նմա թագաւորն Պապ Հայոց, մեծամեծ պարգևս շնորհէր զօրավարին Մուշեղի. և սոյնպէս զօրագլուխքն Հոռոմոց շնորհակալ լինէին նմա: Սոյնպէս և եպիսկոպոսապետն Ներսէս օրհնէր զզօրավարն Մուշեղ, և ասէր. Տէր Քրիստոս օրհնեսցէ զքեզ, և յաջողեսցէ քեզ, և տացէ քեզ գյաղթութեանն շնորհս զամենայն աւուրս կենաց քոց. ՚ի ձեռն ձո և ՚ի ձեռն ազգի ձո փրկեսցէ զերկիրս Հայոց մինչև յաւիտեան:

Ապա զօրավարն Հայոց Մուշեղ գունդ կազմեաց պատրաստեաց, և յառաջաց հանդերձ Հայոց գնդաւն. առաջապահ անցանէր առաջի թագաւորին Պապայ և զօրացն Յունաց կայսերական գնդիւն: Ապա ՚ի Դարանաղեաց գաւառին լկնեալ յարձակեցաւ Մուշեղն: Իբրև գայր[4] առաջապահն հասանէր ՚ի միջնաշխարհն Հայոց, սպանանէր Մուշեղ զզօրագլուխսն Պարսից զԿարէնն և զՋիկն, և զամենայն զզօրսն արկա-

նա աստծուց խնդրեր՝ աստված տալիս էր նրան. բացի սրանից նա իր իմաստությամբ կարող էր իրենց օգտակար խրատներ տալ: Ուստի կարևոր էին համարում փնտրել գտնել այն մարդուն, որ կարող էր նրանց օգտակար, իմաստուն խրատներ տալ և նայելով հանգամանքներին՝ իր ժամանակին օգտակար խորհուրդներ տալ:

Ապա իւրն Պապ թագավորը գնում փնտրում գտնում էր Ներսես եպիսկոպոսապետին, (և) բոլոր Հայոց ավագանիի հետ աղաչում էր նրան, որ հայր լինի բոլոր հայերին, օգտակար խրատներով առաջնորդե և իրենց համար աստծուն խնդրվածք անե: Մեծ չանքերով հազիվհազ նրան հանեցրին, որ նրանց հետ արտունական բանակն երթա, որովհետև դեռ Գնելի մահվան ժամանակից մինչև Պապի թագավորության այդ ժամանակը նա արտունական բանակը չէր գնացել: Իսկ այժմ մեծ աղաչանքներով նրան իրենց հետ տարան արտունական բանակը: Եվ նա նրանց վերակացու և խրատատու եղավ, կարգադրող և առաջնորդ, և նրանց համար միշտ աստծուն խնդրվածք էր անում. առաջնորդում էր իմաստությամբ, միշտ մասնակից էր նրանց հոգսերին, վշտերն ամոքում էր աղոթքներով և ամենի համար ամեն բանով իբրև հայր էր երևում:

Այնուհետև Մուշեղ սպարապետը կարգի էր բերում, կազմակերպում էր Հայոց զորքերի բոլոր գնդերը և զորահանդես էր կատարում բոլոր զորքերին, որ նրա ձեռքի տակ ժողովվեցին, թվով տասը հազար: Եվ կազմակերպած՝ պատերազմի համար սպառազինված գնդերի զորահանդեսը՝ ծածանվող դրոշակներով, բացած նշաններով, բերում հանդիսավոր կերպով ցույց էր տալիս իրենց Պապ թագավորին, Ներսես մեծ հաճանայապետին, և Տերենտ և Ադե Հունաց զորագլուխներին: Եվ Հայոց Պապ թագավորը մեծ շնորհակալություն էր հայտնում Մուշեղ զորավարին ու մեծամեծ պարգևներ շնորհում: Նույնպես նրանից շնորհակալ էին լինում Հռոմների զորագլուխները: Ներսես եպիսկոպոսապետն ևս օրհնում էր Մուշեղ զորավարին և ասում էր. «Քրիստոս տերը քեզ օրհնե, քեզ աջողություն տա, քեզ հաղթություն շնորհե ձո բոլոր կյանքում, ձո ձեռքով, ձո տոհմի ձեռքով նա փրկե Հայոց աշխարհը մինչև հավիտյան»:

Ապա Հայոց Մուշեղ զորավարը գունդը կազմակերպեց, պատրաստեց և այս Հայոց գնդով իբրև առաջապահ գնաց Պապ թագավորից և Հունաց կայսերական գնդից առաջ: Ապա Դարանաղի գավառում Մուշեղը համարձակ[163] հարձակում էր գործում՝ երբ իբրև առաջապահ գալիս հասնում էր Հայաստանի միջնաշխարհը. այստեղ Մուշեղն սպանում էր Պարսից Զիկ և Կարեն զորագլուխներին, բոլոր զորքերը սրի բերան էր

ճէր ի սուր սուսերի իւրոյ, և ոչ մի զոք ապրեցուցաճէր: Եւ մինչև ի բուն ի սահմանսն ի՛ Գանձակ Աւարպատականի զերկիրն յիւր վաստրեալ, բռնացեալ ուճէր:

Եւ եկեն եմուտ թագաւորն Պապ յերկիրն Հայոց, և թագաւորեաց ի վերայ նորա. և թափեաց յինեն զամուր ամուր բերդիցն, զոր կալեալ էր պարսկացն. և բերդն Դարօնից, որ է յերկրին Կոգայ, ուր կային գանձք արշակունեացն սասանիկ յոյժ: Քանզի դիպեցաւ մտերիմք բերդապահին. զի թէպէտ ի ժամանակէն՝ իբրև ստաւն զթագաւորն Հայոց զԱրշակ ի Պարսս՝ յայնմ հետէ ժամանակէ մատեան բնդ բերդին բնդ այնմիկ պարսիկ, և ոչ կարացին առնուլ, մինչև եկն Պապ թագաւորն յերկիրն Հայոց. զի պահեցաւ գանձն և եճաս ամբողջ ի Պապ թագաւորն մինչև եկն: Եւ զօրսն Յունաց յետանէդ և ի Բախիշն բնդ ամենայն երկիրն Հայոց բաշխէին բնդ ամենայն գաւառսն. բայց միայն Մերուժանն չարագործ փախչէր միամի:

Իսկ Մուշեղ զօրավարն հայաստանեաց չրջէր բնդ երկիրն, և աւերէր գաւառուշանսն Մազդեզանցն: Իսկ զմազդեզունսն, որ միանգամ ի բուռն առկին, զամենեսեան տայր հրաման սպարապետն Մուշեղ ունել և հրով խորովել: Եւ բազում բերդակալս բերդացն չարամահս առնէին, և զբազում պատուաւոր տեառս՝ որ պատուակաճ էին առաջի թագաւորին Պարսից՝ ուճէր ձերբակալս Մուշեղ, և տայր մորթել և լցուլ խոտով և կանգնել ի վերայ պարսպացն: Ընդ բազում տեղիս զայս առնէր ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ:

Եւ չինէին զամենայն աւերեալսն ի բշնամեացն, և զեկեղեցիսն նորոգեցին. և թագաւորութիւնն հաղ ևս զհաղ նորոգէր, և իրք ժամանակին հաղ ևս զհաղ յառաջադէմ աճողէին: Եւ սուրբն Ներսէս իմաստուն հայրապետն առաջնորդէր և լուսաւորէր, խրատէր և կարգէր և չինէր ադմատաց հանգիստ, որպէս և ինքն ի բնէ իսկ սովոր էր. և զվարս թագաւորութեանն իսկ յօրինէր ամենաբարի կրօնիւք, որպէս և տեսեալ էր իւր առ հնօրն թագաւորն: Եւ առաւել զկարգս եկեղեցւոյ պաշտամանն եպիսկոպոսաց երիցանց և սարկաւագաց, և շինուածս եկեղեցւոյ և վկայանոցաց զամենայն նորոգեաց ուսոյց և յարդարեաց:

Զօրավարն Հայոց Մուշեղ զգունդ իւր կազմէր, և երթայր ի սահմանսն՝ կալ անդ, զգուշացեալ զսահմանօրն երկրին իւրոյ՝ պահել զիւր աշխարհն հրամանաւ իւրոյ թագաւորին Պապայ:

տալիս, կենդանի չէր թողնում ոչ ոքի, և մինչև բուն սահմանը՝ Աւարպատականի Գանձակ քաղաքը, ամբողջ երկիրը գրավելով պահում էր:

Եվ Հայոց Պապ թագավորը եկավ մտավ Հայոց աշխարհը և թագավորեց նրա վրա. նա առավ բոլոր այն ամուր բերդերը, որ գրավել էին պարսիկները, տիրացավ և Դարոնի բերդին Կոգի երկրում, որտեղ պահվում էին Արշակունիների գանձերը շատ մեծ բանակությամբ, որովհետև բերդապահները հավատարիմ մարդիկ էին: Որովհետև թեպետ այն ժամանակից ի վեր, երբ Հայոց Արշակ թագավորին Պարսկաստան տարան, շարունակ պարսիկները կռվում էին այդ բերդի հետ, սակայն չկարողացան առնել. մինչև որ Պապ թագավորն եկավ Հայոց աշխարհը և գանձն ամբողջապես հասավ Պապ թագավորին: Իսկ Հունաց զորքերը (տեղավորվում էին) Նահանդում և Բախիչում և բաշխում էին Հայոց աշխարհի բոլոր գավառներում[164]. բայց միայն չարագործ Մերուժանը փախչում էր մի ձիով:

Եվ Հայոց Մուշեղ զորավարը շրջում էր երկրում. ավերում էր Մազդեզական ատուշաները, և մազդեզականներին, որոնք որ ձեռ էին անցնում՝ Մուշեղ սպարապետը հրամայում էր բռնել ու կրակով խորովել: Եվ բերդերի շատ բերդապահներ չարաչար մահով սպանում էին, և շատ պատվավոր ազնվականների, որոնք Պարսից թագավորից պատիվ էին վայելում՝ ձերբակալ էր անում Մուշեղը, մորթերը հանել էր տալիս, խոտով լցնել և պարիսպների վրա կանգնեցնել: Այսպես նա անում էր իր հոր Վասակի վրեժն առնելու համար:

Շինում էին բշնամիներից ավերված բոլոր տեղերը, եկեղեցիները նորոգում, և թագավորությունը հնազինետ նորոգվում էր, և գործերը կամաց կամաց կարգի էին գալիս, աճողվում էին: Իսկ սուրբ Ներսեսը, իմաստուն հայրապետը, առաջնորդում, լուսավորում էր, խրատում և կարգավորում, շինում էր ադմատների համար ապաստարան, ինչպես ի բնե սովոր էր. կարգավորում էր և թագավորության վիճակը ամենաբարի կարգերով՝ ինչպես տեսել էր հին թագավորների ժամանակ: Մանավանդ նա բարեկարգեց եկեղեցական պաշտամունքը, եպիսկոպոսների, երեցների և սարկավագների (կյանքը). եկեղեցիների և վկայանոցների շենքերը ամբողջապես նորոգեց ու բարեկարգեց:

Իսկ Հայոց Մուշեղ զորավարը իր թագավորի՝ Պապի հրամանով կազմում էր իր գունդը, գնում էր երկրի սահմանագլուխը՝ և այնտեղ մնում էր՝ զգուշությամբ սահմաններ պահելու, աշխարհը պահպանելու համար:

ՅԱՂԱԴՍ ՋՕՐԱՎԱՐԻՆ ՄՈՒՇԵՂԱՅ ՀԱՅՈՑ, ԹԷ ՈՐՊԷՍ ԱՆԿԱՒ Ի ՎԵՐԱՅ ԲԱՆԱԿԻՆ ՇԱՊՈՒՀՈՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ, ԵՒ ԵՀԱՐ ՋՆԱ Ի ՀԱՐՈՒԱԾՍ ԱՆՀՆԱՐԻՆՆ, ՄԻՆՉ ՋԻ ՄԻԱՁԻ ՇԱՊՈՒՀ ՃՈՂՈՊԵԼ

Ապա Մուշեղ որդի Վասակայ, ստառնելառն Հայոց մեծաց, բնդրեաց իւր առս ընտիրս միամիտս ազատս ազգայինս խառասուն հազար, միաբանս միակամս, և կազմեաց զնոսա ձիով և թոշակաւ և գինու. և առեալ զնոսա բնդ իւր, երթալ նստել ի սահմանս Ատրպատեացն, և պահել զաշխարհն Հայոց: Ապա յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամենայն կազմութեամբ զօրովք իւրովք, եկն եհաս յերկիրն Ատրպատականի. և Մերուժանն առաջնորդ գնդին բանակի նորա, և բուն բանակն ուրեմն թագաւորին ի Թաւրէժն բնակեալ էին:

Եւ հասանէր սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վերայ բանակին խառասուն հազարաւ, և անդէն ձեռն ի գործ արարեալ կոտորէր: Ապա միածի մազապուր թագաւորն Պարսից Շապուհ ճողոպրեալ փախչէր. և զամենայն կարևան բանակին առ հասարակ բնդ սուր հանէր Մուշեղ հանդերձ զօրօքն Հայոց: Ձի բազումս կոտորէին, և զբազումս յաւագանոյն Պարսից ձերբակալս առնէին, և առնուին զգանձս թագաւորին Պարսից յաւարի. և բմբռնէին զտիկնանց տիկինն հանդերձ այլովք կանամբքն: Եւ զամենայն մաշկաւարզան ի բուռն արկանէր Մուշեղ սպարապետն, և զամենայն աւագանին՝ առս իբրև վեց հարիւր՝ հրամայէր մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, և լնուլ խոտով. և տայր բերել առ Պապ արքայն Հայոց: Առնէր զայս ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ:

Բայց զկանայսն Շապհոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ զնոսա ումեք. այլ ժանաւարս տայր նոցա կազմել ամենեցուն, և հանեալ առնակէր զամենեսեան զինետ առն նոցա Շապհոյ արքայի: Եւ ի պարսկացն բնդ նոսա առնակէր, զի երթիցեն առ Շապուհ թագաւորն Պարսից ողջս և անարատս: Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ բնդ բարեբարութիւնն Մուշեղի և բնդ բաւութիւնն և բնդ ազատութիւնն, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցն թշնամանս: Եւ էր ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի, ձերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր գինի ի մատունսն ըմպել, յորժամ ուրախութեանն իւրոյ խրախութիւնս առնէր զօրացն իւրոց, ասէր. «Ձերմակաձին գինի արբցէ: Եւ ետ նկարել զտաշտ ի պատկեր զՄուշեղ ձերմակաւն. և ի ժամ ուրա-

ՀԱՅՈՑ ՄՈՒՇԵՂ ՋՕՐԱՎԱՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՐՉԱՒՎԵՑ ՊԱՐՍԻՑ ՇԱՊՈՒՀ ԹԱԳԱՒՈՐԻ ՎՐԱ ԵՒ ՍՈՍԿԱԼԻ ՋԱՐԻ ՏՎԵՑ ՆՐԱՆ, ԱՅՆՊԵՍ ՈՐ ՇԱՊՈՒՀԸ ՄԻ ՁԻՈՎ ՃՈՂՈՊՐՈՒՄ ԷՐ

Ապա Մուշեղը, Վասակի որդին, Մեծ Հայքի սպարապետը, բնտրեց խառասուն հազար բնտիր և հավատարիմ մարդիկ ազնվականներից և ազգականներից, միաբան և միակամ, պատրաստեց նրանց համար ձի, զենք և ուտեստ, և իր հետ առնելով գնաց Ատրպատականի սահմանում նստեց՝ Հայոց աշխարհը պահպանելու համար: Նույն ժամանակ Պարսից Շապուհ թագավորն էլ իր զորով ամենայն պատրաստությամբ եկավ Ատրպատական աշխարհը. և նրա բանակի մի գնդի առաջնորդն էր Մերուժանը, իսկ թագավորի բուն գունդը մնում էր Թավրեժում:

Եվ Հայոց զորավար ու սպարապետ Մուշեղը իր խառասուն հազարով գալիս հարձակվում էր (Շապուհի) բանակի վրա և կոտորում էր բոլորին: Պարսից Շապուհ թագավորը մի ձիով փախչելով ճողոպրում էր, իսկ բանակի ամբողջ բազմությունը սրի էր անցկացնում Մուշեղը Հայոց զորի հետ: Շատերին կոտորում էին, Պարսից ավագներին շատերին ձերբակալում էին, ավար էին առնում Պարսից թագավորի գանձերը, բռնում էին նաև տիկնանց տիկնոջ՝ մյուս կանանց հետ միասին: Մուշեղը ձեռն էր բերում նաև մաշկավարգանը[165], իսկ մոտ վեց հարյուր ավագների Հայոց Մուշեղ զորավարը հրամայում էր մորթել, մորթերը հանել ու խոտով լցնել, և ուղարկում էր Հայոց Պապ թագավորին: Այսպես նա անում էր իր հոր Վասակի վրեժն առնելու համար:

Բայց Պարսից Շապուհ թագավորի կանանց որևէ անարգանք հասցնել թույլ չէր տալիս Հայոց Մուշեղ զորավարը, այլ հրամայում էր բոլորի համար ժանվարներ պատրաստել և նրանց բոլորին ազատ արձակեց իրենց ամուսնու՝ Շապուհ թագավորի ետևից: Պարսիկներից էլ մարդիկ արձակեց, որ ողջ և անարատ գնան Պարսից Շապուհ թագավորի մոտ: Պարսից թագավորը զարմացավ Մուշեղի բարեբարության, բաբության և ազնվության վրա, որ իրեն ոչ մի անարգանք չհասցրեց կանանց վերաբերմամբ: Այդ ժամանակները Մուշեղը մի ճերմակ ձի ուներ. իսկ Պարսից Շապուհ թագավորը երբ գինու (գավաթը) ձեռն էր առնում, երբ ուրախության ժամանակ իր զորին հյուրասիրում էր՝ ասում էր. «ճերմակաձին թող գինի խմե»: Եվ մի գավաթի վրա նկարել տվեց Մուշեղի պատկերը՝ ճերմակ ձին հեծած, և ուրախությունների ժամանակ

խութեանն իւրոյ դնէր զտաշտն առաջի իւր, և յիշէր հանապազ զնոյն բանս ասելով՝ թէ ճերմակածին գինի արբցէ:

Այլ Մուշեղ և ամենայն զօրքն Հայոց անչափ առին զաւար ի բանակէն Պարսից, և անչափ լցան գանձօք և ստացուածովք. և բազում աւարամասն Պապայ պահէին թագաւորին իւրեանց. և զօրացն Հայոց՝ որ անդէն առ թագաւորին Պապայ էին մնացեալ՝ հանին աւարամասն և զօրավարացն Յունաց՝ որ էին առ թագաւորին Հայոց. սոյնպէս և ամենայն զօրացն տային բաշխիլ ի մեծամեծ աւարացն ածելոցն: Այլ իբրև դարձան զօրքն Հայոց յաշխարհն իւրեանց, բազումք ի զօրացն Հայոց ամբաստանէին առ թագաւորին Պապայ զՄուշեղէ զսպարապետէն, թէ ընդէ՞ր արձակեաց զկանայս թագաւորին Պարսից զքշնամւոյն մերոյ և թագաւորին Հայոց Պապայ. վասն այսր իրաց ոչ ինչ սակաւ լինէր քշնամութեամբ ընդ Մուշեղի մինչև ի բազում ժամանակս:

Գ

ՅԱՂԱԳՍ ՀԱՅՐ ՄԱՐԴՊԵՏԻՆ, ԵԹԷ ՈՐՊԷՍ ՍՊԱՆԱՆԵԼ ՀՐԱՄԱՅԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՆ ՊԱՊ

Ապա պատմեցաւ թագաւորին Պապայ յաղագս օրերացն[142] զոր եղ Հայր Մարդպետն տիկնոջն Փառանձէմայ, մօր թագաւորին Պապայ, քշնամանս ձաղանաց ի բերդարգել պաշարմանն. զի իբրև զբոզ մի, այնպէս քշնամանեաց զնա ի ժամանակի՝ իբրև եմուտ անդր գաղտուկ, և եդ անարգանս տիկնոջն, և եկն ել անտի և փախեաւ. եառն զայս ամենայն զոյց թագաւորին: Ապա մինչդեռ Մարդպետն Հայր գիւրով իշխանութեամբ շրջէր յերկրին Տարօնոյ, և Մուշեղ սպարապետն Հայոց էր ի ձմին գաւառին յիւրում բերդին՝ որում Ողական կոչեն, որ կայ ի վերայ գետոյն Եփրատայ, եկն եհաս մի դեսպան յարքայէն Պապայ առ զօրավարն Հայոց Մուշեղ. և ունէր առ նա հրովարտակ, և գրեալ էր ի հրովարտակին անդր հրաման առ նա, զի չարամանս սատակեսցէ զՀայր Մարդպետն: Եւ նա իբրև զայս հրամանս ընկալեալ ի ձեռն առնոյր, յղէր առ Մարդպետն Հայր դաւով, և մեծարանաց պատճառաբանաւ առ ինքն կոչէր յՈղականն. և էին աւուրք ձմերայնոյ, և սաստկացեալ կցեալ էր գետն Եփրատ: Ապա կոչեալ եղև առ նա Հայր Մարդպետն իբրև ի պատիւ մեծարանաց. եկն եմուտ Մարդպետն ի բերդն յՈղական: Եւ հրաման զօրավարն Մուշեղ զօրականացն ունել զնա, և մերկանալ իբրև ի մօրէ, և կապել գձեռս նորա ի ներոյ ծնկաց նորա, և իջուցանել զնա ի գետն, և դնել ի վերայ սառիճճ կցելոյ գե-

այդ գավաթը դնում էր իր առաջ և շարունակ նույն բանն էր կրկնում— «ճերմակածին բոզ գինի խմե»:

Իսկ Մուշեղը և Հայոց բոլոր զորքը Պարսից բանակի ավարն առան և լիացան գանձերով ու ստացվածքներով. ավարից մեծ բաժին պահում էին իրենց Պապ թագավորի համար, նույնպես և Հայոց այն զորքերի համար, որ մնացել էին Պապ թագավորի մոտ: Ավարից մաս հանեցին նաև Հունաց զորավարների համար, որոնք Պապ թագավորի մոտ էին, այնպես էլ բոլոր զորքերին բաժին[166] էին հանում բերած ավարներից:

Բայց երբ Հայոց զորքերը իրենց աշխարհը դարձան՝ Հայոց զորքերից շատերը Պապ թագավորի առաջ ամբաստանում էին Մուշեղ սպարապետին, թե ինչո՞ւ նա ազատ արձակեց Պարսից թագավորի կանանցը, որ մեր թշնամին է և Հայոց Պապ թագավորի թշնամին: Այս բանի պատճառով (Պապը) երկար ժամանակ ոչ մի՛ք թշնամությամբ էր վարվում Մուշեղի հետ:

Դ

ՀԱՅՐ ՄԱՐԴՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԸ ՀՐԱՄԱՅԵՑ ՆՐԱՆ ՍՊԱՆԵԼ

Ապա Պապ թագավորին պատմեցին այն վիրավորանքների մասին, որ Հայր մարդպետը հասցրել էր Պապ թագավորի մորը՝ Փառանձեմին, այն անարգանքները, որ նա հասցրեց (Փառանձեմի) բերդում պաշարված ժամանակ. որովհետև այդ ժամանակ նա բերդը մտավ գաղտուկ, ինչպես մի բոզի անարգեց տիկնոջը և դուրս եկավ ու փախավ: Այս բոլորը պատմեցին թագավորին: Արդ՝ երբ Հայր մարդպետը շրջում էր իր իշխանության մեջ Տարոն գավառում և Մուշեղն էլ նույն գավառումն էր, իր Ողական ամրոցում, Եփրատ գետի վրա՝ Պապ թագավորից դեսպան եկավ Հայոց Մուշեղ զորավարի մոտ և բերեց նրան մի հրովարտակ: Հրովարտակում հրամայված էր Մուշեղին, որ չարաչար մահով սպանե Հայր մարդպետին: Այս հրամանն ստանալով՝ (Մուշեղը) նենգությամբ մարդ էր ուղարկում Հայր մարդպետի մոտ և հրավիրում էր նրան իր մոտ Ողական ամրոցը մեծարանքի համար: Ձմեռվա ցուրտ օրեր էին, և Եփրատ գետը սառել էր: Հայր մարդպետը, մեծարանքի հրավիրվելով՝ եկավ մտավ Ողական բերդը: Եվ Մուշեղ զորավարը զորքին հրաման տվեց՝ նրան բռնել, մորից մերկ մերկացնել, ձեռքերը ծնկների ներքև կապել, գետն իջեցնել և դնել գետի սառույցի

տոյն. և սատակեցաւ անդէն: Եւ եղև ի վաղիւ անդր չոգան տեսին, զի ուղիղ գլխոյն ի ցտոյն վայրեալ ի բաց իջեալ բափեալ էր ընդ իբս նորա: Եւ փոխանակ ի նորա տեղի հայրութեան մարդպետութեանն զԻրգոգակ ումն անուն, որ յաւուրս Արշակայ թագաւորին կամ Տիրանայ ետր նորա գամու միոջ լեալ նոյն գործ մարդպետութեանն:

Դ

ՅԱՂԱԹՍ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ՈՐ ԵՂԵՒ Ի ԲԱԳԱՒԱՆ ՅԱՒԱՆԻՆ ԲԱԳՐԵՒԱՆԴ ԳԱՒԱՌԻՆ ԸՆԴ ԳԱԳ ԹԱԳԱՒՈՐՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԸՆԴ ՋՕՐՍՆ ՊԱՐՍԻՑ

Ապա յետ այսորիկ թագաւորն Պարսից կրկին լինէր զօրաժողով ամենայն ուժով և ամենայն զօրութեամբն իւրով. խաղայր գնայր ամենայն զօրօք իւրովք նասանէր յաշխարհն Աւորպայականի: Եւ իճն անդր դադարէր սակաւ, և զամենայն զօրացն զբազմութիւն առաքէր ի վերայ թագաւորին Պապայ ի պատերազմ: Եւ եկեալ զօրն Պարսից ասպատակ առնէին և ի միջնաշխարհն Հայոց. ապա և թագաւորն Հայոց Պապ զօրաժողով առնել հրամայէր ի Բագաւանն: Եւ զօրն Յունաց, որ էին յեռանդին ի Բախշանն[43], ի մի վայր ժողովեցան առ թագաւորն Պապ, և ածին փոս զրանական իւրեանց մօտ ի լեառնն ի Նպատ մեր ի գետն Եփրատ, և կազմեալ պատրաստեալ կային զօրծոյ հակառակն:

Ապա զօրավարն սպարապետն Հայոց Մուշեղ ժողովէր զամենայն զօրսն Հայոց առնի ևս բան զրնտուն հազար, և կազմէին պատրաստութեամբ: Իսկ իրև զօրահաւոյցն առնէր Շապուհ Պարսից թագաւորն զզօրս իւր ի վերայ աշխարհին Հայոց և ի վերայ զօրացն Յունաց, Ոտնայր արևայ Աղուանից անդ էր առ թագաւորին Պարսից: Ապա յառաջ կայր և խնդրէր պարգևս Ոտնայր ի Շապհոյ արքայէն Պարսից, և ասէր՝ թէ կամ լիցի էեզ, արանց բաց[44], զի և ինձ պարգև հրամայեսցես, զի Հայոց գնդին Պապայ արքային ես ինձէ՛ ելից իմով գնդովս ճահատակ: Զի Արեաց գնդին պատեհ է դիպան ելանել զօրացն Յունաց, իսկ ես իմով գնդաւս Հայոց իշխանացն ելից: Եւ Շապուհ թագաւորն հաճեցաւ, և շնորհ կալաւ, և հրամայեաց: Բայց Մերուժանայ Արծրունւոյ պատասխանի տուեալ Ոտնայրի, ասաց. Աստ արկեր զգագթ գիրկս. բայց թէ ժողովել կարիցես, մեծ զարմանք իցեն: Եւ գաղտուկ խորհրդով զայս գուշակութիւն Մերուժանն ի ձեռն հրեշտակի առ Մուշեղ զօրավարն Հայոց հասուցանէր՝ թէ գիտեա և պատրաստեաց, Մուշեղ զօրավարն Հայոց հասուցանէր՝ թէ գիտեա և պատրաստեաց, Մու-

վրա: Այնտեղ էլ սատկեց: Մյուս օրը գնացին տեսան, որ ցտից գլխի ուղեղը բթիցը դուրս էր բափել: Նրա փոխանակ Հայր մարդպետի պաշտոնին (նշանակեցին) Դգոյակ անունով մեկին, որ մի անգամ արդեն Արշակ թագավորի կամ նրա ետր Տիրանի ժամանակ, վարել էր նույն մարդպետության պաշտոնը:

Դ

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՅԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԲԱԳՐԱՎԱՆԴ ԳԱՎԱՌԻ ԲԱԳՐԱՎԱՆ ԱՎԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ԳԱԳ ԹԱԳԱՎՈՐԻ ԵՎ ԳԱՐՍԻԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Սրանից հետո Պարսից թագավորը նորից զորաժողով էր լինում բոլոր ուժով ու զորությամբ, և բոլոր զորքերովը շարժվում գալիս հասնում էր Աորպատական աշխարհը: Իճը իչ զորքերով մնում էր այնտեղ, իսկ զորքերի բոլոր բազմությունը պատերազմի էր ուղարկում Պապ թագավորի դեմ: Պարսից զորը գալով ասպատակում էր և հասնում մինչև Հայաստանի միջնաշխարհը: Այն ժամանակ Հայոց Պապ թագավորն էլ հրամայում էր զորաժողով անել Բագավանում: Հունաց զորքն էլ, որ գտնվում էր Նռաեղում ու Բախիչում, եկավ, միասին ժողովվեցին Պապ թագավորի մոտ, իրենց բանակի շուրջը փոս կարեցին Նպատ լեռան մոտ, Եփրատ գետից ոչ հեռու կազմակերպվեցին, պատրաստվեցին ճակատամարտի:

Ապա Հայոց Մուշեղ սպարապետը ժողովում էր հայկական զորքը, ավելի քան իննսուն հազար մարդ, կազմակերպեցին, պատրաստվեցին: Իսկ երբ Պարսից Շապուհ թագավորը իր զորքերը բաժանում էր Հայոց աշխարհի և Հունաց զորքերի դեմ՝ այնտեղ էր պատահում, Պարսից թագավորի մոտ, Աղվանից Ոտնայր թագավորը: Արդ՝ Ոտնայրը առաջ էր գալիս և Պարսից Շապուհ թագավորից պարգև էր խնդրում, ասելով. «Արա՛նց քաջ, շնորհ արա և ինձ իրև պարգև հրամայես առնուր, որ Պապ թագավորի հայկական զորին ես ինքս դուրս գամ սխոյանք իմ գնդով, որովհետև Արյաց գնդին պատեհ և հարմար է Հունաց զորքերի դեմ դուրս գալ, իսկ ես իմ գնդովս Հայոց իշխաններին դեմ դուրս կգամ»: Շապուհ թագավորը հավանություն ավեց, շնորհակալություն հայտնեց ու հրամանը ավեց: Բայց Մերուժան Արծրունին պատասխան ավեց ու ասաց Ոտնայրին. «Դու գազը գրկեցիր, շատ զարմանք կլինի՝ եթե ժողովես»: Եվ Մերուժանը մի մարդու միջոցով գաղտնապես լուր ուղարկեց հայոց Մուշեղ զորավարին. «Գնացիր և պատրաստվի՛ր, Մուշեղ, որ Աղվանից Ոտնայր թագավորը մեծ պարծանքով բեզ պարգև է խնդրել:

շեղ. զի մեծաւ պարծանօք պարգև խնդրեալ է զնեզ Ուռնայրի արքային Աղուանից. արդ գիտես զինչ գործիցես:

Բայց մինչ դեռ խօսեցեալ գային զօրքն Պարսից 'ի վերայ Հայոց, և Ուռնայր արքայ Աղուանից իւրով գնդաւն ընդ նոսա, խօսէր թագաւորն Աղուանից ընդ այնոսիկ՝ որ ընդ իւրն էին. ասէր. Յանձն լիցի ձեզ, յիշելով 'ի ժամանակի՝ իբրև ձերբակալ առաւցուք զզօրսն Յունաց, զրագումս 'ի նոցանէն ապրեցուսիք. զի կալեալս կապեալս տարցուք յաղթանա[45] 'ի գործ կաւագործութեան գաղատաս որմնաշէնս պիտոյից մերոց հաղարաց ապարանից և այլոց պիտոյից: Այլ իբրև եկին հասին մերձեցան 'ի միմեանս գունդքն երկոքեան Յունացն և Պարսից, և հանդերձեալք խառնել ընդ միմեանս, իմնին թագաւորն Հայոց Պապ վառեցաւ կազմեցաւ պատրաստեցաւ, և կամեցաւ 'ի ճակատ ելանել: Ապա չառնոյր զայն նմա յանձն Տերէնտն զօրավարն Յունաց, թէ 'ի ճակատ մտցէ. այլ ասէ. Թագաւորն Յունաց զմեզ վասն fn յղեաց, երթայք զնա պահեցէք. արդ իցէ՝ թէ դեպ ինչ տայցէ, մեք զմեր թագաւորն որո՞վ երեսօք տեսանեմք, կամ զի՞նչ տայցեմք նմա պատասխանի երթ իցէ՝ և մեք աստի առանց fn ապրեսցուք և առ մեր թագաւորն հասանեմք, և լինիցիմք այնուհետև գլխապարտք առաջի մերոյ թագաւորին: Այլ արա դու, արքայ, զոր մեք ասեմք քեզ. առ դու զեպիսկոպոսապետդ Հայոց գներսէս. և ել նիստ 'ի վերայ Նպատ լերինն յամուր և յանկասկած տեղւոջ, և սուրբ արքեպիսկոպոսապետն Ներսէս արասցէ աղօթս և խնդրեսցէ 'ի տեառնէ, զի տէր տացէ մեզ զյաղթութիւն: Եւ 'ի բարձուէն նայեսցիս, և տեսցիր զբան վաստակոց պատերազմին մերոյ զթաւթիւն և զվատութիւն, զոր առաջի fn գործեսցեն:

Ապա թագաւորն Պապ հաւանեցաւ բանիցս այսոցիկ. առ ընդ իւր զմեծ քահանայապետն Ներսէս, և ելանէր նստէր 'ի վերայ Նպատակաց լերինն. և ամենայն զօրքն Յունաց և Հայոց իջանէին 'ի տեղի պատերազմին: Ապա եկն և զօրավարն սպարապետն Հայոց Մուշեղ, և երեր զնշանսն իւր և զզէնն առ Ներսէս եպիսկոպոսապետն, զի օրհնեսցէ զնա, և իջցէ 'ի պատերազմ: Եւ 'ի ժամանակին յայնմիկ յիշեաց թագաւորն Պապ զհին զոյցսն, և ասէ. Յիշեցի ես զայն, զի բարեկամ է Մուշեղն թագաւորին Պարսից Շապհոյ: Ո՛չ այդ այն Մուշեղն է, որ առնակեաց զկանայս թագաւորին Պարսից Շապհոյ հանդերձ ժանուարօք և վաշտականօք. և լուեալ ևս է իմ, թէ 'ի պարսիկս խօսի. արդ մի՛ մտցէ դա 'ի ճակատ:

Ապա զօրավարն Հայոց Մուշեղ բարեխօս առնէր առ թագաւորն Պապ զմեծ քահանայապետն Ներսէս: Իսկ թագաւորն Պապ ասէ ցնայի՛ր թէ ինչ պիտի անես»:

Բայց մինչ Պարսից զօրքերը չվում գալիս էին[167] Հայոց վրա՝ նրանց հետ էր և Աղվանից Ուռնայր թագավորն իր գնդով: Աղվանից թագավորը խոսում էր իր մոտ եղողների հետ և ասում էր. «Ձեզ հիմակվանից հիշեցնում եմ, որ մտերդ պահեք, երբ մենք Հունաց զօրքերը ձերբակալենք՝ նրանցից շատերին կենդանի թողեք, որպեսզի կապենք ու տանինք Աղվանք[168] և իբրև կավագործ, գալատոս և որմնադիր աշխատեցնենք մեր քաղաքների, պարանոցների և ուրիշ պիտույքների համար»:

Երբ երկու գնդերը, Պարսից և Հունացը, եկան իրար մոտեցան և պատրաստվում էին կռվի՝ Հայոց Պապ թագավորն էլ զինվեց ու պատրաստվեց նախատամարտի մեջ մտնելու: Բայց Տերենտը, Հունաց զորավարը, չէր թույլ տալիս, որ Պապ թագավորը կռվի մեջ մտնի: Նա ասաց. «Հունաց թագավորը մեզ ուղարկեց քեզ համար, թե գնացե՛ք նրան պահպանեցե՛ք: Արդ՝ եթե քեզ մի բան պատահի, մենք ի՞նչ երեսով պետք է տեսնենք մեր թագավորին կամ ի՞նչ պիտի պատասխանենք՝ երբ մենք այստեղ առանց քեզ կենդանի մնանք ու մեր թագավորի մոտ հասնենք. մենք գլխապարտ կմնանք մեր թագավորի առաջ: Դու, արքա, արա՛ ինչ որ ասում ենք քեզ, ա՛ռ Ներսես եպիսկոպոսապետին, գնա՛ Նպատ լեռը, մի ամուր անվտանգ տեղ նստի՛ր, և բաղ սուրբ Ներսես եպիսկոպոսապետը աղոթք անե և խնդրե աստծուց, որ մեզ տա հաղթությունը: Այնտեղից բարձրից կնայես և կտեսնես մեր չաքերն ու աշխատանքը պատերազմի ընթացքում, ամեն մեկի քաջությունն ու երկչոտությունը, որ fn առաջ կպատարվին»:

Պապ թագավորը համաձայնեց այս խոսքերին, հետը վերցրեց Ներսես հանճայապետին և ելավ նորից Նպատ լեռան վրա. իսկ Հունաց և Հայոց զորքերն իջնում էին պատերազմի տեղը: Ապա եկավ նաև Հայոց զորավար-սպարապետ Մուշեղը, բերեց եպիսկոպոսապետ Ներսեսի մոտ իր նշաններն ու զենքը, որ օրհնե և իրեք այնուհետև իջնե պատերազմի: Այս ժամանակ Պապ թագավորը հիշեց հին զրույցներն ու ասաց. «Ես հիշեցի, որ Մուշեղը բարեկամ է Պարսից Շապուհ թագավորին: Դա այն Մուշեղը չէ՞, որ Պարսից Շապուհ թագավորի կանանց ազատ արձակեց ժանվարներով ու պահապան վաշտով: Այն էլ եմ լսել, որ պարսիկների հետ բանակցություններ ունի: Թող նա պատերազմ չմանե»:

Այն ժամանակ Հայոց զորավար Մուշեղը դարձավ մեծ հանճայապետ Ներսեսին, խնդրելով բարեխոսել Պապ թագավորի առաջ: Իսկ թագավորն ասում էր Ներսես հանճայապետին. «Դու մի՛ բարեխո-

պիսկոպոսապետն Ներսէս, թէ մի՛ լինիր դու բարեխօս. զի իբրև իջանէ, ի զօրսն Պարսից անկանի: Իսկ նա ևս բաց զնա յաճախէր մատուցանել զբարեխօսութիւնն: Իսկ թագաւորն, բանզի բանիւ ինչ ոչ անցանէր զնորա ի ժամանակին յայնմիկ, ասէ ցՆերսէս. Կամ՛ fo կատարեսցին: Բայց նախ երդումն տուր յաչ fo, զի մեզ մի՛ ստեսցէ, և ապա արձակեսցիր ի պատերազմ: Ապա կոչեն զՄուշեղ զառաջեաւ արքային, և եկն եպագ երկիր արքային. և մատուցեալ բուռն հարկանէր զաջոյ եպիսկոպոսապետին Ներսէսի, և երդնոյր: Սոյնպէս և ի թագաւորին Պապայ ձեռն արկանէր, երդնոյր և ասէր՝ թէ կեցից և մնայց ի վերայ fo որպէս նախնիքն իմ ի վերայ ճախնեացն fոց, որպէս և հայրն իմ ի վերայ հօրն fo Արշակայ, սոյնպէս և ես ի վերայ fo. բայց միայն՝ չարախօսացն ուկն մի՛ դնիցես:

Ապա օրհնէր գնա բահաճայապետն Հայոց Ներսէս բազում օրհնութեամբ: Ապա թագաւորն Հայոց Պապ գերիվարն գիւր և գիւր նիզակն հրամայեաց մատուցանել առն բաջի զօրավարին Մուշեղի. այլ նա ոչ առ. Իմովն, ասէ, գործեցից. ապա դու, արքայ, զինչ և տացես՝ ի ձեռս fo Եմ: Եւ գիւր նշանն և զգէնն մատուցանէր առ Ներսէս, զի օրհնեսցէ: Եւ հեծանէր իւրով գնդաւն հանդերձ, և զամենայն ճակատն Հայոց յարդարեալ յաչմէ զօրացն Յունաց, յաչում թևի նա խաղայր յառաջ:

Իսկ թագաւորն Պապ և եպիսկոպոսապետն Ներսէս կային ի վերայ Նպատ լերինն. և սուրբն Ներսէս զրագուկսն հանապազատարածս ճամբարձեալ յերկինս, խնդրէր ի տեառնէ՝ զի անխայեսցէ տէր ի յուխտ իւր և ի սուրբ եկեղեցիս իւր, զոր պատուական արեամբն իւրով սուգայաւ. և մի՛ տալ զժողովուրդսն ի ձեռս անաստուած հեթանոսաց, զի մի՛ երբէք ասիցեն ի հեթանոսս՝ թէ ո՛ւր է աստուած նոցա: Եւ մինչ դեռ նա զաղօթսն մատուցանէր առ աստուած, խաղացեալ ճակատեալ իբրև գիւր ամենայն զօրին Հայոց բնդդէմ զօրացն Պարսից, իսկ գունդրն մուշեղեան յառաջեալ էան գայլ գունդսն՝ յառաջամուխ տագնապեալ երթային. մինչ զի նայէր թագաւորն և տեսանէր զի բատ սակ անկանէին, մինչ զի ոչ երևէին թագաւորին նշանքն Մուշեղի: Իսկ իբրև չերևել սկսան նշանքն, աղաղակել սկսաւ թագաւորն Պապ առ Ներսէս և ասէ. Դու խրեցեր այրեցեր զիս. զի ասացի ես բանս, մի՛ յղեր զայրն զայն ի գործ պատերազմիս. ահա ի զօրսն Պարսից անկաւ, և արդ մեծամեծ վնաս գործեսցէ: Եւ ասէ եպիսկոպոսապետն Ներսէս. Մի՛, արքայ, մի՛ կարծեր. զի ոչ ստէ մեզ այրն այն. այլ տեսցես էեզէն զհաչուրիւն նորա, զոր գործեսցէ ծառայ fo առաջի fo:

Իսկ թագաւորն Պապ կարի ստիպէր առ եպիսկոպոսապետն Ներսէս ասել՝ թէ ստէպ կաց յաղօթս և աղաչեա զտէր մինչ դեռ խառնուրդս

սիր, որովհետև հետց որ իջնե՝ Պարսից զորհրին կխառնվի»: Բայց (Ներսեսը) ավելի և ավելի էր բարեխոսում: Եվ որովհետև այդ ժամանակ թագավորը նրա ոչ մի խոսքից չէր անցնում՝ ասաց Ներսեսին. «Քոդ fo կամքը կատարվի. բայց նախ պահանչի՛ր fo աչի վրա երդվել, որ մեզ չի դավաճանի, հետո արձակիր որ գնա պատերազմի»: Հետո Մուշեղին կանչեցին թագավորի առաչ. նա եկավ երկրպագեց թագավորին, հետո Ներսես եպիսկոպոսապետի աչը բռնելով երդվեց: Նույնպես բռնեց Պապ թագավորի ձեռքը և երդվեց՝ ասելով. «Ես կապրիմ ու կմեռնեմ fեզ համար, ինչպես իմ նախնիքները fo նախնիքների համար. ինչպես իմ հայրը fo հոր Արշակի համար. ես էլ նույնպես (կմեռնեմ) fեզ համար, միայն թե չարախոս մարդկանց չլսես»:

Այնուհետև Հայոց Ներսես հահանայապետը նրան օրհնեց մեծ օրհնությամբ, իսկ Հայոց Պապ թագավորը հրամայեց իր ձին ու նիզակը մատուցանել Մուշեղ fաչ զորավարին: Բայց նա չառավ. «Ես, արքա, ասաց նա, իմ ուեցածով կգործեմ, իսկ հետո ինչ էլ որ տալու լինիս՝ fo հրամանի տակ եմ»: Բերեց իր նշանն ու զենքը Ներսեսի մոտ, որ օրհնե: Այնուհետև նա ձի հեծավ, իր գնդով Հայոց զորի ճակատը պատրաստեց Հունաց զորի աչ կողմում, և աչ թևում առաչ շարժվեց:

Իսկ Պապ թագավորն ու Ներսես եպիսկոպոսապետը կանգնած մնացին Նպատ լեռան վրա, և սուրբ Ներսես իր մշտատարած ձեռքերը երկինք բարձրացնելով խնդրում էր տիրոջից, որ խնայե իր (հավատացյալների) ուխտին և իր սուրբ եկեղեցիներին, որ ստացել էր իր պատվական արյունով. իր ժողովուրդը չմատնե անաստված հեթանոսների ձեռքը, երբեք հեթանոսները չասեն, թե ո՞ր է նրանց աստվածը:

Մինչդեռ նա աղոթում էր աստծուն, Հայոց բոլոր զորհրի ճակատը կրակի նման գնում էր Պարսից զորհրի դեմ, իսկ Մուշեղի գունդը բոլոր մյուս գնդերից առաչ անցնելով՝ չապա-չապա գնում էր. այնպես որ մինչ թագավորը նայում էր՝ այլևս նրա աչքից բաժնվեց, և Մուշեղի նշաններն այլևս չէին երևում թագավորին: Երբ նրա նշանները դադարեցին երևալ՝ Պապ թագավորը դարձավ Ներսեսին աղաղակելով. «Դու իմ տունս քանդեցիր[169], ինձ վառեցիր. ես ասում էի, թե այդ մարդուն պատերազմի մի՛ ուղարկիր. ահա նա գնաց Պարսից զորհրի հետ խառնվեց և մեզ մեծ վնաս կհասցնե»: Ներսես եպիսկոպոսապետն ասաց. «Այդպես բան մի՛ մտածեր, թագավոր, նա մեզ չի դավաճանի. դու իմոդ կտեսնես այն գործերը, որ ծառադ կգործե fo առաչ»:

Իսկ Պապ թագավորը չատ բախանձում էր Ներսես եպիսկոպո-

են: Իսկ իբրև կարի ձանձրացոյց, ասէ եպիսկոպոսապետն Նեռսէս ցքագաւորն Պապ. եթէ իցէ՝ ուղղեսցես զսիրտ fո առ տէր, գթասցէ ի վերայ fո և ի վերայ աշխարհիս. և իցէ՝ թէ սրբեսցես զfեզ ի պղծութենէ գործոց fոց, ընկալցի և ոչ թողցէ ի ձեռաց զfեզ, և ոչ մատնեսցէ զfեզ ի ձեռն թշնամեացն fոց: Իսկ ես ո՞վ եմ, զի աղաչես դու զիս, իբրև եթէ ես այր մի տառապեալ կարիցեմ հակառակ ընդդէմ կամացն՝ զոր ինչ կամիցի առնել աստուած՝ առնել առ նա աղօթս, զի այնու շրջիցեմ զկամս նորա: Այլ այն՝ որ արար զամենայն յոչընչէ, և ունի զտիեզերս ի ձեռին իւրում և զամենայն բնակիչս նորա իբրև զմարախ, որ չափեաց զերկինս թզաւ և զերկիրս ամենայն բլուր իւով, որ եդ զլերինս ի կշիռս և երարծ զդաշտս կշռորդօք, որ գիտաց զիմաստութիւն Հօր իւոյ և եղև նմա խորհրդակից, որ ընդ Հօրն առնէ զամենայն վճիռ դատաստանաց, դեռ այժմ իսկ զարևելս և զմուտս, զհիւսիսի և զհարաւ եղեալ ի կշիռս, և դեռ զկշիռսն ի վեր ունի. և ըստ մի մի ծանրութեան, յոր կողմ հակեսցէ կշիռն մեղացն, ըստ այնմ և դատի զարարածս իւր: Զի նա գիտէ զչափ արարածոց իւրոց գործոց, և ըստ արժանի գործոց իւրեանց հատուցանէ նոցա. զի դեռ այժմիկ ժամանակ է կշտամբութեան և ժամանակ յանդիմանութեան և ժամանակ դատելոյ. զի դեռ աւդիկ յայսմ ժամու ոչ մարդ ընդ մարդկան ճակատեալ պատերազմին, այլ դատաւորն դատաւորաց յարեաւ դատել զերկիր: Արդ դեռ յայսմ ժամուս ժամանակս դատաստանաց է, ո՞վ է որ կարէ իշխել բանալ զբերան իւր առաջի նորա յայսմ ժամանակիս և կամ ո՞վ է որ գիտէ զմիտս տեառն, զի և խրատու ևս լինիցի նմա. զի ամենայն ինչ ի նմանէն և ի նոյն և նովաւ ամենայն. նմա փառք յաւիտեանս: Զի թէ ըստ գործոց մեղաց մերոց հատուցանէ մեզ տէր, մեզ ընդ դէմ կամաց նորա մի՛ լիցի երբալ, և խնդրել ինչ ի նմանէ. այլ ասել՝ եթէ՝ «Յիրաւունս անցուցեր դու զայս ամենայն ընդ մեզ. արդար ես դու տէր, և ամենայն գործ fո ճշմարիտ են: Ճանապարհք fո ուղիղ են, և ամենայն դատաստանք fո ուղիղ են: Զի զդատաստան արդարութեան ածեր ի վերայ մեր, ըստ ամենայնի զոր ինչ ածեր ի վերայ մեր, զի արդարութեամբ և յիրաւի ածեր ի վերայ մեր վասն մեղաց մերոց: Զի անօրինեցաք և յանցեաք և ապստամբեցաք մեք ի fէն. մեղաք յամենայնի և պատուիրանաց fոց ոչ անսացաք: Ոչ պահեցաք և ոչ արարաք որպէս պատուիրեցեր մեզ, զի բարի գոցուիմ մեք ի fէն. արդ զամենայն՝ զոր արարեր և զոր ինչ ածեր ի վերայ մեր՝ արդար դատաստանաւ արարեր. զի դատաստանք fո ճաղցր են: Արդ մի՛ մատներ զմեզ ի սպառ վասն անուան fո, փրկեա

սապետին, ասելով. «Շատ աղօթք արա, ասածուն աղաչիր՝ մինչ կռիվը շարունակվում է»: Երբ շատ ձանձրացրեց՝ Ներսես եպիսկոպոսապետ ասաց Պապ թագավորին. «Եթե fո սիրտը դարձնես դեպի տերը՝ նա կգթա fեզ վրա և աշխարհիս վրա. եթե fեզ մարես fո պիղծ գործերից՝ fեզ նա կընդունե, իր ձեռից fեզ բաց չի թողնի և fեզ թշնամիներիդ ձեռը չի մատնի. իսկ ես ո՞վ եմ, որ դու ինձ աղաչում ես, իբրև թե ես, մի աղօրմելի մարդ, կարող եմ աստծուն աղօթք անել, որ նա իր կամքից ետ կենա, իր կամեցածիս հակառակ վարվի: Որովհետև նա է, որ ամեն ինչ ոչնչից ստեղծեց, որ բոլոր տիեզերքը իր բնակիչներով իր ձեռքում պահում է ինչպես մարախ: Նա երկինքը թզով չափեց և բոլոր երկիրը՝ բլուրով[170], լեռները կշեռքի առավ, դաշտերը կշեռքի մեջ դրեց: Նա գիտցավ իր նոր իմաստությունը և նրան խորհրդակից եղավ, որ և նոր հետ վճռում է բոլոր դատաստանները: Դեռ այժմ էլ արեվելքն ու արևմուտքը, հյուսիսն ու հարավը դրել է կշեռքի մեջ և դեռ կշեռքը վեր բռնած ունի, և ճայելով թե մեղքերի կշեռքը ո՛ր կողմը կհակվի ամեն մի մեղքի ծանրությամբ՝ ըստ այնմ էլ նա կդատե իր արարածներին: Որովհետև նա գիտե իր արարածների գործերի չափը և ամեներին կհատուցանե համապատասխան իրենց գործերին, որովհետև ներկայումս ժամանակ է նախատելու, հանդիմանելու և դատելու, որովհետև ներկայումս ոչ թե մարդիկ են դուրս եկել միմյանց դեմ նակատելու և պատերազմելու, այլ դատավորների դատավորն է վեր կացել երկիրը դատելու: Ուրեմն այս ժամը դատաստանի ժամանակն է: Ո՞վ կհամարձակի այս ժամին իր բերանը բանալ նրա առաջ, կամ ո՞վ է, որ տիրոջ միտքը գիտե և դեռ խրատ էլ կտա նրան. որովհետև ամեն ինչ նրանից է և նրանով է, և նրան փառք հավիտյանս: Որովհետև երբ տերը մեզ հատուցանում է համաձայն մեր գործերի՝ մենք չենք կարող նրա կամքի դեմ գնալ և նրանից որևէ բան խնդրել, այլ պետք է ասենք. «Իրավացի կերպով այս բոլորը մեզ վրա բերիր. արդար ես դու, տեր, և բոլոր fո գործերը ճշմարիտ են: Քո ճանապարհները ուղիղ են, բոլոր դատաստանները ուղիղ են, որովհետև մեր նկատմամբ արդար դատաստան արեցիր ըստ ամենայնի, արդարությամբ և իրավացիորեն կատարեցիր մեր մեղքերի համար: Որովհետև մենք անիրավություն ու հանցանք գործեցինք և ապստամբվեցինք fո դեմ, ամեն ինչում մեղք գործեցինք և fո պատվիրաններին չենթարկվեցինք: Պաս չպահեցինք և արարողություններ չկատարեցինք, ինչպես պատվիրեցիր մեզ, որ մենք fեզանից բարիք գտնենք: Արդ՝ այն ամենը, ինչ որ կատարեցիր և ինչ որ մեզ վրա բերեցիր, արդար դատաստանով կատարեցիր, որովհետև fո դատաստանները ճանելի են: Արդ՝ մեզ մի՛ լքիր խպայո, fո անվան

զմեզ վասն սմանչելեաց քոց, և փառաւոր արա զաճուն ք., տէր. զի մի՛ երբէք ամաչեսցեն ոյք յուսացեալ լինին ի քեզ: Ամաչեցեալ լիցին բռնութիւնք նոցա, և ամենայն զօրութիւնք նոցա խորտակեսցին. ծանիցեն զի դու ես տէր աստուած միայն, որ փառաւորեալդ ես ի վերայ ամենայն տիեզերաց»: Եւ յամենայնի ամենևին ք. միայնոյ կատարեցին կամք ք. ամենազօր, որ ճզօրդ ես և կարող և արդար յամենայնի, և սիրես ողորմել նեղելոց և տագնապելոց: Ջօգուտն մեր դու գիտես, տէր, և պատրաստել մեզ որպէս և քեզ հաճոյ իցէ. զի եթէ իցէ մեզ օգուտ նեղութիւնք յաճախեա մեզ. և եթէ հաճոյ է առաջի ք. ողորմութիւն, շնորհեա մեզ: Զի որպէս իցեն կամք տեառն յերկինս, սոյնպէս և կատարեսցէ. և որով գաւազանաւ կամիցիս խրատել, ի ձեռն ք. եմք յամենայն ժամ: Քաւեա, տէր, զանօրէնութիւնս զմեղս և զյանցանս ծառայից ք. զի ո՞վ իցէ այն մարդն, որ ոչ յանցանիցէ կամ մեղանչիցէ առաջի ք. զի ոչ ոք իցէ արդար ի վերայ երկրի, և ոչ ոք է մինչև ի մի: Զի դու միայն ես, որ առանց մեղացդ ես. ք. միայն արդարութիւն, որ արարեր զմեզ յոչընչէ, և ածեր զմեզ յայս կենդանութիւն, և ցուցեր մեզ ճանապարհս կենաց և փրկութեան և զնոսս այսպէս իմաստունս և խօսունս արարեր. և եղեր ընդ մեր փրկանք, զի անմահութեան վիճակին հասուսցես զմեզ: Յիշեա զեկեղեցի ք՝ զոր ք. սուրբ արեամբդ սաացար, զի մի՛ զնուիրեալսն ք ի ձեռս չանց մատներ[46], այլ յամենայնի է ողորմութիւն ք., դարձցի սրտմտութիւն բարկութեան ք. յուխտէ ք-ումմէ, և փրկեա զեկեղեցի ք., տէր աստուած մեր:

Արդ մինչ դեռ կայր ի վերայ լերինն, զայս և այսպիսի և որ ինչ նման է այս բանից՝ աւելի և բազում հան զսոյն խօսեցաւ, մինչ դեռ կայր առ նմա բազառն Պապ ի վերայ լերինն, բազում և ազգի ազգի և պէսպէս աղօթս մատուցանէր մինչև ցերեկոյն և ի մտանել արեգականն, մինչև վաղճանեցաւ ճակատն:

Այլ ի պատերազմին օգնական աստուծոյ հասանէր ի վերայ Յունացն, և Հայաստան գնդին լինէր յաղթութիւն, և ի պարտութիւն մատնեցաւ գունդն Պարսից, դարձան ի փախուստ, ցրուեցան սփռեցան դաշտաց՝ լերանց բարձանց՝ խորոց ձորոց: Ապա զնետ նոցա լինէին զօրն Յունաց և Հայոց. հասանէին, զմեծ և զփոքր առ հասարակ սատակիէին. բայց սակաւ ի բազմաց բաչաձիք փախստեայ լինէին: Ապա զնետ լինէին փախստէիցն զօրն Հայոց, և մինչև ի Գանձակ յԱտրպատական ի սահմանս Հայոց հալածէին զզօրսն Պարսից. ընդ փախուցեալսն զբազումս սատակէին զճանապարհայն: Եւ Մուշեղ սպարապետն Հայոց հարկանէր զզօրսն Պարսից ի հարուածս աննիւթարին.

համար, փրկի՛ր մեզ ք. հրաշիւրեր համար և փառաւոր արա ք. անունը, տեր որպեսզի չամաչեն նրանք, ովքեր քեզ հետ հույս են կապել. նրանց բռնությունները թող ճնաստանան, նրանց ամբողջ զորությունը թող խորտակվի, ոչնչանա, որովհետև միայն դու ես տեր աստվածը, որ փառավորված ես ամբողջ տիեզերքի վրա: Եվ ամեն բանում ամբողջովին միայն ք. ամենազոր կամքը կկատարվի, որ հզոր են, կարող և ամեն ինչում արդար և սիրում են ողորմել նեղյալներին ու տագնապյալներին: Դու ես իմանում մեր օգուտը, տե՛ր, և պատրաստում ես մեզ համար, ինչպես որ քեզ հաճելի է: Եթե նեղությունները մեզ օգտակար են, հաճախակի դարձրու, և եթե հաճելի է քեզ ողորմությունը, շնորհիր մեզ:

Ինչպես որ տիրոջ կամքը երկնքում է, այնպես էլ թող կատարի: Եվ ինչ գավազանով էլ կամենաս մեզ խրատել, միշտ ք. ձեռքում ենք: Քավիր, տե՛ր, ք. ծառաների այս անօրինությունները, մեղքերն ու հանցանքները: Որովհետև ո՞վ է այն մարդը, որ ք. հանդեպ հանցանք կամ մեղք չի գործում. ոչ ոք երկրի վրա արդար չէ, ո՛չ մեկը: Դու ես միայն, որ առանց մեղքերի ես, և արդարությունը միայն քոնն է, դու մեզ ոչնչից ստեղծեցիր ու մեզ այս կենդանությանը արժանացրիր և մեզ ցույց ովիր կյանքի ու փրկության ճանապարհները և հողեղեններիս այսպես իմաստուն ու խոսուն ստեղծեցիր: Եվ դարձար մեր փրկանքը, որպեսզի անմահության վիճակին հասցնես մեզ: Հիշի՛ր ք. եկեղեցին, որ ք. սուրբ արյունով ստացար, և քեզ ընվիրվածները շների ձեռքը մի՛ մատներ. ամեն ժամանակ դու ողորմած ես, ք. սրտմտությունն ու բարկությունը ք. ուխտից հեռացրո՛ և փրկի՛ր ք. եկեղեցին, տեր աստված մեր»:

Այսպես, լեռան վրա կանգնած, այս և սրանց նման և էլ ավելի բաներ խոսեց (Ներսեսը) մինչ բագավորի հետ կանգնած էր լեռան վրա. բազմաթիվ ու տեսակ տեսակ աղոթքներ էր անում մինչև երեկո, արեգակի մայր մանելը, մինչև կռիվը վերջացավ:

Իսկ պատերազմի մեջ աստծու օգնությունը հասնում էր հույներին և հաղթություն էր շնորհվում հայկական գնդին: Պարսից գնդերը պարտություն կրեցին, փախուստի դիմեցին և ցրվեցան սփռվեցին դաշտերում, լեռների կատարներում, խորերում և ձորերում: Նրանց հետամուտ էին ելնում Հույնց և Հայոց զորքերը, հասնում կոտորում էին մեծ և փոքր առնասարակ. շատերից էշերը, որոնք լավ ձիաներ ունեին՝ կարողացան փախչել: Փախստականների եռակից էին ընկնում Հայոց զորքերը և շատերին կոտորում էին ճանապարհին, և այսպիսով Պարսից զորքերին հալածում էին մինչև Ատրպատական, Հայաստանի սահմանները:

ապաս առաբեալ և դիպէր գնդին Աղուանից, և առ հասարակ զամենայն զգօրսն սատակէր: Եւ հասանէր Ուռնայրի արքային Աղուանից ՚ի փախստեանն, և նիզակաբնաւն ՚ի կառափն մատուցեալ ծեծէր բազում, ասելով՝ թէ այդմ շնորհս կալ[47], զի այր թագաւոր ես և թագ ունիս. ես ոչ սպանից զայր թագաւոր, թէ կարի նեղ հասցէ ինձ: Եւ ոյր հեծելով թոյլ ետ նմա փախչել երթալ գնալ յաշխարհն Աղուանից:

Այլ յորժամ դարձան ամենայն զօրքն Հայոց, ոչ գոյր չափ գլխահոյն ախոյենիցն՝ զոր բերեալ էր առաջի թագաւորին Հայոց Պապայ զօրավարն Հայոց Մուշեղ: Սոյնպէս ըստ իւրաքանչիւր չափու ամենայն նախարարքն և մեծամեծքն և բովանդակ ամենայն զօրքն. և եղև մեծ յաղթութիւն յերկրին Հայոց, և ՚ի մէջ զօրացն Յունաց: Նոյնպէս լցան բազում աւարաւ գանձուցն գինու և զարդու, ոսկւով և արծաթով և բազում կարասեաւ, ձիովք և ջորեօք և ուղտօք, զոր ինչ թափեցին. զի ոչ գոյր քիւ կամ չափ, այլ կարի բազում էր յոյժ:

Բայց ապա ամբաստան լինէին խստութեամբ առ մեծ թագաւորն Պապայ զզօրավարէն Մուշեղի և ասէին՝ թէ գիտեա, արքայ, զի մեծաւ նենգութեամբ է ընդ քեզ, և քեզ մանու սպասէ. զի զքո թշնամիսն համակ արձակէ, զի զբազումս բազում անգամ ՚ի բուռն արկեալ՝ սովոր է արձակել զթշնամիսն. զի զՈւռնայր արքայ արձակեալ, թոյլ ետ ապրել, ՚ի բուռն արկեալ զնակառակորդս քո: Եւ վասն այսր իրաց բազում անգամ լինէր գժտութիւն թագաւորին Պապայ ընդ զօրավարին Մուշեղի. և բազում անգամ յանդիմանէր զնա վասն այսր իրաց: Իսկ զօրավարն Մուշեղ տայր պատասխանի թագաւորին Պապայ, և ասէր՝ եթէ զիմ զրնգերսն զամենեսեան ես կոտորեցի. իսկ որ թագս ունէին՝ նոքա իմ ընգերք չէին, այլ քո. եկեսցես որպէս ես զիմսն սպանի, դու զքոյսն. այլ իմ յայր թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբէք որ թագ ունի, և ոչ ձգեմ, և մի՛ այլ ձգել լիցի: Եթէ կամիս սպանանել զիս, սպան. այլ ես, եթէ գայ ինձ ՚ի ձեռն երբէք այր թագաւոր՝ որպես եկն բազում անգամ, ես ոչ սպանանեմ զայր թագաւոր՝ որ գամ մի ,թագ ունի, եթէ ոք իսկ զիս սպանցէ:

Թագաւորն Պապ իբրև լսէր զբանս զայս, յարուսաւս հարեալ, և յարուցեալ ՚ի գահոյիցն, բուռն հարկանէր զՄուշեղէ. արկանէր զնովաւ գիրկս և լայր ՚ի վերայ պարանոցին Մուշեղի, և ասէ. Մահապարտ են այնոքիկ՝ որ իշխեն խօսել չարութիւն զՄուշեղէ, զառնէ քաջէ և զպատուականէ: Զի այր՝ որ ազգաւ պատուական է իբրև զմեզ, և նախնիքն դորա իբրև զնախնիսն մեր, և բողեալ նախնեացն դորա զթագաւորու-

Իսկ Մուշեղ Հայոց սպարապետը չարաչար կոտորում էր Պարսից զօրքերը և աչք պահելով հանդիպում էր Աղվանից գնդին և բոլոր զօրքերը չարդում էր. հասնում էր Աղվանից Ուռնայր թագավորին՝ մինչև նա փախչում էր: Մոտենալով՝ իր նիզակի կոթով երկար ծեծում էր նրա գագաթը՝ ասելով «Շնորհակալ եղիր, որ թագավոր մարդ ես, գլխիդ թագ ես կրում. ես թագավոր մարդու չեմ սպանի՝ մինչև անգամ եթե շատ նեղն էլ ընկնեմ»: Եվ թույլ տվեց նրան ութ ձիավորի հետ փախչել գնալ Աղվանից աշխարհը:

Իսկ երբ Հայոց բոլոր զօրքերը ետ դարձան՝ քիվ չկար ախոյանների այն գլուխներին[172], որ Հայոց Մուշեղ քաջ զօրավարը բերել էր Հայոց Պապ թագավորի առաջ: Այնպես էլ բոլոր նախարարներն ու մեծամեծները և ամբողջ զօրքը, ամեն մեկն իր չափին: Եվ մեծ հաղթություն եղավ Հայոց աշխարհի և Հունաց զօրքի համար: Նրանք լիացան մեծ ավարով—գանձերով, գեներով, զարդերով ոսկով ու արծաթով, շատ կարասիներով, ձիերով, ջորիներով և ուղտերով, որ խլեցին (պարսիկներից): Ավարը շատ շատ էր. նրան քիվ ու չափ չկար:

Բայց Մուշեղ զօրավարին խստությամբ ամբաստանում էին Պապ մեծ թագավորի առաջ ասելով. «Պետք է գիտենաս, արքա, որ շատ նենգությամբ է վարվում (Մուշեղը) քեզ հետ և քո մանվան է սպասում, որովհետև նա քո թշնամիներին շարունակ ազատ արձակում է. շատ անգամ իր ձեռքն է ձգել թշնամիներիդ, բայց էլի արձակել է. որովհետև նա Ուռնայր թագավորին արձակեց և կյանքը բաշխեց քո հակառակորդի, որ իր ձեռքումն էր»: Այս պատճառով հաճախ գժտություն էր պատահում Պապ թագավորի և Մուշեղ զօրավարի մեջ, և շատ անգամ այս պատճառով (Պապը) հանդիմանում էր նրան: Իսկ Մուշեղ զօրավարը պատասխան էր տալիս Պապ թագավորին և ասում էր. «Ես իմ ընկերներին՝ բոլորին կոտորեցի, իսկ նրանք որ թագ էին կրում, իմ ընկերները չէին, այլ քո. ե՛կ, ինչպես ես իմ ընկերներին սպանեցի՝ այնպես էլ դու քոնը, բայց ես թագավոր մարդու վրա, որ գլխին թագ է կրում՝ ոչ ձեռք եմ մեկնել և ոչ մեկնում եմ և ոչ էլ կմեկնեմ: Եթե ուզում ես ինձ սպանել՝ սպանի՛ր, բայց ես, եթե երբևիցե մի թագավոր մարդ ձեռքս անցնի, ինչպես շատ անգամ պատահել է՝ ես չեմ սպանի թագավոր մարդու, որ թագ է կրում, թեկուզ ինձ էլ սպանեն»:

Պապ թագավորը երբ այս խոսքերը լսեց՝ արտասվեց, գահույքից վեր կացավ, բռնեց Մուշեղին, փաթաթվեց նրան և լաց եղավ Մուշեղի վզին փաթաթված, և ասաց. «Մահապարտ են այն մարդիկ, որոնք հանդգնում են շար բերան բանալ Մուշեղի՝ այս քաջ և պատվական մարդու մասին: Նա մի մարդ է՝ որ ծագումով մեզ չափ պատվական է, և

թիւեն ձենաց աշխարհին, եկեալ առ մեզ նախնիքն՝ ի նախենացն մերոց ի վերայ կեցեալ և մեռեալ են, և հայր սորա ի վերայ ճօրն իմոյ մեռաւ, և սա միամտութեամբ մինչև ի մահ վաստակեալ է, և բազում անգամ աստուած ետ մեզ յաղթութիւն յաղօթս և ի խնդրուածս ճօր մերոյ սմանչելւոյն Ներսիսի, ի ձեռն դորա շնորհեցաւ բազում խաղաղութիւն, զիա՞րդ ասեն ցիս զայս բանս եթէ՝ Մուշեղ ինձ մահու սպասէ. սա աւասիկ այր իրաւախոհն է, զի յօտար տեառնէ վասն բարեկամութեան խնայեաց, զիա՞րդ դա ի բնակ տեառս ձեռն ձգէր: Յայնմ ժամանակի բազում պարգեւս և պատիւս և բազում գեղեցիկ զօրավարին Մուշեղի Պապն շնորհէր:

ե

ՅԱՂԱԳՍ ՄԻՒՍՈՑ ԳԱՅԵՐԱՁՄԻՆ ՀԱՅՈՑ ԸՆԴ ԳԱՐՍ Ի ԳԱՆՁԱԿ ԱՏՐԳԱՅԱԿԱՆԻ. ԵՒ ՎԱՍՆ ԳՈՒՇԱԿՈՒԹԵԱՆՆ ՈՒՌՆԱՅՐԻ, ԶԻ ՅԱՅՆՄ ԵՒՍ ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ԼԻՆԷՐ ՀԱՅՈՑ ԳՆԴԻՆ

Ապա լինէր գուշակ Մուշեղի Ուռնայր արքայ Աղուանից, յղէր առ նա նրեշտակ և տայր նմա տեղեկութիւն. ասէր. Մեծ շնորհակալութիւն ունիմ փոխանակ զի ոչ սպաներ դու զիս. և աստուած էած զիս ի ձեռս ֆո, և դու անխայեցեր. զայս սէր ֆո ոչ մոռացայց մինչև իցեմ ես: Բայց գուշակեալ իմ էիզ, զի Շապուհ թագաւորն Պարսից ամենայն զօրօք իւրովք կազմի գալ անկանել յանպատրաստից եկն ի վերայ ֆո: Ապա ստուտն Յունաց կազմեաց զօրս իւր՝ որ ընդ իւրով ձեռամբ էին, և խաղացոյց տանել գնալ ի սահմանս Հայոց ի Գանձակէ կուսէ յատարպայական տանէ: Սոյնպէս և Մուշեղ սպարապետն գումարեաց ի մի վայր զզօրսն ամենայն Հայոց. և էին կուռ վառեալ իննսուն հազարք ընդիրք նիզակ ի ձեռն. թող զսպարակիրս: Եւ սոֆա վաղագոյն քան գուշակութեան անապարեցին հասին յիւրեանց սահմանն, բայց միայն թագաւորն մնաց անդէն ի Հայոց աշխարհին: Եւ եպիսկոպոսապետն Ներսէս անդէն մնայր յաշխարհին, և խնդրուածս առնէր ընդ ամենայն աշխարհին. հրամայէր վասն զօրացն որ էին ի պատերազմին:

Իսկ թագաւորն Պարսից Շապուհ գայր հասանէր ամենայն զօրօճ իւրովք ի տեղի պատերազմին, և գտանէր զզօրսն Յունացն և զգունդն Հայոց, զի կազմեալ պատրաստեալ էին ի գործ պատերազմին: Եւ լինէին խառնուրդք ճակատուն. ի պատուհասիւ մատնեցան զօրճն Պարսից: Մանաւանդ գունդք նիզակաւորացն յարձակեալք մոլեգնեալք, ֆութեամբ զախոյեանս ի վերուստ յերիվարացն յերկիր կործանէին

սրա նախնիքն մեր նախնիքն մեր նախնիքն էին. սրա նախնիքն քողել են ձենաց աշխարհի թագավորութիւնն ու եկել են մեզ մոտ ապրել ու մեռել են մեր նախնիքն համար. սրա հայրը իմ հոր համար մեռավ, և սա հավատարմությամբ ծառայել է մեզ. և շատ անգամ աստված, մեր հոր՝ սմանչելի Ներսեսի աղոթքներով ու խնդրվածքներով, մեզ հաղթություն շնորհեց սրա ձեռով և խաղաղություն մեզ տվեց: Ինչպես կարող են ինձ ասել, թե Մուշեղը ֆո մահվան է սպասում. սա արդարամիտ մարդ է. եթե սա օտար թագավորներին խնայեց իր ազնվականությամբ, ինչպե՞ս կարող է ձեռ բարձրացնել իր բնիկ տերերի վրա»: Եվ ապա Պապ թագավորը մեծ պարգևներ ու պատիվներ և շատ գյուղեր էր պարգևում Մուշեղ զորավարին:

ե

ՄՅՈՒՍ ԳԱՅԵՐԱՁՄԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԵՐԻ ԵՎ ԳԱՐՍԿՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԱՏՐԳԱՅԱԿԱՆԻ ԳԱՆՁԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ. ՈՒՌՆԱՅՐԻ ԼՈՒՐ ՀԱՂՈՐԴԵԼԸ. ՀԱՅՈՑ ԱՅՍ ԱՆԳԱՄ ԷԼ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆ ՏԱՆԵԼԸ

Ապա Աղվանից Ուռնայր թագավորը գաղտնի լուր էր ուղարկում Մուշեղին. նրա մոտ մարդ էր ուղարկում և տեղեկություն էր հաղորդում, ասելով. «Շատ շնորհակալ եմ էիզանից, որ ինձ չսպանեցիր. աստված ինձ ֆո ձեռը տվեց, բայց դու ինձ խնայեցիր, այս ֆո սերը չեմ մոռանա՝ քանի կենդանի եմ: Բայց իմաց եմ տալիս էիզ, որ Պարսից Շապուհ թագավորը պատրաստվում է բոլոր իր զորքերով անսպասելի կերպով հարձակվել ֆո վրա»: Այն ժամանակ Հունաց ստրատելատը կազմակերպեց իր ձեռի տակ եղած զորքերը և շարժեց տարավ Ատրպատական աշխարհից՝ Գանձակի կողմից դեպի Հայաստանի սահմանները: Այնպես էլ Հայոց Մուշեղ զորավարը մի տեղ ժողովեց Հայոց բոլոր զորքերը, որոնք քսանուն հազար ընտիր մարդիկ էին, լավ զինված, նիզակները ձեռքերին, չհաշված սպարակիրներին: Սրանք էլ, սահմանված տեղեկության համաձայն, շտապով վաղօրոք հասան իրենց սահմանները. միայն թագավորը մնաց Հայոց աշխարհում: Ներսես եպիսկոպոսապետն էլ մնաց աշխարհում և հրամայում էր՝ բոլոր աշխարհում աղոթք անել այն զորքերի համար, որ գնացել էին պատերազմի:

Իսկ Պարսից Շապուհ թագավորը իր բոլոր զորքերով գալիս հասնում էր պատերազմի տեղը, և տեսնում էր, որ Հունաց զորքերը և Հայոց գունդը արդեն կազմ և պատրաստ են պատերազմին: Երկու ճակատները խառնվում էին իրար, և Պարսից զորքը պարտություն կրեց: Մա-

յանդիման թագաւորին Պարսից Շապհոյ. և ընդ ընկենուլն խրախոյս բառնային աղաղակելով ամենայն զօրն պատերազմիկք Հայոց համակ, զայս բանս ասելով, եթէ՝ առ Արշակ էաջ: Ջի զամենայն ախոյեանսն, զոր ՚ի ճակատուն յայն սպանանէին, նմա նուիրէին իւրեանց առաջի թագաւորին Արշակայ. զի զամենայն զոր սպանանէին, ասէին. Արշակայ թագաւորին մեռոյ զոհ լիցիր: Եւ յորժամ Հայոց ազատանոյն ախոյեանացն նիզակաւորացն ոազմ արարեալ յարձակեալ, զզօրսն Պարսից նիզակաւորն առեալ ընկենուին, ասէին ՚ի խրախուսելն. Առ Արշակ էաջ: Իսկ յորժամ զենեալ գխատէին զախոյեանսն՝ ասէին. Արշակայ զոհ լիցիր:

Եւ լեգէոն զօրուն բազմութիւնն, այս ինքն Յունաց զօրացն սպառակիրն, սոյնպէս և Հայոց սպառակիրն զթիկունս ունէր զօրացն Հայոց, վանանօք փակեալք զինքեամբք՝ իբրև զամուր բաղաք ինչ ՚ի թիկանց լինիցի: Յորժամ տարածանէին ինչ զօրն Պարսից զզօրսն Յունաց և կամ զգունդ նիզակաւորացն Հայոց, ի՛ լեգէոն վանանաւորացն Յունաց կամ ՚ի սպառակիրն Հայոց իբրև ՚ի բերդ մտեալ հանգչէին: Իսկ յորժամ ոգի առեալ սակաւ մի, և անդուստ ելեալ յարձակէին, անթիւս ՚ի զօրացն Պարսից ընկեցեալ առաջի իւրեանց ոտից սատակեալս գըլխատէին. խրախուսելով ՚ի նոյն բանս՝ յԱրշակ թագաւորն իւրեանց, անչափս և անթիւս ՚ի զօրացն Պարսից կոտորեցին: Եւ յորժամ դարձալ սակաւիկ մի ինչ յաղթահարէին զնոսա զօրն Պարսից, և նոքա իբրև ՚ի բերդ ամուր դիմէին ՚ի լեգէոն, ՚ի զօրսն վանանաւորս, և նոցա բացեալ զվանանսն՝ զնոսա ՚ի մէջ առեալ փակէին: Եւ յայնմ աւուր հարկանէին սատակէին զզօրսն Պարսից զօրն Յունաց, և Տէրէնոն սատաւելատ նոցա, և գունդքն Հայոց և Մուշեղ սպարապետ նոցա: Եւ սակաւուք փախչէր Շապուհ թագաւորն Պարսից ՚ի պատերազմէ անտի. և նոցա սահմանապահս կացուցանէին, և ինքեանք առ իւրեանց թագաւորն Պապ դառնային մեծաւ անուամբ, և բարի աւարաւ, և ճոխակապ շքեղութեամբ:

Այլ Շապուհ թագաւորն յորժամ յաշխարհն իշխանութեանն իւրոյ հասանէր, զարմացեալ ընդ բաղութիւն գնդին կոտոյն որ դիպեցաւ նմա, և ասէր՝ եթէ զարմացեալ եմ ես զոր ինչ տեսի. զի իմ ՚ի մանկութենէ իմմէ համակ ՚ի ճակատու և ՚ի կռիւ մտեալ եմ, և բազում ամք են՝ զի հասի ՚ի թագաւորութիւն, և առանց կռուոյ ամ չեմ լեալ. բայց իմ չերմ կռիւ զայս էր տեսեալ, որ այս անգամս դիպեցաւ ինձ: Ջի յորժամ Հայոց նիզակաւորն առաջի կարգէին, այսպէս յարձակէին որպէս զլեառն մի բարձր և կամ որպէս զաշտաբակ մի հաստաբեստ ճզօր և անշարժ. և յորժամ մեք զնոսա սակաւ մի շարժէաք, նոքա ՚ի լեգէոն

նավանդ նիզակավորների գնդերը մոլեգնաբար հարձակվելով՝ իրենց ձիերի վրայից հարվածելով՝ բաղութեամբ գետին էին գլորում իրենց ախոյաններին Պարսից Շապուհ թագավորի դեմուդեմ: Երբ գետին էին գլորում՝ Հայոց բոլոր զորերը բաշալերական ձայնով աղաղակում էին—«Քաջ Արշակի համար»: Ամեն անգամ որ այդ պատերազմում մի ախոյան էին սպանում՝ նրան էին նվիրում, իրենց նախկին թագավոր Արշակին, ասելով. «Մեր Արշակ թագավորին մատաղ եղիր»: Երբ Հայոց ազատների նիզակավոր ախոյանները խմբովին հարձակվում էին Պարսից նիզակավորների վրա ու վեր էին գլորում բաշալերութեամբ ասում էին. «Քաջ Արշակի համար». իսկ երբ այս ախոյաններին մորթում՝ գլխատում էին՝ ասում էին. «Արշակ թագավորին մատաղ եղիր»:

Իսկ լեգեոնների[173] զորի բազմությունը, այսինքն Հունաց ասպարակիր զորը, նույնպես և Հայոց ասպարակիրները պահպանում էին Հայոց զորի թիկունքը. վահաններով պատսպարված լինելով, ինչպես մի ամուր բաղաք (կովողների) թիկունքում: Երբ Պարսից զորերը փոքր ինչ վանում էին Հունաց զորերին կամ Հայոց նիզակավոր գնդերը՝ սրանք Հունաց վահանավոր լեգեոնների կամ Հայոց ասպարակիրների [illegible] էին մտնում ինչպես բերդերի մեջ և հանգչում էին: Իսկ երբ մի փոքր չունչ էին բաշում՝ ապա այնտեղից դուրս գալով հարձակվում էին և պարսիկներից անթիվ մարդիկ իրենց ոտների տակ էին գլորում և սպանում ու գլխատում էին՝ նույն բաշալերական խոսքերն ասելով իրենց Արշակ թագավորի համար: Այսպիսով նրանք անչափ և անթիվ զորեր կոտորեցին պարսիկներից: Հետո երբ պարսիկները փոքր ինչ նրանց հաղթում էին՝ նրանք դարձյալ իրեն մի բերդ ապաստանում էին լեգեոնի վահանավոր զորերի մեջ, որոնք իրենց վահանները բաց անելով նրանց ներս էին ընդունում ու փակում: Այդ օրը Հունաց զորն ու նրանց Տէրէնոն սատաւելատը և Հայոց գնդերն ու նրանց Մուշեղ սպարապետը Պարսից զորերը չարդեցին, ոչնչացրին: Պարսից Շապուհ թագավորը փիչ մարդկանցով փախչում էր այդ պատերազմից: Իսկ սրանք սահմանապահներ էին դնում և իրենք դառնում էին իրենց Պապ թագավորի մոտ բարի անունով, մեծ ավարով և շքեղությամբ:

Իսկ Շապուհ թագավորը երբ հասնում էր իր իշխանության երկիրը՝ զարմանք էր հայտնում կովող գնդի բաշության վրա, ինչ որ իրեն տեսավ: «Զարմացել եմ ես, ասում էր նա, իմ տեսածիս վրա: Մանկությունից ի վեր միշտ կռվի ու պատերազմի մեջ եմ եղել, շատ տարի է որ թագավոր եմ դարձել, և տարի չեմ անց կացրել առանց կռվի, բայց չերմ կռիվ այս էր, որին այս անգամ պատահեցի: Որովհետև երբ Հայոց նիզակավորները առաջ էին գալիս՝ այնպես էին հարձակվում

Հոռոմոց ապաստան լինէին. և նոցա զվաճառափակսն բացեալ, զնոսա իբրև ի խաղաղում պարապաւոր ամրացեալ ընդունէին: Եւ անտի սակաւիկ մի ոգի առեալ, դարձեալ ելեալք մարտնչէին, մինչև անմի զզօրսն Աւրաց առնէին: Եւ միւս ևս՝ որ ընդ այս եմ զարմացեալ ես, ընդ մտերմութիւն միամտութեանն հայաստան գնդին ընդ տիրասիրութեանն: Զի այնչափ ամք են՝ զի տէրն նոցա Արշակ կորուսեալ է ի նոցանէն, և նոքա ի պատերազմին ի նա խրախուսէին: Եւ յորժամ զախոյեանսն բնկենուին, համակ ասէին՝ թէ ան Արշակ, և նա չէր ի մէջ նոցա, և նոքա ան գութ տիրասիրութեանն՝ զոր ան բնակ տէրն իւրեանց ունէին, զամենայն ախոյեանսն՝ զոր սպանանէին՝ նմա նուիրէին: Եւ կամ մոլեկան գունդն մուշեղեան, զի ինձ այսպէս թուէր՝ եթէ հուր բոց ի գրնդէն ելանիցէր և ի նշանացն, իբրև ի հուրն հրդեհի այնպէս անցանէր ընդ գունդն որպէս բոց ընդ եղէգն: Եւ այսչափ ժամանակիս եմ՝ զի Արշակ տէրն նոցա ի նոցանէն կորուսեալ է, զի յԱնդմըշն բերդի կայ յերկրին Խուժաստանի, և նոքա ան գութն համարէին՝ թէ ի գլուխ նոցա նա իբրև թագաւոր կայցէ, և կամ ընդ նոսա արդեւ ի մէջ գնդին կայցէ ի գլուխ նակատուն պատերազմին, և նոքա ան նմա առնիցեն պաշտօն յանդիման նորա: Այլ, ասէր, երանի՛ որ Հայոց գնդին տէր իցէ, այնպիսի տիրասէր և միաբան միամիտ զօրացն:

Զ

ՅԱՂԱԳՍ ԴՂԱԿԱՑ ՄԱՐԴՊԵՏԻ՝ ՋՈՐ ԿԱՑՈՒԹԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԱԼ. ԵՒ ՆԱ ԽՈՐՀՐԴԱԿԻՑ ԵՂԵԱԼ ԳԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ. ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԽՈՍՏԱՆԱՑՐ ՄԱՏՆԵԼ ՋԱՐՔԱՑՆ ՀԱՅՈՑ, ԵՒ ՎԱՍՆ ՄԱՀՈՒԻՆ ԴՂԱԿԱՑ Ի ԳԱԳԱՑ ԱՐՔԱՅԷ

Ապա Տէրէնդ զօրավարն զօրացն Յունաց և Մուշեղ զօրավար զօրացն Հայոց զԴղակ Մարդպետ, որ անուանեալ կոչէր ըստ գործոյն՝ հայր թագաւորին, բողին գնա սահմանապահ ի Գանձակ՝ որ էր սահման ընդ Պարս և ընդ Հայս: Եւ մնաց ան նմա երեսուն հազար բնտիր բնտիր, նիզիկաւորք կուռ վառեալք պատեգէնք[48] և զրահաւորք կազմ ամենայնիւ: Եւ Տէրէնդն և Մուշեղ ամենայն զօրք, որ էին ընդ նոսա, գնացին յաշխարհն ան թագաւորն Պապ: Իսկ մարդպետն Դղակ, յղէր հրեշտակս խորհրդով ան Շապուհ արքայն Պարսից, և խոստանայր մատնել ի ձեռս նորա զթագաւորն Հայոց Պապ, և զզօրավարն Հայոց զՄուշեղ, և առնոյր ի նմանէ գանձս պարգեաց սաստիկ յոյժ: Բայց այլ մեծամեծ նախարարք, որ

ինչպես մի բարձր լեռ կամ ինչպես մի ճաստ՝ ճգոր և անշարժ աշտարակ. իսկ երբ մեքն նոցա փորձ ինչ վանում էինք, նոցա ապաստանում էին հոռոմների լեգեոնների մէջ, որոնք իրենց կից ան կից վաճառներ բաց անելով նոցա ներս էին ընդունում ինչպես մի պարսպապատ ամրոցի մէջ: Եվ այնտեղ փորձ ինչ շունչ առնելով՝ նորից դուրս էին գալիս ու կռվում, մինչև որ արյաց զորքերն սպանեցին: Մի ուրիշ բանի վրա էլ եմ զարմացած—Հայկական գնդի միաբերան հավատարմության և տիրասիրության վրա. որովհետև այսման տարի է, որ նոցա տերը, Արշակը, կորած է նոցա համար, բայց նոքա նոքանով էին բաւալերվում պատերազմի ժամանակ: Երբ իրենց ախոյաններին գլորում էին՝ միշտ ասում էին. «Արշակի համար», իսկ նա նոցա մէջ չէր, բայց նոքա իրենց սիրուց և տիրասիրությունից, որ ունեին իրենց բնիկ տիրոջ նկատմամբ՝ ամեն մի ախոյանի, որին սպանում էին՝ նոքա էին նվիրում: Կամ Մուշեղի այն մոլեգնած գունդը. ինձ այնպես էր թվում, թե այդ գնդից բոց ու կրակ են թափում, և նշաններն այնպես էին (փայլում) գնդի մեջ, կարծես հրդեհի բոց է անցնում եղեգների միջով: Այսման ժամանակ է, որ նոցա տերը, Արշակը, կորած է նոցա համար, գտնվում է Անդմըշն բերդում, Խուժաստան երկրում, բայց նոքա իրենց սիրուց այնպես էին համարում, թե նա իրենց գլուխ է կանգնած իբրև թագավոր, կամ իրենց հետ գնդի մեջ է գտնվում, իբրև պատերազմին գլուխ կանգնած և իրենք նրա առաջ նոքա են ծառայում: Այո՛, ասում էր նա, երանի՛ նոքա, որ Հայոց գնդի տերն է, այնպիսի տիրասեր, միաբան և հավատարիմ զորի»:

Է

ԴՂԱԿ ՄԱՐԴՊԵՏԻ ՄԱՍԻՆ, ՈՐԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԱՀ ՆՇԱՆԱԿԵՑԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԱ ԽՈՐՀՐԴԱԿԻՑ ԷՐ ԼԻՆՈՒՄ ԳԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԵՎ ԽՈՍՏԱՆՈՒՄ ԷՐ ՆՐԱ ԶԵՌՔԸ ՄԱՏՆԵԼ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ, ԵՎ ԴՂԱԿԻ ՍՊԱՆՎԵԼԸ ԳԱԳ ԹԱԳԱՎՈՐԻ ՀՐԱՄԱՆՈՎ

Ապա Հունաց Տերենտ զորավարը և Հայոց զորքերի գլխավոր Մուշեղը Դղակ մարդպետին, որ ըստ իր պաշտոնի կոչվում էր թագավորի Հայր՝ սահմանապահ բողին Գանձակում, որ սահման էր Պարսկաստանի և Հայաստանի մեջ: Նրա մոտ բողին երեսուն հազար բնտիր զորք—լավ սպառազինված նիզակավորներ, պահպանակներով՝ զրահներով պաշտպանված, կազմ և պատրաստ: Տերենտն ու Մուշեղը բոլոր իրենց հետ եղած զորքերով գնացին (Հայաստան) Պապ թագավորի մոտ: Իսկ Դղակ մարդպետը գաղտնի կերպով պատգամավոր էր ուղարկում Պարսից Շապուհ թագավորի մոտ և խոստանում էր նրա ձեռքը մատնել Հայոց Պապ թագավորին, Հունաց Տերենտ զորավարին և Հայոց

էին առ նմա, գաղտ ազդ առնէին թագաւորին Պապայ, Գնելն՝ տէր գաւառին անձևացեաց, և այլ որ էին անդ մնացեալ:

Ապա թագաւորն Պապ յղեաց դեսպանս առ Մարդպետն Դղակ, թէ զօրիդ՝ որ են ընդ ձեռամբ Խով՝ գումարեա զայդ. Գնելոյ Անձևացւոյ յանձն արասցես, և վաղ եկեսցես. զի պիտոյ է ինձ յղել զԲզ առ թագաւորն Պարսից Շապուհ, զի ես մտից նմա ի ծառայութիւն: Ապա յորժամ լսէր Մարդպետն Դղակ, մեծապէս խնդացեալ՝ ասէր ընդ միտս իւր, թէ արդ դիւրին ինձ գկամս իմ կատարել, զոր խոստացայն թագաւորին Պարսից Շապհոյ. յորժամ դուս գտի իւացս յապաճով յանհոգս առնել բանիւ զՊապ, և յանկարծօրէն յանպատրաստից արկանել զթագաւորն Պարսից զգլխով նորա: Եւ ինքն զուարճացեալ, լինէր խօսնակից ի մէջ թագաւորացն երկոցունց. դեսպան ձիով վաղ հասուցանէր ի գաւառն Այրարատու ի մեծ ի գետն ընդ արմունի, որում Արդեանսն կոչեն, առ թագաւորն Հայոց Պապ. և գայր յանդիման լինէր թագաւորին: Մեծապէս մեծարեցաւ ի նմանէն. և ի ժամ րնթրեացն հրաման ետ արքայն Պապ, տանել պատմուճան ագուցանել Մարդպետին Դղակայ. և ագուցին նմա դրաստս և վարտիս: Եւ էր հանդերձն անհեղեղ մեծութեամբն. զի խոշ գխոշիւ իջանէր, մինչ զի ոչ կարէր հանդերձել զանձն իւր, զի պատեաց զնա մեծութիւն հանդերձին: Եւ ագուցեալ զպատմուճանն մեծ, էած զգօտին ընդ մէջ իւր՝ զորմէ թուրն կախէր. և սուսեր ընդ մէջ ածեալ, և խոշ ի գօտւոյ դրատիցն իջեալ, զթուրն և զսուսերն ծածկէր: Իսկ զվարտիսն զգեցեալ, և մոյկս ագուցեալ, և զերանն յազդեր կապեալ, և ի վերայ նրանին խոշն ի վարտեացն իջեալ անկեալ ի վերայ նրանին՝ ծածկեալ մինչև ի սրունսն. և ոչ ինչ իմացաւ Դղակ թէ այն մեծութիւն հանդերձին չարոյ նորա իցէ այն: Իսկ յինն ժամ առուր կոչեցին զԴղակն, և ասեն. Կոչեն զքեզ յրնթրիս ի ներս յարմունիս: Իսկ յորժամ մուծին ի փող տանցն՝ յորում արքայն էր, և էր փողն ընդ երկար, բազում երդս լոյսիջոյցս էր թողեալ, և տանէին զնա ընդ այն, կայր շուրջ սպարակիրն փակեալ սակրաւորն, և զերդս ամենայն լուսոյն ծածկէին: Ապա մտեալ շուրջ զնովաւ ի տեղւոյն ձգձգէին զնա սպարակիրն: Իսկ նա թեպետ տանէր ձեռն ի զէն ի խոշխոշան հանդերձին պատատելոցն՝ զոր էր զգեցեալ, ոչ զմի զէն ոչ կարաց գտանել:

Ապա զի էր ինքն Դղակն այր մեծ և անձնեայ, քաջ հարուստ ուկերօք, սակայն սպարակիր մարդկանն պատեցին զնովաւ, և բարձին զնա վերմբարձ. և տանէին զնա մինչև ի դուս տաճարին արմունի:

Մուշեղ զորավարին, և (սրա համար) նրանից պարգև էր ստանում խիստ շատ գանձ: Բայց մյուս մեծամեծ նախարարները, որ նրա մոտ էին, Գնելը և Անձևացյաց գավառի տերը և ուրիշները, որ մնացել էին այնտեղ՝ գաղտնապես (այս դավը) իմաց էին տալիս Պապ թագավորին:

Ապա Պապ թագավորը դեսպաններ ուղարկեց Դղակ մարդպետի մոտ, թե «Ո՛ն ձեռի տակ եղած զորքերը հավաքի՛ր և հանձնի՛ր Անձևացի Գնելին, իսկ ինքդ շուտով է՛կ, որովհետև ես պետք է ուղարկեմ Պարսից Շապուհ թագավորի մոտ, որ նրա հպատակության տակ մրտնեմ»: Երբ այս լսում էր Դղակ մարդպետը՝ իր մտքում շատ ուրախանում էր, թե հիմա ինձ հեշտ կլինի իմ մտերմությունը կատարել, ինչպես խոստացել էի Պարսից Շապուհ թագավորին. այժմ ես հանապարհը գտա, որ խոսքերով ինեցնեմ Պապին, որ անհոգ ու միամիտ լինի, և հանկարծակի՝ անսպասելի կերպով նրա գլխի վերև կանգնեցնեմ Պարսից թագավորին: Ինքն իր մեջ զվարճանալով՝ պատգամախոս էր դառնում երկու թագավորների մեջ: Շտապով ձիավոր դեսպան էր ուղարկում Այրարատյան գավառը Արդյանք կոչված մեծ գյուղը արմունական կալվածում, Հայոց Պապ թագավորի մոտ, և ինքն էլ գալիս ներկայանում էր նրան և մեծապես մեծարվում: Ընթրիքի ժամանակ Պապ թագավորը հրաման տվեց՝ Դղակ մարդպետին փառավոր զգեստ հագցնել. նրան հագցրին դրաստ[174] և վարտիք: Զգեստը չափից դուրս մեծ էր, որ ծալ-ծալ իջնում էր ներքև, այնպես, որ չէր կարողանում կարգին հագնվել, որովհետև մեծ զգեստը փաթաթվում էր վրան: Այս մեծ պատմուճանը հագնելով՝ մեջքին կապեց գոտին, որից թուրը կախված էր, և սուրը մեջքին կապեց. իսկ զգեստի գոտիից ծալքը իջնելով ծածկում էր թուրն ու սուրը: Վարտիքը և մոյկը հագնելուց հետո նրանը[175] ազդրին կապեց. բայց վարտիքից ծալքը իջնում էր նրանի վրա և ծածկում էր մինչև սրունքը. և Դղակը գլխի չընկավ, թե զգեստի այդ մեծությունը նրա գլխի փորձանքն է: Երեկոյան իրը ժամին: Դղակին կանչեցին և ասացին. «Քեզ ներսը արմունիք են հրավիրում ընթրիքի»: Երբ նրանց մտցրին թագավորի տան երթանցքը—երթանցքը երկայն էր և լույսի համար շատ երդիկներ ուներ և երթանցքով տանում էին, շուրջը կանգնած էին սպարակներով պատսպարված սակրավորներ, երդիկներն էլ ծածկել էին: Ապա սպարակիրները նրան շրջապատելով քաշքշում էին նրան. իսկ նա թեպետ ձեռքը տանում էր զենքերին՝ բայց ոչ մի զենք չկարողացավ գտնել, որովհետև զգեստի ծալքերի մեջ թաղված էին:

Իսկ Դղակը խոշոր՝ բիկնավետ մարդ էր՝ պինդ ու խոշոր ոսկորնե-

Իսկ իբրև եռես թագաւորն՝ թէ անդր տանին, ասէ. Մ՛ի այսր, մի՛ այսր, այլ մուծէք զդա ՚ի տուն պատմուճականացն: Քանզի ՚ի փողին զօրք սպառակացն մուծին զնա ՚ի ներս ՚ի տունն պատմուճականացն կապեալ ձեռս յետս, այս իմին ուր թագ արմուկի դնէին. և անդէն խօսել սկսաւ Դղակն և ասէ. Ասացէք ցարմայ, գոգէմ. ես այս մանու արժանի էի, բայց ինձ արժան էր զիս ՚ի նրապարակի սպանանել, և ոչ ՚ի տան թագաց սպանանել, և զիս թագդ արեամբ շաղախել: Եւ զայս միայն ժամանեաց ասել. և անդէն ՚ի վանանէ պատմուճականացն փողոտեցին զնա, և հատին զգլուխ նորա, և հանին հարին ՚ի նիզակի, և կանգնեցին ՚ի հրապարակին արմուկի:

է

ՅԱՂԱԳՍ ՄԱՀՈՒԱՆ ԱՐՇԱԿԱՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅՈՑ, ԹԷ ՋԻԱ՛ՐԴ ՄԵՌԱՒ ՅԵՐԿՐԻՆ ԽՈՒԺԱՍՍՏԱՆԻ ՅԱՆԴՄԸՆՆ ԲԵՐԻՆ ԻՆՔՆ ԻՆՔԵԱՄԲ ՁԵՌՕՔ ԵՒ ԴՐԱՍՏԱՄԱՏՆ ԷՐ ԳԱՏՃԱՒՕՔ ՄԱՀՈՒՆ

Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին ևս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց յերկրին իշխանութեանն Պարսից ՚ի կողմանս Խուժաստանի յԱնդմըշն բերդին. այս իմին ուր անուն ևԱնյուշն բերդն կոչեն: Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի Արշակունին թագաւորն Քուշանաց, որ նստէր ՚ի Բաղխ քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ սասանականին Շապհոյ և թագաւորին Պարսից: Եւ Շապուհ թագաւորն զամենայն զզօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զօրս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Հայոց զամենայն այրեանի գումարեալ՝ խաղացոյց ընդ իմիեան. և զներհինին անգամ թագաւորին Հայոց Արշակայ տանէր ընդ իմիեան ՚ի գործ պատերազմին:

Եւ էր ներհինի մի Հայոց թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներհինի սիրելի մեծի իշխանութեան և մեծի պատուի, և անուն Դրաստամատ: Իսկ իբրև եղև պատերազմ ընդ թագաւորին Քուշանաց և ընդ թագաւորն Պարսից, չարաչար տարածէին զզօրսն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս կոտորեցին ՚ի զօրացն Պարսից զօրքն Քուշանաց, և զբազումս ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին: Իսկ Դրաստամատն ներհինին, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց և Արշակայ որդւոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անդեղ բերդին, և ամենայն բերդացն արմուկի՝ որ ՚ի կողմանս յայնս. սոյնպէս և

րով, բայց սակրավոր մարդիկը նրան շրջապատեցին, վեր բարձրացրին և այսպես տարան մինչև թագավորի սեղանատան դուռը: Երբ թագավորը տեսավ, որ այնտեղ էին տանում ասաց. «Ո՛չ այստեղ, ոչ այստեղ, այլ տարէք դրան հանդերձատուները»: Ապա ասպարակիր զինվորները նրան, ձեռները ետևը կապելով, երբանցքով տարան հանդերձատունը, այսինքն՝ այնտեղ՝ որտեղ թագավորները թագ էին դնում: Այնտեղ Դղակը խոսել սկսեց ու ասաց. «Թագավորին այսպես ասացէք. «Ես այս մանին արժան էի, բայց ինձ վայել էր ինձ հրապարակով սպանել և ոչ թե թագադրության սենյակում և ոչ թագը արյունով շաղախել»: Այսման միայն կարողացավ ասել. իսկույն հանդերձատունը նրան մորթեցին, գլուխը կտրեցին, նիզակի վրա զարկին ու արմուկական հրապարակում կանգնեցրին:

է

ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԵՌԱՎ ԽՈՒԺԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԱՆՀՈՒՇ ԲԵՐԴՈՒՄ ԻՆՔ ԻՐ ՁԵՌՔՈՎ ԵՎ ԴՐԱՍՏԱՄԱՏՆ ԷՐ ԼԻՆՈՒՄ ՆՐԱ ՄԱՀՎԱՆ ԳԱՏՃԱՒՐԸ

Այն ժամանակներ դեռ ևս կենդանի էր Հայոց Արշակ թագավորը Պարսից թագավորության իշխանության երկրում, Խուժաստանի կողմերում, Անդմըշն բերդում, որին ասում են Անհուշ բերդ: Այս ժամանակ պարսիկները դադարեցրին պատերազմները հայերի հետ, որովհետև Քուշանների Արշակունի թագավորը, որ նստում էր Բալխ[176] քաղաքում պատերազմ սկսեց Պարսից Շապուհ թագավորի հետ, որ Սասանի տոհմից էր: Եվ Շապուհ թագավորը Պարսից բոլոր զորքերը գումարեց ու տարավ նրա հետ պատերազմելու, նույնպես և Հայոց աշխարհից տարած գերությունից բոլոր հետ գալիքները իր հետ պատերազմի տարավ, մինչև անգամ Հայոց Արշակ թագավորի ներհինուն: Հայոց Արշակ թագավորի այդ ներհինին հավատարիմ պաշտոնյա էր, մեծ իշխանության տեր, շատ սիրված ու պատվված. նրա անունն էր Դրաստամատ:

Երբ Քուշանաց թագավորի և Պարսից թագավորի մեջ պատերազմ սկսվեց՝ Քուշանների զորքերը շատ նեղ ձգեցին Պարսից զորքերին, շատերին կոտորեցին Պարսից զորքերից, շատերին ձերբակալեցին և մյուսներին հալածեցին, փախուստի մատնեցին: Իսկ Դրաստամատ ներհինին, որ Հայոց Տիրան թագավորի և նրա որդու Արշակ թագավորի ժամանակ իշխում էր Անգեղտան[177] գավառի վրա՝ հավատարմությամբ պահում էր Անգեղ բերդի գանձերը, նույնպես և բոլոր արմուկական բերդերը, որ այն կողմերում գտնվում էին: Նույնպես և Մոփաց աշխարհում Բնաբեղ բերդում եղած գանձերը նրա տեսչության տակ էին

յերկրին Սոփաց ՚ի Բնաբեղ բերդին գանձն լեալ էին ընդ նովաւ, և բարձ նոցա ՚ի վեր հան զամենայն նախարարացն: Եւ հանգի այս գործակալութիւն և մարդպետութիւն, որում Հայրն կոչէին ներհինեաց՝ գործ լեալ էր ՚ի բեէ ժամանակաց ՚ի թագաւորութեանն Արշակունոյ, և զայս Դրաստամատն ներհինի զիշխանն զԱնգեղ տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ՚ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց:

Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատթարեցին Քուշանքն զՇապուհ արքայն Պարսից: Եւ Դրաստամատ գործեաց անհնարին խաբութիւն այնչափ կռուաւ ևս ՚ի վերայ Շապհոյ արքային, և ապրեցոյց զնա ՚ի մահուանէ. և բազումս ՚ի Քուշանաց անտի կոտորեաց, և զբազում զախոյանից զգլուխս բերէր զառաջեաւ: Եւ զՇապուհ թագաւորն Պարսից փրկէր ՚ի ներսէհենէն պատերազմին թշնամեաց անտի, ուր արգելին զնա ՚ի խոռն պատերազմին ՚ի զօրաց անտի: Իսկ իբրև եղև յորժամ դարձաւ Շապուհ թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, և մեծ շնորհակալութիւն առնէր ներհինւոյն Դրաստամատայն վաստակոցն, և ասէր ցնա Շապուհ թագաւորն Պարսից. խնդրեա դու ինչ յինէն. զինչ և խնդրեսցես, տաց ձեզ և ոչ արգելից: Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն. Ինձ ՚ի էն այլ ինչ ոչ պիտի, բայց տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զբնակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց: Եւ առ մի օր, իբրև ես երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա ՚ի կապանացն, և ես իշխեցից լուանալ զգլուխ նորա և օծանել, և ազուցանել նմա պատմուճան, և արկանել նմա բազմականս, և դնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա գինի, և ուրախ առնել զնա արուեստականօրն մի օր ճիշդ: Եւ ասէ թագաւորն Շապուհ. Խիստ են խընդրուածդ, զոր խնդրեցեր. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ թագաւորութիւնս Պարսից կանկնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղեալ ՚ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոք է թագաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է, բող թէ զնա զայր թագաւոր և զիմ բնկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն. հան մինչ աշխատ արարեր զմեզ, և դու աւադիկ զանձն ՚ի մահ եդիր և յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք թագաւորութեանս Արեաց ՚ի սկզբանէ: Բայց զի վասն՝ ես մեծ վաստակ եմ առ իս, զոր ինչ խնդրեցերն՝ երթ՝ տուեալ լիցի ձեզ. բայց ձեզ արժան էր զօգուտ ես անձինդ խնդրել կամ աշխարհս կամ գաւառս կամ գանձս: Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցիս զօրինօք Արեաց թագաւորութեանս. երթ, տուեալ լիցի ձեզ որ ինչ յինէնս խնդրեցեր փոխանակաց ես:

և նրա բարձր[178] բոլոր նախարարների բարձերից վեր էր: Եվ որովհետև այս պաշտոնը և Հայր կոչված մարդպետությունը ներհիներին էին հանձնվում Արշակունյաց թագավորության ամենահին ժամանակներից ի վեր, ուստի այս ներհինի Դրաստամատին, Անգեղտան իշխանին էլ գերի էին տարել Պարսկաստան այն ժամանակ՝ երբ Հայոց Արշակ թագավորին բռնեցին:

Այս Դրաստամատը պատահեց այն ճակատամարտում, որի մեջ Քուշանները հաղթահարեցին Պարսից Շապուհ թագավորին: Դրաստամատն այնտեղ անպատմելի բաներ գործեց, Շապուհ թագավորի համար այնչափ կռվեց, որ կարողացավ նրան մահից ազատել, և Քուշաններից շատերին կոտորեց և շատ ախոյանների գլուխներ բերեց նրա առաջ: Պարսից Շապուհ թագավորին էլ փրկեց, երբ նրան պատերազմի խառնուրդի մեջ թշնամիները շրջապատել ու նեղն էին ձգել: Իսկ երբ Պարսից Շապուհ թագավորը դարձավ եկավ Ասորեստանի աշխարհը՝ մեծ շնորհակալություն էր հայտնում Դրաստամատին նրա ծառայությունների համար և ասում էր. «Խնդրիր ինձանից ինչ որ ուզում ես, ու խնդրածը կտամ, չեմ մերժի»: Դրաստամատն ասաց թագավորին. «Ես բեզանից ոչինչ չեմ ուզում, բայց միայն՝ որ հրաման տաս ինձ, որ գնամ իմ բնակ տիրոջը տեսնեմ, Հայոց Արշակ թագավորին: Եվ միայն մի օրվա համար, երբ ես նրա մոտ գնամ՝ հրաման տուր նրան կապանքներից արձակել, և ես իրավունք ունենամ նրան լվալ, գլուխն օծել, ազնիվ զգեստ հագցնել, նրա համար սեղան պատրաստել, նրա առաջ խորտիկներ դնել, գինի տալ և ուրախացնել նվագարաններով, ճիշտ մի օր»: Շապուհ թագավորն ասաց. «Դժվար բան խնդրեցիր, որովհետև այն ժամանակից ի վեր, որ Պարսից թագավորությունը կանգուն է և այն բերդը կոչվել է Անհուշ՝ չի եղել որևէ մարդ, որ համարձակած լինի թագավորներին հիշեցնել որևէ մեկին. որ թագավորներ դրել են այն բերդը. չէ հիշատակվել որևէ մարդ, որ դրված է այն բերդում, բող թե թագավոր մարդ և իմ բնկերը, որ կապված է այն բերդում, իմ հակառակորդը՝ որ այնքան ժամանակ մեզ չարչարեց[179]: Դու սակայն մանդ աչքդ առար և հիշեցիր Անհուշը—աննիշելին, որ արյաց թագավորության մեջ սկզբից ի վեր չէ պատահել այսպես բան: Բայց որովհետև մեծ է քո ինձ ցույց տված ծառայությունը՝ բող կատարվի խնդիրդ. գնա՛, ինչ որ խնդրեցիր տալիս եմ: Բայց դու պետք է քո սեփական օգուտդ մտածեիր, աշխարհներ, գավառներ, գանձեր խնդրեիր: Բայց երբ դու ա՛յդ խնդրեցիր՝ բող այդ բացառություն լինի արյաց թագավորության օրենքից: Գնա՛, տվի՝ ինչ որ դու ինձանից խնդրեցիր քո ծառայության փոխարեն»:

Եւ եա նմա փուշտիպան մի հաւատարիմ. և հրովարտակ՝ արմուկի մատանեաւ, զի գնացեալ երթիցէ նա ’ի բերդն յԱնդմըշն, և զիարդ և կամք իցէ նորա, զոր օրինակ և խնդրեացն՝ առացէ կապելոյն Արշակայ, որ յառաջ թագաւորեալն էր ’ի Հայս: Եւ չգաւ Դրաստամատ ճանդերձ փշտիպանաւն և հրովարտակաւն արմուկի յԱնուշ բերդն, և ետես զտէրն բնակ. և առնակեաց զԱրշակ ’ի կապանացն երկաթեաց ’ի ձեռակապացն և յոտիցն երկաթոց և յանդոց պարանոցէն շղթայիցն սարեացն. և լուաց զգլուխ նորա, և լոգացոյց զանձն նորա: Եւ ագոյց նմա պատմուճան ազնիւ. և էարկ նմա բազմականս, և բազմեցոյց զնա, և եդ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց, և եդ առաջի նորա գինի որպէս օրէն էր թագաւորացն. սթափեաց զնա և մխիթարեաց, և ուրախ առնէր զնա գուսանօք:

Եւ ’ի ժամ աղանդեր մատուցանելոյ՝ եդին առաջի նորա միրգ, խրձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ. և եդին դանակ նմա, որպէս զի հատցէ և կերիցէ զիարդ և կամեսցի: Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն, և մխիթարէր զնա: Իսկ յորժամ արբեցաւ, և գինին եկն զակամբ նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. Վա՛յ ինձ Արշակայ. այս ես և այս, և յայսմ չափու և այս անցք անցին ընդ իս: Եւ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր և ձեռինն, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար ’ի սրտի իւրում. և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն ’ի նմին ժամուն մինչ դեռ կայր ’ի բազմականին: Իսկ յորժամ զայն ետես Դրաստամատ, յարձակեցաւ եհան ’ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշտին. և անդէն մեռաւ և նա ’ի նմին ժամուն յայնմ:

Ը

ՅԱՂԱԳՍ ԹԷ ՋԻՒ՛ՐԴ ԼՌԵԱՑ ԳԱՅԵՐԱՁՄՆ ’Ի ԿՈՂՄԱՆՑՆ ԳԱՐՍԻՑ, ԱԳԱ ՍԿՍԱՒ ՅԳԱՐԱԳԵՏՆ ՄՈՒՇԵՂ ՈԳՈՐԲԼ ԸՆԴ ԱՅՆՈՍԻԿ՝ ՈՐՔ ՄԻԱՆԴԱՄ ԱԳՍՏԱՄԲԵՑԻԽ ’Ի ԹԱԳԱՒՈՐԷՆ ՀԱՅՈՑ. ՋՐԱՁՈՒՄ ԿՈՑՍ ԿՈՑՍ ՀԱՐԿԱՆԷՐ ՄԵԾԱՒ ԳԱՅԵՐԱՁՄԱՒ, ՆԱԽ ՏԱՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՀԱՅՈՑ՝ ՈՐ ՅԱՏՐԱՅԱԿԱՆՆ ԷՐ

Ապա իբրև դադարեաց պատերազմն ’ի կողմանցն Պարսից, և յապաղովեցան իրք եակատուն յայնմ կողմանէ, և այնուհետև սկսաւնէր սպարապետն Հայոց Մուշեղ հարկանէր զայնոսիկ՝ որ ապստամբ եղեն ’ի թագաւորութենէն Արշակունեաց: Նախ հարկանէր զառն թագաւորին Հայոց, որ յԱտրպատական էր. զամենայն երկիրն գաւառացն Ատրպատացն աւերէր, և առնոյր գերէր բազում գերութիւն ’ի նոցանէ.

Եվ երբ տվեց մի հավատարիմ փուշտիպան[180] և հրովարտակ՝ արմուկական մատանիով կնքված, որ երթե գնա Անդմըշն բերդը և ինչպես որ կամենա, ինչպես որ խնդրեց՝ այնպես էլ վարվի կապյալ Արշակի հետ, որ Հայաստանի թագավոր էր եղել երբեմն: Եվ Դրաստամատը արմուկական հրովարտակով փուշտիպանի հետ գնաց Անուշ բերդը, տեսավ իր բնիկ տիրոջ, Արշակին, արձակեց երկաթե կապանքներից, ձեռների և ոտների երկաթե կապանքներից և վզի շղթաների ծանրությունից, նրա գլուխը լվաց, նրան լոգացրեց. նրան ազնիվ զգեստներ հագցրեց, սեղան սարքեց նրա համար, նրան բազմեցրեց, նրա առաջ թագավորավայել ընթրիք դրեց, գինի դրեց առաջը, ինչպես թագավորների կարգն էր, նրան զվարթացրեց, մխիթարեց և նվագարաններով ուրախացնում էր:

Երբ աղանդների (դեսերտի) հերթը հասավ՝ նրա առաջ դրին միրգ—խնձոր, վարունգ և ամիճ[181], և դանակ տվին, որպեսզի կտրե և ուտե ինչպես կամենում է: Դրաստամատն էլ ոտի կանգնած՝ նրան շատ ուրախացնում էր և մխիթարում: Երբ նա խմեց՝ գինին գլուխը զարկեց, նա հարբեց ու հպարտացավ և ասաց. «Վա՛յ ինձ, Արշակիս. ո՞րտեղից ուր ընկա և ի՛նչ օրի հասա»: Այս ասելով՝ դանակը, որ ձեռին բռնած ուներ, որով միրգը կամ ամիճը պիտի կտրեր՝ խրեցրեց իր սիրտն և իսկույն մեռավ հենց նստած տեղում: Դրաստամատն երբ այս տեսավ՝ վրա ընկավ, դանակը հաշեց հանեց նրա մարմնից և իր կուշտը խրեցրեց: Նա էլ նույնպես նույն ժամին մեռավ:

Ը

ԹԷ ԻՆՉՊԵՍ ԴԱԴԱՐԵՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՐՍԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ, ՈՐԻՑ ՀԵՏՈ ՄՈՒՇԵՂ ՍՊԱՐԱՊԵՏՆ ՍԿՍԵՑ ԿՌՎԵԼ ՆՐԱՆՑ ՀԵՏ, ՈՐՈՆՔ ԱՊՍՏԱՄԲԵԼ ԷԻՆ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻՑ, ԵՎ ՄԵԾԱՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՎ ՇԱՏ ՏԵՂԵՐ ՋԱՐԴԱՒ ԷՐ: ՆԱԽ ԵՎ ԱՌԱՋ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ ԿԱԼՎԱԾԻ ՄԱՍԻՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

Ապա, երբ պատերազմը Պարսից կողմից դադարեց և (հայերն) այդ կողմից ապահովվեցին՝ այնուհետև Հայոց Մուշեղ սպարապետն սկսում էր յարդել նրանց, որոնք ապստամբել էին Արշակունյաց թագավորներից: Նախ յարդում էր Հայոց թագավորի կալվածը Ատրպատականում: Ատրպատեանցոց[182] բոլոր գավառներն ավերում էր, մեծ ֆանակությամբ գերիներ էր վերցնում նրանցից, մնացածներին ևա-

և զմեացորդսն նուաճէր և ՚ի ճարկի կացուցանէր, և առնոյր զթագուհս պանդխդս ՚ի նոցանէ:

Բ

ՅԱՂԱԳՍ ՆՈՇԻՐԱԿԱՆԻ

Հարկանէր Մուշեղ զապստամբս նոշիրական աշխարհին, որ ապստամբեցին յարհայէն Հայոց. առնոյր աւերէր գերէր, և ՚ի մեացորդացն առնոյր պանդխդս. և զբնակիչս երկրին ՚ի ճարկի ծառայութեան կացուցանէր:

Գ

ՅԱՂԱԳՍ ԿՈՐԴՈՒԱՑ ԿՈՐԾԱՑ ԵՒ ՏՄՈՐԾԱՑ

Հարկանէր Մուշեղ սպարապետն և զայս գաւառս ապստամբեալս յարհայէն Հայոց, զԿորդուս և զԿորդիս և զՏմորիս. առնոյր գերէր և աւերէր, դնէր ճարկ մնացորդացն, և առնոյր պանդխդս:

ԺԱ

ՅԱՂԱԳՍ ՄԱՐԱՑ

Եւ զկողմանսն Մարաց, բանզի և նոքա ապստամբեցին յարհայէն Հայոց, ճարկանէր զնոսա մեծապէս, և գերէր զթագուհս ՚ի նոցանէն, և մնացորդացն դնէր ճարկս, և առնոյր պանդխդս:

ԺԲ

ՅԱՂԱԳՍ ԱՐՁԱԽԱՑ

Հարկանէր գերկիրն Արձախայ մեծաւ պատերազմաւ, գերէր բազումս ՚ի նոցանէն. և զմեացորդացն առնոյր պանդխդս, և զմեացեալսն ՚ի ճարկի կացուցանէր:

ԺԳ

ՅԱՂԱԳՍ ԱՂՈՒԱՆԻՑ

Առնէր պատերազմ ընդ երկիրն Աղուանից, ճարկանէր զնոսա ՚ի ճարուածս աննճարիս: Եւ թափէր ՚ի նոցանէ բազում գաւառս, զոր ճա-

ճում էր և ճարկատու դարձնում, վերցնում էր նրանցից նաև շատ պատանդներ:

Բ

ՆՈՇԻՐԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Մուշեղը չարդում էր նաև նոշիրական աշխարհի ապստամբներին, որոնք ապստամբել էին Հայոց թագավորից: Երկիրն առնում, ավերում և գերում էր, մնացածներից պատանդներ էր վերցնում և երկրի բնակիչներին հպատակ և հարկատու էր դարձնում:

Գ

ԿՈՐԴՈՒԵՔԻ, ԿՈՐԾԻՔԻ ԵՎ ՏՄՈՐԾԻՔԻ ՄԱՍԻՆ

Մուշեղ սպարապետը չարդում էր նաև այս գավառները, որոնք ապստամբել էին Հայոց թագավորից, այսինքն Կորդուքը, Կորդիքը և Տմորիքը. գերիներ էր վերցնում, ավերում էր, մնացածներին հարկատու էր դարձնում և նրանցից պատանդներ առնում:

ԺԱ

ՄԱՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարաց կողմերն էլ նա սաստիկ չարդում էր, որովհետև նրանք էլ ապստամբել էին Հայոց թագավորից. նրանցից շատերին գերում էր, մնացորդներին հարկատու էր դարձնում և նրանցից պատանդներ վերցնում:

ԺԲ

ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

Արցախի երկիրն էլ չարդում էր մեծ պատերազմով, նրանցից շատերին գերում էր: Մնացորդներից պատանդներ էր առնում և նրանց հարկի տակ դնում:

ԺԳ

ԱՂՎԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատերազմում էր նաև Աղվանից երկրի հետ և նրանց սոսկալի չարդ էր տալիս: Նրանցից ետ էր խլում շատ գավառներ, որ նրանք

տեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն և զձորն Գարդմանայ, զկողբ և այլ որ շուրջ էին զնովաւ սահմանք գաւառ: Եւ զկուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին. և ի գլխաւորացն բազումս սպանանէին. և զմնացորդսն ի ճարկի կացուցանէին, և պանդանդս ի նոցանէ առնուին:

ԺԴ

ՅԱՂԱԳՍ ԿԱՍՊԻՑ

Ապա խնդրէր զվրէժն մեծապէս սպարապետն Մուշեղ յերկրէն Պարսից և ի Փայտակարան խաղաքէ, փոխանակ զի և նոքա նշկահեցին ստեցին արքային Հայոց: Հասեալ, զբազումս ի նոցանէ գլխով պատուհաս առնէր սպարապետն զօրավարն Մուշեղ. զբազումս ի նոցանէ գերէր, և զմնացորդսն ի ճարկի կացուցանէր, և առնոյր պանդանդս ի նոցանէն, և անդ ոստիկանս վերակացուս թողոյր:

ԺԵ

ՅԱՂԱԳՍ ՎՐԱՑ

Ապա խաղայր սպարապետն Մուշեղ ի վերայ Վրաց արքային, և ձեղէր զնա մեծապէս. և ճարկանէր զերկիրն, և վանէր զամենայն աշխարհն Վրաց. և հանէր ընդ սուր զամենայն ազատս և զազգս նախարարացն, զոր եգիտ: Զփառաւազեանսն նուաման տայր սպարապետն Մուշեղ հանել ի խաչ ի մէջ աշխարհին Վրաց. և զբդեաշխն Գուգարաց, որ յառաջն ծառայէր թագաւորին Հայոց և ապստամբեաց, կալեալ գլխատէր. և զազգն ոռնակոտոր առնէր, և զկանայսն և զդստերսն ի գերութիւն վարէին: Սոյն օրինակ և որ միանգամ ի կողմանն յայն էին նախարարքն, և ի թագաւորէն Հայոց եղեն ապստամբ, զամենեսեան գլխատէր. և թափէր զամենայն գաւառն, և առնոյր պանդանդս, և զմնացեալսն ի ճարկի կացուցանէր: Եւ զնին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր, այնու հետև յինքն վտարեալ՝ դառնայր աճուն:

գրավել էին—Ուտին Շակաշենք, Գարդմանաձորք, Կողբք և սրանց շուրջն եղած սահմանակից շատ գավառներ: Կուր գետը սահման դարձրեց (մեր) աշխարհի և Աղվանքի մէջ՝ ինչպես որ առաջ էր: Գլխավորներից շատերին սպանում էին, մնացորդներին ճարկի տակ էին դնում և նրանցից պատանդներ էին առնում:

ԺԴ

ԿԱՍՊԻՑ ՄԱՍԻՆ

Ապա Մուշեղ սպարապետը սաստկապես վրեժ էր առնում Կասպից[183] երկրից, Փայտակարան քաղաքից, որովհետև նրանք էլ ստամբակել ու դավաճանել էին Հայոց թագավորին: Մուշեղ զորավարն այնտեղ հասնելով՝ նրանցից շատերին պատժելով գլխատում էր, շատերին գերի վերցնում, մնացածներին էլ հարկատու դարձնելով՝ նրանցից պատանդներ էր վերցնում և այնտեղ վերակացու պաշտոնյաներ էր թողնում:

ԺԵ

ՎՐԱՑ ՄԱՍԻՆ

Ապա Մուշեղ սպարապետը գնում էր Վրաց աշխարհի վրա. նրան սաստիկ նեղում, չարդում էր. ամբողջ Վրաց աշխարհը նվաճում էր, սրի էր քաշում բոլոր ազնվականներին և բոլոր նախարարական տոհմերը, որոնց որ գտնում էր: Մուշեղ սպարապետը հրամայում էր Փառավազյաններին խաչը հանել Վրաց աշխարհում, իսկ Գուգարաց բդեշխին, որ առաջ ծառայում էր Հայոց թագավորին և վերջը ապստամբել էր՝ բռնելով գլխատեց ու նրա ցեղի արուներր կոտորեց, իսկ կանանց ու աղջիկներին գերի վերցրին: Եվ առհասարակ բոլոր այն կողմի նախարարներին, որոնք Հայոց թագավորից ապստամբել էին՝ գլխատում էր, ամբողջ գավառը նորից նվաճում էր և պատանդներ էր առնում. մնացածներին էլ հարկի տակ էր դնում: Եվ գրավելով մինչև նին սահմանը, որ առաջուց գոյություն ուներ Հայաստանի և Վրաստանի միջև, այսինքն Կուր մեծ գետը՝ այնտեղից հետ էր դառնում:

ԺԶ

ՅԱՂԱԳՍ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԱՂԶՆԵԱՑ

Դառնայր ապա զօրավարն Մուշեղ յերկիրն Աղձնեաց, և հարկանէր զերկիրն ի մեծ ի հարուածս. զի և նոքա ապստամբեալ էին յարքայէն Հայոց: Ձերբակալ արարեալ զբդեաշխն Աղձնեաց, առ նմին կոտորեցին զկանայս, և զորդիս նոցա ի գերութիւն վարեցին, և զմնացեալսն ի հարկի կացուցանէր, և վերակացուս և ոստիկանս յերկիրն Աղձնեաց թողուին:

ԺԷ

ՅԱՂԱԳՍ ՄԵԾԻ ՍՈՓԱՑ

Ապա աճեռի ի Սոփս մեծ արշաւեցին. և նոքա էին ապստամբեալ: Հարկանէր զերկիրն գաւառին Մուշեղ մեծի Սոփաց, և զազգսն հաճէր ընդ սուր. և առնոյր պանդխտս, և ազգն ի հարկի կացուցանէր:

ԺԸ

ՅԱՂԱԳՍ ԱՆԳԵՂ ՏԱՆՆ

Հարկանէր և յԱնգեղ տունն զբազումս, և հաճէր ընդ սուր: Բայց աշխարհին զի ոստան արմուճի լեալ էր վաղ, բնակիչք գաւառին և իւրեանք կային ի հարկի ծառայութեան:

ԺԹ

ՅԱՂԱԳՍ ԳԱՒԱՌԻՆ ԱՆՁՏԱՑ

Ապա ի գաւառն Անձտայ արշաւէր և հարկանէր Մուշեղ զկողմանս գաւառացն այնոցիկ՝ որ չուրչ էին զնովաւ, բանզի և նոքա ապստամբեցին ի թագաւորութենէն Արշակունեաց: Հաճէր ընդ սուր զտեառս գաւառին. առնոյր պանդխտս, և նուաճէր. ի հարկի ծառայութեան թագաւորին Հայոց Պապայ զամենեսեան առ հասարակ կացուցանէր:

ԺԶ

ԱՂԶՆԻՔ ԳԱՒԱՌԻՑ ՄԱՍԻՆ

Այնուհետև Մուշեղ զօրավարը դառնում էր Աղձնյաց երկրի վրա և մեծամեծ հարվածներ էր հասցնում այդ երկրին, որովհետև սրանք էլ ապստամբել էին Հայոց թագավորից: Աղձնիքի բդեշխին ձերբակալեցին, նրա առաջ սպանեցին կանանցը, իսկ որդոցը գերի վերցրին: Մնացածներին հարկի ենթարկեցին և Աղձնիքում էլ թողեց վերակացուներ ու պաշտոնյաներ:

ԺԷ

ՄԵԾ ՍՈՓՔԻ ՄԱՍԻՆ

Այնտեղից արշավեցին Մեծ Սոփք, որ նույնպես ապստամբել էր: Մուշեղը յարդում էր Մեծ Սոփքը, ազնվական տոհմերը սրի էր հաշում, պատանդներ էր առնում և երկիրը հարկատու էր դարձնում:

ԺԸ

ԱՆԳԵՂՏԱՆ ՄԱՍԻՆ

Անգեղտանն էլ շատերին յարդում էր և սրի էր հաշում: Բայց որովհետև երկիրը վաղուց ի վեր արմուճի ոստան[185] էր՝ ուստի բնակիչները հարկատու հպատակ էին մնացել:

ԺԹ

ԱՆՁԻՏ ԳԱՒԱՌԻ ՄԱՍԻՆ

Ապա Մուշեղն արշավում էր Անձիտ գավառը և յարդում էր շրջակա գավառների հետ միասին, որովհետև նրանք էլ ապստամբել էին Արշակունյաց թագավորներից: Գավառների տերերին սրի էր հաշում, պատանդներ էր առնում, նվաճում էր և բոլորին առհասարակ հարկատու և հպատակ էր դարձնում Հայոց Պապ թագավորին:

ՅԱՂԱԳՍ ՄՈՒՇԵՂԻ ՍԳԱՐԱԳԵՏԻՆ ՀԱՅՈՑ

Այլ ֆաջև զօրավարն սպարապետն Հայոց լի էր ֆիճի մեծաւ և բազում նախանձու զամենայն աւուրս կենաց իւրոց, և միամտութեամբ և արդար վաստակով ջանայր ճանապազ և վաստակէր ՚ի վերայ թագաւորութեանն Հայոց աշխարհին զտիւ և զգիշեր կայր յաշխատութեանն. ջանայր և ճգնէր կալ ՚ի ճակատու պատերազմին, և ոչ թողոյր բնաւ ամենևին և ոչ ֆան գկորի մի գետին ՚ի սահմանաց երկրին Հայոց ուրեմ վտարել ՚ի վերայ աշխարհին կեալ և ՚ի մեռանել, ի՛ վերայ անուանն ֆաջութեան, ՚ի վերայ բնակ տեառնց, և ՚ի վերայ բնակչաց աշխարհին, ՚ի վերայ էրիստոնէութեանն հաւատոյ, ՚ի վերայ հաւատացեալ յաստուած և ՚ի Քրիստոս մկրտեալ ժողովրդոց, ՚ի վերայ եկեղեցեաց, և ՚ի վերայ նուիրեալ սպասուց, ՚ի վերայ վկայարանացն Քրիստոսի, և ՚ի վերայ ուխտի աստուծոյ, ՚ի վերայ էրց և եղբարց, ՚ի վերայ մեռնաւորաց տոհմին, ՚ի վերայ բարեկաց բարեկիր բարեկամաց, հանապազ կայր զօրավարն Մուշեղ ՚ի նաճատակութեան պատերազմին, զանձն փոխանակ առնել աշխարհին. և յանձն իւր անէայէր ՚ի մեռանել, զամենայն աւուրս կենաց իւրոց առաջի իւրոց բնակ տեառնցն արշակունւոց վաստակէր:

ԻԱ

ՅԱՂԱԳՍ ՆԳԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻՆ ՆԵՐՍԷՍԻ, ԹԷ ՈՐԳԻՍԻ՛ ԱՏՐ ԷՐ, ԿԱՄ ՋԻ՛ՆՉ ԳՈՐԾԷՐ

Այլ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս շինէր զամենայն աւերեալսն երկրին Հայոց. յանձն առնէր և մխիթարէր, դարմանէր և տեսուչ լինէր ամենայն աղոտաց. և զօրկուս և զաղոտս հանգուցանէր: Եւ շինէր զեկեղեցիս ընդ ամենայն տեղիս, և զամենայն կործանեալսն կանգնէր. և զամենայն կարգսն տապալեալ ուղղէր և նորոգէր: Շինէր և հաստատէր, խրատէր և յանդիմանէր. բազում առնէր նշանս և զօրութիւնս մեծամեծս և բազում բժշկութիւնս սքանչելեաց: Եւ յօրէնսն սաստէր մեծապէս. և զօր օրինէր, օրինէր[49]. և զօր անիծանէր, անիծեալ լինէին: Եւ բազմացոյց գկարգս պաշտօնէից յամենայն տեղիս իշխանութեանն ՚ի սահմանացն Հայոց, և յամենայն գաւառս կացոյց տեսուչս եպիսկոպոսս. և հանապազ զգուշանայր տեսչութեանն իւրոյ և իշխանութեան, որչափ եկաց նա ժամանակս:

ՀԱՅՈՑ ՄՈՒՇԵՂ ՍԳԱՐԱԳԵՏԻ ՄԱՍԻՆ

Հայոց ֆաջ զօրավար և սպարապետ (Մուշեղը) ամբողջ իր կյանքում լի էր նախանձախնդրությամբ. նա հավատարմությամբ և արդար աշխատանքով, միշտ ջանասիրությամբ աշխատում էր Հայոց աշխարհի և թագավորության համար: Գիշեր ու ցերեկ նա աշխատանքի մեջ էր. նա ճիգ էր թափում, պատերազմներ էր մղում, թույլ չէր տալիս, որ թեկուզ մի կորու չափ գետին Հայոց աշխարհի սահմաններից խլվի: Նա կյանքը դրել էր աշխարհի վրա: Մուշեղ զորավարը շարունակ արիական պատերազմներ էր վարում ֆաջության անվան համար, իր բնիկ տերերի, աշխարհի բնակիչների համար, էրիստոնեական հավատի, աստծուն հավատացող և Քրիստոսի անունով մկրտված ժողովրդի համար, եկեղեցիների, նրանց նվիրված սպասների, Քրիստոսի վկայարանների, աստծու ուխտի համար, էույրերի և եղբայրների, մերձավոր տոհմակիցների, մտերիմ բարեկամների համար: Նա իր կյանքը դրել էր աշխարհի համար, իր կյանքին չէր խնայում, իր կյանքի բոլոր օրերում նա աշխատում էր իր բնիկ Արշակունի տերերի համար:

ԻԲ

ՆԵՐՍԵՍ ԵԳԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ. ԹԵ ԻՆՉՊԻՍԻ ՄԱՐԴ ԷՐ ԵՎ ԻՆՉՊԷՍ ԷՐ ԳՈՐԾՈՒՄ

Իսկ Հայոց Ներսես եպիսկոպոսապետը շինում էր Հայոց աշխարհի բոլոր ավերված տեղերը, խնամում[186] ու մխիթարում էր, դարմանում ու պահպանում էր բոլոր աղոտաներին, բորոտների և աղոտաների համար ապաստարաններ էր պատրաստում: Ամեն տեղ եկեղեցիներ էր շինում, ավերածները նորոգում էր, բոլոր խանգարված կարգերը վերականգնում էր և ուղղում: Շինում էր և հաստատում, խրատում էր և հանդիմանում, շատ նշաններ ու մեծամեծ զորություններ էր անում և շատ սքանչելի բժշկություններ էր կատարում. օրինազանցներին խստությամբ սաստում էր[187]. ում օրհնում էր՝ նա օրհնվում էր. ում անիծում էր՝ նա անիծվում էր: Հայոց իշխանության բոլոր սահմաններում նա շատացրեց (եկեղեցու) պաշտոնյաների թիվը, ամեն տեղ տեսուչ-եպիսկոպոսներ դրեց և միշտ ուշադիր հետևում էր իր տեսչության և իշխանության գործերին՝ ինչի որ ապրում էր:

ՅԱՂԱԳՍ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԳԱԳԱՑ, ԹԷ ՋԻԱՐԴ ԷՐ ԼԻ ԴԻՒՑԱԶ ԿԱՄ ՈՐԳԷՍ ՎԱՐՒԷՐՆ

Այլ թագաւորն Պապ, զի մինչ դեռ տղայիկ այն ինչ ծնեալ էր 'ի մօրէ իւրմէ՝ յայնժամ ձօնեաց զնա դիւաց աճօրէն մայրն Փառանձեմ, և վասն այնորիկ լի էր դիւօք 'ի տղայութենէ իւրմէ: Վասն զի ճանապազ զկամս դիւաց առնէր, վասն այսորիկ և զբժշկութիւն իսկ ոչ կամէր գտանել, զի ճանապազ վարժէր զանձն իւր դիւօք, և կախարդանօք երևեփն դևին 'ի նմա. և ամենայն մարդ զդևսն 'ի նմա աչօք բացօք տեսանէին: Զի յորժամ մարդիկ ճանապազօր յայգորել ելեալ մտանէին, տեսանէին՝ զի յօձից կերպարանս ելանէին 'ի ծոցոյն Պապայ թագաւորին, և պատէին զուսօք նորա, և ամենեքեան ոյք տեսանէին զնա, երկրնչէին 'ի նմանէ և նուպ երթալ: Իսկ նա պատասխանի տայր մարդկանն ասելով՝ թէ մի՛ երկնչիք, զի սոխա իմ եմ. և ամենայն մարդ յամենայն ժամ տեսանէին զայսպիսի ինչ կերպարանս 'ի նմա:

Զի բազում համբարձ դիւաց համբարեալ էին 'ի նմա. և յամենայն ժամ ամենայն մարդոյ երեւէր այս, որ գամ մի զթագաւորն տեսանէին. բայց յորժամ հայրապետն Ներսէս մտանէր առաջի նորա կամ սուրբ եպիսկոպոսն Խադ, դևքն չերևեալ աներևոյթ լինէին: Եւ էր թագաւորն Պապ 'ի պղծութեան բաւալեալ. և երբեմն այլոց էգ եղեալ տայր զինքն 'ի խառնակութիւն. և երբեմն զայլս էգ արարեալ, զարուսն խառնակեալ պղծէր. և երբեմն ընդ անասունս խառնակէր: Եւ այսպէս դիւօք վարեալ, որ 'ի նմայն էին բնակեալ զամենայն աւուրս կենաց իւրոց:

ԳԱԳ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ, ԹԷ ԻՆՉՊԵՍ ԼՑՎԱԾ ԷՐ ԴԵՎԵՐՈՎ ԵՒ ԹԷ ԻՆՉՊԵՍ ԷՐ ՎԱՐՎՈՒՄ

Իսկ Պապ թագաւորը, երբ դեռ նոր ծնված երեխա էր՝ նրա աճօրեն Փառանձեմ մայրը նրան դևերին ընվիրեց, ուստի և նա տղայութենից ի վեր լի էր դևերով: Որովհետև նա միշտ դևերի կամքն էր կատարում, ուստի և չէր կամենում բժշկվել, այլ միշտ իր անձը վարժեցնում էր դևերով, և դևերը կախարդությամբ երևում էին նրա վրա, և ամեն մարդ բաց աչխով տեսնում էր նրա վրա դևերը: Որովհետև երբ մարդիկ ամեն օր գալիս էին թագավորին բարի լույս ողջունելու՝ տեսնում էին որ (դևերը) օձերի կերպարանքով դուրս էին գալիս Պապ թագավորից ծոցից և փաթաթվում էին նրա ուսերին: Բոլոր տեսնողները վախենում էին մոտ գնալ, իսկ նա այդ մարդկանց պատասխանում էր և ասում, թե «Մի՛ վախեցեք, սրանք իմն են». և ամեն մարդ ամեն ժամանակ այսպիսի կերպարանքներ էին տեսնում նրա վրա:

Նրա մեջ բնյն էին դրել մեծ բանակությամբ դևեր ու միշտ երեվում էին այն մարդկանց, որոնք գալիս էին թագավորին տեսնելու. բայց երբ Ներսես հայրապետը կամ Խադ սուրբ եպիսկոպոսը մտնում էին թագավորի մոտ՝ դևերը չէին դառնում, աներևութանում էին: Եվ Պապ թագավորը շաղախված էր պղծության մեջ. երբեմն ինքը էգ էր դառնում և իրեն ճանճնում էր խառնակության, երբեմն ուրիշ արուների էգ դարձնելով խառնակվում էր նրանց հետ, երբեմն էլ անասունների հետ էր խառնակվում: Եվ այսպես իր կյանքի բոլոր օրերում նա ենթարկված էր դևերին:

ՅՈՒՐԲ ՆԵՐՍԵՍԻ ՀԱՆԴԻՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԱԳ ԹԱԳԱՎՈՐԻՆ, ՈՐԻՆ ԹՇՆԱՄԻ ԷՐ ՆՐԱ ՄԵՂՔԵՐԻ ԳԱՅՃԱՌՈՎ

Իսկ Հայոց Ներսես եպիսկոպոսապետը միշտ դիմադրում էր Պապ թագավորին, նրան նախատում էր և հանդիմանում ծանր փաստացի հանդիմանություններով. նրա բազմաթիվ չար գործերի պատճառով բույլ չէր տալիս եկեղեցու շեմքը ոտ դնել և ոչ ներս մտնել: Միշտ նրան նախատում, հանդիմանում, խրատում էր, որ կորստական գործերից հրաժարվի, ուղղության գա. շարունակ նրա հետ խոսում էր, որ ապաշխարության գա: Նրա առաջն էր գնում .ս. գրից վկայություններ վերջին դատաստանի հավիտենական պատիժներով, աև էր ձգում

զգաստութիւն և ի լաւանալ, և յառաջադիմութեան արդարութեան կարգացն և գործոցն արբութեան փոյթ առնել:

Իսկ թագաւորն Պապ լսելոյ նմա ոչ լսէր. այլ և ընդդիմացեալ ևս մեծաւ բշնամանօք, և մահու սպասէր նմա, և կամէր սպանանել զնա յայտնի, բայց ի թագաւորէն Յունաց յայտնի և անարգել անգամ բանիւ չիշխէր, և ոչ սակաւ մի համարձակել ի նա, թող թէ մահու ապագաւ: Նա և իւր իսկ աշխարհի մարդիկն և՝ զօրն ամենայն չառնուին յանձն գայսպիսի ինչ առնել. այր՝ զորմէ ամենայն մարդիկ աշխարհին Հայոց կախեալ կային զնմանէ վասն արդար գործոցն, սրբութեան գնացիցն յաշխարհի, խաղաղութեամբ մեծի առաջնորդութեանն, նա և վասն յայտնի նշանագործութեանն սմանչելեացն՝ զոր առնէր, իբրև յերկնաւոր հրեշտակ այնպէս նայէին ամենայն մարդ: Եւ թագաւորն ոխացեալ էր ընդ նմա, և խնդրեր սպանանել զնա. այլ յայտնի զայս և բանիւ ճառել ոչ իշխէր, թէ ոչ՝ իւր զօրն սպանանէին զնա: Զի այնպէս ամենայն մարդ ապաստանեալ էին յաղօթս նորա, և սիրէին զնա առհասարակ մեծամեծ և փոքունք, պատուականք և անարգք, ազատ և չինականք միանգամայն:

Ի

ՅԱՂԱԳՍ ՄԱՀՈՒ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅԱԳԵՏԻՆ ՆԵՐՍԷՍԻ Ի ԹԱԳԱՒՈՐԷՆ ԳԱԳԱՅ, ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԿԱՄ ՋԻՒ՛ՐԴ ՍԳԱՆԱՒ Ի ՆՄԱՆ

Այլ թագաւորն Պապ յամենայն ժամ էր բշնամի մեծի քահանայապետին վասն յանդիմանութեան մեղաց իւրոց չարեաց՝ զոր գործէրն, և յանդիմանել լինէր յառնէն աստուծոյ ի Ներսիսէ հանապազ: Ոչ զգաստանալ կամէր և ոչ գալ յուղղութիւն, և ոչ համբերել կարէր հանապազորդ նախատանացն յանդիմանչին. էարկ ի միտս սպանանել զմեծ քահանայապետն աստուծոյ գՆերսէս: Իբրև յայտնի զայս ոչ մարթէր նմա առնել, կեղծաւորել կերպարանէր իբրև այն եթէ յուղղութիւն ինչ եկեալ է. աղաչէր զքահանայապետն աստուծոյ տալ նմա ապաշխարութիւն: Եւ կոչեցաւ յապարանս իւր ի խախ աւանի յՏկեղեաց գաւառի. առ նմա ընթրիս, աղաչեաց զայրն աստուծոյ բազմել նմա յարհուհական գահոյսն, և իբրև այնու թէ սրբեացի նա ի չարեաց անտի իւրոց, և ինքն այնու հետ յայնմհետէ յապաշխարութիւն մտցէ:

Իսկ իբրև զառաջինն բազմեցոյց, ինքնին թագաւորն յոտն կացեալ հոլանեալ, ի՛ մէջ գետին անցեալ, անապակ մատուցանէր առնն աստուծոյ Ներսիսի յընթրիս անդ, և դեղ մահու ընդ կոտինդն խառնեալ

նրա վրա, որպեսզի զգաստանա և ուղղվի և արդարության կարգերի ու մաքուր գործերի հետևի:

Իսկ Պապ թագավորը ամենևին նրան չէր լսում, այլ դեռ հակառակում էր նրան և ներս թշնամանում, նրա մահվան էր սպասում և ցանկանում էր նրան սպանել, բայց Հունաց թագավորի ահից նա չէր համարձակվում նույնիսկ նրան խոսքով անարգել նայտնապես կամ նրա դեմ խստություն բանեցնել. թող թե մահացնել: Հենց (Հայոց) աշխարհի ժողովուրդն էլ, զորերն էլ թույլ չէին տա այսպիսի բան անել մի մարդու, որից կախված էին Հայոց աշխարհի բոլոր մարդիկ՝ նրա արդար գործերի, մաքուր վարքի, խաղաղ առաջնորդության պատճառով, և նրա գործած հայտնի սքանչելի նշանների համար բոլորը նրա վրա նայում էին ինչպես երկնավոր հրեշտակի վրա: Եվ թագավորը ոխ էր պահում նրա դեմ, միջոց էր փնտրում նրան սպանելու, և հայտնապես այս բանն ասել անգամ չէր համարձակում, այլապես զորերը իրեն կսպանեին: Որովհետև բոլոր մարդիկ ապաստանել էին նրա աղոթքին և նրան առհասարակ բոլորը սիրում էին—մեծերն ու փոքրերը, պատվականներն ու հասարակ մարդիկ, ազնվականներն ու շինականները:

Ի

ՆԵՐՍԵՍ ՄԵՍ ՔԱՀԱՆԱՅԱԳԵՏԻ ՄԱՍԻՆ, ԹԷ ԻՆՉՊԵՍ ՍԳԱՆԵՑ ՆՐԱՆ ԳԱԳ ԹԱԳԱՎՈՐԸ

Իսկ Պապ թագավորը շարունակ բշնամի էր մեծ քահանայապետին, իր չար գործերի և մեղքերի հանդիմանության պատճառով, որովհետև Ներսեսը, աստծու մարդը, միշտ նրան հանդիմանում էր: Նա չէր կամենում զգաստանալ, ուղղության գալ, չէր էլ կարող դիմանալ հանդիմանողի մշտական նախատինքներին, ուստի միտքը դրեց աստծու մեծ քահանայապետ Ներսեսին սպանել: Բայց որովհետև այս բանը հայտնապես անել կարելի չէր՝ ուստի կեղծավորաբար այնպես ձևացրեց, իբրև թե ուղղության է դառնում, և աղաչում էր աստծու քահանայապետին, որ իրեն ապաշխարանք նշանակե: Նրան հրավիրեց իր ապարանքը նկեղյաց գավառի Խախ ավանում. նրա համար ընթրիք պատրաստեց, աստծու մարդուն աղաչեց, որ արհուհական գահույքը բազմի, իբրև թե սրանով նա իր չար գործերից կմաքրվի և այնուհետև կսկսի ապաշխարել:

Երբ նրան առաջին տեղում բազմեցրեց՝ ինքը թագավորը, վրայի պատմուճանը հանած, մեջտեղում ոտքի կանգնած՝ ընթրիքի ժամանակ անապակ (գինի) էր մատուցանում աստծու մարդուն՝ Ներսեսին, և

մատուցանէր նմա: Եւ յորժամ լմպէր զբաժակն զայն՝ խմացեալ աճդէն, խօսել սկսաւ և ասէ. Օրհնեալ է տէր աստուած մեր, որ արժանի արար զիս լմպել զբաժակս զայս, և հասանել մահուս՝ որ վասն տեառն է, որում և ցանկացեալ էի ի մանկութենէ իմմէ: Արդ զբաժակս փրկութեան ընկալայց, և զանուն տեառն կարդացից, զի և ես հաւասարեցից հասանել ի մասն ժառանգութեան սրբոցն ի լոյս: Այլ ես, ո՛վ թագաւոր, արժան էր իբրև զայր թագաւոր յայտնի հրաման տալ և սպանանել. զի ո՞վ էր՝ որ արգելոյր զես, կամ ո՛վ էր՝ որ պահէր զձեռն ես ի գործոց, զոր ինչ կամէիր գործել: Բայց, տէր, թող սոցա զայս գործս՝ զոր ինչ գործեցին յիս. և ընկալ զհոգի ծառայիս ես, որ հանկուցիչդ ես ամենայն աշխատելոց. և կատարիչ ամենայն բարութեանց:

Զայս և այսպիսի, և որ ինչ նման են այսպիսի բանք, խօսեցաւ. և ես ուցեալ գնաց ի վանս իւր: Եւ զետ գնացին նորա ի տանաւէն արքունի ամենայն մեծամեծքն նախարարքն Հայոց, և Մուշեղ սպարապետն Հայոց, և Հայր Մարդպետ. և ամենայն որ միանգամ էին անդ, մտին ընդ նմա ի վանս նորա: Եւ իբրև եմուտ ի վանս իւր, վերացուցեալ զպարեգօտս իւր՝ ի վերայ սրտին ցուցանէր կապուտակեալ հան զշափ նկանակի միոյ: Իսկ մեծամեծք նախարարացն մատուցանէին քիւրակէս և անդեղեայս վասն ապրելոյ. իսկ նա ոչ կամեցեալ զայն ի բաց մերժէր, այլ ասէ. Մեծապէս եղև ինձ բարի, զի եհաս ինձ մեռանել վասն զգուշութեան պատուիրանացն Քրիստոսի: Եւ հանգի դուք ձեզէն գիտէք, զի հրապարակախօսէի ընդ ձեզ՝ զոր ինչ խօսէի, արժան էր ինձ հրապարակաւ մեռանել ի ձէնջ, զի այնմ[50] իսկ ցանկացեալ էի. բայց բարւոք եղ ինձ վիճակն ընդ բնիսրս, և ժառանգութիւն իմ հանոյ եղև ինձ: Օրհնեցից զտէր, որ այս մասին վիճակի ժառանգութեան ապրեցոյց զիս. և մեծապէս խնդութիւն է ինձ, զի վաղվաղակի լուծայց ես յանօրէնէն և յամբարիշտ աշխարհէ աստի յայսմանէ: Եւ բազում ինչ խօսեցաւ ընդ նոսա, և զգուշացոյց զնոսա. և աղաչեաց զամենեսին զգուշանալ անձանց և պահել զպատուիրանս տեառն:

Եւ յետ այսորիկ սկսաւ զարիւնն գունդ գունդ ի ներքուստ ընդ բերանն արտաքս հոսել իբրև զերկուս ժամս: Եւ յետ այսորիկ յարուցեալ եկաց յաղօթս. եդեալ ծունր, խնդրէր զթողութիւն ի վերայ սպանողին իւրոյ: Ապա յետ այսորիկ յիշէր յաղօթս իւր զամենայն մարդս, զմերձաւորս և զհեռաւորս, զանարգս և զպատուականս. և զայնոսիկ անգամ, զորս երբէք ոչ ճանաչէր զնոսա, յիշէր յաղօթս իւր: Եւ յետ աղօթիցն կատարելոյ համբարձեալ զձեռս իւր և զաչս իւր ընդ երկինս, ասաց. Տէր Յիսուս Քրիստոս, ընկալ զհոգի իմ: Եւ զայս ասացեալ, արձակեաց զոգի: Եւ առեալ զմարմին սրբոյն Ներսէսի զառնն աստուծոյ

բմպելիքի մէջ[188] մահվան դեղ խառնելով՝ նրան առաջարկեց: Երբ (ս. Ներսեսը) այդ բաժակը խմեց՝ իսկույն հասկացավ, խոսել սկսեց և ասաց. «Օրհնյալ է մեր տեր աստվածը, որ ինձ արժանացրեց այս բաժակը խմելու և տիրոջ համար այս մահին հասնելու, որին ցանկանում էի մանկությունից ի վեր: Արդ՝ այս փրկության բաժակը կընդունեմ և տիրոջ անունը կկանչեմ, որպեսզի ես էլ արժանանամ հասնել և մասն ստանալ սրբերի ժառանգությունից լույսի մեջ: Բայց ձեզ, ո՛վ թագավոր, արժան էր իբրև թագավորի հայտնի հրաման տալ ինձ սպանելու. ո՞վ պետք է ձեզ արգելեր, կամ ո՞վ պետք է ձեռդ բռներ ու ետ կանգնեցներ այդ գործից, որ դու կամենում էիր գործել: Բայց դու, տե՛ր, ների՛ր սրանց այս գործը, որ իմ դեմ գործեցին, և ընդունիր ես ծառայիդ հոգին, դու որ հանգիստ ես պարգեւում հոգնած աշխատածներին և կատարում ես ամեն բարություն»:

Այս և սրա նման ուրիշ բաներ էլ խոսելով՝ վեր կացավ գնաց իր կացարանը: Նրա հետ արքունական սենյակից դուրս եկան և գնացին Հայոց բոլոր մեծամեծ նախարարները և Հայոց Մուշեղ սպարապետը և Հայր մարդպետը և առհասարակ բոլորը որոնք սեղանատանն էին՝ եկան, նրա հետ նրա կացարանը մտան: Երբ իր կացարանը հասավ՝ պարեգոտը բացեց և ցույց տվեց սրտի վրա մի տեղ, որ կապուտակել էր մի նկանակի (ճացի) մեծությամբ: Մեծամեծ նախարարները նրան բյուրակե[189] և գեղաքիներ էին մատուցանում նրան փրկելու համար, բայց նա չընդունեց, մերժեց ու ասաց. «Ինձ համար մեծ բարիք եղավ այս, որ ինձ վիճակվեց մեռնել Քրիստոսի պատվիրաններին զգույշ մնալուս համար: Դուք իմ իմ եղբայրդ գիտեք, որ ինչ որ ձեզ խոսում էի՝ հրապարակով էի խոսում. պետք էր որ ես էլ ձեզանից հրապարակով մեռնեի, որին ցանկանում էի: Բայց ինձ աջող վիճակ դուրս եկավ (աստծու) ընտրյալների հետ, և իմ ժառանգությունը հաճելի է ինձ: Օրհնում եմ տիրոջը, որ ինձ հասցրեց ժառանգության այս վիճակին և մեծապես ուրախ եմ, որ շուտով կպատճառվիմ ու կհեռանամ այս աշխարհից և ամբարիշտ աշխարհից»: Ուրիշ շատ բան էլ խոսեց նրանց հետ, զգուշացրեց նրանց, բոլորին աղաչեց՝ զգույշ լինել իրենց անձերին և տիրոջ պատվիրանները պահել:

Այնուհետև արյունն սկսեց գունդ գունդ դուրս գալ և բերանից հոսել մոտ երկու ժամ: Սրանից հետո նա վեր կացավ, ծունկ չոքեց և խնդրում էր թողություն շնորհել իրեն սպանողին: Սրանից հետո աղոթում հիշում էր բոլոր մարդկանց, մերձավորներին և հեռավորներին, անարգներին և պատվավորներին, հիշում էր աղոթում նույնիսկ նրանց, որոնց բոլորովին չէր ճանաչում: Աղոթքը վերջացնելուց հետո ձեռներն

պաշտօնեայք եկեղեցւոյն, և Փաւստոս եպիսկոպոս, և պաշտօնէիցն գլխաւոր Տղաւտ, և Մուշեղ սպարապետն և Հայր Մարդպետ, և ամենայն ազատագունդ բանակն արմունի, բարձին յաւանէն ի խախ գեղչ՝ ուր գործն կատարեցաւ, տարան ի Թիլն յաւանն յիւր գեւղն: Հանդերձ սաղմոսիւ և օրհնութեամբ, կանթեղիւ վառելովք և մեծապաշտմամբ և բազում յիշատակօք զսուրբն յուղարկեցին: Բայց մինչ չև էր ծածկեալ գմարմինն սրբոյն, իճն թագաւորն Պապ երթեալ պատեաց և թաղեաց ի մարտիրոսական ի բնակութիւնն. բայց թագաւորն Պապ ի չմեղս լինելով՝ չլուելոյն առնէր, իբրև թէ իւր չիցէ գործեալ զայն:

ԻԲ

ՅԱՂԱԳՍ ՏԵՍԼԵԱՆՆ՝ ՈՐ ԵՐԵԻՑԱՒ ԱՐԱՆՑՆ ՍՐԲՈՑ ԱՆԱԳԱՏԱՒՈՐԱՑ, ՇԱՂԻՏԱՑ ԵՒ ԵԳԻՓԱՆՈՒ, ՄԻՆՉ ԴԵՌ ՆՍՏԵԻՆ Ի ԼԵՐԻՆ

Արք երկու կրօնաւորք անապատաւորք մինչ դեռ նստէին ի լերինն, անուն միում Շաղիտա, և էր սա ազգաւ ասորի, և նստէր յԱռեւտ լերինն. և միումն անուն Եպիփան, և էր սա ազգաւ Յոյն, և նստէր սա ի մեծի լերինն ի տեղի դիցն՝ զոր կոչեն աթոռ Նաճատայ, և էին սոքա երկոքին լեալ աշակերտք սրբոյն Դանիէլի մեծի՝ զոր վերագոյնն յիշեցաք, և մինչ դեռ յիւրաքանչիւր լերին նստէին սոքա, ի ժամու՝ յորում մեռաւ սուրբն Ներսէս, տեսանէին սոքա յիւրաքանչիւր լեառնէ աչօք բացօք ի տուընջեան ժամու զայրն աստուածոյ զՆերսէս իբրև յամպս յափշտակեալս: Զի հրեշտակք աստուածոյ տանէին զնա ի վեր, և գունդք գունդք գային նմա առաջի: Իբրև տեսին զայս տեսիլ անապատաւորքն, զարմացեալք ընդ գործն ընդ այն. բայց Շաղիտայն՝ որ էրն յԱռեւտ լերինն՝ հանգի էր հմուտ այր, գիտաց եթէ հանգուցեալ է սուրբն Ներսէս, և այն ոգիք նորա երևին նմա. բայց Եպիփան եդ ի մտի իւրում, թէ մարմնով իցէ յափշտակեալ զնա: Ապա յարեան յիւրաքանչիւր լեռնէ ընթացեալք փութով մինչև յՆկեղեաց գաւառ. եկին հննեցին տեսին զի կատարեալ էր սուրբ հայրապետն Ներսէս. և եկին մինչև ի Թիլոյ գեւղն, և տեսին զտեղին՝ յորում եղեալ էր գնա, դիպեալք միմեանց արձ հաւատարիմ պատմէին միմեանց զոր ինչ տեսինն՝ առաջի ժողովրդոցն: Բայց էին արձ այն հրեշտակակրօնք, յանապատին սնեալք և կեցեալք. զի և կարօղ էին նշանս առնել մեծամեծս, և ամենեցուն գիտելի և ծանօթ էին գործ նոցա:

ու աչերը երկինք բարձրացնելով ասաց. «Տեր Հիսուս, բեղուկի՛ր իմ հոգիս»: Այս ասելով հոգին ավանդեց:

Եվ աստծու մարդու՝ սուրբ Ներսեսի մարմինը վերցրին եկեղեցու պաշտոնյաները և Փավստոս եպիսկոպոսը, պաշտոնյաների գլխավոր Տղաւտը[190] և Հայոց Մուշեղ սպարապետը և Հայր մարդպետը և արքունական բանակի ամբողջ ազնվականների զուգդը: Մարմինը վերցրին հին ավանից, որտեղ սպանությունը կատարվեց, և տարան իր գյուղը Թիլ ավանը: Սրբին հուղարկավորեցին սաղմոսներով, օրհնություններով, վառված կանթեղներով, հանդիսավոր պաշտամունքով և շատ հիշատակներով: Բայց մինչ սրբի մարմինը դեռ չէր թաղված՝ իճը Պապ թագավորը եկավ, մարմինը պատեց և մարտիրոսական դամբարանում թաղեց: Նա չմմեղ էր լինում, անգետ էր ձևանում, իբրև թե իճը չէ գործել այդ գործը:

ԻԲ

ԱՅՆ ՏԵՍԻԼՔԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՐԵՎԵՑ ՇԱՂԻՏԱ ԵՎ ԵԳԻՓԱՆ ՍՈՒՐԲ ԱՆԱԳԱՏԱԿԱՆՆԵՐԻՆ, ՄԻՆՉ ՆՐԱՆՔ ՆՍՏԱԾ ԷԻՆ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Երկու անապատական կրոնավորներ կային, որոնք նստում էին լեռներում, մեկի անունը Շաղիտա, որ ազգով ասորի էր և նստում էր Առյուծ լեռնում, մյուսի անունը Եպիփան, որ ազգով հույն էր և նրա նստում էր մեծ լեռնում, աստվածների (մեհյանների) տեղում, որ կոչվում է Անահտի[191] աթոռ: Սրանք երկուսն էլ աշակերտ էին եղել սուրբ մեծն Դանիելին, որին վերը հիշեցինք: Արդ՝ երբ սրանք երկուսը նստած էին այն ժամին, երբ սուրբ Ներսեսը մեռավ՝ նրանցից յուրաքանչյուրն իր լեռնից բաց աչքով ցերեկ ժամանակ տեսնում էր, որ սուրբ Ներսեսը կարծես հափշտակվում էր ամպերի մեջ. որովհետև հրեշտակները նրան վեր էին տանում և գունդ գունդ գնում էին նրա առաջ: Անապատականները երբ այս տեսիլը տեսան՝ զարմացան այս տեսիլի վրա: Բայց Շաղիտան, որ Առյուծ լեռան վրա էր նստում, հմուտ մարդ լինելով՝ հասկացավ թե սուրբն Ներսես վախճանել է և իճը տեսնում է նրա հոգին: Իսկ Եպիփանը այնպես հասկացավ, թե սուրբ Ներսեսը հենց մարմնով հափշտակվել է երկինք: Ապա այս երկուսը իրենց լեռներից իջնելով փութով ու արագ հասան մինչև Նկեղյաց գավառը, հարցուփորձ արին, իմացան, թե սուրբ Ներսես հայրապետը վախճանվել է, և եկան մինչև Թիլ գյուղը և տեսան այն տեղը, ուր դրված էր նա: Այստեղ այս հավատարիմ մարդիկը իրար հանդիպելով՝ ժողովրդի ներկայությամբ պատմում էին իրենց տեսածները: Բայց այն մարդիկ հրեշտակային վարք ունեին, սնվել ու ապրել էին անապատում, կարող էին նաև մեծամեծ նշաններ գործել, և ամենին հայտնի ու ծանոթ էին նրանց գործերը:

Շաղիտայս, այր սուրբ, էր լեալ աշակերտ մեծին Դանիէլի. և ի տղայութենէ իւրմէ սնեալ էր ճամակ յանապատս, և ընդ անապատաւորս խոտաճարակ լեալ էր: Եւ յետ հանգստեան սրբոյն Ներսիսի գնաց չոգաւ ի գաւառն Կորդուաց, և առնէր նշանս և սմանչելիս, և բնակէր ի մէջ առիւծոց. աւելի քան զխաս առեւծ հանապազ շրջէին ընդ նմա հանապազորդեալ: էր զի լինէր՝ զի յորժամ ցաւ ինչ ցաւէր գազանացն, գային շուրջ պատէին զնովաւ, և ձգձգէին զՇաղիտայն, և նշանաւ առնէին խնդրել զբժշկութիւն: Եւ էր երբեմն՝ զի առեւծ մի մեծ, և էր ելեալ եղէգն ընդ բաթուլ բազկին առիւծոյն, և եկն առեւծն առ սուրբն Շաղիտայն ի լեառնն՝ յորում նստէր. և զօրէն մարդոյ ի վեր առեալ զբաթուլն՝ ցուցանէր նմա զվէրն, նշանացէր նմա բժշկել զինքն: Իսկ սուրբն Շաղիտա հանէր գեղէգն՝ որ ընդ վէրն մտեալ էր, և բաւանէր ի վէրն, և բաշկինակաւն՝ զոր ընդ գլուխն իւր էր ածեալ՝ հանեալ պատէր զբաթ առիւծուն և բժշկէր:

Եւ այսպէս բիւրապատիկ և պէսպէս առնէր զսքանչելիս: Եւ գազանք էին կենաց կցորդ նորա, մինչ շրջէր նա յանապատս զամենայն աւուրս կենաց իւրոց: Եւ ի գետ իբրև հասանէր, կօշկօճն անցանէր ի վերայ ջուրցն գետոյն, և ոչ բանային կօշիկք նորա: Եւ յորժամ ի շէն ուրեք իջանէր, զբազում մոլորեալս դարձուցանէր նշանօք և արուեստիւ: Միայն շրջէր. և իբրև իջանէր ի շէնս. առնէր բժշկութիւնս բազում հիւանդաց. և էր սա աւուրբ ծերագոյն:

Բայց ամենայն մարդ սպասէր և ակն ունէր մանու նորա, վասն ըմբռնելոյ զմարմին նորա: Իսկ սուրբն Շաղիտա իմացեալ զայս՝ թէ սպասեն առնուլ զմարմին նորա բազում մարդիկ, ապա խնդրեաց Շաղիտա յաստուծոյ, զի մի՛ ոք ըմբռնեսցէ զմարմին նորա: Եւ եղև օր մի յաւուրց, որպէս սովորութիւն էր իւր, գնալ ի վերայ ջուրցն գետոյն: Եւ մինչ դեռ անցանէր նա ընդ գետն Կորդուաց, ըստ խնդրուածոցն իւրոց՝ որպես և խնդրեաց նա, յանկարծակի՝ իբրև կայր ի մէջ գետոյն՝ յանկարծօրէն ընդ ջրովն մտեալ սուրբն Շաղիտայն ծածկեցաւ: Եւ մեծ գոյժ եղև գաւառին. և ժողովեցան անչափ բազմութիւնք մարդկանն ի մի վայր եկեալք կուտեցան, մինչև նատին դարձուցին ընդ այլ շրջեցին զգետն: Եւ խնդրէին զմարմին սրբոյն Շաղիտայի, և ոչ կարացին ուրեք զտանել. զի իւր խնդրուածովն առ աստուած այսպէս էին լեալ յառաջագոյն, սոյնպէս և կատարեցաւ:

Այս Շաղիտան սուրբ մարդ էր. աշակերտել էր մեծն Դանիէլին. մանկութենից ի վեր անապատում էր սնվել և անապատականների հետ խոտաճարակ էր եղել: Սուրբ Ներսեսի վախճանելուց հետո Կորդուք գավառը գնաց, նշաններ ու սմանչելիքներ էր կատարում, բնակում էր առյուծների մէջ և ավելի քան քան առյուծ շարունակ շրջում էին նրա հետ: Պատահում էր, որ երբ գազանների մի տեղը ցավում էր՝ գալիս պատում էին նրա շուրջը, բաշխում էին նրան և նշաններով հասկացնում էին որ բժշկե: Մի անգամ մի մեծ առյուծի թաթը եղեգ էր խրվել. առյուծը եկավ սուրբ Շաղիտայի մոտ՝ նրա նստած լեռը, և մարդու նման թաթը բարձրացնելով՝ ցույց էր տալիս վերքը և նշանացի խրնդրում էր իրեն բժշկել: Իսկ սուրբ Շաղիտան եղեգը բաշում հանում էր, որ խրվել էր վերքի մեջ. բերում էր վերքի վրա և իր գլխի բաշկինակով պատում էր առյուծի թաթն ու բժշկում էր[192]:

Այսպես նա հազարավոր տեսակ սմանչելիքներ էր անում, և գազաններն էին նրա կյանքի ընկերները՝ մինչ նա շրջում էր անապատում իր կյանքի ամբողջ ընթացքում: Երբ նա մի գետի էր մոտենում՝ կոշիկներով անցնում էր գետի ջրերի վրայով, և կոշիկները չէր թրջվում: Երբ նա մի շեն (գյուղ) էր գալիս՝ նշաններով ու սմանչելիքներով շատ մոլորյալներ դարձի էր բերում, հիվանդներ էր բժշկում:

Նա հասակով ավելի ծեր էր, ամեն մարդ սպասում էր նրա մահին՝ որպեսզի կարողանա մարմինը ձեռք բերել: Սուրբ Շաղիտան խմանալով, թե շատ մարդիկ սպասում են որ իր մարմինը ձեռք բերեն՝ աստծուց խնդրեց, որ իր մարմինը ոչ ոքի ձեռքը չանցնի: Եվ օրերից մեկում, երբ նա ըստ սովորության անցնում էր Կորդուքի գետով, մինչ ջրի մեջ կանգնած էր՝ հանկարծ ջրի տակը գնաց և ծածկվեց սուրբ Շաղիտան համաձայն իր խնդրի՝ ինչպես որ խնդրել էր: Գավառում մեծ գույժ բնկավ. մարդկանց մեծ բազմություն եկան մի տեղ կուտակվեցին, գետի ջուրը կարեցին, ուրիշ կողմ դարձրին և փնտռում էին սուրբ Շաղիտայի մարմինը, բայց ոչ մի տեղում չկարողացան գտնել, որովհետև նա առաջուց այսպես էր խնդրել աստծուց, և իր խնդիրը կատարվեց:

Այլ երանելին սուրբ Եպիփան էր ընդ[51] սրբոյն Շաղիտայի աշակերտ եղեալ մեծին Դանիէլի. և սա ի մանկութենէ սնեալ էր յանապատի: Եւ յետ մանուանն մեծի հանճայապետին Ներսիսի եկն բնակեցաւ նա ի մեծ Սոփս յանապատին, որ կոչի անուն տեղւոյն Մամբրէ, ի վերայ գետոյն՝ որ անուանեալ կոչի Մամուշեղ: Եւ էր բնակեալ ի հարանձաւս, և հանապազորդեալ էր ընդ գազանս անապատի, և ժողովէին առ նա արջ և իննի: Եւ էր սա հանապազորդեալ յանապատին, և առնէր սա մեծամեծ նշանս և սքանչելիս. և դարձուցանէր զբազում մոլորեալս ի ճեթանոսութենէ ի հրիստոնէութիւն, և լնոյր գերկիրն Սոփաց վանիւք. և դնէր վարժեար ընդ ամենայն երկիրն Սոփաց, և լինէր սուրբն Եպիփան լոյս երկրին Սոփաց, և լուսաւորէր զնոսա մեծապէս:

Անցանէր և յերկիրն Աղձնեաց, լուսաւորէր և զնոսա. և լնոյր գերկիրն Աղձնեաց վանեւրվ, և շինէր վկայանոց մի յաւանին ի Բաղաբին Տիգրանակերտի, և յօր յիշատակի սրբոցն ի փրկութիւն և ի բարեխօսութիւն աշխարհի. և առնէր իննի նշանս, և դառնայր իննի յիւր վանսն: Եւ էր մօտ ի գետն Մամուշեղ աղբեւր մի, և ձուկն բազում ելանէր ընդ ակն աղբերն. և բազում մարդիկ հանեալ զձուկն, օգտէին ի նմանէ: Ապա երկու եղբարք ի վերայ ձկանն հակառակեալք, էսպան միմնն զմիմնն. և իբրև գիտաց սուրբն Եպիփան, ասէ. Յայսմ հետէ այտի ոք ձուկն մի՛ կերիցէ: Եւ անդէն դառնացաւ ձուկն տեղւոյն, և եղև իբրև զլեղի դառն մինչև ցայսօր ժամանակի. և ոչ ոք որսաց զնա մինչև ցայսօր ժամանակի: Բազում և այլ զօրութիւնս առնէր և նշանս անչափս:

Իբրև բազում կարգս ուղղութեան բողոյր ի գաւառսն յայնոսիկ սուրբն Եպիփան. իսկ նա էառ ընդ իւր զաշակերտսն իւր արս միանձունս լեառնականս անապատականս, արս հինգ հարիւր, երթալ գնալ յերկիրն Յունաց: Եւ մինչ դեռ երթային, ի ճանապարհին դիպեցաւ նոցա կին մի. իբրև անցին ընդ կինն, սկսաւ փորձել զնոսա Եպիփան, և ասէ. Իբրև զի՛ գեղեցիկ էր կինն և վայելուչ: Ասէ մանուկ մի յաշակերտաց[52] անտի. Կինն, զոր դու գովեցեր, միականի էր: Եւ ասէ սուրբն Եպիփան. Դու բնաւ ընդէ՞ր նայեցար տեսանել զերեսս նորա. տեսանե՞ս զի խորհուրդ չարք կան ի բեզ: Եւ անդէն մեկնեաց զմանուկն յիւրմէ, և հալածեաց զնա: Եւ իննի չոգաւ եմաւտ ի ծով մեծ, և նաւօք

Երանելի սուրբ Եպիփանը սուրբ Շաղիտայի բնկերն էր եղել՝ և մեծն Դանիելի աշակերտը. սա էլ մանկությունից ի վեր սնվել էր անապատում: Ներսես մեծ հանճանայապետի մանից հետո եկավ բնակեցավ Մեծ Սոփում, Մամբրե կոչված տեղի անապատում. Մամուշեղ անուն գետի վրա: Նա բնակում էր հարանձավներում և շարունակ լինում էր անապատի գազանների հետ. նրա մոտ ժողովվում էին արջեր և իններ: Նա միշտ լինում էր անապատում, մեծամեծ նշաններ և սքանչելիքներ էր գործում, շատ մոլորյալներ հեթանոսությունից հրիստոնեության էր դարձվում, Սոփի երկիրը լցնում էր վանքերով, ուսուցիչներ էր նշանակում Սոփի ամբողջ երկրում. սուրբ Եպիփանը Սոփի երկրի համար լույս էր դառնում, մեծապես լուսավորում էր ժողովուրդը:

Անցնում էր նաև Աղձնյաց երկիրը, նրանց էլ լուսավորում էր, Աղձնյաց երկիրը լցնում էր վանքերով, և մի վկայարան էր շինում Տիգրանակերտ քաղաքում, և արքերի հիշատակն էին այնտեղ կատարում, որ նրանց բարեխոսությամբ աշխարհը փրկվի, իմն էլ նշաններ էր կատարում և դառնում գնում էր իր կացարանը: Եվ Մամուշեղ գետի մոտ մի աղբյուր կար, որի ակունքից շատ ձուկ էր դուրս գալիս, և շատ մարդիկ այդ ձկները բռնում օգտվում էին: Մի անգամ երկու եղբայր ձկան պատճառով իրար հետ կռվեցին, և մեկը մյուսին սպանեց: Երբ Եպիփանը այս բանը լսեց՝ ասաց. «Այսուհետև ոչ ոք այդտեղից ձուկ չուտե»: Եվ իսկույն այդ տեղի ձուկը դառնացավ, լեղիի նման դառնացավ մինչև այսօր, և ոչ ոք մինչև այսօր այդ տեղից ձուկ չէ որսում: Ուրիշ անթիվ զորություններ ու նշաններ էր կատարում:

Այդ գավառներում սուրբ Եպիփանը շատ ուղղության կարգեր հաստատեց: Հետո նա առավ իր աշակերտներին,— լեռնաբնակ անապատական մենակյաց մարդիկ, հինգ հարյուր հոգի,— և ճանապարհ բռնեց Հունաց աշխարհը գնալու: Մինչ գնում էին՝ ճանապարհին նրանց մի կին հանդիպեց: Երբ այդ կնոջ մոտով անցան՝ Եպիփանը սկսեց փորձել աշակերտներին և ասաց. «Վա՜ղ, ի՜նչ գեղեցիկ ու վայելուչ կին էր»: Նրա աշակերտներից մանկահասակ մեկն ասաց. «Քո գոված կնոջ մի աչքը կույր էր»: Սուրբ Եպիփան ասաց. «Իսկ դու ինչո՞ւ նրա վրա նայեցիր որ երեսը տեսնես, քեզ մեջ ուրեմն չար խորհուրդներ կան»: Անմիջապես այդ մանուկին իրանից հալածեց, հեռացրեց: Ինքը եկավ մեծ ծովի մոտ, նավերով անցան հասան մի անապատ կղզի: Այդ

անցին յանապատ ի կողիս. և ունէր զկողին զայն օձից բազմութիւնք, և էին յայնմ կողուջ բնակեալ օձք իժ և խարբ, բազում գազանք դաժանք թունաւորք: Եւ եղև իբրև չոգան, եհաս սուրբն Սպիփան ի կըղզին յայն, մեծեցան անտի գազանքն, և թողին զկողին և գնացին: Եւ այնուհետև ոչինչ վնաս եղև նոցա ի կողուջն յայնմիկ, այլ բնակեցան անդ խաղաղութեամբ: Անդ եկեաց սուրբն Սպիփան, անդէն ի նմին կողուջ հանգեաւ:

ԻԸ

ՅԱՂԱԳՍ ՄԵՍԱՄԵՍ ՆՇԱՆԱՑՆ ԵՒ ՍՔԱՆՉԵԼԵԱՑՆ, ՈՐ ԵՐԻՒՑԱԻ ՅԱՍՏՈՒԱՆՈՑ Ի ՄԱՄԲՐԷ ՅԵՏ ԳՆԱԼՈՑՆ ԵՊԻՓԱՆՈՒ

Ապա իբրև գնայր սուրբն Սպիփան ի գաւառէն Ոսփոց յիւրմէ միանձնանոցէն՝ որ անուանեալ կոչի Մամբրէ, եթող անդ բազում եղբարս միաբանս միահաւանս հաւատացեալս կրօնաւորս հրիստոնէիցն, լեառնականս ճգնաւորս միանձունս. և ի վերայ նոցա երէց մի գլխաւոր: Բայց էին ի նոցանէ ոմանք, որ բնաւ ամենևին այլ ինչ կերակուր չէր ճաշակել նոցա ի մանկութենէ իւրեանց, բայց լոկ բանջար և ջուր. և զհամ գինւոյ գիտէին ոչ գի՛ւրդ լինի:

Եւ էր անդ եղբայր մի խստակրօն, որ մթին վարս վարէր. և ոչ ճաշակէր ամենևին ի բաժակէն կենարար փրկութեանն յուսոյն յարութեանըն, այս իմն, յարեներէն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Զի ոչ կարէր հաւատալ՝ թէ ճշմարտիւ արիւն իցէ Որդւոյն աստուծոյ, յորժամ ելանիցէ ի սեղանն աստուծոյ. այլ նմա գինի լոկ թուէր թէ իցէ, վասն այսորիկ վիճէր հանապազ ընդ բազումս: Իսկ եղև օր մի յաւուրց, իբրև կատարէին անդ զխորհուրդս գոհութեան պատարագին ի վկայանոցի անդ յայնմիկ՝ զոր էր շինեալ սրբոյն Սպիփանու, յորժամ հանին զնացն սրբութեան և զգինին՝ արիւնանալ պատարագին ի վերայ սեղանոյն, և կայր եղբայրն անհաւատ ի վկայանոցին: Եւ էրէցն ելեալ կայր ի վերայ առաջի սրբոյ սեղանոյն. յորժամ յառաջ էառ զմատուցանել զպատարագն համբառնայր ձեռս էրէցն ի վերայ սեղանոյն, և ասէր:

Տէր աստուած զօրութեանց, որ արարեր զամենայն յոչընչէ, և ստեղծեր զմարդ ի հողոյ կենդանի և անապականացու. և անցին զհոյով պատուիրանօքդ, և անկան ի մահ՝ իւրեանց պատուիրանազանցութեամբն: Եւ արդ արդար դատաստանօք քովք մեծեցեր զնոսա ի դրախտէն փափկութեան յայս աշխարհ՝ ուստի ստեղծեր, և գրաւեցան լինել ընդ մահապարտութեամբ. սակայն ոչ թողեր ի ձեռանէ, բարերարդ

կողին լիճն էր օձերով, իժեր և խարբեր էին բնակում այդ կողում, այլ և բազմաթիվ դաժան ու թունավոր գազաններ: Իսկ երբ սուրբն Սպիփան եկավ հասավ այդ կողին՝ գազաններն այնտեղից հաշվեցին, կողին թողին ու գնացին: Այնուհետև այն կողում նրանց ոչ մի վնաս չպատահեց, խաղաղ ապրեցին այնտեղ: Այստեղ էլ ապրեց սուրբ Սպիփանը և նույն կողում վախճանեցավ:

ԻԸ

ՄԵՍԱՄԵՍ ՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ՍՔԱՆՉԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԱՍՏՎՈՒՅ ԵՐԵՎԱՆ ՄԱՄԲՐԵՈՒՄ՝ ԵՊԻՓԱՆԻ ԳՆԱԼՈՒՅՑ ՀԵՏՈ

Երբ սուրբն Սպիփան հեռանում էր Ոսփոց գավառից, իր միայնաճոցից, որ Մամբրե էր կոչվում՝ այնտեղ թողեց շատ եղբայրներ—միաբաններ, միահավան հավատացյալ հրիստոնյա կրոնավորներ, լեռնաբնակ միանձն ճգնավորներ և մի երեցի նրանց վրա գլխավոր նշանակեց: Նրանց մեջ կային ոմանք, որ մանկությունից ի վեր բնավ ուրիշ կերակուր չէին կերել բան լոկ բանջարեղեն և ջուր, գինու համն էլ չէին առել, թե ինչպես է:

Նրանց մեջ կար մի խստակրոն եղբայր, որ մութ կյանք էր վարում և բոլորովին հրաժարվում էր ճաշակել հարության հույսի կենարար բաժակից, այսինքն մեր տեր Հիսուս Քրիստոսի արյունից: Որովհետև նա չէր կարող հավատալ, թե երբ այդ (գինին) սուրբ սեղանն է բերվում և հանձնայի ձեռով բաշխվում՝ իսկապես աստծու որդու արյուն է դառնում. այլ կարծում էր թե լոկ գինի է մնում. այս պատճառով էլ հաճախ վիճում էր շատերի հետ: Օրերից մեկում, երբ գոհության պատարագի խորհուրդն էին կատարում այն վկայարանում, որ շինել էր սուրբ Սպիփանը՝ և սուրբ հացն ու գինին բերին, պատարագի սեղանի վրա դրին, որպեսզի արյուն դառնա՝ այդ թերահավատ եղբայրն էլ այնտեղ էր գտնվում, վկայարանում. երեցը ելել կանգնել էր սեղանի առաջ և նախան պատարագը մատուցանելը՝ ձեռները բարձրացնում էր սեղանի վրա և ասում էր.—

«Ձորությունների տեր աստված, որ բոլոր արարածները ոչնչից ստեղծեցիր, մարդուն հողից ստեղծեցիր կենդանի և անապական. մարդիկ Ձո պատվիրանը զանց արին և իրենց պատվիրանազանցության պատճառով մահվան դատապարտվեցին, և դու արդար դատաստանով նրանց դուրս արիր փափկության դրախտից այս աշխարհը, որի (հողից նրանց) ստեղծել էիր և նրանք դատապարտվեցին մահով մեռնելու:

աստուած, այլ տեսչութեամբ և շնորհօք միածնիդ fո վերստին ծնընդեամբ նորոգեցեր զստեղծուածս fո. և բազում կերպարանօք այցելու եղեր արարածոց fոց: Առաքեցեր զմարգարէս, արարեր զօրութիւնս ազգի ազգի նշանս 'ի ձեռն սրբոց fոց՝ որ յազգս ազգս իւրեանց հաճոյ եղեն առաջի fո, եւտուր զօրէնս յօգնականութիւն, առաքեցեր հրեշտակս վերակացուս: Իսկ իբրև եկն կատարած ժամանակաց, խօսեցար ընդ մեզ միածին որդւովդ fո՝ որով գաշխարհս արարեր, որ է պատկեր փառաց fոց և կերպարանք էութեան fո, և կրէ զամենայն բանիւ զօրութեամբ. որ ոչ ինչ յափշտակեաց գեական Հօրն գրնութեանն հաւասար պատիւ անձինն, այլ աստուածն յաւիտենական 'ի յերկրի երեւեցաւ, ընդ մարդկան շրջեցաւ, 'ի սրբոյ կուսէն մարմնացաւ, զկերպարանս ծառայի էառ, և եղև 'ի նմանութիւն տկարութեանս մերոյ, զի առասցէ զմեզ նմանակիցս փառաց իւրոց: Զի յամենայն գայթակղութեանց և յամենայն մոլորութենէ փրկեցեր զմեզ. և բարձեր յամենայն երկրէ զանյուսութիւն թերահաւատութեան, և եւտուր գյուսոյ զհաւատս յարութեան ամենայն fոց արարածոց, որոց և զնմանութիւն պատկերի կերպարանացս fոց շնորհեցեր: Եւ հաւատովքն, զոր եւտուր զօրանալ 'ի մարդիկ, զամենեսեան առ հասարակ միանգամայն կեցուցեր շնորհելով. զի ոչ եթէ վասն արդարութեանց ինչ մերոց, զի ոչ ինչ արարաք գբարիս 'ի վերայ երկրի, այլ վասն ողորմութեան և գթութեան fո՝ զոր սփռեցեր 'ի մեզ՝ համարձակիմք խնդրել 'ի սրտագիտէդ, որ ճանես զսիրտս և զերիկամունս որդոց մարդկան: Դու, տէր, սրտագէտ յամենայնի, դու գիտես զճշմարտութեան զվաստակոց զառնս զայսորիկ, զի խստամբերութեամբ վարի 'ի վարս վաստակոց իւրոց, և չիք հաւատք 'ի սմա. արդ յաւել 'ի սա հաւատս fան զճատ մանանխոյ, զի մի՛ կորիցէ անձն սորա: Հովիւ fայ, որ ելերդ 'ի խնդիր ոչխարին կորուսելոյ, և եդիր զանձն fո 'ի վերայ խաշանց fոց, արդ և զսա փրկեա 'ի թերահավատութենէն՝ յոր ըմբռնեալս է, զի մի՛ յափշտակեսցէ թշնամին զանձն սորա, և fո ստեղծուածս և նմանութիւն կերպարանացս յապականութիւն յաւիտենական կորստեան մատնեսցի:

Եւ զայս աղօթս մատուցանէր էրէցն յառաջ fան զմատուցանելն պատարագին. և յետ այսորիկ մատոյց կատարեաց զպատարագամատոյցն զամենայն: Իբրև ասաց. Հայր մեր՝ որ յերկինս, եդ ծունր և կայր յաղօթս յերկար: Եւ մինչ դեռ եդեալ էր նորա ծունր և կայր յաղօթս, և կայր եղբայրն թերահաւատ 'ի յոտն, 'ի խոնարհ 'ի բեմէն նայէր ի սեղանն, սկսաւ տեսանել մեծամեծ սմաքչելիս աչօք բացօք իւրովք: Քանզի տեսանէր զՔրիստոս, զի իջեալ կայր 'ի վերայ սեղանոյն. և բացեալ էր իւր զվէրսն 'ի կողմանէ, զոր 'ի կողսն գեղարդեամբն խոցեցին. և

Բայց դու, բարեբար աստված, նրանց ձեռիցդ չքողիր, այլ fո միածնի խնամովդ ու շնորհովդ fո ստեղծածներդ երկրորդ ծնունդով նորոգեցիր և շատ կերպարանքներով այցելու եղար fո արարածներին: Մարգարեներ ուղարկեցիր, տեսակ տեսակ զորություններ ու նշաններ գործեցիր fո սրբերի ձեռով, որոնք ինձ հաճելի եղան, օրենքներ տվիր օգնության համար, հրեշտակներ ուղարկեցիր վերակացության համար: Իսկ երբ ժամանակների վերջը հասավ՝ մեզ հետ խոսեցիր fո միածին որդու միջոցով, որի հետ աշխարհն ստեղծեցիր, որ պատկեր է fո փառքի, կերպարանք է fո էության, որ կրում է ամեն ինչ զորավոր խոսքով, որ ոչինչ չհափշտակեց հոր էական բնությունից իր անձի պատվի համար, այլ հավիտենական աստվածը երկրի վրա երևեց, մարդկանց հետ շրջեցավ, սուրբ կույսից մարմնացավ, ծառայի կերպարանք առավ և մեր տկարության նմանեցավ, որպեսզի մեզ նմանակից դարձնե իր փառքին: Դու մեզ փրկեցիր ամեն տեսակ գայթակղությունից և մոլորությունից, աշխարհից վերացրիր որևէ անհույս թերահավատություն և fո բոլոր արարածներին շնորհեցիր հարության հույս և հավատ և նմանություն fո պատկերին ու կերպարանքին, և բոլորին առհասարակ կյանք շնորհեցիր այն հավատով, որը զորացրիր մարդկանց մեջ: (Այս բոլորն արիր) ոչ թե մեր որևէ արդարության համար, որովհետև մենք աշխարհիս վրա ոչ մի բարիք չենք գործել, այլ fո ողորմության և գթության շնորհիվ, որ մեր վրա սփռեցիր՝ համարձակում ենք խնդրել սրտագետիդ, որ ճանաչում ես մարդկանց սրտերն ու երիկամունքը, դու տեր, որ բոլորի սրտերը գիտես, դու ճանաչում ես այս մարդու նշմարիտ հգնություններ, որ խստակյաց կյանք է վարում իր հգնողական կյանքում, սակայն սրա մեջ պակասում է հավատը. արդ՝ տո՛ւր սրան հավատ մի մանանեխի հատի չափ[193], որպեսզի չկորչի: Ո՞վ fայ հովիվ, որ դուրս եկար կորած ոչխարը փնտռելու, որ fո անձը դիր fո խաչիների վրա՝ սրան ևս փրկի՛ր թերահավատությունից, որով բռնված է, որպեսզի թշնամին սրան չհափշտակի և այս fո ստեղծածն, որ fո կերպարանքի նմանությունն է կրում՝ հավիտենական կորուստի չմատնվի»:

Այս աղոթքն արավ երեցը պատարագը մատուցանելուց առաջ, հետո սկսեց պատարագը և ամբողջ պատարագամատույցը վերջացրեց: Երբ նա ասաց «Հայր մեր, որ յերկինս ես»՝ ծունկ չոգեց և երկար աղոթք էր անում: Եվ մինչ նա ծունկ չոգած աղոթք էր անում՝ թերահավատ եղբայրը ոտքի կանգնած՝ ներքինից՝ բեմից նայում էր դեպի սեղանը և բաց աչքերով մեծամեծ սմաքչելիք սկսեց տեսնել: Նա տեսնում էր Քրիստոսին, որ իջել էր սեղանի վրա, բացել էր կողքի վերքը, որ գեղարդով խոցելուց էր գոյացել, և կողքի վերքիցը արյունը կաթ-

'ի վիրէ կողիցն արիւնն ցեցղկացեալ հոսէր 'ի բաժակ անդր պատարագին, որ եդեալ էր 'ի վերայ սեղանոյն: Իսկ իբրև ետես զայս եղբայրն թեռաճաւատ կրօնաւորն, զարհուրեալ դողացեալ խռովեալ տագնապեալ յերկիր կործանեալ կայր, 'ի բերանս հարեալ, պարտեալ թալացեալ ոգին սպառեալ յիմեքեն:

Ապա երէցն յարուցեալ կատարեաց զգործ սրբութեան պատարագին. իջուցեալ զարբութիւն օրհնացն 'ի բեմբէն, ետես զեղբայրն զի յերկիր կործանեալ թալացեալ կայր: Իբր ետ ում տալ էր զօրէնսն, և եհան զմնացորդսն 'ի սեղանն, ապա իմն մատուցեալ բուռն հարկանէր զեղբօրէն. և տեսանէր, զի նա թալացեալ պակուցեալ կայր 'ի գետնին: Ապա չուր արկանէր ընդ բերանսն. իսկ նա ուրեմն երեր զոգի. և զգաստացեալ, մատեաւ եկաց պատմեաց զմեծամեծ սմանչելիսն՝ զոր ինչ ետեսն: Ապա կամեցաւ տալ նմա երէցն 'ի սրբութենէն անտի օրհնացն. իսկ եղբայրն չհաւանեալ չառնոյր յանձն, վասն զի անարժան համարէր զանձն իւր: Այլ ետ հատեալ անձինն, 'ի ներս իջեալ, զերթն ամ ապաշխարեալ զթեռաճաւատութիւն մեղաց իւրոց, և յետ երթն ամին ապա զանձն արժանի ապաշխարութեան համարէր, ելանել առնուլ ընդ օրէնսն հաւասարել: Սակայն 'ի նոյն հոր իջուցեալ զանձն իւր զամենայն աւուրս կենաց իւրոց, մինչև 'ի ճմին հոր վաղճանեցաւ եղբայրն: Ապա և նոյն երէցն հանգեաւ, և 'ի միասին երկոսիցն եղան 'ի ներս 'ի վկայանոցին, ուր սմանչելիք երևեցան յեղբայրանոցին Սպիփանու:

ԻԲ.

ՅԱՂԱԳՍ ՅՈՒՍԿԱՆ՝ ՈՐ ԷՐ 'Ի ՋԱՒԱԿԷ ԱՂԲԻԱՆՈՍ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ, ՋՈՐ ԿԱՑՈՑՑ ՓՈԽԱՆԱԿ ՆԵՐՍԻՍԻ ԹԱԳԱՒՈՐՆ ՊԱՊ ՅԻՒՐՈՑ ԿԱՄԱՑ՝ ԱՌԱՆՑ ՄԵՍ ԵԳԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻՆ ԿԵՍԱՐՈՒ. ԵՒ ՎԱՍՆ ԱՅՍՈՐԻԿ ԲԱՐՁԱՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ ՀԱՅՈՑ ՁԵԳԻՍԿՈՊՈՍՆ ՁԵՌՆԱԴՐԵԼ

Եղև յետ մահուանն հայրապետին Ներսէսի կացոյց թագաւորն Պապ զՅուսիկ եպիսկոպոս, որ էր 'ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսին Մանազկերտոյ: Ետ հրաման ունել նմա զտեղի հայրապետացն, իշխել փոխանակ նորա՝ զոր սպան. և էր նա փոխանակ նորա: Բայց լուաւ եպիսկոպոսապետն կեսարու՝ թէ սպանին զմեծ հայրապետն Ներսէս, և փոխանակ նորա տեղի նորուն զոր կացուցին զՅուսիկ՝ առանց նորա հրամանի եղեալ, զի ոչ որպէս սովոր էին առ հայրապետն տանել 'ի կեսարիա 'ի ձեռնադրութիւն:

ղբթելով հոսում էր պատարագի բաժակի մէջ, որ դրված էր սեղանի վրա: Թերահավատ կրոնավոր եղբայրը այս որ տեսավ՝ զարհուրեց ու դողաց. հուզված, շփոթված գետին կործանվեց, բերանը կարկամած, ուժասպառ, շնչասպառ ուշաթափ եղավ:

Իսկ երեցը (աղոթքից) վեր կենալով՝ սուրբ պատարագի խորհուրդը վերջացրեց և երբ սուրբ օրենքը բեմից իջեցնում էր՝ տեսավ այն եղբորը, որ ուշաթափ ընկած էր գետին: Երբ սրբությունը տվեց ում որ պետք էր, ապա մնացորդը դարձյալ տարավ սեղանի վրա դրեց և ներքև իջեցնելով բռնեց եղբորից, տեսավ որ ուշագնաց ընկած է գետնի վրա: Ջուր բերեց, բերանին սրսկեց. երբ նա վերջապես շունչ ֆաշեց և ուշքի եկավ՝ վեր կացավ ու պատմեց իր տեսած սմանչելիքը: Ապա երեցը կամեցավ սուրբ օրենքով նրան հաշակել, բայց նա հանձն չառավ, չհամաձայնեց, որովհետև իրեն անարժան էր համարում: Այլ նա իր համար մի հոր փորեց և մեջը մտնելով յոթը տարի ապաշխարեց իր թերահավատության մեղքը, և յոթը տարուց հետո համարեց որ իր ապաշխարությունը արժանացել է (թողության), դուրս էր գալիս ուրիշների հետ միասին հաղորդվելու: Բայց էլի նույն հորն էր իջնում բոլոր իր կյանքի օրերում և նույն հորումն էլ այդ եղբայրը վախճանեցավ: Ապա երեցն էլ վախճանեցավ, և երկուսը միասին այն վկայարանի ներսը դրվեցին, Սպիփանի եղբայրանոցում, որտեղ այս սմանչելիքն երևեց:

ԻԲ

ՀՈՒՍԻԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՂԲԻԱՆՈՍ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՏՈՀՄԻՑ ԷՐ, ԵՎ ՈՐԻՆ ՊԱՊ ԹԱԳԱՎՈՐԸ ՆԵՐՍԵՍԻ ՓՈԽԱՆԱԿ ՆՇԱՆԱԿԵՑ ԻՐ ԿԱՄՔՈՎ ԱՌԱՆՑ ԿԵՍԱՐԻԱՑԻ ՄԵԾ ԵԳԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ, ՈՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ԵԳԻՍԿՈՊՈՍ ՁԵՌՆԱԴՐԵԼՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑ

Ներսես հայրապետի մահից հետո Պապ թագավորը Հուսիկ եպիսկոպոսին նշանակեց, որ Մանազկերտի Աղբիանոս եպիսկոպոսի տոհմից էր, և նրան հրամայեց հայրապետների տեղը բռնել և իշխել իր պապած (Ներսեսի) տեղ, և նա եղավ (Ներսեսի) փոխանակ:

Բայց Կեսարիայի եպիսկոպոսապետը լսեց, թե մեծ Ներսես հայրապետին սպանեցին և նրա փոխանակ նշանակեցին Հուսիկին, գոռաց իր հրամանի՝ հակառակ նախկին սովորության, որ Կեսարիայի հայրապետի մոտ էին տանում ձեռնադրության համար: Այս բանի պատճա-

եւ իբրս այս մեծ զարմանալով ցասման եղեալ հայրապետին Կեսարու վասն բանիս այսորիկ, և եղև ժողով եպիսկոպոսացն սիւնհոդոսին հանճգին Կեսարու առանց հայրապետին. և գրեցին թուղթ ցասմամբ մեծապէս: եւ նոյնպէս և գրեցին թուղթ առ թագաւորն Պապ, և լուծին զիշխանութիւնն կաթուղիկոսութեանն. զի որ լիցին հայրապետ Հայոց, նա դրանն արհուն իշխեսցէ՝ զհացն օրհնել. և մի՛ իշխեսցէ ձեռնադրել զեպիսկոպոսն Հայոց, որպէս սովորութիւն էր ի բնէ: եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց զեպիսկոպոսն ձեռնադրել. այլ որ լինէին եպիսկոպոսք ամենայն գաւառաց գաւառաց Հայոց և կողմանց կողմանց, այնուհետև յայնմ հետէ որ միանգամ լինէին եպիսկոպոսք սահմանացն Հայոց, երթային ի հաղարն կեսարացւոց և անդ լինէին եպիսկոպոսք: վասն զի յայնմ հետէ բարձաւ իշխանութիւն յերկրէն Հայոց, այնու հետև ոչ իշխէին եպիսկոպոսք ձեռնադրել. բայց որ լինէր աւագ եպիսկոպոսացն, ի վերոյ միայն նստէր, և հաց օրհնէր թագաւորացն: եւ սա հրիստոնեայ, բայց հանճարակութեամբ յանդիմանութեամբ ինչ ընդ ումեք չիշխէր բարբառել. կամ զի երկչոտ էր և հաւան, և բստ կամաց թագաւորին միայն ունէր զպատիւն, և կայր ի լռութեան և ի հանդարտութեան զամենայն աւուրս կենաց իւրոց:

Լ

ՅԱՂԱԳՍ ՍԳՈՅՆ, ՈՐԳԷՍ ՍԳԱՅԻՆ ՉՀԱՅՐԱԳԵՏՆ ՆԵՐՍԷՍ, ԵՒ ԼԻՆԷԻՆ ՉՆՄԱՆԷ ԿԱԹՈՂԻ

Ապա յետ սպանանելոյն Պապայ զսուրբ հայրապետն Ներսէս, տխրեցաւ ամենայն մարդ խոր տրտմութեամբ, և ամենայն մարդ երկրին Հայոց հաւանէին խօսէին և ասէին. Բարձեալ են արդ փառք Հայոց, զի բարձաւ արդարն աստուծոյ յայսմ երկրէ: Խօսէին իշխանքն և նախարարքն, և ասէին. Գիտեմք արդ թէ կորեաւ երկիրս մեր. զիա՞րդ հեղաւ արիւն արդար ի տարապարտուց, մանաւանդ զի վասն աստուծոյ սպանաւ: եւ խօսէր Մուշեղ սպարապետն Հայոց և ասէր. Սրբոյն աստուծոյ հեղաւ արիւն ի տարապարտուց. այսուհետև ես ոչ կարեմ երթալ ի վերայ թշնամեաց, և ոչ նիզակ ումեք ուղղել: Զի գիտեմ եթէ նթող աստուած ի ձեռանէ զմեզ. և լռեալ եմք, և ոչ կարեմք համբառնալ զգլուխս մեր. զի գիտեմ ես՝ եթէ չիք յաղթութիւն ի վերայ թշնամեաց երկրիս Հայոց. յաղօթից նորա էր յաղթութիւն որ մեռաւ, և ազգի նոցա: եվ սգային ամենայն ազատք և շինականք ծագէ ի ծագ ամենայն սահմանաց երկրին Հայոց, ազատք և շինականք ամենայն բնակիչք տանն Թորգոմայ, հայ լեզուն առ հասարակ:

ռով Կեսարիայի հայրապետոր շատ զայրացավ: Կեսարիայի հանճգի եպիսկոպոսների սյունհոդոսական[194] ժողով գումարվեց, որ ցասմանից թուղթ գրեց (Հուսիկ) հայրապետին[195]: Նույնպես թուղթ գրեցին Պապ թագավորին և (Հայոց) կաթողիկոսների իշխանությունը լուծեցին, (սահմանելով), որ ով որ Հայոց հայրապետ լինի՝ նա իրավունք ունենա թագավորի սեղանի հացը օրհնել, բայց իրավունք չունենա Հայաստանի համար եպիսկոպոսներ ձեռնադրել, ինչպես ի բնե սովորություն էր: Այդ ժամանակից վերացավ Հայոց (կաթողիկոսների) իրավունքը եպիսկոպոսներ ձեռնադրելու. և այնուհետև Հայաստանի բոլոր գավառներից ու կողմերից, որոնք որ եպիսկոպոս էին լինելու՝ գնում էին Կեսարացոց քաղաքը և այնտեղ ձեռնադրվում էին եպիսկոպոս, որովհետև այդ ժամանակից Հայոց աշխարհից վերացավ այդ իրավունքը, և այնուհետև չէին համարձակում եպիսկոպոսներ ձեռնադրել. բայց նա, որ եպիսկոպոսների մեջ ավագն էր՝ միայն վերով էր նստում և թագավորների սեղանն էր օրհնում: Իսկ սա (Հուսիկը) հրիստոնյա մարդ էր, բայց չէր համարձակում հանդիմանել մեկին, որովհետև երկչոտ էր և համակերպող, որովհետև միայն թագավորի կամքով ուներ իր պատիվը. և լուռ ու հանդարտ մնում էր իր կյանքի բոլոր օրերում:

Լ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՍԳՈՒՄ ԷԻՆ ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱԳԵՏԻՆ ԵՎ ՆՐԱ ԿԱՐՈՏԸ ՔԱՇՈՒՄ

Երբ Պապը սուրբ Ներսես հայրապետին սպանեց՝ այնուհետև ամեն մարդ խոր տրտմության մեջ ընկավ. Հայոց աշխարհի բոլոր մարդիկ միաբան խոսում էին և ասում. «Հայոց փառքը կորավ, աստծու արդարը մեր աշխարհից վերացավ»: Իշխաններն ու նախարարներն էլ ասում էին. «Այժմ գիտենք, որ մեր աշխարհը կորավ, որովհետև անմեղ տեղը արդար արյուն թափվեց, մանավանդ որ նա աստծու համար մեռավ»: Մուշեղ Հայոց սպարապետն էլ ասում էր. «Աստծու սրբի արյունը անմեղ տեղը թափվեց. այսուհետև ես չեմ կարող թշնամու դեմ գնալ, կամ մեկի դեմ նիզակ բանեցնել: Որովհետև գիտեմ, որ աստված մեզ ձեռքիցը թողեց, մենք լքված եմք և չենք կարողանա գլուխներս վեր բարձրացնել. ես գիտեմ, որ այսուհետև հաջողություն էլ չի լինելու Հայոց աշխարհի թշնամիների դեմ, որովհետև մեր հաղթությունը նրա աղոթքից էր՝ որ մեռավ, և նրա տոհմի»: Եվ Հայաստանի բոլոր սահմաններում, ծայրե ծայր, սգում էին նրան ազնվականներն ու շինականները, Թորգոմի տան բոլոր բնակիչները, առհասարակ հայ լեզվով խոսող մարդիկ:

ՅԱՂԱԳՍ ԹԷ Ո՛ՐՊԵՍ ՉԿՆԻ ՄԵՌԱՆԵԼՈՅՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՆԵՐՍԻՍԻ, ԵՒ ԿԱՄ Ո՛ՐՊԷՍ Ի ՆԱԽԱՆՁ ՄՏԵԱԼ ՏԱՊԱԼԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՆ ՊԱՊ ՉԱՄԵՆԱՅՆ ԻՒԵԱԼ ԿՐՕՆՆ ԿԱՆՈՆԻՑՆ՝ ՈՐ ԻՆՉ ԵԴԱՆ Ի ՆԵՐՍԻՍԷ ԱՌ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՄԲ ՆՈՐԱ Ի ՆՄԱՆԷՆ

Իսկ թագաւորն Հայոց Պապ զի թէպէտ և սպան զհայրապետն աշխարհին Հայոց զՆերսէս, սակայն ոչ յագեցաւ մաճուամբ նորա, այլ չանայր այսպէս՝ թէ զինչ միանգամ կարգ իցեն ուղղութեան ի Ներսիսէ եդեալ չեկեղեցւոջն, եղծեսցէ և խանգարեսցէ: Եւ սկսաւ նախանձ վարել ընդդէմ յառաջագոյն կանոնելոցն ի նմանէ. և սկսաւ հրաման տալ յայտնապես յաշխարհին աւերել զայրենոցսն և զորբանոցսն՝ զոր չինեալ էր Ներսէս ի գաւառս գաւառս, և աւերել զկուսաստանսն ի գաւառս գաւառս և յաւանս յաւանս պարսպելս և ամրացեալս՝ որ նորին Ներսիսի էր չինեալ վասն ամրապահս առանգոցն[53] զգուշութեան: Քանզի յիւրում կենդանութեան երանելոյն Ներսիսի էր չինեալ. զի նեաց զայս կուսաստանս յամենայն գաւառս. զի որ միանգամ կուսանիք և հաւատացեալք իցեն՝ անդր ժողովեսցին ի պահս և յաղօթս, և կերակրել յաշխարհէ և յիւրմանչիւր ընտանեաց: Զայն աւերել հրամայէր Պապ թագաւորն, և զկուսանսն հաւատացեալս տայր հրաման ի խառնակութիւն պղծութեան:

Եւ յամենայն աւանս էր չինեալ նորին Ներսիսի և հիւանդանոցս, յամենայն կողմանց և ոռճիկս և դարմանս կարգեալս, և առս հաւատարիմս բողեալ տեսուչս հիւանդացն և աղքատացն. նոյնպէս և այնոցիկ յանձն առաեալ որք երկիւղածքն էին յաստուծոյ, որք դատապատանացն յափտենականացն և գալստեանն Քրիստոսի սպասէին: Զվերակացուսն հալածէր թագաւորն յիւրմանչիւր տեսչութենէ, և զտեղիսն ի՛ բաց աւերէր: Զոր վերակացուսն կարգեալ էր յաղագս չհատուցին և աղքատաց տեսուչ, զնոսա ի բաց հալածէր. և հրաման տայր ամենայն աշխարհի իշխանութեանն իւրոյ: Աղքատքն բայց եթէ ի մոյր ելցեն. այլ անդր որ ինչ մ՛ի իշխեսցէ տանել, եթէ ոչ նոքա եկեսցեն ժտեսցեն աղաչեսցեն, ապա թէ գտանել հազիւ ինչ կարասցեն: Եւ զկարգս պտղոյն և զտապանորդացն՝ որ ի նախնեացն կարգեալ սովորութիւն էր տալ չեկեղեցին, վասն այնորիկ հանէր հրաման ընդ աշխարհ՝ զի մի՛ որ տացէ:

Եւ յաւուրսն Ներսիսի հայրապետին ոչ որ իշխէր ի նմանէ հանել կամ թողուլ զկին իւր զամուսին յամենայն երկիրն Հայոց, զոր միանգամ օրհնութեամբ առեալ էր. և ոչ այլ առնել միւսանգամ իշխէր որ համարձակել: Եթէ յանկարծ մե-

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵՌԵԼՈՒԻՑ ՀԵՏՈ ՊԱՊ ԹԱԳԱՒՈՐԸ ՆԱԽԱՆՁԻՑ ՇԱՐԺՎԱՒ, ՏԱՊԱԼԵՑ ԱՅՆ ԲԱԼՈՐ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ, ՈՐ ՍԱՀՄԱՆԵԼ ԷՐ ՆԵՐՍԵՍԸ ԻՐ ԿԵՆԴԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ:

Իսկ Հայոց Պապ թագաւորը թեպետև սպանեց Հայոց աշխարհի Ներսես հայրապետին, բայց նրա մահովը չհագեցաւ, այլ չահ էր առում խանգարել ու ոչնչացնել ուղղության այն բոլոր կարգերը, որ Ներսէսը սահմանել էր եկեղեցում: Եվ սկսեց նախանձով վարվել նրա առաջուց դրած կանոնների հետ: Հայտնապես հրաման տվեց աշխարհին՝ ավերել որբանոցներն ու այրիների ապաստաններ, որ շինել էր Ներսէսը գանազան գավառներում. ավերել կուսանոցներ գանազան գավառներում ու ավաններում, որ նույն Ներսեսն էր շինել ու պարիսպներով ամրացրել՝ առևանգումից[196] զգույշ պահպանության համար: Որովհետև երանելի Ներսեսը իր կենդանության ժամանակ շինել էր այս կուսանոցները բոլոր գավառներում, որպեսզի բոլոր հավատավոր կույսերն[197] այնտեղ ժողովվեն, պահեցողությամբ և աղոթքով զբաղվեն, իսկ նրանց ապրուստ տան աշխարհը և նրանց ընտանիքները: Պապ թագավորը հրամայում էր այս կուսանոցներն ավերել, իսկ հավատավոր կույսերը հրամայում էր մատնել պիղծ խառնակության:

Դարձյալ նույն Ներսեսը հիվանդանոցներ էր հիմնել բոլոր կողմերում, սահմանել էր նրանց համար ուտեստ ու դարման, և հավատարիմ մարդիկ էր նշանակել հիվանդանոցներին ու աղքատներին տեսուչ. հանձնել էր այնպիսի մարդկանց, որոնք աստծու երկյուղն ունեին և Քրիստոսի գալստյան և հավիտենական դատաստանի էին սպասում: Թագավորը այս վերակացուներին դուրս էր անում իրենց պաշտոններից. և հիմնարկություններն հրամայում էր ավերել, ոչնչացնել: Նա չհավորների և աղքատների վրա նշանակված տեսուչ-վերակացուներին հալածում էր և իր իշխանության տակ եղած բոլոր աշխարհին հրաման էր տալիս— «Աղքատները թող դուրս գան մուրան, ոչ ոք չհամարձակի այնտեղ նրանց որևէ բան տանել. թող նրանք շրջեն, խնդրեն, աղաչեն, ապա թե մի ողորմություն ստանան»: Պաղիի և տապանորդների կարգն[197] էլ, որ վաղուց ի վեր սովորություն էր դարձած եկեղեցուն տալ՝ դրա վերաբերմամբ էլ ամբողջ աշխարհում հրաման հանեց, որ ոչ ոք չտա:

Ներսես հայրապետի օրերում՝ նրա աջից ոչ ոք չէր համարձակում Հայոց աշխարհում մեկի կինը խլել և թողնել իր կին ամուսինը, որ առել էր ողով և հարսանիքի պսակով ու օրհնությամբ, և ուրիշ կին առնել չէր համարձակում: Ներսեսի օրերում եթե հանկարծ մեկը մեռ-

ռանէր ոմ, ոչ ոմ իշխէր անյուսութեամբ առտաոյ կարգի կանոնի եկեղեցւոյ լալ զմեռեալն. և ոչ կոծ ոմ դնէր կամ աշխարանս մեռելոյն, և ոչ ձայնս ոմ արկանէր ի վերայ մեռելոյն յաւուրսն Ներսիսի. այլ լոկ արտասուօմ և ըստ արժանի սաղմոսիմ և օրհնութեամբ, կանթեղօմ և մոմեղինօմ լուցելովմ զմեռեալսն յուղարկէին: Իսկ յետ մահուան նորա այնուհետև ամենայն մարդ առին հրաման համարձակութեամբ ի թագաւորէն, թողուլ զկանայս զամուսինս իւրեանց. էր զի մի այր տասն կին փոխէր. և առ հասարակ յանօրէնութիւն դարձան միանգամայն: Ապա յետ մահուան Ներսիսի յորժամ զմեռեալսն լային, փողովմ և փանդռօմ և վնօմ զկոծսն պարուցն կատարելով, զտիգսն հատեալս, զերեսս պատառեալս, արմ և կանայմ պղծութեամբ ճիւաղութեամբ պարում դէմ ընդ դէմ հարկանելով, և կամ ասիս հարկանելով, զմեռեալսն յուղարկէին:

Իսկ յամսն Ներսիսի զաղխատս բնաւ ամենևին ի մոյր ոչ տեսանէր ընդ ամենայն սահմանսն Հայոց. այլ անդէն ի հանգստեան նոցին, այս ինն յօրկանոցսն, ամենայն մարդիկ տանէին զամենայն պիտոյս նոցա. անդէն իսկ անկարօտ յամենայն ումեք լցեալ էին: Իսկ յետ մահուն Ներսիսի թագաւորն Հայոց կարգ պաշտաման եկեղեցւոյն մեծապէս պայծառացեալ էր, և բազմութիւն սրբոց պաշտօնէիցն կանոնելոցն: Եւ յիշատակ սրբոց վկայից յաւուրս նորա յամենայն տեղիս Հայոց մեծախումբ ժողովմ հանապազ պայծառանային, և պատիւ հարցն եպիսկոպոսաց յամենայն գաւառս Հայոց յաճախէր ըստ արժանի իւրեանց. և կարգ վանականաց և ի շէնս և յանշէնս առ հասարակ ծաղկեալ: Այլ ամենայն եղծեալ ապականեալ խանգարեցաւ յետ մահուան նորա:

Իսկ յաւուրս հաճանապետութեանն Ներսիսի ամենայն գաւառ Հայոց յամենայն ի շէնս և ի՛ գետս յամենայն կողմանս Հայոց առ հասարակ ի հրամանէ հաճանապետին էին շինեալ օտարատունք հիւանդանոցք օտարանոցք. և ամենայն մարդիկ երկրին Հայոց էին պտղաբեր և ողորմած առ ի չիշել զաղխատս և զնեղեալս զտառապեալս և զօտարս, զհարստահարս, զնշդեհս, զպանդխտս, զհիւրս զանցաւորս. և էր նոցա կարգեալ վերակացուս սրբոյն Ներսիսի, և դարմանս ի տեղեաց տեղեաց: Իսկ յետ մահու նորա աւերեաց զայն ամենայն թագաւորն Պապ, և անարգեաց զպատիւ եկեղեցւոյ. և բազում ինչ կարգ և կանոնաց ուղղութեան յօրինուածոց՝ զոր եդ հայրապետն Ներսէս, և անցեալ դարձեալ ի մոռացօնս զամենայն կարգեալն տապալէր: Յետ

նուն էր՝ ոչ ոմ չէր համարձակվում եկեղեցու կանոնից դուրս անհնազանդությամբ մեռելի վրա լալ, կոծ ու սուգ անել, ողբեր ասել մեռելի վրա, այլ լոկ արտասումով, պատշաճ սաղմոսներով և օրհնություններով, կանթեղներով ու վառած մոմերով հուղարկավորում էին մեռելը: Իսկ նրա մահից հետո ամեն մարդ թագավորից հրաման ստացավ՝ համարձակորեն թողնել իրենց ամուսին կանանց. կար մարդ որ տասը կին էր փոխում և առհասարակ բոլորն անօրենության մեջ ընկան: Դարձյալ՝ Ներսեսի մահից հետո, երբ մեռելները ողբում էին՝ փողերով, փանդիռներով ու վիներով[198] կոծի պարեր էին բռնում, մորուքները կտրած, երեսները պատառոտած, կին և տղամարդ դեմ առ դեմ հիվաղական պարեր խաղալով, ծափ զարնելով հուղարկավորում էին մեռելները:

Իսկ Ներսեսի տարիներին Հայաստանի բոլոր սահմաններում չէր կարելի տեսնել աղմատներին մուրալիս. այլ այն ժամանակ նրանց հանգստի տեղերը, այսինքն՝ ուրկանոցները բոլոր մարդիկ նրանց համար տեսնում էին այն ամենը, ինչ որ պետք էր նրանց: Հենց այնտեղ նրանք առանց կարիքի ու լիացած էին: Իսկ հաճանապետի մահից հետո եթե որևէ մեկը աղմատներին հանգիստ էր տալիս, թագավորից մեծ պատիժներ էր կրում:

Ներսեսի օրերով Հայոց աշխարհում մեծապես պայծառացած էին եկեղեցիներում պաշտամունքի կարգերը. կային կարգ ու կանոնի ենթարկված բազմաթիվ սուրբ պաշտոնյաներ: Նրա ժամանակ սուրբ վկաների հիշատակները Հայաստանի բոլոր տեղերում միշտ կատարվում էին պայծառությամբ, ժողովրդի մեծ բազմության ներկայությամբ: Հայր եպիսկոպոսների պատիվը Հայաստանի բոլոր գավառներում բարձր էր ըստ նրանց արժանավորության: Վանականների կարգերը շեն ու անշեն տեղերում առհասարակ ծաղկած էին: Այս բոլորը նրա մահից հետո ապականվեց ու փչացավ:

Ներսեսի հաճանապետության ժամանակ Հայաստանի բոլոր գավառներում, շեներում և գյուղերում առհասարակ հաճանապետի հրամանով շինված էին օտարանոցներ ու հիվանդանոցներ. և Հայոց աշխարհի բոլոր մարդիկ ողորմածությամբ սնունդ էին մատակարարում, հիշելով աղմատներին, նեղված-տառապածներին, օտարներին, հարստահարվածներին, օտար երկրում և օտարի տան ապրողներին, անցորդ հյուրերին: Նրանց վրա սուրբ Ներսեսը վերակացուներ էր նշանակել և ուտեստ որոշել գանազան տեղերից: Իսկ նրա մահից հետո Պապ թագավորն այս ամենն ավերեց, եկեղեցու պատիվն անարգեց, Ներսես հայրապետի սահմանած շատ կարգերն ու բարեկարգությունները տապալեց ու մոռացության մատնեց: Նրա այս աշխարհից գնալուց հետո շատ

նոցա ելիցն յաշխարհէս բազում գաւառք Հայոց և բազում մարդիկ ի ճնութիւն դիւապաշտութեան դարձան, և ընդ բազում տեղիս Հայոց կուռս կանգնեցին ի համարձակութենէ թագաւորին Պապայ. զի ոչ գոյր յանդիմանիչ, և ոչ ոք էր այն՝ յորմէ խիթային. զինչ և կամէին գործել, համարձակութեամբ գործէին. բազում պատկերս կանգնեալ, երկիր պագանէին:

Եւ հատ ևս յարմուխիս Պապ թագաւոր զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծաւն Գրիգորիս խաճանայապետիս ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց: Զի յետ ճողոյն զհինգն հատանէր յարմուխիս, և զերկուսն միայն թողոյր երկուս հողս: Եւ բատ հողոյն թողոյր երկուս երկուս առ գետ մի երէց և սարկաւագ, և զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն: Զի նմա այսպէս թուեցաւ՝ եթէ զայն չար ինչ կամացն հեծուկս Ներսիսի առնիցէ ի կենդանեաց առ մեռեալս, վասն բշնամութեանն՝ զոր ունէր ընդ նմա: Եւ զայն ոչ ածէր զմտաւ՝ թէ զանձն կորուսանէ: Եւ ի ժամանակին նուազչին ամենայն կարգ եկեղեցւոյ պաշտամանն սպասուցն յամենայն երկիրն Հայոց:

ԼԲ

ՅԱՂԱԳՍ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՊԱՅ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԽՈՏՈՐԾԱԻՆ Ի ԹԱԳԱՒՈՐԷՆ ՅՈՒՆԱՑ. ԵՒ ԿԱՄ Ո՛ՐՊԷՍ ՍՊԱՆԱՒ Ի ՋՕՐԱՑՆ ՅՈՒՆԱՑ

Եւ շրջեաց զմիտս իւր Պապ և խոտորեաց զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց, և կամեցաւ խառնել զաչս իւր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից: Եւ սկսաւ թիկունս իւր առնել զարքայն Պարսից, և առաքել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան: Եւ առաքէր հրեշտակս առ թագաւորն Յունաց, եթէ կեսարիաւ ճետ՝ և տասն քաղաք մեր լեալ է, արդ ի բաց տուր. և զմնացեալ քաղաք շինեալ է նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս խանգար ինչ առնել, տուր ի բաց. ապա թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ: Այլ Մուշեղ և ամենայն իշխանքն Հայոց շատ եղին ի մտի արքային, զի մի՛ հակեսցէ զսխտ յերկրէն թագաւորութենէն Յունաց. և ոչ անսաց նոցա, և յայտնեաց զբշնամութիւն իւր՝ զոր ունէր ընդ թագաւորին Յունաց:

Այլ իշխանքն Յունաց և զօրքն նոցին տակաւին էին յերկրինն Հայոց. և անուն իշխանացն՝ միումն Տէրէնտ, միւսումն Ադէ: Եւ յղեաց դեսպան մի գաղտուկ թագաւորն Յունաց առ իշխանսն զօրացն իւրոց՝ որ էին յերկրին Հայոց, և հրաման տայր սպանանել զթագաւորն Հա-

մարդիկ դարձան նախկին կռապաշտութեանը. Հայաստանի շատ տեղերում կուռքեր կանգնեցրին Պապ թագավորի թույլտվությամբ, որովհետև չկար մեկը, որ հանդիմաներ, չկար մեկը, որից հաշվեին, այլ ամեն մարդ համարձակ գործում էր՝ ինչ որ կամենում էր. շատ պատկերներ էին կանգնեցրել և նրանց երկրպագում էին:

Բացի սրանցից՝ Պապ թագավորը եկեղեցուց կտրեց այն հողը, որ Գրիգոր մեծ հանճայապետի ժամանակ տվել էր Տրդատ թագավորը Հայոց բոլոր աշխարհում եկեղեցու սպասավորության ու պաշտամունքի համար, որովհետև յոթը հողից հինգը կտրում էր ճգուտ արքունիքի և միայն երկու հող էր թողնում[199]: Եվ հողերի հաշվով ամեն մի գյուղում երկու-երկու պաշտոնյա էր թողնում, մի երեց և մի սարկավագ. իսկ մյուսներին, այսինքն երեցների ու սարկավագների եղբայրներին ու որդիներին իր հպատակության էր ենթարկում: Նրան այսպես էր թվում, թե այսպես վարվում է Ներսեսի կամքի հակառակ, նրան ընդ հեծկ, նրա դեմ տածած իր բշնամության պատճառով. նա այն չէր մտածում, թե դրանով ինքն իրեն է կորցնում:

Եվ այս ժամանակ բոլոր Հայաստան աշխարհում նվազում էին եկեղեցու պաշտամունքի և սպասավորության կարգերը:

ԼԲ

ԳԱՂ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՐԵՍ ԴԱՐՁԵՑԻ ՀՈՒՆԱՑ ԹԱԳԱՎՈՐԻՑ: ԵՎ ԻՆՉՊԵՍ ՍՊԱՆԱՎԵՑ ՀՈՒՆԱՑ ՋՈՐՔԵՐԻՑ

Եվ Պապ թագավորը իր միտքը ծռեց ու սիրտը շուռ տվեց Հունաց թագավորից և կամեցավ սեր ու միաբանություն հաստատել Պարսից թագավորի հետ. սկսեց իրեն թիկունք դարձնել Պարսից թագավորին, նրա մոտ պատգամավորներ ուղարկեց միաբանություն հաստատելու համար: Հետո պատգամավորներ էր ուղարկում Հունաց թագավորի մոտ, թե «կեսարիայի հետ ուրիշ տասը քաղաք մերն են եղել, ետ տուր. Ուռհա քաղաքն էլ մեր նախնիքն են շինել, ուստի եթե չես ուզում, որ խռովություն ծագի (մեր մեջ)՝ ետ տուր, հակառակ դեպքում մեծ պատերազմ կծագի մեր մեջ»: Թեպետ Մուշեղը և Հայոց բոլոր իշխանները շատ հորդորեցին թագավորին, որ Հունաց թագավորության հետ իր ուխտը չխզե՝ նրանց չլսեց և հայտնի կերպով ցույց տվեց իր բշնամությունը Հունաց թագավորի հետ:

Իսկ Հունաց իշխաններն ու զորքը դեռ Հայոց աշխարհումն էին. իշխաններից մեկի անունը Տերենտ էր, մյուսինը Ադե: Եվ Հունաց թագավորը գաղտուկ մի դեսպան ուղարկեց Հայաստանում եղած իր զորքերի իշխանների մոտ և հրաման տվեց՝ Հայոց Պապ թագավորին

յոց զՊապ: Եւ եղև իբրև բնկալան զայս հրաման ի թագաւորէն Յունաց իշխանքն իւր՝ որ էին ի Հայոց երկրին, սպասէին մահու ի դէպ՝ սպանանել զթագաւորն Հայոց զՊապ: Եւ եղև ի դիպան ժամանակի իբրև գիտացին Տէրենդն և Ադէն զօրավարքն զօրացն Յունաց՝ թէ միայն է թագաւորն Հայոց Պապ, և ամենայն մեծամեծքն և զօրքն Հայոց չէին անդ. և էր թագաւորն Հայոց Պապ բանակեալ ի դաշտին ի Բագրեւանդ գաւառի ի Խու անուն տեղւոյն, և բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդէն մօտ առ բանակին Հայոց արփային. ապա զօրավարն Յունաց հաց մեծապէս գործեալ՝ յղեբրիս հրաւիրեալ կո՛չեցին զմեծ թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեան նորա, որպէս օրէն էր զայր թագաւոր ի հաց մեծ կոչել և առնէին կազմութիւն պատրաստութեան:

Եւ եկեալ թագաւորն Պապ յղեբրիս, մտեալ բազմեցաւ յոտել և յըմբել: Եւ իբրև մտանէր արփայն ի խորանն Տէրենդի զօրավարին Յունաց, և լեգէոն սպարակիր հետևակն վահան ի ձեռն, սակուր զգօտոյ, շուրջ ի ներոյ զօրմովք խորանին պատեալ պսակէին. սոյնպէս և արտաքոյ կազմէին ի ներոյ կուռ վառեալք, և ի վերոյ հանդերձ զգեցեալք պատրաստէին: Իսկ թագաւորն Պապ համարէր ի միտս իւր թէ ի պատիւ ինչ նորա զայն առնիցեն: Եւ մինչ դեռ յղեբրիսն[54] ուտէր, սակրաւոր զօրքն ի թիկանց կուսէ նորա կարգեալք պսակեալք կային շուրջ զնովաւ յամենայն կուսէ: Իբրև ընդ գինիս մտին, որպէս զառաջին ուրախութեանցն նուագք մատուցին արփային Պապայ, և առ հասարակ թմբկահարք և սրնգահարք ճնարահարք և փողահարք իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք բարբառեցան: Եւ վահանաւորք լեգէոնին հրամանս ետուն. և մինչ դեռ թագաւորն Պապ զուրախութեան գինին ուներ ի մատունս իւր, և նայէր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն, առեակ ձեռամբն յարմուկն՝ յոր չեցեալ բազմեալ էր՝ ուներ տաշտ ոսկի ի մատունս իւր, իսկ աջ ձեռնն եդեալ էր ի դաստապան նրանին՝ զոր կապեալն էր յաջու ազդրէն իւրում, և մինչ դեռ բերանն ի բաժակին էր յըմպելն, և աչօքն յառաջ կոյս սլշուցեալ հայէր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն, հրաման լինէր ակնարկելով զօրացն Յունաց: Եւ լեգէոն սակրաւորքն երկու ի թիկանց կուսէ կային ի սպասու ոսկինկմբէ վահանօքն յանկարծօրէն կից ի վեր առեալ զսակուրսն, զարկանէին թագաւորին Պապայ. մին կշիռ զոյն հարկանէր սակրաւն, և միւսն ևս սակրաւորն զաջ բաթ ձեռինն՝ որ կայր ի վերոյ դաստապանի նրանին՝ հարկանէր, կտրէր և ի բաց ընկենոյր: Անդէն ի բերանս տապալէր թագաւորն Պապ. և գինին տաշտիւն և արիւնն պարանոցին նովաւ հանդերձ ի վերայ բաժակալ սկրտեղն անկանէր առ հասարակ. և անդէն

սպանել: Երբ Հունաց իշխաններն Հայաստանում այս հրամանն ստացան իրենց թագավորից՝ համար դեպքի էին սպասում, որ Հայոց Պապ թագավորին սպանեն: Պատահեց մի հարմար ժամանակ, երբ Հունաց զորավարները, Տերենտն և Ադեն, իմացան, թե Հայոց Պապ թագավորը մենակ է,— երբ Հայոց մեծամեծներն ու զորքը այնտեղ չէին և Պապ թագավորի բանակը գտնվում էր Բագրեւանդ գավառում, Խու կոչված տեղում մի դաշտում, իսկ Հունաց զորքերի բանակը գտնվում էր Հայոց թագավորի բանակին մոտ—ապա Հունաց զորավարները փառավոր հացկերույթ սարքեցին և Հայոց մեծ թագավոր Պապին ընթրիքի հրավիրեցին մեծ պատվով՝ համաձայն նրա արժանավորության, ինչպես թագավոր մարդու հրավիրում են փառավոր հացկերույթի. ամեն բան կազմել պատրաստել էին:

Պապ թագավորը ընթրիքի գալով՝ մտավ ու բազմեց կերուխումի: Եվ երբ թագավորը մտնում էր Հունաց Տերենտ զորավարի խորանը՝ լեգեոնի սպարակիր զինվորները, ձեռներին վահան, գոտիներում սակր, ներսը, խորանի պատերի մոտ, շուրջը պատելով պահպանում էին. նույնպես և (խորանից) դուրս պատրաստ կանգնած էին լավ սպառազինված, իսկ վրայից սովորական զգեստ հագած (զինվորներ): Իսկ Պապ թագավորն իր խելքով այնպես էր կարծում, թե իրեն պատվելու համար են այդպես անում: Եվ մինչ ընթրիքի ժամանակ նա ուտում էր՝ սակրավոր զորքը նրա հետևը կանգնած նրան ամեն կողմից պատում[200] էին: Երբ սկսեցին խմել՝ ուրախության առաջին բաժակը մատուցին Պապ թագավորին և իսկույն հնչեցին թմբուկներն ու սրինգները, ճնարներն ու փողերը իրենց ներդաշնակ ձայներով: Վահանավոր զորքին հրաման տվին, և մինչ Պապ թագավորը ուրախության գինին բռնած էր մատներով և նայում էր գուսանների խմբին, մինչ ձախ ձեռը արմունկին հենած՝ մատներում բռնած ուներ ոսկե բաժակ, իսկ աջ ձեռը դրել էր նրանի կոթին, որ կապած ուներ աջ ազդրին, մինչ բաժակը բերանն էր տարել, որ խմե, իսկ աչքերով հառած նայում էր գուսանների զանազան խմբերին՝ Հունաց զորքերին աչքի ակնարկով նշան էր տվում. և երկու սակրավոր զինվորներ, որ հետևից կանգնած էին պապանավորության ոսկեպորտ վահաններով՝ հանկարծորեն միասին սակրերը բարձրացնելով զարկում էին Պապ թագավորին, մեկը ուղիղ վիզն էր կտրում, մյուս սակրավորը զարկում էր աջ ձեռքի բաթին, որ դրված էր նրանի կոթի վրա, կտրում և դեն էր ձգում: Պապ թագավորը տեղն ու տեղը ընկնում էր բերանքսիվար. բառով գինին, պարանոցից հոսող արյունը և նրա մարմինը միասին ընկնում էին սեղանի վրա: Պապ թագավորն անմիջապես մեռնում էր: Երբ սե-

սատակէր թագաւորն Պապ: Ընդ շփոթելոյ տաճարին խռովութեան՝ Գնել տէր գաւառին Աննձևացեաց յոտն կացեալ յիւրմէ բազմականէն, հանեալ զիւր սուսերն՝ հարկանէր զմի ի լեգէոնաց անդի սպանանէր, յայնցանէ՝ որ հարին զթագաւորն: Ապա Տէրէնդ զօրավարին Յունաց զիւր սուսերն հանեալ ածէր, տարակաց ի գլխոյն Գնելոյ զսկաւառակն գլխոյն ի վերայ աչացն ի բաց բնգեռնոյր: եւ այլ ինչ ոմ ոչ կարաց յանդգնել ասել ինչ բնդ նոսա և ոչ ինչ:

ԼԹ

ՅԱՂԱԹՍ ՈՐ ԻՆՉ ԽՈՐՀԵՑԱՆ Ի ՅԵՏՈՅ ԻՇԽԱՆՔՆ ՀԱՅՈՑ, ԱԹԱ ԱՆՑԻՆ ԿԱՑԻՆ ԼՈՒՌ

Եւ ժողովեցան եկին ամենայն իշխանքն Հայոց մեծամեծք ի մի վայր ի միասին, և Մուշեղ սպարապետն, և Հայր Մարդպետ, և ամենայն իշխանքն ասէին: Զի՞նչ առասցուք կամ զի՞նչ գործեսցուք, խնդրեսցո՞ւք զվրէժ թագաւորին մերոյ, թէ ոչ: եւ ապա հաստատեցաւ այս բան ի խորհրդեանն, և ասեն: Ոչ կարեմք հեթանոսաց ի պարսկաց ի ծառայութիւն մտանել, և թշնամի առնել զթագաւորն Յունաց. և ոչ զերկոսեան թշնամի առնել, և ոչ առանց միոյ թիկանց կարեմք կեալ: Ապա եկաց այս բան ի խորհրդին, թէ զինչ եղև՝ աճա եղև, բող ծառայեսցուք թագաւորին Յունաց. կացցուք ի հնազանդութեան իշխանութեան թագաւորութեանն Յունաց. զիարդ և կամք իցեն թագաւորութեան Յունաց, առասցեն մեզ: եւ ոչ ինչ արկին ի միտ, կամ վրէժ խնդրել, կամ այլազգ ինչ իրս առնել. այլ անցին կացին լուռ:

ԼԹ

ՅԱՂԱԹՍ ԹԱԳԱՒՈՐԵԼՈՅՆ ՎԱՐԱԶԴԱՏԱՅ ԵՐԿՐԻՆ ՀԱՅՈՑ ՅԵՏ ԳԱԳԱՅ

Եւ եղև յետ մահուան Պապայ թագաւորին Հայոց, թագաւորեցոյց թագաւորն Յունաց զվարազդատ ոմն ի նմին տոհմէն Արշակունի ի վերայ աշխարհին Հայոց: եկն բազում շրով եմուտ յերկիրն Հայոց, և թագաւորեաց յերկրին Հայոց: եւ էր նա մանուկ յաւուրց, լի արութեամբ, կորովի ձեռօք, խոշ սրտիւ, և ի մտաց թեթև, մանգաբարոյ տղայահաճոյս մանկամիտ: Բայց սակայն իբրև տեսին զնա, ժողովեցան առ նա ամենայն ազգք Հայոց մեծամեծք նախարարք. և կամեցեալ խնդացին զթագաւորելն նորա ի վերայ իւրեանց:

զանատանեաք աղմուկ և շփոթություն բնկավ՝ Անձևացյաց գավառի տեր Գնելը բազմած տեղից վեր կացավ, սուրը հաշեց և սպանեց զինվորներից մեկին, որ խփել էր թագավորին: Այն ժամանակ Հունաց Տերենտ զորավարը իր սուրը հանելով խփում էր և Գնելի գլխից սկավառակը կտրելով աչերի վրա էր շուռ տալիս: Եվ ուրիշ ոչ ոք ոչինչ չհանդգնեց ասել նրանց և ոչ մի խոսք:

ԼԹ

ԹԵ ԻՆՉ ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԻՆ ՀԵՏՈ ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆՆԵՐՔ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԼՈՒՌ ԿԱՑԻՆ ՄՆԱՑԻՆ

Եվ Հայոց բոլոր մեծամեծ իշխաններք ժողովվեցին միասին, և Մուշեղ սպարապետը, և Հայր մարդպետը, և բոլոր իշխաններք. «Ի՞նչ անենք, ի՞նչ գործենք,— ասում էին նրանք,— մեր թագավորի վրեժը պահանջե՞նք թե ոչ»: Վերջը խորհրդի մեջ այս միտքն բղխունվեց. «Մենք չենք կարող հեթանոս պարսիկների ծառայության տակ մտնել և Հունաց թագավորին բշնամացնել, ոչ էլ երկուսին էլ բշնամացնել, որովհետև առանց որևէ մեկի թիկունքի չենք կարող ապրել»: Ապա խորհրդում այսպես որոշվեց. «Ինչ որ եղավ՝ եղավ, թող էլի Հունաց թագավորին ծառայենք, Հունաց թագավորի իշխանությանը հնազանդվենք, թող Հունաց թագավորները մեզ հետ վարվեն՝ ինչպես ուզում են»: Այլևս չմտածեցին վրեժ խնդրել կամ ուրիշ մի բան անել, այլ լուռ տեղերումը նստեցին:

ԼԹ

ԳԱԳԻՑ ՀԵՏՈ ՎԱՐԱԶԴԱՏԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ:

Հայոց Պապ թագավորի մահից հետո Հունաց թագավորը Հայոց աշխարհի վրա թագավորեցրեց մի ոմն վարազդատի, որ նույն Արշակունի տոհմից էր: Նա մեծ շքեղությամբ եկավ Հայոց աշխարհը և թագավորեց Հայոց աշխարհում: Նա տարիով մանուկ էր, արիասիրտ, ճոր ձեռներով, խոշ սրտով, բայց բնքնամիտ, երեխայի նման խելքը պակաս, մանկամիտ: Բայց երբ նրան տեսան՝ Հայոց մեծամեծների ու նախարարների բոլոր տոհմերը նրա մոտ ժողովվեցին, ուրախանալով որ նա իրենց վրա թագավորեց:

Եւ սպարապետն Հայոց Մուշեղ առաջնորդէր Հայոց. և զգուշանայր զսահմանօքն Հայոց, որպէս սովոր էր կարգել զաշխարհ մեծապէս, և խրատ բարեաց թագաւորին մանկանն Վարազդատայ մատուցանէր: Եւ նոգայր հանապազ վասն թագաւորութեան աշխարհին Հայոց, և զիարդ կամ որպէս չէն լինել մարթասցէ. և հանապազ երկս արկանէր բարեխորհուրդն, զի հաստատուն կալ կարասցէ թագաւորութիւնն: Խորհէր ևս ընդ իշխանսն Յունաց, և նոքօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա խաղաղ մի շինել յերկրին Հայոց. 'ի մի մի գաւառսն, որ մին մի խաղաղ, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զօրանիստս հաստատել ընդ ամենայն իրկիրն Հայոց. մինչև 'ի Գանձակ սահման երկիրն, որ Պարսից կուսէ էր, Հայոց սահման էր. և զամենայն ազատսն Հայոց կայսերական բոշակօքն զինուորել. սոյնպէս և զօրաց երկրին Հայոց, զի այսպէս ամենայն զգուշութիւն լիցի առ 'ի թշնամեաց իւրեանց 'ի զօրացն Պարսից: Եւ թագաւորն Յունաց յանձին ունէր մեծաւ խնդութեամբ առնել զայս. զի այսու ամենայնիւ աշխարհն հաստատուն լիցի և անշարժ 'ի նմանէն, զի մի՛ կարասցէ թագաւորն Պարսից յիւր վտարել զաշխարհն Հայոց:

Լե

ՅԱՂԱԳՍ ԹԷ Ո՛ՐՊԷՍ 'Ի ԲԱՆՍ ՁԱՐԱՒՈՐՀՈՒՐԴՍ ԵՒ ԱՆՄԻՏ ՄԱՐԴԿԱՆ ԵԼԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՆ ՀԱՅՈՑ ՎԱՐԱԶԴԱՏ, ՁՁՕՐԱՎԱՐՆ ՀԱՅՈՑ ՄՈՒՇԵՂ ՍՊԱՆԱՆԵՐ

Այլ իբրև տեսանէին զթագաւորն Հայոց Վարազդատ մեծ նախարարքն Հայոց՝ թէ մանուկ բանսերծուկ է, գչար 'ի բարոյ որոշել չգիտէ, սկսան այնուհետև բստ կամաց իւրեանց վարել զթագաւորն. որպէս և կամէին, բանիւք իւրեանց տանէին և բերէին զնա: Նա առաւել ունկն դնէր մանկտոյն՝ որ 'ի տից հասակակիցք էին նորա, առաւել քան զծերոցն իմաստնոց՝ որք կարող էին զօգտակար խրատս մատուցանել նմա:

Այլ Բաւ, որ նահապետն էր ազգին Սահառունեաց տոհմին, դայեակ սնուցիչ թագաւորին Վարազդատայ, կամեցաւ նա զգործ զօրավարութեան սպարապետութեանն Մուշեղայ յինքն յափշտակել 'ի նմանէ: Վասն այսորիկ սկսաւ խիս մատուցանել զնմանէն առ թագաւորին Վարազդատայ առ իւրում սանուն, և ասել՝ թէ 'ի սկզբան 'ի նախնեացն ետէ զձեր Արշակունեաց տոհմին Մամիկոնէից է կոռուսեալ, զի հակառակորդք ձեր դոքա լեալ են 'ի բէկ աւտի. և համակ զերկիրս Հայոց դոցա է կերեալ, մանաւանդ Մուշեղի. մանաւանդ զի այր շար է և

Իսկ Հայոց Մուշեղ սպարապետը առաջնորդում էր հայերին և զգուշությամբ պահպանում էր Հայաստանի սահմանները, ինչպես սովոր էր աշխարհը բարեկարգ պահել, և բարի խրատներ էր տալիս մանուկ Վարազդատ թագավորին: Եվ միշտ հոգս էր հաշում Հայոց աշխարհի թագավորության համար, թե ինչպես շեն պահի, և միշտ բարեմտությամբ աշխատում էր՝ որ թագավորությունը հաստատ մնա. նա խորհրդակցում էր Հունաց իշխանների հետ և նրանց միջոցով կայսեր հետ, թե հարկավոր է Հայոց աշխարհում քաղաքներ շինել ամեն մի գավառում, որում մի-մի քաղա€[20], որում երկ-երկու, ամուր պարիսպներով պատած, որպեսզի զորանիստ տեղեր դառնան բոլոր Հայոց աշխարհում, մինչև Գանձակ սահմանագլուխը, որ սահման էր Պարսկաստանի և Հայաստանի մեջ: (Նույնպես խորհուրդ էին անում) Հայոց բոլոր ազնվականներին զինավարել կայսերական ծախսով, այնպես էլ Հայոց աշխարհի զորերը, որպեսզի այս կերպով ամեն զգուշություն ձեռք առնեն իրենց թշնամիների՝ պարսից զորի դեմ: Եվ Հունաց թագավորը մեծ ուրախությամբ հանձն էր առնում այս բաները կատարել, որպեսզի այս բոլոր միջոցներով աշխարհը հաստատ ու անշարժ կապվի իր հետ, և Պարսից թագավորը չկարողանա Հայոց աշխարհը իրեն գրավել:

Լե

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՎԱՐԱԶԴԱՏ ԹԱԳԱՎՈՐԸ ՁԱՐԱՄԻՏ ԵՎ ԱՆՄԻՏ ՄԱՐԴԿԱՆՑ ԽՈՍՔԵՐԻՆ ԼՍԵԼՈՎ՝ ՍՊԱՆՈՒՄ ԷՐ ՀԱՅՈՑ ՄՈՒՇԵՂ ՁՕՐԱՎԱՐԻՆ

Բայց երբ Հայոց մեծ նախարարները տեսնում էին, թե Հայոց Վարազդատ թագավորը դյուրահավատ մանուկ է, շարը բարուց զանազանել չգիտե՝ սկսեցին այնուհետև թագավորին մատ ածել իրենց ուզածի պես. նրան տանում ու բերում էին՝ ինչպես իրեն կամենում էին: Նա ավելի լսում էր մանուկներին, որոնք տարիքով իրեն հասակակից էին, քան իմաստուն ծերերին, որոնք կարող էին նրան օգտակար խրատներ տալ:

Իսկ Բաւը, Սահառունյաց տոհմի նահապետը, որ Վարազդատ թագավորի դայակն ու ուսուցիչն էր՝ միտք դրեց Մուշեղից հափշտակել զորավարության՝ սպարապետության գործը: Այս պատճառով նա սկսեց խոսքեր անել նրա մասին իր սանիկին՝ Վարազդատ թագավորին, ասելով, թե «Հնուց հետե, նախնյաց ժամանակներից ի վեր, Մամիկոնյաններն են կռոսի մատնել ձեր Արշակունյաց տոհմը, որովհետև ի բեե ձեր հակառակորդներն են եղել. դրանք են կերել Հայոց աշխարհը, մանավանդ Մուշեղը, որ շար ու ենթգավոր մարդ է:

ենեգաւոր Չի սիրելի է թշնամեաց ձերոց, և ատելի սիրելեաց ձերոց. և համակ ընդ ձեզ ենեգաւ է գնացեալ, երկմտութեամբ և դժխեմութեամբ: Չի ո՞չ այն Մուշեղ է, որ ի թագաւորութեան ժամանակ Պապայ ի պատերազմունսն Պարսից հանիցս անգամ ձեռնհաս եղև սպանանել զՇապուհ արքայն Պարսից, և ոչ եսպան, այլ արձակեաց զթշնամին. և երիմն գկանայս Շապհոյ թագաւորին ի բուռն էարկ, և խնամոտ գթով ժանուաւոք արձակեաց զնոսա զհետ Շապհոյ: Ո՞չ այդ այն Մուշեղն է, որ զՈւռնայր արքայ Աղուանից ի բուռն էարկ, և սպանանել ոչ կամեցաւ, այլ արձակեաց զթշնամին: Ո՞չ այդ այն Մուշեղն է, զի զարքայն Պապ հրամանաւ դորա և դորին խորհրդովդ զօրավարքն Յունաց սպանին. զի դա ոխացոյց և գրգռեաց զարքայն Յունաց ի վերայ թագաւորին Պապայ, մինչև ետ սպանանել: Այլ արժան է մեռանել ի ձեռաց ֆոց, և չէ պարտ կեալ դմա. այլ թէ ոչ աճապարեացես, արքայ, այժմ զհայ երկիրս խորհի լնուլ բաղաքօք, և զօրանիստ առնէ աստ բնակութեան զօրացն Յունաց: Եւ այնուհետև կամ թագաւորն Յունաց հանէ ի էն զթագաւորութիւնս Հայոց. կամ այս Մուշեղ սպանանէ, և ինքն թագաւորէ: Եւ այսպիսի բանիւք գաղտնի հանապազ զթագաւորն գրգռէին, մինչև հաւանեցաւ ըստ կամաց նոցա զսպարապետն զզօրավարն Հայոց սպանանել:

Ապա խորհուրդ արարին, թէ ո՞րպէս բմբռնել կարասցեն զնա. բանզի մեծապէս երկնչէին ի նմանէն: Թէ զգայ, ասեն, մեծ պատերազմ առնէ. և ոչ ոք կարէ զդէմ բաջութեան նորա ունել, բայց հնարիւք մեքենաւորութեամբ ինչ լինիցի հնար: Այսպէս սպասէին նմա: Եւ եղև յաւուր միոջ հրամանաւ Վարազդատ արքայ Հայոց ընթրիս մեծ գործել և մեծ պատրաստութիւն առնել. և կոչել հրամայեաց յընթրիսն զամենայն աւագս պատուականս և զմեծամեծս, և զզօրավարն Մուշեղ: Պատրաստեաց Վարազդատ աւս ընթրիս ճզօրս, զօրեղ, զի կազմ կայցեն գործոյն, հարկանել յանկարծօրէն յանպատրաստից յեղակարծումն ժամու ի վերայ Մուշեղի: Զնոսա բաջ ուրախ առնէր մեծապէս, և շատ գինի տայր ըմպել, և բազում առնէր զբօսումն ուրախութեան: Արքայն Վարազդատ տայր նշանս յառաջագոյն այնոցիկ, զոր էր սպանօղն պատրաստեալ, եթէ յորժամ գիտիցես թէ բաջ արբեալ իցէ և զմտօք զատանցեալ յարբեցութենէ սպարապետն Մուշեղ, ես յարուցեալ իբրև ի ճեմիլն երթալոյ պատճառաւ, և դուք պատեսջիք զնովաւ: Եւ եղև իբրև անցին զառանցին ի գինոյն՝ ըստ չափ անցանելով, և թագաւորն Վարազդատ պանէր գաճան ի գինոյն. իբրև գիտաց Վարազդատ՝ թէ արբեցութենէ մտաց ինչ զգաց, ինքն յարուցեալ իբրև յապարահէ զանց առնելոյ պատճառաւ, և աւագանին ամենայն բազմականացն յոտն կո-

Ոտվճետև նա սիրել է ձեր թշնամիներին և ատել է ձեր սիրելիներին և միշտ ձեզ հետ վարվել է ենեգությամբ, երկդիմությամբ ու չարամտությամբ: Մի՞թե դա այն Մուշեղը չէ, որ Պապի թագավորության ժամանակ պարսիկների հետ պատերազմելիս մի քանի անգամ հնարավորություն ունեցավ Պարսից Շապուհ թագավորին սպանելու, բայց չսպանեց, այլ թշնամուն ազատ արձակեց. մի անգամ էլ ձեռ ձգեց Շապուհ թագավորի կանանց, և խնամխով ու հոգատարությամբ ժանվարներով ուղարկեց Շապուհի քովից: Դա այն Մուշեղը չէ՞, որ Աղվանից Ուռնայր թագավորին ձեռ ձգեց, բայց սպանել չկամեցավ, այլ թշնամուն ազատ արձակեց: Դա այն Մուշեղը չէ՞, որի հրամանով և որի խորհրդով Հունաց զորավարները Պապ թագավորին սպանեցին, որովհետև դա էր որ Հունաց թագավորին թշնամացրեց ու գրգռեց Պապ թագավորի դեմ, մինչև որ սպանել տվեց: Արդ պետք է որ ես ֆ ձեռից մեռնի, ես չպետք է ապրի: Եվ եթե դու չզտապես, արքա, ես մտածել է այժմ Հայոց աշխարհը լցնել բաղաքներով, զորանիստներ դարձնել՝ Հունաց զորքերն այնտեղ բնակեցնելու համար: Եվ այնուհետև կա՛մ Հունաց թագավորը ֆեզանից կխլե Հայոց թագավորությունը կամ ինձ այս Մուշեղը (ֆեզ) կսպանե և ինքը կթագավորե»: Եվ այսպիսի խոսքերով շարունակ գաղտուկ գրգռում էին թագավորին, մինչև որ համաձայնեց Հայոց զորավար սպարապետին սպանել ըստ նրանց ցանկության:

Հետո սկսեցին խորհուրդ անել, թե ի՞նչպես նրան բռնեն, որովհետև նրանից շատ էին վախենում: «Եթե գլխի բնկնի, ասում էին, մեծ պատերազմ կհարուցանե, և ոչ ոք չի կարողանա նրա բաջությանը դեմ դնել. պետք է մի հնարք, խորամանկություն բանեցնել»: Եվ այսպես մի օր Հայոց Վարազդատ թագավորը հրաման ավեց մեծ ընթրիք սարքել մեծ պատրաստությամբ, և հրամայեց ընթրիքին հրավիրել բոլոր ավագ պատվավոր մարդկանց, մեծամեծներին և Մուշեղ զորավարին: Վարազդատը պատրաստեց ընտիր ուժեղ ճաշ մարդիկ, որ պատրաստ լինին գործին—հանկարծակի, հանպատրաստից, անպատելի ժամում Մուշեղի վրա հարձակվելու: Հյուրերին շատ ուրախացնում էր, շատ գինի էր խմել տալիս և շատ զվարճացնում էր: Վարազդատ թագավորը առաջուց նշան էր ավել իր պատրաստած սպանողներին, թե «երբ կտեսնեք, որ Մուշեղ սպարապետը լավ հարբել է և հարբեցությունից խելքը կորցրել է՝ ես վեր կկենամ, իբրև թե առտնինց գնալու համար, դուք այդ ժամանակ նրան շրջապատեցեք»: Բոլորը չափից դուրս խմեցին, գինովցան, բայց Վարազդատը գինի խմելուց զգուշանում էր: Երբ նա նկատեց, թե հարբեցությունից խելքները կորցրել են՝ վեր կացավ,

ցին առ հասարակ, իբրև նմա պատիւ ինչ առնել: Եւ յանկարծ արիւն, որոց էր տուեալ հրամանն, երկոտասան այր կից զոյգ զկնի կողմանէ զնմանէ բուռն հարկանէին, վեց այր ի մի բազուկն Մուշեղի, և վեց այր ի միւս բազուկն: Եւ ընդ ոտն կալ թագաւորին, նայեցեալ ընդ նա՝ եթէ այս ընդէ՞ր է. և թագաւորին պատասխանի տուեալ, ասէ. Երբ առ Պապ արքայ, հարց և տես՝ թէ ընդէ՞ր է այդ: Եւ թագաւորն ի դուրս կոյս գնացեալ ելանէր, և ասէ Մուշեղ. Ի վերայ բազում իմոց վաստակոցն արեան և իրտան, և սպառօրն գիրտն չընչելոյ, ա՛յս հատուցումն եղև ինձ: Բայց իրև եհաս ինձ մահս, թէ ի վերայ ձիոյ դիպեալ էր...: Զայս միայն բանս ժամանեաց ասել, և այլ ոչ ինչ ոչ: Եւ անդէն Բատ Սահառնի, դայեակն արքային Վարազդատայ, զնոսանն՝ զոր յիւրում ազդերն ունէր `հանեալ, անցոյց ընդ փողս զօրավարին Մուշեղի. և անդէն ի բաց եհատ զգլուխ նորա: Եւ բարձին զնա, և տարան զմարմին նորա ի գեղն իւր:

ԼԶ

ՅԱՂԱԳՍ ԱՆՄՏՈՒԹԵԱՆ ԿԱՐՏԵԱՑ ԸՆԴԱՆԵԱՅՆ ՄՈՒՇԵՂԻ ԵՒ ԱՅԼ ՄԱՐԴԿԱՆ

Եւ եղև իբրև տարան զմարմինն սպարապետին Մուշեղի ի տուն իւր առ բնտանիս իւր, ոչ հաւատային բնդանիք նորա մանուն նորա, թէպէտ և տեսանէին զգլուխ նորուն զատ ի մարմնոյն անտի: Զի ասէին. Դորա յանթիւ եակատ մտեալ էր, և վէր երբէք չէր առեալ. ոչ ետ մի դիպեցաւ երբէք, և ոչ այլոց զինու խոցեալ է զդա: Իսկ կէսմ յառնելոյ ակն ունէին նմա. մինչև զգլուխն անդէն ի կոճեղն կարեալ կցեցին, և հանին եղին ի տանիսն աշտարակի միոյ, ասէին՝ թէ վասն զի այր բաւ էր, Աղեզմ իջանեն և յարուցանեն զդա: Պահապան կային, և ակն ունէին յառնելոյ մինչև նեխեցաւ մարմինն: Ապա իջուցին յաշտարակէ անտի, և լացին թաղեցին զնա ոչպէս օրէն էր:

ԼԷ

ՅԱՂԱԳՍ ԳԱԼՈՅՆ ՄԱՆՈՒԷԼԻ Ի ԳԵՐՈՒԹԵՆԷ ՊԱՐՍԻՑ, ԵՒ ԽՆԴՐԵԼՈՑ ՁՎԻՀԱՆ ՄՈՒՇԵՂԻ. ԵՒ ՀԱԼԱՍԵԼՈՑ ՁԹԱԳԱՒՈՐՆ ՎԱՐԱԶԴԱՏ ՅԵՐԿՐԷՆ ՀԱՅՈՑ. ԵՒ ՅԻՆՔՆ ՈՒՆԵԼՈՑ ՁԵՐԿԻՐՆ ՀԱՅՈՑ

Ապա կացոյց թագաւորն Վարազդատ ի գործ զօրավարութեան սպարապետութեանն զԲատ Նահապետն Սահառունեաց տոհմին, որ էր

իբրև քե չուր թափելու գնալու համար, և սեղան բազմած բոլոր ավագները ոտի կանգնեցին՝ նրան պատվելու համար: Եվ հանկարծ այն մարդիկ, որոնց հրաման էր տվել, տասներկու մարդ մի անգամից միասին ետևի կողմից Մուշեղին բռնեցին, վեց մարդ մի ձեռից և վեց մարդ մյուս ձեռից: Երբ թագավորը ոտի կանգնեց՝ (Մուշեղը) նրան ձայնեց (հարցական կերպով), թե ինչի՞ց է այս, և թագավորը պատասխանեց ու ասաց. «Գնա՛ Պապ թագավորի մոտ, հարցրո՛ւ և կիմանաս, թե ինչի՛ց է»: Այս ասելով թագավորը դեպի դուռն ուղղվեց ու դուրս եկավ: Եվ Մուշեղն ասաց. «Իմ այնման ծառայություններին, արյուն ու հրոիներ թափելու, հրոիներս սպանելով սրբելու վարձատրությունն ա՛յս եղավ: Բայց, այս մանը երանի թե ձիու վրա ինձ հասներ»... Այսքան միայն կարողացավ ասել, ավելի ոչինչ: Իսկույն Բատ Սահառունին, Վարազդատ թագավորի դայակը, ազդրից կախած նրանը հանելով՝ խրեցրեց Մուշեղ զորավարի շնչափողը և իսկույն գլուխը կտրեց: Նրա մարմինը վերցրին ու տարան նրա գյուղը:

ԼԶ

ՄՈՒՇԵՂԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԱՅԼ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՄԻՏ ԿԱՐԾԻՔԻ ՄԱՍԻՆ.

Երբ Մուշեղ սպարապետի մարմինը իր տունը, իր բնտանիքի մոտ տարան՝ բնտանիքը նրա մանվածը չէին հավատում, թեպետ և տեսնում էին գլուխը մարմնից զատված: Նրանք ասում էին. «Սա անթիվ անգամ կռիվների մեջ էր մտել, ոչ մի վերք չէր ստացել, ոչ մի նետ սրան չէր դիպել և ոչ մի ուրիշ զենքով սա չէր խոցվել»: Իսկ ոմանք էլ հույս ունեին, թե նա կկենդանանա. ուստի գլուխը կարելով կցեցին իրանին և հանեցին մի աշտարակի երդիկը դրին, ասելով. «Հովվենաև քաջ մարդ էր՝ առյուծներ[202] կիչեն ու սրան կկենդանացնեն»: Պահապան դրին և սպասում էին նրա հարությանը, մինչև որ մարմինն սկսեց նեխվել: Ապա աշտարակից վար իջեցրին, լացին ու թաղեցին՝ ինչպես կարգ էր:

ԼԷ

ՄԱՆՈՒԷԼԻ ԴԱՐՁԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ. ՄՈՒՇԵՂԻ ՎՐԵԺԸ ՊԱՀԱՆՋՎԵԼԸ, ՎԱՐԱԶԴԱՏ ԹԱԳԱՎՈՐԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՑ ՀԱԼԱՍԵԼԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ԻՐ ՁԵՌՔԸ ԴՐԱՎԵԼԸ

Իսկ Վարազդատ թագավորը զորավարության ու սպարապետության գործը հանձնեց Բատին, Սահառունյաց տոհմի հանապետին,

իւր դայեակ, բանսարկու խուն սպանօղն Մուշեղի: Եւ էր նա սպարապետ փոխանակ նորա զօրավար ամենայն Հայոց: Եւ ազգին Մամիկոնեան տոհմին տանուտէր նահապետ կացոյց բագաւորն, Վաչէ անուն ի նմին տոհմէ:

Յայնմ ժամանակի դարձան ի գերութենէն եկին ի գերութենէն եկին ի Պարսից, զոր տարեալ էր Շապհոյ արքային, որ երկու եղբարք ի Մամիկոնեան տոհմէն. անուն միումն Մանուէլ, և անուն երկրորդին Կոմս[55]: Քանզի զայն ժամանակաւ բագաւորին Պարսից սասանականին տուեալ էր պատերազմ ընդ մեծ բագաւորին Քուշանաց ընդ արշակունւոյն, որ նստէր ի Բաղն խաղաքին: Եւ իբրև երթային զօրն Պարսից ի Քուշանացն պատերազմն ապա և զմարդիկ գերութեանն որ ի Հայոցն էին՝ բագաւորն Պարսից յղէր ի պատերազմ ընդ իւր զօրսն. և Մանուէլս այս երթայր ընդ նոսա հանդերձ եղբարբն իւրով Կոմսիւ: Եւ իբրև եղեն խառնորոգ երկոցունց գնդացն ընդ միմեանս, ապա ի պարտութիւն մատնեցան զօրն Պարսից յերեսաց զօրացն Քուշանաց. դարձան ի փախուստ անհնարին հարուածովք, հասին ի վերայ զօրացն Պարսից, զի ոչ մի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին ի զօրացն Պարսից, բանբեր անգամ ոչ ապրէր. բայց Մանուէլ որդի Արտաշինայ ի Մամիկոնեան ի տոհմէն, հանդերձ եղբարբն իւրով Կոմսիւ, բազում քաջութիւնս կատարեալ ի նմին նակատուն, սակայն հետիոտս ապրէին: Եւ գային յամենայն զօրացն Պարսից սոքա միայն հասանէին առ բագաւորն Պարսից ոչ ապրեալք և բազում քաջութիւնս կատարեալ:

Սակայն բագաւորին Պարսից բազում տրտմութիւն լինէր յաղագս իւրոյ զօրացն կատարածոյն. սակայն և զայնու զայրացեալ զակատէր զի գնոսա միայն տեսանէր ոչ եկեալ յամենայն զօրացն իւրոց: Յասուցեալ ընդ նոսա, այսպէս արարեալ, հալածեաց յիւրոց սահմանացն. արձակեաց գնոսա յերկիրն իւրեանց: Եւ գնացեալք գային դէմ յանդիման յիւրեանց երկիրն արարեալ: Եւ էին հետիոտք երկոքին եղբարքն. և էին երկոքեան մեծ անհեղեղ, երկոքեան անձնեալք որպէս սկսյազուցք: Մինչ դեռ գային ի ճանապարհի, ոչ կարէր Մանուէլն գնալ, զի ոտիքն ցաւած էր. ապա Կոմս եղբայր իւր սատնձեալ առեալ բառնայր, և տասն տասն խրասախ բերէր ըստ անձին զայնչափ այրն զանհեղեղ զանարի. եկն եբեր յերկիրս Հայոց: Եւ եղև իբրև եկն եհաս յերկիրն Հայոց Մանուէլ եղբարբն իւրով Կոմսիւ հանդերձ, իբրև ետես զնա վաչէն՝ որ յառաջն էր լեալ նահապետ, մինչ չև եկեալ էր ի նա՝ եա ցնա զպատիւ իշխանութեանն զոր առեալ էր ի բագաւորէն վարազդատայ: Քանզի նա էր երէց յազգին, և Մանուէլն ունէր զնահ-

ար իր դայեակն էր և Մուշեղի խուն բանսարկուն ու սպանողը: Նա Մուշեղի փոխանակ դարձավ բոլոր Հայոց զորավար սպարապետը: Իսկ Մամիկոնյան տոհմին նահապետ ու տանուտեր նշանակեց բագավորը՝ Վաչեին՝ նույն Մամիկոնյան տոհմից:

Այս ժամանակ Պարսկաստանի գերությունից վերադարձան Մամիկոնյան տոհմից երկու եղբայր, որոնց գերի էր տարել Շապուհ բագավորը, մեկի անունը Մանուել, մյուսինը Կոմս: Որովհետև այդ ժամանակները Պարսից բագավորը, որ Սասանյան ցեղից էր, պատերազմ էր ունեցել Քուշանների մեծ բագավորի հետ, որ Արշակունի էր և նստում էր Բահլ քաղաքում: Եվ երբ Պարսից զորքերը գնում էին Քուշանների[203] դեմ պատերազմի՝ ապա Պարսից բագավորն իր զորքերի հետ ուղարկում էր և այն մարդկանց, որոնց գերի էր բերել Հայաստանից, նրանց հետ գնում էր և այս Մանուելը իր Կոմս եղբոր հետ: Երբ կռվի մեջ երկու կողմի գնդերն իրար խառնվեցին՝ Պարսից զորքը պատռություն կրեց Քուշանների զորքից և շարաչար հարվածներ կրելով փախուստի դիմեց: (Քուշանները) պարսիկներին հասնելով՝ նրանցից ոչ մեկին կենդանի չթողին, մինչև անգամ մի մարդ կենդանի չմնաց՝ լուր բերող. բայց Մանուելը, Արտաշեսի որդին, Մամիկոնյան տոհմից, և իր Կոմս եղբայրը մեծամեծ քաջություններ գործելով նույն հակառամարտում կյանքերն ազատեցին, և Պարսից բոլոր զորքերից միայն այս երկուսը հետիոտն գալիս հասնում էին Պարսից բագավորի մոտ ողջ մնացող, շատ քաջություններ կատարած[203]:

Բայց Պարսից բագավորը շատ տրտմած էր իր զորքերի կոտորածի պատճառով. նա ավելի ևս չարացավ ու կատաղեց, երբ տեսավ որ իր բոլոր զորքերից միայն նրանք են ողջ մնացել ու եկել: Նրանց վրա բարկանալով՝ անարգելով հալածեց իր երկրի սահմաններից, որ գնան իրենց երկիրը: Եվ նրանք նահապետն բնկան, երեսներն դեպի իրենց աշխարհն ուղած: Նրանք եղբայրն էլ հետևակ էին, երկուսն էլ անհեղեղ մեծությամբ, հաղթանդամ, նոկաների նման: Մինչ գալիս էին նահապետով՝ Մանուելը չէր կարող քայլել, որովհետև ոտներում ցավ ուներ: Ապա նրա Կոմս եղբայրը նրանք չալակում էր իր վրա. և (օրական) տասը փարսախ[204] չալակած բերում էր այն անպիտան անհեղեղ մարդուն, մինչև բերեց հասցրեց Հայոց աշխարհը: Երբ Մանուելը իր Կոմս եղբոր հետ եկավ հասավ Հայոց աշխարհը, և երբ նրանց տեսավ վաչեն, որ նրա գալուց առաջ (Մամիկոնյանների) նահապետն էր՝ նրան նանձնեց իր իշխանական պատիվը, որ ստացել էր վարազդատ բագավորից, որովհետև տոհմի մեջ ավագագույնը նա էր: Այսպիսով Մա-

պետութեան ազգին տանուտէրութեան պատուին. և վաչէն լինէր երկրորդ:

Իսկ յորժամ եհաս եկաց Մանուէլն ի փառս տէրութեան իւրոյ, նախ առանց հրամանի թագաւորին Վարազդատայ յինէն յափշտակեաց զզօրավարութեանն զսպարապետութիւնն. զի այն ինչ որ իւրոց նախնեացն ի բնէն կալեալ էր ի սկզբանէ զոր արքայն Վարազդատ շնորհ առնէր իւրում դայեկին Բատայ, զայն Մանուէլ յինէն հանեալ ունէր զիշխանութիւնն: Եղև յետ այսորիկ, պատգամ յղէր սպարապետն Հայոց Մանուէլ առ թագաւորն Վարազդատ, և ասէր՝ թէ փոխանակ ամենայն ազգին մերոյ վաստակոցն, զոր ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ միամտութեամբ առ ձեզ Արշակունիս վաստակեալ եմք, և եղեալ զանձինս մեր ի վերայ ձեր, կեցեալ և մեռեալ եմք ի վերայ ձեր, ամենայն նախնիքն մեր առաջինքն անկան ի պատերազմունս ի վերայ ձեր, վասակ հայր Մուշեղի կոռեաւ ի վերայ Արշակայ արքայի, և մեք հանապազ վաստակեալ և աշխատեալ եմք ի վերայ թագաւորութեան ազգիդ ձերոյ, և փոխանակ կեանս առնելոյ ընդ վաստակոցն, արդ որ ի բշնամացն մեռան, որ մնացին՝ զայն դուք Արշակունիդ կոտորեցիք: Արդ Մուշեղ այր քաջ եղբայր իմ, որ ի վերայ ձեր մաշեաց զանձն իւր ի՛ մանկութենէ իւրմէ, վանեաց կոտորեաց զբշնամիս ձեր, և ոչ կարացին բշնամիքն սպանանել, դու կալար ի բազմական խեղդեցեր զնա: Նա դու չես իսկ Արշակունի, այլ ի պոռնկութենէ եղեալ ես որդի. վասն այդորիկ ոչ ծանեար զվաստակաւորսն Արշակունեաց: Նա մեք չեմք իսկ լեալ ձեր ծառայք, այլ բնկերք ձեր և ի վերոյ հան զձեզ. զի մեր նախնիքն լեալ էին թագաւորք աշխարհին ճենաց, և վասն եղբարց իւրեանց գրգռութեանն, զի արիւն մեծ անկեալ է ի վերայ. վասն այնր եմք գնացեալ. և վասն բարւոյ հանգստի գտանելոյ՝ եկեալ դադարեալ եմք: Առաջին թագաւորքն Արշակունիք, որ գիտէիցեն զմեզ ո՛վ էաք կամ ուստի՛ էաք. այլ զի դու բանզի չես Արշակունի, գնա յաշխարհէս, և մի՛ մեռանիր ի ձեռաց իմոց:

Իսկ Վարազդատ թագաւորն պատգամ յղէր պատասխանոյն առ զօրավարն Մանուէլ, և ասէր. եւ բանզի չեմ Արշակունի, զի եղի զթագ նախնեաց իմոց Արշակունեացն, և կալայ զաշխարհն առաջնոց իմոց, և խնդրեցի զվրէժ ճօրեղբօրն իմոյ Պապայ ի չարագործ յեղբօրէն Իւմմէ ի Մուշեղայ. բայց զի դու չես յաշխարհէս յայսմանէ, զի էիցէ իսկ ասացեր բաս յերկրէն յաշխարհէն ճենաց եմք լեալք թագաւորք ի բնութենէ, և այսր պանդխտ եմք եկեալք, արդ ըստ օրինակի եղբօրն Իւմմայ՝ մի՛ մեռանիր: Զի իմ, առ բարերարութեան իմոյ, արձա-

ճուելն ստացավ իրենց տոհմի տանուտերության և նահապետության պատիվը, իսկ Վաչեն լինում էր նրա երկրորդը:

Իր տերության պատվին ու փառքին հասնելուց հետո Մանուելը նախ և առաջ, առանց Վարազդատ թագավորի հրամանին, հափշտակեց զորավարության-սպարապետության պատիվը: Ինչ որ նրա նախնիքը բուն սկզբից ունեին և ինչ որ Վարազդատ թագավորը (նրանցից խլելով) շնորհել էր իր դայակ Բատին՝ այդ իշխանությունը Մանուելը ետ խլեց իրեն համար: Իսկ այնուհետև Հայոց Մանուել սպարապետը պատգամ էր ուղարկում Վարազդատ թագավորին և ասում էր. «Մենք բոլոր տոհմով ձին ժամանակներից ի վեր հավատարմությամբ ծառայել ենք ձեզ, Արշակունիներիդ, մեր կյանքը զոհել ենք ձեզ համար, պատրել ու մեռել ենք ձեզ համար: Մեր բոլորի ձին նախնիքը պատերազմների մեջ ընկան ձեզ համար. Վասակը, Մուշեղի հայրը, կռավ Արշակ թագավորի համար, և մենք միշտ աշխատել ենք, շարշարվել ենք ձեր ցեղի թագավորության համար: Արդ՝ փոխանակ մեզ վարձատրելու մեր ծառայությունների համար՝ դուք, Արշակունիներդ, կոտորեցիք նրանց՝ որոնք թշնամիներից չմեռան ու կենդանի մնացին: Ահա իմ քաջ եղբայրը, Մուշեղը, որ մանկությունից ի վեր կյանքը ձեզ համար մաշեց, ձեր թշնամիներին կոտորեց ու վանեց և որին թշնամիները չկարողացան սպանել՝ դու բռնեցիր և սեղանի նստած տեղում խեղդեցիր: Բացի սրանից՝ « դու Արշակունի էլ չես, այլ պոռնկությունից ես ծնվել, այդ պատճառով էլ Արշակունիների աշխատավորներին չճանաչեցիր: Մենք մինչև անգամ ձեր ծառաները (նպատակները) չենք, այլ ձեր ընկերներն ենք և ձեզանից ավելի բարձր, որովհետև մեր նախնիքը ճենաց աշխարհի թագավորներն են եղել. և եղբայրների մեջ տեղի ունեցած սառածայնության պատճառով, որպեսզի մեծ արյունահեղություն չլինի՝ այնտեղից հեռացել ենք և խաղաղ հանգստություն գտնելու համար եկել դադարել ենք. (այստեղ)[205]: Առաջին Արշակունի թագավորները գիտեին, թե ովքե՛ր ենք մենք և ո՛րտեղացի ենք. բայց դու, որովհետև Արշակունի չես՝ հեռացի՛ր այս աշխարհից և իմ ձեռքից մի՛ մեռնիր»:

Իսկ Վարազդատ թագավորը պատասխան-պատգամ էր ուղարկում Մանուել զորավարին և ասում էր. «Ես իսկական Արշակունի եմ[206], որ իմ Արշակունի նախնիների թագը դրի և իմ նախորդների աշխարհին տիրեցի, և իմ ճորեղբոր՝ Պապի վրեժն առա քո չարագործ եղբորից՝ Մուշեղից: Բայց դու որ այս աշխարհից չես՝ այդ դու ինքդ ասացիր, թե մենք ճենաց աշխարհից ենք, այնտեղ ծագումով թագավոր եմք եղել և այստեղ եկել ենք իբրև պանդուխտներ: Ուրեմն մի՛ մեռնիր քո եղբոր (Մուշեղի) համար: Ես իմ բարերարությամբ քեզ արձակում եմ. ե՛լ ու

կեալ լիցի զքեզ. երբ գնա յերկիրն ճենաց անց կեաց, և անդէն թագաւորեսցիր յերկրին հում: Ապա թէ ոչ կամիցիս գնալ, մեռանիս ի ձեռաց իմոց որպէս և Մուշեղն մեռաւ:

Իսկ յորժամ բազում անգամ երթեալ եկեալ պատգամաւորք բազում խստագոյն ևս զխստագոյն բանս կսկծանաց առ միմեանս յղէին, և յետ այսորիկ ժամադիր միմեանց լինէին՝ պատերազմաւ զմիմեանս տեսանել: Իսկ ի հասեալ ի ժամադիր ժամուն, եկեալ տային ընդ միմեանս պատերազմ: Եւ թագաւորն Վարազդատ առնոյր զզօրն իւրոյ բանակին, և գնայր հասանէր ի տեղի ճակատուն, վառեալ կազմեալ պատրաստեալ ի պատերազմ. սոյնպէս և սա պատրաստագոյն ևս գնաւա: Եւ Մանուէլ սպարապետն հասանէր իւրով գնդաւն ի նոյն տեղի. և ի դաշտին Կարնոյ լինէին խառնուրդ երկոցունց գնդաց ընդ միմեանս բախելոցն:

Թագաւորն Վարազդատ և սպարապետն Մանուէլ զնիզակս առեալ, միմեանց յարձակեալ ախոյեանք ելանէին: Իբրև զաչս ի վեր ամբառնայր արփայն Վարազդատ, և նայէր ընդ գալն իւր և տեսանէր զսպարապետն Մանուէլն ի մեծութենէն հասակին և ի շքեղութենէ անձինն, և յամրակուռ յերկաթապատ յոտից մինչև ցգլուխն առ հասարակ յանվթար գինէն, ի հաստամեստ յանձնէն, և ի հաստատուն երիվարէն և յասպազէն[56] վառելոյն յանշարժ սպառազինէն, հարմարեցաւ կշռեաց գնա ի միտս իւր իբրև զլեառն մի բարձր զանմատոյց: Սակայն ածեալ զմտն ընդ միտս, յարձակեցաւ. զի այնուհետև չունէր ակն անձինն ապրելոյ:, Սակայն զի մանուկ մարդ էր արփայն Վարազդատ, իբրև ետես գնա այնպէս զի չէր ինչ կռուոյ տեղեակ, էած զմտաւ թէ ի զրահսն ոչ ինչ կարիցէ նիզակ գործել, առ ձեռաց կորովութիւնն զնիզակն ընդ բերան արկանէր զօրավարին Մանուէլի: Իսկ Մանուէլ բուռն հարկանէր զնիզակէն. հանեալ ի նմանէ զնիզակատէգն՝ ընդ իւր թուրծն հանէր, և բազում զիւր թափէր զատամունսն, զնիզակն յինէն հանէր յարփայեն:

Եւ արփայն Վարազդատ ի փախուստ դառնայր յերեսաց զօրավարին Մանուէլի. և անդէն Մանուէլ զտէգ նիզակին ի ձեռին կալեալ, և նիզակաւն ի կառափն մատուցեալ ծեծէր զարփայն Վարազդատ. այնպէս տանէր իբրև ասպարէզս չորս: Եւ անդէն որդիքն Մանուէլի յարձակեցան մէն մի նիզակ ի ձեռն, Հմայեակն և Աբուաշէսն, սպանանել զարփայն: Ինքն իսկ Մանուէլ աղաղակէր զկնի որդուցն իւրոց, և ասէր. Ա՛յ մի՛ լինիք սիրասպանուք: Եւ նոցա լուեալ զձայն հօրն, վաղվաղակի արագ արագ դառնային ի նմանէն. և ի պարտութիւն մատնեցաւ այն օր գունդն արաբական առաջի մանուէլեան գնդին:

գնա՛ ձեռաց աշխարհն, այնտեղ, ըո երկրում ապրի՛ր ու թագավորի՛ր: Իսկ եթե չես կամենա գնալ՝ իմ ձեռքից կմեռնես, ինչպես Մուշեղը մեռավ»:

Երբ շատ անգամ պատգամավորներ գնացին եկան, և ավելի ու ավելի խիստ ու վիրավորական խոսքեր իրար ուղարկեցին՝ ապա ժամ էին նշանակում պատերազմով իրար հանդիպելու: Նշանակված ժամին եկան հասան ու պատերազմ սկսեցին իրար հետ: Վարազդատ թագավորն առնում էր իր զորքի բանակն ու գալիս հասնում էր նախատամարտի տեղը, լավ սպառազինված ու պատերազմի պատրաստ: Եվ Մանուել սպարապետն, ավելի մեծ պատրաստությամբ, իր գնդով նույն տեղն էր հասնում, և Կարինի դաշտում երկու կողմերի գնդերն բռնհարվում էին:

Վարազդատ թագավորը և Մանուել սպարապետը, նիզակներբ ձեռքերին, դուրս էին գալիս իրար դեմ մախյաններ: Երբ Վարազդատ թագավորը, գալու ժամանակ, աչքերը վեր բարձրացրեց ու Մանուել սպարապետին տեսավ ու նկատեց նրա հասակի մեծությունը, անձի շքեղությունը, նրա ոտից մինչև գլուխ երկաթապատ ամրակուռ և անխոցելի զինավորությունը, պինդ կազմվածքը, ուժեղ երիվարը, երիվարի անդրդվելի սպառազինությունը՝ իր մտքում նրան համեմատեց մի բարձր անմատույց լեռան հետ: Բայց մանը աչքն առնելով՝ հարձակվեց. որովհետև փրկության ուրիշ նույս չուներ: Բայց որովհետև Վարազդատ թագավորը մանուկ մարդ էր և կռվի շատ տեղյակ չէր՝ նրան այնպես տեսնելով կարծեց, թե նրա զրահներին նիզակը չի կարող ազդել, ուստի իր ձեռքի ամբողջ ուժով նիզակով Մանուել զորավարի բերանին խփեց. իսկ Մանուելը բռնեց նիզակից, նրանից տեգը պոկելով իր բշովն անց կացրեց, որի ժամանակ շատ ատամներ կորցրեց, և նիզակը թագավորի ձեռքից խլեց:

Եվ Վարազդատ թագավորը փախուստի դիմեց Մանուել զորավարի առաջ, իսկ Մանուելը նրան հասնելով նիզակի տեգը ձեռքին բռնած՝ նիզակի կոթովը ծեծում էր Վարազդատ թագավորի կառափը, և այսպես էշում էր չորս ասպարեզ[207]:

Իսկույն Մանուելի որդիքը, Հմայակն ու Աբուաշեսը, վրա հասան, նիզակները ձեռքերին, որ թագավորին սպանեն: Իսկ ինքը Մանուելը որդոց եռանից աղաղակում էր. «Ա՛յ, սիրասպան մի՛ լինեք»: Նրանք էլ իրենց հոր ձայնը լսելով՝ իսկույն արագ ետադարձան թագավորից:

Այդ օրը արաբական գունդը պարտություն կրեց Մանուելի զոր-

Ոչ ինչ այնուհետև սակաւ սպանեալք անկանէին ընդ երեսս դաշտին, բազում խոցք և խեղք վիրաւորք. և բազում նախարարք սատակեցան բազում փախստեայք հալածականք լինէին: Մինչ դեռ գունդն մանուէլեան էին զկնի փախստէից, և գայր հասանէր Համազասպեան սեպուհ մ' ի Մամիկոնեան տոհմէն, անցուներ առ անկելովք դիակամբն և առ խոց վիրաւորսն պատերազմին. և ընդ նոսին ընկեցեալ էր և զԳարեգին, տէր գաւառին որշտունեաց. բայց ողջ կայր, զի ոչ խոց էր և ոչ վնասեալ ինչ: Այս Գարեգին փեսայ լեալ էր յառաջ նորին Համազասպէի, զկոյր նորին Համազասպունի անուն ունէր կին: Եւ իբրև եկն թագաւորն Շապուհ յերկիրն Հայոց. սա եթող զկինն իւր և փախեաւ: Ապա տարան զՀամազասպունի յերկիրն Տոսպայ, ի բաղարն ի Վան. հանեալ կախեցին զնա պարսիկն զբարձր աշտարակացն՝ որ կայր ի վերայ բարանձաւին, ի կախաղանի սպանին զնա:

Իսկ յայնմ աւուր իբրև անկեալ կայր այն Գարեգին ի մէջ անկելոցն, եկն Համազասպ անդր նորուն անցանել առ նոսօք: Աղաղակեաց Գարէգինն, և ասէ. Տէր Համազասպեան, և զիս տես. հրաման տուր ճժոյգ մատուցանել, քող հեծայց: Եւ ասէ ցնա Համազասպեան. Ո՞վ ես դու: Եւ ասէ. Ես եմ Գարէգին Որշտունի: Եւ ետ հրաման Համազասպեան վանահաւրացն, որ ընդ նմա էին, ասէ. Իջէք և դիք զվահանսդ ի վերայ նորա, և պահեցէք: Եւ իճն էանց. ապա իջին վանահաւրն եդեալ զվահանսն ի վերայ, և կային պահէին ըստ հրամանի տուելոյն:

Ապա յետ այսորիկ գայր Դանուն ոմն գամապետ սպարակրացն գնդին մանուէլեան զօրացն, եռես զի իջեալ էին վահանաւորք ի վերայ, և զԳարէգինն պահէին. եհարց ցնոսա՝ թէ ո՞վ է այդ, և դուք ի՞մ իջեալ կայք յայդմ տեղւոջ: Ասեն նոքա՝ թէ սա Գարէգին Որշտունեաց տէր է. և մեզ հրաման ետ Համազասպեան, իջանել պահել զսա: Եւ մեծաւ ցասմամբ զայրանալով՝ ի բարկութիւն մեծ բորբոքէր Դանունն, և ասէր. Արդ ուրեմն վերստին կամի Համազասպեան զսա իւր փեսայ առնել. և զՀամազասպունի զկոյր իւր տալ սմա կնութեան. վասն այսորիկ անխայեաց ի դա, պահել հրամայէր: Եւ անդէն ոտն ածեալ էջ ի ձիոյն, եհան զթուրն, մատուցեալ ի նա՝ պատառ պատառ կոտորեալ, անդէն ցրեալ սատակեաց զնա:

Իսկ այլ զօրքն ամենայն դեռ գային ի կոտորածոյն, զբազումս ձերբակալ առեալ. և կալեալ ածէին և զԲատն, արքային Վարազդատայ զխուն, զսպանօղն Մուշեղի, կալեալ իւր որդովն առաջի սպարապետին Մանուէլի, և զայլս՝ որ միանգամայն գործոց սատարք լեալ էին՝ բմբռնէին զամենեսեան, առ նա ածէին: Եւ մեծաւ դառնութիւն

դից: Ոչ սակաւ սպանվածներ ընկած էին դաշտի վրա. շատերը խոցված, հաշմացած, վիրավորված. շատ նախարարներ կոտորվեցին և շատերն էլ հալածվելով փախուստի դիմեցին:

Մինչ Մանուելի գունդը փախստականների ետևից էր ընկել՝ մի սեպուհ Մամիկոնյան տոհմից, Համազասպյան անունով, գալիս անցնում էր ընկած դիակների և խոցված վիրավորների մոտով: Սրանց մեջ էր գտնվում և Գարեգինը, Որշտունյաց տերը, որ ընկած էր գետին, բայց ողջ էր, ո՛չ խոցված և ոչ վնասված: Այս Գարեգինը առաջ Համազասպյանի փեսան էր, կին էր առել նրա Համազասպունի քույրը. երբ Պարսից Շապուհ թագավորը եկել էր Հայոց աշխարհը՝ նա թողել էր իր կինն ու փախել: Հետո Համազասպունուն տարան Տոսպ գավառը, Վան քաղաքը, և այնտեղ պարսիկները նրան կախեցին բարձր աշտարակից, որ ժայռի վրա էր շինված. և այսպես կախած սպանեցին:

Նույն օրը՝ մինչ Գարեգինն ընկած էր մյուս ընկածների մեջ՝ նրա աներորդին Համազասպյանն[208] եկավ նրանց մոտով անցնելու: Գարեգինը ձայն տվեց նրան. «Տեր Համազասպյան, ինձ էլ օգնիր, հրաման տուր ձի բերել ինձ որ հեծնեմ»: Համազասպյանը հարցրեց. «Ո՞վ ես դու»: Նա ասաց. «Ես Գարեգին Որշտունին եմ»: Համազասպյանը հրամայեց իր հետ եղած վահանավորներին, թե «Իջե՛ք, վահաններդ վրան դրեք ու պահպանեցեք»: Ինքը գնաց, իսկ վահանավորները ձիերից իջան, վահանները նրա վրա դրին և կանգնել պահպանում էին, ինչպես հրամայվեց: Այս ժամանակ գալիս էր Դանուն անունով մեկը, որ Մանուելի զորքի ասպարակիր գնդի խմբապետն էր[209], տեսավ որ վահանավորները իջել՝ պահպանում էին Գարեգինին: Հարցրեց. «Ո՞վ է դա և ինչո՞ւ դուք իջել կանգնել եք այդտեղ»: Նրանք ասացին. «Սա Գարեգինն է, Որշտունյաց տերը, և մեզ Համազասպյանը հրամայեց՝ իջնել ու սրան պահպանել»: Դանունը սաստիկ բարկացավ, զայրույթից կատաղած ասաց. «Համազասպյանը գուցե ուզում է նորից դրան իրեն փեսա դարձնել և իր՝ Համազասպունի քույրը դրան կնության տալ, սրա համար դրան խնայեց, հրամայեց պահպանել»: Եվ իսկույն ոտք նետեց, ձիուց իջավ, քուրը հանեց, մոտեցավ նրան, կտոր-կտոր կարատեց, ցրվեց սատկեցրեց:

Իսկ մյուս զորքերը դեռ գալիս էին կոտորածից, շատերին ձերբակալ արած: Բռնել էին նաև Բատին, Վարազդատ թագավորի խուին ու Մուշեղին սպանողին, և նրա որդուն, որոնց բերին Մանուելի առաջ, նույնպես և բոլոր նրանց, որոնք (Մուշեղի սպանության) գործին նպաստել էին՝ բռնեցին, Մանուելի առաջ բերին: Եվ Մանուել սպարապետը շատ

տաճօք դատեցաւ զաճօրէնն Բատ սպարապետն Մաճուէլ: Բայց նախ յանդիման եմա հրամայէր փղոտուել զորդին նորա, ապա յետոյ զնա գլխատել. և զայլսն կոտորեաց ըստ նմին օրինակի: Եւ զթագաւորն վարազդատ հալածեցին ՚ի յերկրէն ՚ի սահմանացն Հայոց. չոգաւ գնաց ՚ի յերկիրն Յունաց. անդ եկաց որչափ և եկեաց, և անդէն մեռաւ:

Եւ սպարապետն զօրավարն Հայոց Մաճուէլ նուաճեաց զաշխարհս, և զամենայն մեծամեծս և զնախարարսն Հայոց առ իւրն ժողովէր. և էր նա առաչնորդ և գլուխ նոցա. և վարէր գիր իշխանութիւնն, և տայր հրաման աշխարհի փոխանակ թագաւորի. և ունէր զաշխարհն ՚ի չինութեան: Եւ գկինն Պապայ արքայի զՋարմանդուխտ տիկին, հանդերձ որդւովք Արշակունովք, առեալ գնաս՝ ՚ի տեղի թագաւորի կալեալ ՚ի պատիւ շրջեցուցանէր: Մեծաւ իմաստութեամբ և բազում յաչողութեամբ աշխարհին Հայոց մեծապէս առաչնորդէր, որչափ եկաց ժամանակս: Բայց անուանի պատանեկացն Արշակունեացն, անուն երիցուն՝ Արշակ, և կրտսերուն Վաղարշակ: Զնոսա առեալ Մաճուէլն սպարապետն իբրև զսան սնուցանէր, և զմայրն նոցա զՋարմանդուխտ ՚ի մեծի շքի տիկնութեան պատուէր: Բայց յորժամ տեսանէր Մաճուէլն զոր ինչ գործեացն ընդդէմ էր հրամանաց թագաւորին Յունաց, ածեալ զմտաւ իւրով՝ թէ արժան է նմա գէթ զմի որ թիկունս առնել նմա, ապա խորհեցան խորհուրդ ընդ տիկնոջն, և կամեցաւ թիկունս առնել զարքայն Յունաց:

ԼԲ

ՅԱՂԱԳՍ ԵՔԷ ՋԻՒ՛ՐԴ ՍՊԱՐԱՊԵՏՆ ՀԱՅՈՑ ՄԱՆՈՒԷԼ, ՀԱՆԴԵՐՁ ԱՄԵՆԱՅՆ ԱՇԽԱՐՀԱՒՆ ՀԱՅՈՑ, ԶԵՒՆ ԵՏ ՚Ի ԹԱԳԱՒՈՐՆ ՊԱՐՍԻՑ. ԵՒ ՄԱՐՁԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՑ ՋՈՒԱՁԻՆՆ ԱՍ ՚Ի ԹԱԳԱՒՈՐԷՆ ՊԱՐՍԻՑ ՁՈՈՒՐԷՆ, ԵՒ ՄԵԾԱՒ ՊԱՐԳԵՒՕՔ ՄԵԾԱՐԵՑԱՒ ՚Ի ՆՄԱՆԷ. ԵՒ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ՅԵՏՈՑ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹԵԱՄԲ ՄԵՐՈՒԾԱՆԱՑ ԱՐՄԲՈՒՆԻՈՑ ԵՂԵՒ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ, ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՆՔ ՅՈՒՁԵՑԱՆ

Ապա ետ այսորիկ առաքեցին Զարմանդուխտ տիկինն Հայոց և սպարապետն Մաճուէլ զԳարջոյլ Մաղխազ, և ընդ նմա զբազումս ՚ի նախարարացն Հայոց, հրովարտակօք ընծայիւք և պատարագօք առ թագաւորն Պարսից, զի ՚ի նա ձեռս տայցեն և զնա պաշտպանեցեն, և նմա միամտութեամբ ծառայեսցեն, և տայցեն նմա զաշխարհս Հայոց: Եւ չոգան հասին Գարջոյլն, և որ ընդ նմայն էին, ՚ի դուռն թագաւորին Պարսից. մատուցին նմա զհրովարտակսն զտիկնոջն և զսպարապե-

խիստ դատաստանաւ դատեց անօրէն Բատին: Բայց նախ հրամայեց՝ նրա աչքի առաջ մորթել նրա որդուն, ապա և նրան գլխատել. մյուսներին էլ նույն կերպ կոտորեց: Իսկ վարազդատ թագավորին հալածեցին Հայոց աշխարհի սահմաններից դուրս: Նա գնաց Հունաց աշխարհը, այնտեղ էլ ապրեց, այնտեղ էլ մեռավ:

Իսկ Հայոց զորավար սպարապետ Մանուելը աշխարհը նվաճեց, Հայոց բոլոր մեծամեծներին ու նախարարներին իր մոտ ժողովեց, իբրև նրանց առաջնորդ և գլուխ եղավ և վարում էր իր իշխանությունը: Աշխարհին հրամաններ էր արձակում թագավորի փոխանակ և աշխարհը շեն էր պահում: Եվ Պապ թագավորի կնոջ, Զարմանդուխտ տիկնոջ և նրա Արշակունի որդոց իբրև թագավոր էր պահում և շրջեցնում էր պատվով: Մեծ իմաստությամբ և մեծ աջողությամբ խելացի կերպով առաջնորդում էր Հայոց աշխարհին՝ որքան ժամանակ որ ապրում էր: Արշակունի պատանիների անուններն էին՝ մեծինը Արշակ, փոքրինը Վաղարշակ: Մանուել սպարապետը նրանց սնուցանում էր իբրև սաներ, իսկ նրանց Զարմանդուխտ մորը մեծապես պատվում էր իբրև տիկնոջ:

Բայց Մանուելը տեսնում էր, թե իր արածը հակառակ էր Հունաց թագավորի հրամանին. մտածում էր, թե պետք է որևէ մեկին իրենց թիկունք ունենալ. ուստի տիկնոջ հետ խորհուրդ անելով որոշեցին իրենց թիկունք անել Պարսից[210] թագավորին:

ԼԲ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՀԱՅՈՑ ՄԱՆՈՒԵԼ ՍՊԱՐԱՊԵՏԸ ԲՈԼՈՐ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ՁԵՌՔ ՄԵԿՆԵՑ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ ԵՎ ՍԿՁԲՈՒՄ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՐՁՊԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԲԵՐԵՑ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՈՒՐԲՆԻՆ ԵՎ ՄԵԾԱՄԵԾ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՍՏԱՑԱՎ ՆՐԱՆԻՑ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԵՐՈՒԾԱՆ ԱՐՄԲՈՒՆՈՒ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅԱՄԲ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ԾԱԳԵՑ ԵՎ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ԱՌԱՋ ԵԿԱՆ

Սրանից հետո Հայոց Զարմանդուխտ տիկինը և Մանուել սպարապետը Պարսից թագավորի մոտ ուղարկեց Գարջույլ Մաղխազին ուրիշ շատ հայ նախարարների հետ, հրովարտակներով, ընծաներով ու նվերներով, (խոստանալով) նրան ձեռ մեկնել, նրան հպատակվել և հավատարմությամբ նրան ծառայել և Հայոց աշխարհը նրան տալ: Գարջույլը և նրա հետ եղողները հասան Պարսից թագավորի դուռը, մատուցին տիկնոջ և Հայոց սպարապետի հրովարտակները և նրան հաղորդեցին

ոին Հայոց, և եառն եմա գղեալ պատգամսն ճճազանդութեան: Եւ յորժամ եաես զեռսա թագաւորն Պարսից. մեծաւ խնդութեամբ ընկալեալ զեռսա, և մեծապէս մեծարանօք պատուեաց զեռսա, և մեծաւ պարգեաւ առնէր զԳարջոյլն

Եւ ընդ եմա առաքէր յերկիրն Հայոց զՍուրէն պարսիկ մի ճոխ ի նախարարացն իւրոց. և ընդ եմա յղեաց տասն հազար հեծեալս վառեալս սպառազէնս, զի երթիցէ Սուրէն յաշխարհն Հայոց ի բիկուս օգնականութեան զօրավարին Մանուէլի, և պահել ի բշնամեաց զտիկինն զՋարմանդուխտ: Եւ եա թագաւորն Պարսից տանել ի ձեռն Սուրենայ թագ և պատմուճան, և զվառ թագաւորացն տիկնոջն Ջարմանդրխտոյ, և թագս մանկանցն որդւոցն երկոցունց Արշակայ և Վաղարշակայն: Ջսոյն և սպարապետին Մանուէլի սոյնպէս եա տանել զթագաւորական պատմուճանն, սամոյր մ' և զգլխոյ պատիւ գարգմանակ ոսկի արծաթ, ու ի պատիւ գլխոյ ի վերայ գագաթանն ի բիկանց արծուոյն՝ հանգոյցք թագի կապեալ աշխարաւանդ հանգոյց. և լանջաց պատիւ՝ ապիզակ, որպէս օրէնք են ունել թագաւորաց. և շիկակարմիր խոռան, և ի վերայ խոռանին արծուի նշան, և սրահակս մեծամեծ և կապուտակ երկնագոյն հովանոցս: Եւ ոսկի սպաս տանուրին առաքէր սպարապետին Մանուէլի. և տայր եմա յիւրմէ ձեռանէ իշխանութիւն մեծ ի վերայ աշխարհին Հայոց:

Եւ եկն եհաս Գարջոյլն խորխոռունի յերկիրն Հայոց. և էած զՍուրէն պարսիկ, տասն հազարաւն: Սկիզբն բերին զպարգեսն տիկնոջն և մանկանցն նորա. սոյնպէս սպարապետին Մանուէլի. ունէին պարգես իւրաքանչիւր աւագացն, և տանուտէրացն իւրաքանչիւր մեծամեծացն Հայոց: Եւ յորժամ տեսանէին զմեծարանսն և զսէր թագաւորին Պարսից, տիկինն Ջարմանդուխտ և սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ մեծաւ խնդութեամբ մեծարէին զՍուրէնն: Տային զաշխարհն Հայոց ի ձեռն Սուրենայ, և ճնազանդէին հրամանաց թագաւորին Պարսից. և կարգէին թագաւորին Պարսից յաշխարհէն Հայոց հարկս՝ տալ բնաձայս և պատարագս: Սոյնպէս և մարզպանին Սուրենայ հասս և կօշիկս և զպիտոյս[57] զոռնկացն. սոյնպէս և տասն հազարացն դարման և կերակուր ըստ պիտոյիցն: Եւ սուտ մտոք արարին իւրեանց բիկունս. և տէր գտեալ իւրեանց զարհայն Պարսից, և կային ի ծառայութեան նորա. և ստէպ ստէպ դեսպանս թագաւորին Պարսից երթային և գային յերկիրն Հայոց. և մեծապէս զմտերմութիւն միամտութեանն, որ էրն, ցուցանէին թագաւորին. և ստէպ առաքէր պարգես տիկնոջն Ջարմանդխտոյն. սոյնպէս և զօրավարին Հայոց Մանուէլի: Յայժ մտերիմ և սիրելի լինէր Մանուէլ թագաւորին Պարսից և մեծա-

ճճազանդության վերաբերյալ պատգամը: Պարսից թագավորը երբ նրանց տեսավ՝ մեծ ուրախությամբ նրանց ընդունեց, մեծ հարգանքով պատվեց և մեծ պարգևներ շնորհեց Գարջույլին:

Նրա հետ (թագավորը) Հայոց աշխարհն էր ուղարկում պարսիկ Սուրենին, իր ճոխ նախարարներից մեկին, և նրա հետ տասը հազար լավ սպառազինված ձիավոր զորք, (պատվիրելով) որ Սուրենը Հայոց աշխարհը գա իրեն բիկունք Մանուել սպարապետին՝ Ջարմանդուխտ տիկնոջը բշնամիներից պաշտպանելու համար: Եվ Պարսից թագավորը Սուրենի ձեռքով Ջարմանդուխտ տիկնոջ համար ուղարկեց թագ և պատմուճան և թագավորական վառ[211], և երկու մանուկներին՝ Արշակին և Վաղարշակի համար թագեր: Նույնպես Մանուել սպարապետի համար ուղարկեց թագավորական պատմուճան, մի սամույր և գլխի պատիվ՝ ոսկուց և արծաթից շինած գարգմանակ, և գլխի պատվի վրա, գագաթում, արծիվի նշանից, թագի կապը՝ աշխարավանդ հանգույցը (բանտը), և կուրծքին պատիվ՝ ապիզակ, ինչպիսին կրում են թագավորները, նաև շիկակարմիր խոռան, խոռանի վրա արծվի նշան, և մեծամեծ սրահակներ ու կապուտակ երկնագույն հովանոցներ: Նաև սեղանի ոսկի սպաս էր ուղարկում Մանուել Սպարապետին և անձնապես իր կողմից մեծ իշխանություն էր տալիս նրան Հայոց աշխարհի վրա:

Եվ Գարջույլ խորխոռունին եկավ Հայոց աշխարհը, հետը բերելով Սուրենին տասը հազար զորով: Բերին պարգևները տիկնոջ և նրա երեխաների համար, ինչպես և Մանուել սպարապետի համար: Այսպես նաև բերել էին պարգևներ Հայոց ամեն մի ավագի, բոլոր տանուտերների և մեծամեծների համար: Եվ երբ Ջարմանդուխտ տիկինը և Հայոց զորավար սպարապետ Մանուելը տեսնում էին Պարսից թագավորի ցույց տված այս սերն ու մեծարանքները՝ մեծ ուրախությամբ պատվում էին Սուրենին: Հայոց աշխարհը հանձնեցին Սուրենի ձեռքը և ճնազանդում էին Պարսից թագավորի հրամաններին, սահմանում էին Հայոց աշխարհից Պարսից թագավորին հարկ տալ, բնաձներ ու ընծաներ[212]: Նույնպես և Սուրեն մարզպանին նշանակեցին հասույթներ, ռոճիկ[213] և պարուսպի մթերքներ, այսպես և տասը հազարին դարման և կերակուր՝ որքան պետք էր: Եվ անկեղծ սրտով նրանք իրենց բիկունք ու տեր դարձրին Պարսից թագավորին և նրա ծառայության մեջ էին գտնվում: Հանախակի Պարսից թագավորի դեսպաններն գնում գալիս էին Հայոց աշխարհը. սրանք էլ ցույց էին տալիս թագավորին իրենց մտերմությունը ու հավատարմությունը, և հանախ թագավորը պարգևներ էր ուղարկում Ջարմանդուխտ տիկնոջը և Հայոց Մանուել զորավարին, և

պէս փառաւորեալ աւազանայր ի նմանէից: Եւ Մերուժանն Արծրունի իբրև տեսանէր զայն ամենայն փառս աւազութեան, որովք շինեցոյց զՄանուէլ արքայն Պարսից, զի որպէս զեղբայր կամ զորդի այնպէս պատուեաց զնա. յոյժ նախանձէր նա ընդ փառսն Մանուէլի. և խնդրէր նա ճնարս ճնարել, ճանել զնա յաչաց թագաւորին Պարսից. զի փոխանակ նորա իմն լիցի սիրելի: Եւ իբրև այլ ճնարս ինչ ոչ կարէր գտանել դուրս նենգութեանցն առ Պարսիկս, ընդ որ մտցէ, ապա խորհեցաւ նա ընդ միտս իւր զնենգութիւն չար, և կեղծաւորութեամբն իւրով զգործ իւր յառաջացոյց: Զի իբրև նա յեցաւ ի միամտութիւն զօրավարին Մանուէլի, սկսաւ նախ հպատակութեամբ զմիտսն գողանալ. նախ մտերմութեամբ ճանել զմիտս նորա. ապա զանձն իւր հոգածու և խնամակալ երեսցուցանէր նմա. ապա եկեալ գուշակութիւն առնէր նմա սուտ ի մաց իւրոց՝ թէ գիտասջիր դու, ո՛ Մանուէլ, զի դեսպան լեալ է յարքայէն Պարսից. յաղագս ո՛ր բերեալ ունին հրաման առ Սուրէնն, զի զքեզ կալցին կապեսցեն. կամ ասէն սպանցեն, կամ ոտիւք և ձեռօք և պարանոցաւ կապելով մեծաւ զգուշութեամբ տանել առ թագաւորն Պարսից: Արդ դուն գիտա՛, տե՛ս խորհեաց ընդ միտս ո՛ր թէ զինչ գործեսցես: Եւ եղև յորժամ լուաւ զայս Մանուէլ, կայր զարմացեալ հիացեալ ընդ միտս իւր. և ասէր թէ չիք իմ յանցուցեալ առ պարսիկս, է՞ր աղագաւ զայն առնիցէ ընդ մեզ: Եւ ասէ Մերուժանն ցՄանուէլ. Ես ճշգրտեցի և հաստատեցի, զի իրդ այդ ստոյգ են. ես մեծաւ սիրով և հոգւաբարձութեամբ գուշակ եղէ քեզ: Իսկ իբրև հաւատաց բանին Մերուժանայ Մանուէլն. և կարծեաց ի միտս իւր թէ ստոյգ են բանքն այն զոր լուաւ, ապա գունդ կազմեաց, և զօր բազում առ իմն կուտեաց զօրավարն Հայոց Մանուէլ: Եւ մինչ դեռ խաղաղութեամբ Սուրէնն իւրով բանակաւն բանակեալ էր յանհոգս յանկարծս և աննենգ խաղաղութեամբ, իբրև ոչ ինչ գոյր ի մէջ նոցա նենգութիւն դաւաճանութեան բուռ համբաւանան չարագործն Մերուժանայ, յանկարծօրէն յեղակարծումն զօրավարն Հայոց Մանուէլ հասանէր անկանէր ի վերայ բանակին Սուրենայ, և զտասն հազարսն զպարսիկսն միանգամայն կոտորէր: Բայց զմարզպան Սուրէնն միածի առնակէր, չնորհել զարևն իւր՝ պարգև արարեալ: Եւ զարմացեալ Սուրէն ընդ իրսն ընդ այնոսիկ թէ ընդէ՞ր, է՞ր աղագաւ նա զայս արդեւ գործեաց. և ասէ Մանուէլ ցՍուրէն. Ջեզ վասն բարեկամութեան սիրոյն առնակեալ, ողջանդամ երթիչիր զճանապարհս ո՛ր. այլ ես ի պարսկաց ի խափս այլ ոչ անկայց: Եւ իմն Մանուէլ Հայոց զգունդն կազմէր, և զօրան պատրաստէր. և գիտաց այնումեւն թէ մեծ բշնամութիւն յարոյց և մեծ գրգռութիւն ընդ թագաւորին Պարսից: Եւ յայնմ հետէ զո-

Մանուէլը շատ մտերիմ ու սիրելի դարձավ Պարսից թագավորին, որ նրան շատ փառավորեց ու բարձրացրեց:

Իսկ Մերուժան Արծրունին երբ տեսնում էր այս բոլոր փառքն ու պատիվները, որով Պարսից թագավորը Մանուելին չէեղացրեց,—որովհետև եղբոր նման, որդու նման նրան պատվեց,— շատ նախանձեցավ Մանուելի փառքին, և մի հնարք էր փնտռում՝ նրան Պարսից թագավորի աչքից հանելու, որպեսզի նրա փոխանակ իմը դառնա սիրելի: Եվ երբ նա ոչ մի հնարք չգտավ, նենգության ոչ մի դուռ չգտավ պարսիկների մոտ մտնելու՝ ապա նա իր մտքում նենգության շար միջոց գտավ—իր մտադրությունը աչքողեցրեց կեղծավորության միջոցով: Նա նույս դրեց Մանուել զորավարի միամտության վրա, ուստի նախ սկսեց անձնվիրությամբ նրա միտքը գողանալ, մտերմությամբ նրա խելքը հասկացրեց: Հետո գալով՝ իր գլխից հնարած սուտ լուր էր հաղորդում ու ասում. «Գիտցած եղիր, ո՛վ Մանուել, Պարսից թագավորից դեսպան է եկել, որ մասին հրաման են բերել Սուրենին, որ քեզ բռնեն ու կապեն, կամ այստեղ սպանեն, կամ ձեռք, ոտք ու պարանոց կապած մեծ զգուշությամբ տանին Պարսից թագավորի մոտ: Հիմա դու գիտես. մտածի՛ր թե ի՛նչ պիտի անես»: Մանուելը երբ այս լսեց՝ ապշած հիացած մնաց. «Ես պարսիկների դեմ ոչ մի հանցանք չեմ գործել, ասում էր, ուրեմն ինչո՞ւ նա այդպես բան պետք է մեզ անե»: Իսկ Մերուժանն ասում էր Մանուելին. «Ես ճշգրտեցի ու հաստատեցի, որ այդ բանը ճիշտ է, քեզ շատ սիրելուց ու վրադ հոգալուց այս լուրը քեզ գաղտնի հաղորդեցի»: Երբ Մանուելը Մերուժանի խոսքին հավատաց և համոզվեց, թե իր լսած բաները ստույգ են՝ ապա նա շատ զորք կուտակեց իր մոտ, Հայոց Մանուել զորավարը. գունդ կազմակերպեց, և մինչդեռ Սուրենը իր բանակով խաղաղ բնակել էր, միամիտ, անկասկած, անհոգ, աննենգ խաղաղությամբ, մինչդեռ չկար ոչ մի նենգություն ու դավաճանություն՝ ինչպես սուտ լուր էր տարածել չարագործ Մերուժանը՝ Հայոց Մանուել զորավարը հանկարծակի անսպասելի կերպով հասնում հարձակվում էր Սուրենի բանակի վրա և տասը հազար պարսիկներին ամբողջապես կոտորում էր: Բայց Սուրեն մարզպանին մի ձիով բաց էր քաղում որ գնա. նրա արևը նրան պարգև էր շնորհում: Սուրենը զարմացավ այս բանի վրա, թե ինչո՛ւ նա այդ արավ, և Մանուելը ասաց Սուրենին. «Քեզ իբրև բարեկամի սիրով արձակում եմ, որ մոռդ գնա՝ որ հանապարհդ, բայց ես այլևս պարսիկների բակարդի մեջ չեմ ընկնի»: Ինքը Մանուելը պատրաստում էր զորքերը, գնդեր էր կազմակերպում, որովհետև գիտեր որ մեծ բշնամություն ու գրգռումներ ծագեցրեց Պարսից թագավորի հետ: Այնուհետև Հայոց Մանուել զոր-

ռավարճ Հայոց Մաճուէլ ճաճդեռձ ամճճայճ գեղաւճ զաիկին Ջարմաճդուխտ զկին թագաւորին Պապայ ի գլուխ առեալ, ի տեղի թագաւորացն չրչեցուցաճէին. և իճիեաճ կային ի մարտի պատերազմին յաղագս շինութեան աշխարհին Հայոց յամեճայճ կողմանց ըճդ բշճամիս և ըճդ սահմանակիցս, որ շուրչ գիւրեամբ էին, և ասլի զօրճ Պարսից զամեճայճ աւուրս կենաց իւրց. բայց Մեռուժանճ գեայր անդր առ թագաւորճ Պարսից ամբաստան զՄաճուէլէ:

ԼԲ

ՅԱՂԱԴՍ ԴԻՄԱՆԴ ՇԱԳՈՒՀՈՑ՝ ՈՐ ԱՌԱՔԵՑԱՒ Ի ԹԱԳԱՒՈՐԷՆ ՊԱՐՍԻՑ ՅԱՒ ՊԱՏԵՐԱԶՄՈՒ ԸՆԴ ՀԱՑՍ, ԵՒ ՍԱՏԱԿԵՑԱՒ Ի ՄԱՆՈՒԷԼԷ ՋՕՐՕՔ ԻՐՈՎՔ ՀԱՆԴԵՐՁ

Ապա թագաւորճ Պարսից առձակեաց ի վերայ Հայոց զԳումաճդ Շապուհ fառաւաւճ և ուք ճազարաւ, գալ առճուլ աւերել զերկիրճ. և եկիճ ճասիճ ճոfա միճչև ի սահմանսճ Հայոց որ յԱտրպայական կուսէճ էր: Ապա իբրև գայճ լսէր զօրավարճ Հայոց Մաճուէլ, և գումարէր զզօրսճ իւր ըստ բրոչոպ ժամաճակիճ որչափ և եկճ ի ձեռճ իւր՝ fառճ ճազար, և ճեպեաց Մաճուէլ և ճեաս ընդդէմ գեղիճ, և արկաճէր ի սուր զզօրսճ Պարսից. և զԳումաճդ Շապուճճ սպաճաճէր. և դարձեալ ելաճէր մեծաւ յաղթութեամբ:

Խ

ՅԱՂԱԴՍ ՎԱՐԱՋԱՆ ԹԷ Ո՛ՐՔԷՍ ԿԱՄ ՋԻԱ՛ՐԴ ԱՌԱՔԵՑԱՒ Ի ԹԱԳԱՒՈՐԷՆ ՊԱՐՍԻՑ, ԵՒ ՍԱՏԱԿԵՑԱՒ Ի ՄԱՆՈՒԷԼԷ ԻՐՐԵՒ ՋԱՌԱՋԻՆՆ

Ապա յետ այսորիկ վարազ ումճ զօրավար թագաւորին Պարսից գայր հասաճէր ուրուսասճ բիւրու յերկիրճ Հայոց, տալ պատերազմ ըճդ Մաճուէլի ըճդ սպարապետին, և ըճդ ամեճայճ գեղիճ Հայոց: Ապա կազմէր պատրաստէր սպարապետճ զօրավարճ Հայոց Մաճուէլ ճեծեալս սպառազէնս տասճ ճազար, և եկեալ տայր պատերազմ ըճդ Վարազայ: Հարկաճէր և սատակէր, չեչէր զեռսա ի միջոյ. և գլխովին զվարազճ սպաճաճէր. թափէր զկապուտ սատիկ, զզարդ և զզէճ զօրացճ, և դառճայր մեծաւ խաղաղութեամբ:

վարը բոլոր գեղերով իբրև թագավոր չրչեցնում էր տիկին Ջարմանդուխտին, Պապ թագավորի կնոջը՝ իբրև պետ, և ինքը, աշխարհի շենության համար պատերազմներ էր մղում ամեն կողմից բշնամիների և իրենց չրչակա սահմանակիցների, մանավանդ Պարսից զորերի դեմ իր կյանքի բոլոր օրերում: Իսկ Մերուժանը նորից գնում էր Պարսից թագավորի մոտ՝ Մանուելին ամբաստանելու համար:

ԼԲ

ԳՈՒՄԱՆԴ ՇԱԳՈՒՀԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԳԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՂԱՐԿՎԵՑ ՀԱՅՏԻ ՀԵՏ ԳԱՅՏԱՐԱԶՄԵԼՈՒ ԵՎ ԻՐ ՋՈՐՔԻՐ ՀԵՏ ՋԱՐԿՎԵՑ ՄԱՆՈՒԵԼԻՑ

Ապա Պարսից թագավորը Հայաստանի վրա առձակեց Գումանդ Շապուհին fառաւաւճ և ուք ճազար զորով, որպեսզի գա, Երկիրճ ավերե: Նրանք եկան հասան մինչև Հայաստանի սահմանը Ատրպատականի կողմից: Երբ այս լսեց Հայոց Մաճուել զորավարը՝ գումարեց իր զորքը, որճան կարողացավ ձեռճ բերել այդ խռովահույզ ժամանակում, fառճ ճազար մարդ, և շտապով գնաց (Պարսից) գեղի դեմ. Պարսից բոլոր զորերը կոտորում էր սրով, Գումանդ Շապուհին էլ սպանում էր, և մեծ ճաղթությամբ ետ էր դառնում:

Խ

ՎԱՐԱԶԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՈՒՂԱՐԿՎԵՑ ԳԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ ՄԱՆՈՒԵԼԻՑ ՋԱՐԿՎԵՑ ԱՌԱՋԻՆԻ ՆՄԱՆ

Սրանից ճետո Պարսից թագավորի մի զորավար Վարազ անունով Հայոց աշխարճն էր գալիս տասնևութ բյուրով՝ Մաճուել սպարապետի և Հայոց բոլոր գնդերի ճետ պատերազմելու համար: Ապա Հայոց զորավար սպարապետ Մաճուելը կազմակերպում պատրաստում էր տասը ճազար լավ սպառազինված ճեծելազոր և գալիս պատերազմում էր Վարազի ճետ: Ջարդում, կոտորում էր, բնաջինջ էր անում նրանց, Վարազին էլ ճոյնպես սպանում էր. մեծ կողոպուտ էր վերցնում—զորերի զենքերն ու զարդերը— և մեծ խաղաղությամբ ետ էր դառնում:

ՅԱՂԱԳՍ ՄՐԿԱՆԱՑ՝ ՁՈՐ ԱՌԱՔԵԱՑ ԴԱՐՁԵԱԼ ԹԱԳԱՒՈՐՆ ՊԱՐՍԻՑ Ի ՎԵՐԱՅ ԵՐԿՐԻՆ ՀԱՅՈՑ ԵՒ Ի ՎԵՐԱՅ ՄԱՆՈՒԷԼԻ ՁՕՐՕՔ ԲԱՋՄՕՔ, ԵՒ ՍԱՏԱԿԵՐ Ի ՄԱՆՈՒԷԼԷ ԻՐՐԵԻ ՁԱՌԱՅԻՆՆ

Եւ եղև յետ այսր ամենայնի առաքեաց թագաւորն Պարսից զՄրիկանն խոստում բիւրու Ի վերայ երկրին Հայոց: Եկն եհաս ճանդեռն ամենայն բազմութեամբ զօրաց իւրոց յերկիրն Հայոց, և էառ զկողմն մի զերկիրն Հայոց. և բանակեալ էր յԱրտանդան դաշտին: Աճկաներ Ի վերայ բանակին Մանուէլն Ի գիշերի, և անդէն առ հասարակ բնդ սուր հաներ զամենեսեան Ի դակիշն, և զՄրկանն սպանանէր, և թափէր աւար բազում. և ոչ զմի ոչ ապրեցուցանէր Ի նոցանէն:

ՅԱՂԱԳՍ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՄՍ ԵՒԹՆ

Եւ յետ այսորիկ ամս եւթն, և այլ ոչ ևս յաւելին զօրն Պարսից ժառել ինչ մտանել Ի սահմանս Հայոց. և եղև խաղաղութիւն երկրին: Եւ ժողովեցան առ զօրավարն Մանուէլ ամենայն ցրուեալք երկրին. եկին անկան այր յայր, և էին բանակեալ յանհոգս. և զօրավարն Հայոց Մանուէլ առաջնորդէր նոցա: Եկին ապա և մնացորդք Ի տանէն Սիւնեաց պատանեակ երեք մնացեալք Ի կոտորածէն Պարսից առ զօրավարն Հայոց Մանուէլ. և անուանէ նոցա միումն Բարիկ, և միւսումն Սամ, միւսումն Վաղինակ: Եւ ընկալաւ զնոսա զօրավարն Հայոց Մանուէլ. և եղև նոցա օգնական, և դարձ արար նոցա յերկիրն իւրեանց. և կացոյց տէր զԲարիկ Ի վերայ երկրին, և զերկուսն ևս ըստ իւրաքանչիւր չափու. և էր Բարիկ նիզակակից զամենայն աւուրս կենաց նորա: Նոյնպէս յամենայն գաւառս կացուցանէր սպարապետն Հայոց Մանուէլ նահապետս և տեառս գաւառաց գաւառաց. և առաջնորդէր ամենեցուն խաղաղութեամբ: Եւ ամենայն երկիրն Հայոց Ի խաղաղութեան բնդ հովանեաւն Մանուէլի զամենայն աւուրս կենաց նորա, ամենայն մարդիկ երկրին Հայոց վայելէին յաւուրս իւրեանց. ուտէին և ըմպէին և ուրախ լինէին զայն ամս եւթն տէրութեանն Մանուէլի, մինչև Ի բաժանումն երկրին Հայոց և Ի բակտումն թագաւորութեանն:

ՄՐԿԱՆԻ ՄԱՍԻՆ, ՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐԸ ԴԱՐՁԱՅԱԼ ՈՒՂԱՐԿԵՑ ՄԵԾ ՁՈՐՔՈՎ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ԵՒ ՄԱՆՈՒԵԼԻ ՎՐԱ, ԵՒ ՄԱՆՈՒԵԼԻՑ ՁԱՐԴԱԵՑ ԱՌԱՋԻՆՆԵՐԻ ՆՄԱՆ

Այս բոլորից հետո Պարսից թագավորը Հայոց աշխարհի վրա ուղարկեց Մրիկանին խոստում բյուրով: Նա իր զորի բազմությամբ եկավ Հասավ Հայոց աշխարհը և գրավելով աշխարհի մի կողմը՝ բանակ դրեց Արտանդան[214] դաշտում: Մանուելը գիշերով հարձակվում էր նրա բանակի վրա և հենց դակիշում բոլորին առհասարակ սրի էր հաշում, Մրկանին էլ սպանում էր: Շատ ավար էր խլում նրանցից, և ոչ մեկին կենդանի չէր թողնում:

ՅՈՔԸ ՏԱՐԻ ՏԵՎՈՂ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սրանից հետո յոթը տարի պարսիկները այլևս չշարունակեցին Հայաստանի սահմանները մտնել, և երկիրը խաղաղացավ: Մանուել զորավարի մոտ ժողովվեցին երկրում ցրվածները, եկան մեկտեղացան, և անհոգ ապրում էին. և Հայոց Մանուել զորավարը նրանց առաջնորդում էր: Հետո եկան Մանուել զորավարի մոտ նաև Սյունյաց տոհմից մնացածները— երեք պատանի, որոնք պարսկական կոտորածից ազատվել էին, որոնցից մեկի անունն էր Բարիկ, մյուսները Սամ, Երորդիները Վաղինակ: Հայոց Մանուել զորավարը նրանց բնդունեց, նրանց օգնական դարձավ, նրանց իրենց երկիրը ուղարկեց, Բարիկին նշանակեց այդ երկրի տեր, մյուս երկուսին էլ՝ յուրաքանչյուրին իր չափով, և Բարիկը նրա նիզակակիցը դարձավ բոլոր նրա կյանքի ընթացքում: Նույնպես բոլոր գավառներում Հայոց Մանուել սպարապետը նշանակում էր նահապետներ և գավառների տերեր, և խաղաղությամբ կառավարում էր բոլորին: Եվ ամբողջ Հայոց աշխարհը ապրում էր խաղաղության մեջ Մանուելի հովանու տակ՝ որքան ժամանակ կենդանի էր նա: Բոլոր մարդիկ իրենց արևի ձենն էին ածում, ուտում, խմում. ուրախանում էին Մանուելի տերության այն յոթը տարիներում, միչև Հայոց աշխարհի բաժանումը և թագավորության բակտումը:

ՅԱՂԱԳՍ ՄԵՐՈՒԺԱՆԱՑ ԱՐՔՐՈՒՆՈՑ, ՈՐ ՀԱՆԴԵՐՁ ՋՕՐՕՔ ԵԿԱՆ Ի ՎԵՐԱՑ ՄԱՆՈՒԷԼԻ, ԵՒ ՍԱՏԱԿԵՑԱՒ Ի ՆՄԱՆԷ

Ապա Մերուժանն Առծրունի վաղուց ևս յաւուրսն Աբշակայ արքայի լեալ էր ապստամբ ի թագաւորէն Հայոց, իբրեւակամ ձեռս տուեալ յարքայն Պարսից, և զօրէնս Մազդեզանցն յանձն առեալ էր, և ուրացեալ զհաւատսն հրիստոնէութեան հաւատոց, և բազում անգամ լեալ էր առաջնորդ զօրացն Պարսից, և մեծամեծ չարիս անցուցեալ էր ընդ երկիրն Հայոց. և տակաւին էր նա առ թագաւորին Պարսից: Ապա գրգռեաց Մերուժանս այս զթագաւորն Պարսից, և առեալ զօրս բազումս ի նմանէ, և եկն եհաս յերկիրս Հայոց: Եւ էր սորա մեծաւ պարծանօք պարծեցեալ առ թագաւորին Պարսից, զի կամ կալեալ կապեալ տարցի զՄանուէլն առ թագաւորն Պարսից, և կամ զգլուխն հատեալ՝ զառաջեաւ բերէ թագաւորին Պարսից:

Գայր հասանէր ամենայն բազմութեամբն զօրացն Պարսից յերկիրն Հայոց, և բողոյր զբանակ զօրացն Պարսից ի գաւառին Կորճկից, և իւրովն սեփհականաւն գնդաւն հրոսիւն ժողովելով մեկնէր գառաջեայ յԱրեաց գնդէն: Կամէր յանպատրաստից գաղտ անկանել ի վերայ Մանուէլի, միայն անձամբ անուն առնուլ, և իբրեան միայն կատարել չանայր, զի ի պարծանսն իւրոյ անձամբ վճարել զգործս պատերազմին: Վասն այսորիկ այսպիսի բանս խօսէր ընդ զօրավարսն Արեաց գնդին, և ասէր՝ եթէ ես նախ երթայց լրտեսեցից, և գձեզ տարեալ արարից ի վերայ, զի այսպէս դիւրաւ լիցի ի բուռն արկանել ըմբռնել: Եւ իբրն զիւր գունդն առեալ, խաղայր գայր հասանէր յերկիրն Կոգ գաւառի. և իբրն զտեղի առեալ, առնէր տես ի բանակն Մանուէլի:

Եւ գայիւն հասանէին լրտեսքն, և գիտէին զՄանուէլ, զի էր բանակ եօթա ի Բագրեւանդ գաւառի ի Բագրեւան աւանի, որ է մօտ յաւերակսն Ջարեհաւանդ քաղաքի: Եկին դիտեցին դէմն զբանակն Մանուէլի, և զերամակ ձիոց բանակին յորում վայրի կային. և չոգան տարան զրոյց նմա: Եւ խորհեցաւ նա առնուլ զերամակ բանակին. այն ուշ առնէր, և խնդալից եղեալ՝ ասէր պարծելով առաջի իւրոց զօրացն, թէ վաղիւ յայս ժամ իմ կալեալ կապեալ ընկեցեալ զՄանուէլն, և յանդիման նմին զկին նորա Վարդանոյշ խայտառակեալ իցէ: Եւ չու արարեալ կատարել զգործն՝ յոր փութացեալ կամէր հասանել. և էին ի վայրսն՝ ընդ որ գալ էր գնդին ընդ հանապարհն՝ լերինք ինչ,

ՄԵՐՈՒԺԱՆ ԱՐՔՐՈՒՆՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐ ՋՕՐՔԵՐՈՎ ԵԿԱՒ ՄԱՆՈՒԷԼԻ ՎՐԱ ԵՒ ՆՐԱՆԻՑ ՍՊԱՆՎԵՑ

Իսկ Մերուժան Առծրունին վաղուց ի վեր, դեռ Աբշակ թագավորի ժամանակ, ապստամբել էր Հայոց թագավորից, իբրեւակամ ձեռք էր մեկնել Պարսից թագավորին, ընդունել էր մազդեզական կրոնը և ուրացել հրիստոնեական հավատը: Նա շատ անգամ առաջնորդ էր դարձել Պարսից զորքերին, մեծամեծ չարիքներ էր հասցրել Հայոց աշխարհին, և դեռ Պարսից թագավորի մոտ էր գտնվում: Աճա այս Մերուժանը Պարսից թագավորին գրգռեց և նրանից շատ զորք առնելով եկավ հասավ Հայոց աշխարհը: Նա մեծապես պարծեցել էր Պարսից թագավորի առաջ, որ կամ Մանուելին բռնելով կապած կտանի Պարսից թագավորի մոտ և կամ գլուխը կտրելով նրան կներկայացնե:

Նա Պարսից զորքի բոլոր բազմությամբ գալիս հասնում էր Հայոց աշխարհը, Պարսից զորքի բանակը թողնում էր Կորճայք գավառում, իսկ ինքը իր սեփական գնդով, ժողոված հրոսակներով, անցատվում էր Արյաց գնդից: Նա միտքը դրել էր՝ գաղտուկ, անսպասելի կերպով հարձակվել Մանուելի վրա, իրեն անուն վաստակել. չանք էր անում ինքը մենակ կատարել գործը, պատերազմի գործը անձամբ գլուխ բերել, որ իրեն պարծանք լինի: Այդ նպատակով նա այսպես խոսեց Արյաց գնդի զորավարների հետ. «Ես նախ կգնամ կլրտեսեմ, ասաց, հետո ձեզ կտանիմ նրանց վրա. այսպիսով հեշտ կլինի նրանց մեր բուռը ձգել, բռնել»: Ինքն իր գունդը առնելով շարժվում գալիս հասնում էր Կոգ գավառը, և ինքը այնտեղ կանգ առնելով՝ լրտեսներ էր ուղարկում Մանուելի բանակը:

Լրտեսները գալիս դիտում էին Մանուելին, որի բանակը գտնվում էր Բագրեւանդ գավառում, Բագավան ավանում, Ջարեհավանդի ավերակների մոտ: Լրտեսները եկան դիտեցին Մանուելի բանակը, իմացան՝ ո՛րտեղ է գտնվում բանակի ձիերի երամակը, և գնացին լուր տարան նրան: Նա միտքը դրեց բանակի երամակը խլել: Այս մտով ուրվելով՝ նա ուրախ ուրախ ու պարծենալով ասում էր իր զորքերին. «Վաղը այս ժամին ես Մանուելին բռնած կապած ու ատպալած կլինիմ, և նրա աչքի առաջ նրա վարդանուշ կնոջը խայտառակած»: Եվ չվեց գնաց որ փութով կատարե, ինչ որ միտքը դրել էր:

Այդ տեղերում, որտեղով որ գնդի հանապարհն ընկնում էր, կային

որում 'ի բնակչացն Նղբերք կոչեն: Եւ մինչ դեռ գայր Մերուժանն 'ի ճանապարհի գեղաւն իւրով, դիպեցան նմա ուղևորք. յորս հարցանէր Մերուժանն և ասէր. ճանապարհս 'ի Բագրեւանդ բնդ ո՞ր երթայ: Եւ ուղևորացն տուեալ պատասխանի, ասացին. Ճանապարհ բնդ Նղբերս է: Եւ մեծապէս խոհեաց Մերուժանն բնդ միտս իւր. տրտմեցաւ բնդ բանսն, սակայն տայր հրաման չարաչար հարշել զուղևորսն և ծեծել: Եւ ինքն անցեալ բատ ուղին՝ իջանէր 'ի հմայս հաղդութեան, զոր էր հարցանէր. և ոչ գոյր նմա յաջողակ յուսոյ կախարդանացն՝ յոր յուսայրն:

Ապա սրտմտութեամբ մեծաւ վիր դէտսն առաջի արկեալ՝ յերամակայն արշաւէր, զի հնար լիցի նմա նախ բմբռնել: Եւ հասեալ 'ի տեղին, զերամակ ձիոց ոչ գտանէր. վասն զի յաստուծոյ այնպէս իմն եղև իրաւունք պատրաստութեան Հայոց գեղին, զի սպարապետին Մանուէլի ամենայն Հայոց գեղին տուեալ էր ժամ յորս երթալոյ. վասն այսորիկ դիպեցաւ, զի զամենայն երամակն 'ի շէն էր ածեալ. և նոքա դեռ որոյ պատրաստեալ էին 'ի հեծանել: Եւ աճեի գուժարար հասանէր առ զօրավարն Հայոց Մանուէլ, թէ գիտա տես, զի Մերուժանն Արծրունի հասեալ է բուզում գնդաւ 'ի վերայ ն:

Ապա կազմեցան բատ նմին պատրաստեցան ամենայն զօրն Հայոց գնդին, և Մանուէլ սպարապետն. և մտին առաջին սուրբ ոսկերացն Յովհաննու, որ կայր յայնմ գետ. ոխտաւոր լինէին և խնդրէին յաստուծոյ, զարդար դատաւորն յօգնականութիւն կոչէին, լինել նոցա այցելու օգնական: Եւ անտի 'ի դուրս ելեալ, զտիկինն Աւշակունի հանդերձ մանկամբն Աւշակաւ և Վաղարշակաւ գնասս և գիւրեանց կանանին բնդ նոսա առնակեալ, յամուր յուղարկէին 'ի լեառն մեծ՝ որ անուանեալ կոչի Վարագ: Եւ զմանուկն Արտաւազդ, որդի Վաչէի, բնդ կանանին տայր հրաման երթալ Մանուէլ. իսկ նա ոչ հաւանէր, չառնոյր յանձն: Եւ էր նա 'ի տից տղայ. և բատ մանկութեանն օրինի, բատ կրօնից Հայոց՝ որպէս օրէն էր՝ զգլուխ մանկտոյն սոյնպէս 'ի ժամանակին գերծեալ էր զգլուխ մանկանն Արտաւազդայ, և ցցուեալ էր բողեալ և գէս առնակեալ: Ապա իբրև ոչ հաւանեցաւ նա բնդ կանանին երթալ, մտրակ 'ի վեր առեալ Մանուէլի տանջէր զմերկ գլուխ Արտաւազդայ. սաստէր նմա չերթալ 'ի պատերազմ վասն մանկութեան ժամանակին տից: Իսկ նա առ նորա ականէ գնաց բնդ նոսա. բայց ապա յետոյ վառեալ կռուելով պատրաստեալ զկնի պատերազմին:

Այլ յորժամ զտիկինն ամենայն ազխին իւրեանց յուղարկեցին յամուրն, և ինքեանք վառեալ կարգեալ կազմեալ 'ի պատերազմն, 'ի մի վայր գումարեալ, նշանս առնակեալ դրօշս փողփողեալս, բատ Հեղն առան 'ի դուրս ելանէր բնդ կողմն արեւմտից. և անդէն բնդ առաջ

լեռներ, որոց տեղացիներն ասում էին Նղբյուրներ: Մինչ Մերուժանն իր գնդով գալիս էր այդ ճանապարհով՝ նրան ուղևորներ պատահեցին: Մերուժանը նրանց հարցրեց. «Ո՞ր տեղով է ճանապարհը գնում դեպի Բագրեւանդ»: Ուղևորները պատասխանեցին ու ասացին. «Նղբյուրներով»: Մերուժանը շատ շփոթվեց այս խոսքից ու տրտմեցավ. սակայն նրանք տվեց՝ ուղևորներին սաստիկ հարշել ու ծեծել[215], Ինքն այդ ճանապարհն անցնելով՝ սկսեց հմայություններ անել, բախտորոշումի գարներ ձգել, բայց այս կախարդություններից ոչ մեկը աչող նշան չէին ցույց տալիս, որոնց հույս ուներ:

Ուստի սաստիկ նեղացած, լրտեսները առաջ ձգած արշավում էր երամակի գտնված տեղը, որպեսզի կարողանա ձիերը բռնել: Բայց երբ այդ տեղը հասան՝ ձիերի երամակը չգտան: Որովհետև աստված այնպիսի այողություն տվեց Հայոց գնդին, որ Մանուել սպարապետը Հայոց բոլոր գնդին ժամ էր նշանակել որսի գնալու, այս պատճառով էլ ձիերի երամակը շենն էին բերել, և այն է պատրաստվում էին ձի հեծնել՝ երբ գուժկան հասավ Հայոց Մանուել զորավարին, թե «Ճարդ տես, Մերուժան Արծրունին մեծ գնդով եկել հասել է ֆեզ վրա»:

Այս տեղեկության համաձայն Հայոց գնդի բոլոր զորերը և Մանուել սպարապետը պատրաստվեցին, ուխտի գնացին Հովհաննես (Մկրտչի) սուրբ ոսկորներին, որ այն գյուղումն էր, ուխտ գրին, աստծուն խնդրվածք էին անում, արդար դատավորին օգնության էին կանչում, որ իրենց այցելու և օգնական լինի սրբի բարեխոսությամբ: Այնտեղից դուրս գալով Աշշակունի տիկնոջ, նրա երկու որդոց, Աշշակի և Վաղարշակի հետ, նրանց հետ նաև իրենց կանանց՝ ապաճովության համար ուղարկեցին Վարագ կոչված մեծ լեռը: Մանուելը հրաման էր տալիս Մանուկ Արտավազդին, վաչեի որդուն, որ նա ևս կանանց հետ գնա, իսկ նա հակառակում էր, չէր համաձայնում: Նա դեռ տղա էր հասակով և բատ հայկական սովորության, ինչպես անում էին երեխաներին՝ սափրել էին մանուկ Արտավազդի գլուխը, բաղնելով խոպոպիք և ծամ: Երբ նա չհամաձայնեց կանանց հետ երթալ՝ Մանուելը մտրակը բաշեց, Արտավազդի մերկ գլուխն սկսեց տանջել, սաստելով, որ պատերազմի չգնա հասակի մանկության պատճառով: Նա աչք խաբելու համար նրանց հետ գնաց. բայց հետո գինվեց, պատրաստվեց ու գնաց պատերազմի:

Երբ տիկնոջը բոլոր աղխով ամուր տեղ ուղարկեցին՝ ապա իրենք էլ սպառազինվեցին, կազմակերպվեցին, պատերազմի համար մի տեղ խմբվեցին: (Մանուելը) նշաններ բացած, ծածանվող դրոշակներով, դուրս էր գալիս Ավան գյուղից, դեպի արևմուտք, և հենց այդտեղ նրա

ելեալ նոցա Մերուժանայ իւրով գնդաւն՝ որ եկեալ էր ի վերայ նոցա: Եւ չարագործն մեղաւորն Մերուժանն զիւր զգէն և զարդ և զնշանն սպառնարանին բազմաց եղեալ էր զնոյն օրինակ, և զբազումս յիւր կերպարանեալ էր ի մէջ իւրոյ գնդին, և իճն զիւր նշան ոչ ունէր: Սակայն Մանուէլ իբրև տեսանէր զնոցա գունդն, հանդերձ իւրով գնդաւն առիւծպար վարազօրէն յարձակեալ՝ ի նոցա գունդն խառնեցաւ. ուշ եղեալ այնոցիկ՝ որ զՄերուժանայ նշանսն ունէին, համարէր եթէ զՄերուժանն սպանանիցէ: Եւ զբազում ախոյենից հատանէին զգլուխս, որ զնոյն զնորին Մերուժանայ ունէին զնշանս. և տեսանէին զի չէր նա:

Ապա խօսել սկսանէր սպարապետն Մանուէլ ընդ իւրում նիզակակցին Բարկան, և ասէր. Տեսանե՞ս, ընդի՛ խաբեաց զմեզ կախարդն Մերուժանն. այլ իմ և նորա յառաջու շատ լեալ ի միոջ վայրի ի հաչտութեան ժամանակի, նշան մի գիտեմ ես զնորա. զի յորժամ ի ձի նժծեալ էր, երան բարձի նորա ոչ յանձին և ի ծունկն ոչ հասանէր, այլ ի բացեայ կայ ի ձիոյ աճսի: Արդ եկ զոյգ հասարակ այսմ նշանի ուշ դիցուք, թերևս ճանաչել կարասցուք զդիւր հուէիցն զկախարդն: Ապա զոյգ միտ եղեալ երկոցունցն, և տեսեալ զՄերուժանն, այնու նշանաւ ծանեան տեսին. զի յայլակերպս լեալ էր, զի զիւր նշանսն ոչ ունէր: Ապա ձայն տուեալ յառաջ կոչեաց զՄերուժանն Մանուէլ, և ասէ ցնա՝ թէ այ կախարդ, ցե՞րբ խաբես զմեզ, և վասն ո և զայլս ևս տաս չարդել. այլ մեք ծանեաք զքեզ զի աւադիկ կաս, և ապրել քեզ չիք ճնար այսօր ի ձեռաց մերոց. զի այսօր էած կատարեաց զչարիս ո տէր աստուած ի գլուխ ո, և մատնեաց տէր ի ձեռս մեր: Իսկ յորժամ զայն լսէր Մերուժանն, անդէն վաղվաղակի նիզակ առեալ, յառաջ խաղացեալ, ախոյեան ելանէր Մանուէլին: Սակայն յորժամ հարկանէին նիզակօքն, հանգի երկոքեան արձ յաղթ էին, երկոքեան ի ձիոյն յերկիր անկանէին, և անդէն նիզակակիցն Մանուէլի Բարիկ տէր գաւառին Սիւնեաց հասանէր, նիզակաւ ի վերուստ ի վայր ի կողին կարէր զնզ զեռին, և ոչ կարէր յառնել: Իսկ զպարապետն Մանուէլ իւր վարուանդասպասքն յերիվարս հանէին, և զՄերուժանայ զգլուխն ի բաց հատանէին. և ամենայն զօրացն լինէր փախուստ, իբրև տեսին թէ Մերուժանն մեռաւ:

Եւ ասի գունդն Մանուէլեան խրախոյս առեալ յարձակեցան զնա մերուժանեան գնդին. հարկանէին սատակէին զնոսա, և ամի ի նոցանէն ոչ ապրեցուցանէին: Այլ մանուկն Արտաւազդ ի Մանուէլէ գաղտ եկեալ էր ի ճակատն. սակայն վառեցաւ կազմեցաւ և եմուտ, զանխոչ ի մանուէլեան գնդէն, ատ ափն եփրատ գետովն. նճար սատակեաց ի մերուժանեան գնդէ աճսի, աճքիւ բազում սպառազէնս կոտորեաց: Եւ

առաչն էր ելնում Մերուժանն իր գնդով, ար եկել էր նրանց վրա: Չարագործ մեղավոր Մերուժանը իր զենքն ու զարդը և իր սաղավարտի նշանը շատերին էր տվել, շատերին իր գնդում իր կերպարանքն էր տվել, իսկ իրը իր նշանները չէր կրում: Մանուելը նրանց գունդը տեսնելով՝ իր գնդով առյուծի՝ վարազի պես վրա էր հարձակվում, խառնվում էր նրանց գնդին, ուշադրություն դարձնելով նրանց վրա, որոնք Մերուժանի նշաններն էին կրում: Շատ ախոյանների գլուխներ էին կարում, որոնք կրում էին Մերուժանի նշանները, կարծելով թե Մերուժանին սպանեցին, բայց տեսնում էին որ նա չէ:

Այն ժամանակ սպարապետ Մանուելը խոսեց իր նիզակակից Բարիկի հետ և ասաց. «Տեսնո՞ւմ ես ո՛րման մեզ խաբում է այդ կախարդ Մերուժանը: Բայց առաջ, հաշտության ժամանակ, ես շատ անգամ նրա հետ միասին եմ եղել, ես նրա մի նշանը գիտեմ՝ երբ նա ձի էր հեծնում՝ նրա ազդրը մինչև ծնկները նույ չէր գալիս (ձիուն), այլ ձիուց զատ էր մնում: Ե՛կ, երկուսով այս նշանին ուշադիր լինենք, գուցե կարողանանք ճանաչել այն ետ եկած կախարդին»: Ապա երկուսով դիտելով՝ տեսան ու ճանաչեցին Մերուժանին այդ նշանով. նա իրեն կերպարանափոխել էր և իր նշանները չէր կրում: Այն ժամանակ Մանուելը ձայն տվեց, առաջ կանչեց Մերուժանին ու ասաց. «Ա՛յ կախարդ, մինչև ե՞րբ պիտի խաբես մեզ և ո պատճառով ուրիշներին չարդել տաս: Քեզ մենք վերջապես ճանաչեցինք, որ այդտեղ կանգնած ես, և մեր ձեռից ել այսօր փրկություն չկա, որովհետև աստված այսօր ո կատարած չարիքները ո գլխի վրա ածեց և ել մեր ձեռը մատնեց»: Մերուժանը երբ այս լսեց՝ իսկույն նիզակը ձեռին առաջ անցավ, Մանուելին ախոյան դուրս եկավ: Բայց որովհետև երկուսն էլ հաղթահասակ մարդիկ էին՝ նիզակներով իրար հարվածելիս՝ երկուսն էլ ձիերից վեր ընկան: Անմիջապես Մանուելի նիզակակից Բարիկը, Սյունյաց գավառի տերը, վրա էր հասնում, նիզակով կողից վերից վար խփելով (Մերուժանին) կարում էր գետնին, և նա այլևս չէր կարող վեր կենալ: Իսկ Մանուել սպարապետին նրա ձիապահ սպասավորները ձի էին հեծցնում: Եվ Մերուժանի գլուխը կտրում էին, և բոլոր զորերը երբ տեսան թե Մերուժանը մեռավ՝ փախուստի դիմեցին: Իսկ այս կողմից Մանուելի գունդը խրախուսվելով՝ հարձակվեց Մերուժանի գնդի վրա, ջարդեցին, կոտորեցին, կենդանի մարդ չթողին:

Բայց մանուկ Արտավազդը Մանուելից գաղտուկ գնացել էր պատերազմի. նա սպառազինված, Մանուելի գնդից ծածուկ, գնաց եփրատ գետի ափը, այնտեղ Մերուժանի գնդից աջիվ սպառազինված մարդ կոտորեց: Իսկ մեկը որ Մերուժանի նշան էր կրում՝ երբ Արտավազդին

ճշանակիր մի ’ի Մերուժանայ իբրև եռես զԱրտաւազդն, յընչացք եթաց. զի տեսանէր զնա պատանեակ մի կայտառ անմոռուս, երեսօք գեղեցիկ. ապա զնշանն զնիզական պատեալ, յարձակեցաւ ’ի վերայ նորա: Իսկ նա բնդ գիրկս մտեալ, հարկանէր զայրն նետիւ, և կարանէ ’ի կարան թափ հանեալ զնետն ցամաք բնկենոյր զնա: Եւ առեալ զնիզակն զհետ մտեալ փախստէիցն, բնդ սուր հանեալ զզօրսն Մերուժանայ, աւելի քան զամենեսեան Արտաւազդ որդի Վաչէին մանուկն կոտորէր. և իննն մեծաւ անուամբ և բազում աւարաւ՝ զոր կապուտն թափէին ’ի զօրաց բշնամեացն:

Բայց յատուր յայնմիկ լինէր մեծ վնաս անհնարին. զի Վաչէ երկրորդն Մանուէլի, ձին զուլամբ երթեալ, սպանանէր: Սոյնպէս և զԳարբոյլ Մաղխաղ ձին տարեալ սատակեաց. վասն զի տրմուղ ’ի թերաւարժ ձիոյ հեծեալ էին երկոքին:

Իսկ դառնայր Մանուէլ երթայր ’ի բանակն տիկնոջն հասանէր. տանէին բնդ իննեանս զգլուխն Մերուժանայ. և Սամուէլ որդի Վահանայ ոչ դիպեցաւ բնդ Մանուէլի, զի դարձաւ նա ’ի բանակն: Սակայն յորժամ տեսին զգլուխն Մերուժանայ կանայք բանակին Մանուէլի, մեծաւ աղաղակաւ ճիչ բառնային. զի նոքա այսպէս համարեցան թէ այն գլուխ Սամուէլի որդւոյ Վահանայ իցէ, վասն զի նման միմեանց էին երկոքեան, Մերուժանն և Սամուէլ: Ապա տեսին զգլուխն Մերուժանայ, զի զցիցն երկայն կախեալ էր, յայնմ ծանեան եթե չէ Սամուէլայ, այլ Մերուժանայ Առծրունոյ. այլ ասացին. Սակայն դա մեր եղբայր է: Ապա եկին բերին զմարմին Վաչէի ’ի բանակ անդր հօրն Արտաւազդայ, և զմարմինն Գարբոյլայ Մախաղու խոռխոռունոյ. եղին աշխար մեծապէս, և լացին զնոսա: Եկին բերին զայրն նշանակիրն Մերուժանայ, զոր եհարն Արտաւազդ նետիւն. և ամենայն ոք զարմանայր բնդ այն, զի նետն թափ կարանէ ’ի կարան անցեալ էր, իբրև տեսին զնա՝ ապրեցա ’ի մահուանէ: Այլ իբրև լուան զօրքն Պարսից՝ զոր թողեալ էր Մերուժանայ ’ի գաւառն Կորճէից՝ թէ սատակեցաւ Մերուժանն, և կոտեան գունդն որ բնդ նմա, և իննեանք ’ի Պարսից երկիրն փախստական գնացին. և Հայոց երկիրն լինէր խաղաղութիւն բազում:

ԽԹ

ՏԱՂԱՏՍ ԹԷ ՋԻՒ՛ՐԴ ԹԱԳԱՒՈՐՆՈՑՈՑ ՄԱՆՈՒԷԼ ՍԳԱՐԱԳՆՏՆ ՋՄԱՆՈՒԿՆ ԱՐՇԱՒ. ԵՒ ԱՑԱ ԻՆՔՆ ՄԱՆՈՒԷԼԻՆ ՄԱՀՈՒ ՄԵՌԱՆԷՐ

Ապա յետ այսր ամենայնի, զոր ասարեալ զօրավարն սպարապետն Մանուէլ, հանդերձ Արշակունի տիկնաւն, և մանկամբքն երկումբք

տեսավ՝ նրան համաձեց[216], տեսնելով որ մի կայտառ անմարում պատանի է, գեղեցիկ դեմքով: Ապա նշանը ձիգակին պատելով՝ հարձակվեց նրա վրա: Իսկ նա այժերը լարելով՝ նետով զարկեց նրան, և նետը մարմնով թափանցելով գետին ընկավ: Ապա ձիգակն առնելով հարձակվեց փախստականների ետևից և սրի էր ճաշում Մերուժանի զորքերը: Այդ օրը բոլորից ավելի մանուկ Արտավազդը, Վաչեի որդին, կատորած էր անում, և ինքը (ետ էր դառնում) մեծ անուամբ և լավ ավարով, որ բշնամու զորքերից կողոպուտ մնաց:

Բայց այդ օրը մեծ անփոխարինելի վնաս էր պատահում, որովհետև Վաչեի ձին, բռնահարելով՝ նրան (վեր էր ձգում) սպանում էր: Նույնպես և Գարբոյլ Մախաղին ձին, փախցրեց ու սպանեց, որովհետև երկուսն էլ անվարժ տրմուղներ էին հեծել:

Իսկ Մանուելը գնում հասնում էր տիկնոջ բանակը. իրենց հետ տանում էին նաև Մերուժանի գլուխը: Բայց Սամուելը, Վահանի որդին, Մանուելի հետ չպատահեց, որովհետև նա բանակն էր դարձել: Մանուելի բանակում եղած կանայք երբ Մերուժանի գլուխը տեսան՝ մեծ ճիչ ու աղաղակ բարձրացրին, որովհետև կարծեցին թե այն գլուխը Սամուելն էր, Վահանի որդու, որովհետև այն երկուսը, Մերուժանն ու Սամուելը իրար նման էին: Բայց հետո տեսան Մերուժանի գլուխը, որից ծամը կախված էր, իմացան, որ Սամուելինը չէ, այլ Մերուժան Առծրունունը, բայց ասացին. «Այնու ամենայնիվ դա էլ մեր եղբայրն էր»[217]: Ապա բանակը բերին Արտավազդի հոր Վաչեի մարմինը, նույնպես և Գարբոյլ Մախաղի մարմինը. մեծ սուգ արին ու լացին նրանց վրա: Բերին նաև Մերուժանի նշանը կրող մարդուն, որին Արտավազդն սպանել էր նետով. բոլորը զարմանում էին նայելով, որովհետև նետն ամբողջ մարմնովը բափ էր անցել: Այս որ տեսան՝ (Արտավազդը) մահից փրկվեց[218]: Իսկ Պարսից այն զորքերը, որոնց Մերուժանը թագել էր Կարճայի գավառում, երբ լսեցին թե Մերուժանն սպանվել է և նրա հետ եղած գունդը ոչնչացել է՝ իրենք էլ փախան գնացին Պարսից աշխարհը, և Հայոց աշխարհում բնդհանուր խաղաղություն տիրեց:

ԽԹ

ԹԵ ԻՆՉՊԵՍ ՄԱՆՈՒԷԼ ՍԳԱՐԱԳՆՏԸ ԹԱԳԱՒՈՐԵՑՐԵՑ ՄԱՆՈՒԿ ԱՐՇԱԿ ԵՒ ՀԵՏՈ ԻՆՔՆ ԷԼ ՄԵՌԱՒ

Այս բոլոր գործերը կատարելուց հետո Մանուել զորավար-սպարապետը, Արշակունի տիկնոջ և երկու մանուկների՝ Արշակի և Վռամշա-

Արշակաւն և Վաղարշակաւն, հանդերձ ամենայն բանակաւն Հայոց մեծամեծ աւագայնովն նախարարօքն երեւեալ հասանէր ՚ի գաւառն Կարնոյ. և ամենայն տանուտեարք ընդ նմա: Եւ տայր սպարապետն Մանուէլ զդուստր իւր Վարդանդուխտ կին Արշակայ մանկանն Արշակունոյ, և փեսայ իւր առնէր զնա: Առնէր հարսանիս և եղբօր նորին Վաղարշակայ, և տայր նմա զդուստր ասպետին բագրատունոյ ՚ի Սպեր գաւառէ, ուր թագաւորքն թագակապքն լեալ էին ՚ի բնմէ ազգին թագաւորութեանն Արշակունոյ. և մեծապէս արարեալ զհարսանիսն ամենայն երկիրն Հայոց, ցնծացեալք խնդացեալք էին ընդ մեծ խնդութիւն ուրախութեանն: Ապա յետ այսորիկ դարձեալ ՚ի մի վայր ժողովեալ զաշխարհ ամենայն զմարդիկ երկրին Հայոց, և թագաւորեցոյց զմանուկն զԱրշակ երկրին Հայոց, և զՎաղարշակ երկրորդ նմին: Եւ ընդ այն ևս ցնծացեալ առնէին մեծապէս ուրախութիւն և ցնծութիւն ամենայն երկիրն Հայոց:

Ապա յետ այսորիկ հիւանդացաւ սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ զախտ հիւանդութեան մահու. և կոչեաց զորդի իւր զԱռաջիր, և ետ նմա զտէրութիւն իւր և զսպարապետութիւն զօրավարութեանն իւրոյ: Եւ պատուիրէր նմա հնազանդ հպատակ կալ արքային Արշակայ, և լինել միամիտ. չանալ և վաստակել, և տալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց զանձն fn, որպէս fաջ նախնիքն ՚ի վերայ աշխարհիւն մտադիր մեռանել: Զի, ասէ, առ աստուած այն արդարութիւն մեծ է և բնդունելի, և ոչ աստուած թողու ՚ի ձեռաց, յորժամ այնպէս լինիմ: Անուն fաջութեան յերկրի բողցոմ, և զարդարութիւն յերկինս բնծայեցուցանէմ. և ամենեւին ՚ի մահուանէ մի՛ երկնչիմ, այլ յուսացեալ յայն, որ զամենայն արար և հաստատեաց: Եւ զհեղգութիւն և զպղծութիւն և զչարութիւն յանձանց ձերոց ՚ի բաց արարէմ, և զտէր աստուած սրբութեամբ և միամտութեամբ պաշտեցէմ. և ՚ի վերայ աստուածապաշտ աշխարհի համարձակութեամբ մեռարուք, զի այն իմիկն մահ վասն աստուածոյ է, փոխանակ եկեղեցեաց նորա և ուխտի նորա, և ՚ի վերայ բնակ տէրանց աշխարհիս արշակունոյ:

Եւ յետ այսորիկ գրեաց հրովարտակ առ բագաւորն Յունաց, և նմա յանձն արար զաշխարհս Հայոց և զԱրշակ արքայ: Եւ յետ այսորիկ իբրև միանամուռ ժողովեալ կային շուրջ զնովաւ, և իբրև կայր հիւանդ ՚ի մահիցս իւր, անդ բագաւորն Արշակ և անդ Վարդանդուխտ կին բագաւորին, և բնդ ամենայն աւագ և մեծամեծ և նախարարք Հայոց այր և կին առ հասարակ ամենայն երեսի մարդիկ, ապա եբաց Մանուէլ զամենայն զանդամս իւր առ հասարակ առաջի ամենեցուն, մերկացաւ և եցոյց զի fան զդրամ խայծ ոչ գտանէր ոդջ ՚ի մարմնի նորա՝

շակի հետ, Հայոց բոլոր բանակով, մեծամեծ ավագներով և նախարարներով գնում նստում էր Կարնի գավառը: Բոլոր տանուտերերն էլ նրա հետ էին: Եվ Մանուել սպարապետը իր Վարդանդուխտ դուստրը կնության տվեց Արշակունի մանուկ Արշակին և իրեն փեսայացրեց. նաև հարսանիք էր անում նրա եղբոր Վաղարշակի համար, և նրան կին էր տալիս Բագրատունի ասպետի դուստրը Սպեր գավառից, որոնք (Բագրատունիները) ի բնե Արշակունյաց տոհմի թագավորների թագակապներն ու թագադիրներն էին եղել: Շատ փառավոր հարսանիք արին, որ մեծ ցնծություն և ուրախություն պատճառեց բոլոր Հայոց աշխարհին: Այնուհետև դարձյալ մի տեղ ժողովելով Հայոց աշխարհի բոլոր մարդկանց՝ մանուկ Արշակին թագավորեցրեց Հայոց աշխարհի վրա և Վաղարշակին նրան երկրորդ նշանակեց: Սրանով էլ մեծ ուրախություն ու ցնծություն եղավ բոլոր Հայոց աշխարհում:

Սրանից հետո Հայոց զորավար-սպարապետ Մանուելը հիվանդացավ մահաբեր հիվանդությամբ: Նա կանչեց իր Առաջիր որդուն, նրան հանձնեց իր տանուտիրական իշխանությունն ու իր զորավար-սպարապետությունը: Նրան պատվիրեց հնազանդ ու հպատակ լինել Արշակ թագավորին, հավատարիմ լինել, չանալ և աշխատել, Հայոց աշխարհի համար պատերազմել: «Ուրախությամբ հանձն առ մահ աշխարհի համար, ինչպես և fn fաջ նախնիքը, որովհետև, ասաց, դա արդար և աստծուն ընդունելի գործ է, և երբ այդպես վարվեք՝ աստված ձեզ անտես չի անի: Երկրի վրա fաջության անուն բողեք և ձեր արդարությունը երկնքին հավիրեցեք: Մահից ամենևին մի՛ վախեցեք, այլ հույս դրեք նրա վրա, որ ամեն ինչ ստեղծեց ու հաստատեց: Ձեզ հետու պահեցեք նենգությունից, պղծությունից և չարությունից և տեր աստծուն ծառայեցե՛ք մաքուր սրտով ու հավատարմությամբ: Աստվածապաշտ աշխարհի համար համարձակ մեռե՛ք, որովհետև հենց այդ մահն աստծու համար է, նրա եկեղեցիների և եկեղեցական ուխտի, այս աշխարհի բնիկ տերերի՝ Արշակունիների համար»: Սրանից հետո նա հրովարտակ գրեց Հունաց թագավորին ու նրան հանձնեց Հայոց աշխարհն ու Արշակ թագավորին:

Սրանից հետո, երբ նա հիվանդ պառկած էր անկողնում և բոլորը հավաքված էին նրա շուրջը, այնտեղ էին և Արշակ թագավորը և Վարդանդուխտը՝ թագավորի կինը, և Հայոց բոլոր ավագները, մեծամեծներն ու նախարարները, առհասարակ բոլոր երեսի մարդիկ, տղամարդ թե կին՝ ապա Մանուելը այս բոլորի առաջ բացեց իր բոլոր անդամները, մերկացավ և ցույց էր տալիս, որ նրա մարմնի վրա մի դրամի մեծության չափ ոդջ տեղ չէր մնացել, այլ խոցված էր պատերազմների

զոր խոցեալ էր ՚ի պատերազմի. զի յառնի յանդամսն աւելի բան զյիսուն սպի կայր վիրաց, և զայն անդամ բացեալ առաջի ամենեցուն ցուցանէր:Սկսաւ լալ, և ասել՝ թէ ես ՚ի մանկութենէ համակ սնայ ՚ի պատերազմունս, և մեծաւ բաւութեամբ զամենայն վէրս յանձն իմ առի. և ընդէ՞ր ոչ եհաս ինձ մեռանել ՚ի պատերազմի, բան զօրէն անասնոյ մեռոլոյ եղէ: Զի լաւ էր ինձ երէ ՚ի պատերազմի մեռեալ էի ՚ի վերայ աշխարհի, զի մի՛ զեկեղեցիս և մի՛ զոսկւոտ աստուծոյ առ ոտն կոխիցեն: Սակայն և ՚ի վերայ Արշակունեաց բնիկ տէրանց աշխարհիս, և ՚ի վերայ կանանց և ՚ի վերայ որդւոց մերոց, և ՚ի վերայ աստուածապաշտ մարդկանս և ՚ի վերայ եղբայրութեան բնկերութեան և մտերիմ բարեկամութեանն զի՞ էր թէ հասեալ էր ինձ մեռանել. թէպէտ չատ զանձնս յանդուգն վարեցի, զվատբար մահս մահացաս եհաս ինձ մեռանել:

Զայս և բազում և աւելի բան զսոյնս խօսեցաւ առաջի Արշակայ արքայի և առաջի ամենեցուն. և աղաչեաց ևս զթագաւորն Արշակ, և ասէ. Իմ Աստուծով կեցեալ և ջերմ հրիստոնէութեամբ, մի՛ յանկարգ իրեւ ինքանոսս կոծ կամ աշխարանս ևս անյուսութեամբ դնիցէ ինձ: Զի որ միանգամ յուսոյ յարութեան ակն ունին միւսանգամ կենդանութեան և գալստեանն Քրիստոսի, չէ պարտ լալ զնոսա: Այլ իմ ցայժմ յուսով երկիւղիւ կեցեալ, բայց դուք մի՛ քիւրիցիք ՚ի պատուիրանացն աստուծոյ, աւելի զարդարութենէ փոյթ արասջիք, ևս առաւել զողորմութենէ: Զի մեզ մեծ հայրապետն Ներսէս զայս համակ պատուիրէր. և ինքն յամենայն ժամ ՚ի կենդանութեանն զսոյն գործէր, և այլոց ուսուցանէր առնել. զի ողորմէր աղքատաց, տնանկաց, գերեաց, ամայեաց, օտարաց, պանդխտաց. զի այսպէս ասէր նա. Քան զողորմութիւն առնել, կամ՝ հաւ զառւս տալ, այլ ինչ մեծ և պատուական առաջի աստուծոյ չիք: Եւ զաշխար կամ զկոծ դնել մեռելոց՝ դառն մեղս համարէր, և յամս իւր եհատ զայս յերկրէս Հայոց. զի յաւուրս նորա ոչ ոք իշխէր դնել կոծ կամ աշխարանս. այլ յետ մահու նորա անմիտ մարդիկ համարձակեցան զայս գործել: Այլ վասն իմ ոք կոծ մի՛ դիցէ. եթէ դնէ ոք, նա լիցի դատապարտ. այլ ոչ եթէ յետ մահուն իմոյ իմ իշխանութիւն ինչ է սաստել, զի զոր ոչն կամիմ՝ մի՛ արասցեն. այլ ինձ յիշատակ արասցէ որ զիս սիրէ: Ի պատերազմի ՚ի մահուանէ մի՛ երկնչիք, ուր ես ոչ մեռայ. զի առանց աստուծոյ ինչ ոչ լինի:

Զայս և զայսպիսի, և որ ինչ այս բանից նման են բանք, խօսեցաւ: Բազում և անչափ գանձս աղքատաց և կարոտելոց բաշխէր, իւրովք

մէջ, հնից նրա առնի անդամի վրա ավելի քան հիսուն սպի[218] կար վերհերից. մինչև անգամ այս բանալով ցույց էր տալիս ամենքին: Սկսեց լալ և ասել. «Մանկությունից հետե ես պատերազմների մէջ եմ մեծացել, ամեն վերհ հանձն առա քաջությամբ, և ինչո՞ւ ես բախտ չունեցա պատերազմի մէջ մեռնելու, քան թե այսպես անասունի պես մեռնեի: Ո՜րքան լավ կլիներ՝ եթե պատերազմի մէջ մեռնեի աշխարհի համար, որպեսզի եկեղեցիները և աստծու պաշտոնյաների ուխտը ոտնատակ չլինին: Ո՞ւր էր թե ինձ վիճակվեր մեռնել մեր աշխարհի բնիկ Արշակունի տերերի համար, մեր կանանց ու որդոց համար, աստվածապաշտ մարդկանց, եղբայրների, ընկերների և մտերիմ բարեկամների համար: Ես շատ հանդուգն էի ինձ պահում (պատերազմների մէջ), բայց և այնպես ինձ վիճակվեց մեռնել վատբար մահով՝ անկողնում պառկած»[219]:

Այս և սրանից էլ ավելի շատ բաներ խոսեց Արշակ թագավորի և բոլորի առաջ: Նաև աղաչեց Արշակ թագավորին և ասաց. «Ես ապրել եմ աստծով իրեւ ջերմեռանդ քրիստոնյա, ինձ վրա անհնազանդությամբ լաց ու կոծ չարհեք անկարգաբար հեթանոսների նման: Որովհետև չպետք է լաց լինել նրանց համար, որոնք հույս ունեն մյուս անգամ հարություն առնելու և կենդանանալու Քրիստոսի գալուստի ժամանակ, իսկ ես մինչև այժմ ապրել եմ հնազանդով և երկյուղածությամբ: Բայց դուք աստվածային պատվիրաններից մի՛ շեղվեք, արդարության հոգ տարեք և ավելի շատ ողորմության: Որովհետև Ներսես մեծ հայրապետը մեզ շարունակ այս էր պատվիրում և ինքն էլ իր կենդանության ժամանակ նույնն էր անում. ինչ որ ինքը գործում էր՝ նույնն սովորեցնում էր ուրիշներին. նա ողորմում էր աղքատներին, տնանկներին, գերիներին, անտիրականներին, օտարականներին, պանդխտներին, և նա ասում էր. «Աստծու առաջ ավելի պատվական բան չկա քան ողորմություն անելը կամ (աղքատներին) տուրք տալը»: Եվ մեռելների վրա լաց ու կոծ անելը ծանր մեղք էր համարում և իր ապրած ժամանակ այս բանը վերացրեց Հայոց աշխարհից. որովհետև նրա օրերով ոչ ոք չէր համարձակում լաց ու կոծ անել, բայց նրա մահից հետո անմիտ մարդիկ համարձակեցան այդ բանն անել: Բայց ինձ համար թող ոչ ոք կոծ չանի. մեղապարտ լինի ով որ անի: Բայց ես իրավունք չունիմ իմ մահից հետո մեկին սաստել, որ չանի ինչ որ ես չեմ կամենում, այլ ով որ ինձ սիրում է՝ իմ հիշատակի համար թող այսպես անի: Պատերազմի մէջ մահից մի՛ վախենաք, որի մէջ ես չմեռա, որովհետև առանց աստծու ոչինչ չէր լինում»:

Էլի այսպիսի շատ բաներ խոսեց. անչափ շատ գանձ բաժանեց

ձեռօք մատակարարէր. և բազում մասունս յնշից իւրոց տայր յեկեղեցիս և ի վկայանոցս, և բազում գանձս տայր ցհաճանայապետսն. և ապա ինքն մեռանէր: Այլ իբրև մեռաւ մեծ սպարապետն Մանուէլ, հրամանն զոր տայր յաղագս կոծոյն չդնելոյ՝ այնմ ինչ ոչ ոք անսաց. այլ ամենայն մարդ երկրին Հայոց կոծ եդեալ, մեծաւ աշխարաձօք լային զնա առ հասարակ ազատ և շինականք: Ջի ամենայն մարդ իբրև զիօրէ ի կարի առնէին զնմանէ վասն հաղցրութեան մարդասիրութեան հեզութեան հանդարտութեան խնամոտ բարեբարութեան՝ բարեշնան զաշխարհաշէն անձն Մանուէլի: Ամենեքեան բերանաբաց հառաչէին զկնի նորա, կոկոտաք կաթոգի լինէին գիւրեանց ֆայ զօրավարէն, զփրկչէն իւրեանց, զյաղթական զանուանին զարգասուէն, յայնպիսոյն հեռացեալ գնացեալ ի յանչատելն ի մեկնելոյն:

աղքատներին ու կարոտյալներին, որ բաշխում էր իր ձեռով. իր սուացվածից շատ մասեր տալիս էր եկեղեցիներին ու վկայարաններին, շատ գանձ էլ տվեց ֆանանայապետներին, ֆանանաներին ու պաշտոնյաներին, և ետու ինքն էլ մեռավ:

Բայց երբ մեծ Մանուել սպարապետը մեռավ՝ ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրա հրամանին կոծի վերաբերությամբ, այլ Հայոց աշխարհի բոլոր մարդիկ, ազնվականներ ու շինականներ առհասարակ կոծում, լալիս, ողբում էին դառնապես: Որովհետև ամեն մարդ նրան սգում էր նրա հաղցրության, մարդասիրության, հեզության, հանդարտության, խնամատար բարերարության համար, ողբում էին բարեշնան և աշխարհաշեն Մանուելին: Բոլորը բերանները բացած հառաչում էին նրա համար, կարոտագին մղկտում էին իրենց ֆայ զորավարի, իրենց փրկչի, իրենց հաղթական՝ անվանի և բազմարդյուն (սպարապետի համար), որ հեռացավ ու գնաց, բաժանվեց իրենցից:

ԲՈՒԶԱՆԴԻՆԱՅ
ՎԻՅԵՐՈՐԴ ԽՈՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳԱՍՄՈՒԹԵԱՆՅ ԿԱՆՈՆՔ ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ ՄԱՏԵՆԻՑ

Ա. Յաղագս բնդ Երկու բաժանելոյ աշխարհին Հայոց, զի կէս ազգին Հայոց բազաւորեալ Արշակ Ճրամանաւ բազաւորին Յունաց, և կէս ազգին բազաւորեալ Խոսրով Ճրամանաւ բազաւորին Պարսից. Եթէ ո՛րպէս գաշխարհն Հայոց բնդ Երկուս բաժանեալ՝ սահմանս ՚ի մէջ արկանէին իւրեանց, և ո՛րպէս այլ աշխարհիկն և գաւառն գրուեցան, և սահմանի նոցա կրծեցան յամենայն կողմանց Երկոցուն կուսաց:

Բ. Յաղագս եպիսկոպոսաց, որ Երեքիքն էին յայնմ ժամանակի ՚ի բաժնի մասին յաշխարհին Խոսրովու յերկրին Հայոց. նախ վասն վարուց Զաւինայ:

Գ. Յաղագս Շահակայ կորճկի, որ եկաց յետ Զաւինայ գլուխ եպիսկոպոսաց:

Դ. Յաղագս Ասպուրակայ մանազկերտացւոյ, որ եկաց գլուխ եպիսկոպոսաց յետ Շահակայ:

Ե. Յաղագս Փաւստեայ և Ջորբայ եպիսկոպոսաց:

Զ. Յաղագս Առաւտոմեայ եղբօր Փաւստեայ եպիսկոպոսի:

Է. Յաղագս Աւտրայ եպիսկոպոսի բարեճացոյ:

Ը. Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի և վարուց նորա և ազաւնութեան սորա և աճմութեան, և շաղաշուտ խօսից և գործոցն, և ճշաճացն՝ որ յաստուծոյ ՚ի վերայ նորա եղեն երբեմն, Եթէ ո՛րպէս մեղօք ճայցէր և առնոյր զազաւնութիւն ՚ի բազաւորաց:

Թ. Յաղագս նորին Յոհաննու:

Ժ. Յաղագս նորին Յոհաննու:

ԺԱ. Յաղագս Կիւրակոսի եպիսկոպոսին:

ԺԲ. Յաղագս Ջորբուազայ եպիսկոպոսի Վաճաճեայ գաւառին:

ԺԳ. Յաղագս Տիրկան և Մովսէսի եպիսկոպոսաց Բասենոյ գաւառին:

ԺԴ. Յաղագս Արշարունեայ եպիսկոպոսի:

ԺԵ. Յաղագս գլխաւորին եպիսկոպոսացն որ էին Ասպուրակայ:

ԺԶ. Յաղագս Գնդայ սրբոյ և առաքինոյ, որ յայնմ ժամանակի գլխաւոր էր աթոռոյն Հայոց աճապատուոյ մեճակեցաց վաճերայոց:

ՍՏՈՐՈՏ ԱՄԵՆԱՅՆ ԳԱՍՄՈՒԹԵԱՆՑ ՅԱՂԱԳՍ ԻՄ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆ, ՈՐՔ ՄԻԱՆԴԱՄ ՁՄԱՏԵԱՆՍ ԸՆԹԵՌՆՈՅՔ, ՏՈՒՆՔ ՏԱՍՆ ՀԱՄԱՐԱԿԱՆ ԹՈՒՕՔ:

ԲՈՒԶԱՆԴԻ
ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՐՈՒԹԻՒՆ

Յաճկ Վեցերորդ դարուբյաճ պաճմական գլուխճերի

Ա. Հայոց աշխարհի Երկու մասի բաժանվելը, երբ Հայոց ազգի կեսի վրա բագավորեց Արշակ՝ Հունաց բագավորի ճրամանով, և կես ազգի վրա բագավորեց Խոսրով՝ Պարսից բագավորի ճրամանով, բե ի՛նչպես Հայոց աշխարհը Երկու մասի բաժանվելով՝ իրենց մէջ սահման էին կարում, և ի՛նչպես մյուս աշխարհներուն ու գավառները ցրվեցան և Երկու կողմի էլ սահմաններր բոլոր կողմերից կրճաղվեցին:

Բ. Այն եպիսկոպոսների մասին, որոնք այն ժամանակ Երեսի էին աշխարհի այն մասում, որ բաժին բնկավ Խոսրովին: Նախ՝ Զավենի վարի մասին:

Գ. Կարճեացի Շահակի մասին, որ Զավենից հետո եպիսկոպոսների գլխավոր դարձավ:

Դ. Մանազկերտցի Ասպուրակեսի մասին, որ եպիսկոպոսների գլխավոր դարձավ Շահակից հետո:

Ե. Փավստոս և Ջորբ եպիսկոպոսների մասին:

Զ. Փավստոս եպիսկոպոսի եղբար Առաստոմի մասին:

Է. Բասենացի Արաիբ եպիսկոպոսի մասին:

Ը. Հռճան եպիսկոպոսի մասին. նրա վարին ու ազաճությունը, սնմատությունը, խենճ խոսքերն ու գործերը և բե ասածոց իճչ նշաճներ երևացան նրա վրա մի անգամ, և ի՛նչպես մեղավոր խնդրվածի էր սնում և իր ազաճությունը (լինացնում էր) բագավորներից սառնալով[22],

Թ. Նույն Հռճանի մասին:

Ժ. Նույն Հռճանի մասին:

ԺԱ. Կիրակոս եպիսկոպոսի մասին:

ԺԲ. Վաճաճեղ գավառի Ջորվաղ եպիսկոպոսի մասին:

ԺԳ. Բասենի գավառի Տիրիկ և Մովսես եպիսկոպոսների մասին:

ԺԴ. Աճարոճ[23] եպիսկոպոսի մասին:

ԺԵ. Ասպուրակի մասին, որ եպիսկոպոսների գլխավորն էր:

ԺԶ. Սուրբ և առաքինի Գինդի մասին, որ այն ժամանակ Հայոց վաճիռի աթոռների և միաբնակաց աճապատակաճների գլխավորն էր:

ՎԵՐՋ ԲՈԼՈՐ ԳԱՍՄՈՒԹԵՑՈՒՆՆԵՐԻ: ԱՅՍ ԳԻՐՔԸ ԿԱՐԴԱՑՂՆԵՐԻՆ ՀԱՄԱՐ ՏԱԼԸ ՀԱՄԱՐՎԱԾ ՏՈՒՆ ՏԵՂԵԿՈՒԹԵՑՈՒՆ ԻՄ ՄԱՍԻՆ:

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

ՎԵՑԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻԻՆ

ՎԵՐՋ

ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎՃԱՐՈՒՄՆ՝ ՄՆԱՑՈՒԱԾՔ ԲԱՆԻՑ Ի ՍԱՑՐԷ

Ա

ՅԱՂԱԳՍ ԸՆԴ ԵՐԿՈՒՍ ԲԱԺԱՆԵԼՈՅՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԱՅՈՑ, ԵՒ ԹԱԳԱՒՈՐԵՑՈՅՆ ԱՐՇԱԿԱՑ ՀՐԱՄԱՆԱՒ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՅՈՒՆԱՑ, ԵՒ ԿԷՍ ԱՋԳԻՆ ԹԱԳԱՒՈՐԵԱԼ ԽՈՍՐՈՎ ՀՐԱՄԱՆԱՒ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՊԱՐՍԻՑ, ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԶԱՇԽԱՐՀՆ ԸՆԴ ԵՐԿՈՒՍ ԲԱԺԱՆԵԱԼ՝ ՍԱՀՄԱՆ Ի ՄԷՋ ԻՒՐԱՆՑ ԱՐԿԱՆԷԻՆ, ԵՒ Ո՛ՐՊԷՍ ԱՇԽԱՐՀՆ ՀԱՏԱՆ ՅԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՅԵՐԿՈՒՅՈՒՆՑ ԿՈՒՍԱՑ

Ապա յետ մահուն Մահուէլի զօրավարին Հայոց ոչ իմն կարաց հաստատել՝ ի վերայ աշխարհի թագաւորութեանն Արշակայ. այլ բազումք՝ ի Հայոց նախարարացն անտի ելին գատեան գնացին առ թագաւորն Պարսից, և մատնեցին նմա զաշխարհն Հայոց. և խնդրեցին ՚ի նմանէ թագաւոր Արշակունի: Եւ նորա յանձին կալեալ մեծաւ խնդութեամբ ընդ իւր ձեռն տալ իւրով բանիւ ՚ի նմին տոհմէ ՚ի թագաւորութենէն Հայոց Արշակունի, և նովաւ յիմնն գրաւել զաշխարհն Հայոց: Ապա գտանէր՝ ի նմին տոհմէ մանուկ մի անուն Խոսրով, և կացուցեալ թագ ՚ի գլուխ նորա. և ետ նմա կին զԽոսրուանդուխտ, և արար ընդ նմա գամենայն զզօրս զօրութեան իւրոյ. և Զիկ նուիրակ դաստիարակ ետ արքային Խոսրովայ. և եկին հասին յաշխարհն Հայոց: Իբրև նտես Արշակ արքայ գնոսա, մեծժեցաւ տեղի ետ չոգալ գնաց ՚ի սահմանս Յունաց. և էին թիկունք Արշակայ թագաւորին Հայոց՝. և Խոսրովու՝ թագաւորն Պարսից:

Ապա եկին զօրքն Յունաց թագաւորին՝ ի թիկունս. և թագաւորն Արշակ զեկեղեաց գաւառաւ, և զօրքն Պարսից և արքայն Խոսրով յԱյ-

ԲՈՒԶԱՆԴԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹՈՒՆՆԵՒ

ՎԵՑԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐՋ

ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ: ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐ ՍԿԶԲԻՑ[222]

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՈՒ ՄԱՍԻ ԲԱԺԱՆՎԵԼԸ (ՀԱՅՈՑ ԱՋԳԻ ԿՏԻ ՎՐԱ)[223]: ԱՐՇԱԿԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ՀՈՒՆԱՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՀՐԱՄԱՆՈՎ ԵՎ ԿՏԻ ՎՐԱ ԽՈՍՐՈՎԻ ԹԱԳԱՎՈՐԵԼԸ ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՎՈՐԻ ՀՐԱՄԱՆՈՎ, ԵՎ ԹԵ Ի՛ՆՉՊԵՍ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԸ ԵՐԿՈՒ ՄԱՍԻ ԲԱԺԱՆԵԼՈՎ՝ ԻՐԵՆՑ ՄԵՋ ՍԱՀՄԱՆ ԷՒՆ ԿՏՐՈՒՄ, ԵՎ Ի՛ՆՉՊԵՍ ԱՇԽԱՐՀԻ (ՋԱՆԱՋԱՆ ՄԱՍԵՐ) ԿՐՃԱՏՎԵՑԻՆ ԵՐԿՈՒՍԻ ԿՈՂՄԻՑ ԷԼ

Բայց Հայոց Մահուել զօրավարի մահից հետո՝ Արշակի թագավորությունը չկարողացավ կարգին հաստատվել աշխարհում. այլ Հայոց նախարարներից շատերը գտվեցին գնացին Պարսից թագավորի մոտ. Հայոց աշխարհը նրան մատնեցին և նրանից խնդրեցին Արշակունի թագավոր: Նա մեծ ուրախությամբ հանձն առավ՝ իր կողմից իր խոսքով (թագավոր նշանակել) Հայոց նույն Արշակունի թագավորների տոհմից և նրա միջոցով Հայոց աշխարհը իրեն գրավել: Ապա նա գտավ նույն տոհմից մի մանուկ Խոսրով անունով, նրա գլխին թագ կապեց և նրան կին տվեց իր Զրվանդուխտ քոյրը, իր բոլոր զորքերը նրա հետ. դրեց և Զիկ Եվիրակին դաստիարակ նշանակեց Խոսրով թագավորին: Այսպես նրանք էլան եկան Հայոց աշխարհը: Արշակ թագավորը երբ նրանց տեսավ՝ տեղի տվեց, հաշվեց գնաց Հունաց սահմաններն: Եվ թիկունք եղան՝ Արշակ թագավորին Հունաց թագավորը, իսկ Խոսրովին՝ Պարսից թագավորը[224]:

Ապա Հունաց զորքերը եկան (Արշակ թագավորին) օգնության, որ եկեղյաց գավառումն էր, իսկ Պարսից զորքը և Խոսրով թագավորը

րայրատ գաւառին: Ապա դեսպանէ և հրեշտակէ երկուց թագաւորացն, Յունացն և Պարսից, միմեանց[58] առ միմեանս երթևեկէին: Եւ այնուհետև առնէ խորհուրդ միաբանութեան հաւանութեան ընդ միմեանս թագաւորն Յունաց և թագաւորն Պարսից. և լաւ համարեցան զաշխարհն Հայոց նախ ընդ երկուս՝ ի մէջ իւրեանց բաժանել. զի ասէին՝ թէ՝ ի միջի մերում բնակեալ է այս հզօր և հարուստ թագաւորութիւն, լաւ է զի այսու եղծանել և խանգարել կարասցուք զայս թագաւորութիւնս. նախ ընդ երկու բաժանել երկու թագաւորս Արշակունիս՝ զորս կացուցաք, ապա և ընդ նոսա կրծել չանասցուք, աղքատացուցանել, ի մէջ արկանել ի ծառայութիւն, զի մի կարասցեն ի մէջ մեր ամբառնալ զգլուխս:

Եւ հաստատեցին զայս խորհուրդ. ընդ երկու զաշխարհն բաժանեցին: Բաժին կողմանն Պարսից էր թագաւորին Խոսրովու, և բաժին մասինն Յունաց էր թագաւորին Արշակայ: Բայց և ի նոցանէ բազում գաւառք կրծեալք հատեալք այսր անդր, և մնաց սակաւ մասն յաշխարհաց երկոցունց առ երկոսեան թագաւորսն: Բայց սակայն երկոհեան թագաւորն Հայոց՝ Արշակ և Խոսրով, որ Սիւնիք գաւառն մնացին թագաւորութեանն Հայոց երկոցուն կողմանց ի մէջ իւրեանց, և երկոհեան թագաւորն Արշակունիքն ի մէջ երկու բաժնացն սահմանս արկեալ հաստատէին խաղաղութեամբ, և երկիրն Հայոց երկոհեան բաժինն, երկուց թագաւորացն հնազանդէին իւրաքանչիւր բաժնի իւրաքանչիւր թագաւորի. բայց սակայն մեծ էր Խոսրովու բաժին նոցա քան զԱրշակայ: Եւ բազում գաւառք յերկոցունցն հատան. նուազեաց բաժանեցաւ գրուեցաւ թագաւորութիւնն Հայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամանակն և յապայ:

Բ.

ՅԱՂԱԳՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑՆ, ՈՐ ԵՐԵՒԵԼԻՔ ԷԻՆ ՅԱՅՆՄ ԺԱՄԱՆԱԿԻ Ի ՄԱՍԻՆ ՅԱՇԵԱՐՀԻՆ ԽՈՍՐՈՎՈՒ ՅԵՐԿԻՐՆ ՀԱՅՈՑ՝ ՈՐ ԸՆԴ ԳԱՐՍԻՑ ՁԵՌԱՄԲ ԷԻՆ. ՆԱԽ ՎԱՍՆ ՎԱՐՈՒՑ ՁԱԻԻՆԱՑ

Եւ էր Ձաւէնս այս աճուանի գաւակ Աղբիանոս եպիսկոպոսի՝ ի գեղջէ Մանաւազկերտոյ. էր սա բարոյիւք այր չարաբար խիստ և նախանձոտ: Բայց սակայն կրօնս մի, զոր եդ յիւրում ժամանակի. զի ամենայն հաճայից ուսոյց առնել հանդերձ զինուորաց: Զի թողեն զկրօն առաքելական եկեղեցեացն, սկսան գնալ ըստ իւրեանց մտաց. զի ոչ ըստ կրօնիցն ագանէին հաճայքն զպնդնաւորն, որպէս օրէն էր ի բնէ, այլ սկսան զխոտորկաուրսն ի վերայ ծնգացն ունել: Եւ զարդա-

Այրարատ գավառումն էին: Ապա հունաց և Պարսից թագավորների դեսպաններն ու պատգամավորները իրենց մէջ երթևեկություն ունեցան, և երկու թագավորները, Հունաց և Պարսից, իրար հետ խորհուրդ արին և համաձայնության եկան: Նրանք համարին նախ Հայոց աշխարհը երկու բաժին անել իրենց մէջ: Նրանք ասում էին. «Մեր երկուսիս միջև բնկած է այս հզոր և հարուստ թագավորությունը. լավ կլինի, որ այս միջոցով բուլացնենք ու խանգարենք այս թագավորությունը. նախ երկու մասի բաժանենք այս երկու Արշակունի թագավորներով, որոնց նշանակեցինք, հետո կաշխատենք նրանց էլ կրճատել, աղքատացնել և մեր ծառայության ենթարկել, որպեսզի մեր մեջ չկարողանան գլուխ բարձրացնել»:

Այսպես մտածելով՝ նրանք երկու մասի բաժանեցին աշխարհը. Պարսից կողմի բաժինը մնաց Խոսրով թագավորին, իսկ Հունաց կողմի բաժինը Արշակ թագավորին: Բայց նրանից էլ շատ գավառներ այս և այնտեղ խուզվեցին, կտրվեցին, և երկուսի աշխարհներից մի փոքր մասը մնաց երկու թագավորներին: Բայց Հայոց թագավորության հիմնական գավառները[225] երկու բաժիններում Հայոց երկու Արշակունի թագավորները, Արշակն ու Խոսրովը, սահմաններով խաղաղությամբ բաժանեցին, և Հայոց աշխարհի երկու մասերը հնազանդում էին ամեն մեկը իր թագավորին. բայց Խոսրովի բաժինը ավելի մեծ էր քան Արշակինը: Եվ երկուսից էլ շատ գավառներ կտրվեցին. և այն ժամանակ և այնուհետև Հայոց թագավորությունը բաժանվեց, ցրվեցավ, նվազեցավ, իր նախկին մեծությունից ընկավ[226]:

Բ

ԱՅՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՎԵԼԻ ԷԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԽՈՍՐՈՎԻ ՄԱՍՈՒՄ, ՈՐ ԳԱՐՍԻՑ ՁԵՌՔՈՒՆ ԷՐ: ՆԱԽ ՁԱՎԵՆԻ ՄԱՍԻՆ

Այս Ձավենը ազգով Աղբիանոս եպիսկոպոսի սերունդից էր, Մանազկերտ գյուղից: Ջարագործ, խիստ և նախանձոտ բարի տեր էր: Բայց նա մի սովորություն մտցրեց իր ժամանակ— նա բոլոր հաճախներին սովորեցրեց գինովական զգեստ հագնել: Նրանք թողին առաքելական եկեղեցիների սովորությունը, և սկսեցին վարվել՝ ինչպես իրենց խելքը կտրում էր, որովհետև հաճախներն այլևս չէին հագնում պճղնավորներ՝ ինչպես ի բնե սովորություն էր, այլ սկսեցին խոտոր կտորներ գործածել մինչև ծնկները[227]: Իրենց զգեստները զարդարում

ւէին զհանդերձս իւրեանց պէսպէս ճարտոսէ, և սիգային որպէս ոչ վայել էր. և զմորթ մեռելոտիս գազանացն բաճանայրն անխտիր ագանէին, որ ոչ վայել էր: եւ իճին Ջաւէնն աթիենալս և զտապակելս զժապաւինեալս ճարտոսէ ագանէր, զամուրենիս և զկնգմենիս և զգայլենիս ագանէր. և աղուեսենիս զանձամբ արկեալ, անխտիր ի բեմ ելեալ նստէին: Որկորատութեամբ ագահութեամբ անճառակութեամբ կայր Ջաւէն զամենայն աւուրս կենաց իւրոց. և սա կալաւ զտեղի զամենայն աւուրս կենաց իւր ամս երիս:

Գ

ՅԱՂԱԳՍ ՇԱՀԱԿԱՅ ԿՈՐՃԷԻ, ՈՐ ԵԿԱՑ Ի ՏԵՂԻ ՋԱՒԻՆԱՅ ԳԼՈՒԽ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

Ապա Շահակ կոչենայ եկաց գլուխ եպիսկոպոսաց փոխանակ Ջաւինայ յետ մահու նորա ամս երկուս: Եւ էր սա այր հրիատոնեայ, բայց ոչ ինչ գչարեցաւ ընդ կարգս Ջաւինայ՝ զոր եղեալն էր նորա՝ փոխել. սակայն առաջնորդեաց սա ամս երկուս, և փոխեցաւ յաշխարհէ:

Դ

ՅԱՂԱԳՍ ԱՍՊՈՒՐԱԿԱՅ ՄԱՆԱՋԿԵՐՏԱՑՈՅ, ՈՐ ԵԿԱՑ ԳԼՈՒԽ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ՅԵՏ ՇԱՀԱԿԱՅ

Ապա յետ մահուն Շահակայ եպիսկոպոսի եկաց գլուխ եպիսկոպոսաց Ասպուրակ ոմն ի գաւակէ Աղբիանոսի եպիսկոպոսի, այր հրիատոնէամիտ աստուածապաշտ արդար. և առաջնորդեաց դրանն Խոսրովու: Բայց միայն վասն կրօնիցն հանդերձոյն գեղեալ կարգն ըստ կրօնիցն Ջաւինայ գնայիւն սոհա:

Ե

ՅԱՂԱԳՍ ՓԱՒՍՏԵԱՅ ԵՒ ՋՈՐՔԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

Էր առ այնմ ժամանակաւ Փաւստոս եպիսկոպոս. սա ի ժամանակս Ներսէսի եպիսկոպոսապետին՝ էր ի տան նորին իբրև թեղակալ: Սոյնպէս Ջորք այր ներհինի ընդ նոսին. հանգի էին ի ներհնի հայրապետին ի տան իւրում ընդ նորա ձեռամբ երկոտասան եպիսկոպոսք, աթոռակիցք իւր գործակիցք և խորհրդակիցք: Ընդ զայլոց գաւառաց

էին տեսակ-տեսակ ճարտոսէրով, փխվում, սիգանում էին անվայել կերպով, և հանճանաւերն անխտիր գործ էին ածում մեռած գազանների մորթեր, որ նույնպես վայել չէր: Իճիր Ջավենը հագնում էր պճնված զարդարուն զգեստներ[228] ճարտոսէրով ժապավինված, սամուրի, կրնգումի (սպիտակ աիխք), գայլի մորթեր էր հագնում, աղվեսի մորթ վրան էր ձգում, և այսպես անխտրաբար բեմ դուրս գալիս նստում: Որկրամոլ, ագահ, անճառակ կյանք էր վարում Ջավենը իր բոլոր օրերում: Նա երեք տարի աթոռը գրավեց մինչև իր մահը:

Գ

ԿՈՐՃԵԱՅԻ ՇԱՀԱԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ՋԱՎԵՆԻ ՏԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐԸ ԴԱՐՁԱՎ

Ապա Ջավենի մահից հետո նրա փոխանակ եպիսկոպոսների գլխավոր դարձավ Շահակ Կորճեացին երկու տարի: Սա հրիատոնյա մարդ էր, բայց չհակառակեց այն կարգերին որ Ջավենն էր դրել ու չվերացրեց: Երկու տարի առաջնորդեց և այս աշխարհից փոխվեց:

Դ

ՄԱՆԱՋԿԵՐՏԱՑԻ ԱՍՊՈՒՐԱԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐՆ ԵՂԱՎ ՇԱՀԱԿԻՑ ՀԵՏՈ

Իսկ Շահակ եպիսկոպոսից հետո եպիսկոպոսների գլխավոր եղավ մի ոմն Ասպուրակ, Աղբիանոս եպիսկոպոսի սերունդից: Սա մի հրիատոնեամիտ, աստվածապաշտ և արդար մարդ էր, որ Խոսրովի արհունիքում առաջնորդում էր, բայց զգեստի վերաբերմամբ սա էլ հետևեց Ջավենի հաստատած կարգին:

Ե

ՓԱՎՍՏՈՍ ԵՎ ՋՈՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս ժամանակներում ապրում էր Փավստոս եպիսկոպոսը, որ Ներսես եպիսկոպոսապետի ժամանակ նրա դռանն էր լինում իբրև գործակալ: Նրա հետ՝ ներհին (խորհրդական)[229] էր և Ջորքը, որովհետև հայրապետի ձեռքի տակ, նրա ներհին խորհրդարանում, տասներկու եպիս-

ամենայն եպիսկոպոսաց, որ ընդ նովաւ. այլ երկոքեան սոքա յայնց երկոտասանից: Եւ էին սոքա ի տեսչութիւն աղօտաճոցացն հաւատացեալ, և յամենայնի էին հաւատարիմք նորա ի ժամանակս նորա, և յամս Խոսրովու և Արշակայ երկուց թագաւորացն բաժանաւորացն, մինչ դեռ ևս կային նոքա կենդանիք:

Զ

ՅԱՂԱԳՍ ԱՌՈՍՏՈՄԱՅ ԵՂԲՕՐ ՓԱՒՍՏԱՅ ԵԳԻՍԿՈՊՈՍԻՆ

Եւ էր եղբայր մի Փաւստեայ եպիսկոպոսի, կրօնազգեաց մենակեաց աճապատակեաց լեառնական սմանչելի: Եւ էին լեալ սոքա ազգաւ Հոռոմ. այլ այրս այս մեծաւ վարեօք շրջէր զամենայն ատուրս կենաց իւրոց: Եւ էր սա բնակեալ յԱյրարատեան գաւառին, և վարէր նա Հոգւով սրբով. շրջէր սա յանապատս մաշկահանդերձ ճարակաւոր ի լերինն մինչև յօր հանգստեան իւրոյ: Ապա հանգեաւ սա. և բերին յանապատէն զմարմին սորա, թաղեցին ի բուն ի գետն հայրապետին Ներսէսի, որում անուն Ամօճ կոչի. և ամի ամի զյիշատակն նորա կատարէին:

է.

ՅԱՂԱԳՍ ԱՐՏԱՒԱՅ ԵԳԻՍԿՈՊՈՍԻՆ ԲԱՍԵՆՈՅ

Յայնմ ժամանակի երևելի էր յեպիսկոպոսս, որ էին, Արտիք եպիսկոպոս Բասենոյ, այր ծերունի պատուական և պիտանի: Սրբութեամբ և ճշմարտութեամբ էր վարեալ. իբրև արժանի եղեալ սա Հոգւոյն սրբոյ՝ մեծաւ զօրութեամբ շրջէր, առնէր նշանս մեծամեծս ամս բազումս: Սա աշակերտեալ մեծին Դանիէլի՝ որ էրն յամս Տիրանայ արքայի, և կենդանի կայր յամսն Խոսրովու արքայի և Արշակայ, երկուց թագաւորացըն Հայոց:

Ը.

ՅԱՂԱԳՍ ՅՈՀԱՆՆՈՒ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ, ԵՒ ՎԱՐՈՒՑ ՆՈՐԱ, ԵՒ ԱՆՄՈՒՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՇԱՂԱՇՈՒՏ ԽՕՍԻՑՆ ԵՒ ԳՈՐԾՈՑՆ, ԵՒ ՆՇԱՆԱՑՆ՝ ՈՐ ՅԱՍՏՈՒԾՈՅ Ի ՎԵՐԱՅ ՆՈՐԱ ԵՂԵՆ·

Այլ Յոհան եպիսկոպոս, որդի Փառիճայ հայրապետի, հիճաւուց. քէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս: Եւ էր սա այր կեղծաւոր, և երե-

կոպոս կային, ճրաց աբոռակից, գործակից և խորհրդակից, բացի գավառների բոլոր եպիսկոպոսներից, որոնք ճրաց ենթարկված էին. բայց այս երկուսը այն տասներկու եպիսկոպոսներից էին: Սրանց էր ճանաչված աղօտաճոցների տեսչությունը, և ճրանք ամեն բանում հավատարիմ էին ճրա ժամանակ, և երկու բաժանված թագավորների՝ Խոսրովի և Արշակի տարիներում էլ ճրանք դեռ կենդանի էին:

Զ

ՓԱՎՍՏՈՍ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ԵՂԲԱՅՐ ԱՌՈՍՏՈՄԻ ՄԱՍԻՆ

Փավստոս եպիսկոպոսը մի եղբայր ուներ (Առոստոմ անունով), մի սմանչելի կրոնասեր մարդ, որ լեռներում ու անապատներում միայնակեացի կյանք էր վարում: Սրանք երկուսը ազգով հռոմ[230] էին, բայց սա նշանավոր էր իր վարքով իր կյանքի բոլոր օրերում: Նա բնակում էր Այրարատյան գավառում, առաջնորդվում էր սուրբ հոգով, շրջում էր լեռներում և անապատներում մաշկեղեն հագած, բանջարեղենով կերակրվելով մինչև իր մահվան օրը: Երբ նա վախճանվեց՝ ճրա մարմինը անապատից բերին ու թաղեցին Ներսես հայրապետի բուն գյուղում, որ Ամոր է կոչվում, և տարեց տարի կատարում էին ճրա հիշատակը:

է

ԲԱՍԵՆԻ ԱՐՏԻՔ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ

Այդ ժամանակ ապրող եպիսկոպոսների մեջ երևելի էր Բասենի Արտիք եպիսկոպոսը, որ մի պատվական ու պիտանի ծերուկի էր: Մեծ ու ճշմարիտ կյանք էր վարում նա, արժանացել էր սուրբ հոգու շնորհին և մեծ զորությամբ շրջում էր և մեծամեծ նշաններ էր գործում երկար տարիներ: Սա եղել էր աշակերտ մեծն Դանիելի, որ Տիրան թագավորի ժամանակ էր ապրում, և դեռ կենդանի էր Հայոց երկու թագավորների՝ Խոսրովի ու Արշակի ժամանակ:

Ը

ՀՈՎՀԱՆ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ, ՆՐԱ ՎԱՐՔՆ ՈՒ ԱՆՄՈՒՏՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԴՈՒՔՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԵՐԸ, ԵՎ ԹԵ ԱՍՏՎՈՒՑ ԽՆԴ ՆՇԱՆՆԵՐ ԵՐԵՎԵՑԱՆ ՆՐԱ ՎՐԱ[231]

Այս Հոճան եպիսկոպոսը—եթե կարելի է ճրան եպիսկոպոս կոչել—նախկին Փառնեն հայրապետի որդի էր[232]: Սա մի կեղծավոր մարդ

վեցուցանէր ինքն զանձն իւր մարդկան պաճող և խորգահանդերձս, մինչ զի մոյգս անգամ ոչ ագանէր, այլ զամառն ետկով պատէր, և զձմեռն կեմով: Եւ յագահութեան առանց չափոյ էր ետղեալ, և ոչ կարէր տալ զագահութիւն իւր ընդ երկիտին աստուծոյ. այնչափ ինչ, զի գիրս անարժանս և չհաւատալիս գործէր:

Զի էր երբեմն դիպեալ 'ի ճանապարհի ուրեմն, զի նստէր նա 'ի գրաստու վերայ և գայր. եկն դիպեցաւ սմա օտար պատանի մի աշխարհական հեծեալ 'ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտւոյ, աղեղնակապարճ զմիջով. լուացեալ գիերս իւր օծեալ մերձեալ, վարսակալ եդեալ 'ի գլուխ իւր, և օդիկ[59] արկեալ գուսովմ իւր. և գայր զճանապարհս իւր. բերևս յաւազակութենէ: Իսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ հասակաւ, և էր գունաւոր, գեացող, մինչ զի 'ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յոհան զձին, մեծապէս զարմացեալ՝ ակնկառոյց լինէր: Ապա իբրև եկն մերձեցաւ հեծեալն մօտ 'ի նա անդր, ապա սպասեալ Յոհաննու՝ բուռն հարկանէր զերասանակաց ձիոյն, և ասէր. էջ դու վաղվաղակի 'ի ձիոյ այտի, զի բանիմ ես ինձ ընդ քեզ: Ասէ այրն. Զի ոչ դու զիս գիտես, և ոչ ես զքեզ, զի՞նչ այն բանիմ իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոյ: Մանաւանդ զի այրն արբեալ ևս դիպեցաւ, և շատ յամառեաց այրն իջանել ի ձիոյն: Ապա բռնադատեաց զնա Յոհան, իջոյց 'ի ձիոյ անտի. և առ տարաւ զնա մեկուսի 'ի ճանապարհէն: Եւ առնն խոնարհել հրամայէր և ասէր. Ջերիցութեան ձեռն դնեմ 'ի վերայ քո: Իսկ նա տայր պատասխանի զանձնէն, եթէ այր աւազակ սպանող չարագործ և խառնագնաց լեալ 'ի մանկութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի այդպիսի իրաց. և այժմ դեռ 'ի նմին գործ կամ: Եւ շատ 'ի վէգ եկեալ յամառէր այրն, և նա ևս չար ևս զնա: Ապա բռնաբար զգեստեալ զայրն, դնէր Յոհան զձեռն իւր՝ առնել զնա երէց. և յարուցեալ հրամայէր լուծանել զճանգոյցս մեկնոցին, և արկանել նմա աղաբողոն: Եւ ասէր. Երթ 'ի գետ քո, և լիցիր դու անդ երէց գեղջն՝ ուստի ես: Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ՛ գեղջէ իցէ: Ինքն Յոհան մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն, և ասէր. Այս ինձ կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ: Իսկ այրն յամառեալ 'ի վերայ ձիոյն չառնոյր յանձն տալ. ապա բռնաբար յինքն հանեալ զձին, և զայրն արձակեաց: Եւ այս ամենայն իրս վասն ձիոյն եղեն:

Ապա այրն թէ ոչ կամօք՝ աղէքողոն արկեալ, գնայր' ի տուն իւր, և երթեալ մտանէր 'ի մէջ ընդհանից իւրոց, ասէ ցկին իւր և ցդստանիս. Արիք յաղօթս կամք: Եւ նոքա ասեն. Մոլիս դու, դե՞ւ ուրեմն հարաւ 'ի քեզ: Իսկ նա ասէ. Արիք կամք յաղօթս, վասն զի երէց եմ: Իսկ նոքա զարմացեալ, մերթ չիկնէին, մերթ ծիծաղէին. մինչև բազում անգամ

էր. մարդկանց աչքում իրան ձևացնում էր պահեցող և խարազնազգյաց, մինչև անգամ կոշիկներ չէր հագնում, այլ ամառը (ոտներին) հեսկ էր փաթաթում, իսկ ձմեռը կեմ[233]: Բայց չափից դուրս բնկղմված էր ագահության մեջ. աստծու անն էլ մոռացել էր ագահության պատճառով այն աստիճան, որ անարժան և անհավատալի բաներ էր անում:

Մի անգամ դեպք եղավ նրան ինչ-որ ճանապարհ գնալ. նա նրստել էր գրաստի վրա ու գալիս էր. նրան պատահեց մի անծանոթ աշխարհական մարդ պատանի հասակով, ձի հեծած, մեջքին սուր կապած, գոտուց թուր կախած, մեջքին աղեղ ու կապարճ, մազերը լվացած, օծած, կոկած, գլխին վարսակալ դրած, ուսին լոդիկ[234] ձգած: Նա գալիս էր իր ճանապարհով, գուցե ավազակությունից: Իսկ ձին, որ նա հեծել էր՝ մեծ էր հասակով, գունավոր և լավ բալող, այնպես որ, երբ Հոհան եպիսկոպոսը հեռվանից ձին տեսավ՝ զարմացավ ու աչքը վրան մնաց: Երբ հեծյալը եկավ ու նրան մոտեցավ՝ Հոհանը նրան սպասելով՝ հանկարծ բռնեց ձիու սանձից և ասաց. «Իսկույն ձիուցդ իջիր, հետդ խոսելիք ունեմ»: Մարդն ասաց. «Ոչ դու ինձ ես ճանաչում, և ոչ ես քեզ, այդ ի՞նչ բան է որ ուզում ես ինձ հետ խոսել»: Մարդը միևնույն ժամանակ հարբած էր և շատ համառեցավ, չկամենալով ձիուց իջնել: Բայց Հոհանը նրան բռնադատեց, ձիուցը ներքև իջեցրեց և ճանապարհից դուրս տեղ հանեց: Այնտեղ մարդուն հրամայեց խոնարհվել և ասաց. «Քեզ երեց եմ ձեռնադրում»: Իսկ նա պատասխանելով ասում էր իր մասին. «Ես մանկությունից ի վեր եղել եմ ավազակ, մարդասպան, չարագործ, խառնակ վարքի տեր և այժմ էլ նույն գործում եմ գտնվում. ես արժան չեմ այդ բանին»: Մարդը շատ համառեց ու վիճեց, բայց Հոհանը ավելի խիստ ստիպեց: Վերջը Հոհանը նրան բռնությամբ գետին գլորելով՝ ձեռքը դնում էր նրա վրա՝ երեց դարձնելու համար և հետո ոտքի կանգնեցնելով հրամայում էր վերևի հագուստը ետ անել և ճգնարականի վերարկու ձգել վրան և ասում էր. «Գնա՛ քո գյուղը և այդ գյուղի երեցն եղիր»: Նա նույնիսկ չգիտեր, թե ո՛ր գյուղիցն էր այն մարդը: Հետո Հոհանը մոտենում բռնում էր ձիուց և ասում. «Այս ձին էլ ինձ աշխատավարձ լինի, որ քեզ երեց ձեռնադրեցի»: Մարդը ձիու համար համառեց, չէր ուզում տալ: Բայց նա բռնությամբ ձին խլեց ու մարդուն ճամբու դրեց: Այս բոլորը նա արավ ձիու համար:

Մարդը ակամայից վերարկուն վրան ձգած դառնում էր տուն, գալիս ներս էր մտնում բնտանիքի մոտ և ասում կնոջն ու բնտանիքին. «Վեր կացեք, աղոթք անենք»: Իսկ նրանք ասում են. «Գժվե՞լ ես, ի՞նչ է, ճո չե՞ս դիվահարվել»: Իսկ նա ասաց. «Վեր կացեք աղոթք անենք, ես երեց եմ»: Նրանք զարմացել էին, որ կարմրում էր, որ

յամառեալ, ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա: Ապա ասէ կինն ցայրն իւր. Ո՞չ դու երախայ էիր, և չէիր մկրտեալ: Ասէ այրն ցկինն իւր. Ապշեցոյց, չետ յիշել. և ոչ ես յիշեցի զայդ ասել ցնա. զիս էրէց արար, և ձին սանձաւ թամբաւ առ և անց: Եւ ասեն ցայրն ընդաճիրն իւր. Յարիցես անդրէն գնասցես առ եպիսկոպոսն, և ասասցես. Մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց: Իսկ նորա յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա. Ես մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց: Եւ ասէ Յոհան. Սափորով միով չուր բերէք: Եւ առեալ զչուրն էարկ զգըլխով նորա, և ասէ. Երթ, մկրտեցի զքեզ: Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ:

ՅԱՂԱԳՍ ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆՈՒ

Երբեմն սոյն Յոհան անցանէր առ այգեօք ուրումն. և էր ժամանակն զայգիսն յառելոյ: Աղաղակէր առ նա այր մի յայգւոյն, և ասէ. Օրհնեա, տէր եպիսկոպոս, զմեզ և զայգիսս: Ասէ Յոհան. Փուշ և տատասկ բուսցի: Ասէ այրն. Ի մարմինդ ձո բուսցի փուշ և տատասկ, փոխանակ զի տարապարտուց անիծանես զմեզ: Եւ եղեն նշանք յաստուծոյ. զի իբրև չոգաւ եպիսկոպոսն Ի վանս իւր, հասին հարուածք Ի վերա նորա, սկսաւ ընդ ամենայն անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել: Եւ մեծապէս շտապեալ անկեալ Ի տանջանս չարաչարս հարուածոց, և Ի մեծ տագնապի կայր առուրս բազում: Ապա յղեաց կոչեաց առ ինքն զայգուդն, աղաչեաց զնա առնել Ի վերայ նորա աղօթս, զի փրկեսցի սա Ի ցաւոցն: Այգուդն ասէր. Իսկ ես ո՞վ եմ, զի կարեմ զոք օրհնել կամ անիծանել. քող թէ զայր եպիսկոպոս: Իսկ նա բռնադատէր զնա յայնժամ. մինչև յառնէր այգուդն կայր յաղօթս և ասէր. Տէր առաւած, դու գիտես՝ զի ես այր մեղաւոր եմ և անարժան, ոչ գիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս. դու փրկեա զիս յայս Ի չարէս, զի ասեն՝ թէ զայր եպիսկոպոս դու անիծեր, և ասեն՝ ձո բանիւ եղև: Զի լաւ էր ինձ մահ. ճանզի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն: Եւ զայս ասացեալ՝ անդէն բժշկեցաւ եպիսկոպոսն, և սկսաւ յամենայն մարմնոցն փուշն Ի բաց թափել, և էր իբրև զփուշ խոտոց. վաղվաղակի յարուցեալ աղաչացաւ յախտէն:

ծիծաղում: Շատ հակառակելուց ետոյ, վերջապես համաձայնեցին նրա ետ աղոթք անել: Հետո կինը մարդուն ասաց. «Ա՛յ որ դու երեխա էիր, դեռ մկրտված չէիր»: Մարդը ասաց կնոջը. «Խելք բոլո՛ր գլուխս, շշկլցրեց, ես էլ մոռացա այդ բանը նրան ասել. նա ինձ երեց դարձրեց ու ձին սանձով, թամբով առավ ու գնաց»: Ընտանիքը մարդուն ասացին. «Վեր կաց, էլի գնա՝ այդ եպիսկոպոսի մոտ և ասա՛, «ես մկրտված չէի, դու ինձ ո՞նց երեց դարձրիր»: Նա էլ վեր կացավ ու գնաց եպիսկոպոսի մոտ ու ասաց. «Ես մկրտված չէի, դու ինձ ո՞նց երեց դարձրիր»: Հոճանը ասաց. «Մի սափորով չուր բերէ՛ք»: Ջուրը առավ ածեց նրա գլխին ու ասաց. «Գնա՛, ահա ձեզ մկրտեցի»: Եվ այսպես իսկույն նրան իր մոտից հեռացրեց:

ԱՂՑՏՆ ՀՈՀԱՆՆ ՄԱՍՈՒՆ

Մի անգամ այս Հոճանը անցնում էր մեկի այգիների մոտով. այգիները հետելու ժամանակն էր: Մի մարդ այգու ներսից ձայն տվեց նրան ու ասաց. «Տեր եպիսկոպոս, օրհնի՛ր մեզ ու մեր այգիները»: Հոճանը ասաց. «Փուշ և տատասկ բուսնի»: Մարդը ասաց. «Փուշն ու տատասկը քո՛ղ ձո մարմնից վրա բուսնի, որ մեզ անմեղ անգը անիծած ես»: Եվ ասածուց նշան երևից. ողովնեան երբ եպիսկոպոսը իր կացուրանը հասավ՝ նա հարվածի ենթարկվեց, նրա բոլոր անդամներն սկսան ծակծկվել. կարծես փշից: Շատ օրեր նա տատասկ ցավերից տանջվելով մեծ տագնապի մեջ էր գտնվում: Վերջը մարդ ուղարկեց, այգեպանին կանչեց և պատչում էր, որ իր վրա աղոթք անի, որպեսզի ցավերից ազատվի: Իսկ այգեպանն ասում էր. «Ես ո՞վ եմ որ կարողանամ մեկին օրհնել կամ անիծել. այն էլ եպիսկոպոս մարդուն»: Իսկ Հոճանը բռնադատում էր նրան այն ասելիքան, որ նա վեր կացավ աղոթքի և ասաց. «Տե՛ր աստված, դու գիտես, որ ես մեղավոր, անարժան մարդ եմ. չգիտեմ ինչպես բնկա այս փորձանքի մեջ. դու ինձ փրկիր այս չարից. ողովնեան ասում են թե դու եպիսկոպոս մարդուն անիծելիր և դա խոսքով այս բանն եղավ: Ինձնից լավ էր մնանեի. չգիտեմ ինչ են ասում իմ մասին»: Երբ նա այս ասաց՝ եպիսկոպոսի իսկույն բժշկվեց. և բոլոր մարմնից սկսաց փուշը գուրս ցատկել. նա նման էր խոտերի փշի: Նա անմիջապես ցավից բժշկվեց և ասաց վեր կացավ:

ԺԲ

ՅԱՂԱԳՍ ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆՈՒ

Սոյն Յոհան եպիսկոպոս որդի Փառիճայ յորժամ երթայր առ բագաւորն Հայոց, խաղակատակ լինէր ընդա. որպէս խաղալով զանձն իւր կրթէր յագահութեան, որում ծարաւեալ պասխեալ փափաքէր, սակայն միանգամայն այն էին նորա: ’ի չորք անկեալ յոտս և ’ի ձեռս սողէր առաջի բագաւորացն, և գոտւոյ գձայն ածէր կառաչելով, զօրէն ուղտու այնպէս փարելով: Ընդ կառաչելն ապա մի մի բան խառնելով առնէր ’ի ձայն կառաչելոյն, ասելով՝ թէ ուղտ եմ, ուղտ եմ, և զարհայի զմեղս բառնամ. դիմ ’ի վերայ իմ զմեղս արհայի, քող բառնամ: Իսկ բագաւորին զմտրհակս գիւղաց կան զագարակաց գրեալ և կնքեալ դնէին ’ի վերայ ողինն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց. և ’ի բագաւորացն Հայոց ստացաւ իւր գեղս և ագարակս և գանձս յուղտն լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն: Այսպիսի էր այրս Յոհաննս կապեալ յընծգութեան և յագահութեան զամենայն աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս գործէր վասն ագահութեան, որ չէր արժան:

ԺԱ

ՅԱՂԱԳՍ ԿԻՐԱԿՈՍԻ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ

Եւ էր եպիսկոպոսն Տայոց Կիրակոս, որ Շահապ անուն կոչէր, այր եշմարիտ աստուածապաշտ ըստ կամացն աստուծոյ, և ուղիղ եշմարտութեամբ առաջնորդէր ժողովրդեանն իւրում. և վարէր գեպիսկոպոսութիւն իւր ըստ կամացն աստուծոյ զամենայն աւուրս կենաց իւրոց:

ԺԲ

ՅԱՂԱԳՍ ՋՈՐԲՈՒԱՋՈՒ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՎԱՆԱՆԴԱՅ

Եւ Ջորբուազ եպիսկոպոս Վանանդայ գաւառին, այր սուրբ պարկեշտ արժանի աստուծոյ, արբեալ Ոգւով սրբով. հրիստոնէութեամբ գնայր գործէր, առաջնորդէր իւրում ժողովրդեանն ըստ կամացն աստուծոյ:

ԺԲ

ՆՈՒՅՆ ՀՈՀԱՆԻ ՄԱՍԻՆ

Այս Հոհան եպիսկոպոսը, Փառեճի որդին, երբ գնում էր Հայոց բագավորների մոտ՝ նրանց խեղկատակն էր դառնում: Խաղալիք դառնալով նա ագահության էր ձգտում, որին աննկագաբար ծարավ էր և (այդ խեղկատակություններ) նրան իբրև միջոց էին ծառայում[235]: Նա բագավորների առաջ ձեռների ու ոտների վրա բնկնելով չորեքթաթ էր տալիս, ուղտի նման կառաչում էր, ուղտի նման խալելով: Կառաչելու ժամանակ մի-մի խոսք էր խառնում կառաչելու ձայնով ու ասում էր. «Ուղտ եմ, ուղտ եմ բագավորի մեղքերը բառնում եմ, վրաս դրեք բագավորի մեղքերը, որ բառնամ»: Իսկ բագավորները գյուղերի կամ ագարակների պարգևագիրները գրելով ու կնքելով դնում էին Հոհանի կռնակի վրա իրենց մեղքերի փոխանակ: Եվ այսպես ուղտ լինելով ու մեղքեր բառնալով նա Հայոց բագավորներից ձեռք բերեց գյուղեր, ագարակներ ու գանձեր: Այսպիսի մարդ էր այս Հոհաննը, որ իր բոլոր կյանքում վարակված էր ագահությամբ ու ժլատությամբ և ագահության պատճառով անարժան գործեր էր կատարում:

ԺԱ

ԿԻՐԱԿՈՍ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ

Տայքի Կիրակոս եպիսկոպոսը, որ Շահապ էր կոչվում, եշմարիտ և աստվածապաշտ մարդ էր, աստծուն հաճելի. նա եշմարիտ ուղղությամբ առաջնորդում էր իր ժողովրդին և իր կյանքի բոլոր օրերում եպիսկոպոսական պաշտոնը կատարում էր աստծու կամքի համաձայն:

ԺԲ

ՎԱՆԱՆԴԻ ՋՈՐԲՎԱՂ ԵԳԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ

Վանանդ գավառի Ջորբվաղ եպիսկոպոսն էլ սուրբ և պարկեշտ մարդ էր, աստծուն արժանի, լցված էր սուրբ հոգով. հրիստոնեաբար էր վարվում ու գործում, իր ժողովրդին առաջնորդում էր աստծու կամքի համաձայն:

ԺԳ

ՅԱՂԱԳՍ ՏԻՐԱՆ ԵՒ ՄՈՎՍԷՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

Եւ էին երկու եպիսկոպոսք Բասենայ գաւառին, Մովսէս և Տիրիկ արք լաւք հրեշտակակրօնք, սուրբ, հաւատացեալք, հրաւիրմանն արժանիք: Առաջնորդէին իւրաքանչիւր ժողովրդոց ի ճանապարհն աստուածոյ զամենայն աւուրս կենաց իւրեանց:

ԺԴ

ՅԱՂԱԳՍ ԱՀԱՐՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Էր գայնու ժամանակաւ Ահարոն եպիսկոպոս ի մէջ Հայոց աշխարհի. այր երեւելի և անուանի, հայ առաքիհի. առաջնորդ իւրոց ժողովրդոց լուսաւորապէս զամենայն աւուրս կենաց իւրոց:

ԺԵ

ՅԱՂԱԳՍ ԳԼԽԱՒՈՐԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԱՍՊՈՒՐԱԿԱՑ

Եւ էր գլխաւոր եպիսկոպոսաց Հայոց Ասպուրակ. այր սուրբ և բարեպաշտօն, երկիւղած յաստուածոյ և ի մարդկանէ: Բայց ոչ ինչ կարէր յանդիմանութեամբ խօսել ընդ ումեք. այլ ինքն ի լռութեան էր և ի համեստութեան ի զգաստութեան ի պարկեշտութեան ի պահս և յաղօթս, յամենայն ժամ աղաչէր զաստուած: Բայց ի հանդերձն զգենոյ՝ ըստ կրօնիցն Ջաւինայ գնայր նա. ագանէր ղամղայեալս և ժապաւինեալս: Բայց էր սա այր խաղցր և խոնարհ, բարեբար և մարդասէր զամենայն աւուրս կենաց իւրոց:

ԺԶ

ՅԱՂԱԳՍ ԳՆԴԱՅ ՍՐԲՈՅ ԵՒ ԱՌԱՔԻՆՈՅ, ՈՐ ԷՐ ԳԼԽԱՒՈՐ ՅԱՅՆՄ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԵՂԱՅԻՑՆ ՀԱՅՈՑ ԱՆԱՊԱՏԱՒՈՐԱՑՆ ՄԵՆԱԿԵՑԱՑՆ ԵՒ ՎԱՆԵՐԱՅԻՑՆ

Եւ էր Գինդս այս ի Տարօն գաւառէ, և լեալ սա աշակերտ մեծի Դանիէլի. և յետ նորա էր գլուխ արեղայից, և վարդապետ միանձանց, և առաջնորդ մենակեցաց, և վերակացու վաներայից, և ուսուցիչ ամենայն անապատաւորաց. և տեսուչ ամենեցուն՝ որ միանգամ վասն սի-

ԺԳ

ՏԻՐԻԿ ԵՒ ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բասենի գավառում երկու եպիսկոպոս կային, Մովսես և Տիրիկ. առաքինի, հրեշտակակրոն սուրբ և հավատացյալ մարդիկ, (աստծու) հրավիրման արժանի: Նրանք իրենց ժողովրդեներին առաջնորդում էին աստծու ճանապարհով իրենց կյանքի բոլոր օրերում:

ԺԴ

ԱՀԱՐՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ

Այդ ժամանակներն Հայոց աշխարհում ապրում էր Ահարոն եպիսկոպոսը, երևելի անվանի, հայ և առաքինի մարդ: Նա իր ժողովրդին առաջնորդում ու լուսավորում էր իր կյանքի բոլոր օրերում:

ԺԵ

ԱՍՊՈՒՐԱԿ ԳԼԽԱՎՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՍԻՆ

Հայոց եպիսկոպոսների գլխավորն էր Ասպուրակ, որ մի սուրբ և բարեպաշտ մարդ էր, աստծուց ու մարդկանցից երկնչող. բայց չէր կարող մեկին հանդիմանական խոսք ասել, այլ ինքը լուռ էր մնում, համեստ, զգաստ ու պարկեշտ, պահեցողությամբ և աղոթքներով: Բայց գգեստի վերաբերմամբ Ջավենի մուծած կարգով էր վարվում. հագնում էր զարգարուն և ժապավիճված զգեստներ: Բայց նա հաղցր ու խոնարհ, բարեգործ և մարդասեր մարդ էր կյանքի բոլոր օրերում:

ԺԶ

ՍՈՒՐԲ ԵՒ ԱՌԱՔԻՆԻ ԳԻՆԴԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅՈՑ ՎԱՆԱՔՈՐԻ ԲՈԼՈՐ ԱՐԵՂԱՆԵՐԻ ԵՒ ՄԻԱՅՆԱԿՅԱՑ ԱՆԱՊԱՏԱԿԱՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐՆ ԷՐ.

Այս Գինդը Տարոն գավառից էր, աշակերտել էր մեծ Դանիելին և նրանից հետո դարձել էր աբեղաների գլխավոր, միայնակյացների վարդապետ և առաջնորդ, վանքերի վերակացու, բոլոր անապատականների ուսուցիչ և առհասարակ տեսուչ այն բոլոր մարդկանց, որոնք աստծու սիրու համար հրաժարվել էին աշխարհից և ընակում էին անապատներում, հաստատվելով քարանձավներում, այրերում և երկրի ծեր-

ոյն աստուծոյ յաշխարհէ էին մեկնեալ, ՚ի յանապատս բնակեալ, ՚ի
ֆառանձաւս ամրացեալ յայրս և ՚ի ֆառածերպս երկրի, և միահան-
դերձ բոկագնացք զգաստացեալք խոտաճարակք ընդաբուտ արմա-
տակերք, զօրէն գազանաց ՚ի լերինս շրջէին՝ լեշկամաշկօք և մորթօք
այծենեօք, նեղեալք տառապեալք և տարակուսեալք, յանապատի մոլո-
րեալք, ՚ի ցուրտ և ՚ի տօք, ՚ի ֆաղց և ՚ի ծարաւ վասն սիրոյն աստու-
ծոյ:

Զայսպիսի ինչ ճամբերութիւն առեալ կրէին յանձինս իւրեանց զա-
մենայն աւուրս կենաց իւրեանց. զի ոչ արժէ աշխարհս բնաւ գնոսա,
որպէս և գրեալ է. զօրենս երամոյ թռչնոց բնակեալ էին սոմա ՚ի ծագս[60]
վիմաց, ՚ի սորս ֆարանձաւաց, անինչք անստացուածք անխնամք,
առանց դարմանոյ՝ ամենևին չտանել մարմնոց: Եւ էր նոցա բուն գլխա-
ւոր սուրբն Գինդ, զի առ հասարակ ամենայն մարդիկ երկրին Հայոց
անուանեալ կոչէին սմա վարդապետ: Բայց էին և ՚ի նոցունց այլ աշա-
կերտք, որ եմանէին իւրեանց վարդապետին և նորա ձեռինն, որոց
անուանք այս են. Վաչակ, Արտոյտ, Մարախ. և Տղատ լեալ էր սոցա
ընկեր: Իսկ առ մեծին ֆաճանայապետին Ներսէսի էր լեալ սարկաւա-
գապետ, և յետ մանուն Ներսէս ՚ի նոյն յառաջին վարդապետսն յանա-
պատաւորաց դասս թևակոխեաց: Առնոյր սուրբ Գինդ և զՄուշէ մա-
նուկ ձեռասուն, հաղորդէր վարուցն մեծին Գնդայ, և այլ բազումք էին
նոցա աշակերտք ճրեշտակակրօնք, զորոց զվարս ոք պատմել ոչ բա-
ւեսցէ:

Եւ էր սուրբն Գինդ լի Հոգւով աստուծոյ. և այք ընդ նմա, ըստ
նմին օրինակի առնէին սոմա նշանս մեծամեծս և զօրութիւնս բազումս
և բժշկութիւնս հիւանդաց յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի: Եւ ընդ
բազում հեթանոս տեղիս շրջէին յաշխարհս հեռաւորս, և ՚ի սփիւռս հե-
թանոսաց դարձուցանէին զմոլորութիւն բազմաց. և զբազում մարդիկ
ածէին ՚ի գիտութիւն կենաց և ՚ի ճանապարհն ճշմարտութեան: Եւ
սուրբն Գինդ լնոյր զամենայն անապատս մեհեկեցօք, և զամենայն
շէնս վաներաւ, և բազում յաշխարհի ողղեալ կացուցանէր կարգս մարդ-
կան զաստուածեղէն կրօնիցն: Բայց սակայն իճին առեալ վիճակ բնա-
կութեան ունէր զանապատն, ուստի բխեալ հոսեն ակունք եփրատ գե-
տոյն: Անդէն բնակեալ ընդ ծագս վիմացն, ուր յառաջու կայեանէն էին
մեծին Գրիգորի առաջնոյ, որում տեղեացն Ոսկիփ կոչեն, ՚ի նոյն ծագս
էր բնակեալ մեծն անապատաւորաց Գինդ: Իսկ սուրբն Մուշէ առ եմա
հանապազորդեալ էր. բայց այլքն զայլ գաւառ շրջէին հրամանաւ Ի-
րեանց գլխաւորին Գնդայ: Եւ սրբոյն Տղատայ կայեանք բնակութեան
էր ՚ի գաւառն Տարօնոյ, չիենալ զիւր եղբայրանցս:

պերում. մի զգեստ ունէին նրանք, շրջում էին բոպիկ ոտներով, զգաստ
կյանք էին վարում, կերակրվում էին խոտերով, բնդեղեններով, ար-
մատներով. գազանների նման շրջում էին լեռներում, մաշկերով և այծի
մորքերով ծածկված, նեղվում, տառապում, չարչարվում էին, անա-
պատում մոլորված, ենթարկվում էին ցրտի և տոթի, ֆաղցի և ծարա-
վի՝ աստծու սիրու համար:

Այսպիսի կյանք նրանք հանձն էին առնում ճամբերությամբ իրենց
կյանքի բոլոր օրերում, ֆանի որ աշխարհս բնավ արժէ չուներ նրանց
համար, ինչպես դրված է: Թռչունների երամների նման նրանք բնակում
էին ժայռերի ծակերում, ֆարանձավների ծերպերում, առանց գույֆի և
ստացվածֆի, առանց խնամֆի և դարմանի, մարմնի մասին ամենևին
չհոգալով: Եվ սրանց գլխավորն էր սուրբ Գինդը, որին Հայոց աշխարհի
բոլոր մարդիկ առհասարակ վարդապետ էին կոչում: Բայց կային նրանց
մեջ և ուրիշ աշակերտներ, որոնք նմանում էին իրենց վարդապետին և
նրա ձեռնասուններն էին, որոնց անուններն են Վաչակ, Արտույտ, Մա-
րախ: Սրանց ընկերն էր և Տղատը[236], որ մեծ ֆաճանայապետ Ներսեսի
ժամանակ սարկավագապետ էր, իսկ Ներսեսի մահից հետո անցավ
մտավ անապատականների կարգի մեջ, հիշյալ վարդապետների մոտ:
Սուրբ Գինդն առնում էր իր ձեռնասուն մանուկ Մուշեղին և հաղոր-
դակից էր դարձնում իր վարքին: Նա ուներ նաև ուրիշ շատ հրեշտա-
կաբարո աշակերտներ, որոնց վարքը պատմել ոչ ոք չէր կարող:

Եվ սուրբ Գինդը և նրա հետ եղողները լցված էին սուրբ հոգով,
նրա նման սրանք էլ կատարում էին մեծամեծ նշաններ և շատ սմա-
չելիքներ, հիվանդներ էին բժշկում Հիսուս Քրիստոսի անունով: Եվ շատ
հեռավոր աշխարհներ էին շրջում, հեթանոսների գավառներում, և շա-
տերին դարձնում էին մոլորությունից, սովորեցնում էին նրանց (հո-
գևոր) կյանքի գիտությունը և ճշմարտության ճանապարհը: Եվ սուրբ
Գինդը լցնում էր բոլոր անապատները միայնակյացներով և բոլոր շե-
ները վանքերով, և աշխարհում մարդկային կյանքի ուղիղ կարգեր էր
սահմանում ըստ աստվածային կրոնի: Նա իր համար բնակության տեղ
էր ընտրել այն անապատը, որտեղից բխում են եփրատ գետի ակուֆ-
ները, այնտեղ նա բնակում էր ժայռերի ծակերում[237], առաջին մեծն
Գրիգորի նախկին կացարանում, որ տեղին Ոսկի էին ասում. այս նույն
ծակերում բնակում էր Գինդը՝ անապատականների մեջ մեծը: Սուրբ
Մուշեն շարունակ նրա մոտ էր լինում, իսկ մյուսները շրջում էին այլ
գավառներում իրենց գլխավորի՝ Գինդի հրամանով: Իսկ սուրբ Տղատը
բնակություն էր հաստատել Տարոն գավառում, որտեղ իրեն համար
եղբայրանոցներ էր շինել:

ԳՐԱԲԱՐ ՏԵՔՍՏԻ ՁԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Յօրինակի միում *ընդ միմեանս*։
2 Յօրինակի միում *՝ի աներոյն*։
3 *՝Ի կրկին* օրինակս *գոյն եւէալ*։
4 Յօրինակի միում *ուժագին*։
5 Յօրինակի միում *Տարօնից*։
6 Յամ օրինակս *կովդայ*։
7 Յերկուս օրինակս *Վահրան, և ՝ի միս այլ Վահրվան*։
8 Յամ օրինակս *գ՘իկունան տէրունիան*։
9 Յօրինակի միում *բնակ տերանց*։
10 Յերիս օրինակս *յՕկնղեաց գաւառն*։
11 *՝Ի չորս* օրինակս *գնացեալք*։
12 Յերկուս օրինակս *խոտորատուր*։
13 Յամ օրինակս *որում անուն էր որդւոյ*։
14 Յօրինակի միում *պէլասպիկ*։
15 Յերիս օրինակս *միահանգոյն*։
16 Յերիս օրինակս *իրաւափառն*։
17 Յամ օրինակս *՝ի մայրաքաղաքացն*։
18 Յերկուս օրինակս *ընդ պատարօք, ՝ի միում ընդ պատարագօք, ի միւսու ընդ պատրուակօք, և ՝ի միս այլ ընդ պատրօք*։
19 Յօրինակի միում *աւերակք*։
20 Յօրինակի միում *տառապասէր*։
21 Յերիս օրինակս *միահաղոյնս*։
22 Յամ օրինակս *հաւատացեալն բանիւք*։
23 Յերիս օրինակս *զի քանի*։
24 Յամ օրինակս *հաւատ*։
25 Յամ օրինակս *ազատ առնէր*։
26 Յերկուս օրինակս *տաղտկապէին*։
27 Յամ օրինակս *քան զմի օր*։
28 Յերկուս օրինակս *Ոխաս*։
29 *՝Ի չորս* օրինակս *սինեքորքն*։
30 Յերկուս օրինակս *միշամուխ լինէր*։
31 Յերկուս օրինակս *Նորշիրական*։
32 Յօրինակի միում *Գոդորնաց, և յայլում Գուդորնաց*։
33 Յօրինակի միում *գոյժ ունել, յայլում ոյժ ունել, և ՝ի միս այլ յոյժ ունել*։
34 *Յօրինակի միում* բռնագրօսեցին։
35 Յերկուս օրինակս *եկիցէ*։
36 Յերիս օրինակս *խաղացեալ*։
37 *՝Ի չորս* օրինակս *մտանել*։
38 Յամ օրինակս և *Համազասպուհի*։
39 *Յերից օրինակս* աճկիտս։
40 *՝Ի միում* օրինակի *ի վայր վարէին*։
41 *՝Ի չորս* օրինակս *Մուշեղն իբրև Գայլ*։
42 Յօրինակի միում *օրինացն*։
43 Յամ օրինակս *՝ի Բաշշանն*։
44 Յամ օրինակս *արանց քաջաց*։
45 Յօրինակի միում *յԱղուանս*
46 Յօրինակի միում *մատենսցես*։
47 Յամ օրինակս *շնորհակալ*։
48 Յօրինակի միում *պատճնազէնք*։
49 Յամ օրինակս *և զոր օրհնէր և զոր անիծանէր*։
50 *՝Ի չորս* օրինակս *այժմ*։
51 Յերիս օրինակս *չևք ընդ*. և *՝ի միում* օրինակի *սրճ Նպիփաճ քնգեր սրթոյն Շաղիտայի*։
52 Յերկուս օրինակս *աշակերտաց*։
53 *՝Ի չորս* օրինակս *աւանդոցն*։
54 Յերկուս օրինակս *ընթրիսն ուտէր*։
55 Յամ օրինակս *Կոն*. ուղղեցաք բառ յաչուդացճ։
56 Յամ օրինակս *յաւագէն*։
57 Յամ օրինակս *գպիտոյսս ոռճկացն*։
58 *Յօրինակի միում միմեանց*։
59 Յօրինակի միում *յօդիկ*։
60 Յերկուս օրինակս *ի ծակս*։

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՏԵՔՍՏԻ ՄԱՆՈՒԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բուզանդարան Պատմութիւնք: Փավստոսի Պատմության հեղինակը մի մակաձուն է կրում, որ գրչության մեջ երկու տարբեր ձև ունի— 1. Բյուզանդ, Բյուզանդացի, և 2.Բուզանդ, Բուզանդացի, Բուզանդարան: Առաջին ձևը պատահում է հենց գրքի վերնագրում— «Փավստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց», և երորդ դարության վերջում, որտեղ գրված է. «Կատարեցաւ երորդ դարզ (տպ. դարմ) Փաւստեայ Բիւզանդեայ մեծ ժամանակագրերի, որ էր ժամանակագիր Յունաց»: երկրորդ ձևը պատահում է պատմության չորս դպրությունների վերնագիրներում չորս անգամ— «Բուզանդարան Պատմութիւնք», նույնպես և Ղ. Փարպեցու Պատմության մեջ երկու անգամ— Փաւստոս կամ Փոստոս Բուզանդացի: Ձանց եմ անում ավելի նոր հեղինակներից:

Ո՞րն է այս երկու գրություններից նախնականը, իսկականը:

Նկատի ունենալով, որ Բուզանդ, Բուզանդարան, Բուզանդացի անհասկանալի ձևեր են, ենթադրում ենք ամենայն հավանականությամբ՝ դեռ հին ժամանակ փորձեր են արել այս անծանոթ բառը ստուգաբանել Բյուզանդ, Բյուզանդացի, նմանահնչյուն բառերով: Այս սխալ ստուգաբանության առաջինը պետք է լինի երորդ դպրության վերջումը դրված տեղեկությունը— «Փաւստեայ Բիւզանդեայ մեծ ժամանակագրի». սակայն այս տեղեկության հեղինակն է ոչ թե գրքի հեղինակ Փավստոսը, այլ նրա Պատմության խմբագրողը, որ այդ ստուգաբանության հիման վրա ավելացրել է «Որ էր ժամանակագիր Յունաց»: Այն ինչ մենք այժմ հաստատ գիտենք, որ Պատմության հեղինակը ո՛չ հույն է և ոչ հունաց ժամանակագիր,այլ զուտ հայ է, հայկական գրության հավատով: Հետաքրքրական է, որ Ղ. Փարպեցին, խմբագրի վերոհիշյալ խոսքից խաբվելով. Փավստոսին կոչում է Բյուզանդիայում ուսած մարդ, և չնայելով սրան. նա հավատարմությամբ երկու անգամ պահպանել է Բյուզանդացի գրությունը: Ուրեմն, իմ կարծիքով՝ վերը հիշված երկու ձևերից սկզբնական՝ նախնականն է Բուզանդ,— սրան,— ացի, իսկ Բյուզանդացի ձևը նրա անճաշող ստուգաբանությունն է:

Ի՞նչ է նշանակում Բուզանդ, Բուզանդարան:

Ես դարձրի ուշադրություն Բուզանդ բառի վրա և գտա նրա մեջ երկու հնդեվրոպական արմատ. առաջինն է սանսկրիտ bhu, bhav, սլավոներենե бы, бу, որոնք նշանակում են լինել, գոյություն ունենալ (быть), այս բառից էլ սլավոներեն և ռուսերեն быт, быль, былина գրույց, առասպել, երկրորդ արմատն է զանդ, որից ունենք կանդիկ, գենդ, գենդերեն: Այս բառն էլ նշանակում է բացատրություն, մեկնություն (изложение, комментарий), այնպես որ ամսողջ Բուզանդ բառը պետք է նշանակել եղելություններ, գրույցների մեկնություն կամ բացատրություն, կամ եթե զանդ արմատը վերցնենք իբրև ներգործակերպ բայարմատ— պետք է նշանակե եղելությունների, գրույցների բացատրիչ՝ մեկնիչ: Ավելի ազատ թարգմանությամբ՝ համապատասխան հայերեն բանաստեղծ բառի. (վերցնելով բան բառի 5 և 7 նշանակություններ ըստ իմ բառարանի) այս բացատրությունից բխում է, որ Բուզանդ բառը ոչ թե անձի հատուկ անուն է, այլ աշուղական կոչում, ինչպես հենց ի վեր սովորություն է եղել, որ մեր աշուղները ընտրել են իրենց համար կոչումներ պարսկական և տաճկական բառերից (Սայաթ-Նովա, Սեյդի, Ջիվանի և այլն). նույնպես վարվել է և անծանոթ Փավստոս հեղինակը, պարսկական բուզանդ բառը ընտրելով իբրև աշուղական կոչում:

Սրանով պարզվում է բուզանդարան բառի նշանակությունը, իբրև բուզանդների ժողովածու, նմանությամբ երգարան, տաղարան այլն բառերի և նշանակում է ժողովածու գրույցների, մեկնության, կամ, ազատ թարգմանության բանաստեղծության: Բուզանդարան բառին կից «պատմութիւնք» բառը, որ չորս անգամ կրկնվում է (Բուզանդարան Պատմութիւնք) իմ կարծիքով Բուզանդարան բառի հայերեն բարգմանությունն է, այսինքն ժողովածու պատմություններ, պատմվածքներ:

Իմ այս բացատրությունը ես համառոտ կերպով ուղարկել էի Թեհրան, իմ բարեկամ հմուտ իրանագետ Ռուբեն Աբրահամյանին, երա կարծիքն իմանալու համար: Նա ինձ նամակով հետևյալը պատասխանեց. «Ձեր Բյուզանդ բառի բացատրությունը շատ սրամիտ է և օրիգինալ: Միայն սանսկրիտ bhu և սլավոնական бу, бы-ից առաջ կարծում եմ պետք է գետնվել բառի իրանական արմատը, bav և ներկայիսը bu (S. Bariholomae. Altirenisches Wovrterbuch, rե. 917) նույն իմաստով: Բուզանդ և ամբողջությունը ճիշտեցնող բառ չգտա... բայց կարծում եմ՝ թե ձեր բացատրությունը հիշատակ հավելումով այնքան գոհացուցիչ է, որ այդ անհրաժեշտ չէ. մանավանդ բառը կազմված է հայկական հողի վրա, ուրեմն նման բառի գոյությունը պարսկերենում պատահիր չէ»:

2. Թե՛ այստեղ և թե՛ բնագրի վերնագրում ավելացրինք «և Արիստակեսի», որ արդարանում է ինչպես գլխի բովանդակությամբ, այնպես էլ «Նոցունց շիրմացն» խոսքով, որ գործ է ածված հոգնակի:

3. Բնագրում «ի սկիզբն», որ ուղղական հոլով է և ցույց է տալիս, թե այս երորդ դպրությունը Պատմության սկիզբն է, այսինքն՝ չկարծվի, թե պակասում են առաջին և երկրորդ դպրությունները: Սրան համապատասխան՝ վեցերորդ դպրության վերնագրում դրված է «Վերջ»: Ըստ այսմ՝ Փավստոսի Պատմությունն սկսվում էր երորդ դպրությամբ և վերջանում էր վեցերորդ դպրությամբ:

4. Գայթակղության քար է դարձել բանասիրության համար այս ֆրազը, որից այնպես է երևում, թե հեղինակը գրել է Սանատրուկ թագավորից առաջ պատահած անցքերի («Ի ինչ մեր Պատմութիւն՝ որ առաջին է») և Տրդատից հետո պատահած անցքերը (=«Ի ինչ որ վերջին»). իսկ միջին ժամանակի, այսինքն Սանատրուկից մինչև Տրդատի անցքերը գրված են ուրիշների ձեռով: Ըստ այսմ դուրս է գալիս, որ Փավստոսի Պատմությունն սկզբից թերի է հասել մեր ձեռը, մի բան՝ որ հակասում է հեղինակի նախընթաց հայտարարություններ «թե այս Պատմությունը բաղկացած է չորս մասյանից»: Այս հարցի մասին մանրամասն տես առաջաբանում:

5. «Կոտակ» պահլավերեն բառ է, kötak, որ նշանակում է «մանուկ, երեխա, փոքր», որ գործ է ածված իբրև մականուն Տրդատի որդի Խոսրով թագավորի: Խորենացին (Գ. Ը.) նրան կոչում է հայերեն բառով՝ Փոքր և շեշտում է նրա կարճահասակ լինելը:

6. «Նշան», ինչպես և «արվեստ», «գործություն», (սովորաբար հոգնակի ձևով) և «սահմանիք» մեր գրաբար մատենագիրները գործ են ածում նշանակելու համար այնպիսի երևույթներ ու գործողություններ, որոնց մենք այժմ հարյուր անուններ ենք տալիս: Հարյուր բառն անգործածական է դասական հեղինակների մոտ: Փավստոսի այստեղ ակնարկած «նշաններ» հիշատակված են Ագաթանգեղոսի մոտ (Քննական տեքստ. էր. 405, 424), որտեղ պատմվում է, թե երբ մարդիկ, մուրհերով աշխատելով չէին կարողանում մեկնաբանել հանդիպած նշանները, Գրիգոր Խաչի նշանով նրանց հիմնահատակ կործանեց ու միանգամայն աննետացրեց կամ հողեհով սպառեց:

7. «Մնհյան» ծագում է պահլավական meh=Մեծ բառից՝ հայերեն «յան» մասնիկ-

կով, ուրեմն նշանակում է Միհրական պաշտամունքի տաճար, որտեղ անշեջ կրակ էին պահում. բացի սրանից՝ բնդհանրապես նշանակում է հեթանոսական պաշտամունքի տաճար, կոստուն, երբեմն նաև բագին: «Բագին» ծագում է պահլավերեն bag = աստված բառից, կոստունն էլ՝ աստվածային պաշտամունքի տեղ, մեհյան, բայց ոչ («-ին» մասնիկով և նշանակում է աստվածային պաշտամունքի տեղ, մեհյանի այն մասը, որտեղ գոներ էին մատուցանում: Ըստ այսմ՝ մեհյանը համապատասխանում է մեր եկեղեցուն, իսկ բագինը՝ սեղանին: Բագ արմատից շատ բառեր կան հայերենի մեջ, որոնց թվում Բագ-ավան, Բագ-արան, Բագայ-առիճն. նույն արմատից են ռուսերեն бог և Բագու հին անունը, որ այսպես կոչվել է՝ դեռ շատ հին ժամանակ այդտեղ հողի երեսին վառվող ճավթի կրակի պատճառով, որը համարում էին Միհրական անշեջ կրակ:

8. Բնագիրն այստեղ ունի «ժողովել ի յիշատակ սրբոցն որ էին անդ, կատարել անդ ամի ամի եօթն անգամ»: Մենք այստեղ հետևեցինք Նորայրի ուղղագրության (Կորյուն, եր. 274) — կատարել անդ ամի յեօթն սաճմի ամսոյ»: Նորայրի այս ուղղումը հիմնված է Ագաթանգեղոսի վրա (եր. 425), որտեղ գրված է. «Կատարել անդ ամ յամէ... զյիշատակ սրբոցն, որ որ եօթն էր սաճմի ամսոյ» (var. ամսոյն սաճմի): Փավստոս անշուշտ նկատի ունի Ագաթանգեղոսի այս վկայությունը, բան որի և պետք է ուղղել նրա մեջ մտած աղավաղություններ:—Սաճմի ամիսը հայոց տոմարի երրորդ ամիսն էր: Շատ բանասերներ նրան ծագեցնում են վրաց «sami» բառից, որ նշանակում է «երեք» (ինչպես մեր հին տոմարի երկրորդ ամսի անունը, այն է «հոռի», ծագեցնում են վրաց «ori» բառից, որ նշանակում է «երկու»): Սակայն շատ պատճառներ կան մերժելու այս առաջարկությունները: Հնչյունների նմանությունը լոկ պատահականություն է:

9. Բնագրում կրկնված է. «ուստի՞ գայ... ուստի՞ եկիր»: Վերջին հարցը մենք փոխեցինք՝ «ինչու՞ ես եկել»:

10. Մենք այսպես հասկացանք բնագրի այս խառն խոսքը— «Եւ եռուն զրուն գիւղն Ոդոյենց, որոյ անունն էր Ոդոյոյ, ուստի եպիսկոպոսն Բասանու, ամենայն սահմանօքն հանդերձ, որ իմն իսկ է յերկրին Բասանու»:— Բասան-ի սովորական ձևն է Բասյան:

11. Բնագիրն ունի «ճարպն զործոցն»: Ուղղեցինք բան Գ. Մ.-ի «ճատուն զործոցն»:

12. Բնագրում գրված է «ազատեալ լինէր Յուսիկ ի բաներոյն»: Վերջին բառը բ՛ իր ձևով և թե նշանակությամբ անտեղի է. հավանորեն նա ազավաղված է «ի յանէրոյն» կամ «ի անէրոյն» բառից, ինչպես ունի մի ձեռագիր: Մենք հետևեցինք այս ձեռագրի ընթերցվածին: Եթե նկատի առնենք հեղինակի գրածը, թե Հուսիկը հրաժարվեց ամուսնական կյանից՝ կնասկանաչ, թե ի՛նչպիսի թախանձանքների, նախատինքների ու ստիպումների ենթարկվեր իր աներանց կողմից: Կնոջ (գուցե վշտահար) Եղերական մահը դադարեցրեց այն թախանձանքներն ու ստիպումները, ուրեմն և Հուսիկն ազատվեց աներոջ կամ աներանց ձեռքից:

13. Հուսիկի այս տեսիլքի մեջ հրեշտակը հոգնակի ձևով է հիշում այն առարինի գավակները, որոնք պետք է ծնվեին Հուսիկի ողջույց: Այս հոգնակի ձևը ցույց է տալիս, որ այստեղ ակնարկվում է ոչ միայն Ներսես Մեծը, այլև ս. Սահակը: Նույնպես այս խոսքը, թե «Քրիստոս բազում լեզուօք փառաւորեսցի ճոխօք»՝ ցույց է տալիս ս. գրի բարգմանությունը և հայոց եկեղեցիներում հայերեն լեզվով ժամակարգության մուծվելը տեղի են ունեցել ոչ միայն Սահակի այլ և մի ուրիշի (Մեսրոպի) ձեռքով: Իսկ սրանք ապացույց են, որ Փավստոսի Պատմությունը գրված է համենայն դեպս Սահակ կաթողիկոսից և Մեսրոպից հետո:

14. Այստեղ մի հատված— «զաւետարանական ընթացսն— և ուժգին խնդրուածովք» առնված է Կարյուրից կամ Ագաթանգեղոսից:

15. Մասնութերը կամ Մասունեաները ապրում էին Կասպից ծովի ափերի մոտ, պատկանում էին սկյութական ցեղին: Շիրակացու Աշխարհացույցում (Հրատ. Սուրբ, եր. 27) հրաշք բնակության տեղը որոշված է Կասպից ծովի արևմտյան ափերի մոտ մինչև Դարբանդ քաղաքը: Նրանց բնական դաշտավայրը կոչված է Վարդանյան դաշտ, որ համապատասխանում է Փավստոսի Վաղենայ դաշտին:

16. Այստեղ հիշված են մի խումբ վաչկատուն (=վրանաբնակ) թափառական ցեղեր սկյութական ծագումից, որոնք ապրում էին Կովկասյան լեռնաշղթայից հյուսիս բնակ հարթավայրում մինչև Կասպից ծովը: Այս ցեղերից մեծ մասը հիշատակվում են Շիրակացու Աշխարհացույցում (Սուրբ, եր. 17), այսինքն՝ թավասպարներ, հեմմատակեներ, իժմախներ, չեղերեր, հիդրերը: Հիշատակված են հռներ, որոնք բնակելիս են եղել մասնութերից դեպի հյուսիս: Եզերամերը թվում է նշանակել եգերացիներ, որոնք բնակելիս են եղել Սվանաս գետի մոտ, Կասպից ծովի ափին (Աշխարհաց. 25): Փոխերը գուցե Աշխարհացույցի փուսխերն են: Գուգարեները և բաղասիքեները գուցե Հայաստանի հյուսիսում բնակ Գուգարքի և Բաղասականքի բնակիչներն էին, որոնք Աշխարհացույցի գրվելու ժամանակ (է դարի երկրորդ կեսում) անցել էին Վրաստանին, գաբերը և գղվարները անծանոթ են մեզ:

17. «Ծղրայր» բառը Փավստոսը հանախ է գործ ածում ավելի ընդարձակ մտքով, արյունակից ազգականի նշանակությամբ: Սանեսանը երկու անգամ կոչված է Խոսրովի եղբայր, որովհետև նա ևս Խոսրովի նման Արշակունի էր: «Նոցա (մասրաց Սանեսան թագավորի առնմի) և հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն էր առնմին բնութեան» (Գ. Ջ.): Մանուել սպարապետը երկու անգամ կոչված է Մուշեղ սպարապետի եղբայր (Ե. Ա.), այն-ինչ հայտնի է նույն Փավստոսից, որ Մանուելի հայրն էր Առաշես, իսկ Մուշեղի հայրը՝ Վասակ սպարապետը: Նույնպես և երբ Մամիկոնյան առնմի կանայք տեսնում են Մերուժանի գլուխը՝ ափսոսանքով ասում են. «Սակայն դա մեր եղբայրն է» (Ե. ԽԳ.), որովհետև Մերուժանի հայրը, Շավասպ Ասծրունին, կին էր առել Մամիկոնյան առնմից (Գ. ԺՀ.), ուրեմն և Մերուժանը Մամիկոնյան կանանց հոռդին էր դառնում, բայց կոչված էր եղբայր: Ռուսերենում էլ брат գործ է ածվում այսպիսի լայն նշանակությամբ, միայն ավելի որոշության համար բառին կցում են двоюродный և троюродный բառերը:

18. Կովկ՝ Կոգովիտ գավառն է Վասպուրականի հանանգում, որ ուրիշ տեղ (Դ. ԺԲ.) անվանված է «ի հովիտն անուանեալ ի Կոգ գաւառին»:

19. «Գուգազ» ծագումով և նշանակությամբ անհայտ բառ, որ գործ է ածում միայն Փավստոս այստեղ և հաջորդ գլխում: Սովորաբար հասկանում են անկումնոտ գորի ամբոխ:

20. Բնագրում գրված է. «Հանել խաշար յաշխարհէն բազում», որտեղ «խաշար» բառը, որ միայն Փավստոսն է գործածել այստեղ՝ անծանոթ է ծագումով և նշանակությամբ: Տեղին հայելով՝ պետք է նշանակի «մշակ, գործավար», ինչպես և մենք բարգմանեցինք բառ Մարի և Աւտ. բառարանի: Կա գավառական բառ խաշար, որ նշանակում է սարփինա (ձող, հեցուկ), որի վրա փաթաթվում են պատառիճ բուսերը: Ըստ այսմ էլ բառարանները այս բառը բացատրում են ձող՝ հեցուկ նշանակությամբ, բայց այս նշանակությունը չէ համարում հետևյալ տեղում:

21. Ըստ Փավստոսի Դվին եղել է բյուրի հատուկ անունը, իսկ բառ Խորենացու (Գ. Ը.) Դվին պատկերն բառ է, որ նշանակում է բյուր:: Այս հարցի մասին տես մեր 283 ծանոթությունը Խորենացու Պատմության աշխարհաբար բարգմանության:

22. Բնագրում «Գուշակ հատանէր առ հասով ի Հեր և ի Ջարաւանդ գաւառս»: Վերջին բառն անշուշտ ազավաղված է, փոխանակ՝ «գաւառէ»: Այսպես էլ մենք բարգմանեցինք:

23. «Մատենիկ գունդ» Պարսկաստանում բնտիր զինվորներից կազմված գունդ, որ կոչվում են անմահական գունդ: Հիշում են ուրիշ հեղինակներ: Բնագրում ճերկա տեղում՝ «Մատենիկ զեղի» տակ պետք է հասկանալ լավ սպառազինված կանոնավոր զորի գունդ՝ հակադրությամբ աճկանոճ զորի-զուգազի:

24. Մենք «ձկնորսարան» բարգմանեցինք բնագրի «ի ձկնատեսանեն» բառը, որ Փավստոսի մեջ մի ուրիշ տեղ (Դ. ԻԲ.) կոչված է «ձկնատեանք» («ի վերայ ձկնատեանք»): Երկու ձևն էլ կասկածելի են թվում: Հեղինակը նկատի ունի Առեստ ավանի մոտով հոսող գետը, (այժմ կոչվում է Բերկրիի գետ և ավելի հաճախ՝ Բենտի մաճու) Վանի լճի հյուսիսում, որտեղ լճից ձկները առուների ուղեկցությամբ գնում են ձկնկիթ բախելու, որի ժամանակ էլ նրանց որսում են մեծ բանակությամբ և աղելով վաճառքի են հանում— Վանի հայտնի տառեխը: Այսպես է և մինչև այսօր: «Արճունի» բառը ցույց է տալիս, որ այդ ձկնորսարանը Աշշակունի թագավորների սեփականությունն էր, որոնք որոշ տուրք էին ստանում որսալու իրավունքի համար:

25. Բնագրում գրված է. «Որ էին բիւրաւորքն և հազարաւորքն»: Ամեն մի նախարար, սահմանված օրենքով, պահում էր յուր կալվածքում հեծելազորք, որոնց հավաքում էր իր կալվածում ապրող մարդկանցից, պահում էր իր ծախսով և որոնց քանի էր առաջնորդում պատերազմների ժամանակ, երբ նրան հրավիրում էր թագավորը: Համաձայն մի հին հիշատակարանի, որ բերում է Ադոնցը (Юстиниан, եր. 251 և հայ.) Շահխատունյանի «Ստորագրություն կարողիկե էջմիածնի» գրից (Բ. 59), Սյունյաց իշխանը 19400 հեծելազորք ուներ, Կաղմյան իշխանը 13200,— սրանք «բյուրավորներն» էին, հետո գալիս էին տասներեք իշխան, որոնք ունեին 1000 և ավելի հեծելազորք սրանք էլ «հազարավորներն» էին: Սրանց հաջորդում են շատ ուրիշ իշխաններ 500–50 հեծելազորքով: Սրանցից դուրս էր արճունի կամ արճունական տան, այսինքն Աշշակունի թագավորների սեփական՝ իրենց կալվածներից ժողոված զորք, որի հանակը ճիշտ որոշված չէ, համենայն դեպս գերազանցում էր որևէ իշխանի հեծելազորից. և մի բանի կողմնակի ցուցմունքների վրա հիմնվելով կարելի է որոշել 30—40000 հեծյալ: Անա՝ այս «բյուրավոր և հազարավոր» իշխաններին յուր մոտ պահից խոսքով, թույլ շալով արճունական զորքի հետ պատերազմի գնալ. Խատաբենի դավաճանությունից խրատվելով, ու կասկածելով մի գուցե պատերազմի ժամանակ այդ իշխանները իրենց զորքերով թշնամու կողմն անցնեն: Այլ նրանց զորքերն էլ արճունական զորքերի հետ միասին գնում են Վաչե սպարապետի և Վահան Ամատունու հրամանատարության տակ, որոնց հավատարմությանը հոսքով միանգամայն վստահ էր:

26. Բնագրում գրված է. «Ոչ տային անխտիր առչաւել, աւերել գերիիրեն Հայոց և ոչ նայել»: Վերջին բառերը դուրս ձգեցինք իբրև կասկածելի:

27. Բդեշխ իրանական բառ է, ունի բազմաթիվ ձևեր, հայերենին ամենամոտ ձևն է պահլավերեն bitaxš (հունարեն Βιτάξης), որ նշանակում է տեղակալ, փոխարկ: Հայաստանում բդեշխները նախարարներից բարձր կալվածատեր ազնվականներն էին, մի տեսակ մանր թագավորներ իրենց բազմություններով, բայց Տիգրան Մեծի ժամանակ նահանջել են Աշշակունի թագավորների գերիշխանությունը: Ջորս բդեշխներ կային—Անձևացեղտաց, Սոփաց, Աղձնյաց, Գուգարաց, որոնց բդեշխությունները (երկիրները) բնակում էին Հայաստանի սահմանագլուխներում, որոնք իբրև թե համարվում էին սահմանապահներ: (Արմ. բառ., Ադոնց— Юстиниан, նաև. 70 Մ. հար. աշխ. բարգմ.):

28. «Գահ» պարսկերեն բառ է և նշանակում է տեղ: Այս բառով ի միջի այլոց նշանակում է այն տեղը կամ բարձր, որտեղ նախարար նստում էր բազավորական սեղանի շուրջը, նայելով իր ավագության: Տեղերի դասավորությունը խստիվ սահմանված էր. այն

ցուցակը, որի մեջ նշանակված էին նախարարների տեղերը՝ պարսկական բառով կոչվում էր գահնամակ (=գահերի ամ տեղերի գիր, ցուցակ) և վավերացած էր պարսից բազավորի կողմից: Այս գահնամակի պատճենը հասել է մեզ և հրատարակված է մի հանի անգամ: (Այդ ցուցակը և նրա մասին գիտելիքները տես Խոր. բարգմ. 338 ծանոթության մեջ): Այստեղ համառոտ հիշեցնենք, որ այս գահնամակում նշանակված են յոթանասուն նախարարական տան տեղ: Այստեղ չէ նշանակված չորս բդեշխներից և ոչ մեկի տեղը: (Հինգերորդ գահը հատկացված է Սոփի տիրոջը— «Շահապե Սոփաց տէր», բայց սա Մեծ Սոփի բդեշխը չէ, այլ Փոքր Սոփի տերը՝ նախարարը): Սրա պատճառն այն է, որ բդեշխները անմիջական հպատակներ չէին հայոց բազավորներին, ինչպես նախարարները, այլ ավելի անկախ էին: Եթե նրանք բազավորի սեղանին ներկա լինեին՝ բոլոր նախարարներից բարձր տեղ կզբավեին: Այս է նշանակում հեղինակի խոսքը, թե Աղձնյաց մեծ իշխանը... արճունական սեղանի չորս բարձրագույն գահերից մեկն է զբավում:

29. Բնագրում գրված է «յնց յինեն էր»: Մենք ենթադրաբար բարգմանեցինք. «որ իր կալվածին կից էր», բայց կարող է նշանակել նաև «որ իր պաշտպանության տակ էր», կամ «ճարված էր իրենց»:

30. Այստեղ Փոքր Սոփը կոչված է Սոփ Շահնի. Ֆիչ ճետռ (Դև. ժՒ.) կոչված է իր կալվածին կից էր», բայց կարող է նշանակել նաև «որ իր պաշտպանության տակ էր». Շահունի, իսկ (Դ. ԻԳ.) կոչված է Սոփ Շահունց. ամեն անգամ այս Փոքր Սոփը տարբերելով Մեծ Սոփից: Թվում է. որ այս Շահնի կամ Շահանի անունն էր, որ գահնամակում. (տես նախորդ ծանոթությունը) կոչված է «Շահապե Սոփաց տէր»:

31. Բնագիրն այստեղ աղավաղված է,— «Յակոր. փոխանակ ապգաւն պարսիկ կոչէր»: Բանասերներն ուղղել են— Յակոր որդի Աճակա Զգաւն (Զգօն) պարսիկ կոչէր»: Մենք բարգմանեցինք այնպես՝ որպես թե բնագրում գրված լիներ— «Յակոր որդի Աճակայ Պարսկի որ Զգօն կոչէր»:— Հակոբ Մծբնա հայրապետը նշանավոր նկնդեցական հայերից մեկն էր. որ մասնակցել է Նիկիո առաջին տիեզերական ժողովին, վախճանվել է 337 կամ 338 թվին: Մի գրվածք կա նրա անունով, որ կոչվում է Զգօն. որ հայերեն է թարգմանված դեռ հինգերորդ դարում: Այս գրվածքը ներկա բանասիրությունը վերագրում է պարսիկ Ափրահատ Եպիսկոպոսին: Այս Հակոբ Եպիսկոպոսը մեծ ժողովրդականություն է վայելում հայ ժողովրդի մեջ. նրա անունով կան շատ նկնդեցիներ. ի միջի այլոց նրա անունն էր կրում Թրթիսթի վանքի մայր եկեղեցին. որի տեղում այժմ դրոշոց է շինված:

32. Փավստոս այս գլխում երեք անգամ գործ է ածել Սարարադ ձևը: Ուրիշ հեղինակների մոտ էլ 3–4 անգամ պատահում է այս Սարարադ ձևը: Իսկ ուրիշ բազմաթիվ տեղերում նրա տապաճի իշած տեղը կոչված է Աւարատ. ս. գրի հայերեն թարգմանության մեջ գրված է «ի լերինս Աւարատայ» (Սենեք. Բ.4). Հունարեն բնագիրն էլ ունի Ἀραρατ Ուրեմն Սարարադ ձևը կարող է կասկածելի լինել. սակայ Լևոն երկու կից բառերի սխալ առանումից. (Հին ժամանակ երկաթագիրներում բառերը իրար կից էին գրում ՀԱՐԻՆԱՒԱՐԱՐԱՏՅԱՅ առանել են «ի լերինս սարարատայ». փոխանակ «ի լերինս Աւարատայ»: Բայց այդ լեռան Սարարադ կամ Աւարատ կոչվելը երկրագրական նշանակություն ունի. կարևոր այն է, որ սկզբներում այդ լեռան տակ չեն եղել նախանալիս այժմյան Աւարատ = Մասիս լեռը. այլ մի ուրիշ լեռ կամ տեղ Տարոնում. ինչպես պարզ վկայում է Փավստոսը. այսպես էլ նախագել են ուրիշ հեղինակներ: Տապանակիր լեռ փնտրելու պատիվը Մասիսին անցավ միջին դարերում. նայնի չէ. թե երբ խոսքից և ի՞նչ հիման վրա. բայց այս կարծիքը հետզհետե բնդհանրացավ և հաստատվեց այն աստիճան, որ երբ Նախարհնա Ք. կայսրությին իր կյանքի վերջին տարիներում ժողովրդից Հա-

յաստանի թագավորություն ստեղծել և Գոտյամկինին թագավոր նշանակել՝ պատրաստվեց Հայաստանի գերբը, որի կենտրոնում գտնվում էր Մասիս սարը վրան Նոյի տապանով: Այնուհետև ավելի ևս ընդհանրացավ այս կարծիքը: Ինչպես որ Կորդուքի լեռներից Մասիսին անցավ տապանակիր լեռան պատիվը, այնպես էլ Փավստոսի հիշած աղբյուրը Սարատսի վրա՝ փոխադրվեց Մասիսի վրա: Այստեղ մի աղբյուրն հոշակվեց «ստուր Հակոբա աղբյուր» անունով, որի հետ կապված է հավատալիք, թե այդ աղբյուրի մատ ապրում են տարմա հավեր, մարեխների բշեամի, և երբ մարեխով վարակված մի տնից գալիս են այդ աղբյուրից չուր են վերցնում, վարակված տեղը տանում՝ բոլոր նրանք էլ չրի հետ գնում են և մարեխների վրա հարձակվելով անխնա կոտորում են: Այդպիսի պատվիրակություններ՝ ս. Հակոբի աղբյուրից չուր տանելու համար հիշվում է Գառամության մեջ մի հանի անգամ, սկսյալ տասնևհինգերորդ դարից:— S. նաև Ալիշան. Այրարատ, 468 և հաջ., Մատիկյան հոդված Վիենացի հնուշարձանում եր. 432—435:

33. Այստեղից սկսած մի ընդարձակ հատված, մինչև «զնանապարհաց աւետարբերաց» առնված է Կորյունից՝ մեծ վարիանտներով, այն տարբերությամբ, որ ինչ որ Կորյունը ասում է Մեսրոպի մասին, որ աստվածատուր գրելով գալիս էր Հայաստան՝ այստեղ վերագրված է ս. Հակոբ հայրապետին, որ աստծուց շնորհված տապանի կտորով վերադառնում էր հայրենիքը:

34. Այս կտորն էլ մինչև «երկրածին ազգերին» նույնպես Կորյունից է առնված, բայց մի հանի բառ բաց թողնելով աղավաղված է:

35. Բնագրում գրված է «ի դանիէ միջէ», որ անշուշտ աղավաղություն է: Մենք ուղղեցինք՝ «ի գանէ միջէ», և բառ այսմ թարգմանեցինք: «Գան» բառը նույն նշանակությամբ (=լեռան կատար) գործ է ածել հեղինակը նաև Դ. ՍԲ. գլխում—«ի վերայ բարձր գանուն fարին»:

36. Ակնարկություն Քրիստոսի պատվերի վրա, որ տվեց առաքյալներին, երբ նրանց ուղարկում էր fարոզելու. «...և ով որ ձեզ չընդունե կամ ձեր խոսքերին չլսե, երբ այն հաղաքից դուրս գալու լինեք՝ ձեր ոտներից փոշին թափ տվեք: Ուղիղ եմ ասում ձեզ, սոդոմացոց և գոմորացոց երկրին ավելի հեշտ կլինի դատաստանի օրը՝ քան այն հաղաքին» (Մատթ. ժ. 14, 15):

37. Փավստոսը միևնույն անձը երբեմն կոչում է զորավար, երբեմն սպարապետ և երբեմն այս երկու բառով միասին: Սպարապետ պարսկերեն բառ է (նին պարսկերեն spa*d*pati, պահլավերեն spa*h*pat, նոր պարսկ. sipah*b*d), որ նշանակությամբ համապատասխանում է կես-հայերեն և կես պարսկերեն զորավարի՛ն: Բայց հայերենում այս երկու բառը թվում է թե մի նուրբ տարբերություն ունեն: Սպարապետ կոչվում էր այն անձը, որ սպարապետության ժառանգական իշխանության կրողն էր տվյալ ժամանակ, իսկ զորավար կոչվում էր այն անձը, որ իրապես զորքի ընդհանուր հրամանատարն էր տվյալ ժամանակ: Այսպես տեսնում ենք, որ երբ Վաչեն սպանվում է պատերազմում նրա փոխ երեխային Արտավազդին սպարապետության իշխանությունն էին տալիս իբրև Մամիկոնյան տոհմի ժառանգական իշխանություն, իսկ հանի որ նա փոխրանկապակ լինելով դեռ չէր կարող զորքին առաջնորդել՝ զորավարության գործը հանձնում էին Արշամիր Կամսարականին և Անդովկ Սյունիին, որոնք Մամիկոնյան տուն փեսաներն էին, ուրեմն իրև մի տեսակ խնամակալներ փոխրանկապակ սպարապետի վրա:

38. Բնագրում գրված է «ի վերայ բանակի տեառն աշխարհիս»: Մենք ուղղեցինք՝ «ի վերայ բնակի տեառն աշխարհիս» և բառ այսմ թարգմանեցինք:

39. Բնագրում գրված է «ծանուն ճօր իւրոյ» որ սխալ է: Հար անունն էր Վաչե, բացի սրանից՝ երեխաներին դնում էին պապերի անունը և ոչ թե հայրերի: (Սկզբնապես

ունել է «ճաւուճ», որ աղավաղելով դարձել է «ճաւրճ»: Նույն աղավաղությունը կատարվել է և ուրիշ տեղ: Տե՛ս ծանոթ. 11): Ուստի մենք ուղղեցինք «Հաւուճ իւրոյ» և թարգմանեցինք «Գալի անունով»:

40. «Հազարապետը» բնպես զինվորական պաշտոնյայի նշանակություն ունի քան կազմության, բայց բոլորովին ուրիշ պաշտոն էր վարում. նա երկրի տնտեսության և հարկերի գլխավոր տեսուչն էր, ուստի և նրա իշխանությունը տարածվում էր շինականության— գլխավոր հարկատու դասակարգի վրա: Փավստոսը նրա պաշտոնը կոչում է «աշխարհատես խնամակալություն» և այս խնամակալության պատճառով նրան արտում է «շինականաշէն» մակդիրով (Դ. Բ.): Փավստոսի ասելով՝ այս պաշտոնն ևս ժառանգական էր և պատկանում էր Գնունյաց տոհմին:— Գարեգինտանի մեծ հազարապետերի պաշտոնն և իրավասությունը տարբեր էին և ավելի ընդարձակ քան Հայաստանում (տ. Ադոնց. Юстиниан, եր. 445–6):

41. Այստեղ բնագիրն աղավաղված է. գրված է «զմերոյ տոհմի ազգի իշխանն Սահառուճաց», որտեղ աչքի է ընկնում «տոհմի ազգի» անտեղի կրկնությունը. և «մեր տոհմի» իշխանի անվան բացակայությունը, մինչդեռ բոլոր մյուս տոհմերի իշխանների անունները բերված են: Տարակույս չկա, որ «մերոյ տոհմի ազգի» աղավաղություն են Սահառունյաց իշխանի պակասող անվան: Ամենի այս աղավաղությունը վերականգնում ենք՝ «Մերոյ» բառը կարդալով «Տիրոց», ուրիշները երեք բառը միասին կարդում են «Մերոնդազատ», «Մեծեր-Առամ» և այլն: Մի հանի բանասերներ (առանց թվում և Գելցերը), ուշադրություն չդարձնելով հիշյալ աղավաղության վրա՝ այդ խոսքերից հետևցրել են, թե Փավստոսը՝ «Մեր տոհմ» է կոչում Սահառունյաց տոհմը, ուրեմն իրեն ևս այդ տոհմից էր, ուրեմն և հայ էր: Այս հարցի մասին տես առաջաբանում:— Նույն տեղում, մի առ առաջ բնագիրն ունի «Մաղխազուհեաց» անսովոր ձևը, որ մենք փոխարկեցինք սովորական «Մաղխազուհիւ» ձևով, քան Նորայրի առաջարկության:

42. Գամիրը կապադովկիան է:

43. Տափերի կամ Տափերական կամուրջը Արտաշատ քաղաքի կամուրջն էր Արաքսի վրա: Տափեր բառը թվում է թուն ժողովրդական բառ՝ տափ բառի հոգնակին, որ նշանակում է նաև հարթավայր, դաշտ տեղ, ինչպես՝ Փավստոսն էլ նշանակում է՝ «Ընդ առաջ ելանէր նմա ի դաշտն յայնկոյս գետոյն Տափերն. կամրջի»:

44. Մենք մատավորապես փոխադրեցինք բնագրի այս երկարաբան բայց մութ խոսքը— «Հարցն եմանելով ի մանկութեան իմոյ տարիս, զծերութեան, պատիւն պատուական պատուականութենէն զնանեցուոյ գործոյ գերազանութենէն անուշութենէն (կամ ուշութենէն), իբրև զծագիկ ի դիտաւորութենէն հանել, վասն նշմարտութենէն մինչ ի մահ մարտնչէր»:

45. Բնագիրն այստեղ աղավաղված է.— «Քանզի ոչ էին թե որպէս այլոց ազգացն... հաւատացն աստուածպաշտի հարազութենէն...» Մենք ուղղեցինք— «Քանզի ոչ թէ որպէս այլոց ազգացն... հաւատացն աստուածպաշտ բանիւ», և բառ այսմ փոխադրեցինք:

46. Եպիսկոպոսները (հուն. Επισκοπος վերատեսուչ, վերադիտող) հոգևոր անուշներ կամ առաջնորդներ էին թեմերի, ընդարձակ մասով՝ նաև աշխարհների, այժմյան տերմինով՝ թեմի առաջնորդներ: Մինչ նախարարական Հայաստանում ամեն մի իշխանական կալված մի հատուկ եկեղեցական թեմ էր կազմում և ուներ տեփական եպիսկոպոս: Իսկ հռոմիսկոպոսները (հուն. Χωρεπισκοπος — վերատեսուչ գավառի կամ գյուղի) գավառների կամ գյուղերի առաջնորդներն էին՝ եպիսկոպոսական կամ հանձնական աստիճանով, թեմի առաջնորդին ստորադրյալ: Դանիել-հռոմիսկոպոսին նետես կոթողիկոսը, գնահատելով նրա հավատարմությունն ու ընդունակությունները՝ հանձնել էր

ուրիշ պաշտոնեներ էս, որոնց մասին գրում է Փավստոսը:

47. Բնագրում գրված է «վերակացու և գլխաւոր նկնդնաց գաւառին Տարօնոյ»: Գաւառական և նորայր «նկնդնաց» բառն ուղղում են նկնդնցաց, որ միանգամայն բնական է և որին մենք հետևեցինք:

48. Բնագրում «մաշկանափարիճ»— մաշկեղեն ճոպարով: Նափարոք ճուճարեն բառ է, որէ գավառականից առնված կամ սառեսառից անցած հայերենի է և նշանակում էր պզրճապես՝ վերարկու, չուրչար:

49. «Անապատ» պահլավերեն բառ է, anāpāt =ոչ ապատ, ոչ շեն, և նշանակում է անշեն, անմարդաբնակ (տեղ), հակադրությամբ ապատի-շենի, բնակելի տեղերի: Այս ճախճախան նշանակությամբ էլ ճանախ գործ է ածում Փավստոսը անապատ բառը իբրև մենակյաց:

50. Բնագրում «նորին արեամբն» որ կարող է վերաբերվել Քրիստոսի, բայց այս դեպքում պետք է լիներ «իւրով արեամբն»: Ուղղեցինք «նոցին արեամբն», այսինքն Հռիփսիմյան հանճառուհիների:

51. Այստեղ բաց թողնենք երեք տող, որ խառնակ և աղավաղված լինելով անհասկանալի է: («Եւ բառ ձերում –երկնեցին զնոսա դարձեալ»):

52. Բնագրում գրված է՝ «Ջիա՞րդ եղեց բարեխօս վասն այնոցիկ, որ նուաճեցինն», որտեղ «նուաճեցին» բառի սովորական նշանակությունը չէ նարմարում (զուցե աղավաղված բառ է): Մենք ենթադրաբար բարգմանեցինք «ստամբակեցան»:

53. Բնագրում գրված է. «Որ գաւառին Արծնեաց և Մծոց Ծոփաց ի նմանէ իսկ վարդեպետեալ էր»: Վերջին բառը մենք ուղղեցինք՝ «վարդապետ առեալ էր» և բառ այնմ բարգմանեցինք:

54. Մարդպետ, Հայր: «Մարդպետ» բառը մեր հին հեղինակները գործ են ածում «ճերմիճապետի» նշանակությամբ և նրա պաշտոնը կոչում են մադպետություն, մարդպետական իշխանություն: Այս բառը Ն. Ադոնցի կարծիքով («Юстиниан», եր. 417) առաջ է գալիս Մարզ հատուկ անունից, որ պարսկական մի ավազակաբարո ցեղի անուն էր, որ Հայաստան արշավելով պարապում էր ավազակությամբ: Նրանց բնակած տեղը կոչվեց (Մարզաստան և նրանց ցեղապետը կոչվեց մարդպետ: Այս մարդերին հիշում են նաև հին հույն և լատին հեղինակներ կոչելով Μαρδοι Mardi Որ մարդպետները ճերմիճապետի պաշտոն ստացան՝ մարդպետ բառն էլ սկսեց գործածվել ճերմիճապետի նշանակությամբ: Ադոնցի այս բացատրությանն բնդունում է և Արմ. բառարանը.— «Հայր» հատուկ անուն չէ, այլ ամեն մի ճերմիճապետի հարգական կոչում (ինչպես տանիկների մեջ էլ ճերմիճապետը կոչվում էր baba): Այնպես որ հայր մարդպետ բառերից ոչ մեկը մի անձի հատուկ անուն չէ, այլ ճերմիճապետի պաշտոնի հարգական անուններ, և անխտիր գործ է ածվում բոլոր ճերմիճապետների համար: Միայն մի ճերմիճապետի հատուկ անուն է պահպանել Փավստոսը— դա Դրաստամատ է, որին հիշում է ևս Ե. Է. գլխում:

55. Բնագրում գրված է. «Եւ ոչ մի ոք ի բազաւորացն Հայոց ոչ ոք գտանէր նոցա բարեկամ», որի մեջ «Հայոց» բառն անառարկելիորեն աղավաղություն է: Այս բառի տեղ մենք ենթադրեցինք «այլոց» բառը և բառ այսմ բարգմանեցինք:

56. Վարձակ պահլավերեն բառ է varzak, որ նշանակում է՝ խնդությունների կամ բառնալների ժամանակ երգող, նվագող կամ պարող կին:— Գուսան նույնպես պահլավերեն բառ է, gosau, որ նշանակում է երաժիշտ, երաժշտություն:

57. «Վարճագառա» բառը միայն Փավստոսն է գործածել այստեղ: Հայկական բառարանը չունի այս բառը: Առձեռն բառարանը բերում է և մեկնում՝ «կարիճ ու օձ,— չարաճճի», որ միանգամայն սխալ է: Ուրիշ տեղ այս բառի բացատրությունը չկա:

Գիտում է թե կարճագառնները սառիճ ասպիճանի ազատներ =ազնվականներ էին, ազատների հետևյալ ազգականներ, որոնց սակայն դեռ կալվածների տերեր էին: Հայոց գյուղը այս կարճագառների սեփականությունն էր, Հայոց անունը և իր հետ Հայերենացի բառը հիշեցնում են ս. Մեսրոպի ծննդավայր Հայկական գյուղը, և վերկը գուցե նրա հետ վարդանի փաղաքշական կրճատ ձևն է:

58. «Ճարտուկ» պահլավերեն բառ է cattīk պարսկերեն carta, որ նշանակում է սեի զարնող գույն, կարմրավուն (ձի), կարմրի զարնող, մութ շագանակագույն (Աբմ. բառ.): «Ճանճկենն», ճանճի բառից, նշանակում է ճանճի նման մանր սև կետեր ունեցող, խայտաբղետ ճանճանեխուկ:

59. «Քաղաք» բառը բացի սովորական նշանակությունից Փավստոսի մեջ նաև գործ է ածվում նաև պարիսպ, պարապատ տեղ նշանակությամբ: Այսպես է և առաջին город բառի հին նշանակությունը: Ըստ այսմ Աղիաբոս քաղաք պետք է նանակել՝ պարապատ, որատեղ, նման Խորովակերտին: Քանի որ այս տեղը գանվում էր Նպատ-նուիիում, Տարոնի նահանգում՝ ապա Մասիսը չէր կարող լինել Այրարատյան գաղափար հայոնի Ազատ—Մասիս, այլ ինչպես կարծում է Էփրկյան («Քնաշխարհիկ» բառարան, եր. 101) Սիփան — Մասիս՝ մեծ և գեղեցիկ լեռը:

60. Փավստոս առջեն պատմել էր (Գ. ԺԸ.), որ Մամիկոնյան գարավարները, Արտավազդ և Վասակ, Տիրանի հետից խլեցին երկու փարատասակ երեխաներ, Արձրոնիից և Ոշտունյաց առնի վերջին մնացորդներին, և նրանց առնելով գնացին, ապահովեցին իրենց Տայք կալվածի սահմանները, և այնհետև երկար տարիներ չէին խռովում հայոց գործերին: Այս հանգամանքի վրա է ակնարկում այստեղ Փավստոս՝ ասելով թե խռովել հետացել էին:

61. Առաբատանը սահմանակից էր Գարակատանին և նրանից բաժանված էր Ձիգրիս գետով, որի ձախ ափին շինված էր Գարսից մայրաքաղաք Ձիսրանը, իսկ ալ ափին Հեմիսալար բաղարը, և այս երկու բաղաքները միացած էին իրար հետ նավակամուրջով (գոմով): Ուստի այստեղ Առաբատանի տակ պետք է հասկանալ Ձիսրան մայրաքաղաքը:

62. Այս գործիքը հիշում է Ագաթանգեղոս (եր. 462). նրան հիշում են բացի Փավստոսից և ուրիշ հին հեղինակներ: Ագաթանգեղոսի վկայության վրա հիմնված է Դշոմից բառերը, որ Կիլիկյան շրջանում սարված մի անվավերական կեղծիք է:

63. Մաշկապատճեն, գրված նաև մաշկապատան, մաշկապատճեն և այլն, պահլավերեն բառ է, maskapatcen (մաշկապատճեն) և նշանակում է պարսից բազավոր կանանոցի վրանը:

64. Սառատ Փոքր Հայքի բաղաք էր Բայբերդից ոչ հեռու: Այժմ Սառատ գյուղ է: (Ագաթանգ. Юстиниан, 62):

65. Բնագրում գրված է. «տալիս գիսագոտ բանակիմ... և գրամբիշն և գրանական քեզ հանին»: «Բանական» ստուգաբանության է, ասորերեն «բանանական», որ պահլավերեն հոգնական ձև է banant=տիկին բառի, ասորական առոգիչ անգամ առաջարկել է Կարիեր: Աբմ.: բառ.:

66. Բնագրում գրված է. «Ապա գաւանէր ճռավարսակ բազաւոր Ցաճաց Վռաչէս»... գաւաներ-ը, իբրև սովորության ասդնցինք՝ գոր:— Այս առաջին վկան է, որ Փավստոսը հիշում է պարսից և հռոմ բազավարներին միաժամանակ և երևում է հռոմում իր խորը ժամանակագրական գիտելը: Ներեթ պարսից բազավարը բազավարել է 296—302 թվերին. հռոմաց Վռաչես կայսերը բազավարել է 364—374-ին՝ ուրեմն երկու ժամանակակից չեն եղել և չէին կարող իրար հետ պատերազմել: Ուշագրավ էլ, որ բուն Փավստոսի Հայոցառանի բազավար գործով այս երկու բազավարների մեջ կայացած հա-

մածայնության հիման վրա՝ իրոք թագավորել է 339-ին, ուստի և նրա թագավորության սկիզբը չէ հանդիպում այս երկու թագավորներից և ոչ մեկին տարիներին:

66. Բնագրում գրված է «Կատարեցաւ երրորդ դարի», որը Հ. Վարդանյան ուղղել է «երրորդ դարկ» ասորերեն praga բառից, որ նշանակում է կարգ, աստիճան (Սիմ. բառ. կարգ բառը): Մենք թարգմանեցինք մաս: Մի ճանի բառ հետո բնագիրն ունի «Կանոնի փախստեայի Բիւզանդեայ», որ նույնը Բյուզանդացին ուղղել է «Փաւստեայ Բիւզանդեայ»: Բնագրի հաղորդած այս տեղեկության մասին տես առաջաբանում:

67. Բնագրում անբարգմանելի կատակություն բառերի.— «Ջորերդ խոստովանութիւն զոր ասելոց եմ կարգել զդպրութիւն, կանոնի դարի և դարի պատմութեանց զուցաց»: Մենք թարգմանեցինք մոտավորապես: Այստեղ էլ (դարի և. դարի Հ. Վարդանյան ուղղել է դարկի և դարկի»:

68. Բնագրում գրված է. «ճանդերձ այլովին պատարագովի»: Վերջին բառը թե՞ նշանակությամբ և թե նոլովման ձևով անտեղի է: Ուղղեցինք՝ «պատանդովի» և ըստ այնմ թարգմանեցինք: Այստեղի և բնագրում եղած վերացրի համեմատությունից կարելի է վերականգնել ճախճախան ընթերցվածը— զի՛ր զայլ ճախարարսն ճանդերձ այլովին պատանդովի արձակէր յերկիրն Հայոց ճանդերձ պատարագօ»:

69. Բնագրում գրված է. «Զի՛ր յուղարկեաց զճալածեալսն Շապուհ», իսկ գլխի վերնագրում գրված է «Զի՛ր յուզեաց Շապուհ...»: Երկու աղավաղված ընթերցվածներից վերականգնվում է ուղիղ ընթերցվածը.— «զի ա՛ր յուզեաց ճալածեալս Շապուհ...», որ և համապատասխանում է գլխի բովանդակության:

70. Դայակ պահլավերեն dāyak, նշանակում է ծծմայր, սննուռ (ներկայումս նշանակում է միայն մանկապարտեզի կին): Բայց հին գրականության մեջ գործ է ածվում նաև ազամարդկանց մասին՝ դաստիարակ, խնամակալ նշանակությամբ: Հին ժամանակ սովորություն կար, որ թագավորը իր որդիները ճանձնում էր որևէ իշխանի դաստիարակության. իշխանը թագավորազն սանին սնուցանում էր իր տանը իր զավակների հետ, և երբ իրը ուներում էր ծծկեր երեխա՝ թագավորազն և իշխանազն երեխաները միևնույն կնոջ կաթով էին մեծանում և այս կերպով նրանք դառնում էին կաթնեղբայրներ: Մեծանալիս թագավորազնը երբ թագավոր էր դառնում՝ իր մոտ էր բերում կաթնեղբորը իրև մտերիմ ընկեր: Ողիշեն (Բ. նդ.) դառնապես գանգատվում էր ասելով. «Հայոց նախարարներից ոմանք նրա (Հազկերտ Բ-ի) եղբայրներին սնուցել էին իրենց մայրենի կաթով— նա ամենից խիստ նրանց հետ էր վարվում». նշանակում է՝ պարսից թագավորները նույնիսկ հայոց նախարարներին էին հանձնում իրենց որդիների դաստիարակություն ու խնամակալություն:

Թագավորների օրինակով՝ ավագ իշխաններն էլ իրենց որդիները հանձնում էին հոսոնր իշխանների կամ սեպուհների դաստիարակության: (105 ծանոթ. Խորենացու Պատմության բարգմանության):

71. Բնագրում գրված է. «Ի ժամանակս խալութեան Տիրոճայ»: «Խալութեան» ազավաղված բառն ուղղեցինք՝ խալութեան=խոլոթեան, այսինքն խելագարության:

72. Բնագրում գրված է. «Ոչդպէս առաչին թագաւորին»: Այս աղավաղությունն ըստ նորայրի ուղղեցինք՝ «Ոչդպէս առ առաչին թագաւորսն»:

72. Բնագրի այստեղ ունի «ճուչնպէս սարսռելատութեան ազատապետութեանն, զօրավարութեանն մարտի կռունոյ, գործոյ բազմիկ ճակատամարտ եիմկնիկն, իրափառ (var. իրաւափառ), ազատագգիի ազատագրօչի արծաւէնչաճի, վարժճակաճիչի».— բառերի կատակություն, որոնցից մի քանիսը աննշանակալի են կամ կասկածելի: Մենք այստեղ բարգմանեցինք ներդրարար, մոտավորապես: Սարսռելատ, որից սարսռելատություն, հունարեն բառ է, στρατηγατης որ առաջի նշանակում է զորավար. գործ էր ածվում այն զորավարների մասին, որոնք այս պաշտոնն ստացել էին հունաց կայսրերից:

«Ազատագգի» Անանյան (Սիմ. բառ.) ծագեցնում է ասորական ազատ =ālānā բառից, որ նշանակում է իշխան, գլխավոր: Իսկ «ազատագրոգ» բառը նա համարում է սխալ գրված՝ նախորդ բառի ազդեցությամբ, և ուղղում ազավճագրոչ, ե. Մ. ազատագգիի, ազատագրոչի բառերն ուղղում է ազեղճագիգի, ազեղճագրոչի, ինչպես ունի և Մեսրոպ երեցի վարք. ս. Ներսեսի (Սոփերք, Ջ. եր. 17): Իրափառն կամ իրավափառն ածանոթ բառ.:

73. Սատրապ (var. սատրապես) հունարեն բառ է σατράπης, որ նշանակում է գավառի կառավարիչ: Հունարենն էլ փոխ է առնված հին պարսկերենից, որի սկզբնական ձևը xsatrapa, նշանակում է աշխարհապահ, երկրապահ: Նույն բառը հայերենում պահպանված է շահապ ձևով, որ փոխ է առնված պարսկերենից: Քանի որ Փավստոսը բոլոր տեսակի իշխանների մեջ առաջին տեղում հիշում է սատրապներին՝ կարելի է սրանից հետևեցնել, թե նա աչքի առաջ ունի բդեշխներին կամ ավագագույն նախարարներին:

74. Բնագրում գրված է. «Ճանարհել ամենեցուն միով միաբանությամբ»: «Ճանարհելը» ուղղեցինք «խոնարհել»:

75. Բնագրում գրված է. «Ու գհազարաս մեծ իշխանն ապարապետութեանն»: Վերջին բառն, որ անշուշտ աղավաղված է՝ ըստ նորայրի ուղղեցինք «սպասաւորութեանն»:

76. Բնագրում «Աւէին ճմա էնիոմիա»: Էնիոմիա հունարեն բառ է, εγωμιο , որ նշանակում է ներբողյան, գովեստ:

77. Բնագրում գրված է. «Ի դասասատանացն ամենին»: Վերջին բառը մեզ ուղղեցինք «սառնին»:

78. Ռոմկեան ուրկությունը (բռռասություն, գողություն) սասսիկ վարակիչ և աննուժելի հիվանդություն է՝ ուստի ամենաճին ժամանակներից ամեն տեղ մեծ զգուշություններ էին ձեռք առնում, որ այս հիվանդությունն ուենցողները չփում չունենան առողջների հետ և Գրանց չվարակեն: Միջոցներից մեկն էր—ինչ որ Ներսես կաթողիկոսը հաստատեց Հայաստանում—բնակություններից դուրս հատուկ ուրկանոցներ շինել, որոնց մեջ փակում էին հիվանդներին և նրանց հարկավոր մթերքները և այլ պիտույքները մի փոքր բացվածքի միջով ներս էին ձգում նրանց ամանների մեջ:

79. Բնագրում գրված է. «Ու պատահես ազխատաց»: Պատաճ բառը իր նշանակությամբ այստեղ չէ հարմարում: Կարծում ենք թե աղավաղված է՝ փոխանակ պատպռաճի: Այսպես էլ բարգմանեցինք:

80. Հռոպես խաղաղում մի հավատացյալ կին կար՝ Տարիթա անունով, այսինքն Այծմեկնի անունով, որ հայտնի էր բարեգործությամբ և ողորմությամբ: Նա հիվանդացավ ու մեռավ: Նրա մարմինը լվացին ու վերնահարկը դրին: Լսելով որ Պետրոս առաքյալը Հռոպեից հետու չէ՝ նրա հետևից մարդ ուղարկեցին ու հրավիրեցին գալ: Պետրոս առաքյալը իսկույն եկավ, բոլորին վերնատնից դուրս հանեց, ծունկ չոքեց, աղոթք արավ ու հետո դիմեց մեռելին ասելով. «Տարիթա, վեր կաց Հիսուս Քրիստոսի անունով»: Մեռելը աչքերը բացեց ու տեղում նստեց. Պետրոսը նրա ձեռքից բռնելով ոտքի կանգնեցրեց: (Գործ. Թ. 36–40):

81. Տե՛ս Գաղ. Բ., 7–10: Հետաքրքրական է Փավստոսի մոտ որ այստեղ ունի «որ բուն այսմիկ էին» (Գաղ. Բ–9: Այնինչ հայերեն բարգմանության բնագրում այստեղ գրված է «որ կարծեալ սիմին էին» ինչպես հունարենում, որ նույնպես ունի «կարծեալ»:

82. Արիոսական-ճետևող Արիոսի աղանդին: Արիոսը Ալեքսանդրիայի եկեղեցու երեց էր, որ ուսուցանում էր, թե երկրագության երկրորդ անձը, որդին, սահմանված է հո-

րից՝ աշնչից, ուրեմն ժամանակով կրտսեր է նրանից, նա առաջած է և ոչ ծնունդ: Նա որդի աստուծո է կոչվում այն իմաստով՝ ինչպես շատ մարդիկ էլ կոչված էին ս. գրքում: Նրա այս վարդապետությունը արեելքում սկսեց կողմնակիցներ գտնել: Նրա դեմ դուրս եկան նեղինակավոր եպիսկոպոսներ, և ընդհանուր շփոթություն ընկավ եկեղեցու մեջ: Կոստանդիանոս կայսրը փորձ արավ երկու կողմերին հորդորել որ համաձայնության գան, բայց երբ այս չհաջողվեց՝ նա արեելքի և արեմուտքի եկեղեցիներից հրավիրեց առաջին տիեզերական ժողովը, որ գումարվեց Նիկիայում 325 թվին, ներկայությամբ մոտ 300 եպիսկոպոսների. (պաշտոնապես նրանց բիվը ընդունված է 318): Ժողովը դատապարտեց Արիոսին իբրև հերետիկոսի և մշակեց հանգանակ հավատո (Նիկիո հանգանակը): Արիոսը աքսորվեց: Բայց սրանով վեճը չվերջացավ: Երկու տարի հետո նույն Կոստանդիանոսը Արիոսին. աքսորից ետ կանչեց իր պալատը. արիանոսները մեծ ազդեցություն ձեռք բերին պալատում: Կայսրը կարգադրել էր, որ Արիոսը դարձյալ եկեղեցու կողմից հաղորդակցության ընդունվի և նշանակված էր հանդիսավոր օրը: Բայց հանդիսության օրը երբ Արիոսը ձի հեծած, համակողների բազմությամբ շրջապատված, հանդիսով և ուրախ անցնում էր փողոցներով՝ հանկարծ իրան վատ զգաց (ստամոքսի խանգարում), ձիուց իջավ, գնաց առաջևոց, որտեղ և մեռավ (336 թվին): Վաղես կայսրն էլ Արիոսի աղանդի բազմաթիվ կողմնակիցներից մեկն էր:

83. Այստեղ երեք երես բաց թողնենք Նեռսեսի ճառգությունից, որտեղ նույն մտքերը մի քանի անգամ կրկնվում են. («Ապա թէ ոչ խոստովանեացիս», եր. 69— «դատաստանին որ գալոցն է», եր. 73):

84. Վաղես կայսեր հիվանդ որդու պատմությունն առնում է համառոտ Սոկրատ (եր.ա 366—367): Վաղես կայսրը դիմում է Կեսարիայի Բասիլիոս եպիսկոպոսին, որ մայրաքաղաք էր կանչված՝ աղոթել իր հիվանդ որդու վրա, որ առողջանա: Բասիլիոսն ասում է. «Եթե մեզ նման դավաճես և եկեղեցին միաբանեցնես՝ երեխադ կառողջանա, իսկ եթե ոչ՝ քո աստծու կամքը լինի»: Թագավորը չէ համաձայնում, և երեխան մեռնում է: Նայնը, բայց ավելի զարգացրած, պատմվում է և Հարանց վարքում ս. Բասեղ հայրապետի Վարքում (միանատոր հրատ. եր. 1026): Փավստոսի մոտ այս ավանդությունը շատ ծաղկեցրած և վերագրված է Ներսես կաթողիկոսին:.

85. Ասված Աբրահամ հանապետին հրամայեց, որ մի հետավոր լեռան վրա իր միակ որդուն, Իսահակին, զոհ մատուցանե իրան: Աբրահամը Իսահակին առնում գնում է երեք օրվա հանապարհ, հասնում է ցույց տրված լեռը, սեղան է շինում, փայտը դարսում է, Իսահակին կապում, դնում է փայտի վրա և սուրը վերցնում է որ մորթե երեխային: Հրեշտակը երկնից աղաղակում է ձեռ տալ երեխային: Աբրահամ շուրջը նայում, տեսնում է, որ Սաբեկա ծառից մի խոյ է կախված եղյուրներից: Խոյն առնում, զոհում է Իսահակի փոխարեն (Ծննդ. ԻԲ. 1–13): Սբրայական բնագրում Սաբեկա ծառի փոխարեն գրված է մացառներում:

86. Ակնարկություն մանանայի վրա, որ ցողի նման իջնում էր առավոտները և որով խրայելացիք անապատում կերակրվեցին քառասուն տարի:

87. Բնագիրն ունի. «Որ շերթայ ուրեմ ի մարդկանէ *այլ պատճառ միայն առնէ զանուն իւր ի վերայ աներևոյթ մարմնոյն*, մանէ և իւրոյ արհայութիանն...»: Շեղագրով, տպված խոսքերը դուրս ձգեցինք՝ իբրև աննպատակաշարի:

88. Ս. Ներսեսի Վարքում (Սոփերք, Ջ. եր. 58) գրված է «ամիսս» բնն. փոխանակ Փավստոսի ինը տարուն:

89. Բնագրում գրված է. «իբրև զօր հակառակորդ»: Մենք ուղղեցինք՝ իբրև զիւր հակառակորդ, և քան այսմ թարգմանեցինք:

90. Բնագրում գրված է. «ուսա՞ կարծեցես բանիցս պատասխանիս պատարասել»:

Մենք ուղղեցինք. «Ուսա՞ կարիցէ...» և քան այսմ թարգմանեցինք:

91. Բնագիրն ունի. «Մի գոցի ոսկոյ կամ արծաթոյ դաճակ առ ումեք»: «Դաճակը» մենք ուղղեցինք դանկ և քան այսմ թարգմանեցինք: Գ. Մ. «դաճակը» ուղղում է «ճակ»:

92. Սոփեստես հունարեն բառ է, σοφιστης , որ սկզբնապես նշանակում էր իմաստասեր, ճարտար: Այս անունով հին Հունաստանում կոչվում էին զարգացած՝ ճարտարախոս և ճարտարամիտ մարդիկ, որոնք սովորեցնում էին փիլիսոփայություն և ճարտասանություն: Շատերը թափառում էին հազարե հազար իրենց արվեստը սովորեցնելու: Իրենց գիտության և մտավոր կորովի պատճառով հարգանք էին վայելում: Բայց ժամանակի ընթացքում նրանք սկսեցին ի չարը գործ դնել իրենց գիտությունը, մանավանդ ճարտարախոսությունը և պաշտպանում էին սխալ մտքեր՝ նշմարտության կերպարանք տալով: Այս վերջին մտքով էլ այժմ գործ է ածվում սոփեստ բառը կամ նրա հայերեն թարգմանությունը՝ իմաստակ:

93. Մագիստրիանոս հունարեն բառ է՝ μαγιστριανος, որ ծագում է լատիներեն magister բառից, որ նշանակում է ավագ վարպետ: Մագիստրիանոս Բյուզանդիայում կոչվում էին կայսերական տան ավագ մարդիկ և ավելի ընդհանուր նշանակությամբ՝ պետական բարձր պաշտոնյաներ:

94. Թեկղ՝ նշանավոր խոստովանող կույս, ժամանակակից Պողոս առաքյալի և նրա աշակերտուհին: Նրա վարքագրությունը լիքն է հրաշքներով: Նրա անունով շինված էին շատ եկեղեցիներ և նա համարվում է հրիստոնեության առաջին խոստովանուհին: Խաղաղ մեռել է ծերության հասակում:

95. Սուրբ Սարգիս, Կեսարեցի, Կապադովկիայից, ապրում էր մեծ Կոստանդիանոսի և Տրդատի ժամանակ, զինվորական ծառայության մեջ էր և բարձր պաշտոն ուներ, տարածում էր ներքնոս զորքի մեջ հրիստոնեություն: Մեծ հաղթություններ տարավ նույների դեմ, իբրև Շապուհի զորավար, բայց որովհետև չկամեցավ կրակին երկրպագել և կուռքերը խորտակեց՝ մանվան դատապարտվեց: Նրա որդին էլ, Մարտիրոսը, ճարտի համար ապանվեց:— Վարքը լի է հրաշքներով: Սուրբ Սարգիսը հայերի մեջ մեծ ժողովրդականություն է վայելում և համարյա ազգայնացրած սուրբ է, որի անվան հետ կապված են զանազան սեռտիապաշտություններ: Նրա անունով շատ կան տաճարներ:— Թեոդորոս ստրատելատ, Գևորգոս Ամասիա քաղաքի շրջակայքից, նույնպես զինվորական բարձր պաշտոնյա, ժամանակակից ս. Սարգսի, որ հրիստոնեական հավատը դավանելուն և կռտրերը անարգելուն պատճառով ճանաչակվեց Լիկիանոսից:

96. Վաղես կայսրը, որ իր եղբոր Վաղենտիանոսի կողմից նշանակվեց կայսրության արեելյան կեսի կառավարիչ՝ թագավորեց 364—378 թվ. և ընկավ վեստգոթերի դեմ պատերազմում: Նա հայոնի էր իբրև չերմ արիոսական, որի պատճառով և շատ հալածանքների էր ենթարկում ուղղափառ եպիսկոպոսներին: Նրա մասին վերաբերյալ այս ավանդությունը, որ բերում է Փավստոս՝ հայոնի չէ Սոկրատին, որ նույնպես գրում է բն պատերազմի մեջ մեռավ:

97. Լուսարաց, կազմված բուն հունարենի, հին եկեղեցիներում այն բաժանմունքը, որտեղ մկրտություն էին կատարում. մկրտարան:

98. Մեսրոպ երեցի մասն (Վարք ս. Ներսեսի, Սոփերք Ջ. եր. 52–53) դեպաններին թիվը տասնևութ է, փոխանակ Փավստոսի հինգ իններին, իսկ այն անուններին մեջ, որ երկուքն էլ ունեն՝ կան տարբերություններ. այսպես՝ փոխանակ Փավստոսի Մեհենե-ի, Վարքն ունի Մեհենեզակ, փոխանակ Մեհեստ-ի՝ Մեհևաե, փոխանակ Մուշկ-ի՝ Մուշկաե, փոխանակ Բագենից՝ Բառնեից, փոխանակ Հրսիձորոյ՝ Գաբեղենից: Վրկենե նահապետե Հաբուժենից բոլորովին չկա վարքում, փոխանակ Փավստոսի Դեմետ նահապետե Գնբուե-

յաց, վարճ ունի Գնել ճանապհաճ Գնունյաց:

99. Բնագրում «զվեց ամ»: Ներսեսի Վարճն ունի՝ 8 ամիս. ե. Մ. Փավստոսի վեց ամը ուղղում է վեց ամիս:

100. Բնագրում գրված է «ի լիութեաճ», որ մեճ ուղղեցինճ ու բարգմաճեցինճ ի լիութեաճճ՝ ըստ Նարայրի:

101. Բնագրում «Մատղատ, զոխօսք», որ մեճ եճթադրաբար բարգմաճեցինճ «գատի մեջ ստղճեր, զրպարտողճեր»: Մի ճանի տող ճետո՝ աղավաղված եճ ճամառում բնագիրը, որ ուճի. «աւաճղատուի զաւաճդս լի զպաճեստս բարձեալ»:

101։. Բաճաստեր աճծաճոք տեղ է, ուրիշ տեղ ճիշատակված չէ:

102. Սոդոմ քաղաք Գաղետիճում, Մեռյալ ծովի մոտ, որ բնակիչճերի սոդոմացոց աճօրինակ աճառակություճճերի պատճառով ատծու ճրամաճով կործանվեց Գոմոր քաղաքի ճետ միասին: (Մճդ. ԺԲ. ԻԹ. և ճալ.): Այնուճետև Սոդոմ, սոդոմացի բառերը սկսեցին գործածվել՝ նշանակելու համար աճառակ վարքի տեր քաղաքճեր ու մարդիկ:

103. Ժամտախտի առաջին հիշատակությունը Հայաստաճում: Մի ուրիշ ժամտախտի դեպք էլ հիշում է Փավստոսը (Գ. ժե.): Նա արծարծվեց Աղտազերս ամրացում և մի ամսում 17000 մարդ կոտորեց:

104. Զեռական իշխաճություն կամ ձեռքի իշխաճություն նշանակում է այն կալվածք, որ սեփական է այս-ինչ ճճնիճ, գտճվում է ճրա ճամիչական կառավարության տակ:

105. Այս Շավասպր ինչպես Փավստոսճ էլ ասում է, միակ մնացորդն էր Աբծուճյաց ցեղից, որին Աղտավազդ և Վասակ Մամիկոնյաճճերն ազատեցին կոտորածից ու տարան Տայք, այնտեղ մեծացրին և իրենց տոճմից ճրան կին տվին, որից ճորից սերվեց Աբծուճյաց տոճմը (Փավստ. Գ. ԺԸ.): Այս Շավասպի որդին է ճշուշտ Մերուժաճը, որի կատարած չարիքճերը մանրամասճ պատմում է Փավստոս ճաջորդ դպրություճճերում:

106. Բնագրում գրված է. «առ ճամբաւ ցանկութեաճ աճառաճճ տրփեալ լինել». միճ ևս ճօյեղբօրորդին»...: Մեճ ուղղեցինճ՝ ճուաճճ... մեւս (=միւս): Նարայր ևս ճճթադրում է, թե«աճուճճ» ուղղելի է ճուաճճ:

107. Բնագրում գրված է. «ի բուճ բաճակի տեղոճ Աբշակունեաց ի ճերոյ Սիւճեաց և ի վերայ ապարիսաց»: «Բաճակի տեղոճ» ուղղելի է «բաճակետեղճ», ինչպես ունի Փավստոս նույն գլխում, իսկ ճետո. «յանդիման բաճակատեղ բճին»: Սիւճեաց (var—Սիւճեացն) ճամարել ճճ ճատուկ աճուճ. բայց ե. Մ. և ճրանց աճկախ Աճաոյան (Առմ. բառարան) բացատրում ճճ իրրև պարսպով պատած ոբատեղ: Ասպարես բառն այստեղ գործ է ածված սկզբնական նշանակությամբ—ձիարշավարան:

108. Բնագրում գրված է արխիդիակոճճ, որ ճուճարճե բառ է ἀρχιδιάκονος, որ նշանակում է ավագ սարկավագ. խոսքը ճերակաճորճե աճորոշ է այստեղ: Գրված է. «Ել զիւր արխիդիակոճճ եպիսկոպոսին, որում աճուճ Մուրիկ կոչէր»: Մուրիկը, ճամարում ճճ, սարկավագի աճուճճ է և ոչ թե եպիսկոպոսի, բայց «եպիսկոպոսի» բառը տարակույսի տեղիք է տալիս. երբ Մուրիկը եպիսկոպոսի սարկավագ է եղել, ապա ինչո՞ւ է ասված «զիւր արխիդիակոճճ», այսինքճ Ներսեսի: Մեճ եճթադրաբար բարգմաճեցինճ՝ «Իր եպիսկոպոսական ավագ սարկավագը»:

109. Բնագրճ ունի՝ «ժաճեաւ», որ աղավաղություճ է, փոխաճակ՝ ժաճուաւաւ, ինչպես ունի Փավստոս Գ. Բ. և Բ. Ա. «ժաճուաւաս», «ժաճուաւոք»: Ժաճվար պարսկերճե բառ է zarbar պատգարակի մի տեսակ, մարդիկ և իրենց փոխադրելու ճամար: Ճավաճոճճերի երկու օրոց, որ կախում էին զրաստի երկու կողմից, որոճց մեջ ճատում էին մարդիկ:

110. Բնագիրճ այստեղ ունի. «յայնժամ բագաւորճ զիւր սամոյրսճ զգվաճվճ ածեալ՝ *ի փոյթ կճչաճճ* մտճալ զիւր դէմս երեսացճ ծածկէր», որի մեջ աճճատկաճելի ճճ «ի փոյթ կճչաճճ»: Հայկ. բառարան (կիճչ բառի տակ) այսպես է մեկճում այս խոսքը. «կամ իբրու խոզի և կամ կճչման, որպէս ի ձայճ խոզի, այսինքճ խռռալոյ»: Նարայր Բյուզաճդացին (Կորյուճ, եր. 342) երկու բառը միացճելով կարդում է «ի փոյթկճչաճճ» և այս բառը ճամեմատում է սաճսկրիտ paryanka բառի ճետ, որ նշանակում է աճկողնի, մաճճակալ: Երկու մեկճություճճերն էլ աճճավաճական ճճ: Առմ. բառ. չուճի այս բառերը: Ուրիշ բացատրություճճեր ինձ ճայտնի չճճ:

Ես ուրիշ կերպ եմ բացատրում այս բառերը: «Փոյթ» բառը միայճ Փավստոսի մեջ պաճպաճված ճճգույճ ձևճ է փոք բառի, որ ճերկայումս միակ գործածականն է մեճցել: Ոյ-ո ձայճափոխության օրինակճեր ուճճենք՝ գրաբարի շրջաճում՝ աճագորոյճ և աճագորոճ, իսկ գրաբարի և աշխարճաբարի շրջաճում՝ փոյք-Փոքի (քաղաք), մակոյկ-մակոճ, լոյղ-լող: Իսկ «կճչաճճ» (սեռ. ճոլ. «ուղղականը» կուճչ) պարսկերճե բառճ է, ճին փոխառությամբ, բառի պաճպավերճե ձևից, որի ճոր փոխառությունճ է գավառական ֆուճչ-ը: Կ-ի ձայճափոխության շատ օրինակճեր ուճճենք, ինչպես *կամար-քամար, մակոյկ-մաքոք, կուժ-քիւզ, կճռաս-քճռազ, կճչիք-քուճչուք, կարավան-քարավան, կույր-քոռ* ևն: Քուճչ բառը պարսկերճեում, բացի աճկյուճ նշանակությունից, նշանակում է ճաև խոշոր կամ ծալք զգեստի, կապերտի ևն: (Պարսկ.-ճայերճ բառարան Գնարգ Տեր-Հովճաճճեխյաճի):

Ըստ այս բացատրության՝ բնագրի վերոճիշյալ խոսքը ատաղձի պեմ է ճասկաճալ. «բազավոր սամուերճին գլխին ֆաշլով՝ ճրա (=կճչաճճ) փորի մեջ (ի փոյթ) մտճելով ծածկում էր իր երեսը:

111. Մայր ողոց և ձայճարկուճեր: Մեռելի վրա սուգ կատարելու ճամար ճրավիրում էին ճատուկ լալկան կանանց: Սրանցից մեկը ողբի մայր էր դառճում, սկսում էր մեռելի գովեստճ ասել. երբ մի տուճ վերջացնում էր՝ ձայճարկուճերը (լալկան կանայք) այս տուճը կրկճում էին և ողբի աղաղակճեր բարձրացնում: Հետո ողբի մայրը ասում էր գովեստի ճաջորդ տուճը. և ձայճարկուճերի կրկճում էին. և այսպես շարունակ:

112. Բնագրում գրված է «ի ճուաճել իւրանց ձայնեցին», որ մեճ եճթադրաբար բարգմաճեցինճ— երբ ճրանց ձայճերը դադարեցին, որի նշանությամբ վատճ չճճ: Նվաճել բառը Փավստոս ուրիշ երկու անգամ էլ գործ է ածել՝ երկու անգամ էլ աճորոշ նշանակությամբ. «Ձիա՞րդ եղէց բարեխօս վատճ այնոցիկ, որ ճուաճեցինճեճ» (Գ. ԺԲ.), «Որպէս առաջին բագաւորճճ ճուաճեալ՝ յիւրաճանչիւր չափս» (Գ. Բ.):

113. Ջերէց: Ջերէց. չճաճանա, չնախկոպոս և այլ բառերի վրա «չ» մասնիկը գոյց է տալիս, թե այդ երեցր, ճաճանա, եպիսկոպոսճ ատաղձ ճճ այդ անուճը կրելու: Նույն միտքը մեճ այժմ արտաճայտում ճճք ասելով չիբ Երեց, չիբ եպիսկոպոս:

114. «Երկրագործական մեծ տուճ» շատ որոշ չէ: Մեճ ճասկաճում ճճք այն մեծ կալվածք, որ ըստ օրճճքի պատկաճում էր պարոնց բագավորի Երկրագործճե և գտճվում էր Աղտատատկաճում:

115. Բնագրում՝ «Այծից ճայոց արշայ»: Հայտնի է, որ ճին ժամանակ սովորություճ կար, որ գավառներ մեկը մյուսին ծագրական կամ արճամարճական մականուճճեր էին դնում, ինչպես ագուլեցոց՝ գոկ, ճին նախիչևանցոց՝ խաչագող, նոր նախիչևանցոց՝ ճամե. ախալցխացոց՝ կոռ, Երևանցոց՝ շան ճոգ. պռոսեցոց՝ ճասոս և այլն: Թվում է՝ այսպիսի մի մականուճ է եղել Պարսկատանում ճայերի ճամար՝ այս բառը, նկատի ունենալով, որ Հայաստանը լեռնոտ Երկիր էր և ժողովուրդը ժպղցում էր լեռների վրա՝ ինչպես այծերը: Ախռատպետ ոչ թե անարգելու նպատակով, այլ ճանճարձակ անելով. այս մականուճը է տալիս Աբշակին՝ ճրավիրելով խոսի խուրձի վրա նստել: Նա

բնակեւական ճաճաճ է արել, մոռանալով որ խոսում է բագավորի հետ:

116. Անկասկած այստեղ բնագրից մի բառ դուրս է բնկած, որի մեջ մանրամասն պատմվում էր, թե ի՛նչպես Վասակը աջողեցրեց Արշակի փախուստը Պարսկաստանից, ի՛նչպես Շապուհը զայրացավ այս փախուստը լսելով, և հրավիրեց իր մոտ Մարիին ու նրան մեղադրում էր: ԺՉ. գլխի միչի այս բերին նկատել է և ե. Մ. (եր. 26):

117. Մի գլխի վերնագիրը բնագրում բերի է— «Յաղագս թէ զիարդ *յուգեաց* Շապուհ արեայ պարսից ի վերայ հրիստոնէութեան»... Նույն վերնագիրը ցանկում գրված է «Յաղագս թէ զիարդ *յուդարկեաց զՀալածեալսն Շապուհ*»...: Երկու ազավաղված բնբերգվածքներ Մեծ վերակազնեցիքիճ— «Թէ զի՞րդ յուգեաց հալածանս Շապուհ արեայ պարսից ի վերայ հրիստոնէութեան» և բստ այմ բարգմանեցիքիճ:

118. Ոստան պահլավերեն բառ է ostān որից պարսկերենում մնացել է ōstāndā— գավառապետ: Հայերենում ոստան բառը սկզբնապես նշանակում էր Արշակունյաց բագավորական տոհմի կալվածները, որոնք կոչվում էին արքունի տուն: Այս նշանակությունից է ածանցվել ոստանիկ բառը, որ նշանակում էր բագավորական կալվածում ապրող ազնվական դասակարգը, որ հեռավոր սերունդ էր կազմում Հայկազյան կամ Արշակունի բագավորների: Արշակունյաց բարձումից հետո ոստան բառը սկսեց գործածվել՝ ուրիշ նախարարական կալվածքների գլխավոր բաղաքներ նշանակելու համար և մասնավորապես Դվին բաղաքի համար, որ պարսիկ մարզպանների մայրաքաղաքն էր: Վերջապես Ոստան իրեև հատուկ անուն գործածվեց Ռշտունյաց կալվածի գլխավոր բաղաքի համար, որ Վանա լճի հարավակողմում:

119. Գլխի վերնագրում բնագիրն ունի. «Փախստական լինէր արքայն Պարսից», ուղղեցինք բստ խմբագիրների և բստ ցանկի՝ «յարքայէն Պարսից»:

120. Աղվաստան նույնն է թե Ասորեստան կամ Ասորիք:

121. Բնագիրն այստեղ աղավաղված է. «Զի եթէ մեծ լեալ էաք ամենայն Արեաց *գօրք* հանդերձ այսպիսի աջողութիւն գայր ի ձեռն, *քան* թէ զոյգ հասարակ այդպիսի գործ ի միասին կարէաք առնել»: Մենք ուղղեցինք՝ «զօրօք» հանդերձ. «քան թէ» այսպիսի աջողություն գայր ի ձեռն»... և բստ այմ բարգմանեցինք:

122. Ինչպես 61-րդ ծանոթության մեջ հիշեցինք՝ Ասորեստանը սահմանակից էր Պարսկաստանին և Պարսկաստանի Տիսբոնը հենց սահմանագլխի վրա էր Տիգրիսի ափին: Ուստի այստեղ ևս Ասորեստանի տակ պետք է հասկանալ Պարսկաստան և հատկապես Տիսբոն բաղաքը:

123. Խորան հավանորեն պարսկերեն բառ է, xdvran կամ xuran, որով կոչվում էր Վաճրամ Գուրի պալատը բստ Թիռասլանի (Աշմ. բառ.): Խորանը նույնպես վրան էր, բայց դատելով նրա գանագանակերպ գործածություններից՝ պետք է լիներ բագավորների և մեծամեծների ընդարձակ, զարդարուն և ներքին հարմարություններ ունեցող վրան:

124. Բնագրում գրված է. գնծքին բաղաք, որ է յԱռուեստանի, նծրքնը Մծրքինն է ոտար ազգերի արտասանությամբ (Nisibis), իսկ Առուեստանը նույն Առուաստանը կամ Ասորեստանն է: (Տես ծան. 122):

125. Այս Գանձակը տարբեր է մեր Գանձակ= Գյանջայից (այժմ Կիրովաբադ) և գտնվում էին հին Ատրպատականում, Թավրիզից հարավ: Գիտնականների կարծիքով՝ այժմյան Թախտ Սուլեյմանն է Զենջանի մոտ (Н. Адонц, «Юстиниан» 2), ինչպես հաճախ հիշվում է Փավստոսի մոտ Արշակունիների ժամանակ Հայաստանի արևելյան սահմանը, Կասպից ծովի արևմտյան ափերից իջնելով մինչև այստեղ էր հասնում:

126. Բնագրի «յուտեստ» բառը բարգմանեցինք «ուտեստ՝ կերակրվելու համար»: Մեծամանակ զորք մի տեղում երկար ժամանակ պահելու համար պահանջվում է մեծ բանակություն՝ կենսամթերք մարդկանց և ձիերի համար, որ Հայաստանում չէր կարելի

հարել՝ հարմար հանապարհների և փոխադրության միջոցների բացակայության պատճառով: Ուստի սովորություն էր՝ զորը այնպիսի տեղ պահել, որտեղ կենսամթերքները առատ էր կամ որտեղ նախօրոք ամբարված էր բավականաչափ կենսամթերք: Սա առավելապես վերաբերում է հեծելազորին: Որովհետև այն ժամանակներն անկարելի էր միլիոնավոր փքերով խոտ պատրաստել և փոխադրել հեծելազորի կանգնած տեղերը՝ ուստի ավելի հարմար էին գտնում հենց հեծելազորը ձմեռները տանել այնպիսի տաք տեղեր, որտեղ ձմեռվա ամիսներին էլ ձիերը կարողանային դաշտերում արածել: Այս տեղերը սովորաբար կոչվում են ձմերոց, ինչպես հաճախ հիշվում է Եղիշեի Պատմության մեջ: Այսպիսի մի ձմերոց է եղել Անգեղատունը:

127. Բնագրում՝ «Ըստ այլ կաթել», բառարաններն այս բառը բացատրել են իբրև «կողմը», ծագեցնելով պարսկերեն «գաթ», «գադ» (?) բառից: Նորայր Բյուզանդացին ցույց տվեց այս բացատրության սխալ լինելը և «կաթել» ազավաղված ձևն ուղղեց՝ «կարբյալ»— շուտ տալով, շուտ գալով:

128. Սահմանա գլխի այս երկու տեներից մեկը հավանորեն Ատրպատականն էր, մյուսը Աղձնիքը, որ տեղերով պարսիկները մտնում էին Հայաստանի սահմաններ:

129. Թավրեշը այժմյան Թավրիզն է Ատրպատականում: Ուրիշ տեղ (Դ. ԼԲ.) Փավստոսս այս բաղաքը կոչում է Թավրէժ:

130. Կարավան պահլավերեն բառ է karavan որ տարածված է ուրիշ շատ լեզուների մեջ ևս: Կարավան նշանակում է հանապարհորդների խումբ, որոնք հանապարհորդություններ էին կատարում գինված պահապանների՝ ավազակների հարձակումներից պաշտպանվելու համար: Այս նշանակությամբ այժմ գործ է ածվում բավան ձևով: Բայց հին ժամանակ կարավանը նշանակում էր նաև արհուեստական բանակ, ինչպես այստեղ Փավստոսի մեջ և մի բանի անգամ եղիշեի մոտ:

131. Բնագրում գրված է *«Տապրիկ զօրօք»*, որ մենք բարգմանեցինք «Տապարիստանի զորով»: Տապարիստանը պարսկական հանանգ էր նախկին Մարաստանում:

132. Նվիրակապես— նվիրակների գլխավոր: Նվիրակ, պահլավերեն nivelak. պարսկերեն nuvid, նշանակում է ծանուցումն, լուր, ավետիք: Հայերենի մեջ մի բանի նշանակությամբ է գործածված— պալատական պաշտոնյա, որ արհուեստական անձերը ներկայացնում է բագավորին.— որ տան դուռը կանգնած՝ ընդունում է հյուրերին,— որ բագավորի կամ իշխանի առջևից գնալով՝ փողոցներում հանապարհ է բաց անում.— որ մի պետի կողմից նրավիրակ կամ պատգամավոր է ուղարկվում ուրիշ տեղ (=կաթողիկոսի նվիրակները).— որ ուղարկվում է վանքի համար պողի հավաքելու՝ (Աշմ. բառ.):

133. Բնագրում գրված է. «անկանէր ի ներս ի *դահիճն*»: Վակիղ բառի ծագումը առղ չէ: Վակիղ կոչվում էր զորքի կայանը, որ բշհամու անակնկալ հարձակման դեմ պաշտպանված էր զանազան միջոցներով— պատնեշներով, բումբերով, ցանկապատներով, խրամատներով ևն: Սերբերի մոտ (գլ. Լ նոր հրատ.) նկարագրված է արաբացոց զակնը:

134. Բնագրի վերնագրում գրված է Մարուճան, իսկ բնագրում *«Մարիճ անուն* մեծ նախարար»: Մենք ուղղեցինք՝ «Մարիճան ամե մեծ նախարար» և բստ այմ բարգմանեցինք:

135. Զինդկապետ կամ գնդապետ կամ գինդկապետ անշուշտ պահլավական բառ է, բայց իրանական գրականության մեջ չէ հիշված: Մագմաե ու հիշտ նշանակության մասին զանազան ենթադրություններ են եղած. ոմանք ծագեցնում են պարսկերեն *zanīa*= փին բառից (ուրեմն գինդկապետ= փղապետ), ոմանք գենդերեն Zantupaiti բառից= պահլավերեն zand-put= խմբակցության պետ: Հյուբշման բացատրում է

իբրև zindik-ների պես, բայց այս բառի բացատրությունը չէ տալիս, ասում է միայն, որ դրանք զանգիկներ չեն: Փավստոսի մեջ բառի գործածությունից երևում է, որ զինվորական բարձր աստիճան էր: (Արմ. բառ.):

136. Այս գլուխը, բացի այլանդակ բովանդակությունից, աշխի է րնկնում նրանով, որ միանգամայն անտեղի կերպով րնկած է պատերազմական գործողությունների նվիրված մի շարք գլուխների մեջ, որոնց հետ ոչ մի կապ չունի: Արդյոք պատահական ազավաղությո՞ւն է գրչագիրների, թե նորամույծ հավելված է՝ դժվար է ասել:

137. Անդերձապետ պահլավերեն բառ է, andarzpat, որի հիմնական նշանակությունն է խորհրդական, andarz բառից, որ նշանակում է խորհուրդ: Այս անունով կոչվում էին հին Պարսկաստանում բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնք խորհրդականի պաշտոն էին վարում պետական բարձր իշխանավորների մոտ: Գոյություն ունեին դերանդերձապետներ= արքունի դռան՝ կամ պալատական խորհրդականներ. Մոավ անդերձապետներ (հայացրված ձևով՝ Մոգաց անդերձապետներ= մոգպետների խորհրդականներ, Սակստան անդերձապետ= Սագստանի հանհանգապետի խորհրդական և այլն): Այս բառը հայերենում գրված կա և հանդերձապետ ձևով. andarz-ը չփոխելով հայերեն հանդերձ-ի հետ (որ ճույնպես պարսկերեն բառ է), ուստի և սխալմամբ հասկացվում է իբրև արքունի հանդերձատան վերակացու: (Արմ. բառ., Պատկ. матер. арм. сл. II):

138. Շապստան տակառապետ— Երկու պարսկական բառ: Շապստան, պահլավերեն šapastān, պարսկերեն šadislān. նշանակում է ննջասենյակ կամ կանանոց» իսկ տակառապետ, պահլավերեն takār, պարսկերեն tagār նշանակում է (գինու) կարաս, որից տակառապետ= (գինու) մատակարար, մատռվակ: Ըստ այսմ շապստան տակառապետ նշանակում էր այն պաշտոնյան, որ արքունական կանանոցի մատռվակն էր, գինու մատակարարը: Տակառապետ բառի տեղ մեր հին մատենագրության մեջ գործածված կա տաճարապետ բառը, որի մեջ տաճար «սեղանատուն, կոչուճ» է նշանակում և ամբողջ բառը համապատասխանում է տակառապետի պաշտոնին:

139. Մոգաց հանդերձապետի մասին տես ծանոթագրություն 137:

140. Համբարակապետ կամ ամբարակապետ պահլավերեն բառ է anbārakapat համբարների, այսինքն մթերանոցների վերատեսուչ:

141. «Դասսրնատրին» անվան փոխարեն, որ միայն այստեղ է պատահում և ուրիշ ոչ մի տեղից հայտնի չէ՝ Ներսիսյան դպրոցի Փավստոսի ձեռագիրն ունի ավելի հավանական ընթերցված «և դասս ընտիր էին սոմա» (ցույց է տվել Գր. Տեր Գողոսյան, «Հանդ. ամս.» 1900, եր. 199 ա):

142. Բնագրում գրված է «դասապետ շինականց». ենթադրաբար բարգմանիչները գյուղերի համփաներ: Դասապետները գուցե հազարապետին (տես ծան. 40) ենթարկված ստորին պաշտոնյաներ էին, որոնց հանձնվում էր գյուղերի գործերը (հողի, ջրի, արտատեղի և այլն մասին):

143. Ակնարկություն Քրիստոսի առակի վրա անպիտան ծառայի մասին, որ իր տիրոջ տված մի ֆռֆռար փոխանակ շահեցնելու տարել թաղել էր հողի մեջ և վերադարձրեց իր տիրոջը՝ երբ սա ետ եկավ ուղևորությունից: Տերը նրան մեղադրելով ասաց, որ գոնե պետք է ծառան այդ տաղանդը սեղանավորներին տար, որպեսզի ինքը գոնե տոկոսով ստանար իր փողը (Մատթ. ԻԵ. 14-28):

144. Բնագրում գրված է, «Բայց յաւ լիցի ձեզ զնոյն սիրել»: Մենք ուղղեցինք՝ «քաւ լիցի» և բստ այսմ բարգմանեցինք:

145. (եր. 214). Վարազագիր մատանի: Մատանին մատի վրա կրելու օղ էր, որի մեջ ազուցված էր մի բանկագին քար՝ վրան փորագրված տիրոջ անունը, որ և ծառայում էր իբրև կնիք: (Շատ անգամ բանկագին քարի փոխարեն մակագրությունը լինում

էր մատանու արծաթի տափակացրած մակերեսի վրա): Վարազագիր մատանի նշանակում է այնպիսի մատանի, որի վրա փորագրված էր լինում վարազ= պարսից թագավորների գերբը: Վարազագիր մատանիով, ուրեմն պարսից թագավորի անձնական կնիքով, կնքված ազր ամենահաստատ անսուտ երդման նշան էր: Վարազ անունը իբրև պատվանուն շատերը կցում էին իրենց անուններին, ինչպես Վարազ-Վաղան, Վարազ-Շապուհ, Վարազ-Ներսեհ, Վարազդատ և այլն:

146. Բնագիրն այստեղ աղավաղված է թվում կամ գոնե մի ֆռֆի բառ պակաս: Գրված է. «իբրև տեսին զնոսա, արկին զերկոսեանն զարհայն Արշակ և զպարապետն Վասակ և պահէին...» որտեղ «արկին» բայի լրացուցիչը պակասում է:

147. Բնագրում գրված է. «կոչնաց... *գդիւքան, գաստեղագլուխն և զքաղքայքն*»: «Դիւքր» մենք բարգմանեցինք ավելի սովորական «վեուկ» բառով: Երկուսի էլ ծագումը ու ճիշտ նշանակությունը անհայտ են, և ինչո՛վ են նրանք իրարուց տարբերվում՝ դժվար է ասել: «Քաղքայ» հավանորեն ֆատյա բառի տարբեր ձևն է, իսկ ֆաղդյա նշանակում է ֆաղդեացի. ֆաղդեացիք, որովհետև պարապում էին աստղաբաշխությամբ՝ աստղերի և մոլորակների շարժումների հիման վրա գուշակություններ էին ստանում, ուստի ֆավդյան նշանակությամբ ավելի մոտ է աստղագետ կամ աստղահմա բառերին:

148. Արտավանը Պարսկաստանի վերջին թագավորն էր պարթևական հարստությունից (216-226 Հ. Ք.), որին սպանեց պարսիկ իշխաններից մեկը, Արտաշիր Սասանյան, և եղավ հիմնադիր Պարսկաստանում նոր հարստության, որ նրա անունով կոչվեց Սասանյան: Որովհետև թե՛ Պարթև թագավորները և թե Արշակունի թագավորները Հայաստանում ըստ պանդության սերված էին Պարթև Արշակ Մեծից, և հայոց Արշակունիները համարվում էին երկրորդ՝ Պարսկաստանի Պարթևներից հետո՝ այս պատճառով հայոց Արշակունիները Արտավանին համարում էին իրենց ազգական, իսկ Արտաշիր Սասանյանին և նրան հաջորդող Սասանյան թագավորներին համարում էին հափշտակիչներ, որոնցից իրենք պարտավոր էին Արտավանի սպանության վրեժն առնել, և միևնույն ժամանակ համոզված էին, թե երբ Արտավանի մահով Պարթևաց հարստությունը դադարեց Պարսկաստանում՝ իրենք, հայ Արշակունիները, հանդիսանում էին ավագագույնք Արշակ Մեծի սերունդների մեջ, իսկ Սասանյան տոհմից թագավորներին, որոնք սերվում էին իշխան Արտաշիր Սասանյանից, այսինքն Արտավանի ծառաներից (հպատակներից մեկից) համարում էին ըստ օրենքի հայ Արշակունիների ծառաներ (=հպատակներ): Այսպես էլ ասում է Արշակր Շապուհին, թե «զոր ծառաներդ ձեր տեսերի՝ մեր բարձե եք հափշտակել»:

149. Բնագրում գրված է. «և կայր ի զղջումն դառնայր»: Մենք ուղղեցինք «և լայր» և ըստ այսմ բարգմանեցինք:

150. Արտագես բերդի մասին Փավստոս գրում է (Դ. ԺԲ.), թե Արշակ բագավորը չինել տվեց՝ տեղի անառիկ դիրքի պատճառով և Արշարունյաց գավառ հատկացրեց այս բերդին՝ կենամբերի մատակարարելու համար բերդապահներին: Ուրեմն բերդը առաջ համբարանոցներ ուներ այն ժամանակ՝ երբ Փառանձեմը տասն և հինգ հազար մարդով գնաց այնտեղ ապաստանեց:

151. Բնագրում գրված է՝ «առ *թագաւորն* Յունաց դիպեցաւ», պետք է լիներ՝ առ *թագաւորին*, Պապը հունաց թագավորի մոտ էր, որովհետև, ինչպես Փավստոս պատմում է (Դ. ԺԵ.), Պապը հենց որ պատանեկության հասակը մտավ՝ պատանդ ուղարկվեց հունաց կայսեր դուռը:

152. Բնագրում՝ «*զաւրավարին*» որ նոտայրն ուղղել է «զաւրավարճն», որին և մենք հետևեցինք: Սակայն թվում է, ո՛չ բնագրի «զաւրավարճ» է ճիշտ, և ոչ նոտայրի ուղղած

«զաւրավարին»: Բերդից ավարը իշեցնելը զորավարների գործը չէր: Հավանորեն բնագրում եղել է «զաւրականաց»— զորերը, որ դասական հեղինակների մոտ հաճախ գործ է ածվում հավաքական նշանակությամբ:— Մի հանի տող հետո բնագրում սխալմամբ գրված է «*Արտարադէրսն* բերդին», որ ուղղելի է «*Արտագերսն* բերդին»:

153. Չվիքը հետևում է Քրիստոսի պատվերին «Հովիւ հաւ զանձ իւր դնի ի վերայ ոչխարաց»: (Հովհ. ժ. 11–13):

154. Այս անվան սովորական ձևն է Տոսպ, որ պատահում է արդեն ուրարտյան սեպագիր արձանագրություններուն մեջ: Տոսպ է գրում և իմիր Փավստոսը Դ. ԺԲ. գլխում:

155. Այսպես է այս հաղարի իսկական անունը, որ բարդված է Նախիճ կամ Նախուճ (?) հատուկ անունից և անվանի բառից: Վերջին դարերում այս բառը բոլորովին անհիմն կերպով ստուգաբանեցին՝ Նախչևան, իբրև թե նույնպիսի սխալ ստուգաբանությամբ Ակոռի գյուղը, Մասիսի վրա, բացատրում էին՝ «ակ ոտի», այսինքն թե այստեղ Նոյը խաղողի վազեր տնկեց, և Գառնիստանի Մարանդ հաղարը՝ «Մայր անդ», այսինքն թե այդտեղ է (թաղված) մայրը, Նոյի կինը:

156. Ոստիկան պահլավերեն բառ է, *ōstikān* որ նշանակում է հավատարիմ, վստահելի: Հայերենի մեջ (գրաբարում) ոստիկան էին կոչվում թագավորին հավատարիմ և վստահելի մարդիկ, որոնց թագավորը նշանակում էր վերակացու, կուսակալ որևէ գավառի կամ աշխարհի վրա: Ի միջի այլոց ոստիկան էին կոչվում արաբացոց կողմից Հայաստանի վրա նշանակված կուսակալները, որոնք առաջ կոչվում էին պարսկերեն մարզպան բառով՝ որ նշանակվում էին պարսից թագավորներից:

157. Բնագիրն այստեղ մութ և դժվարահասկանալի է. (գուցե պակաս բառեր կան).— «և հրամայեաց ի հրապարակին իմն առնել հրապոյս մեհենայից, որով հրամայեաց զկին արկանել, և արձակել տիկնոջն Փառանձեմայ ի խառնակութիւն պոռնկութեանն անասնական պղծութեանն»: Մենք թարգմանեցինք մոտավորապես:

158. Ինչպես Փավստոս պատմել էր (Գ. ԻԱ.) Սյունյաց Անդովկ նահապետը մեկն էր այն երեք պատգամավորներից, որոնք Հունաց կայսեր մոտ գնացին՝ խնդրելով պաշտպանել Հայաստանը պարսիկներից Ներսեհ թագավորի ժամանակ: Այս պատգամավորության հետևանքն եղավ պատերազմը հույների և պարսիկների մեջ, որտեղ չարաչար պարտություն կրեց Ներսեհը: Անհա Անդովկի այս պատգամավորության վրեմն է, որ Շապուհը ավելի քան երեսուն տարի հետո լուծում է՝ նրա սերունդը կոտորելով: Ներսեհի և Վաղեսի մասին տես ծանոթ. 66:

159. Մազդեզական կրոնը նույն զրադաշտական կրոնն է, այսինքն երկրպագություն արեգակին և կրակին, բազմաթիվ ծիսական պատվերներով: Բառը եղիշեի մոտ գործ է ածված բուն պահլավերեն ձևով՝ դեն–ի Մազդեզն: Մազդեզն պահլավերեն բառ է mazdēsn, mazdeyasn կրճատված է Առամազդ բառից և նշանակում է Առամազդին պաշտող:

160. Բնագրում գրված է՝ «Վահանայ էր հոյրաթիւ և Մամիկոնեան տոհմէն, հոյր Վարդանայ»: Քույրաթիվ բառը Հայկ. բառարանը բացատրում է «հոյր բունցեալ՝ նամարեալ», որ գոնացուցիչ չէ: Առձեռն բառարանը ավելի որոշ է բացատրում «հորեղբար կամ հորաքոյր աղջիկ, հոյր սեպված», բայց ճիշտ չէ: Քույրաթիվ բառի մասին մի ուրիշ վկայություն է բերում Հայկազյան բառարանը— «Առդարև հոյրաթիւ է իմ առ ի հօրէ», այսինքն՝ հիրավի «նա իմ հոյրաթիվն է հոր կողմից», որից կարելի է ավելի հավանական նշանակությունը դուրս բերել— խորթ հոյր, ինչպես և մենք բարգմանեցինք: Ըստ Փավստոսի՝ Համազասպունի հոյր էր Վարդանի և հոյրաթիվ Վահանի: Իսկ Վահանը եղբայր էր Վասակ սպարապետի (Դ. Ը.), ուրեմն Վահան, Վարդան և Վասակ հարազատ եղբայրներ էին, և երբ Համազասպունին հոյր էր Վարդանի, բայց հոյրաքիվ էր նրա հարազատ եղբոր Վահանին՝ նշանակում է՝ այս վերջինիս համար խորթ հոյր էր՝ ուրիշ մարից ծնած, հոր կողմից հոյր էր, մոր կողմից խորթ— հոյրաքիվ:

161. «Անպիտոս» հունարեն բառ է, ἀναχωρος , որ նշանակում է կարճահասակ պատմուճանի մի տեսակ: (Աւմ. բառարան):

162. Բնագրում գրված է վերհագրում. «Տան որդուցն Թորգոմայ իշխանին հայոց»: Ուղղագիրն «աշխարհին» ինչպես ունի Դ. դպրության վերհագիրը հայերենի տեղում:

163. Բնագրում գրված է. «ելեալ յարձակեցաւ Մուշեղն»: Հայկազյան բառարանը չէ բերում լկենլ բառի համար Փավստոսի այս վկայությունը, և ուրիշ գործածությունների վրա հիմնվելով՝ բացատրում է լրջանալ, լկտիանալ, որ չէ համարում Փավստոսի այս տեղին: Աճառյան (Աւմ. բառ.) բերում է այս վկայությունը և «լկենը» բացատրում է «հարձակվել», հիմնվելով երկու հատվածների վրա, որտեղ լրենլ իշանակում է հարձակվել, վրան վազել, բայց որովհետև բնագրում հարձակվել բայն էլ գործ է ածված լկենլ–ի հետ՝ մենք համարեցինք բարգմանել «համարձակ» բառով, որը հույնպես ընդունում է Աւմ. բառարանը:

164. Բնագրում այստեղ թերություն է նկատվում. այնպես է հասկացվում, թե հունաց զորերը քաշվել, տեղավորել էին նահանգում, հիմիշում և Հայաստանի բոլոր գավառներում. սակայն այս դպրության Դ. գլխում ասված է, թե հունաց զորերը գտնվում էին նահանգում ու հիմիշում, այսինքն չէին ցրված Հայաստանի մյուս գավառներում ևս: Նահանգ և հիմիշ տեղերը միայն Փավստոսի մոտ են գործածված երկու անգամ: Պիռն Կասսիոս հիշում է Ravenna ձևով մի տեղ Աւածանի գետի ափին, որը Ազռնցր նույնացնում է Փավստոսի նահանգի հետ (Юстиниан, кн. 37). իսկ հիմիշի տեղը բոլորովին հայտնի չէ:

165. Մաշկավարագան հույն մաշկապարեանն է, որի մասին տես ծանոթ. 48:— Ժանվարի մասին տես ծանոթ. 109:

166. Բնագրում գրված է. «Տային բաշխիչ ի մեծամեծ աւարացն»: Բառարաններդ այս բառը բացատրում էին իբրև պաշխիչ, պարգև: Փավստոսի լեզվում այսպիսի ճոռ առմնկաբանություն անընդունելի է: Նոյոյը (Կոյան, եր. 184 ծանոթ.) ասդում է՝ բաշխել, բաժանել, բաժին հանել, որ միանգամայն ընդունելի է:

167. Բնագիրն ունի. «Մինչդեռ *խոսեցեալ* զային զօրն»: «Խոսեցեալ» անտեղի բառ ասդեցինք «խաղացեալ» և բառ այսմ բարգմանեցինք:

168. Բնագրում գրված է, «Յարցուի *յաղթանս* ի գործ կատարածութեանն»: Հաղթանակ անհարմար բառի տեղ մի ձեռագիր ունի իսկական բառը՝ «*յԱգվանս*», որին մենք հետևեցինք:

169. Բնագիրն այստեղ ունի. «*հելեցիր*, այրեցիր զիս»: «Հելլ» բայի անհարմար նշանակությամբ գործածությունն այստեղ Հայկ. բառարանը բացատրում է այսպես. «Հանէր զայրն ի ձեռաց իմոց» կամ «ի խելաց հանէր զիս»: Երկու բացատրություններն էլ անհավանական են: Մենք հետևելով խոսքի իմաստին՝ ենթադրաբար բարգմանեցինք «իմ առնս հանգեցիր»:— Շարականության մեջ գրված է. «Ջի ասացի ես *բանս*, մի՛ յաներ զայրճայնի գործ պատերազմի»: Բանս բառն անտեղի է, պետք է ասդվի բառ: (Թվում է թե սկզբնապես եղել է ճիշտ ձևով՝ *բամ*.— զի ասացի ես, բամ՝ մի՛ յաներ... հետո բամ–ը կամ երկարաձիր մ և ս գրերի նմանության պատճառով կամ գրչի ասդեղմով փոխվել է *բան*, իսկ սա ազավաղվել գործել է բանս):

170. Քիլ՝ հին ժամանակի երկայնության չափ է, բաղկ փոխ. բացված ձեռքի մատի ծայրից մինչև ցուցամատի ծայրը, որ համարվում էր հավասար ութ մատնաչափի կամ երկու ասդեղի:— Ներսես կաթողիկոսի այս խոսքը ինչպես և հետևյալները առնված են ս. գրքի, մանավանդ ասդմոսի գանազան տեղերից:

171. Այստեղ գտան ձգեցիճ մտա կես երես, որ պատուհանում է Բաբելոնի ճնոցը ձգված երեք մանուկների ազոթից հատվածներ: (Դան. Գ. 27–45. «Ցիրտուես անցուցեր դու մեզ...»):

172. Հին ժամանակ սովորություն կար, որ պատերազմից ետ դարձող զինվորները բերում էին իրենց սպանած թշնամիների գլուխները իրև ապացույց իրենց գործած հաչությանց: Որքան շատ լինեին գլուխները՝ այնքան մեծ էր լինում բերող զինվորական պարծանքն ու պատիվը: Սրանից է մնացել մեր ժողովրդական լեզվի մեջ՝ «Գլո՞ւխ ես բերել» ասը, որ նշանակում է. «Ի՞նչ ես պարծենում, ետ թշնամու գլուխ չե՞ս բերել»:

173. Լեգեոնը հռոմեական զորքի միավոր էր, որ պարունակում էր, զանազան ժամանակներում, 3600–ից մինչև 6000 կովող զինվոր մի հանի սառարաժանումներով: Նրանց մեծ մասը ծանր զինված ու սպառազինված էր լինում, փոքր մասը թեթև զինված: Լեգեոնների կազմությունը հռոմայեցիներից անցավ Բյուզանդիային Ιελελω որոնցից և մասվ բառի գործածությունը հայերենի մեջ (լեգեոն, լեգեովն):

174. Գրաս, պատառում է և այլ ձևերով— գրատս, դրատ, դրատս և այլն: Տագումը և ճիշտ նշանակությունը հայտնի չեն: Տրված են մի հանի բացատրություններ, բայց ոչ հավանական: Փավստոսի բնագրից այսքան կարելի է հասկանալ, թե վրայի երկայն զգեստ էր:

175. Նրանը դարձյալ արի մի տեսակ է, բայց ճիշտ ձևը և բառի ծագումը հայտնի չեն: Հավանորեն ավելի կարճ էր քան սուրը:

176. Բալխ, սովորական ձևով բաղի կոչված է նաև բաղի առավոտին, կամ պանլավերեն՝ բանլի բամիկ—արևելյան բաղի: Սա շատ հին հռոմ էր Բակտրիա գավառում, Օկսուս (—Ամու–Դարիա) գետի հովտում, Գրապամիս և Թյան–Շան լեռների միջև, հիշատակվում է արդեն Դարեհ Վշտասպյանի սեպագիր արձանագրությունների մեջ Ջ. դարում Ն. Ք.: Ջրադաշտ մոդե հայրենիքն էր, կյուրոսի մայրաքաղաքը: Ինչպես հետո ֆուշանների: Այժմ ավերակ է: Մի հին հետու, Աղվանիստանի սահմաններում, շինված է նույն անունը կրող նոր հռոմ: (Ասր–բարգ. ծանոթ. 106):

177. Բնագիրն այստեղ ունի. «Լինալ էր իշխան *տան* գաւառին»: Ե. Մ. ուղղել է՝ «Անգեղտան գավառին», որին և մենք հետևեցինք:

178. Բառս նույն բանն է նշանակում, ինչ որ պարսկերեն գանը, որի մասին տես ծանոթ. 25:

179. Բնագիրն այստեղ աղավաղված է, «զհակառակորդն, *քան մինչ* աշխատ. *արարեր* զմեզ»: Մենք ուղղեցինք՝ «զհակառակորդն, որ այնքան աշխատ առար զմեզ», և քառ այսմ թարգմանեցինք:

180. Փուշտիպան, պանլավերեն puš ikpān, պարսկերեն puštšipān կազմված է pušt= բիկուճք և pān= պահապան բառերից և նշանակում է բիկնապան:

181. Ամին հավանորեն իրանական ծագումից բառ է, որի ճիշտ նշանակությունը հայտնի չէ: Գործ է ածված նաև նիշնի մեջ— «ուղղով զուարակաց և ամնով երէց»: Փավստոսի և նիշնի գործածությունից կարելի է եզրակացնել, թե ամինը մի հասիկ չափ հավատ ունեիր, և այս լեռան ստիճ՝ «Հեռափոխվի՛ր այստեղից այնտեղ», ետ կտեղափոխվի, և ձեզ համար ոչ մի բան անհնարին չի լինի»:

194. «Սիւնեհոդոսական», այսինհոդոս բառից, որ հունարեն է, σζνοδος և նշանակում է ժողով, մասնավորապես՝ եկեղեցական ժողով: Սրանից էլ ծագել է Սիւնհոդ բառը, որով բառ Պոլսի եկեղեցական ժողով: Սրանից էլ ծագել է Սիւնհոդ բառը, որով բառ Պոլսի եկեղեցին կոչվում էր էջմիածնի բարձրագույն վարչական հարհուրդը կաթողիկոսի նախագահության ատկ: Այսինհոդոս բառի մեջի «ն» գիրը ցույց է տալիս, որ բառը ուղղակի հունարենից չէ առնված, (որովհետև հունարենը «ն» չունի այստեղ), այլ ատորերենից: «Ու երես այս» ուղղելու է «Ու քեզ երես այս»:

195. Բնագիրն ունի. «տասից հայրապետին և գրեցին», որ սխեմեր սխալ է: Մենք

ետաց»: Ուղղեցինք «գավառին», ինչպես ունի և ցանկը:

185. Ոստանի մասին տես ծանոթ. 109:

186. Բնագրում գրված է. «*Յանձն առնէր* և մխիթարէր»: «Հանձն առներ» ապավաղված թերթրցվածքը նորայրը ուղղել է «հանձնառներ», որին և մենք հետևեցինք:

187. Բնագիրը դժվար հասկանալի է այստեղ «յօրէնս սաստէր մեծապէս»: Մենք հետևեցինք Վենետիկյան հրատարակության մի ձեռագրի, որ ունի «յանօրէնսն», և քառ այնմ թարգմանեցինք «օրինազանցներին խստությամբ սաստում էր»:

188. Բնագրում գրված է «Ընդ կռդինաս խառնեալ»: Կռդինա(ն) բառի ա՛չ ծագումն է հայտնի, ոչ նշանակությունը. բառը մի անգամ միայն գործ է ածված այստեղ Փավստոսի մոտ: Ամենի բացատրում են իրև բաժակ, ուրիշներ՝ իրև բժշկիչի: Մենք ենթադրաբար բնդունեցինք բժշկիչի բառը, հանի որ խոսքը գինու մասին է:

189. Բյուրակն, սովորական գրությամբ բերիակն, հունարեն բառ է, *θηριακη*, որ նշանակում է դեղբափ, հակաթույն, հատկապես այն գեղբափը, որ հետո է Մենք Միհրդատ Պոնտոսի բագավորը:— Հիվանդության նկարագրություններից— սրի վրա մի նկանակի մեծությամբ կապուտակած տեղ, բերանից գունդ գունդ արյուն գալը—երևում է, որ նեռես կաթողիկոսի բոհերի մեջ մի մեծ երակ է ծակվել, որի հետևանքով արյունահամ է եղել ու վախճանվել. համենայն դեպս նրա մահը բուսավորվելուց չէ եղել, և Գապը զուր տեղ է մեղադրվել իրև ս. Նեռեսի բուսավորող, զուցե բշնամարար, հանի որ Գապը նրա մահից հետո ոչնչացրեց ս. Նեռեսի հիմնած բարեգործական հաստատություններեր և մանավանդ հոգևորականության հոդերի մեծ մասը խլեց:

190. Այս Տրդատին հիշում է Փավստոս և Ջ. դարության վերջին գլխում, հաղարդելով մի հանի մանրամասնություններ նրա կյանքից:— Այստեղ բնագրում գրված է *Տրդած* փոխանակ՝ Տրդատ: «Տրդած» գրության պատանել եմ և ուրիշ ձեռագրերում, որ գուցե արտագրության սխալ չէ, այլ ժողովրդական արտասանություն է, նկատի ունենալով *արտա*–արածել, *տիտ*–ծիծ, *տա*–ծռ, զուցե և *մատանել*–մուծանել բառերը:

191. Գառկանյանի հրատարակության բնագրում գրված է՝ «արտա *նահատակ*», որի մասին նա դնում է ծանոթություն՝ «բերևս Աճառեայ, որպէս ի ապ.»: Մենք հետևեցինք այս ծանոթության ցուցմանը:

192. Աճապատակաճների գազանների բնակից լինելը և նրանց *բժշկելը* մի առածված մտիվ է արդց վարքերում: Գառվում է նաև, որ մի անգամ Հռոմում կբրկեան էին ձգել մի աճապատակաճի և վրան առյուծ արձակել, որ բզկտե: Առյուծը մոտենալով ճանչում է աճապատակաճին, որ ժամանակ առաջ աճապատում իրեն *բժշկել* է, ուստի փոխանակ նրան բզկտելու՝ սկսում է նրան լիզել:

193. Երեցի այս երկար ազոթի գրերն ամեն մի նախադասությունը կամ հատվածի է ս. գրի գանազան տեղերից կամ ակնարկություն ս. գրի այս կամ այն խոսքի վրա: Այստեղ մանանեխի հատը հիշեցնում է Քրիստոսի այն խոսքը (Մատթ. ԺԷ. 19), թե, «եթե մանանեխի մի հատիկի չափ հավատ ունենաք, և այս լեռան ասիք՝ «տեղափոխվի՛ր այստեղից այնտեղ», նա կտեղափոխվի, և ձեզ համար ոչ մի բան անհնարին չի լինի»:

ուղղեցինք «և առ հայրապետաւ գրեցին» և բան այնմ բարգմանեցինք:

196. Բնագրում գրված է, «վասն ամրապահս *առանգոցն* զգուշութեան»: Վեց օրինակ ունի «*աւանգոցն*»: Երկուսն էլ մենք աղավաղություններ ենք համարում, փոխանակ *առանձգոցն*, ինչպես և բարգմանեցինք: Ս. Ներսեսը կուսակոցները ամուր պահելու համար էր՝ առանձգումից կույսերին պաշտպանելու համար:

196. Բնագրում գրված է, «վասն ամրապահս *գառանգոցն* զգուշութեան»: Վեց օրինակ ունի «կուսաւոյ հաւատացեալ»: Հավատացյալ, կամ ինչպես ուրիշ ձեռագրեր ասում են հավատավոր կույս՝ հաշվում էին նրանց, որոնք ուխտում էին միշտ կույս մնալ և ճիրվել աստծուն:

197. Բնագրում գրված է. «զկարգս պողոսի և տասանորդացն»: Դեռ շատ հին ժամանակներից սովորություն էր դարձած, որ գյուղացիք իրենց բերքից կամավոր տուրք էին վճարում վանքերին, որոնք այս տուրքը հավաքելու համար հատուկ մարդիկ էին ուղարկում գյուղերը ճանճռի ժամանակ, թե ո՛ր բերքերի տուրքն է Փավստոսը կոչում պողոս և ո՛րը տասանորդ՝ այժմ դժվար է որոշել: Ընդհանուր գործածության մեջ՝ տասանորդները արմտիքներից պարտադիր տուրքեր էին, որ գյուղացիք վճարում էին պետության կամ հողատերին, բայց ոչ վանքերին. վերջիններիս համար տրվող կամավոր տուրքը պողի էր կոչվում, որ մինչև այս դարի սկզբները գոյություն ուներ և վանքերի արդյուքների զգալի մասն էր կազմում: Քանակությունը սահմանված չէր, այլ կախված էր ճիրողների կամքից և մանավանդ պողի հավաքող վարդապետի հարատևությունից: Պողի տալիս էին թե՛ արմտիքներից և թե՛ կարճեղենից (յուղ, պանիր) և այլն գյուղական արդյուքներից:

198. Վիճ և փանդիռն երկուսն էլ օտարազգի բառեր են. վիճ արեւելյան ծագում ունի (սանսկրիտերեն՝ `ντπα), իսկ փանդիռը՝ փոխրառնական, որտեղից անցել է Հունաստան և ուրիշ շատ տեղեր՝ pandura հիմնական ձևից: Երկուսն էլ լարավոր նվագարաններ էին, բայց ինչո՛վ էին իրարուց զանազանվում՝ հայտնի չէ: Փանդիռն սկզբնապես երեք լար է ունեցել, որ հետո զանազան կերպարանափոխություններ է ստացել:

199. Ագաթանգեղոսի մեջ (գլ. ՃԺԲ.) ասված է, թե Տրդատ հանճանների սպասավորության համար նշանակեց ազարակներում ամեն մի բնտանիքին չորս հող, իսկ ավաններում՝ յոթ հող, բայց չէ հասկացվում, թե ի՛նչ հաշվով նշանակվեցին այս հողերը և ո՛րտեղ էր ամեն հողի տարածությունը: Փավստոսի Պատմությունը փոքր ինչ լույս է սփռում այս հարցերի վրա: Պապը, նրա ասելով, յոթը հողից հինգը կտրում գրավում է արհունիք, թողնում է միայն երկու հող՝ մի հանճայի և մի սարկավագի համար, իսկ սրանց եղբայրները և որդիքը պետք է ընդհանուր կարգով հարկատու դառնային: Քահանաներին հատկացրած այս հողերն ազատ էին հարկեր վճարելուց, ինչպես երևում է այս տեղից և նիշերի վկայություններից— («հատ ի սուրբ եկեղեցւոյն, որ էր ազատ ի Քրիստոս բան կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ, և դու ընդ հարկաւ եղիր», Բ. եղ.): Այս տրտունությունը ուրեմն սահմանափակվեց միայն հանճաների ու սարկավագների համար: Այս երկու հողի տարածությունը այնքան պետք է լիներ, որ բավականություն տար հանճաների և սարկավագների և նրանց կանանց կարիքին, հաշվելով մարդ ու կնոջ մի հող:

200. Բնագրում գրված է. «Կարգեալ, *պատկեալք* կային շուրջ զնովաւ յամենայն կուսէ»: «Պատկեալ» բառը անտեղի է այստեղ: Համարեցինք աղավաղություն՝ փոխանակ «պատեալ կային» և բան այսմ բարգմանեցինք:

201. Քաղաք բառը չպետք է նույնանալ նրա այժմյան նշանակությամբ, այլ սկզբնական նշանակությամբ՝ ինչպես պարսպապատ՝ ամրացրած տեղ, որ սահմանված էր զորքի տեւական կայան լինելու: (Տե՛ս ծանոթ. 59):

202. Աղեզ, գրված կա նաև արալէզ. Նարալէզ և բացի այստեղից հիշվում է նաև Եզնիկի և Սեբեոսի մոտ և ուրիշ տեղեր: Աղեզները երևակայական երկնաբնակ կենդանիներ են եղել շատ կերպարանով, որոնք պատերազմի դաշտում րնկած բազ մարդկանց վերերը լիզելով կենդանացնելիս են եղել: Այս հավատալիքը թվում է Աստրնոտանից է փոխանցվել հայերին: Բառը ստուգաբանելու շատ փորձեր են եղել, որոնց մասին տես Արմ. բառար., աղեզ բառի տակ:

203. Այս պատերազմը ֆուշանների հետ, թվում է տարբեր է այն պատերազմից, որ հիշում է Փավստոս Ե. դպրության յոթերորդ գլխում, որովհետև այն պատերազմից մասնակից է եղել ինքը Շապուհ բագավորը և մանից ազատվել է Դրաստամատի աննշան հաչությամբ, իսկ այստեղ՝ Շապուհը պատերազմին մասնակից չէ:— Քիչ հետո հիշվող Մանուելի եղբոր Կոմս անվան փոխարեն ձեռագրերի մեծ մասն ունի Կոռ, որ ավելի ուղիղ է թվում (Մամիկ-կոռ, Մամիկ և Կոռակ):

204. Փարասախ կամ նրասախ երկայնության չափ է, հավասար 5250 մետրի= հինգ ու մի քառորդ կիլոմետրի: Բառը իրանական ազում ունի: Նրա պահլավերեն fraeax ձևից առաջ է գալիս մեր նրասախը, իսկ նույն բառի արաբացրած ձևից՝ farsax -ից մեր փարասախը: Ուրեմն, ըստ Փավստոսի, կոմսը հնգում Մանուելին շալակած օրական անցնելիս է եղել 52,5 կիլոմետր:

205. Մամիկոնյանների ծագման մասին բացի Փավստոսից գրում են նաև հարենացին, Սեբեոսը և հետագա պատմիչները, թեպետ նրանք մանրամասնություններում զանազանում են միմյանց, բայց հիմնականում բոլորը համաձայն են, այն է, որ նրանք ծագում են Ճենաստանից (Չինաստանից), եղել են ազնվազարմ երկու եղբայր. ներքին խռովություններով փախել են Պարսկաստան և այստեղից ուղարկվել են Հայաստան: Այս բանը տեղի է ունեցել Մեծն Տրդատի ժամանակ, իսկ բուն հարենացու՝ նրա երկու Տրդատի ժամանակ:

206. Բնագիրն այստեղ աղավաղված է.— Եւ *քանզի չեմ* Արշակունի, զի եղի գրագ նախնեաց իմոց...»: Գուցե ուղելի է. «Եւ *ոճգի չեմ* Արշակունի, զի՞ եղի...», այսինքն՝ երբ ես Արշակունի չեմ, ապա ի՛նչպես իմ նախնյաց բագը գրի: Մենք մատավարապես բարգմանեցինք, հետևելով խոսքի ընթացքին:

207. Ասպարեզ, պահլավերեն asprēs. պարսկերեն asparēs բառացի նշանակում է ձիարշավ, ձիրնթացարան, այսինքն հրապարակ, որտեղ ձի էին էշում: Երկրորդաբար այս բառն սկսեց գործածվել իբրև երկայնության չափ= ձիրնթացարանի երկայնությանը, որ ընդունված էր հավասար այժմյան 230,1 մետրի. սա պարսից ասպարեսն է կամ ասպարիսաց ասպարեզ: Կային և ուրիշ սիստեմների ասպարիսներ: (Արմ., բառ., Մանանդյան— Կշիռները և չափերը):

208. Բնագիրն ունի *«ընկն Համազասպ աներ* նորուն անցանել առ նոքօք», որ կըրկնակի սխալ է. «Համազասպ» գրված է փոխանակ Համազասպյանի, և «աներ» փոխանակ անեորդու: Մենք աղավաղումն ուղղեցինք և բան այնմ բարգմանեցինք:

209. Բնագրում գրված է՝ *«Գամապետ* ասպարակացն»: Գամապետ բառի ծագումն ու ճիշտ նշանակությունը հայտնի չէ: Բազմաթիվ կարծիքներ են հայտնված նրա մասին, որոնք բերված են Արմ. բառարանում: Ներպագրաբար բարգմանեցինք խմբապետ:

210. Բնագիրն ունի. «Կամեցաւ բիկուանս առնել զարշայն «Ճուանաց», որ բացարձակ սխալ է: Ե. Մ. ուղղել է՝ զարշայն «պարսից», ինչպես և մենք բարգմանեցինք:

211. Այստեղ հիշված են մի հանի զարգեր ու պատվանշաններ՝ որոնք նվիրված էին բարձրատիճան անձերին.— *վառ* պարսկերեն bar, որ գալով ծագել է պահլավերեն var-ից և նշանակում է դրոշակ: Հայերենի մեջ՝ այս բառը նշանակում է հող (նարեկացու գանձերի մեջ՝ «Գոնեար վարդքն վառ առեալ ի վենից վարսիցն արփենի»), և

ապա դրոշակ: Այս վերջին նշանակությամբ պահպանվել է խաչ-վառ բառի մեջ, որ նշանակում է խաչակիր կամ խաչի դրոշակ: Ջարմանդուխտին նվիրված էր թագավորական դրոշակ:

Գարգմանակ գործ է ածել միայն Փավստոսն այստեղ: Մագումն և ճիշտ նշանակությունը հայտնի չեն: Բառարաններն բացատրում են իբրև զարդ խույրի կամ սաղավարտի վրա: Ուրիշներն բացատրում են իբրև մի տեսակ գլխանոց կամ սաղավարտ: Բնագրից այնպես է հասկացվում, թե զարգմանակը ոսկուց ու արծաթից շինված արծիվ էր, որ գլխի (սաղավարտի) վրա կռում էին իբրև գլխի պատիվ:

Պատիվ, որ բացի ընդհանուր նշանակությունից նշանակում է նաև զարդ՝ մարմնի կամ զգեստի վրա կրելու, որ գանազան տեսակ էր լինում և շնորհվում էր թագավորից այս կամ այն անձին ի նշան գոհունակության կամ իբրև վարձատրություն նրա ծառայության: Պատվի մի քանի տեսակներ հիշում է Խորենացին (տես նրա Պատմության աշխարհաբար թարգմանության ծանոթ. 120), և նրանից: Փավստոսը հիշում է երկու նոր պատիվ, այն է.

Աշխարավանդ, հանգույց գլխի վրա, արծվի ճեռնից կրելու: Հանգույց բառի նշանակությունը հայտնի է. նույնն է նշանակում և աշխարավանդ բառի՝ վերջին վանկը վանդ, որ պարսկերեն է, band, և նշանակում է հանգույց, կապ (ֆրանսերեն *bande*, ռուսերեն бант): Բայց աշխարավանդ բառի կազմությունը և նշանակությունը պարզ չէ: Համարում են, թե դա մի ժապավեն է եղել, որ գլխի ճեռնի բանտի ճման կապում էին և երկու ծայրերը կախ ձգում, ճման այն բանդին, որ երևում է Տիգրան Մեծի դրամի վրա: Տես և Արմ. բառ.:

Ապեզակ, կուրծքի զարդ, որ նույնպես միայն Փավստոսն է գործածել այստեղ: Մագումը և ճիշտ նշանակությունը հայտնի չեն, Ֆիրյահյան համարում է ծագած պարսկեն *ābēza* բառից, որ նշանակում է գինդ, օղ, բայց Աճառյանը չի ընդունում: Տե՛ս Արմ. բառ.:

212. Բնագիրն այստեղ երկդիմի է: Տպագրված է «Զարդեցին... հարկս՝ տալ բնակայս և պատարագս», հասկացվում է այս մտքով, թե սահմանեցին բնականեր ու նվերներ տալ իբրև հարկ (կամ հարկի փոխարեն): Բայց կարող է և այլ կերպ հասկացվել— «Կարգեցին... հարկս տալ, բնակայս և պատարագս», այսինքն սահմանեցին տալ հարկեր, բնականեր և նվերներ:

213. Բնագիրն ունի. «Հասս և կօշիկս և զպիտոյս ռոճկացն»: Կոշիկի բառը Փավստոսը գործ է ածում և ճեռն մի անգամ (Զ. Ը.). «Այս ինն կօշիկի լիցին», որտեղ կոշիկը պարզապես նշանակում է աշխատավարձ, սակայն ներկա տեղում աշխատավարձն նշանակությունը չէ ճարմարում, ուստի մենք բարգմանեցինք՝ ռոճիկ, իսկ բնագիր «պիտոյք ռոճկաց» նշանակում է օրական պարենի՝ ուտելեղենի պիտույքներ, պարունակ մթերքներ:

214. Մի ձեռագիր ունի Աւտանգան: Տեղը հայտնի չէ:

215. Մերուժանը չփոքրվում է և տրամում է ուղևորների աված պատասխանից, որովհետև տեղի «տղչյուրներ» անունը համարել է ձախորդության գուշակություն, վտանգի սպառնալիք: Բայց հանի որ նա ուղևորներին ծծել է ավել՝ թվում է թե նա «տղչյուրները» չէ հասկացել իբրև լեռների հատուկ անուն, այլ իբրև այդ տեղերի որակումը բառը Մերուժանը համարել է գործածված նաև գռեհիկ արտահայտությամբ՝ արհամարհելու և վիրավորելու նպատակով, որի պատճառով և ծծել է տալիս ուղևորներին:

216. Բնագրում աղավաղված ձևով գրված է. «յրճչացք եռաց», որ նորայրը ուղղել է. «յրճչաց բերաց», այսինքն՝ արհամարհեց:

217. Մերուժանը Շավասպի որդին էր, իսկ Շավասպը ամուսնացել էր Մամիկոնյան տոհմից մի աղջկա հետ, ուրեմն Մերուժանը Մամիկոնյանների ազգական էր: Ուրեմն բառը այստեղ էլ գործ է ածված լայն նշանակությամբ, ինչպես ցույց ավելի 15-րդ ծանոթության մեջ:

218. Պատերազմական կարգապահությունը խիստ է եղել նաև Հայաստանում: Արտավազդը պետք է սպանվեր, որովհետև անսաստել է սպարապետի հրամանին և կռվին մասնակցել էր՝ հակառակ նրա բացարձակ արգելքին: Նրան փրկեց մանից նրա արտասովոր քաջությունը, որ ապացույց էր թե նա բավականաչափ հասունացել է և կռվելու ընդունակ է, այսինքն թե Մանուելի արգելքը նրա մանկահասակության պատճառով անհիմն է եղել:

218¹. Վենետիկյան հրատարակության մի ձեռագիր «յիսուն»-ի փոխարեն ունի «տասն», որ ավելի հավանական է:

219. Մանուելի այս հայացքը, թե զինվորականի համար ամոթալի է մանր ինվաճողությունից, անկողնում պառկած, բախտավորություն է պատերազմի մեջ մեռնելը— ընդհանրացած հայացք էր, և դեռ անցյալ դարում կենդանի էր հղերի մեջ: Խաչատուր Արովյանը իր մի աշխատության մեջ «Курды» վերնագրով, որ տպված է «Кавказ» լրագրում 1848 թ. №51, ի միջի այլոց գրում է. (բարգմանում ենք). «Դեռ մոտ ժամանակ հղերը սովորություն ունեին լալ ու սաստիկ սուգ անել երբ պաղում էին մի մարդու՝ որ մեռած էր լինում տանը, և ընդհակառակը, իրև մեծագույն ուրախություն տանում էին այն մարդու մանը, թե որ ընկել էր պատերազմի մեջ»:

220. Բնագիրն ունի, (Ի վերայ նորա եղեն երբեմն, *եթէ որպէս մեզօք հայկէր և առեալ զազահաթին ի թագաւորաց*»: Շեղագրվ շարված այս խոսքերը բնագրի վերնագրում չկան, թվում է թե սկզբնապես այս վերնագիրը վերաբերվելիս է եղել Հռոմեական եպիսկոպոսի վարքին, որ ամփոփված է եղել մի գլխի մեջ, բայց հետո հարկ են համարել այս վարքը, նյութին հայելով, բաժանել երեք զատ-զատ գլուխների և այսպիսով ընդհանուր վերնագիրը մնացել է առաջին գլխի վրա, իսկ հաջորդ երկու գլուխների վերնագրերը մնացել են առանց բովանդակության:

221. Յանկում գրված է, Յաղագս Արշարունեաց եպիսկոպոսին», ուղղագիտ «Աճառոն», համաձայն բնագրի վերնագրին և բուն բնագրին:

222. Բնագրում գրված է. «Վեցերորդ Պարսիւն, վերջ առաջաբանութեան վճառումն՝ մեացուածք բանից ի ծայրէ»: Այստեղ «վերջ» բառը պատկանում է «վեցերորդ պարսյան» և ցույց է տալիս թե վեցերորդ պարսյունը Փավստոսի Պատմության վերջինն է, ինչպես և երրորդ պարսյան ցանկում գրված էր «Ի սկիզբն», այսինքն, թե երրորդ պարսյունը Փավստոսի Պատմության սկիզբն է:— «Առաջաբանության վճառումն» նշանակում է նախաբանաց պատմության ավարտը, և վերաբերում է վեցերորդ պարսյան առաջին գլխին, որով վերջանում է իսկապես Պատմությունը,— իսկ «Մեացուածք բանից ի ծայրէ» վերաբերում է նույն պարսյան հաջորդ գլուխներին, որոնց գեպերված են իրարուց անկախ համառոտ հիշողություններ այս և այն հոգևորականների մասին, որոնք Պատմության նեա կապ չունենալով չէին կարող բուն Պատմության մեջ զետեղվել:

223. Փակագծված բառերը պակասում են այստեղ վերնագրում: Նրացրինք ցանկի վերնագրից:

224. Բնագիրն այստեղ բերի է— «Եւ էին բիւրեք Աշոյակայ բագատարին Հայոց և Տաւրովու բագատարն Պարսից»: Մենք լրացրինք ինչպես իմաստը պահանջում էր և ինչպես նկատել է Ջ. Պատկանյանը իր հրատարակության ծանոթության մեջ:

225. Բնագրում գրված է «Որ *Սիւնեաց* դաւառին մեացին», մի ձեռագիր ունի «Որ

սիւճճն»: «Սիւճճն» մենք համարեցինք ոչ թե ճատուկ անուն, (որ անհայտ և անտեղի կլիներ այստեղ), այլ հասարակ անուն՝ փոխաբերաբար գործածված,— աշխարհի այուհերը՝ հեթանոսները կազմող. հիմնական գավառները:

226. Բնագիրն ունի. «Պակասեաց յիւրմէ մեծութենէն յայնմ ժամանակէ և *յապայ*»: Վերջին խոսքը ցույց է տալիս, որ Փավստոսի պատմությունը գրված է Հայաստանի այս բաժանումից (384-ին) շատ հետո:

227. Պեղնավորը երկար զգեստ՝ փարաջա էր, որ մինչև պեղերը՝ ոտների կոճերն էր հասնում: Սա էր հոգևորականների արտաքին զգեստը, որի պատճառով հայր մարդպետը ծաղրելով՝ հոգևորականներին կանացազգեստ է կոչում (Փավստոս, Դ. ԺԴ.): Իսկ խոտորկուտը, ինչպես բացատրել են Ս. Գառոնյան և Հացունի (Արմ. բառ. խոտոր բառի տակ) նշանակում է զինվորական զգեստ, որ հետևի էղանցից դեպի առաջ՝ մինչև ծնկները կտրած էր լինում, որպեսզի առջևի էղանցը վազելու չխանգարի: Ծրևի կազմված է խոտոր և կտրել բառերից. այսինքն շեղակի կտրած:

228. Բնագիրն այստեղ ունի «Եւ ինքն Զաւէնն *աքինեալս* և *զտապակեալս* զժապփեհալս նաւոտոք ազաւէր», որտեղ «աքինեալ» (կամ նաքինեալ՝ Զավեն բառի վերջին և գիրը համարելով այս բառին պատկանող) և «տապակեալ» միայն այստեղ են գործածված և պարզ չեն ոչ ծագումով և ոչ նշանակությամբ: Արմ. բառ. առաջին բառը հասկանում է իբրև՝ «պինված, զարդարված», իսկ տապակյալ բառը (տապակ= վահանակն զարդ)՝ իբրև վահանակներով զարդարված:

229. Բնագրում գրված է «Զոռբ այր *հերքինի* ընդ նոսին»: Քանի որ Զոռբը եպիսկոպոս է եղել, ինչպես գրված է վերնագրում և բնագրի մեջ՝ ուրեմն նա չէր կարող հերհինի լինել, որ արգելված էր եկեղեցական կանոններով: Ուստի մենք բարգմանեցինք «հերհին խոհրդական», հետևելով բնագրի հաջորդ խոսքին— «էին ի հերհի հայրապետին ի տան իւրում»:

230. «Հռոմ» բառը, որ ծագում է Հռոմ քաղաքի անունից և սկզբնապես նշանակում էր հռոմայեցի՝ մեր հին մատենագրության մեջ գործ է ածվում նշանակելու համար հռոմեական արևելյան կայսրության, այսինքն Բյուզանդիայի բնակիչներին, որոնց մեջ տիրապետող տարր կազմում էին հույները, այնպես որ հռոմ սկսեց նշանակել Բյուզանդիայի հույն: Այս բառն է որ ժողովրդական լեզվի մեջ դարձել է ուռում:

231. Այս վերնագրի նկատմամբ տե՛ս ծանոթ. 220:

232. Բնագրում գրված է. «Ոդի Փառնեայ հայրապետի, հիհաւուց»: Այնպես է դուրս գալիս, թե Փավստոսը «հիհավուց»— հնացած, զառամյալ կոչում է Հոնան եպիսկոպոսին, որ սակայն չէ համարում այդ եպիսկոպոսի գործողությունները, որոնք երիտասարդ նապաստին են հատուկ: Մենք հասկացանք այս բառն իբրև «հին ավուց»— հին անցած օրերի և վերաբերեցինք Փառնեն հայրապետին, որ կարճ ժամանակով կաթողիկոսական աթոռը նստավ Տիրան թագավորի ժամանակ (Դ. ԺԶ.) և որին համարում է «հին ավուց» արտահայտությունը:

233. Հեսկ— ոտների փաթաթան փոկերից, խոիրից կամ այլ նման նյութերից: Կեմ— խոտից ոլորված չվան:

234. Բնագրում գրված է. օդիկ, մի ձեռագիր ունի յօդիկ: Երկուսն էլ անծանոթ բառեր: Ե. Մ. ոտղում է յոդիկ, որին մենք հետևեցինք: Յոդիկ վերնազգեստ է, վերարկու:

235. Բնագիրն ունի. «Սակայն *մի հանէսք* այն էին ճոռա»: Ուրիշ օրինակներ ունեն՝ «Միանաւէք»: Բառի իսկական ձևը, ծագումը և նշանակությունը անծանոթ են. գործ է ածված միայն այստեղ Փավստոսի մոտ: Նոր Հայկազյան բառարանը բացատրում է. «Ոլոպէս թէ միակ նանակ, այսինքն խաղ, կատակ, միմոսություն կամ կեղծավորություն առ ի հանել և խաղել ինչ մի յայլոց»: Բայց սակայն բառը բույլ չի տալիս այս բացատրությունն ընդունել: Անճոյան (Արմ. բառ.) ավելի հարմար է գտնում՝ «փորձանք, վտանգ, փորձություն»: Բուզանդ ուզում է ասել թե «Հովհաննը ազանության ծարավի էր, սակայն այս ազանությունը իր գլխին փորձանք էր բերում», (ինչպես այգեպանի դեպքում, Բուզ. Բ.): Բայց այգեպանի դեպքում փորձանքի եկավ Հովհաննը ոչ ազանությունից: Մենք ենթադրաբար բարգմանեցինք— այդ խեղկատակություններն իբրև մի բան կորցնելու համար):

236. Տղատի մասին տես Ե. դպր. գլուխ ԽԴ.:

237. Բնագրում այստեղ և երկու տող հետո գրված է. «Ի ծագս» ծայրերին, կատարներին, որ անհարմար է, մենք ուղղեցինք ըստ Վենետիկյան մի ձեռագրի «Ի ծագս»— ծակերում, ծերպերում, որ անապատականների սովորական բնակության տեղերն էին, որից բարդ բառեր՝ ծակախիր լինել, ծակամուտ լինել:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Աբա Գեռուճյաց 49
Ագի կոմս 285, 287, 353, 355
Աբաեագիենես 11, 21, 59, 71, 77, 109
Ալաճոզան 101, 237
Անարոճ 397, 413
Աղբիանոս 11, 19, 73, 281, 345, 401, 403
Աղձնյաց իշխան 37
Այծեմնիկ 125
Անակ 15, 37
Անդիկան 99, 215, 217, 227, 229
Անդոկ (Անդովկ) Սյունի 47, 71, 87, 89, 99, 115, 183, 203, 209, 211, 251, 273
Ապական Վահեմական 101, 233
Առոստոմ 397, 405
Ասպուրակես 397, 403, 413
Արիաճոս Աղեքսանդրացի 43
Արիստակես 9, 13, 15, 21, 43
Արշակ բագավոր 75, 83, 91, 95—109, 113—117, 127, 143, 165—171, 179, 183, 185, 189—263, 279, 283, 285, 289, 299, 309, 311, 315—319, 367, 383
Արշակ բագավոր 283, 373, 385, 389—393
Արշակունի բագավոր (հուշաճներ) 315
Արշավիր Արշաուճյաց 115
Արշավիր Կամսարական 47, 71, 87, 89
Արտաշես 369
Արտաշիր 391
Արտավազդ 19, 29, 47, 75
Արտավազդ Մամուկ 385—389
Արտավան բագավոր 259
Արտիք եպ. 387, 405

Բ

Բաբիկ Սյունի 381, 387
Բագարատ 115
Բագոս 217, 219
Բագրատ Բագրատունի 31
Բակուր 9, 37
Բամբիշ 71, 77, 109
Բաբբիշ, տիկնաճց տիկին 89
Բառնաբաս 125
Բարսիլիոս (Բարսեղ) 95, 115, 149—163
Բատ Սահառունի 359, 361, 363, 367, 371, 373
Բոյական (Բոյեկան) 101, 237
Բուզանդ 279

Գ

Գայիանե 61
Գարեգին Ոշտունի 31, 271, 275
Գարշյուլ Մախազ Խորխոռունի (Գյարշյուլ Մաղխազ) 165, 373, 375, 389
Գեճուկ 101
Գինդ եպ. 397, 413, 415
Գնել 97, 143, 165, 183, 185, 189, 191, 193, 201, 209, 241, 287
Գնել Անձևացի 313, 357
Գնիք իշխան 49
Գորուք իշխան 49
Գրիգոր Մեծ 7—15, 23, 27, 43, 49, 53, 59, 61, 63, 67, 69, 73, 77, 109, 111, 117, 185, 353, 415
Գրիգորիս ս 9, 21 23, 25, 27, 31
Գումանդ Շապոճ 99, 233, 279

Դ

Դանիել Մեծ 9, 59, 63, 69, 335, 339, 405
Դանիել իշխան 115
Դասարնտե 247
Դատ իշխան 37
Դատարն 33, 35
Դևեկան 233
Դեմետ Գեթուճյաց 165
Դրակ Մարդպետ 279, 295, 311, 313, 315
Դմայուճդ (Դմավուճդ) Վահեմական 99, 229
Դրաստամատ 279, 315, 317

Ե

Եպիփան 68, 281, 335, 339, 345, 441,
Եվսեբիոս 95, 115, 117, 149, 157
Երազմակ 189

Ջ

Ջավեճ եպ. 397, 401, 403, 413
Ջարեճ իշխան 49
Ջարմանդուխտ 373, 375, 379
Ջիկ 263, 275, 287
Ջիկ Նվիրական 235, 399
Ջիկ Նվիրակապետ 101
Ջնդակապետ 101, 241
Ջոմճ իշխան 63
Ջոռք եպ. 397, 403
Ջորբվաղ եպ. 397, 411
Ջվիք երեց 103, 267, 269, 271
Ջրվանդուխտ 399

Թ

Թագեոս առաքյալ 9, 13, 49, 67, 113, 117, 161, 163
Թլեղի 159, 161
Թորգոմ 7, 9, 285

Ի

Իսահակ 145

Խ

Խաղ 97, 167, 169, 171, 185, 329
Խեչա 37
Խոսրով (Կոտակ) 7, 9, 13, 15, 19, 29, 31, 33, 35, 45, 47, 49,
Խոսրով 399, 401—405
Խոսրով եպ. 397
Խոսրով Մեծ 15, 21

Կ

Կայեճ 189
Կարեճ իշխան 63
Կարեճ 263, 275, 287
Կնփաս 125
Կիշկեճ 165
Կիրակոս Շահապ 397, 411
Կոմս 365
Կոճատաճդիանոս 43, 87

Հ

Հազարավուխտ 99, 215
Հակոբ Եպ. 9, 37, 39, 41, 43, 145
Հակոբոս 125
Համազասպունի 275, 277, 371
Համազասպյան սեպուհ 371
Համբարակապետ 245
Հայր Մարդպետ 11, 73, 75, 97, 179, 181, 183, 265, 279, 293, 295, 335, 337
Հերակլ 61, 63
Հմայակ 369
Հյուրհանես 267
Հոճաճ եպ. 397, 405—411
Հովհաննես Մկրտիչ 17, 59, 71, 73, 185, 287
Հովսեփ 145
Հռիփսիմե 61
Հրեշտոդուհի 101, 237
Հուդա 47
Հուսիկ 9, 11, 21, 23, 25, 49, 51, 53, 57, 67, 69, 77, 109, 113
Հուսիկ 245

Մ

Մանկեատուն 247
Մանակ իշխան 37
Մանաճիրճ Ռշտունի 41, 43
Մանասպ 49
Մանավազ իշխան 49
Մանավազյան 9, 19
Մանուել 281, 283, 363—391, 395, 399
Մար իշխան 37
Մարի Երեց 197, 199, 255, 257
Մարիամ կույս 131
Մատաթիա Մակաբե 47
Մարուճան 101, 239, 241
Մեհան 165
Մեհենե Ռշտունի 165
Մեհենդակ (Մեհուճդակ) Ռշտունի 37, 71, 75, 115
Մերուժան Աւծրունի 99, 103, 219—225, 231—249, 273, 281, 283, 289, 291—295, 373, 377, 379, 383—389
Մշկան 101, 239
Մոգուց հանդերձապետ 101, 245
Մովսես եպ. 59, 147, 397, 413
Մոկան 103, 247, 283, 381
Մրջունիկ 97, 183, 193, 195
Մուշեղ սպարապետ 279—299, 307—313, 319—327, 333, 335, 353—365, 369, 371, 415
Մուշկ Սահառունի 165
Մուրիկ 185

Ն

Ներսես Մեծ 71, 77, 95, 97, 103, 109, 111, 115—121 127, 137—151, 165, 167, 171, 173, 177—189, 195, 203, 249, 251, 261, 271, 281, 285—289, 297—307. 327—329, 331, 335, 337, 345, 345—351, 403, 405, 415
Ներսեհ թագավոր 11, 37, 87, 95, 105, 273
Նիճորական 247
Նոյ իշխան 115

Շ

Շահակ 11, 73
Շահակ Կորճեայի 397, 403
Շահեն իշխան 49
Շաղիտա 69, 281, 335—339
Շապուհ 101
Շապուհ տակառապետ 243, 245
Շապուհ արքա 97—103, 195—199, 201—221, 225—237, 243, 247, 263, 269, 273—281, 291, 295, 297, 307—317, 361, 365
Շավասպ 75
Շավասպ Աւծրունի 97, 179, 183

Ո

Ոլոմպիե (Ոլոմպիե) 97, 183, 193, 195
Ոդունիներ 9, 19
Ոմզդուխտ 249, 277
Ոսոր իշխան 49

Չ

Չուճակ (Չոճակ) 195

Պ

Պապ թագավոր 11, 21, 57, 71, 77, 79, 101, 193, 241, 243, 263, 279, 281, 285—289, 293—301, 305, 309—313, 325, 329, 331, 345—367, 373, 379
Պարգև Ամատունեաց 115
Պետրոս առաքեալ 125
Պողոս Առաքեալ 125, 135

Ջ

Ջոճ իշխան 37

Ռ

Ռոստոմ 145

Ս

Սակատան աճդհերձապետ 243
Սաղամուտ 249
Սամ 389
Սամուել 277, 389
Սահատուրկ թագավոր 13, 181, 223
Սահնատ թագավոր 27—31
Սարգիս 161, 163
Սպանդարատ 203
Ստեփանոս 123
Սուրեն Մարզպան 281, 373, 377
Սուրեն պարսիկ 101, 235
Սուրեն Պահլավ 101, 233
Սուրիկ 165

Վ

Վահագն 61
Վահան 103
Վահան Մամիկոնյան 165, 189, 199, 201, 249, 273—277, 389
Վահան Ամատունի 31, 35
Վահրիճ Կահրիճ 99, 231
Վաղարշ իշխան 49
Վաղարշակ 373, 375, 383, 389, 391
Վաղես կայսր 91, 95, 97, 127, 143, 155—165
Վաչական 101, 239
Վաչե սպարապետ 9, 19, 29, 31—37, 45, 47, 365, 567, 385, 389
Վաչե Աւծրունի 75,
Վասակ զորավար (Մամիկոնյան) 71, 75, 97—103, 107, 165, 167, 195—211, 215—263, 285, 289, 291
Վարազ Կամիճական 31
Վարազդատ 281, 357—363, 367—373
Վարազ իշխան 11, 63, 379
Վարազ Շապուհ 79, 81, 85, 91
Վարազ Շահունի 49
Վարուժան 107
Վարդան Մամիկոնյան 99, 107
Վարդան (Մամիկոնյան Վարդանի որդին) 203
Վարդանուշ 383
Վիճ 99, 227
Վրթանես 7, 9, 15—21, 25, 29, 35, 45—51, 109
Վրիկ 79
Վրկան 165

Տ

Տաճատ 75
Տերենտ 285,287, 297, 309, 311, 353, 357
Տիգրան թագավոր 265, 267
Տիրան թագավոր 9, 11, 21, 49—53, 57, 59, 63, 73, 79, 81—85, 91, 95, 105—109, 179, 189, 295, 315, 405
Տիրանամ 145
Տիրիթ 97, 143, 165, 183, 191, 193
Տիրիկ 397, 413
Տրդատ թագավոր 7, 9, 13, 15, 61, 73, 87, 181, 185, 353,
Տրդատ եպ. 335, 415

Ր

Ռուճայր թագավոր 279, 295, 297, 305, 307, 361

Փ

Փառանձեմ 97, 103, 183, 191—195, 201, 209, 241, 263, 265, 269, 293
Փառեն 9, 71, 73, 405, 411
Փավստոս Բուզանդ 93
Փավստոս եպ. 113, 335, 397, 403
Փեսակ Սյունի 11, 79—83

Ք

Քրիստոս 15, 17, 23—27, 41—47, 51, 61—69, 97, 109, 113, 119, 123—129, 133—137, 143—149, 153—167, 175, 181, 187, 189, 251, 271, 327, 333, 341, 343, 349, 415

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Ագարակ 77
Աղթամար 35
Աղիճովիտ 267
Աղիտուսֆ 83
Աղձնիք 69, 99, 193, 205, 221, 229, 247, 279, 325, 339
Աղձնյաց գավառ 63
Աղձք, գյուղ 225
Աղվանք 297, 305, 321, 323
Ամառազ, գյուղ 27
Ամիդ 43
Ամոր, գյուղ 405
Այրարատ 179, 401
Այրարատյան գավառ 29, 31, 33, 39, 49, 61, 225, 313, 405
Անգեղ բերդ 223, 315
Անգեղտուն 219, 221, 281, 315, 325
Անձիտ գավառ 48, 221, 249, 281, 325
Անի 47
Անի բերդ 223
Անկյուրիա 167
Աննուչ (Անդմըչիճ) բերդ 103, 255, 261, 279, 311, 315, 317, 319
Աշտիշատ 17, 61, 77, 97, 119, 179, 181
Ապահունյաց երկիր 83
Առեստ ավան 35, 217
Առավյուտոց գյուղ 185
Առյուծ լեռ 117, 335
Աստղատաճ 85, 105, 209, 269, 317
Ավան, գյուղ 385
Աստպատական 25, 29, 79, 81, 99, 195, 215, 221, 223, 227, 237, 241, 249, 275, 279, 287, 295, 303, 307, 319, 379
Արագած լեռ 225
Արդյանք գյուղ 313
Արշակավան 97, 169, 171, 173, 177
Արշամունիք 193
Արշարունիք 203
Արշարունյաց գավառ 47, 203, 263
Արվաստան 213
Արվացաստան 205
Արտագես 203, 263, 265
Արտանդան դաշտ 381
Արտաշատ 33, 51, 103, 265, 267, 269
Արցախ 247, 279, 321

Բ

Բագարավան 185, 295, 335
Բագավան 383
Բագնե 165
Բագրեւանդ 167, 267, 273, 279, 383, 385
Բալխ 315
Բախտ 289, 295
Բահլ 365
Բաղատրճների աշխարհ 31
Բառանդ գյուղ 63
Բասենի երկիր 19
Բասեն գավառ 89, 193, 217, 223, 397, 405, 413
Բենաբեղ բերդ 53, 315
Բոյեկան 165

Գ

Գանձակ 29, 215, 279, 289, 307, 311, 353
Գամիրք 49, 71, 109, 115, 149, 167
Գամրաց երկիր 73
Գառնի 33
Գարդմանաձոր 73, 247, 323
Գաղթ 49
Գամկուճք գյուղ 195
Գուգարք 247

Դ

Դալարիք (Ածուխ) 83, 85
Դարաճաղի գավառ 15, 49, 61, 179, 221, 223, 287
Դարեռնիք (Դարոռնք) բերդ 29, 289
Դվին քաղաք 33

Ե

Եգիպտոս 43
Եկեղյաց գավառ 47, 221, 331, 335, 399
Եղյուրներ, լեռներ 385
Եռանդ 289, 295
Երվանդաշատ 267
Երևյալ 217
Երփրատ 19, 181, 293, 295, 387, 415

Զ

Զարավանդ գավառ 33
Զարեհավան 267, 273, 383
Զարիշատ 267

Է

Էրափանի բերդ 201

Ը

Ըննիքարս լեռ 41

Թ

Թավրեզ (Թավրեժ) 225, 227, 237, 291
Թավրիզ 99
Թիլ 15, 63, 385
Թարգամ գյուղ 15, 49, 59

Ի

Իարայել 67

Լ

Լսիճ քաղաք 189

Խ

Խախ ավան 331
Խաղտիքի աշխարհ 277
Խարտիգան 219
Խոսրովակերտ 33
Խուժաստան 269, 311, 315

Ծ

Ծոփք (Մեծ Ծոփք) 37, 49, 53, 69, 181, 249, 281, 315, 325, 339, 341
Ծոփաց գավառ 15
Ծոփք Շահուճի 221

Կ

Կազբից աշխարհ 249, 270
Կաթողիկե եկեղեցի 61
Կասբեր 323
Կարին 167
Կարին գավառ 391
Կեսարիա 49, 71, 73, 95, 109, 115, 149, 155, 157, 159, 281, 345, 347, 353
Կոգ գավառ 169, 289
Կողբի գավառ 49, 247
Կոզբ 323
Կովկի 29
Կորդուք 195, 279, 321, 337
Կորդիք 247, 279, 321
Կորդվաց գավառ 37, 39, 69
Կորդրիք 247
Կոռճայրի գավառ 245, 389
Կուր գետ 29, 323

Հ

Հաբանդ գավառ 27
Հաբուժեն 165
Հայաստան 7—11, 27, 37, 59, 77, 87, 91, 93, 9, 101, 103, 107, 119, 123, 171, 177, 209, 215, 225, 227, 235, 239, 245, 247, 257, 267, 273, 281, 295, 303, 311, 323, 347, 351, 353, 355, 359, 379, 381
Հայոց աշխարհ 9—13, 19, 29, 45, 47, 53—57, 73, 87, 91, 95—105, 109, 119, 127, 143, 165, 173 215, 219, 227, 237, 243, 257, 263—269, 273, 279, 285, 289, 291, 315, 327, 349 351, 359, 371, 375, 381, 383, 389, 391, 395, 397, 413
Հայոց երկիր 11, 29, 31, 35
Հայոց մայր եկեղեցի 69
Հայոց լեռներ 37
Հաչտեն 37, 49
Հացիների պատերազմ 63
Հացյաց գյուղ 79
Հեր գավառ 33
Հոնաց կողմ 23
Հովիտ 169
Հրսիծոր 165
Հունաց աշխարհ 87, 89, 93, 97, 167, 185, 193, 339, 373
Հունաստան 89, 97

Ղ

Ղարա 247
Ղարի աշխարհ 49

Ճ

Ճենաց աշխարհ 307

Մ

Մաղխազյաց 103, 231, 245
Մակեդոնիա 125
Մամբրե 281, 339, 341
Մանուշեղ գետ 339
Մանազկերտ 401
Մանավազակերտ 19
Մասիս 83
Մարազ 167
Մարաց աշխարհ 223
Մեծամորի դաշտ 33
Մեծ Հայք 29, 33, 35, 45—49, 53, 71, 205, 243, 261, 291
73 95, 105, 107, 115 119, 123, 165,
Մզուր գավառ 221
Միջագետք 213
Մծդին 37, 43, 205, 313
Մծուրք 181

Ն

Նախճավան 267
Նոշիրական գավառ 279, 297, 321
Նպատ լեռ 297, 299

Շ

Շահապիվան 185
Շիրակ 47, 115, 203

Ո

Ոխա գետ 89, 217
Ոլական ամրոց 293
Ոստան 203
Որդոռու գյուղ 19

Պ

Պարսկաստան (Պարսից աշխարհ) 59, 99, 103, 233, 237, 263, 268, 289, 311, 317, 359 365

Ջ

Ջանջանակ 33
Ջրաբաշխ 33

Ռ

Ռշտունիք 41

Ս

Սաղամաս 101, 245
Սատաղ 29, 89
Սարարադ լեռ 37, 39, 43
Սիներական լեռ 39
Սյունյաց գավառ 341
Սպեր գավառ 391

Վ

Վաղարշապատ 31, 267
Վան 267, 275, 371
Վանանդ գավառ 49, 63, 217, 397, 411
Վատնյա դաշտ 27
Վարազ լեռ 385
Վրաստան 21, 25, 279, 323

Տ

Տայք 79, 107, 201, 411
Տարոն 15, 59, 69, 71, 73, 77, 78, 97, 119, 179, 193, 195, 293, 413, 415
Տապարաստան 99
Տափերի կամուրջ 51, 265
Տիգրանակերտ 221, 239
Տիգրոն 197, 209, 255
Տիկնունի 33
Տմորիք 247, 279, 321
Տոգք (Տոսպ) 207, 275, 371

Ց

Ցլու գլուխ լեռ (Ցուլ) 21, 33, 63

Ու

Ուռհա 353
Ուտիք Շակաշեն 323

Փ

Փայտակարան 323

Օ

Օշական բերդ 31

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության է երաշխավորել համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝ Լ. Ս. Ազատյան

Նկարիչ՝ Ա. Գ. Սիմոնյան

Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան

Տեխն. խմբագիր՝ Հ. Ս. Ալվրցյան

Վերատեսուչ սրբագրիչ՝ Մ. Գ. Յավրյան

ԽՊ 676

Հանձնված է շարվածքի 17.03.1986 թ.: Ստորագրված է տպագրության 22.05.1987 թ.:
Չափսը 60×84¹/₁₆: Թուղթ № 1: Տառատեսակը «Նորք»: Տպագրության եղանակը «օֆսեթ»:
Հրատարակչական 22,4 մամուլ: Տպագրական 28,5 մամուլ = 26,5 պայմանական մամուլ: Տպաքանակ 30 000 (2-րդ գործարկում՝ 15 001 – 30 000): Պատվեր 5927:
Գինը՝ 2 ռ. 20 կ:
Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մովսես Խորենացու փ. № 1:

Издательство Ереванского университета, Ереван, ул. Мовсеса Хоренаци № 1.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի գունավոր տպագրության տպարան: Երևան-82, Ադմիրալ Իսակովի պող. 48:

Типография цветной печати Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-82, пр. Адмирала Исакова, 48.